



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնապրված է «Մտեղծագործական համայնքեր»  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնապրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



131

№

ԱՅԵՆԱԴՐԱՆ

18

БИБЛИОТЕКА  
Никиты Осиповича  
№ ЭМИНА. 123.

ՄԿՐՏՉԻ ԷՄԻՆ.





ԺՈ.ՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԵԱՌՆ ՄԻՒԱՅԵԼԻ

ԱՍՈՐԻՈՅ ՊԱՏՐԻԱՐքԻ



9(47. 925) № 78.

Մ-78

ՊԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԵԱՌՆ ՄԻԽԱՅԵԼԻ

ԱՍՈՐԻՈՅ ՊԱՏՐԻԱՐՔԻ

ՀԱՆԵԱԼ Ի ՀԱՍԴՈՅՆ ԳՐՉԱԳՐԵ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

S. S. Գ. Է. Ո. Ր. Գ. Ա. Յ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ

S. Ե. Ս. Ա. Յ. Ե. Ա. Յ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՅԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ

S. Մ. Կ. Ր. Տ. Զ. Հ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՅԻ

ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

Դ Պ Պ Ա Ր Ա Ն Ա Ր Ա Ր Ո Յ Յ Ա Կ Ո Վ Ա Ր Ե Ա Յ

1871


ՀԱՅՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՐԴԱՐ ՀԱՅԱ  
ՀԱՅԱԳՅԱ 131-62

ՎԱՐԴԱՐ ՀԱՅԱԳՅԱ ՀԱՅԱ

ՎԱՐԴԱՐ ՀԱՅԱԳՅԱ ՀԱՅԱ

ԵՐԱԳՈՎՐԾ Հ. Յ.

ՎԱՐԴԱՐ ՀԱՅԱ




9/ 4833 - 50

ՎԱՐԴԱՐ ՀԱՅԱ

ՎԱՐԴԱՐ ՀԱՅԱ ՀԱՅԱԳՅԱ Հ

1781





WILHELM. G. KREFTENAK.

Leinwanddruck von E. Kaufmann in Lehn.

Ի ՑԻՇԱՏԱԿ

ՄԵՆԱՀԱՄԲԱՒ ՏԱՆՅ

Ա. Բ Գ Ա. Ը Ե Ա. Ն

ՈՐ Ի ՀՆԴԻԿՈ

ՆՈՒԻՐԵ

ԴԵՐԱՄԵԾԱՐ ԵՒ ԱԶՆՈՒԱԿԱՆ

ՊԱՐՈՆ ՍԼԹ Յ. ԱԲԳԱՐԱՑ

ԸՆՈՐԴԱՊԱՐՏ ԵՒ ՑԱՐԳԱԿԱՆ

ԶԳԱՑՄԱՄԲՔ ՈԳԻՈՅ

ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՍ ՄՐԲՈՅ

ԵՐՈՒՑԱԴԵՄԻ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՍԱՅԻ ԱՐՔԵՊՈՏԿՈՊՈՍ

Lu

A. J. Johnson Zweydr. Pfarrer

W. Z. Lipp

Prinz A. Immermann

F. Gaußwitz d. Zweydr.

✓ 20 Sept. 1872 w. p.

steuerab.



## ՑԱՌԱ ԶԱԲԱՆ

Յետ տպագրութեան մեր զժամանակագրութիւն Վատթէոսի Երիցու Ուռհայեցւոյ, պատշաճագոյն համարեցաք զՄի խայելի Ասորւոց պատրիարքի զպատմութեան դիրս ածել՝ ի հրապարակ, որ իբրեւ զառաջինն չեւ է տեսեալ տակաւին զլոյտ, և ոչ արտաքսքան զսեամս ազգային գրադարանաց անցեալ, թէպէտ և օտարազգիք կանխեցին քան զմեղ տալ զնորին ընթերցումն ի բարբառ Գաղղիացւոց եթէ ամբողջապէս և եթէ ըստմասնեայ (1), որք հարկադրեցին զմեղ զմասնաւոր գիտողութիւնս մեր ի բաց թողեալ փութալ՝ ի տպագրութիւնս սորին՝ ամօք ինչ յառաջադոյն մոտադիր եղելոյ մեր ՚ի սոյն։ Եւ ոբովհետեւ կրկին օրինակք են առ մեղ զանազան և տարբեր թարգմա-

(1) Մասնական թարգմանութիւնս արար է • Տիւլորիէ, հրատարակեալ յԱսիական օրագրին, յամի 1849։

նութեանց , մին սովորական (1) որ առ բազումս գտանի , յորմէ փոխեալ է և Պաղպիշ էրէնն . միւսն փոքր մի համառօտեալ , այլ գլխովին տարբեր թարգմանութիւն , զոր ՚ի դէս համարեցաք տպագրելց իբրեւ միակ օրինակ որպէս համարիմք , որ և բազում ուրեք օգնէ ՚ի լուսաբանել զմիւսն : Օսոցանէ հարկ է մեզտալ լիովին տեղեկութիւն . այլ նախ ՚ի դէս համարիմք խօսել կարձառօտիւք զհեղինակէ գրոցս որչափ ինչ գտանեմք յառաջնոցն քան զմեզ խօսեցեալ հետախոյզ քննութեամբ :

Օնաւ Ախսայէլ , որպէս կարծի . յշն տիոք քաղաքի , յամի 1126 , ՚ի յշորի ծնողաց Յակոբիկ կոչեցելոց . անուն հօր նորա Եղիաս երէց ՚ի Անելետինոյ , ՚ի Պանտիսեան տոհմէ : Կեանք նորա անտիական անծանօթ է ամենեւին . յերեսուն և վեց ամաց հասակի եւ կացնա վանահայր մենաստանի սրբոյն Պարտամայ Շանայի , մերձ ՚ի Աներտին , ուր է այժմ աթոռ կաթողիկոսութեան Ասորւոց : Օկնի վախճանի Յովհաննու ժը Պատրիարքի , ընտրեցաւ սա ինքն Ախսայէլ յաջորդ Աթոռոյն ՚ի ժողովի եսպիսկոպոսաց գումա-

(1) Սովորական օրինակն ամօք ինչ յառաջագոյն տպագրեցաւ ՚ի Ս . Աթոռս : այլ հրատարակութիւն նորա յետաթողաւ ցարդ , ապասելով զերկոսին օրինակն միանգամայն հանել ՚ի հրատարակ :

ըելոց ՚ի վանս Փշնի, և է նա հարիւրերորդ  
 ՚ի շարս աթոռակալաբացն . օծաւ ՚ի 18 ամսեա-  
 նըն հոկտեմբերի, 1166 : Ի սկիզբն անդ գա-  
 հակալութեանն ըստ վաղեմի սովորութեան  
 ազգին, որպէս գրե՛նա ինքն (յեր. 472) ա-  
 ռաքէ զգիր դաւանութեան իւրոյ առ Ա .  
 Ներսէս Շնորհալի, և զաթոռն պատրիարքա-  
 կան՝ որ էր յայնժամ՝ ՚ի յԱմիթ քաղաքի, փո-  
 խաղըէ ՚ի վանս Մար Հանանոց (Ա . Շնանի-  
 այ ) մերձ ՚ի Մերտին քաղաք : Յետ այնորիկ-  
 ել Միխայէլ յայցելութիւն վանացն, հաս-  
 տատէր վանահարս, և քաղաքաց քաղաքաց  
 կարգէր եպիսկոպոսունս : Եկն ել և յԱրու-  
 սաղէմ յերկրագագութիւն սուրբ Տեղեաց, և  
 դարձաւ անտի յԱնտիք յամի 1168 : Ի միւ-  
 սում տարւոջ առաքեցաւ առ նա Քրիստա-  
 փոր հանդերձ թղթով ՚ի կողմանէ Մանու-  
 էլ կայսեր վասն խնդրոց միաբանութեան (1):  
 Ի նոյն նողատակ արդէն իսկ սկիզբն լետը էր  
 թղթակցութեան ՚ի մէջ Ա . Ներսեսի Շնոր-  
 հալոց և Կայսեր, ոյր վասն եկեալ էր ՚ի Հռ-  
 ուոմկլաւ երկիցու անդամ թէորիանէ և Յով  
 հաննէս վարդապետ յունակրօն առ յիշեալ  
 կաթողիկոսն . յորմէ հրաւէր հասեալ և առ  
 Միխայէլ Պատրիարք երթալ առ նոստ ՚ի  
 ժողովն Հայոց , նա փոխանակ առաքէ յա-

ուաջնում նուագի զէնովհաննես եպիսկոպոս  
Քեսնոյ, և յերկրորդումն զթէոդորոս Շար-  
վեհերսն կաչեցեալ, տալ պատասխանիքա-  
նից թէորիաննեայ : Ոիխայէլ գովութեամբ  
յիշատակէ ՚ի պատմութեան իւրում (400)  
զէնովհաննես եպիսկոպոս ասորի, մինչեւ յաղ-  
թահարելնորա բանիւք զիմաստասէրն Յու-  
նաց: Հւ կասկածեալ զՆերսիսէ, զոր յանդէպս  
համարէր նա հակամէտ լինել ընդունելոյ  
զգաւանութիւնն յունական եկեղեցւոյն,  
հրաժարեալ ՚ի ժողովոյն դառնայ յետո:  
Յետ ընդունելոյ Կայսեր զթուզթ խոստովա-  
նութեան Հայոց, զիոյն խնդրէ և ՚ի Ոիխայէ-  
լէ . և նորա առաքեալ զգաւանութիւն հա-  
ւատոյն, կնքէ զբանսն յայտնելով եթէ ցան-  
կալի է նմա կալընդ Յոյնս ՚ի սէր միաբանու-  
թեան առանց հեռանալոյ յուղափառու-  
թենէ հարց իւրոց և ՚ի հայրենաւանդ ծի-  
սից: Եւ յապէս խնդիրն միաբանութեան մնայր  
առանց յաջողելոյ օրպէս ընդ Հայս՝ նոյնպէս  
և ընդ Եպորիս:

Ոիխայէլ Պատրիարք այր հաստատամիտ և  
կապեալ սերտ ընդ հայրենի կրօնա իւր, սի-  
րով էր և պայծառութեան եկեղեցւոյն իւ-  
րոյ . քանդի մինչդեռ ընդ Շնորհալոյն թըղ-  
թակցէր վասն վերոյիշեալ խնդրոյն, ՚ի նմին  
ժամանակի ձեռն արկանէր ՚ի շինութիւն ե-  
կեղեցւոյ վանացն Եպութաղերայ մերձ ՚ի

կարկառ։ Յերկրորդում ամի 1170, գտանէր  
նա ՚ի վանս Ա՝ ար Հանանայ, ՚ի ժամանակի  
յորում շարժն ահագին սասանեցուցանէր  
զբաղաքս Առւրիոյ (463)։ Եւ ինքն Ոիխայէլ  
ոչ դըսյր դադարէր յայցելութեանց իւրոց  
և ՚ի շինութենէ եկեղեցեաց ընդ պաշտ-  
պանութեամբ խնամոց քրիստոնեայ իշխա-  
նացն Փռանիաց, յորոց ձեռոս էր յայնժամ  
իշխանութիւն քաղաքացն Յաորեաց։

Յաւուրց անտի գահակալութեան իւ-  
րոյ ունէր Ոիխայէլ վիշխանութեան իւրոց  
թեկնածուս և նախանձուս յեպիսկոպոսաց  
անտի, որք ընդ ակամք հայէին ՚ինա, վասն  
որոյ և ՚ի պատեհ առեալ զբացակայութիւն  
նորա յաթուցյն, ընտրեն ՚ի ժողովի եսլիս-  
կոպոսաց զնախայիշատակեալն Խաչողորոս  
Շար-Ա եհերոն, որ կոչեցաւ Յօվհաննէս.  
և այսպէս յերկուս ճեղքէր պատրիարքու-  
թիւնն՝ ունելով իւրաքանչիւր վիճակս ա-  
ռանձին։ Իսկ Ոիխայէլ գումարեալ զեպիս-  
կոպոսունոիւր, ընկենու զՅօվհաննէս յՄո-  
ռոցյն, և նա, ըստ գրելց Յասեմանեայ, յետ  
ոչ բազում ամոց հաստատի յիշխանու-  
թեան իւրում ՚ի ձեռն Եւոնի Բ. ՚ի սահ-  
մանս Աիլիկիոյ, այլ ոչ տեւեալ առաւել-  
քան զամա 13, խափանի աթոռ նորո և  
դադարէ երկպառակութիւնն (1)։ Եւ յապէս

(1) Մեք. Զամշեան. Համ. Գ. յեր. 155.

Այիսայէլ բազմահոդ և բազմայած կենօք  
եւ յընտանի խռովութիւնս անցուցեալ  
զաւուրս իւր՝ վախճանի յամի 1199, 'ի հա-  
սակի 73 ամաց, կացեալ յաթոռն ամս 33.  
և մարմին նորա ամփոփի յիւրաշէն եկեղեց-  
ւոջ վանացն սրբոյն Պարսամայ, յայրի միում  
զոր իւր էր փորեալ 'ի կենդանութեանն։

Աչ գուզնաքեայ ոք էր Այիսայէլ յազգի  
անդ իւրում և առաջի եկեղեցւոյն, այբ  
զօրաւոր բանիւք եւ լի ազդեցութեամբ .  
յամբառնալ իւրում յաթոռն թէպէտ և ու-  
նէր անձին հակառակորդս, այլ նա ամենայ-  
նի յաղթէր . որպէս և զեղբօրորդի իւր ըզ-  
չեսու, որ գաղտ խորամանկէր 'ի ծերու-  
թեան նորին զբարձրագոյն աթոռովին թեկն  
ածելով, նախատակոծ արարեալ ցրուէր  
զխորհուրդս նորա զամենայն . Օ համարու-  
մըն և զվարկ ազդին իւրոյ ստացեալ ունէր  
'ի շնորհս հանձարոյ իւրոյ և գիտութեան,  
եւս առաւել աշխատութեամբք և մեծախը-  
նամ վաստակօքն զոր վաստակէր 'ի շինու-  
թիւնս վանորէից և եկեղեցեաց . այլ առա-  
ւելքան զաւաւել նշանաւոր էր 'ի նմա նա-  
խանձ ազգային եկեղեցւոյն իւրոյ և հայրե-  
նաւանդ ծխից, որով թերեւս փոքր ինչ  
քան զչափին անցեալ թուիցի յաչս քննասի-  
րաց, եթէ շիլ ակամբ և միակողմանի դա-  
տիցեն զնորա հակալրութիւնն զոր ցուցա-

նէ յամենայն առիթս լնդդէմ չորբորդ ժու-  
 զովոյն և քաղկեդոնականաց , վասնորոյ և առ  
 Ա . Ներսէս Ընորհալի գրեալ զգուշացու-  
 ցանէ զնա ՚ի ժամանակս խնդրոյ միաբանու-  
 թեանն , յասելն (459) . “ Այդ կրօնքդ ՚ի մե-  
 րըս մերձ է . բայց ես ոչ կամիմ զՃշմար-  
 ու տութիւն կրօնից հարցն ձերոց փոխել . զի  
 ոթէ մեծ և կամ փոքր և կամ դաւանութիւն  
 ո փոխէք , երեւի թէ թերի էիք մինչեւ ցայ-  
 ժըմ և արդ լցայք , և դեռ կատարեալ ե-  
 ղերուք ակն առեալ մարդոյ ” : Քանզի սոյն  
 պակասութիւն զոր տեսանեմք ՚ի Ոիխայէլ ,  
 որ ՚ի մոլեռանդութիւն ածէ զմարդ , բազ-  
 մապատիկ առաւել տեսանելի է ՚ի Յոյնս և  
 յեկեղեցականս նոցին , որք որպէս զ՞այս՝  
 զնոյն օրինակ և զ՞սորիս հերետիկոսս հա-  
 մարէին վասն ոչ ընդունելոյ զջորբորդ ժողո-  
 վոյն խոստովանութիւն , այն է երկուս բը-  
 նութիւնս ՚ի Քրիստոս : Ասլա ուրեմն ոչ է  
 ստգտանելի պատմագիրս եթէ ՚ի զգուշու-  
 թիւն եկեղեցւոյն իւրոյ և ապագայ սերըն-  
 դոյն բազում ինչ և կասկածելիս և դժուա-  
 րահաւանելի դէպս և արտավէպս ՚ի մէջ  
 բերէ ՚ի գիրս յայս , որք համարին ստուե-  
 րածս արկանել զիմաստութեամբ նորին և  
 զքաջախոհութեամբ :

Ոիխայէլ ոչ միայն ընդհանուր պատմու-  
 թեան , այլ և աստուածաբանական խնդրոց

ցուցանել զինքն հմուտ գոլ, որպէս տեսանի  
 'ի քահանայութեա ճառին որյաւարո պատ-  
 մութեանս, տեղեակ թուինա և յունական,  
 հռովմէական և Արաբացւոց լեզուաց . իսկ  
 հայերէն բարբառոյ ոչ այնչափ, մանաւանդ  
 եթէ և անգէտ իսկ ազգային պատմութեա-  
 նըս վարկանի, որպէս երեւի 'ի պատմել անդ  
 զմահուանէ Աեբրովթայ, զորմէ ասէ մե-  
 ռանել ընդ փլատակօք աշտարակին, և տպա  
 'ի գիտնոցն Հայոց անշուշտ տեղեկացեալ  
 ուզզէ զկարծիսն՝ յասելն (16). “Ատուգե-  
 ցաքյետ ժամանակի սպանանելնմա 'ի Հայ-  
 ”կայ որդւոյ թորգոմայ” : Որչափ մեծ է հա-  
 կակրութիւն նորա առ քաղկեդոնականս,  
 նոյնչափ առաւել համակիր է և համախոհ  
 ընդ եկեղեցւոյն Հայոց և ընդելընդ ազգին,  
 մինչեւ զթագաւորութիւն և զքահանայա-  
 պետութիւն Հայոց պարծանս համարել Ա-  
 սորւոց, և նոքօք ունել աճումն եկեղեցւոյ  
 իւրեանց 'ի Քրիստոս և սիւն հաստատու-  
 թեան (Ճառ քհ. 31,) վասն որոյ և զՃառն  
 իսկ քահանայութեան համարի յօրինեալ 'ի  
 նպաստ և 'ի պարծանս հայկական եկեղեց-  
 ւոյս զոր և աւարտէ 'ի մեր քահանայապե-  
 տութիւն, 'ի մէջ բերելով զդաւաղանագիր  
 կաթողիկոսացն Հայոց մինչեւ ցաւուրս իւր  
 Այսչափ ինչ զքաղաքավարութենէ կենաց  
 և զանձին յատկութեանց խօսեցեալ հեղե-

նակիս, խօսեսցուք և զնորին գրոցն պատմութեան :

Որպէս կանխեցաք ասացաք, կրկին Են առ մեղ թարգմանութիւնք մի քան զմի զանազանեալք եթէ շարակարգութեամբ պատմելեացն իրաց և եթէ յապաւմամբն և յաւելմամբ ինչ ինչ պարագայից : Ո՞ւք 'ի բազում պատճառաց և 'ի մասանց համարիմք ղերկուսն եւս ուրսյն յեղեալ 'ի մեղ յասորի բնագրէն, թէպէտ և 'ի նմին թարգմանչէն և 'ի նմին յարմարողէ ըստ լեզուիս մերոյ . քանզի որչափ տարբեր իցեն թարգմանութիւնքն այնչափ մերձագոյնք են մի մեանց 'ի յոլով տեղիս ոճով ասացուածոյն և բառից ընտրութեամբ և զուգադրութեամբ : Եւ որ անկասկած առնէ զմեղ 'ի կարծիս մեր զանազան լինել թարգմանութեանցս, այն է զի 'ի համառօտութեանս յայսմիկ գտանին պարագայք և մասնաւոր յիշատակութիւնք բոլորովն սցըլազգ : Քան զմիւսն : Օրինակ իմն, զծագմանէ Աքդլմումնեացն խօսելով, օրինակն մեր ասէ (431) Երկուս որդիս ունել Աքդլոյի, այն է Աքդլմինի և Աղուք, որք յանցեալ ընդդէմ պատուոյ հօր իւրեանց՝ փախչին 'ի կողմն Ափրիկոյ : Իսկ միւս թարգմանութիւնն ասէ . Ալեայ խալիփային Ագիստոսի էին որդիք Երեք, յետ մահուան հօրն Երեցն իշխանացեալ խորհեր սպանա-

նել զերկուս եղբարս իւր , որոց իմացեալ  
զմիտս նորա , վախչին ՚ի Ապանիա . և անուն  
նոցա Եքդալս և Վամունի :

Արդ քանզի չի ՚ի միջի ասորական բնա-  
գիրն՝ որ կորուսեալ համարի իսպառ , դը-  
ուարին է յոյժ գիտել զհարազատ թարգ-  
մանութիւնն . այլ այս իմն անտարակուսելի  
է , զի երկոքին եւս են աղտտ թարգմանու-  
թիւնք , որպէս գրի ՚ի վերջաբան յաւել-  
ուածի օրինակս եթէ (41) «Օ յոլովիւք զանց  
արարաք զոր առ մեզ գիւտ էր , և ոչ գը-  
որեցաք զի մի աւելորդս թուխիմք աշխա-  
տել . և էր որ կրկնեցաք զայլոց դրոց ասա-  
ցեալսն կարճառօտիւք՝ վասն զտեղին լնոյ  
և զոճն պահելոյ » : Այլ որ ինչ առաւել  
հետազօտութեան և քննայուղելոյ են կարե-  
ւորութիւնք առ ՚ի յայտ ածել զերկուց օ-  
րինակացս զարժէս , թողեալ կորովամիտ հնա-  
խուզից , մեք զմերոյ գրչագրէս տացուք տե-  
ղեկութիւն , որ առաւելքան զմիւսոց թարգ-  
մանութեան զյոլովագոյն օրինակս գրաւեալ  
ունի զվարկ մեր : Վիակ օրինակ է մատեա-  
նըս , միածալ , բամբակաթուղթ , բոլորագիր ,  
երկիջեան , գրեալ ՚ի թուին Հայոց ՁԻՔ , ձե-  
ռամք Գրիգոր վարդապետի միաբանի Ըկանց  
Անապատի , որ երեւելի էր ՚ի գարուն յայն-  
միկ յաշխարհին Կիւլիկիոյ և հարուստ ձե-  
ռագրօքն հոչակաւոր լւալ : Առաջին բնա-

Գիրն յորմէ ընդօրինակեալէ երկրորդս այս ,  
գրեալէ քսան և եւթն ամօք յառաջագոյն ,  
այն է ՚ի թուին ՈՂԵ , որպէս ցուցանէ մակ-  
բայս այժմ (507) : Առաջնոյ ընդօրինակողին է  
շարայարութիւնն սկսեալ յամէ 1216 մինչեւ  
1229 , այն է թիւն Հայոց ՈՂԵ . յորում կըրկ-  
նէ որ ինչ զ՞օ ապելէ և զնորին ամուսնութե-  
նէ են բանք : Իսկ Ախիսայէլ , որ վախճանեալ  
համարի յամի 1199 , որպէս եղաք և մեք ,  
հասուցեալ զարատմութիւն իւր մինչեւ ց1196  
կամ ցհայ թուականութիւնն ՈՒԵ (603) , ա-  
ւարտէ երիւք ամօք յառաջ քան զթագա-  
գրութիւնն ։ Եւոնի Բ . և որ ինչ յետ այ-  
նորիկ համառօտ բանք զ՞օ ապելէ , համարի  
և այն յայլմէ յաւելեալ յասորի բնագրին ,  
մինչեւ ցամն ՈՂԵ , յորում ժամանակի էին  
Զապելի ուստերք և դստերք ՚ի Հեթմոյ :  
Ապա թէ ոչ հարկ լինի մեղ ընդունել , եթէ  
կեանք Ախիսայէլի անցեալ իցեն զհարիւրա-  
մենիւք , որպէս և Գրիգոր ՚ի կըրկին յիշատա-  
կարանս իւր (525 . 44) նմա ընծայէ որ ինչ  
մինչեւ ցՈՂԵ պատմին բանք :

Իսկ թէ ո՞ք թարգմանիչք եղեն կըրկին  
երկասիրութեանցս , ոչ ոք ցարդ ճշգրտա-  
գոյն ինչ լուսաբանեաց : Առաջին թարգմա-  
նութիւնն եղեւ որպէս համարի , ձեռամբ Ի-  
շօխ քահանայի և Վարդանայ՝ աշակերտի Վա-  
նականին՝ նմին սաստարչի , որպէս և յօրինափեկս

ինչ նոյն թարգմանութեանն յանուանէ յիշ  
շատակի այսպէս . “ Այլ և մեք իսկ տառա-  
պեալ ոգի Վ արդան վարդապէտ ո ” (1) : Արա-  
բեալէ ըստ խնդրոյ կոստանդին և կաթողիկ-  
էոսին յամի 1248 , ’ի թուին Հայոց ՈՂԵ , որ  
ստուգագոյն հաշուով պատասխանէ 1248  
ամին Քրիստոսի (42) : Խօխ էր ազգաւ Ասո-  
րի , որոյ անուն ՚ի մեզ Յեսու լի և ոչ Խսա-  
հակ , որպէս ոմանք իմանան : Ի հնագոյն ճա-  
ռանտրի միում գտանեմք զՃառն Յակոբայ  
ԱրՃեցւոյ ՚ի սուրբն Թաղէոս և յԱբգար ,  
“ Թարգմանեալ ՚ի թուին ՈՂԵ , յԱսորւոց , ՚ի  
ոճեռն Շմանի քահանայի ասորւոյ , հրամա-  
նաւ Վ արդան վարդապէտի ո . առանց տա-  
րակուսանաց և աստ Շմանն է Յեսուն . քան-  
զի ՚ի նմին ձեռագրի յիշատակի գարձեալ ՚ի  
սկիզբն գրոցն յորում խօսի ՚ի վերայ բնու-  
թեան աշխարհի և բնական աշխարհագրու-  
թեան , անուն հեղինակին Խօխ քահանայ ,  
որ է ասէ՝ ըստ հայումն Յեսու : Այն սա-  
հաւանիմ ասել եթէ իցէ եղբօրդի ՈՒ  
խայելի պատրիարքի Յեսու անուն , զօր վե-  
րագոյն յիշեցաք , այր գիտնական և հմուտ  
քժշկական արուեստի : Արդ յասացելոցտ ան-  
տի զիւրին է մեզ մակաբերել եթէ թարգ-  
մանիչ երկոցունցո իսկ օրինակաց իցէ Խօխ

(1) Տես յառաջին օրինակի տպագրին . յեր . 615:

քահանայ : Իսկ Ապրդան վարդապետ յարշտարիչ և եթ լեզուին՝ պարզ և ընտանի խօսիւք ժամանակին իւրոյ յարմարեալ : Քանզի Երկրագին իսկ բնագիրք տոեն թարգմանեալ հրամանաւ նորին Կաթողիկոսի և ՚ի մի և ՚ի նոյն թուականի (41) . Նախ զհամառօտն մերզայս , և ապա զմիւսն , որ և տարածեալ կայ յազգիս :

Դապագրութեանս յայսմիկ կարեւոր դատեցաք դնել ՚ի ստորեւ իւրաքանչիւր իջի զքացայայտութիւն մթին իմացուածոց բառից և իմաստից որք թուին սպրդեալ յաւետ յասորի թարգմանչէն քան յընդօրինակչէս , քանզի միօրինակ մթութիւնք գտանին և ՚ի միւսում թարգմանութեանն մանաւանդ ՚ի յատուկ անուանս մարդոց և քաղաքաց , զոր ուղղեցաք յայլուստ կամ ՚ի մէջ փակագծի եղեալ և կամ ՚ի ստորեւ : Եւ ուրեք եւս հարկ եղեւ մեզ լուսաբանել զպարագայս ինչ դիպաց , յոր հեղինակն կարի որշտութեամբ խնայեալ էր , մինչեւ անյայտ մնայ պատմութեան՝ որոց չիցեն տեղեակք :

Երկրորդ գիրք Երկասիրութեան ՈՒիսաւելի է ձառն յազագս Քահանացութեան , զոր ՚ի վախճան պատմութեան իւրոյ ՚ի միւս թարգմանութեան հայերէնին (532) խոստանաց գրել ասելով . “ Դարձեալ նովին յուսով ո . . . . Երկրորդ անդամ ծովամուխ լիցոք

ոյանհասական խորս քահանայական կարգաց  
ու և զարդուց, եթէ ուստի սկսաւ և ուր լը-  
ռ ցաւ և յու կատարի . . . . | Ի սմին ճառի  
փայլէ առաւելապէս հմտութիւն հեղինա-  
կիս յաստուածաբանական գիտութեան և  
խորին հանճար նորին : | Եւ սկիզբն եղեալ  
քահանայութեան զվարմ, առեալ իջու-  
ցանէ մինչեւ 'ի ճշմարիտ քահանայապետն  
Յիսուս, և անտի յլուաքեալս : | Խօսի ուրոյն  
և զհնդից Աթուոցն, 'ի մէջ բերեալ և ըդ-  
կարդ աթուակալացն . և կնքէ զճառն 'ի  
կաթողիկոսութիւնն Հայոց, հիմն եղեալ  
նորա գէնիսուս կամ զի՞արդողիմէս և զի՞ա-  
գէսս առաքեալսն, և զեկեղեցին Հայաստա-  
նեայց կոչէ «Պատկերեալ 'ի Փրկչէն անդրա-  
նիկ հաւատովլ 'ի ձեռն Աքտարու » (27). և  
զգաւազան հայրապետացն հասուցանէ մինչեւ  
'ի Ներսէս Շնորհալի : | Ի սմին ճառի առաւել  
զգալիցուցանին տարբերութիք թարգմանու-  
թեանցն, և է քան զգատմութիւնն առաւել  
համառօտեալ, մինչեւ առաջիկայ տպագիրն  
հազիւ թէ զերբորդ մասն միւս թարգմա-  
նութեան կազմէ : | Այլ ոճ ասացուածոյ եր-  
կոցունցն համեմատ է բարձրութեան իմաս-  
տից ճառին, յորմէ յայտնագոյն երեւի լինել  
Վարդանայ քան այլոյ ումեք հետեւորդ  
մատենագրի, որ և լրացուցանէ զկարդ կա-  
թողիկոսացն մինչեւ ցաւուրս իւր կոստանց

ԴԻՆ Ա. զոր ներբռաղական քանիւ գրուատէ :

Ե՞ն Այիսայելի և այլ գրաւոր աշխատութիւնք և եկեղեցական մատենագրութիւնք որք չեն թարգմանեալ՝ ի Հայումս : Այրա է դարձեալ և խոստովանութիւնն հաւատոյ որ գտանի ՚ի միւսում թարգմանութեան (574) կից ճառին քահանայութեան :

Իսկ որ ինչ յաղագո Վրիգոր վարդապետի են գիտելիք, որ է գրիչ հայերէն բնագրիս, որ խոստանայ յեր . 528, գրել զանցս 44ից ամաց, սկսեալ յամէ 1248 մինչեւ 1272, այն է զյարձակումն Թաթարաց ՚ի Հայս, որոյ գործ ընծայի յազգիս մերում Այաղաքիայ ուրումն աբեղայի, խոսեցեալէ մեր արշէն ՚ի յառաջաբանի նոյն պատմութեան Թաթարաց. տպեալ ՚ի սուրբ Աթոռս յամի 1870 :





# ՏԵԱՌՆ ՄԻՒՅՑԵԼԻ

ԱՍՈՐԻՈՅ ՊԱՏՐԻԱՐքԻ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Բ Ո Ւ Ի Թ Ի Ւ Ն

յԱղամայ սկսեալ մինչեւ առ մեզ :



Ա.

ԵՍ, եղբարք աստուածասէրք և ուսու-  
մնասէրք, հայելով՝ ի բազմութիւն ժամանա-  
կագրաց որում կարօտեալ էի, խնայեցի յիմ  
և յոլովից լսելիս՝ ի յաճախութենէ զրուցաց,  
և համառօտեցի՝ քաղելով զպիտանին և ըզ-  
շահաւորն՝ յեկեղացականացն և յարտաքնոցն.  
ընդուտուցանել զմահաբեր ծուլութիւնս  
բազմաց, և՝ ի բաց հանել զանդիտութեանն  
խաւար, ակն կալեալ վերին հատուցմանն  
աշխատութեանս մերոյ. թողլով զսա գանձ  
կեղեցւոյ եւ վարժարան մանկանց նորոց  
Ախօնի, որ զկնի մեր գալոց են :

Եւ պարտ է մեզ սկիզբն գրոցս դնել զըս-  
կիզբնն մարդկութեանս զԱշամ, զի շինուա-  
ծըն հաստատեսցի հիմամք . և է այսպէս օ-  
գուտ ասողացս և լողացն : Իսոյց պարտ է  
նախ դնել զանուանս պատմագրացն՝ ուստի  
հանդերձեալ եմք ժողովել զնիւթ շինուա-  
ծյու մերոյ :

Եփրիկանսս և Յեսու (1), և Հեքոփառու  
(Հեգեսիապառու) և Յովսեպոս հրեայքն գրե-  
ցին մինչեւ ՚ի գալուստն Պրիստոսի :

Ենանսս կրօնաւոր աղեքսանդրացի , գր-  
եաց ՚ի յԱշամոյ մինչեւ ՚ի կրտանդիանս  
թագաւորն :

Եւսեբիոս Պամփիլեաց , յորոց գրոց ժո-  
ղովեաց զիւրեն և անուանեաց Եկեղեցականս ,

Օրոիմոս և Առկրատ և թէոդորետոս  
հերետիկոս , ՚ի կրտանդիանոսէ սկսեալ մինչ  
՚ի թէոդոս (փոքրն) գրեցին :

Յովհաննէս Յնտիսքաց և Շեպելու (2), և  
թէոդորէ գրակարգացն կրտանդնուալուոց ,  
և Օքքարիա եպիսկոպոս Ուելտենւոյ գրեցին  
՚ի թէոդոսէ մինչեւ ՚ի Յուստիանոս Օերն :

Յովհաննէս ասխացին գրեաց յԱնաստա-  
տոյ մինչ ՚ի Առիկ :

(1) Յեսուայ՝ կամ ըստ բնագրին Յեսովայ պատմագրի  
գործ կորուստաւ համարին նոյնպէս և Սլիւա երեց Աւելուի-  
նոյ և Դիոնէսիոս Աղեքսանդրիոյ են բազառ մեզ անծանօթք :

(2) Շեպել քաղաք է ՚ի սահմանս Եկրանանու :

կաւրա (Կորիս կամ Կիւրոս), ՚ի Յուստիանոսէ մինչ ՚ի Հերակլ գրեաց, և վասն մտանելոյն Տաճկաց յերկիրն Ասորւոց, որ եղեւ ՚ի ժամանակս Հերակլեայ:

Եւ սուրբն Յակովը ուռհայեցին համառօտ ընդ ամեննե էանց:

Եւ ՚ի իննեսիս պատրիարքն գրեաց ՚ի Ոօրկէ մինչ ՚ի թէռփիլէ թագաւորն Յուստիաց, և մինչ ՚ի յէ՛հարոն (Հարուն) ամիրայն Տաճկաց:

Դժնատիս եպիսկոպոս Վելտենւոյ, և Սիւա երէց Վելտենւոյ և Յովհաննէս ՚ի Քեսնոյ, և ՚ի իննեսիս (Կղէքսանդրացի) յալիս պին որդին, արարին հարուստ պատմագրութիս յէ՛դամոյ մինչև յիւրեանց ժամանակն:

Արդ՝ ասացեալ ժամանակագիրքդ հայելով ՚ի յօժարութիւն ուսումնասէր լողաց ժամանակին՝ փարթամագոյնս գրեցին. իսկ մեք ՚ի յերեկոյացեալ ժամանակս հացելով ՚ի ծուլութիւնս մեր, կարձագոյն և թեթեւակի անցցուք ընդ իւրաքանչիւրսն:

Այլ և պարսէ ուսումնասէր արանց ոչ տկարանալ վասն աւելի և պակաս զնելոյն զմիւ ժամանակաց, զի ճշմարիտ է բանն Տեառն, թէ Հայր եղ յիւրում իշխանութեան զգիստութիւն ժամուց և ժամանակաց: Զի յոլով ղանազանութիւնն գտանի յէւթանասնիցն թարգմանութիւնն, և զոր-

ունին Ասորիք, զայն որ Արդար արքաց ետ թարգմանել, և ստուգեաց Յակով ուռհայեցի հնարինք լեալ իբրեւ զմի ՚ի Նրէիցին՝ զի մի Ծագուացեն զՃշմարտութին ՚ի նմանեւ:

Արդ՝ ըստ Եւթանանիցին՝ Արամ լեալ երկերիւր և երեսուն ամաց, ծնաւ զիթիթ. և եկեաց այլ ևս չորեքհարիւր վաթուն ամ։ Եւ լինին ամենայն ժամանակը կենաց նորա իննհարիւր երեսուն ամ, մինչեւ ՚ի հարիւր երեսուն և եւթն ամն Վաղաղիէլի. և մեռաւ վաթուն ամաւ յառաջ քան զՃնունդն Եւնովքայ. և է միջոցն սիսալ և ոչ խմանան։ Խեկ ըստ Ասորւոցն՝ Արամ լեալ հարիւր երեսուն ամաց, ծնաւ զիթիթ. և եկաց այլ եւս ութիթ հարիւր ամ, որ Ճշմարտապէս ինն հարիւր երեսուն ամէւ։ Ենանոս կրօնաւոր սունու վկոյութիւն յինովքայ գրոցն, թէ Արամ յետ ելանելոյն ՚ի դրախտէն, զկնի եւս թանասուն ամի գիտաց զիւա, և ծնաւ ըդկայեն, և յետ եւթն ամի ծնաւ զԱրէլ. և զկնի յիսուն և երեք ամի ծնանելոյն զԱրէլ, սպան զնա կայեն, և սգային զԱրէլ Արամ և Եւա հարիւր ամ, և ասպա ծնաւ զիթիթ որդի միմիթարութեան։

Եւ Վաղիդիոս (Վեթողիոս) պատրիացի ասէ, թէ յետ երեսուն ամի ելիցն ՚ի դրախտէն՝ ծնաւ զիսոյեն և զվիմիա քոյր իւր, և զկնի երեսուն ամի ծնաւ զԱրէլ և զԱր-

լուգա քոյր իւր . և զինի հարիւր երեսուն  
ամի սպանաւ Աբէլ, և յերկերիւր և երեսուն  
ամին Ադամայ ծնաւ Աէթ : Եւ սցուռ գի-  
տացես զաննմանութիւն պատմագրացն :

ՅԵԴամայ մինչեւ յըրեդի վեցերորդ  
ծնունդն ժողովին ամք ինն հարիւր երեսուն :  
Յայսրան ժամանակս ոչ գոյր թագաւոր, զի  
Ադամ ձեռագործ Կոտուծոյ յերկիւղ և ՚ի  
խրատ կարգաւորութեան բաւական էր նո-  
ցա . և յետ նորա մահուանն իշխէր Աէթ  
հարիւր եւթանասուն և ութ ամ : Եւ ՚ի ժա-  
մանակս Աէթայ յիշեցին որդիք նորա զիեանա  
գրախափին և հրաժարեցին յաօմնւսնանալոյ,  
և ելին ՚ի լեառն Վհերմնի , և կացին ժուժ-  
կալութեամք , և վասն այնորիկ անուանեցան  
Արդիք Կոտուծոյ և հրեշտակլք :

ԱԷԹ ըստ Եւթանամիցն կեցեալ ամս  
երկերիւր և հինդ , ծնաւ զինովս , և ըստ  
Կոտուցն հարիւր յիսուն ամ . և լինին աւուըք  
ժամանակաց նորա ինն հարիւր եւթանասուն  
ամ ըստ Յունաց և Կոտուց :

Ենովս՝ ըստ Վիրիկանսի և Ենանոսի ծը-  
նաւ որդի ՚ի (հասակի) հարիւր իննսուն ամաց.  
և ըստ Կոտուցն՝ իննսուն ամաց : Աայուսա-  
ցաւ կոչել զանուն Տեառն Կոտուծոյ , և յոր-  
դորէր զմարդիկ ՚ի գործո բարեաց . և լինին  
ամք նորա ինն հարիւր և հինդ :

Կայենան հարիւր եւթանասուն ամաց

ծնաւ որդի ըստ Հւթանասնիցն, և ըստ Վ-  
սորեոց՝ Եւթանասուն ամաց, և ամենայն ամբ  
նորա ութ հարիւր յիտուն :

Վաղաղիէլ հարիւր վաթսուն և հինգ ա-  
մաց ծնաւ որդի ըստ Հւթանասնիցն, և ըստ  
Վսորեոցն վաթսուն և հինգ ամաց, և ամենայն  
ամբ նորա ութ հարիւր իննառուն և Եւթն ամ:

Երեղ՝ ըստ Հւթանասնիցն և ըստ Վսոր-  
եոցն հարիւր վաթսուն և երկու ամաց ծնաւ  
որդի, և ըստ Վամարացւոցն վաթսուն և եր-  
կու ամաց, և լինին ամենայն ժամանակիք նո-  
րա ինն հարիւր վաթսուն և երկու ամ, մինչե-  
ի վեց հարիւր ամն ։ Այսի :

Քքառասուն ամն Երեղի լու հաղար ամ:  
Հւյայսմ ամի ձանձրացեալ որդիքն Վեթայ  
իջին ՚ի լեռնէն Վհերմնի, և անկան ՚ի ցան-  
կութիւն կանանց, և էին թուռվ երկերիւր:  
Հւ ՚ի նոյն ժամանակս կացուցին թագաւոր՝  
որում անունն էր Վամարիս (1), և վասն այսո-  
րիկ պատմէ Հնանոս, թէ յիջանելն ՚ի լեռ-  
նէն և ՚ի հրեշտակական վարուցն որդւոցն  
Վեթայ, բարկացան եղբարք իւրեանց, և  
ոչ ետուն նոցա կանայս : Հւ նորա գնացին  
առին ՚ի դատերացն կայենի զօրս ընտրե-  
ցինն . և ծնան ՚ի նոցանէ հսկայք ամբար-  
տաւանք, վնասակարք և սպանողք : Հւ

(1) Ազգութարաձ Սամառս կոչէ զսա . իսկ Վարդան և  
միւս թարգմանութիւնն Սամերս կամ Սամերս :

մինչ ՚ի յայս ժամանակս կայր Երկիւղ Վո-  
տուծոյ և խաղաղութիւն, և աստ բարձու,  
և կալաւ զնոսա խոռոշութիւն և պատե-  
րազմ և սպահութիւն։ Եւ լուան զայս որդի-  
քըն Աեթայ որ կային յերկրորդ կլիմն, որ  
է բաժին, և եգին և նոքա իւրեանց թա-  
գաւոր ՚ի Քաղցեացւոց Երկիւրն՝ զԱզրոս (1)։  
Աս եգիս զաստեզագգիութիւնն և զթիւս  
կենդանակերպից և մոլորակաց և զշրջմունա-  
նոցա։ և ՚ի սմանէ անուանեցաւ քաղցե-  
տթիւն։ Եւ սա թագաւորեաց ամս իննառւն  
և ութ։ Եւ զկնի նորին որդի իւր Ալփարոս  
թագաւորեաց ամս քսան և ինն և աւուրս  
Երկերիւր յիսուն և հինգ։ Եւ զհետ նորա  
թագաւորեաց Ալմին քաղցեացի ՚ի Փու-  
գիւրիւն քաղաքէ, ամս հարիւր քսան և ութ  
և աւուրս ութմառւն։

Չորրորդ թագաւոր՝ Ամանոն քաղցեա-  
ցի թագաւորեաց ամս հարիւր ութեւտան,  
և աւուրս հարիւր Երեսուն։

Հինգերորդ՝ Ամակարոս քաղցեացի թա-  
գաւորեաց ամս հարիւր Եւթանասուն և  
Եւթն, և աւուրս հարիւր իննառւն և Եւթն։

Ա եցերորդ՝ Դինոս հովիւր քաղցեացի թա-  
գաւորեաց ամս իննառւն և ութ, և աւուրս  
Երկերիւր Երեսուն։

(1) Եւսերի այսպէս ուղղագրէ զանուանս թագաւորացա-  
ւունն, Աշոտացաւունն, Աշեւնն, Ամենաշ, Ամենաշըրոս, Դաս-

Ղւթներորդ՝ Ղւտուրինքոս քաղցեացի թագաւորեաց ամս հարիւր եւթանասուն և հինգ, և աւուրս հարիւր իննասուն և հինգ :

Ութերորդ՝ Ումբիիս քաղցեացի յէնարքոն քաղաքէ, թագաւորեաց ամս հարիւր իննասուն և հինգ, և աւուրս երկերիւր երեսուն :

Խններորդ՝ Օտիարտոս ՚ի յէնարքոն քաղաքէ, թագաւորեաց ամս եւթանասուն և ութ, և աւուրս երեք հարիւր երեսուն :

Տասներորդ՝ Քախովթրոս որդի նորա թագաւորեաց ամս հարիւր եւթանասուն և եւթն, և աւուրս հարիւր իննասուն և հինգ : Ժողովին ամք հազար հարիւր ութսուն և երեք, և աւուրք երկերիւր և հինգ : Ղւյաւուրս սորա եղեւ ջրհեղեղն ըստ քաղցեացի գրոց :

Ծր զժամանակ թագաւորացս հազար հարիւր ութսուն և երեք<sup>(1)</sup>, և զառանց թագաւորութեան ժամանակն հազար յիսուն և երկու, և առնի ընդ ամենայնն մինչ ՚ի ջըրհեղեղն երկու հազար երկերիւր քառասուն և երկու ամք ըստ Կոտուածաշունչ գրոց :

Իսկ Ենովլք եղեալ հարիւր վաթսուն և

Դաս, Երանձնուած, Ամենիսինոս, Ոդիարպես, Վասիսավլըռս :

(1) Միւս թարգմանութիւնն ունի 1180 տմ, իսկ զանիշխանութեան ժամանակն գնէ 1062, որով գումարին նըշանակեալ ամքն 2242 :

հինգ ամաց՝ ծնաւ որդի ըստ Եւթանասնիցն (զլյաժմուսաղա), և ըստ Կոորւոցն վաթսուն և հինգ ամաց։ Այս եգիտ գիր, որով Քաղղէացիք վարին։ Եւ հաճոց եղեալ Կոտուծոց զերկերիւր ամ, փոխեցաւ որովէս գիտէ փօխողն Կոտուած՝ ուր կայ։ Ոմանք ասեն թէ ՚ի դրախտն ուստի եւ Կդամ։

Վաթմուսաղա լեալ ամաց հարիւր ութսուն և եւթն՝ ծնաւ որդի ըստ Եւթանասնիցն և Կոորւոցն։ Եւսեբի և Ենանոս հարիւր վաթսուն և հինգ ամաց ասեն, իսկ Ամմարացիքն վաթսուն և երկու։ Վինին ամենայն ժամանակք նորա ինն հարիւր վաթսուն և երկու, մինչեւ յիննառւն և ութ ամն Վեմայ։

Վամեք լեալ ամաց հարիւր ութսուն և ութից, ծնաւ որդի ըստ Եւթանասնիցն, և ըստ Կոորւոցն հարիւր ութսուն և երկու ամաց, և ըստ Ամմարացւոցն յիսուն և երեք ամաց։ Եւ լինին ամենայն ժամանակք նորա եւթն հարիւր եւթանասուներեք ամ, մինչեւ ՚ի վաթսուն և ինն ամն Վեմայ. և սա մեռաւ նախ քան զհայրն քան և ինն ամաւ։

Ե հազար վեց հարիւր վաթսուն և վեց ամի ելիցն Կդամայ ծնաւ Նոյ, այր արդար ՚ի ծնողացն իւրոց, և պահեաց հինգ հարիւր ամ, և ըստ Կոորւոցն հինգ հարիւր երկու ամ, և յերեք հարիւր յիսուն և ութերորդ ամին սորա կատարեցան երկու դարք։

Առեւ Եշանոս, թէ ՚ի յաճախել մեղաց  
մարդկանն, թողեալք եղեն ՚ի ձեռաց Առ-  
տուծոյ. և յորդեցին ՚ի նոսա պատերազ-  
մունք և կորիւք, և լցաւ երկիր ոսկերօք ըս-  
պանելոցն, և կուտեալ լինէին իբրեւ զբը-  
լուրո, և բարկոցեալ Տեառն Աստուծոյ՝ ած  
ջրհեղեղ ՚ի վերոց նոցա, և կորցս վեռաս  
յերկրորդ ամսեանն Խար իէ : Եւ տեւեաց  
ջուրն ամմի, մինչեւ ՚ի նոյն ամիսն և ՚ի նոյն  
քանիս ամսոյն. և ելին հրամանաւ Աստուծոյ  
Նոյ և որդիք իւր կանամքք իւրեանց ՚ի տա-  
պանէն. և մատոց Նոյ պատարագ Աստուծոյ  
՚ի սուրբ անասնոցն, և հոտոտեցաւ Տէր ՚ի  
հոտ անուշեց : Եւ էր Նոյ դարագլուխ եր-  
բորդ : Յովսեպոս առէ, թէ տապանն մնաց  
յէւփիմէ լեառն ՚ի Պիտիդացւոց երկիրն բայց  
Ճմարտապէս կայ ՚ի Հայք մեծ, ՚ի լեառն ս  
Երարագայ, որ է Մասիս ըստ բնագրոցն :

Եւ էին որդիք Նոյի Աէմ, Յաբեթ, Քամ:  
յիննասուն և ութ ամին Աէմոց եղեւ ջուրն,  
և հարիւր ամաց ծնաւ որդի : Եւ բաժա-  
նեաց Նոյ որդւոց իւրոց զերկիր . և ետ Աէ-  
մոց զՊարսից աշխարհն, և զՊեկտուրա մին-  
չեւ ՚ի Հնդիկս, յԱխնոյ-Լիորուրա, որ է Նե-  
զոս : Եւ Քամաց ետ ԱԽնոյ-Լիորուրայէ մին-  
չեւ ՚ի Գաղիրոն : Յաբեթի ետ ՚ի Մադիէ  
մինչեւ ՚ի Գաթիրոն հիւսիսոյ :

Եզդն Յովեթի ունին յակնէն Տեգրիս

գետոյ, որ բաժանէ ընդ Վագե<sup>(1)</sup> և ընդ  
Պարս : Եւ ազգն Աեմայ բնակեցին յարեւե-  
լից և յարեւմոից Եփրատոյ և Դկլաթու-  
թ ազգն Քամայ ունին զԴեհոն գետ, որ  
բաժանէ զսահմանս նոցա : Եւ որդիք Յա-  
բեթի են Հայք և Վակեդոնացիք և Վա-  
գացիք և Յոյնք և Լատինացիք և Վրա-  
ցիք և Ալանիք : Եւ որդիք Քամայ են Հընդ-  
կացիք, Եգիսպատացիք, Հեթացիք, Յերու-  
սացիք, Հաբաշիք՝ որ են Քուշացիք, Գեր-  
գեսացիք, Արութացիք : Եւ որդիք Աեմայ,  
Աթուրացիք, Քաղդէացիք՝ որք են Կոսրիք,  
Եբրայեցիք, Ֆրանգք, Պարսիկք : Եւ Աե-  
մացիք ունին յարեւելից մինչեւ յարեւմուոք  
ընդ մէջս երկրի : Եւ որդիք Յաբեթի ու-  
նին զհիւսիս յարեւելից մինչեւ յարեւ-  
մուտս : Եւ որդիքն Քամայ զհարաւ ունին:

Եւ զի ետես Նոյ նախ քան զջրհեղեղն  
մեծ՝ զպատերազմունս եւ զպանութիւս  
կորուսելոցն, վասն այն պատճառի բաժառ  
նեաց նոցա զերկիր, և եդ նզովս զի մի  
զրկեսցեն զմիմեանս վիճակօք :

Օի յետ ջրհեղեղին ասեն՝ թէ որդիք  
եղեւ Ասյի Վանատինոս<sup>(2)</sup> անուն, որ յայնիցու  
ծովուն առ զսահմանս իւր : Եւ խնդրեաց  
՚ի հօրէն յուկերացն Աղամայ, և ետ նմա-

(1) Յօրինակիս Մատթէ :

(2) Միւս թարգմանութիւնն Մանեան :

զլուռունս ծնդացն ՚ի յիշտատակ : Եւ առ առ  
ձեցոյց զաստեղագիտութիւնն :

Ում լեալ հարիւր երեսուն ամաց ծնաւ  
զԱրփաքստդ ըստ Եւթանասնիցն , և ըստ  
Վարուոց հարիւր ութ ամաց : Արփաքստդ  
հարիւր երեսուն և հինգ ամաց ծնաւ զիայ-  
նան : Օայս կայնան և զժամանակս իւր Եւ-  
սերի ոչ յիշէ : Այս կայնան բազմացոյց ըլ-  
Քաղդէացւոցն զմնօրութիւնն և զկախար-  
դութիւնն ըստ տատեղացդ ըղձութեան :  
Եւ որդիք նորա իբրեւ Վատուծոյ երկրապա-  
գեցին նմա , և կանգնեցին նմա պատկեր ՚ի  
կենդանութեանն իւրում , և այս է սկիզբն  
կուոց երկրապագութեան : Այս շինեաց քա-  
ղաք և անուանեաց Խառոան ՚ի վերայ ան-  
ուան որդւոյ իւրոյ : Եւ Դուկաս յիշէ զա-  
յԱւետարանին , և Մոլսէս ոչ յիշէ վասն  
պատճառիդ :

Արփաքստդ լեալ ամաց չորեքհարիւր  
վաթսուն և հնդից , և ըստ Վարուոցն չորեք-  
հարիւր երեսուն և ութ ամաց՝ (մեռաւ) : Կայ-  
նան լեալ ամաց հարիւր երեսուն և ըննից՝  
ծնաւ զիաղա : Այղա հարիւր երեսուն ամի-  
ծնաւ զիշեր , և եկաց չորեքհարիւր վաթ-  
սուն ամ . և ըստ Վարուոց երեսուն ամաց  
ծնաւ , և եկաց չորեքհարիւր երեսուն և  
երեք ամ և մեռաւ :

Եբեր հարիւր երեսուն և երեք ամի ծը-

նաւ զՓաղէկ, և ապա զիշկտան ըստ Ենանոսի ժամանակադրի, իսկ ըստ Վորուոցն երեսուն և չորս ամսոց. և եկաց երեք հարիւր քառասուն և երեք ամ. և են որ ասեն, թէ սովաւ կոչեցան Երբայեցիք, զի՞ ի հարիւր քսան ամի Փաղէկոյ բաժանեցաւ երկիր յաճախել ազգին :

Իսկիզբն աւուրցն Ուաւագայ սկսան շենել զաշտարակին յերկիրն Աննասր. Եւ Ներըովիթ հսկայ որսայր շինողացն որս, և կերակրէր զնոսա : Եւ շինեցին զամն քառասուն՝ երկուցեալք ՚ի նզովիցն Նոյի, զի անցին զերդմամբ և զնզովիւք նորա, և զրկեցին զիրեարս և ակն ունեին ջրոյ . և զայս հնարք իմացան, զի ապրեսցին սովաւ : Եւ իջեալ Տերն բաժանեաց զեզուս նոցա, զմի լեզուն յեւթանասուն և երկու լեզուս : Եւ Երեր այր ծեր և աստուածապաշա՝ ոչ միաբանեաց ընդ նոստ, և ասեն՝ թէ բուն լեզուն Վդամայ առ նմա մնաց : Եւ նա անուանեաց զերկիրն զայն Բաբելոն, որ թարդմանի առերուն ըստ Քաղդէացւոց լեզուին՝ որ է Վորուոցն : Եւ սուրբն Յակովը և սուրբն Հփրեմ և սուրբն Վասիլ և սուրբն Գրիգոր նիւսացին վկայեն այսմ, թէ առ Երեր մնաց լեզուն Վդամայ : Եւ սուրբն Յակովը ուռչ հայեցին և Յովհաննէս իթրացին և այլք ասեն թէ, այն է լեզուն Վդամայ որ մնաց առ

Երեր, զոր այժմ շրեայք ունին, և ոչ Քաղդէ-  
ացիքն զօր Ասորիք ունին<sup>(1)</sup>: Բայց զարմանամ  
թէ սրագէս ծածկեցաւ այս ՚ի նոցանետ, որ ըս-  
կիզբն ազգին Խորայելի Յակոբ է, և յորժամ  
անցին ընդ ծովին, ասքա անուանեցան Եր-  
բայեցիք: ևոչ վասն Երերոյ, զի Երբայե-  
ցին անցին թարգմանի, և ՚ի յանցանել ծովուն  
առին նոր լեզու որպէս զայլ պարզեւոն,  
բայ Ատղմասին որ ասէ: “Յելանելն յերկրէն

(1) Մթին են բանքս, թուի Եմէ ասիցէ՝ ու Քաղդէացին:  
Այս այս հաստած բանից գտանի ՚ի զի՞ս Ապուլֆարա-  
նոց: առեալ ՚ի բնագրէն պատմութեան Միխայելի: “Վարդա-  
պետք մեր Վասիլ և Եփրեմ առեն, Եմէ յԱգամոց մինչեւ  
Երեր միմիայն լեզու էր մարդկան: ասորականն: զոր ընդ  
Ագամոց խօսեցաւ Աստաւած: Եւ լեզուս այս բաժանեցաւ  
յերբեակ բարբառս: յորս ընտրելագոյնն է արամանեանն  
զոր Եգեսացիք: Խառանացիք և բնակիչք ներքին Ասորւոց  
՚ի կիր առնեան: Երկրորդնէ Պաղեստինեանն զոր Դամակա-  
ցիք, բնակիչք Աթբանանու և մնացեալ մասն բնակաց ներքին  
Ասորւոց խօսին: Երբորդ բարբառսն որ է խառագոյնն, և  
Քաղդէացւոցն նաբագեանց: որ ՚ի գործ ածի ՚ի յերինս Ե-  
սորեաստի և յաւանս Խրաբոյ: Յավհաննէս եգեսացի հաս-  
տատէ: Եմէ ազգ մարդկան ոչ գտգարեաց Երբէք ՚ի խօսե-  
լու զիկու երբայսական յետ խառնակութեան լեզուացն ՚ի բա-  
րելոն: (“Պատմ. Հարսուսակեաց. յեր. 11): Եւ ՚ի Տարէ գիրն  
ասորին: (յեր. 9), ասէ: “Սուրբն Բարսեղ և սուրբն Եփ-  
րեմ առեն, Եմէ նախ քան զբաժանաւմն լեզուացն առաջի  
լեզուն էր ասորականն, որպէս երեւի ՚ի բառէս Բարելոց.  
ևց՝ խառնիուն: Խակ սուրբն Յակովը և սուրբն Յավհաննէս  
մեգացի առեն՝ Հրէիցն լինել այն լեզու որ մնաց տու Երեր,  
որ էր այր արդար և ոչ միարանեաց ընդ նոսա ՚ի շնութեան  
աշտարակին Բարելոնի:”

Եղիպտացւոց, լեզու զոր ոչ գիտէր՝ լուաւուն  
Եւ առաջին լեզու քաղգէացին է, ուստի Խո-  
րայելացիք են, և ունեին զհինն՝ մինչեւ ըզ-  
նորն առին, ապա առաջինն քարձաւ ՚ի նո-  
ցանէ, և այլ ոչ կալան դայն :

Փաղէկ լեալ ամաց հարիւր երեսնից ծր-  
նու զիտագաւ, և լստ Կոորւոցն երեսուն  
ամաց . և եկաց երեքհարիւր քառասուն և  
երեք ամ, խակ լստ Կոորւոցն երկերիւր ե-  
րեսուն և ինն ամ :

Ի ջրոցն մինչ ՚ի բաժանումն լեզուացն լստ  
Եւթանասնիցն վեց հարիւր վաթոսուն ամէ,  
նոյնաղէս և լստ Կոորւոցն :

Դագաւ լեալ ամաց հարիւր երեսուն և  
երկուց՝ ծնաւ զիերուք, և լստ Կոորւոցն՝  
յիսուն և երկուց ամաց . և եկաց երեքհա-  
րիւր երեսուն և ինն ամ, խակ լստ ասորի  
գրոց՝ երկերիւր երեսուն և ինն ամ : Ի ժա-  
մանակս յայս՝ Աերովլթ շինեաց երիս քա-  
ղաքս, զԱքեգ, զիւռհա և զՎծրին : Եւ  
զինի ցրուելց յաշտարակէն, որդիքն Քա-  
մայ եկին յերկիրն Փղտացւոց և ի իբա-  
նանու . և հայեցեալ ՚ի պարարտութիւն  
երկրին և ՚ի վայելսութիւն, հաճեցան և  
բնակեցան անդ, և ոչ գնացին ՚ի վիճակն  
իւրեանց որ կոսր յարեւմտից Եղիպտոսի,  
և ժառանգեցին զիլնակի նզովքն Նոյի,  
զծիծաղելցն և զսահմանափոխութեանն զոր

՚ի բաժանել վիճակին նոցա եղ :

Ի յեւթանասուն և չորրորդ ամին Ուտաւայ լցաւ երեք դարն, որ է երեք հազար ամ, և ՚ի յեւթանասուն ամին նորաշինեցաւ աշտարակն . և զինի քառասուն ամի շինուածոյն ջրուեցան ընդ երկիրն ամենայն . և լցաւ երկիր պատերազմօք , և որ յաղթեր , պատկեր յաղթութեան կանգնելին նմա և երկրապագելին : Ի հարիւր և ուասըն ամին Ուագաւայ անկառ աշտարակն : Օկնի ջրոյն առ աջին թագաւորեաց ՚ի Յարելն՝ Ա, երրովթ . և ՚ի քառասուն ամին Ուագաւայ թագաւորեաց Ա, երրովթ . և ՚ի սաստիկ շնչմանէ աստուածառաք հողմոյն շրջեցաւ աշտարակն , և մեռաւ Ա, երրովթ սպանմամբ աշտարակին զարկուցմանէ (1) , և են ժամանակը թագաւորութեան նորա վաթսուն և ինն ամ : Որպէս Ունանդրոս պատմէ մոգն, և յերկրորդ գիրքն Յովսափայ (2) պատմի, թէ թագ նորա հիւսածոյ էր և ոչ կռանակոփ :

Ի մեռանելն Փաղեկայ տեսին որդիքն Եկտանայ եղքօր Փաղեկայ , թէ նոցա ոչ


(1) Միւս թարգմանութիւնն զայս օրինակ պատմէ . արմանք ասեն զԱ, երրովթ ՚ի յաշտարակին անկմաննէն մեռանիլ բայց մեք ստուգեցաք յետ ժամանակի սպանանիլ նմա ՚ի հայկայ որդւոյ թորգոմայ : . . . .

(2) Վկայութիւն Յովսափայ երկրորդ գրոցն ոչ յիշէ ՚ի միւս թարգմանութեան, և Յովսափն կարծի Յովսեմոս լինել

տուաւ ժառանգութիւն, զայրացան և ե-  
ղին իւրեանց երիս գլխաւորս, զիյաբա,  
զիւփիր և զիւլիլս. և հնարիմացութեամբ  
կազմեցին զէնս, թուր, ազեղն, զրահօ, սա-  
զաւարտս, վահան, և սկսան այսու յաղթել  
տմենեցուն. և փախչեին առաջի նոցա: Եւ  
վասն զերծման և ասպրելոց ՚ի նոցանեւ, սկը-  
սան շինել բերդո և ամրոցս. և այս եղեւ  
պատճառ և սկիզբն զինագործութեան: Եւ  
՚ի յաղթահարիլն բազմաց՝ աղաչեին զրդի-  
սըն Եկտանայ, առնուլ իւրեանց ժառան-  
գութիւն զոր և կամիցին, և խաղաղսնալ ՚ի  
պատերազմելոց ընդ նոսա: Եւ էառ Ատրայն  
զինկարեր երկիրն, զոր Ատրա կոչեաց յիւր  
անուն: Եւ Ուփիր զաշխարհն ուկեհանաց,  
որ է Հնդիկք: Եւիլա՝ զպատուական ականց  
երկիրն, որ Եւիլատ կոչեցաւ յանուն նորա:

Աերուք լեռաւ ամաց հարիւր երեսնից՝ ծը-  
նաւ զւաքովր ըստ Եւթանասնիցն, և ըստ  
Երրայեցւոցն և Ասորւոցն հարիւր ամպա-  
կաս գայ ՚ի ջրոյն մինչեւ ցայս վայր: Եւ ե-  
կաց Աերուք երեք հարիւր երեսուն ամ. և  
յաւուրս նորա իմացեալ եղեւ դահեկանի և  
դրամի շինուած անուամբ գրոյ թագաւորա-  
ցըն: Եւ Աերուք շինեաց զիրուձ յանուն իւր:

Յայսմ ժամանակի երեւեցան Կմազուն-  
քըն յաղգէն թորդոմայ այսպիսի պատճա-  
ռաւ: Եղեւ զի կին մի մնաց ժառանգ թա-



գաւորութեանն թորդոմայ , և ոչ կամեցաւ  
այր առնուլ . և էր յաղթող , և ելանէր ա-  
ւերէր զբազում աշխարհս : Եւ եղեւ նեն-  
դութիւն ինչ ՚ի զօրաց նորա , և զայրացեալ  
կոտորեաց զարուական զօրս իւր , և արար զօր  
կանացի . և միանգամ յամին առ սակաւ սա-  
կաւ երթային խառնէին ընդ արս յայլ աշ-  
խարհ , և զծնեալ էդսն ապրեցուցանէին և  
զարուսն սպանանէին : Եւ զայն տեսեալ ժո-  
ղովեցան յամենայն աշխարհէ մետասան թա-  
գաւորութիւնք , և աւերեցին զամրոց թագա-  
ւորութեան նոցա զ՝ լիուն քաղաք ՚ի կողմէն  
հիւսիսի , և առա բարձաւ անկարգութիւնն ,  
և արքն առին զիշխանութիւնն որք ծնեա  
էին ՚ի կանանց անտի , օրինօք ամենայն եր-  
կրի , և ապրէին արուքն և լցաւ աշխարհն :

Օ կնի քառասուն ամի մահուանն ՚Ներ-  
բովթայ և խափանելոյ թագաւորութեանն  
յորդւոցն ՚Բամայ ՚ի ՚աբելոն , թագաւո-  
րեաց Կամբիւրոս քաղդէացի ՚ի ժամանակս  
Ուրուքայ , ՚ի յիսուն և վեց ամին : Այ շե-  
նեաց զՇ օշ քաղաք<sup>(1)</sup> , որ ասեն զՇ սպահան .  
և յայսմ ժամանակի տարածեցաւ զինագոր-  
ծութիւնն , և սկսան գերել զմարդիկ և վա-  
ճառել : Ի յեւթանասուն ամին Ուրուքայ  
Կամբիւրոս արքայ քաղդէացի , սպատերազ-

(1) Վարդան ՚Ներբովթայ առէ շինեու ՀՀ օշ Պարմ . եւ .  
24 • Տիո • Մասկուայ :

Աւալընդ Կալատու աղգին<sup>(1)</sup>, յաղթահարեաց  
զնոսա և ելին ՚ի լերինս : Աերուք ուսոց  
Նաբովըայ զազանդն Քաղդէացւոց կախար-  
դել և հմայել ՚ի նշանս ասուելաց : Կամ-  
բիւրոս թագաւորեալ ամս ութառուն եւ  
հինդ . զկնի նորա Երրորդ թագաւորեաց  
՚ի Հաբելըն Աամիրոս ՚ի հարիւր և վեց ա-  
մին Աերուքայ, ամս եւթանատուն և երկու :  
Աս պատերազմեցաւ ընդ Յօյնս և ընդ Փր-  
ռանդս և ընդ Քանանացիս, և ՚ի ներքոյ  
Հարկի կացոց զնոսա . և շինեաց բազմու-  
թիւն քազաքաց յաշխարհին Քաղդէացւոց  
և Պարթեւաց . և սա սկսաւ չափ և կան-  
դուն և կշխո (սահմանել) : Եւ սա ետ դնել  
խայտուածս և պատկերս ՚ի կտոււս, և գաւա-  
զարուեստ ապրիշու մգործելը<sup>(2)</sup> . և զամենայն  
գոյնս ներկուածոյ սա սահմանեաց : Եւ զայս  
ասաց Աամաստրոս<sup>(3)</sup> մոգ յիւր պատմութեանն  
վասն նմա, եթէ երեք տչք ուներ և եղջիւր .  
և սա էր հսկայ քաջ, որ և եհան ՚ի Քաղդէ-  
ացւոցն զԱերովլթեանսն, և ջնջեաց զազ-  
գըն նորա անտի : Նաբովը լեալ ամաց եւ-

(1) Դ միւս թարդմանութեան՝ Աամիրոսի առէ տուեալ,  
պատերազմ ընդ աղգին Կալատու (Գաղաւագու) :

(2) Միւս թարդմանութիւնն իտուհործութիւն դնէ , որ  
զեյն նշանակէ . որպէս ունի և Վարդան . իսկ ՚ի տպեալն  
առաջին՝ անգիտաբար փոխեալ է ՚ի իտուհործութիւն :

(3) Յօրինակիս Աամարոս :

թանասուն և ըննից՝ ծնաւ զօմարտ լստ Եւ-  
թանանիցն , և ըստ Ծորւոցն քսան և ինեւ  
ամաց . և եկաց երկերիւր և մի ամ լստ Եւ-  
թանանիցն , և ըստ Ծորւոցն հարիւր քա-  
ռասուն և ութ ամ : Եւ ՚ի քսանեւ հինգ (ամին)՝  
Կաբովայ ըստ<sup>(1)</sup> Եւ թանանիցն . էր ճշնո-իւ-  
նըն Յովեայ , որդես առեւ զնմանեւ Եւ ըստ ժանանային . և  
առեւ այսպիս . “ Եւր դեւ մեծապո-ն յորտ-ոցն Յեկ-  
տանայ , անուն նորա Յովե , որ պատերազմեցա- Եւ ին  
ժամանակն (ամս) ընդ սպանայի , և զըսո-իւմբն Եւ-  
պո-ծոյ յաղլող գուստ- ՚ի վէրայ նորա : ” Իսկ Յովեի  
տղիր<sup>(2)</sup> առեւ . իւ յինևսուն ամին Կաբովայ եղլ-  
ճշնո-նն Յովեայ : Ի՞այց առեւ ոմանք , իւ եր նու յորտ-  
-ոցն Եւստայ . որ առեւ ՚ի կարգ որտ-ոց նորա : իւ  
Յովեաբ որտի Օպըեհի . և հինգ Հարիւր ամաս- յո-  
ւաշ և առեւ զի յովեա (3) :

(1) Առանաօր ՚ի բնագրես թուղթ մի անկետ էր , զորոց  
զբարունակութիւնն ՚ի միւս թարգմանութենեն ՚ի փոխ ա-  
ռեալ եղար առա նոտրագրոււ :

(2) Ոմանք համարին զստ լինել հեղինակն գրոց Հիպո-  
մնեստիկ կոչեցեալ ըստ Յունաց : զոր Փասովրիկանոս հրա-  
տարակեաց ՚ի Համբուրի քաղաքի յամի 1741 : Գրեալ է մա-  
տեանո ընդ մէջ և և գարուց , յորում գտանին սպաս-  
ութիւնք առասպեկտականք և մտացածինք :

(3) Որ ինչ զՅովեայ իտօնի առտանաօր Վիխոյէլ , առնու ՚ի  
զրոցն Յավեայ , և այս բանք ըստ ասորական բնագրի միոյ գտա-  
նի և ՚ի յունական թարգմանութեան , յորմէ յեղեալ տեսանի և  
՚ի մերումն ՚ի ձեռն թարգմանչաց , ՚ի վախճանն Խը զլիսոյն , զկնի  
17 համարոց . ուր առեւ . “ Յառաջ էր անուն նորա Յորաք ...  
և հայր նորա Զարեհ , որդի որդւոյն Խսաւայ , և մայր նո-  
րա բոսորոցի , որդէս զի լինել նման հինգ երորդ յԱբրահամէւո

Ի յեւ-լն ամին թարայի լադա-որեաց ՚ի Շաբելըն  
Երիտաղսու (Երիտասասու) ամս ու-լուգասն : Ե- յեւ սո-  
րս կատանեցա- լադա-որու-լի-ն . Բաղրեաց-ոց ամ-  
ս-լն մինչ- ՚ի Վ իլս լադա-որե ալու-րացի . զ-  
պատերազմին ընտ միտան . Բաղրեացին և Ե լու-րա-  
ցին և Ա յատացին յաղագս լադա-որու-լի-նան , մինչ-  
շըրուց- Վ իլս ալու-րացի . և Ե լ ՚ի հեաղանդո-  
լւնեն Բաբելուց-ոց . և ոիրեաց լադա-որելը նոյս .  
և իլսեաց ամենայն Ասիոյ ամս վալսուն և երիո : Ե-  
Երուրիս ասուսէ ա-սընթեր Ա ստալ , զբ Երուրիս  
կոչեն ար յուրէ շնուեալ լուսաշին : Բասրոս ամն լա-  
դա-որեաց ՚ի Շաբելըն . և Ս ահերոն Ելքայր թարայի  
աղան զնա , և ասեն լիե՝ վասն ոսկեղին պատիերին զբ  
եառ ՚ի Ա ստովը , որ Եր արմադես Արյան ի-որն .  
Այս շնուեցա- Դամասկոս ՚ի Ա պրիբոսէ (1) Հի-լաց-ոյն .  
Նախ ասն զնուանելը Երբահամո- հինգ ամաս . և Քովեպո-  
սուե լիե , ար Ա լսել յորդ-ոյ Երամայ շնուեցա- Դամասկոս  
Ենորոնիս պատմագիւր ասե (2) , լիե ՚ի ջրոյն մինչ-  
ց Երբահամ՝ են ամս հաղար ու-լսուն և դի , և յեւ-  
տամայ՝ երեսհաղար երեսուն և հինգ , և ՚ի բաժանմա-  
նէն երիւի մինչ- ց Երբահամ՝ չըթեհարդիր ասուն և դի  
ամ : Ե- ասս հաւասարեցան Յունաց և Եսոր-ոյ լի-ն-  
ի ծնանելը Երբահամո- Թուս- Ա ստովը : Եր-

(1) Վարդան ասէ շինեալ յԱրամայ հիւթացւոյ: Եր. 24.

(2) Անդրսնիկոս պատմագիւր , զօրս զիկայութիւնն ՚ի  
մէջ բերէ Միխայէլ . համարի յօմանց թէ իցէ Անդրսնիկոսն  
Արդարուն կոչեցեալ . յիշատակեալն և ՚ի հերոնիմուէ ՚ի Յա-  
սուաբանութեան Դամիկէ :

բահամու հօրն Անլէս լոռեր անունն (1) . և յէս պահ  
ամի ծննդեանն Աբրահամու ծնաւ Ասրա Դուռարը  
իմարրայի ՚ի Օհրութայ (2) ինոջէ՝ և ոչ ՚ի հօրէն Աբրա-  
համու , որպէս ինքն առէ առ Փարանոն և առ Աբիմե-  
լէս (թէ քոյր իմէ (3)) ՚ի հօրէ և ոչ ՚ի մօրէ :

Եւ Աբրահամ եղեալ եւթնետասն ա-  
մաց , սկսաւ ՚ի կամաց իւրոց խնդրել զիւ-  
տուած : Յայսմ ժամանակի եղեւ բարկու-  
թիւնն Աստուծոյ ՚ի վերայ Յաբելացւոցն :  
Օի թռչունք զոր ճայ կոչեն , ուտէին զան-  
գաստանս նոցա . և իւրաքանչլւր ոք այն-  
շափ հերկէր և ցանէր , զոր պահել կա-  
րել ՚ի բաց քշելով զթռչունս . և ՚ի պահե-  
լըն Աբրահամու զանդաստանս հօր իւրոյ ,  
ձանձրանսայր ՚ի հալածելոյ զձագսն . և խըն-  
դրեաց օգնութիւն յամենայն անուանեալ  
աստուածոցն , և ոչ եգիտ . և յարեգակնէ  
և ՚ի լուսնէ և յաստեղաց և յերկնէ հայ-  
ցեաց և ոչինչ օգտեցաւ . ապա ասաց . “ Ն-  
հասանելի Աստուած՝ ամենից վերագոյն և  
արարիչ այս թռչնոց և անդաստանաց , յայտ-  
նեա զքեղ ինձ և հալածեա զնոսա : ” Եւ  
վաղվաղակի վերացան թռչունքն , և այլ ոչ  
դարձան յանդաստանսն : Յայն ժամն ծա-  
գեաց շնորհ ողորմութեանն Աստուծոյ ՚ի

(1) Վարդան ունի “Մալքաթու էր անուննու Անդ :

(2) Ոմանք յօրինակաց ՚ի Զընաբայ :

(3) Ծննդոց . Ի . 12:

աիրուն Աբրահամու, և ասաց . “Գտայ զԵստուած զարարիչն ամենայն արարածոց ։ ո Եւ յաճախեաց Աբրահամ ՚ի խնդրուածսն Երեւիլ նմա Արտուծոց<sup>(1)</sup>։”

Հայսմ ժամանակի թագաւորն Ալիլոս մեռաւ, և թագաւորեաց Նինոս որդի նորա ամս յիսուն և երկու, երկրորդ (լեալ) թագաւոր Աթուրացւոց ։ Այ շինեաց զԱխնուէ, և փոխեաց զաթոռ թագաւորութեանն իւրայ Աթուրեայ ՚ի Նինուէ . և կազմեաց կուոք մեծ արկածու<sup>(2)</sup>, հօր իւրոյ Ալիլոսի (Ալիլոս) ոսկեղէն . և ետ երկրպագել նմա Եւ յայնժամ շինեցան իւաբովմթ և իւասան և Քաղանէ, և աստ շինեցաւ Երաւաւզէմ Եւ Աբրահամ զառւն կուոց հօր իւրոյ որ կայր ՚ի Աթուրա, այրեաց, և Արան եղբայր իւր ջանաց փրկել զկուռոսն յայրմանէ . և ընդ նմին այրեցաւ ։ Եւ ՚ի վախտուն ամին՝ Աբ-

(1) Ի գիրս ծննդոց համառ օտակի խօսի զկոշմանեն Աբրահամու . իսկ ՚ի գիրս արտաքնոց պատմագրաց . Հրէից և Ասորւոց, գտանին բանք երկարապատումք զԱբրահամէ, առանստոյքս համարեալ . որպէս և Գիրն Արտուրոյ կոչեցեալ, յորոց հանեալ և Միինայէլ զօր ինչ առաւելաբանութեամբ խօսի զվարուցն Աբրահամու . ի միւսում թարգմանութեան յաւելքալ տեսանին և այլ պարագայք, յորում և զվարուցն Մելքիսեդէկի բանք մնին՝ հետեւելով անստոյք պատմութեանցն բարունեաց Հրէից .

(2) Միւս թարգմանութեան օրինակքն ունին խառն հեծոց, կամ հեծ ահայքո՞ւ ոսկեղէն . և թերեւս իցե յածա .

բահամ և թարա հայր իւր և Ապօվլը<sup>(1)</sup> և զ  
բայր իւր և Դովտ որդի Վռանայ, յիւռհա-  
յէ Քաղղէացւոց ելեալ եկին բնակեցան ի  
խառան ամս չորեքտասան, և հրամանաւ  
Ըստուծոյ ելեալ Երրահամու եկն բնակե-  
ցաւ յերկիրն Քանանացւոց Եւ լեալ Երրա-  
համ ութսուն և հինգ ամսոց, մտաւ յշգիպ-  
տոս, և ծնաւ զիսմայէլ ի Հագարոյ աղախ-  
նոյ իւրոյ ։ Եւ եկաց Խամայէլ հարիւր երե-  
սուն և եւթն ամ, մինչեւ ի վաթսուն ամն  
Յակովու. ։ Յայսմ ժամանակի թագաւո-  
րեաց Համիլտոն կինն Ախնոսի ի վերայ Ա-  
թուրացւոց՝ ամս քառասուն և վեց ։ Եւ ոս  
շինեաց թլեր՝ բլուր ի հողոյ կուտեալ ամ-  
ռոց ։ Իայց մեք գտաք այլ պատճառ թլա-  
ցըդ, թէ ի յաճախել պատկերապաշտու-  
թեան յամենայն տեղիս, եհան Աստուած  
հողմն փոթորիկ յերկիր, որ առեալ զկուռ-  
սըն թաղեաց ի տեղիս տեղիս հողակուտովէ  
Եւ բնակեալ ի նոսա գեւքն, կան ի տան-  
ջանս ի նոսին կուռսն. և մինչեւ ցայսօր  
դիւթք և կախարդք առ թլովքդ գործելով  
զարուեստ իւրեանց, լսեն ձայն որ գայ  
ի դիւացն ։

Երրահամ իննսուն և ինն ամսոց եղեալ  
թլիատեցաւ. և հարիւր ամսոց լեալ ծնաւ  
նմա Խառհակ ըստ աւետեացն Աստուծոյ ։

(1) Յօրինակի մերում Կաբուլ :

Եւ ամք ծառայութեան նոցա յիշդիպտոս՝  
չորեքհարիւր և երեսուն ամ ըստ Ըբարե-  
լոյն։ Եւ սկսանի ժամանակ սպանդիտութեան  
նոցա յեւթանասուն և եւթն ամն Ըբրա-  
համու, յորժամ ել ՚ի տանէ հօր իւրոց,  
որպէս հրամայեցաւ ՚ի Տեառնէ։ Ի հարիւր  
հնգետասան ամին եհան զիսահակ ՚ի զենու-  
մըն։ և հնգետասան ամաց էր իսահակ, և  
այլը երեսուն ամաց ասեն, և մեք հաւա-  
նիմք հնգետասան ամին։ Եւ եկաց Ըբրա-  
համ հայր իւր եւթանասուն և հինգ ամ,  
մինչեւ յերեսուն և հինգ ամն Յակովլեայ։ Ի  
յինն ամին իսահակայ պատմեցաւ Ըբրահա-  
մու՝ թէ ծնան որդիք Նաբուկոս եղբօր քո։  
Ի հարիւր երեսուն և չորս ամին Ըբրա-  
համու և յերեսուն և եւթն իսահակայ,  
մեռաւ Ասռա հարիւր քսան և եւթն ամաց։  
Եւ առեալ Ըբրահամու զլիենդուրա ՚ի կը-  
նութիւն։ և էր Ըբրահամ հարիւր քառա-  
սուն և երկու ամաց։ Յերեսուն և ութ  
ամին իսահակայ էառ զԱներեկա ՚ի կնու-  
թիւն։ և ՚ի վաթսուն և ՚ի մի ամին(1) իսահա-  
կայ յզացաւ Աներեկա։ և գնաց Աներեկա  
առ Աներիսեղեկ ազօթիւք խնդրել յԽոտու-  
ծոյ զպատճառ վիճման մանկանցն որ յորու-

(1) Աստանօր տարբերի օրինակս մեք ՚ի պատմութենէ  
սուրբ գրոց, յորում ասի քառասնամեայ առնուլ իսահակայ  
զԱներեկա և վաթսոնամեայ ծնանել որդիս ծնն. Իէ. 20-26։

վայնի նորա, զի գիտասցէ՝ յայտնելով նմա  
Ըստուծոյ: Եւ նա առեալ հրաման ՚ի Տեառ-  
նէ՝ ասէ. « Երկու աղդ են յարգանդի քում,  
և երկու ժողովուրդք. և ժողովուրդ զժողո-  
վը եամբ ել և ել առնիցէ, և երէցն կրտսե-  
րոյն ծառայեցէ<sup>(1)</sup>: » Ենանոս ասէ, ՚ի վաթ-  
սուն ամին խահակայ ծնաւ Աերեկա, և այլք  
հարիւր ամաց ասեն: Երէցն Եսաւ՝ որ է  
Եղոմ, ՚ի նմանէ Եղոմացիք՝ որ են Փռանկք.  
Կրտսերն Յակովը, յորմէ Խորայելացիք:

Դյեւթանասուն և ՚ի վեց ամին խահա-  
կայ մեռաւ Աբրահամ. ՚ի հնգետասան ամին  
Յակովը խահակ Եկաց հարիւր ութսուն  
ամ, մինչեւ յերեսուն և մի ամն Դյեւեայ:  
Եւ էր Աբիմելէք թագաւոր քաղդէացի,  
որ է Գերերա Փղտացւոց, բարեկամ տանն  
Աբրահամու: Եւ լեալ Յակովը եւթանա-  
սուն և եւթն ամաց, ՚ի հարիւր երեսուն  
և եւթն ամին խահակայ գնաց ՚ի խառան  
օրհնութեամբ հօր իւրոց. և Եկաց Յակովը  
հարիւր քառասուն և եւթն ամ, մինչեւ յեր-  
եստասան ամն կահագու. և մեռաւ զինի  
երկերիւր երեսուն և երկուց ամաց խոստ-  
մանն Աստուծոյ տալ որդւոց նորա զժա-  
ռանգութիւն երկրին. և յիշգիպտոս Եկաց  
ամս եւթնետասն: Եւ Եսաւ էառ կանայս  
՚ի դստերաց Քանանացւոցն. և յորժամ գի-

(1) Ճանդ. • ԻԵ. • 25.

տաց թէ չէ հաճոյ հօրն, էառ զԱղպայէթ դուստր Խամայելի :

Հայոմ՝ ժամանակի շինեաց Եմովը հայր Ախոքեմայ՝ քաղաք, և կոչեաց զնա յանուն որդւոյ իւրոյ Ախոքեմ, յորմէ յափշտակեցաւ Դինա երկոտասան ամաց . և որդիքն Յակովը ապանին վասն նախանձու քեռն իւրեանց երեք հազար սնձինս : Եւ Եսաւ բնակեցաւ ՚ի Աէիր : Յակովը ութսուն ամաց եղեալ՝ առ զի իս, և ութսուն և հինգ ամաց եղեալ՝ ծնաւ նմա Ռուբէն, և ութսուն և եւթն ամաց եղեալ՝ ծնաւ Շմաւսն, և յութսուն և ինն (ամաց) ծնաւ ՚ի եւի : Յերրորդ ամին ՚ի եւեայ և յիննսուն և մի ամին Յակովը այ ծնաւ Յովսէփ . և ՚ի տասն ամին ՚ի եւեայ ել Յակովը առ Խաչակի հայր իւր . և ՚ի քսան ամին ՚ի եւեայ վաճառեցաւ Յովսէփ . և յերեսուն և մի ամին ՚ի եւեայ մեռաւ Խաչակի հարիւր և ութսուն ամաց : Օ կնի մահուանն Խաչակայ վարձեցին որդիքն Եսաւայ զորդիսն Ծմմոնայ և Վովաբու և զԱրամ, և եկին ՚ի Վեբրոն պատերազմել ընդ Յակովը և ընդ որդիս նորա : Եւ խրստացեալ Յակովը և հար նետիւ և սպան զիսաւ . և փախեան եկեալքն ՚ի վերայ նոցա : Յակովը հարիւր երեսուն ամաց եղեալ՝ էջ յիշիպտոս, յերկրորդ ամի սովոյն և ՚ի յինն ամի իշխանութեանն Յովսէփու : Իսո

Հորուցն եւթանասուն ոգի մտին յիշիպառոս, և ըստ Եւթանասնիցն և ըստ սրբոյն Ատելիաննոսի նախավիկացի՝ եւթանասուն և հինգ։ Եւ այս է պատճառն. զի Վասրին զչչոլսէփ և զերկուս որդիս Յովսեփու միայն հաշուէ, և Եւթանասունքն զորդիս որդւոյն Յովսեփու՝ որբ դեռ չեին ծնեալը՝ թուեն։

Դեւի լեալքառասուն և վեց ամաց ծնաւ զլահաղ. ոմանք զչչովքայ փորձանքն յսցոմ ժամանակի ասեն։ Լահաղ լեալ վաթսուն ամաց՝ ծնաւ զմրամ. և եկաց հարիւր երեսուն և երեք ամ, մինչեւ յերբորդ ամն Վովսիսի։ Վմրամ եւթանասուն ամաց ծնաւ ըշ Վովսէս. և յերեսուն և հինգ ամի իշխանութեանն Յովսեփու թագաւորեաց Վաթսուրոցն ։ Եւ յերեսուն և ութ ամի իշխանութեանն Յովսեփու թագաւորեաց Եղիպտացւոցն ։ Բերբոն՝ ամը երեքտասանն ։ Եւ մեռաւ. Վմրամ յիշիպտոս նախ քան զելանելն իսրայելի երեքտասան ամաւ, կեցեալ ամս հարիւր երեսուն և հինգ։ Եւ եկաց Յովսեփ հարիւր և տասն ամ, և մեռաւ ՚ի վեց ամին Վմրամաց և խօստմանն Վատուծոյ յերկերիւր ութսուն և վեց (ամին). և զինի մահուան նորա մտին աղդնորա իծառայութիւնն ։ Եւ յայնմ ժամա-

(1) Ըստ Սամուելի Աշուադու որ տիրեաց ամս 52:

նակի թագաւորեաց Վմբափթիս<sup>(1)</sup> Եղիպտոս  
սի ամս քառասուն և երեք : Այս սկսաւ հեղ-  
ձուցանել զորդիսն Խորայելի ՚ի ՚Նեղոս գետ :

Եւ ծնաւ Վովսէս յեւթանասուն ամին  
Վմբամու, և յերեքհարիւր յիսուն ամի խոստ-  
մանն Վատուծոյ : Եւ ընկեցեալ ՚ի գետն,  
դուստրն թագուորին՝ Թերմովթիս, և Եր-  
րայեցին կոչէ զնա Վարիա, զոր Քանիթարա  
թագաւորին Վեմփիս քաղաքի առ ՚ի կնու-  
թիւն, սա առ զՎովսէս ՚ի ջրոյն, և եղեալ  
տասն ամսոյ՝ տուաւ յուամունս յԵնէսն և  
յՎմբունի, և նոքա ուսուցին զնա :

Ի մտէն յԵղիպտոսի մինչեւ յելն՝ երկու  
հարիւր հնդեւտասան ամ : Ի քսան և երկու  
ամին Վովսիսի նեղել սկսաւ թագուորին  
զԽորայել շինուածովք քաղաքաց: Եւ ՚ի քսան  
և ութ ամին Վովսիսի շինեցին զՆերմուպօ-  
լիս<sup>(2)</sup>. և արարին պատերազմ Քուշացիք ընդ  
Եղիպտացիան, և յաղթեցին և տարսն գե-  
րի զՆուաբուսա մայրդիրն Վովսիսի, և առին  
՚ի կնութիւն : Եւ յերեսուն և եւթն ամին  
Վովսիսի ծնաւ Յեսու որդին՝ Կաւեայ, և  
Վովսէս շինեաց զՆերմուպօլիս, և պատե-

(1) Ըստ Եւսեբեաց Ամենովիլիս, որում տայ ամս 50 կոմ՝ 31 • Քրմ • Համ • յեր • 24 • 96 :

(2) Վարդան (Պատմ • յեր • 28). Թերմուպօլիս անուանէ յանուն թերմութեայ մայրագրին իւրաց . և այս մեղ ուղղ շագայն թուի :

բաղմեցաւ ընդ Աթիուքաս թագաւորն Փըզոպացւոց <sup>(1)</sup> զտան ամ, և յաղթեաց նմա, և առ ՚ի նմանէ զնուագուսա . և ՚Քամփարայ՝ <sup>(2)</sup> այրն ՅԵրմոթեայ օխացաւ ընդ Վոլսիսի, և կամէք սպանանել զնա . և զարէք վասն յաղթութեան նորո, և չկարէք մեղանչել նմա վասն ՅԵրմոթեայ անուանեալ մօրն Վոլսիսի, զոր Վոլսէս դարձոց ՚ի դերութենէն . և յորժամ մեռաւ կինն այն, առաքեաց զՔամնթիս սպանանել զՎոլսէս . և Վոլսէս իմացաւ զայն և փութացաւ սպան զնա . և ինքն փախեաւ, և գնաց յԱքաբիառ Ոտպուել Վաղիանացին :

ՅԱբրահամայ և ՚ի կենդուրայ ծնաւ Եկանն <sup>(3)</sup>, և յԱկանայ ծնաւ ՚Իադան, և ՚ի ՚Իադանայ ծնաւ ՚Իագուել, և յԱգուելայ ծնաւ Յոթոր, և ՚ի Յոթորայ ծնաւ Յոթաթ : Եւ առ Վոլսէս զՎեգուլրա դուստր Յոթաթայ իւր ՚ի կեռութիւն . և քառասուն ամսոց էք Վոլսէս,

Յայսմ ժամանակի երեւեցաւ Կոկղիպիւ գես բժիշկ . և աստ էք Կեկրոփս, որ թագաւորեաց յԻտիկէ, որ է յԱգիպտասու <sup>(4)</sup> : Վասն

(1) Միւս թարգմ. ընդ Եթովպացիսն առէ տուեալ Մովսէսի սրատերազմ, և զթագուհի նոցա զթեսքառ վարեալ ՚ի գերութիւնն իսկ Հռաքուսան նոյն է զոր և ՅԵրմոթիս կոչէ:

(2) Կոյն է զոր վերագոյն կոչեաց Քանիքարա . իսկ միւս թարգմանութիւնն ունի Քանիքարա :

(3) Կոյն է որ ՚ի սուրբ գիրս ՅԵկոտան կոչի : Ճնդ : ԽԵ. 2:

(4) Յօրինակիս թուին բառք վրիպեալք ՚ի կրչէ : Քանզին

սմա ասեն թէ յառաջին ամին Գողոնիէլլ թագաւորեաց . և Յօյնք ասեն թէ սա շենեաց զի թէնս յանուն կնոջ իւրոյ Աթենայ : Այ տիրեաց ամենայն Ասիոյ , և անուամբ նորա կոչեցաւ դաւառն Կապադովիլիա : Եւ յաւուրս սորա երեւեցաւ ձիթենի ՚ի դղեկին Աթենայ . և սա արար գիր Յունաց յիշգիպտացի գրոյ , զի գիտէր զերկուցն լեզուն : Այ երեր զբնակիչս Անմիփիս քաղաքի և բընակեցոյց յԱթէնս , ուստի սերմանեցաւ իմաստութիւնն ՚ի կողմանս հիւսիսոյ :

Իսկ Առվաէս եւթանասուն և ութ ամաց եղեալ , երեւեալ խօսեցաւ ընդ նմա Աստուած ՚ի լեառն Աինեայ :

Յայսմ ժամանակի յիշգիպտոս թագաւորէր Փսանոս . ծնաւ սմա որդի , և անուանեաց զնա Այամասիս : Եւ սա արար մեծ նեղութիւն Իսրայելացւոցն . եւ սա կոչեաց զանուն իւր կրկին Եգիպտոս , զի նախ Արիա կոչէր<sup>(1)</sup> : Եւ ՚ի չորս հարիւր և երեսուն ամի խոստմանն Աստուծոյ , որ է ութսուն ամ Առվաէսի , արժանի եղեւ երեւմանն Աստուծոյ . և առ հրաման հանել զիսրայէլ յիշգիպտոսէ : Եւ անցին Երրայեկեկոսիս : Եւ ըստ սմանց՝ նախ յԵգիպտոս թագաւորել ասի : Տես և յԵւսուբիս : ՚ի Քրոն ՀԿ . Բ . Եր . 100 :

(1) “Եգիպտոս որ յառաջագոյն Այերիա կոչէր, յԵգիպտոտոսէ արքայէ անուանեցաւ: Եւսեր . Քրոն . Եր . 108 :

յիքն ցամաքաւ ընդ ծովին , և ընկղմեցաւ Փսանոս թագաւոր զօրօք խւրովք . Եւսեւ քիոս ասէ , թէ Կանաքարիս (Քէնքէրէս) կոչքը ընկղմեալն Փարաւոն և ոչ Փսանոս . և որք ոչ էին (գնացեալ) զինի Փարաւոնի , ամենայն ոք զգործն յորում կայր՝ աստուածացոյց , որպէս պատճառ փրկութեան անձանց իւրեանց եղեալ :

Յայսմ ժամանակի եմուտ աստեղագիտութիւնն ՚ի Պարսս և կախարդութիւնն . և աստ շինեցաւ տաճարն Ապողոնի յիշմէնքս , և կոչեցաւ Երիսպագոս՝ որ է տուն դատաստանի : Եւ աստ շինեցաւ Կորնթոս քաղաք , որ նախ Բուրիս (1) կոչէր : Եւ յայսմ ժամանակի երեւեցան Փիւնիկ և Երակլէս (2) իմաստասէրք : Եւ նախ քան զլիկրոսլո Ալիու կոչէր աշխարհն , որ յանուն նորա կոչեցաւ Կապագովիկիս : Եւ աստ եղեւ հարուածն Եղիպատոսի շարժմամբ , որ և եւթն ամիս ՚ի տուն և ՚ի քաղաք ոչ իշխէին մտանել , այլ վրանօք արտաքոյ և բացօթեայք կային : Եւ զինի հեղձմանն թագաւորեաց յիշիպատոս Աքարոս : Օկնի վեց ամի ելիցն խրայելի

(1) Արև թարգ . Եկտ . Սիւնկեղոս գնէ Եկտ .

(2) Եւսեւքիոս (՚ի Քբռնին յէտ . 106) ասէ . ՚ի Կը ամին Կեկրոփայ ՚հերակլէս ՚ի Փիւնիկէ Տանաշէր Դէստմդաս յորջորջեալ . որ և ցայժմ իսկ ՚ի Գամբաց և ՚ի Հեղիպատոս անուանի :

թագաւորեաց ՚ի վերայ Աթենացւոցն Արոնաւ(1), և անուն դստերն նորա Ատիկէ, յորոյ անուն կոչեցաւ Ատափիկէ աշխարհն :

ՅԵղամայ մինչեւ ՚ի Վովսիսի ութառուն ամին և յելսն Աշգիպտասէ Խարայելի՝ լինին ամք երեք հազար ութ հարիւր քառասուն և երկու, և ՚ի յութսուն ամին Վովսէս ետ պատերազմ ընդ Ամազեկայ : Դնմին ամին յերբորդ ամիսն ել ՚ի լեռառնն և ընկալաւ զօրէնս :

Ապոլոմէս իմաստասէր երրայեցի ասէ, թէ Վովսէս արար զգիրն Աբրայեցւոց . և աստի երեւի թէ գիր և լեզու երրայեցւոց կրտսեր է քան զԱմորւոցն :

Յութսուն և յերկու ամին Վովսիսի կանգնեաց զխորանն, և ՚ի նմին տարւոջ բերին լրտեսքն զողկոյզն ՚ի ձորոյն Շեթզահեմի . և ՚ի գալ տարւոյն առաքեաց Բազակ զԲազա ամ մոգ, անիծաննել զԽարայէլ : Եւ եղեալ Վովսէս հարիւր և քսան ամաց կտտարեցաւ : Սա գրեաց հինգ գիրս . և յետ սորա կացին դատաւորք Խարայելի, և առաջինն Յեսու, որդին Աւեեայ, որ առ զգաւազանն Վովսիսի և զիշխանութիւնն ութսուն և երեք ամաց . և նա էած զԽարայէլ յերկիրն Աւետեաց : Այստակեաց եւթն աղդս քանանացիս, և զերկիր նոցա ժառանգեցոց

(1) Եւսեբիս կրտսեանուանէ, և զանուն դստերն՝ Ամբիոն

որդւոյն Խարայելի . և գատեաց զնոսա քսան և եւթն ամ . և կատարեցաւ հարիւր և եւթն ամաց : Եւ սմա և զԴոդսնիէլի միջոյն այլ ոք չասէ ինչ , բայց Վիրիկանոս ասէ՝ երեսուն ամ : Այս Դոդսնիէլ եկաց դատաւոր քառասուն ամ . բայց ութ ամ ծառայեցին Քուտասարթեմայ , զոր սպան Դոդսնիէլ այն ութն սմա է համարեալ . և Յօնիք յիսուն ամ ասեն զարա դատաւորութիւն :

Յաւորս սորա շինեցան քաղաքը Բնիւթանիոյ Ուալսո , Պապոս , իծեասոս , Ալլիատէ , Ուարունոտա : Եւ աստ շինեցան և ՚ի Ոիկլլա քաղաքը : Յայսմ ժամանակի թագաւորեաց Արդիացւոցն Պալամպոս (1) , որ է սկիզբն թագաւորութեան նոցա : Ի նոցանէ էր Փիլոտոնոսն՝ բարոյախօսն անանոց և թռչնոց : Յետ Դոդսնիէլի ծառայէ Խարայել Եգղոմայ մովաքացւոյ ութեատան ամ , զոր յարեալ (են) յամն Աւովդայ եփրեմացւոյ , որ գատեաց ութուն ամ : Այս շինեցաւ Ալադմոն քաղաք ՚ի Կադամոսէ (2) . և յութ ամին սորա թագաւորեաց Աթենայ Աքրիաթոս (3) : Եւ ՚ի քսան

(1) Ըստ Եւսեբեայ՝ Պէղովուոր թագաւորեաց Արդիացւոց յեւթներորդ ամի գատաւորութեան Աւովդայ (Արքուն. լ. 114):

(2) Կադամոս երեւի թէ իցէ ընթեռնի Կադմոս . իսկ զԱնդմոն՝ անուն անձանօթ , մարթ է ուղղել և ընթեռնուել Լակեդեմոն , քանզի և ըստ Ապուլիաբանայ՝ առ դատաւորութեամբ Աւովդայ հիմնեցաւ Լակեդեմոն (Արքուն. առոք . եը . 16):

(3) Ըստ Եւսեբեայ Երեւնիս :

ամի սորտ թագաւորեաց Աթուրացւոցն  
Կամբարիգոս՝<sup>(1)</sup> ամս երեսուն և երկու լը  
աստ շնուցաւ Բալաբսէ ՚ի թագաւորէն Ա-  
թուրացւոց լը աստ կատարեցաւ չորս դա-  
րձն , որ է չորս հաղար ամ:

ՅԱԴամայ մինչև ՚ի Վովսէս քսան և եւթն  
ծնունդ է , և ՚ի Վովսիսէ մինչև աստ ոչ զծը  
նունդն թուէ , այլ զանուանս դատաւորացն  
միայն : Օկնի Վառվդայ ծառայեցին Յարե-  
նայ ամս քսան : լը զօրացաւ Ասմեգար , որ  
սպան ՚ի Փղտացւոց վեց հարիւր այր մա-  
ճով արօրոյն : լը եկն Ախարա ինն հարիւր  
կառօք երկաթի . և զօրացաւ Բարակ Դե-  
բովայիւ և յաղթեաց նմա : լը Յայել կին  
Քաբերայ վարեաց խոփ ընդ ծամելիսն Ախ-  
սարայ և սպան զնա : լը ամք դատաւորու-  
թեանն Բարակայ են քառասուն :

ԵՐՎոդայ երեքտասաներորդ ամին եկին  
կադմոս և Փիւնիկոս ՚ի Յաերայեցւոցն Ա-  
սորիս , և թագաւորեցին Արոյ և Ասյդոյ : լը  
ասեն ոմանք՝ թէ կադմոս արար գիր Յու-  
նաց յեգիսպոտցի գրոյն :

Պալսմալիս (Պելսպս) կալաւ զթագաւորու-  
թիւն Արգիացւոցն , որ նախ Վուկեացիք<sup>(2)</sup>  
կոչէին մինչև յիշանելն առ նոսա յորդւոցն

(1) Ըստ Եւսեբեայ Ղամբէրէն:

(2) Մուկեացիք կամ ուղղագոյն եւս Միւկեացիք եւ  
բնակիչք Միկէն քալաքի որ յԵրադա :

Ներակլեայ: Յայսմ ժամանակի Խլոն քաղաք  
Տիլուէ շինեցաւ: Եւ յայսմ ժամանակի Վքա-  
յիա՝ յԱքիո շինեցաւ: Եւ աստ երեւեցաւ  
կինն Սաբիլէ, որ մեկնեաց զհարիւր իմաս-  
տասիրին երազն, որ միապէս տեսին եւթն  
արեգակն, և էին ՚ի Հռովմ տեսողքս երա-  
զյն եւթն արեգականն: Աստ թագաւորեաց  
Ոիդոս ՚ի վերայ Ամրիկեցւոցն:

Դքսան և յութ ամին Ռարակայ թագաւո-  
րեաց Աթուրացւոցն Պանաւոս<sup>(1)</sup>, ամս քառա-  
սուն և հինգ: Եւ աստ ասաց զօրհնութիւնն  
երգով ՚Երովիք: Օ կինի Ռարակայ իշխեցին  
Աղիանացիք Խորայելի ամս եւթն: Եւ ՚Ե-  
գէոն և կոտորեաց զնասա Աստուծով զօրա-  
ցեալ. և դատեաց զիարայէլ ամս երեսուն և  
երեք. դիր զծառայութիւնն եւթն ամին ՚ի  
սմա ժամանակս, լինի քառասուն: Յերրորդ  
ամին ՚Եղէոնի թագաւորեաց Աթենաց-  
ւոց Խոս<sup>(2)</sup> ամս քառասուն և ութ. և յերե-  
սուն և յերեք ամին ՚Եղէոնի թագաւորեաց  
Աթուրացւոց Առարամո՞ ամս ինն և տասն:  
Եւ աստ թագաւորեաց ՚ի Թարայիմ (Թերէ)  
Աղողոն երաժիշտ, որ ասեն թէ շարժէր զքա-  
րինսն նուագօք գեղեցկօք. և յայլ գիրս գտաք  
թէ յԱթէնս թագաւորեաց երկրորդ Կիկրո-  
պլու: ՚Եղէոն ծնաւ որդիս եւթանասուն, և

(1) Աստ Եւսեբեայ Պանիսաս:

(2) Աստ Եւսեբեայ և թռովմ. Արծ. Էմէս. . . . Սովորմուս

զինի մահուանն Գեղեսնի սպան Աքիմելէք հարձորդի նորա զեւթանասուն որդիսն Գեղեսնի, և դատեաց զիարայէլ ամս երիս: Եւ զինի նորա թափզա ամս քսան և երկու: Ի սորա ութ ամին թագաւորեաց Աթենացւոցն թեսեւա՝ ամս երեսուն, և Աթուրացւոցն Ախթրոս՝ ամս քսան և եւթն: Ի քսան և մի ամին սորա շինեցաւ Տարսուս ՚ի Ավլիկիա ՚ի Բրիսոսէ (Պերսէս) որդւոյ Տանայի. և աստ շինեցաւ Կարքեղոն, և Խըն առաւ: Օ կնի թափզայ Յայիր գաղատացի՝ ամս քսան և երեք: Ի վեցերորդ ամին սորա թագաւորեաց Ամուկասոս (1) յէտիպտոս ամս քսան և վեց: Ի չորեքտասան ամին սորա թագաւորեաց Աթուրացւոցն Տուտլս ամս երեսուն և մի. Յոյնք սմա Տիթունիս ասեն. և ոմանք ասեն թէ սա էառ զիլիոն քաղաք և աւերեաց: Ի սորա վեշտասան ամին թագաւորեաց Աթենացւոցն Անթոս (Անեսթէ), ամս քսան և երիս:

Օ կնի Յայիրայ ծառայեցին Այլաղգեաց ամս ութեւտան. և առ զդատաւորութիւնն Յեփթայի ամս վեց. քսան և չօրս ամ համարին սմա: Եւ զերաժիշտն Փիլիմոն (2) աստ ասեն, որ արար դասս երաժշտաց. և սա արար պատկեր շարժուն ոտիւք: Աստ շինեցաւ Կիւրինէ քաղաք և Առւր, յառաջ քան դիմութիւն Տաճարին չորեք հարիւր քառասուն ամաւ:

(1) Ըստ Եւսեբեաց Անհանու: (2) Միւս թարգմ. Փիլոն:

Ե շորրորդ ամին Յեփիթայեայ թագաւոռեաց՝ ի վերայ Աթենացւոցն Դիմափոս<sup>(1)</sup> ամս երեսուն և երիս կա ՚ի վերայ Հգիպտացւոցն Դիուսբուլուլիտէ<sup>(2)</sup>, և այլք ընդ նմա ՚ի կարգին՝ հարիւր Եւթանասուն և ուժ ամ կա աստ թագաւորեցին Լատինացիքն որ կոչեցան Հռովմայեցիք, առաջին թագաւորն Անիաս՝ ամս երեք։ Օկնի Յեփիթայեայ ոմանք զելոն ասեն դատաւոր . և կա թանասունք զԱբդոն գնեն, որ դատեաց ամս եւթն ։ կա զկնի Աբդոնի Փղտացիքն աիրեցին ամս քառասուն . կա զկնի Ալսնի և Աբդոնի՝ Աամփսոն յազգէ Դանայ . սա դատեաց զիսրայէլ ամս քսան . և յերրորդ ամի իշխանութեանն պատերազմէր ընդ Փղտացիս ։ կա ՚ի հինգ ամին սորա եղեւ իրքն Հռութայ ։ կա յերկրորդ ամին սորա թագաւորեաց Աթուրացւոցն Տուտէս<sup>(3)</sup> ամս քառասուն ։ կա յիննետամներորդ ամին Աամփսոնի մեռաւ Օեւս, և թաղեցաւ ՚ի կրիտիս՝ կեցեալ ամս ուժ հարիւր ութանուն . և վասն բազմակեցութեանն Օեւս կոչեցաւ յանուն աս-

(1) Բառ Եւսեբեայ՝ Դիմափոս (Դ.Դմոֆոն) ոչ առ Յեփիթաւ՝ այլ առ Աբդոնաւ ասէ թագաւորեալ։

(2) Դիուսբուլուլիտէ ոչ թագաւորիք՝ այլ հարստութեան է անուն, Դիուսը կառացաց կոչեցեալ յԵւսեբեայ, որ եղեւ քսաներորդ հարստութիւն, և աեւեաց ամս 178։ Քըռն. եր. 124։

(3) Անիաս թարգ . Տուտէս<sup>ի</sup>նս : Եւսեբիոս ունի Տէստէս . (Քըռն. Հայ. Բ. եր. 99)։

տեղի, որ նախու Դիոս կոչէք ՚ի ծնողացն :

Եւ զինի Այամիստնի կեցին որդիքն Խո-  
քայելի ամս երկուաստան : Համբաննէս պատ-  
մագիրն գրէ , թէ Այամեգարն եղեւ զինի  
Այամիստնի՝ ամս քառասուն . և Վիրիկանոս  
ասէ , թէ չգոյր նոցա դատաւոր . և էր իս-  
կաղութիւն , և ոչ նեղէին յաւուրսն յայ-  
նոսիկ ուստեք : Հեղի դատեաց զիսրայէլ  
ամս քսան ըստ Եւթանասնիցն , և ըստ Վոոր-  
ւոցն ամս քառասուն . և ամենայն ժամանա-  
կըն Հեղեայ եւթանասուն ևութ ամս Եւրե-  
սուն և յութերորդ ամին (կենաց իւրոց) Հե-  
ղի եղեւ իշխան , և յեւթնե տասներորդ ա-  
մի իշխանութեան նորա ծնաւ Այամուէլ . և ՚ի  
քսան ամին ընծայեցաւ Այամուէլ ՚ի խորանն:  
Եւ զինի մահուանն Հեղեայ եղեւ Տաղա-  
նակն ՚ի տան Վմինագարսայ ամս քսան : Եւ ՚ի  
քառասուն և երկրորդ ամի կենացն Այամու-  
էլի , և ՚ի քսան ամի իշխանութեան նորա խնդ-  
րեցին օրդիքն Խորայելի թագաւոր : Եւ աստ  
կատարեցաւ ժամանակ դատաւորացն, և սկը-  
սաւ թագաւորութիւն նոցա ՚ի Այաւուղայ :

Վոաջին թագաւոր Այաւուղ՝ ամս քառա-  
սուն, և յերրորդ ամի թագաւորութեան իւ-  
րոց յաղթեաց Վմաղեկացւոցն . և ՚ի տասնե-  
րորդ ամի սորա ծնաւ Դաւիթ , և ՚ի քսան և  
երրորդ ամի թագաւորութեանն Այաւուղայ  
օծաւ թագաւորն Դաւիթ ՚ի Այամուէլէ : Եւ

Եր Աամուել վաթուռն և հինգ ամաց և՝ Դաւիթ Երկոտասան ամաց . և ՚ի քսան և ութ ամին խւրոյ սպան զԴողիադ . և յերեսուն և մի ամին եղեւ տօն ՚ի Նաւադ Հռամայ , և մարդարէանայր ընդ մարդարէսն Աաւուղ թէ Դաւիթ է թագաւորելոց . մարդարէութիւն չար տան իւրոյ : Եւ յերեսներորդ ամի ծննդեանն Դաւթի մեռաւ Աամուել մարդարէ : Եւ զկնի հինգ ամի մահուան Աամուելի սպանաւ Աաւուղ և Յովեաթան որդի իւր , թագաւորեալ ամս քառասուն :

Եւ ՚ի Դաւիթ թագաւորեաց ՚ի Քերոն ամս եւթն : Սո շինեաց զԴիոն , և յԵրուսաղէմ թագաւորեաց երեսուն և երիս ամս . ՚ի տասներորդ ամի թագաւորութեանն իւրոյ եհան զՃապանակն , և եհար նմա վրան : Եւ ՚ի բերելն զՃապանակն , շնորհն Աստուծոյ որ ՚ի նմա՝ գթացաւ յԵղամ , և անկաւ ՚ի վերայ գերեզմանին Ադամայ . և մեռաւ Աղիա , զի արդելուլ կամէր ՚ի սիրելոյն իւրմէ Ասէ զայս Յակովը ուռհայեցին :

Նաթան մարդարէն Եր ՚ի Դաբաւոնայ , որ խնամէրն զԴաւիթ , և ՚ի մեղանչելն Դաւթի ՚ի Եերապէ (1) , նախ իմացաւ Նաթան մարդարէ և եկին ապրեցուցանել զԴաւիթ , և ՚ի գալն հանդիպեցաւ մեռեալ մի , և մինչ թաղեացն զնա և եկին առ ՚Դաւիթ՝ գործե-

(1) Յօրինակն ՚ի Գէրէտանայ . . . ՚ի Բէրուբէն :

յաւ շնութիւնն, և դարձաւ տրտմութեամբ. և ՚ի սպանանելն զիւրիա, ապա եկնյանդիւմանել զնա յերկուց չարացն վերայ, և ետնմանշան զմահ առաջին որդւոյն Շերսաբէի. և երկեաւ ՚Դաւիթ յԱյտուծոյ և ապաշաւեաց: Յերեսուն և ինն ամի թագաւորութեան իւրոյ ՚Դաւիթ ընտրեաց ՚ի ՚Կեւտացւոցն արս հարիւր ութառուն և ութ, և արար զնոսա դասս քսան և չորս: Երկոտասան այր ՚ի դաս մի, սպասաւորս Տաղանակին և Աղմասացն: Եւ ետ սպատերազմ ընդ շըրջակայ ազգացն, և յաղթեաց ամենեցուն. և եկաց ամս եւթանառուն, և թագաւորեաց ամս քառասուն:

Եւ թագաւորեաց Աղմամոն ամաց երկոտասանից, և քառասուն ամ թագաւորեաց և եհան օս զիւրիաթար քահանայ, և ըսպան զիւրոնիա և զիւրվար: Եւ ՚ի չորրորդ ամի թագաւորութեանն իւրոյ սկսաւ շինել զտաճարն, և կատարեաց զնայութ ամ, ՚ի լեառն Ամաւրհացւոց, որ է այժմ Երուսաղէմ: Եւ գրեալ է ՚ի գիրս թագաւորացն, թէ յետ չորեքհարիւր և ութառուն ամի ելանելցն յիշիպտուէ՝ շինեցաւ տաճարն. ըդնոյն ասէ և Պօղոս, թէ ՚ի տնոցա գատաւոր չորեքհարիւր և յիսուն ամ, մինչեւ ՚ի Ասմուէլմարդարէ. և թողին ՚ի ժամանակ ծառացութեան Այլազգացն ամս երեսուն: Յե-

ըեսուն և ՚ի չորս ամին իւրոյ Աաղովմնն շենեաց տուն կուոց ՚Յամնավաց մնվաբացւոյ և Վեղքումայ ամմնացւոյ, ուր կայր տունն Եփրոդիտեայ աստուածուհւոյն Յունաց . Ամվաբացւոյն տաճարն յեւթն ամն շինեցաւ, և Վմմնացւոյն՝ յերեքտասան . բարձրութիւն նոցո երեսուն կանգուն և լոյնութիւնն յիսուն . և արար նոցա զարդ ոռկոց յոլով, և ծով պղնձի և եղինս : Եւ քակեաց (Աաղովմնն) զի՞նտիոք և շինեաց զի՞նետմուր մերձ Հեմսայ, և զԱալու և զՀեսուր և զԱակուր և զԴաղարէ և զԲէդուր՝ ըդներքին և գլերին, և զԲէդէովլթ, եւթն Քաղաքք : Եւ յառաջին ամի թագաւորութեան իւրոյ եղեւ նմա որդի Ոսքովամ ՚ի ՚Յամայէ ամմնացւոյն : Եւ ՚ի ՚Յամասկոթագաւորեաց Հաղադ, սատան Աաղովմննի : Եւ ամենայն ժամանակն Աաղովմննի յիսուն և երկու ամ : Եսպիփան ասէ, թէ Եքիամարդաբարէացաւ Աաղովմննի, թէ հանդերձեալ ես բարկացուցանել զԿատուած, նոյն պէս և զԱօքովամ յանդիմանեաց՝ թէ նենքութեամբ գնաս ընդ Կատուծոյ : Եւ սա (Եքիա) ետես տեսիլ, որ լուծք եղանց կոխէին զԽօրայէլ և զքահանացսն, և ասաց զԱաղովմնն, թէ կանայք հեռացուցանեն զքեզ ՚ի Տեառնէ : Եւ սա յանդիմանեաց զօքովամ զդրդին ՚Յաբատեայ վասն երնջոցն և մեռաւ,

և թաղեցաւ՝ ՚ի Աելով առաջի կաղնոյն<sup>(1)</sup>. ՀՀ  
 շնորհ մահուանն Ապօվլմոնի բաժան  
 նեցան երկոտասան ցեղքն , և եղեն ընդ  
 բոբովամայ Կաբատեան , որ թագաւորեաց  
 ամս քան և երկու . և ընդ Ո-ոբովամայ մը-  
 նացին երկու աղգն , և կոչեցան Յուդա և  
 Խորայէլ : Ո-ոբովամ թագաւորեաց Ալյու-  
 սաղէմ ամս եւթնեւտան , և եկաց յիսուն  
 և ութ ամ : Կատ էր մարգարէն Ամմեա , որ  
 երկրորդ անգամ յանդիմանեաց զՈ-ոբովամ  
 ՚ի վերայ սեղանոյն . և սա ասաց Յուդայի ,  
 թէ ՞Ո՞ի կոռուիք ընդ Խորայէլի , զի ՚ի Տեառ-  
 նէ եղեւ բաժանումնդայ ՀՀ սա պատառեաց  
 զհանդերձն յերկոտասան մասն , և զտամն  
 ետ Շոբովամայ Կաբատեան և զերկուսն  
 ետ Ո-ոբովամու որդւոյն Ապօվլմոնի : Հոգի-  
 փան ասէ , թէ Խուդ էր անուն մարգարէ-  
 ին , և էր յերկրէն Ամմարացւոց , և սպան  
 զնա առիւծն , զի խոտորեցաւ ՚ի բանէն  
 Տեառն : Օ կնի Ո-ոբովամայ թագաւորեաց  
 Աբիա որդի նորա ամս երիս . և ել ՚ի վերայ  
 նորա Շոբովամ ութսուն հազարաւ , և Ա-  
 բիա ընդդէմ ել նմա քառասուն հազարաւ .  
 և սպան յԽորայէլէ յիսուն հազար այր : ՀՀ  
 առ Աբիա կանայս չորեքտասան , և եղեն նմա

(1) Աստանօր միւս թարգմանութիւնն ՚ի մէջ բերէ հարց-  
 մունաին դշիսոյին Սաբայ ընդ Ապօվլմոնի ՚ի վերայ այլ և այլ  
 նիւթոց , որ գտանին առանձինն և ՚ի զբչագիր մատեանա

որդիք քսան և չորս և գստերք վեշտասան:

Օկնի Ըբիայ թագաւորեաց որդի նորա Ասա ամս քառասուն և մի, և եկեաց ամս վախտաւն: Աս փորեաց ջրհոր մերձ ՚ի Ան սեփա յահէ թագաւորին Խորայելի: Աս ՚ի Հնդետասան ամին այրեաց զգտեալ կուռսն և եբարձ զպունկութիւն յերկրէ, և զմայր իւր Եհան ՚ի տիկնութենէ զի պաշտէր զլու տարտն, և այրեաց զկուռոսն մօր իւրոյ: Ի քսան և ինն ամին սորա թագաւորեաց Եշա ՚ի վերաց Խորայելի երկուս ամս, և Օամբերի ծառայն իւր սպան զնա և թագաւորեաց եւ թըն օր<sup>(1)</sup>: Եւ բաժանեցաւ Խորայել, ոմանք երթային զհետ Ամրեայ, և ոմանք զինի թապնեայ: և յաղթեալ Ամրեայ, թագաւորեաց երկուասան ամ: Եւ սա գնեաց ըղլեառն Ասմարիա ՚ի Ասմարայ տեառնէ նորա, և շինեաց անդ քաղաք և անուանեաց Ասմարիա, որ յետոյ կոչեցաւ Աերասարիա, որ այժմ ասի Ամլուզ: Խակ թապնի տեսեալ թէ յաջողեցաւ Ամրեայ, այրեաց զարքունիսն, և ինքն ընդ նմին այրեցաւ:

Ի քառասուն և մի ամին Ասայի թագաւորեաց յէգիստոս Փարքիրիս<sup>(2)</sup> ամս չորս: Եւ զինի Ասայի թագաւորեաց Յովսավոս

(1) Միւս թարգմ. յաւելու աստ, “Եւ յարեան երկու արք՝ Ամրի և թապնի թագաւորել:”

(2) Լոտ Եւսեբեայ Նեֆելէէն:

ամս քսան և ինն : Յերրորդում ամի սորա  
թագաւորեաց Խարսցելի Աքաաբ որդին Ամ-  
րեայ՝ ամս քսան և Երիս : Աա էառ կին զե-  
զաբէլ դուստր Խթիքլի<sup>(1)</sup>(Ղթբաաղ) թագա-  
ւորին Արոյ և Աեդայի (Աիդն) : Եւ սա շե-  
նեաց զիրիքով զնզութեան Յեսուայ որդւոյ  
Նաւեայ՝ Ասիրոնաւ անդրանկաւ իւրով և  
Օերծելաւ կրտերաւ . Արիրոնաւ հիմն էարկ  
նմա , և Օերծելաւ կրտերաւ կախեաց ըդ-  
դուռնն՝ ըստ բանին Յեսուայ : Եւ այլք  
զնապան ասեն շինիչ հրամանաւ Աքաաբու,  
և զորդիմն սմա ասեն՝ Արիրոն և Օերծել :

Յերկիրորդ ամին Յովսափատու թագա-  
ւորեաց ՚ի վերայ Աատինացւոցն Կարպան-  
դոս ամս Երեքտաասան : Եւ ՚ի չորրորդ ամին  
Յովսափատու թագաւորեաց ՚ի վերայ Ա-  
թուրացւոցն Աւբրանտիոս<sup>(2)</sup> ամս յիտուն . և  
յերեքտաասան ամին նորա թագաւորեաց  
Ճշգիպտոս Խակոքորոս ամս վեց : Եւ ՚ի չոր-  
րորդ ամին նորա թագաւորեաց Աթենաց-  
ւոցն Ամկալոս<sup>(3)</sup> Երեսուն ամ : Յիննետաս-  
ներորդ ամի նորա թագաւորեաց Ճշգիպ-

(1) Վարդան դնէ ՔԲՀՀ : Պատմ . Էր . 56 :

(2) Ըստ Սամուէլի Անդրադանէս , որպէս և Խախորուն կո-  
չէ Աստված :

(3) Եւսեբիոս և Սամուէլ ուղղագոյնո գրեն՝ Մէհակէն ,  
որ էր քսաներորդ Երրորդ թագաւոր Արգիացւոցն հարը-  
տութեան՝ սկսեալ յինաքոսէ :

տոս Բասանիքոս<sup>(1)</sup> ամս ինն : Եւ ՚ի քսան և եւ ըելք ամի նորա թագաւորեաց ՚ի վերայ լ աւտինացւոցն Ագրիպաս՝ ամս քառասուն և միւ Եւ ՚ի քսան և ինն ամի սորա թագաւորեաց ՚ի վերայ Խորայելի Աքողիա ամ մի : Եւ ըղկնի նորա Յովլամ եղբայր նորա ամս երկուտասան . և ՚ի նոյն ամի թագաւորեաց ՚ի վերայ Յուղայի Յովլամ ամս ութ . և դհետ նորա Աքողիա ամ միւ Յովլամ արքայ Յուղայ որդի Յովլամիատու առ զԴոդողիա քոյր Աքարբու իւր ՚ի կնութիւն, և սպան զեղբարսն իւր . և եհար զնա Տէր բարկութեամբ և մեռու, և առ զթագաւորութիւնն Աքողիա : Եւ առաքեաց Եղիսէէ օծանել զՅէու որդի Ամզիլ<sup>(2)</sup> ՚ի վերայ Խորայելի , որ սպան զՅովլամ զորդին Աքարբու , և զԱքողիա արքայ Յուղայ . և Եղարել հնգետասան ամաւ յետոյ սպանաւ քան զԱքարբ զոյրն իւր :

Եւ զկնի մահուանն Աքողիայ արքայի Յուղայ , Դոդողիա մայր նորա կորոյս զամենայն զաւակ թագաւորութեանն . բայց մանուկ մի սպահեցաւ առ Յովլիդեայ քահանայի . և թագաւորեաց ինքն Դոդողիա վեց ամ : Եւ Յէու թագաւորեաց ՚ի վերայ Խորայելի քսան և ութ ամ : Եւ զտաճարն հահաղու որ կոչե յուլ, այրեաց հանգերձ

(1) Հաստ Եւսեբեայ Փոխառէս :

(2) Յօրինակիա Ամէ :

ոպաշտօնեիւքն : Քահանայապետն Յովիդեա  
սպան զՎոդոզիա և թագաւորեցոց զՅովառ  
վեցամես ՚ի վերայ Յուղայ , որ թագաւո-  
րեաց քառասուն ամ :

Յերրորդ ամին Յովասայ թագաւորեաց  
Դիտքինիս<sup>(1)</sup> ՚ի վերայ Աթենացւոցն ամս քը-  
սան և ութ : Եւ ՚ի տասներորդ ամին թա-  
գաւորեաց Աթուրացւոցն Կյրագանիս քսան  
և երկուս ամն : Եւ ՚ի քսան և երկրորդ ամին  
Յովասայ թագաւորեաց Հգիպտոսի Հմու-  
քոս<sup>(2)</sup> ամս քսան և մի : Եւ ՚ի քսան և եր-  
րորդ (ամին) թագաւորեաց ՚ի վերայ Ա-  
տինացւոցն Ոսմելոս<sup>(3)</sup> , ամս ինն և տասն :  
Այս Ոսմելոս յոյժ ամբարտաւանեալ ՚ի  
վարս իւր՝ երկնառապ հրով այրեցաւ ար-  
քունեօք իւրովք : Եյերեսուն և եւթներորդ  
ամին Յովասայ մեռաւ Հղիսէէ , զկնի յի-  
սուն ամի համբարձմանն Հղիսյի : Ե քը-  
սան և եւթներորդ ամին Յովասայ թագա-  
ւորեաց ՚ի վերայ Խարայելի Յովոքակ՝ ամս  
եւթնեւտասն : Եւ յերեսներորդ առաջնե-  
րորդ ամին Յովասայ եղեւ դատաւոր Ա-

(1) Եւսեբիոս կոչէ Դիոֆնէպոս , որում տայ ԶՅ ամս-  
իսկ Սամուէլ Դիոփնէպէս կոչէ , և համաձայնի Միխայելի՝ տա-  
լով 28 ամս :

(2) Եւսեբիոս զատ Աշանդուսիս ունուանէ , և ասէ լինել  
առաջնին թագաւոր իբ . հարտութեան բութաստացւոց :

(3) Եւսեբիոս այլափոխեալ ունի զանունս , զոր կոչէ Ա-  
րէնապատ Սէլուան :

թենացւոցն Յարակլիս (1) ամս իննեւտասն ։ Յովլաս զինի մահուանն Յովիդեայ ՚ի բաց եկաց ՚ի Տեառնէ , և սպան զ Օաքարիա որդի Յովիդեայ ՚ի տաճարին , և ինքն սպանաւ ՚ի ծառայից իւրոց :

Եւ թագաւորեաց որդի նորա Վմասիա ամս քսան և ինն : Աս յաղթեաց Եդովմաւ յեցւոցն , և բերեալ զաստուածս նոցա պաշտէր . սա եկաց ամս յիսուն և չորս : Ի սորա տասներորդ ամին թագաւորեաց Խո րայէլի Յովլաս ամս վեշտասան , և ՚ի վերայ Լատինացւոցն թագաւորեաց Վնտոնինոտ (2) , ամս երեսուն և եւթն : Եւ յերրորդ ամին Վմասիայ թագաւորեաց Եդիպոսսի Եսթը րոն՝ ամս եւթնեւտասն : Եւ աստ եղեւ դատաւոր Վթենացւոցն Վրիփոն (3) ամս քսան : Խոկ յեւթնեւտասներորդ ամին Վմասիայ թագաւորեաց Վթուրացւոցն Խոնոս Կոնկողերոս (4) ; որ կոչի յունարէն Աարդանապալոս , ամիս քսան : Ի սորա ժամանակին գնաց Յու-

(1) Այն է Փետքիւս կամ Փարաիւս ըստ Եւսեբեայ և Սամուելի :

(2) Եւսեբի փոքր մի ուղղագրէ զանունս կոչելով Աւենդիոս փոխանակ Աւենդիոս : Նոյնպէս ՆԵսիրոնն կոչէ Ոսորդոն , որոց ուղիղն է Ոսորդոն :

(3) Աստանօր օրինակս մեր շփոթեալ ունէր զկարդ բանիցս , զոր ուղղեցաք ըստ Եւսեբեայ : Սա ՆԱՐԴԻՌՈՆ ուղղագոցն եւս գրէ Արքուն :

(4) Օքինակս մեր , որպէս և միւս թարգմ . զրեն թու-

նան քարոզել՝ Այնուելի։ Առ (Ապրդանաբաշը) զղջացաւ և դարձաւ առ Տէր ապաշխարութեամբ։ և զկնի զղջմանն եղեւ նմաս սպատերազմ ընդ Արքակէս<sup>(1)</sup> մադացին, որ են Այրք, և տեսեալ թէ յազմի ՚ի Արքն, այրեաց զանձն։ Ամք թագաւորութեն Աթուրացւոց բովանդակին լինի հազար հարիւր իննուուն և վեց, որ եղեւ զկնի խափանելոյ թագաւորութեանն Խաբելացւոց։ Եւ յառաջին ամէն (Ալոսի (Շիլոս) հօրն Այնոսի՝ լինին ամք հազար երեքհարիւր։ Եւ Արքակէս մադացին օգնութեամբն Հայոց երարձ զթագաւորութիւնն Աթուրացւոց և փոխեաց ՚ի Արք<sup>(2)</sup>։ Օկնի մահուանն նորա եկաց թագաւոր ՚ի Այնուել յազգէ քաղդէացի Փուլանուն նորա Կափուա<sup>(3)</sup>, և ՚ի սմանէ սերեցան Թակղաթփաղսար, Ապղմանասար, Անեքերիմ, որ յիշէ զնոսա տատուածային Գիրք։ Եւ սոքա իշխեցին Ալիլիեցւոց և Փիլիպեցւոց, և ՚ի սոցանէ են Ասքոնոս և Ապուռոլոս և Ապօւողալսար և Ապօւողանունապահուար։

Կամ Թանոսին կողերս։

(1) Երկորին թարգմանութիւնը այլակերպեալ ունին զանուն՝ Քնելով Աբու իլ կամ Աբուիլ և Աբուսիլու։

(2) “Արքակէս մար քակեալ զթագաւորութիւն Ասորեստանեաց” ՚ի Արք փոխադրեաց։ (Եւս. Քըն. Հա. Բ. Եր. 166)։

(3) Կրկնութիւն համարի Փուլ կամ Փուլ անուան։ Փուլ ամ վեշտասան։ ՚ի սորա վեշտասան ամին եղաւ առաջին Աղմաղիաթն։ (Սամուել. ՚ի Գրքիրա)։

սոր. և թուին ամք սոցա ՚ի Փուայէ մինչեւ  
յԱղէքսանդր մակեդոնացին չորեքհարիւր  
քսան և շորս ամ։ Եւ զինի մահուանն Ա-  
ղէքսանդրի թագաւորեցին Աելեւկոս, Ա-  
տիոքս, Ափիքս՝ որ զԱփիկիս շինեաց. Առու-  
բոս՝ որ զԱսրիս շինեաց, յորմէ Ասորիք կո-  
չեցան, որ մինչեւ ցնա ՚Բազդէացիք կոչէին.  
և Աելեւկոս զԱելեւկիս շինեաց. Շնախոքս  
զԱնտիոք շինեաց զինի աւերմանն Աազտմանին  
՚Նոյնպէս և զԱւոհա զշինեալն ՚ի Աերբով  
թայ և զքակեալն ՚ի Անեքերիմայ՝ Աելեւկոս  
շինեաց հրամանաւ Աղէքսանդրի։ Եւ այս  
Աելեւկոս բնակեցոց զմարդկան բազմութին  
՚ի Տարսան Ափիկեցւոց, զի վասն վասախառ-  
նութեա աւողոյն զընակէին անդ գտառաջնն։

Յութեասաներորդ ամին Ամասիայ թա-  
գաւորին Յուդայ թագաւորեաց ՚ի վերայ  
Խորայելի Յերսովամ ամս քառասուն. և  
յԱղիպտոս թագաւորեաց Տուլօթիս<sup>(1)</sup> ամս  
երեքտասան։ Եւ կռուեցաւ Ամասիա ընդ  
Յովաս արքային Խորայելի, և հարեալ մե-  
ռաւ ՚ի նմանէ։ Եւ եկեալ յԱրուսաղէմ  
Խորայելացիքն քակեցին ՚ի պարսպէն չորեք-  
հարիւր գիրկ, և առին ոսկի և արծաթ որ  
կայր ՚ի տան Տեառն և ՚ի տան թագաւորին,  
և գարձան ՚ի Աամարիս. և Ամասիա բերեալ  
յԱրուսաղէմ թաղեցտւ. Եւ թագաւորեաց

(1) Եւսեբիս Տուլօթիս կոչ։

Վղարիա որդի նորա ամս յիսուն և երկու ,  
և եկաց ամս վախտուն և ութ և մեռաւ :

Յառաջին ամին Վղարիայ , որ և Ողիա ,  
եկաց դատաւոր Աթենացւոցն Յասպիս (1)  
ամս քսան և եւթն : Եւ յերկրորդ ամին Ո-  
ղիայ թագաւորեաց Հգիսպասի Ստասիս (2) ,  
ամս քսան և հինգ : Եւ ՚ի տասն ամին Ողիայ  
թագաւորեաց | ատինացւոցն Փրիկոս ամս  
քսան և երիս : Եւ ՚ի քսան և եւթն ամին Ո-  
ղիայ թագաւորեաց Հգիսպաս (3) և սրաթն (5)  
ամս ինն . զատ անուանեցին Հգիսպացիքն  
Երակլէս : Եւ ՚ի քսան և ութ ամին Ողիայ  
եկաց դատաւոր Աթենացւոցն Կգմիստոր (4)  
ամս քսան : Եւ ՚ի քսան և ինն ամին Ողիայ  
թագաւորի Յուդայ թագաւորեաց ՚ի վե-  
րաց Խորացելի Օաքարիա ամս վեց և ամիս  
չորս : Եւ զկնի Օաքարիայ թագաւորեաց  
Խորացելի Վելոմ ամիս մի : Եւ զկնի նորա  
թագաւորեաց Ոանայեմ ամս տասն : | Քը-  
սան և չորրորդ ամին իւրոյ , Ողիա համար-  
ձակեալ արկանել խունկ ՚ի Տաճարին , և ե-  
զէւ բորստեալ ամենայն մարմնովն . և ար-

(1) Թմէսպիկոս ըստ Եւսեբեայ , որ եր ասէ : որդի Ա-  
րքիրանայ :

(2) Միւս թարգմ . ունի իսկ : իսկ Եւսեբի կռէ Պէ-  
տառչափիս , որ եր ՚ի քսաներորդ երկորդ հարստութենէ :

(3) Ոսորդն ըստ Եւսեբեայ : Միւս թարգմ . ոչ յիշատա-  
կէ զանուն սորա :

(4) Ահամեսպոր ըստ Եւսեբեայ :

գելաւ մարդարէութիւնն Եսայեայ զկնի  
քսան և չորս ամի մարդարէանալոյն իւրոց ,  
և լուեաց քսան և ութ ամ , մինչեւ մեռաւ  
Ողիա , և յետոյ այլ մարդարէացաւ վաճ-  
սուն և մի ամ : Եւ յերեսներորդ երրորդ  
ամին Ողիայ թագաւորեաց | ատինացւոցն  
Ըմուլօս<sup>(1)</sup> ամս քառասուն և երիս : Եւ յե-  
րեսներորդ չորրորդ ամին Ողիայ եւ Փուա  
արքայ Շաբելացւոց ՚ի վերոց Սամարիայ , և  
առեալ ՚ի Վանայեմէ հաղար քանքարս ոսկւոյ  
և դարձաւ : Յերեսներորդ վեցերորդ ամին  
Ողիայ թագաւորեաց Եղիպտոսի Շասման<sup>(2)</sup>  
ամս տասն : Եւ ՚ի քառասուն ամին Ողիայ  
թագաւորի Յուդայ թագաւորեաց ՚ի վե-  
րոց Խորսցելի Փակէէ ամս տասն : Եւ ՚ի քա-  
ռասուն և մի ամին Ողիայ թագաւորեաց Ուա-  
կեդանացւոցն կօնոս<sup>(3)</sup> Երկրորդ թագաւոր  
ամս Երիստասան : Եւ ՚ի վերոց Ըմուլաց-  
ւոցն թագաւորեաց Յակղաթփաղսար ամս  
Երեսուն և հինգ : Եւ ՚ի քառասուն և վեց  
ամին Ողիայ թագաւորեաց յԵղիպտոս կուք-  
րոս<sup>(4)</sup> ամս քառասուն և չորս : Եւ ՚ի քառա-  
սուն և ութ ամին Ողիայ թագաւորեաց ա-  
ռաջին թագաւորութիւն | իւդացւոց :

(1) Այսուհետեւ ըստ Եւսեբեայ : (2) Փատմոս ըստ Եւսեբեայ :

(3) Կոմիոս ըստ Եւսեբեայ . ուղղագոյն եւս՝ կոյնու :

(4) Պիտորոս ըստ Եւսեբեայ , առ որով , առէ , գառն խօ-  
սեցաւ : Հար . Բ . Եր . 170 :

Եւ ել թակղաթփաղսար թագաւորն Ա-  
թուրացւոց և գերեաց զիշուդա և զիս-  
րայելի մեծ մասնն . և այս եղեւ սկիզբն գե-  
րութեանն խրայելի : Եւ գերեցան իշխանիք  
մեծամեծք, Խարէլ<sup>(1)</sup> Բէթմեքա, Խնոք, Կանծ,  
Ետուր<sup>(2)</sup>, Գեղադ, Գաւդի, և զերկիրն  
Նեփմազիմայ : Եւ զինի մահուանն Աղիսյ  
երեւեցան փառքն Տեառն՝ի տաճարին : Յետ  
մահուանն Աղիսյ թագաւորեաց Յովաթամ  
որդի նորա ամս վեշտասան : Այս յողթեաց  
Ամմոնացւոց և արար ընդ հարկաւ : Յերրորդ  
ամին Յովաթամայ թագաւորեաց երրորդ  
թագաւոր Վակեդոնացւոցն Տունիոս<sup>(3)</sup> ա-  
մրս երեսուն և ութ . սոքա են ազգակից Հա-  
յոց : Օկնի Յովիսադանայ թագաւորեաց Ա-  
քազ որդի նորա ամս վեշտասան , որ արար  
չար առաջի Տեառն :

Փակէէ թագաւորն խրայելի առեալ ըղ-  
չուասոն թագաւորն Դամասկեայ , և եր-  
թեալ ՚ի վերաց Յուղայ՝ կոտորեաց ՚ի նո-  
ցանէ երկոտասան բիւր . և Աքազ առա-  
քեաց վարձեաց զիթակղաթփաղսար , որ եկն

(1) Յօրինակիս անջատ ունէր Ին . Աբէւ վասն որոյ և ՚ի  
տպեալն միւս թարգմանութեան սիսալմամբ դնէ՝ էին Աբէւ :

(2) Ոմանք կանծէսուր . թերեւս սւզզագոյն եւս իցէ :

(3) Զսա Եւսերիոս Տէրիմոս կոչէ . և տայ նմա երեսուն  
և երկուս ամս : Իսկ Սամուէլ Տէրիմ կոչէ , և ըստ Միխայե-  
լի որոշէ նմա ամս երեսուն և ութ :

սպան զնուասոն , և գերեաց զիշտոմացիս և գնաց : Յերկրորդում ամին Աքաղու ապրաւամբեալ Ավու ՚ի Փակէէ , սպան զնա , և ինքն թագաւորեաց ՚ի վերայ Խորայելի ամսինն : Յութերորդ ամին Աքաղու թագաւորեաց Աթուրացւոցն Աաղմանասար ամս չուրեցաւասն , և եկն ՚ի վերայ Խորայելի , և արար ընդ հարկաւ : Եւ յետ ժամանակի ապստամբեալ Ավոխայ , առաքեաց առ Աքդիմելք քուշացին , որ է Հարբաշի , և կայրնայ յշտիպտոս , գալ օգնելնմա : Եւ յեւթե ամինն Ավոխայ , և յութ ամինն Աքաղու ել Աաղմանասար ՚ի վերայ Աամարիայ և պաշարեաց զնա երիս ամս , և առ զԱամարիա և գերեաց զտասն ցեղսն և տարաւ ՚ի Շաբելն : Ամբ թագաւորացն Խորայելի երկերիւր յիսուն և բարձաւ . յԵդամայ լինին ամբ միահամուռ՝ չորեքհազար երեքհարիւր երեսուն :

Աքազիջոց յերկոտասան եղանցն զծովսն պղնձի՝ զարարեալն ՚ի Աաղովմանէ արքայէ : Եւ զկնի մահուանն Աքաղու թագաւորեաց Եզզեկիա յԱրուսաղէմ ամս քըսան և ինն , և եկեաց յիսուն և չորս ամ : և Աամարիա մնաց ՚ի հրամանս Աթուրացւոցն : Յութերորդ ամինն Եզզեկիայ առաքեաց Աաղմանասար պահանորդս Աամարեայ կողմանցին Եւ մինչեւ ցայս վայր Լատինացիք կոչէին թագաւորք հնդետասան , և յեւթե ամինն Ա-

քաղու թագաւորեաց Առմելոս , և իւր անուամբն շինեաց զառոմքաղաք . ոմանիք առեն յանուն դստերն շինեայ՝ որում անուն էր Հռոմէ : Հւ յայնմ հետէ կոչեցան Հռոմայեցիք \*

Յայսմ ժամանակի շինեցաւ Առողոս կղզի ,  
որոյ սպոռուղք ծառոցն մազտաքէ են : Կա  
շինեցաւ Ավլինոս քաղաք՝ ի Ամելիլա , և ՚ի  
Պանտոս շինեցաւ Տրափոր<sup>(1)</sup> քաղաք , ՚ի Շիւ-  
թանիա Կիղիկոն շինեցաւ , և յիտալիա Կա-  
լոնոն (Կալոնիա) և Լուկա (Լուկանիա) շի-  
նեցան : Կատ կանգնեցան թագաւորք Լա-  
կեդեմոնացւոցն , առաջին Արիոս<sup>(2)</sup> , և այլք  
որք թագաւորեցին ամս երեքհարիւր քառու-  
սուն : Հւ աստ (՚ի Հռոմ) շինեցան տաճարք  
քսան և չորս , ատենատեղիք երկու , փողոցք

(1) Անուանիք քաղաքացո այլափոխալ երեւին . Եւսե-  
րիոս առէ շինեալ ՚ի Սիկիոնա Ագեղա քաղաք յամի Աբրա-  
համու 1326 , և Փատէղիս ՚ի Պամիկիզա (Քըռն . էր . 180) : Իսկ  
Ապուլֆարան առէ՝ շինեցաւ քաղաք՝ ՚ի Կիղիկիա Սամինո-  
անուն :

(2) Աքիոս , կամ ըստ այլոց օրինակաց Աքիոս . և յայտնի սը-  
խալ ընդորինակողաց . փոխանակ գրելց Եւսերիւնու Ասմու-  
էլ անեցի զշարս թագաւորացն Լակեդեմոնացւոց ՚ի մէջ բե-  
րէ յիւր քրոնիկոնին . այսպէս . " Ա . Եւռաւսթէւս " ամս 42 :  
Բ . Աքիոս ամս մի : Գ . Եքեստրատոս՝ ամս 55 : Դ . Ղարով-  
ախս՝ ամս 57 : Ե . Դորիսմալուսամա՝ ամս 29 : Զ . Ագեսիզա-  
ւոս՝ ամս 44 : Ե . Աբրեղաւոս՝ ամս 60 : Է . Տեղեկզոս՝ ամս  
40 : Զ . Աղկամանէս՝ ամս 37 : Եւ սպառեցան յամն 527 : ո  
Տես և յիւսուքիոս , Հոդ . Ա . յէր . 519 :

Երեքհարիւր քսան և չորք : Կուռքը ոսկեղբէն ութսուն, և պատկերք վաթսուն և չորք՝ փղոսկրեայք, և տունք երեւելիք քառասուն և վեց հազար վեց հարիւր և երեք, և իշխանաց կայք հազար եւթն հարիւր իննըսուն և հինգ, և կանա՝ (ագուգայք) որ ածեր ջուր ՚ի քաղաքն՝ հազար երեք հարիւր յիսուն և երկու : Խաբաղք<sup>(1)</sup> հացեփեացք երկու հազար եւթանասուն և չորս, տլսմերք (տլսմունք) պղնձիք<sup>(2)</sup> երեք հազար եւթնհարիւր ութմսուն և հինգ : Եւ յետ բազում ժամանակաց Տիտոս և Վեսպիանոս բերեն զդրունան Երուսաղէմի և սիւնս ՚ի Տաճարեն և այլ զարդերս, և յաւելին ՚ի զարդը շուսմայ : Եւ արտօպքոյ քաղաքին շուրջն գայր քառասուն միլ, և մէջ քաղաքին ՚ի չորից կողմանց՝ երկոտասան միլ, և է միլն երկոտասան ոճ գարձի եղանց հերկողաց : Եւ թիւ մարդկանն երկոտասան բիւր . և երկրորդ անգամ թուեալ՝ գտաւ վեշտասան բիւր . և երրորդ անգամ թուեալ՝ <sup>Յ</sup>քսան և

(1) Խաբաղ յայն բառ արտօրերեն, նշանակէ հացագործ :

(2) Են անօթք պղնձիք զբեալք ներքոյ և արտօպքոյ զբրովք, զոր մարդիկ առ ՚ի պահպանութիւն անձանց, և ՚ի բժշկութիւն ՚ի վար առնուին : Գտանին և առ մեւք այսօրինակ անօթք պղնձիք պարացի զբովք :

(3) Յօրինակիո մեր պակասեր առղ մի, զոր յաւելաք ՚ի միւս թարդմանութենէն :

եւթն բիւր, և չորրորդ թուեալ՝ քառասուն  
և վեց բիւր. և հինգերորդ թուեալ՝ չորեք-  
հարիւր վեշտասան. և 'ի թագաւորութեան  
կղոդեայ՝ վեց հարիւր իննսուն և չորս բիւր:  
Եւ 'ի թագաւորութեանն (Օդոստեայ և Ըր-  
քեղայսի որդւոյ Հերովլէի եղեւ 'ի Հռոմ  
սով մեծ, և վաճառէին զմոդ մի ցորեան 'ի  
քսան և եւթն դահեեկան և կէս: Եւ 'ի թա-  
գաւորութեանն Տիտոսի եղեւ 'ի նմա մահ  
տարաժամ, որ մեռանէր յաւուրն բիւր մի:

Յայսմ ժամանակի զիամարացին ուտէ-  
ին առիւծք: Եւ առաքեաց Աաղմանասար  
'ի գերելոցն քահանայ մի Եզրաս անուն, և  
ուսոց նոցա զօրէնս, և գրեաց նոցա ասորի  
գրով զհինգ գիրքն Վավսիսի: Վասն այսորիկ  
Աամարացիքն այլ գիրք ոչ ընդունին յօրինացն  
և 'ի մարգարէիցն՝ բաց Արարածոցի:

Դ վեց ամին Եզղեկիայ թագաւորեաց Ա-  
թուրացւոցն Աենեքերիմ. և եկեալ զօրքն  
նորա Աշրուսաղէմ, կոտորեցան հարիւր  
ութսուն և հինգ հազար: Աենեքերիմ զկնի  
ինն ամի թագաւորութեան իւրոյ սպանաւ  
յորդւոցն, որք գնացին 'ի Հայս. և թագա-  
ւորեաց Ասորդան որդի նորա երիս ամս:  
Եւ Աշգիպտոս թագաւորեաց Աաւիքոն (1)  
հնդկացի ամս երկոտասան: Եւ 'ի վերայ

(1) Աստ Եւսեբեաց՝ Սաբախոն կամ Աբահոն Եթեովզացի:

Անակեդոնացւոցն թագաւորեաց Փրիստիկոս(1) ամս յիսուն և մի : Յութեւտասն ամին Եղեկիայ թագաւորեաց Աթուրացւոցն Բելդան, որ է Բաղուան : Առ առաքեաց պատարագ Եղեկիայ Աշուսաղէմ վասն դարձի աշեգականն, գիտացեալ թէ յԱրտուծոյն Խորոյելի եղել նշան կենդանութեան Եղեկիայ : Եւ սա քարոզեաց զանուն Տեառն Կատուծոյ ընդ ամենայն երկիրն Բարելացւոց և Կորւոց : և սա շինեաց պատկեր Ճշմարտին Կատուծոյ և ետ երկրագագել նմա . և դարձոց զամենայն աշխարհ իւր ՚ի պաշտելոց զարեգակն :

Ի քան ամին Եղեկիայ թագաւորեաց Անդացւոց Կուրատակոս(2) ամս երեքտասանն Ի քսան և ինն ամին Եղեկիայ թագաւորեաց յԵղեկապոս Տրոքոս հնդկացի(3) ամըս քսան : Օկնի Եղեկիայ թագաւորեաց Անսասէ ամս յիսուն և հինգ : Եւ եկեսց վաթսուն և եւթի ամ : Յերրորդ ամի իւրոց թագաւորութեանն սպան զԵշացի մարդարէ, և բազում արիւն արդար եհեղ, և թո-

(1) Պերդիկա ըստ Եւսեբեայ :

(2) Զկուրդակոս թագաւորն Մարաց ոչ յիշատակէ Եւսեբի, այլ առաջին թագաւոր գնէ Մարաց զԴիտոկէս՝ տալով նմա ամս 54 : իսկ Միխայել ուրոյն յիշէ և զԴիտոկէս իշխեալ ՚ի չորրորդ ամէ Մանասէի : իսկ զանունն այլակերպեալ գնէ Դիտուլոյս :

(3) Եւսեբիս ուղղագրէ կոչելով Տարախոս փոխանակ թաւույ : Միւս թարգմանութիւնն գնէ Տրախոս :

զաւ՝ ՚ի ձեռաց Աստուծոյ և անկաւ՝ ՚ի ձեռաց  
Ասորւոց զօրացն, և տարան զնա գերի յԱ-  
թուր, և եղին՝ ՚ի հոր կապանօք. և ասաց զպա-  
տուական աղօթմն ապաշխարութեան ՆՏէր  
ամենակալն . և ընկալաւ Աստուած զաղաչանս  
նորա և արձակեաց զնա յերեսուն և եւթն  
ամին իւրոյ : Եւ Եսայի մարդարէն եղաւ  
՚ի Աելով, և տուաւ ՚ի պատիւ մարդարէին  
շնորհք բժշկութեան . և Աելով առաջեւ  
սի, մի՛ վասն Եսայեաց որ առաքեալ ասի  
վասն բանին որ ասաց . “ Աւասիկ ես՝ Տէր  
առաքեա զիս ո ”<sup>(1)</sup> . և միւս՝ զի ՚ի գալ Ա-  
լազգացն արգելոյր ջուրն, և յորժամ Եսայի  
մարդարէն գայր ժողովրդեամբն, առաքեալ  
լինէր յԱստուծոյ ՚ի պաշարման Երուսալէ-  
մի յԱսորւոցն :

Ե չորրորդ ամին Վանասէի թագաւորեաց  
Վագայեցւոցն ՚ի իուքլայոս<sup>(2)</sup> ամս յիսուն և  
չորս : Ե քսան և մի ամին Վանասէի թագա-  
ւորեաց յԱգիպտոս Վարտիս<sup>(3)</sup> ամս երկու :  
Ե քսան և ինն ամի Վանասէի թագաւորեաց  
Վակեդոնացւոցն Արգէսոս՝ ամս երեսուն և  
ութ . և յերեսուն և երրորդ ամին Վանասէի  
թագաւորեաց յԱգիպտոս Վտեփանթոս<sup>(4)</sup> ա-

(1) Եսայի . Զ . 8 .

(2) Տէս՝ ՚ի վեր՝ յեր . 54 . ծանօթութիւն 3 .

(3) Եւսեբիոս դնէ՝ ՚ի նմին ամի թագաւորեալ Անդէ-  
մթւովացի՝ ամս 12 .

(4) Ըստ Եւսեբեաց Սոէֆիոնիչի :

մըս հինգ։ Եւ ՚ի քսան և վեց ամին Վանասէի թագաւորեաց Ասորւոց փոքր Սենեքերիմ՝ ամս երեսուն և հինգ։ Եւ ՚ի քառասներորդ ամին Վանասէի թագաւորեաց Հռոմայեցւոցն Տակլիոս<sup>(1)</sup> ամս երեսուն և երիս։ Այս էր որ եգիտ զհանդերձն ծիրանի և զգաւաղանն ուկի թագաւորական։ Քստ մեղ Տուլլոս է սա։ Ասոր թագաւորեաց Եգիպտացւոյն Աեքոն<sup>(2)</sup>, ամս ութեւտասն։ ՚ քառասուն և չորս ամին Վանասէի թագաւորեաց Եգիպտասի Փսոմիտիկոս<sup>(3)</sup> ամս քառասուն և չորս Յայսմ ժամանակի եղեւ առաջին շինութիւնըն Իշւղանդի՛ ձեռամբ Իշւղոսի իշխանի։ և զկնի ինն հարիւր և եւթանասուն ամի մեծացաւ նորոգեալ ՚ի կրօստանդիանոսէ, և ետ անուն կրօստանդնուազօլս։ Եւ աստ վրձարեցան թագաւորք և դատաւորք Աթենացւոց։

Օկնի Վանասէի թագաւորեաց Ամոն ՚ի վերայ Յուդայ ամս երկոտասան։ և յերրորդ

(1) Քստ Եւսեբեայ Տուլլոս Ավլուտուս։ Փոքր մի յետոյ Տուլլոս կոչի։ Օրինակս մեր ուներ ՚ի ին ամի Մանակու։

(2) Եւսեբիս զերկուս անձին կարգե յայսմ վայրի, Կեքեփոսու որում յաջորդե Կեքաւով, որ է Կեքոնն Միխայելի, և ժամանակ իշխանութեան երկոցունցն՝ դնէ ամս չոքեքտասան։ Խոկ միւս թարգմ. նոյնացուցանէ զերկոսին անուանա և տայ նմա ամս վեց։

(3) Եւսեբիս դնէ զսա ՚ի յիսներորդ չորրորդ ամին Մանասէի։

ամի նորա թագաւորեաց Անդացւոց Նըր-  
բակտիս (1) ամս չորեքտասան : Եւ յերկոտա-  
սան ամին Կմննի թագաւորեաց Աթուրաց-  
ւոցն Նաբուապալասար՝ ամս երեսուն և երիս .  
և սա եր մոդ : Եւ ՚ի նմին ամի թագաւու-  
րեաց Անկեդոնացւոց Փիլիպպոս՝ ամս երե-  
սուն և ութ : Յերրորդ ամին թագաւորու-  
թեանն Կմննայ ծնաւ Ավսիա . և Կմնն պաշ-  
տեր զկուռս , և հարին ծառայքն նորա և  
մեռաւ . և են ժամանակը նորա քսան և  
չորս ամ :

Եւ թագաւորեաց Ավսիա որդի նորա  
յերուսաղէմ ամս երեսուն և մի . և եկաց  
երեսուն և ինն ամ : Եւ եղեն նմա որդիք  
չորս , Յովհաննէս , Յովակիմ , Յովաքաղ ,  
Անդեկիա : Յօսամ ժամանակի մարգարէա-  
նայր Առփոնիա յաղգէ Հմաւոնի : Ի տասն  
ամին Ավսիայ թագաւորեաց Հռոմայեցւոցն  
Արքիս Անիկոս (2) ամս քսան և չորս Յերեք-  
տասան ամին Ավսիայ սկսաւ Երեմիա մար-  
գարէանալ : Ի չորեքտասան ամին Ավսիայ թա-  
գաւորեաց Անդացւոցն Կոստանդոս (3) ամս  
երեսուն և երկու : Աս գնաց և առ զԱմնուէ  
և զԱթուրացիսն : Յերեսներորդ ամին Ավսիայ

(1) Բատ Եւսեբեայ Փրատորէս :

(2) Բատ Եւսեբեայ Անիս Մորիս , զօրոյ սկիզբն իշխա-  
նութեանն գնէ ՚ի չորրորդ ամէն Ավսիայ :

(3) Եւսեբի ուղղէ զանունս կոչելով զնա Կիտուորէս :

թագաւորեաց յիշիպտոս Անքաւով, որ է  
Անփառա, ամս վեց : Աս ել ՚ի կողմանս Եփ-  
րատայ պատերազմեալ ընդ Աթուրացիսն ՚ի  
Վնդէճ : Եւ ել Ավոխա ընդդէմ նորա ա-  
ռանց հրամանի Աստուծոյ, և սպանաւ ՚ի  
նմանէ և թաղեցաւ յիշրուսաղէմ, և թագա-  
ւորեաց Յօվլաքազ որդի նորա . և յետ ե-  
րեք ամսոյ դարձաւ Անքաւով կաղն և տա-  
րաւ գՅօվլաքազ յիշիպտոս, և կացոց թա-  
գաւոր զեղբայր նորա գՅօվլակիմ, և եղեալ  
հարկ տասն քանիքար սակւոյ և հարիւր ար-  
ծաթոյ : Աս թագաւորեաց ամս երկուստա-  
սան :

Յերրորդ ամին Յօվլակիմայ թագաւո-  
րեաց Հռոմայեցւոցն Տարկինոս Աւբրիկոս<sup>(1)</sup>  
ամս երեսուն և ութ : Ի նոյն ամի թագա-  
ւորեաց Աթուրացւոցն Աաբուգոդոնոսոր  
քաղդէացին որդին Աաբուալալարայ՝ ամս  
քառասուն և չորս . որ եկին յիշրուսաղէմ  
և տարաւ գերի զանօթս տան Տեառն, և  
եղ հարկս Յօվլակիմայ, և տարաւ գԴանիէլ  
և զընկերս իւր : Եւ յետ քակելցն ՚ի Ան-  
քաւովիէ Վնդէճ քաղաքի՝ շինեցաւ վերը-  
տին յԱթուրացւոցն . և եղաւ անդ կուռ-  
քըն կայնանայ : Եւ կոչեցաւ Յարապօլիս,  
(Յերապօլիս) որ թարգմանի քահանայիշ քաղաք<sup>(2)</sup>

(1) Ըստ Եւսեբեայ Տարիինս Պէտքան :

(2) Ըստ Յունական ստուգարանութեան :

վասն քրմացն կախարդացն, որոց աղանդին աշակերտեցաւ յետոյ Շարդեծան :

Եւ ել դարձեալ Աեքաւով ՚ի կողմանու Եփրատայ և սպանաւ ՚ի Նաբուգոդոնոսուրայ : Եւ թագաւորեաց Աշխապտոս Փասն թու (1) ամս եւթնեւտասն : Յութերորդ ամին Յովակիմայ և Նաբուգոդոնոսորայ հինգերորդ ամին Եկն Աշրուսաղէմ Նաբուգոդոնոսոր, և առ զՀարկն և դարձաւ : Եւ յութերորդ ամին Նաբուգոդոնոսորայ մեռաւ Յովակիմ, և թագաւորեաց Յովաքիմ որդինորա, որ է Յեքոնիա, ամիսս երիս, և ՚ի բաց Եկաց ՚ի Տեառնէ : Եւ Եկն Նաբուգոդոնոսոր Աշրուսաղէմ և դերեաց զՅեքոնիտ և զմացրն և զիշխաննն, և տարսու զնոսա ՚ի Նաբելոն և Եղ ՚ի կապանս ամս Երեսունն և հինգ : Եւ Եղ թագաւոր Աշրուսաղէմի զԱեդեկիա : Յառաջին գալն հայրն Նաբուգութողականար առաքեաց զնոտ Աշրուսաղէմ, և յորժամդարձարձաւ, մեռեալ էր հայրն, և ինքն առ զթագաւորութիւննն Յինն և տասներորդ ամի թագաւորութեան Նաբուգութողականար Եկն Նաբուգորդան և այրեաց զԱշրուսաղէմ և զՃաճարն զկնի դերելոյն և մահուանն Աեդեկիայ, որ թագաւորեաց ամս մետասան : Ի չորրորդ ամին Աեդեկիայ թագաւորեաց Անդացւոցն Իս-

(1) Ըստ Եւսեբեայ Փաղմաննէս :

տիկոս (1), ամս Երեսուն և ութ : Ի մետասան ամին Աեղեկիաց թագաւորեաց Եղիսկ տոսի Եփրոս (2) ամս քսան և եւթն : Եւ ՚ի նոյն ամի գերեցաւ Աեղեկիա և ամնայն Հրեայքն, բաց ՚ի սակաւուց աղքատաց որ գործէին զգործ արքունի . և նախ քսն զաւեր Տաճարին Երեմիա մարդարէն տարաւ պահեաց զոապանակն Տեառն :

Ժամանակը նեղեղոյն զերուասդէմ :

Ի չորրորդ ամէն Յովակիմայ, որ առաջին Նաբուգոդոնոսորաց, մինչեւ ՚ի մետասան ամին Աեղեկիաց, որ է վերջին աւեր Երուսաղէմի, և զկնի աւերմանն Երուսաղէմի եւ Նաբուգոդոնոսոր ՚ի վերաց Արց և քակեաց զնա՝ ծովասոյզ արարեալ զքարինան . և Առւրացիքն զստացուածս իւրեսնց նոյն պէս ծովամոյն արարեալ փախեան նաւով : Եւ ՉԲիրամ արքայ Առւրայ սպանին, որ կեցեալ էր զամենայն ժամանակս թագաւորացն Յուդայ : Եւ տուաւ Եղիսկոս աւար զօրացն Նաբուգոդոնոսորաց փոխանակ աշխատութեան նոցա ՚ի վերայ Առւրայ :

Ի քսան և եւթն ամի գերութեանն Երուսաղէմի մեռաւ Նաբուգոդոնոսոր թա-

(1) Իսրիան է Աժդական ու զշագրեալ յԵւսերեաց :

(2) Ըստ Եւսերեայ Վանիկու, որում առ ամս 25 :

գաւորեալ ամս քսան . և էառ զթագաւու-  
րութիւն նորա Խլմարովդակ որդի նորա ա-  
մբա երիս : Այս եհան զիշքոնիա ՚ի բանտէն ,  
և ուտէր ՚ի սեղանն արքունի : Եւ զինի նո-  
րա Խաղտասար ամս երկուս : Եւ յառաջին  
ամին Խաղտասարաց ետես Դանիէլ զտեսիլ  
չորից կենդանեացն , յօրինակ չորս թագա-  
ւորութեանն աշխարհի : Եւ Դարեհ Ուադէ ,  
որ է Ուար , սպան զԽաղտասար և դարձաւ  
թագաւորութիւնն Քաղդէացւոց : Եւ յա-  
ւուրս Դարեհի մադացւոց արկաւ Դանիէլ  
՚ի գուբ զառաջինն , և Դարեհ կացոյց զնա  
վերագոյն ամենայն իշխանաց : Եւ կիւրոս պար-  
սիկ սպան զԴարեհ , և եքարձ զթագաւորու-  
թիւն Ուարաց և Աթուրացւոց , և արար կիւ-  
րոս զաթոռ թագաւորութեան իւրոյ ՚ի Խա-  
բելոն , և արար զԴանիէլ հաւատարիմ իւր :  
Եւ Դանիէլ նախանձու Կստուծոյ վա-  
ռեալ կործանեաց զկուռոսն Խելայ , զոր կան-  
զնեալ էր յանուն Վիլոսի , և սպան զվի-  
շապն : Եւ զըարեալ ընդ նա՝ արկին երկրորդ  
անգամ ՚ի գուբ ՚ի մէջ եւթն առիւծուց . և  
յայսմ (նուագի) առաքեցաւ Կմբակում յԿս-  
տուծոյ բերել կերակուր Դանիէլի . և ապ-  
րեալ Դանիէլիորեան թշնամիք նորա : Եւ յայ-  
սըմ ամի մեռաւ Կմբակում . և Դանիէլի տե-  
սեալ տեսիլ , իմացաւ զկատարումն եւթա-  
նասուն ամին զոր վճռեալ էր Կստուած ՚ի

Ճեռն Երեմիայ մարդարէի : Եւ սպահեաց քը-  
սան և մի օր . և ետես ՚ի վերայ Տիգրիս գե-  
տոյ այր մի սպիտակաղգեստ , որ ասէր ցնա.  
“ Քան և մի օր է որ կուռւիմ ընդ իշխանին  
Պարսից , դարձուցանել զորդիս ազգին քոյ  
Ար և յառաջին ամին Կիւրոսի դարձան հինգ  
բիւր , եւ սկսան շնորհ զՃաճարն : Եւ ՚ի  
վաթսուն ամի գերութեանն Հրէից սպան  
Վիւրոս Ուկսատա (1) կինն իւր , և առ  
զթագաւորութիւննորա Կամբիսոս . և վասն  
սորա ասեն Երբայեցիքն՝ թէ կոչէր Կաթու-  
գոդոնոսոր (2) , որ սպան զԵրփաքսաթ Ուար:  
Եւ յաւուրս սորա եղեն իրքն Յուդիթ կը-  
նոջ , որ սպան զՀողեփեռնէս , որ էր յազ-  
գէն Ուագովգայ (3) , որ են թուրք + Կամբի-  
սս թագաւորեալ ամս ութ՝ առին զինի  
նորա զթագաւորութիւնն Երկու եղթարք  
մոգք , ամիսս եւթն : Եւ զհետ սոցա թա-  
գաւորեաց ‘ Դարեհ մադացի ամս Երեսուն  
և վեց : Եւ ՚ի յերկրորդ ամին սորա կատա-  
րեցաւ Երկրորդ եւթանասունն գերութեա-  
նըն Հրէից յացրմանէ Տաճարին , և առաջին  
եւթանասունն ՚ի վճռէն Երեմիայի էր . վը-

(1) ԶՄԻՒԱՅԵԼՔ սիսալանան Եւսերի ուղղէ յասելն (յեր. 200.) “ Տըմիրիս բամբիշն Մասագեցւոց սպան զԿիւրոս + զՆորին բանան և Սամուել բառ առ բառ ՚ի մէջ բերէ յիւր Քրտնիկոնին :

(2) Եւսերիսս : Քըրն . յեր . 200 .

(3) Յօրինուկիս Մադուշայ :

կացեն Օքքարիս և Անգեաս, որ ասեն.  
Այնուշեւ յերբ ոչ սպարմիս Երուսաղեմի հքա-  
ղաքացն Յուդայ . . . զի այս եւթանասուն  
ամէ (1) : « Ժողովին ամք ՚ի Ասղովմանի շե-  
նուածոյն մինչեւ ՚ի վեց ամն Դարեհի հինգ  
հարիւր ութ (2) ամ։ ՚ի հնգետասան ամին Դա-  
րեհի լցաւ հինգերորդ դարն։ Եւ ՚ի վեշտա-  
սան ամին Դարեհի սկսաւ վեցերորդ դարն։

Օկնի Դարեհի թագաւորեաց Վաերքէս  
որդի իւր ամս քասն և մի։ Եւ յերկրորդ  
ամին իւրոյ առ զիշգիպտոս, և ՚ի մետասան  
ամին առ զիթէնս և հրով սյրեաց զնա.  
առ և քաղաքս բազում։ Յաւուրս սորս ե-  
ղեն իրքն Եսմերայ և Մուրաքէի և Հա-  
մանայ, որ էր յազդէն Ամաղեկայ . բայց  
Յովհաննէս (ասխացին) ոչ հաւանի թէ աստ  
եղեն Եսմերայ իրքն, զի թէ եղեալ էր ա-  
սէ, Եզր ընդէր ոչ գրէր (3)։ Եւ սմանք աստ

(1) Զաքարիա . Ա. 12.

(2) Ապուլֆարամ համաձայն մերումն դնէ մինչ ցեւթն  
ամն Դարեհի 508։ Իսկ սմանք յօրինակաց միւս թարգ-  
մանութեան դնեն 556 ամ։

(3) Զայն կարծիս Յովհաննու և Եւսեբիոս հաստատէ,  
ոչ զբանքակայ այլ զյաջորդէն նորս զԱրտաշմէ խօսելով,  
յասելն . զԵսմերայ և զՄուրթքէի իրան սմանք առ առվաւ-  
ասեն։ Բայց ես շառնում յանձն։ Քանզի ոչ եթէ լուէին  
զնորս գործոն՝ Եզրի գիրքն, որ առ սովաւ պատմեն զԵզրի և  
զնե միայ ՚ի Բարեկլնէ ելանելն, և զգործն ՚ի նոցանէ լեալ որ ՚ի  
նոյն գիրս կրին։ Զայսոսիկ գիտազութիւնս Եւսեբի գտա-  
նեմք ՚ի մէջ բերեալ և ՚ի Նախադրութեան գրոցն Եսմերայ։

ասեն զդարձն Հրեից և ոմանք առ Դարեհիւ : Օկնի Քաերբեայ թագաւորեաց Արտաւանոս հինգ ամիսս . և զհետ նորա Արտաշէս (Արտաքսերքսէս) Երկայնաբազուկ՝ ամս քառասուն և մի : Ի յեւթն ամին սորա ել Եզրաս դպիրն շինել զպարիսպն Երուսաղէմի : Այս գրեաց զհին կտակարանսն, շնորհելով նմայլ ստուծոյ . և ՚ի խնամոցն Արտուծոյ պահեցան հին օրինակքն ՚ի տեղիս տեղիս, և յետոյ գտան համաձայնք միմեանց :

Եւ ՚ի քսան ամին Արտաշիսի ել Նոյեմի տակառապետն Արտաշիսի հրամանաւ նորին, օգնել Եզրի, որ յամեալ անդէն յԱրտապաղէմ ՚ի շինելն՝ ամս երկոտասան<sup>(1)</sup> : Եւ արկառ հիմն Երուսաղէմի ՚ի քահանացապետութեան Յովիդայեաց որդւց Եղիսէի : Նոյեմի ետքերել ՚ի ջրհորոյ ողջակիզացն՝ մօրացեալ զինի եւթանասուն ամի, և սրակեալ ՚ի վերաց սեղոնցն իբրեւ զառաջինն (վառեցաւ հուր) :

Օկնի Երկայնաձեռին թագաւորեաց Արտաշէս միւս երկուս ամիսս, և զինի նորա Աիկդինոս<sup>(2)</sup> ամիսս եւթն, և յետ նորա թագաւորեաց Դարեհ Առւդոս (Հարձօրդի) ամըս ինն և տասն : Եւ ՚ի հնգետասան ամին սորա ապստամբեաց Եղիպտոս ՚ի Պարսից, և եղին իւրեանց թագաւոր զԴիտնէսիոս

(1) Կեեմի . Ե . 14 .

(2) Լուս Եւսեբեաց Սոդոնիոս :

զկնի հարիւր քսան և չորս ամի խափանելցն։  
 Օկնի Աղեքսանդրի թագաւորեաց Այակե-  
 զոնացւոցն Պերտիկոս՝ ամս քսան և ուժ։  
 Եւ ՚ի յիննեւտասն ամի Դարեհի թագաւո-  
 րեաց Այակեդոնացւոցն Արիստոս<sup>(1)</sup>, ամս  
 երիս։ Իսկ ՚ի Հռոմ Կալվարիոն. և սա պա-  
 տերազմեդ ընդ Կալվատուկք և ընդ Գաղա-  
 տացիս. եւ յետ հարիւր ամի յաղթեցան  
 Հռոմայեցիք, և առին դՀռոմ և քակեցին  
 զնա ՚ի հիմանց, և մնաց միայն արքունիքն<sup>(2)</sup>.  
 Յայսմ ժամանակի եղեւ շարժ սաստիկ, և  
 բազում քաղաքս կլաւ երկիր։ Եւ թագաւո-  
 րեաց Պարաից Արտաշէս ուշեղ՝ ամս քառա-  
 սուն։ Նըրայեցիքն առ սովաւ ասեն զիշ-  
 թեր։ Ի հնգետասան տմին Արտաշիսի, Ու-  
 տուկարտորն<sup>(3)</sup> Հռոմայ յԱփրիկէ աւերեաց  
 զիարքեդոն, և յանուն իւր կոչեաց զնա  
 Ափրիկէ։ Եւ յԱգիպտոս թագաւորեաց Աւծ-  
 բետրիս<sup>(4)</sup>, ամս վեց, և Այակեդոնացւոցն  
 թագաւորեաց Արքեղայոս ամս չորս։ Եւ  
 գարձեալ Ամուտոս<sup>(5)</sup> ամ մի, և ապա Պու-

(1) Ըստ Եւսեբեայ Ոկնեարէս։

(2) «Գաղատացիք և Կեղոացիք զՀռոմ կալսն բաց ՚ի  
 Կապիտովզեայն։» Եւսեբի, Քրո. յեր. 218.

(3) Դիկտատոր Հռոմայեցւոց՝ այն է Ակիպիոնն, որ Ափրի-  
 կեցի կոչեցաւ վասն զԱփրիկէ նուաճելոյ։ Որպէս յայտ է,  
 ՚ի հակառակ միտս առեւալեն արեւելքանք զգործան Ակիպիոնի։

(4) Ըստ Եւսեբեայ Եփիլլուտէ, երկրորդ թագաւոր 27 բդ  
 հարատութեանն Եգիպտացւոց։

(5) Ըստ Եւսեբեայ Ամուտոս . . . Պատմանիոս։

սինոս ամ մի , և ապա Ամունդիս (Ամբինդաս) վեց ամ : Եւ ՚ի վեշտասան ամին Արտաշեսի թագաւորեաց Վակեդոնացւոցն Արքայու (1) , ամս ութ և տասն : Եւ ՚ի քսան ամին Արտաշիսի թագաւորեաց Եղիպտականի Փառամ թոս (2) ամ մի . և զինի նորուն Վարիս՝ ամ մի . և ապա Արքակապիս ամս ութեւ տասն : Եւ յերեսուն և հինգ ամին Արտաշիսի թագաւորեաց Վակեդոնի Աղէքսանդր ամ մի . և յետ նորա Պտղոմէոս Երեք ամ : Եւ ՚ի քառասուն ամին Արտաշիսի թագաւորեաց Եղիպտացւոցն Տէովս (3) ամս Երկու . և զինի նորա Անդրգերոս (Անքաներոս) ամս Երկու տասան : Եւ զհետ Արտաշիսի թագաւորեաց Պարսից միւս Արտաշէս Աւրոս կոչեցեալ : Աս հնազանդեաց զԵղիպտոս և Երարքած զթագաւորութիւնն նոցա . և Կանաքոս (Անքաներոս) թագաւորն Եղիպտականի փախեաւ յԵթովզիս (4) , աղանդով իմացեալ :

(1) Ըստ Եւսեբեաց Աքէնոս Տեւողութիւն և կարգք ամաց թագաւորացո ոչ համաձայնին քրոնիկոնին Եւսեբեայ նաեւ միւս թարգմանութիւնն իսպառ աարքերի :

(2) Ըստ Եւսեբեաց Փառմութէս իսկ զԵղիպտոս ոչ յիշառակե Եւսեբի, այլ յաջորդ գնէ նմա զԵնեփիրիտէս + թագաւորեալ ամիսս չորս + Եւ ապա զԵնեկտաներոս, զոր Անքանապիս անուանէ օրինակս :

(3) Յօրինակիս Տիգոս. իսկ միւս թարգմ. Դիտու :

(4) Ավքոս կալաւ զԵղիպտոս ՚ի փախոտականութեանն Անքաներայ յԵթովզիս, առ որով դադարեցին թագաւորք Եղիպտացւոցն Եւսեբիոս. Քրն. յեր. 222.

յառաջագոյն զաւերն . և ասեն թէ սա է հայրն Աղքատանդրու , որ է Աղքատաներոս . և խափանեցաւ թագաւորութիւնն Աղքադտոսի քառասուն և երկու ամ , մինչեւ ՚ի Պունթիմաս , շըր կոչեն Պաղպմէս , ոմն ՚ի բարեկամացն Աղքատանդրի :

Երաաշէս Ալքոս թագաւորն Պարսից հընազանդեաց զշրեայսն , և տարաւ զնոսաքնակեցոց առընթեր ծովուն Կասրից յԱռկանա քաղաք : Եւ յայսմ ժամանակի թագաւորեաց Վակեդոնացւոց Փիլիպպոս հայրն Աղքատանդրի , ամս քսան և եւթն . և անուն կնոջ նորա Աղօմպիադա : Ետո երեւեցաւ Արիստոտէլ և Եպիկուրոս փիլիսոփայք : Երեքտօտասան ամին Ալքոսի պարսկի ծնաւ Աղքատանդր ՚ի յութ ամի թագաւորութեան հօրիւրոյ : Եւ զինի Ալքոսի թագաւորեաց Պարսից Արիստորէս <sup>(1)</sup> որդի նորա՝ ամս չորս : Եւ զինի նորա Դարեհ որդի Երտաշրի՝ ամբ մեց :

Եւ յառաջին ամի նորա թագաւորեաց Վակեդոնացւոցն Աղքատանդր որդի Փիլիպպոսի քսան ամաց . զառաջինն թագաւորեաց յԱլտա (յԱլատա) : Ետ էր հասակաւերեք կանգուն , բայց մեծ խելօք և քաջութեամբ , որ կորսյա յաշխարհէ երեսուն և

հինգ թագաւորս . և ուներ զօրս երկոտաս  
սան բիւր : Այ և ՚ի վեց ամի թագաւորու-  
թեան իւրայ , և ՚ի վեց ամին Դարեհի պա-  
տերազմեցան ՚ի Ախս Եփլիկեցւոց , և մեռաւ  
Դարեհ : Եւ ՚ի նա կասարեցաւ թագաւո-  
րութիւնն Պարսից , տեւեալ ամս երկերիւր  
երեսուն և մի : Եւ Աղէքսանդր շննեաց եր-  
կոտասան քաղաք յանուն իւր : Այ եղ գու-  
ռըն Հոնաց , չապականել նոցա զերկիր . և  
էր գուռն երկաթի երեքտասան կանգուն  
երկայն , և լսյն ութ կանգուն : Այ եկեալ  
Աշրուսաղէմ պատարագեաց Վստուծոյ , և  
թոյլ ետուն Հրեայքն , և պատուեաց զքա-  
հանայապետն (Նարումաքոս<sup>(1)</sup>) : Եւ յորժամ Այ-  
մարացիքն սպանին զքահանայապետն (Նոտ-  
րոմաքոս , վասն թոյլ տալոյ նմա հեթանո-  
սին պատարագել Վստուծոյ , լուաւ Աղէք-  
սանդրոս և եկն Աշդիպտոսէ և քակեաց  
զԱմարիա և ջնջեաց զաղգն , և ած Այ-  
կեդոնացիս և բնակեցոյց ՚ի Ամարիա . և  
զկնի երկոտասան ամի և եւթն ամսոյ թա-  
գաւորութեան նորա դեղատուութեամբ  
մեռաւ ՚ի Տարելոն : Այ է առաջին թա-

(1) Եւսերի ուղղելով զանուն քահանայապետին որ էր  
Անիա , զԱնարումաքոսէն առէ եթէ էր աեսուշ կողմանցն Պա-  
զեստինի յԱղէքսանդրոսէ կացուցեալ , և Սամարացւոց ըս-  
պանեալ զԱնարումաքոս : պատմեցան և ինքեանք յԱղէք-  
սանդրէ ՚ի գարձին նորա Աշդիպտոսէ : Քըն . յեր . 222 .

գաւոր Յօւնաց, և յետ սորա թագաւորեաց յիշիալտոս Պտղոմէոս, որ եբեր ըզմարմին նորա յիշիալտոս և թաղեաց. և կատարեցաւ բանն թէ արօշն այծեացյալ թէ խոյին՝ Դարեհի: Եւ բարձաւ մի եղջիւրն և երեւեցան չորս եղջիւրքն, <sup>(1)</sup> ո բարեկամքն: Եւ յետոյ եղեն տասն եղջիւրքն տասն թագաւորք բաժանեալք:

Խոկ Պտղոմէոս թագաւորեալ ամս քառասուն: Եւ յառաջին ամին էտո զլուսաղէմնենգութեամբ, և տարաւ գերի յիշիալտոս առ Անիայիւ քահանայապետիւ. և ՚ի նմանէ կոչին և այլ թագաւորքն՝ Պտղոմէոսք: Ի չորս ամին Պտղոմէայ թագաւորեաց ՚ի վերայ ամենայն Ասիոյ Անտիգոնու ամս ութեւտասն: Այդարձեալ շինեաց զլուտիոք անոււամբ որդւոյ իւրոյ Անտիօքու <sup>(2)</sup>: Յերեքտասանամին Պտղոմէայ թագաւորեաց ՚ի վերայ Ասորւոց և Բաբելոնի մինչեւ ՚ի Հրեդիկս Աելեւկոս՝ ամս երեսուն և երիս: Եւս կատարեաց զշինուածն Անտիօքու, և շինեաց զլուելկիա, զլատիկն, զլշփեմիա <sup>(3)</sup>, զԲերիա՝ որ է Հալք, զլալու, զլարաշ, և

(1) Դան. թ. 7—8.

(2) ԱԱնտիգոնոս զԱնտիգոնէ առ Օրէնտ գետով շինեաց դր Սելեւկոսնարոգեաց և անուանեաց Անտիօքու Սւսերիոս Քրոն. յեր. 226:

(3) Եւսերիս (անդ) Աղամիտ անուանէ, որ է Համա. իսկ ՀԲալու՝ Բէդու կոչէ:

բնակեցց ՚ի նոսա Հրեայս . և պատուեաց զնոսա , և արար մուտ և ել առ ինքն ընդ սիրելիս իւր : Եստ շինեցաւ մեծ աշտարակն Աղեքսանդրու ՚ի մէջ ծովուն ՚Աւիրոսի և անուանեցաւ Պրուտոս <sup>(1)</sup> . և շինեաց զնա Սոստրատոս Կանդիտացի՝ տեղի գիտի Աղեքսանդրու ընդ ծով և ընդ ցամաք <sup>(2)</sup> : Իսկ Աելեւկոս ըմբռնեաց զ՚Իեմետր ՚ի Կիլիկիա , որ թագաւորեալ էր ապատամբռութեամբ , և սպան զնա , և ինքն իշխեաց ամենայն Արիոյ : Եւ սկիզբն թագաւորութեան սորա , որ է զկնի երկոտասան ամի մահուանն Աղեքսանդրու , սկիզբն է թուականութեանն Ասորուոց :

Օհետ առաջին Պտղոմեայ թագաւորեաց Աշգիպտոս Պտղոմեոս Փիլադելփիոս՝ ամսերեսուն և ութ : Եւ յառաջին ամին նորա թագաւորեաց Վակեդոնացւոց Պտղոմեոս Կրօնոս <sup>(3)</sup> ամմի . և զկնի նորա Վալագարոս <sup>(4)</sup> ամիսս երկու . և Վնթիպատրոս աւուրս քըսան և վեց . և յետ Վնթիպատրեայ Վոսթենէս ամս՝ երկու : Իհինդ ամին Պտղոմեայ թա-

(1) Ոմանք համարին զՊրուտոս այլափոխեալ ՚ի յունական հարիս բառեն . որ նշանակէ լուսպոեր նառահանգստաց :

(2) “Սոստրատոս Դեքսիփոնայ՝ կենիդացի . կանգնեաց Աղեքսանդրիայ դիտանոցին աշտարակ բարձրաբերձ : ” Եւստրիք . Քըռ . յէր . 228 :

(3) Լուտ Եւսեբեայ Կէրանոս :

(4) Լուտ Եւսեբեայ Մէլագրիոս :

գաւորեաց զկնի Անլեւկիսով Ենտիոքոս Առվարեր՝ ամս իննեւ տաօն . և ՚ի վեց ամին Պլոտինեայ թագաւորեաց Վակեդոնացւոցն Են ափոնոս՝ ամս երեսուն և վեց Եւ ՚ի նոյն ամի թարգմանեցան գրեանքն ՚ի Կիպրոս կղզի, յերեսուն և ՚ի չորս թուին<sup>(1)</sup> Ետրոց, եւթանասուն և երկու թարգմանչօք. վեց վեցայր՚ի ցեղեցն երկոտասան որդւոցն Խորայելի, որք են այսոքիկ: Յաղգէն Խորէնի Յովսեսոս, Եզեկիէլ, Եղիսէէ, Օաքարիա, Յովհաննէս, Եզղէկիէլ, Յաղգէն Շմաւոնի՝ Յուդա, Շմաւոն, Շդէ, Ամուէլ, Վաթէ, Ամամիա: Յաղգէն ՚Կեւեայ՝ Աեմէի, (Այեմի) Յովսէփի, Թէոդոսի, Խոսոս, Աւրանիա, Տուկիսոս: Յաղգէն Յուդայ՝ Յովիաթան, Աբարի, Ելիսէ, Ենանիա, Օաքարիա, Եզղէկիա: Յաղգէն Խաքարոց Խահակի, Յակովը, Յեսու, Շմբատ, Շմաւոն, ՚Կեւի: Յաղգէն Օաքուղոնի՝ Յուդա, Յովսէփի, Շմաւոն, Օաքարիա, Շմաւոն, Ամամիա: Յաղգէն ՚Կադայ՝ Ամբատիա, Աեդէկիիա, Յակովը, Խահակի, Եսայի, Վատիմէոս: Յաղգէն Եսերայ՝ Թէոդոսի. Խասոն (Յասոն), Յեսու, Թէոդոսոսոս, Յովհաննէս, Յովիաթան: Յաղգէն ՚Կանայ՝ Թէոփիլէ, Աբրահամ, Խդասմոս, Խասոն, Երեմիա, Դանիէլ: ՚Կցեղէն ՚Աեփիթաղիմայ՝

(1) Յօրինակիս այտնի վրիտակաւ գրեալ էր յերեւ հոգիաց երեսուն և լոր:

Երեմիա , Դաղար , Օքքարիա , Բանիա , Եղիշէլ , Տաթան : Յազգէն Բենիամինի՝ Յովհաննէս , Խլաւոս , Եկղի , Թէոդոսի . Աերտամ , Եղեկիէլ : Յազգէն Յովսեփայ՝ Քաջէր , Ամմուէլ , Յովսէփ , Յուդա , Յովհաննաթան , Թոսդի : Թարգմանեցան ՚ի Վիպրոս յունարէն զրով , և տարան Աշգիպտոս և եղան Աբրունիսն : Եւլք ՚ի տեղն առեն թարգմանեալ և ՚ի Փարան կղզի . այլ այսէ ճշմարտութիւն :

Ի թուին Երորւոց ԿԲ (62) , և ՚ի հնազանդութեանն Յունաց յետ եւթանասուն և երկուց ամաց , խորհեցան կողմանքն Պարսից և արեւելից , եթէ «Պատառեցան Մակեդոնացիքն ՚ի միմեանց և ակարտացան , և են հեռաւորք ՚ի մէնջ , և խռավութեամբ և չարչարանօք ունին զմեզ . զի՞նչ կայ մեր և նոցա , եկայք գիցուք մեզ մօտաւոր թագաւոր : » Եւ թագաւորեցուցին իւրեանց Աբրակ քաջ յորդւոցն Աբրահամու որ ՚ի կենդուրայ ՚ի Բահլ քաղաքէ , որ է սահմանակից Մադացւոց երկրին : Ամանապէս և աշխարհն Աւոկանացւոց (Արկանաց) , որ կան ՚ի հիւսիաց կողմանէ Պարսից աշխարհն , յորժամ տեսին թէ տունն Պարսից եղին իւրեանց թագաւոր , կանգնեցին և նոքա իւրեանց թագաւոր . երբեմն հնազանդէին Պարթեաց , և երբեմն ոչ : Ամանապէս և

Հայք զկնի քաջ և յաղթող և տիեզերաստ թագաւորացն հայկաղանց, որը բարձին զթագաւորութիւն Վագացւոց և հնաւղանդեալ ունեին զամենայն թագաւորութիւնս հիւսիսի, և զամենայն ազգս շուրջանակի զոր մեք ոչ կարացաք գրով գտանել և տողել զշարս նոցա մինչեւ Աղեքսանդր՝ որ սպան զլահէ թագաւոր հայկաղնի և եքարձ զթագաւորութիւնն Հայոց մինչեւ յայսմ ժամանակի. յորում գարձեալ կանգնեցաւ թագաւորութիւն նոցա ՚ի Պաղեստինէ մինչեւ ՚ի Ծետալիա<sup>(1)</sup>, և մինչեւ ՚ի ծովին Կաստից և յայնկոյս լերինն Կովկասու, ՚ի Վաղարշակաց եղբօրէ Արշակաց սկսեալ, մինչեւ ՚ի յետին Արշակ<sup>(2)</sup>. զոր մեք թողումք այլոց հաւասարի գրողաց և գիտողաց<sup>(3)</sup>:

Խոկ զկնի Փիլադելֆիոսի թագաւորեաց Աշգիպտոս Պտղոմէոս Արկադիս Աւերգետէս): Եւ ՚ի նոյն ամի թագաւորեաց Ասորւոց Աւելեւկիոս Կալանիկոս : Ինոյն ամի թագաւորեաց Վակեդոնացւոցն Դեմետրիոս Փիլիպոս : Յայսմ ժամանակի էր քահանայապետն Անիա, որդի Արմէսնի Արդարոց :

(1) Ծետալիա է յերկրին Պարսից առ երի Խորասանաց, ոչ հեռի ՚ի Կաստից ծովէն :

(2) Աւելին թագաւոր Արշակունեաց եղեւ Արտաշեր և ոչ Արշակ : Ըստ պատմութեան Մովսիսի խորենացւոց :

(3) Առվելէս խորենացի . Բ. 1—6 : —Յովհ . Կաթ . և այլք :

Այս Խնիա ոչ կամեցաւ տալ զհարկն Պլատոնի այս և նա կամեցաւ գալ յիշուսաղէմ: Եւ առաքեցին զի՞նվսեպս հաշտութիւն առնել, և եգիտ շնորհս առաջի Պտղոմեայ, և առ ՚ի նմանէ իշխանութիւն զօրապետութեան ամենայն Հրեաստանի<sup>(1)</sup>:

Եւ ՚ի ԶԵ (87) թուին Ասորւոց թագաւորեաց Աւելեւկոս կրոնոս (Անուաւնոս) ամբա երիս. և յետ նորա թագաւորեաց Անտիոքոս Անձնամն երեսուն և վեց: Յայսըմժամանակիէ նահատակութիւնն Աակարայեցւոց:

Եւ ՚ի ԶԳ (93) թուին թագաւորեաց Եւդիպասցւոյն Պտղոմէոս Փիլոսպատոր՝ ամս եւթնեւտասն. և սաստիկ նեղէր զՀրեայսըն. և մարտեաւ ընդ նմա Անտիոքոս և յաղթեաց նմա, և զԵսդիպատոս արար ընդ իւր իշխանութեամբ. և ՚ի դառնալն Եւդիպատոսէ առ զԵրուսաղէմ: Եւ աստ վճարէառ առաջին Դիբքն Աակարայեցւոց:

Դ ՃՁ (110) թուին թագաւորեաց Եսդիպատոցւոց Պտղոմէոս Եսլիփանէս՝ ամս քսան, և մի: Աա առաքեաց զԵսկալոս զօրավարն<sup>(2)</sup>, և հնազանդեաց զՀրեաստան և զՓղիշտ (Փղըշտացիս). և ելեալ ընդ գէմնորա Անտիոքոս,

(1) Եւսեբիոս. ՔԲՀ. յԵ. 252.

(2) Եւսեբիոս. (ՔԲՀ. յԵ. 256) Ակոպան ահօւանէ զզօրավարն Պտղոմեայ:

կոտորեաց զնու . և առ ինքն դարձոյց զառեալ՝ ի նմանէ քաղաքսն : Այս Կնտիոբոս արար սալարկ զՃանապարհս քաղաքաց : Եւս արար ՚ի ճանապարհս նշանս իջեւանաց զոր փարսախս կոչեն , և շինեաց կամուրջս քառակուռս ՚ի վերայ գետոց և յառուս . և արար դիւրագնաց զՃանապարհս հարթելով : Այս ՚ի մետասան ամին արար պատերազմ ընդ Հռոմայեցիս և յաղթեցաւ . և ետ զորդին պատանդս ՚ի Հռոմ՝ տալ հարկս յամենայն ամի հազար քանքքար ոսկեոյ . և այս եղեւ սկիզբն հարկելոյ Կոտորւոց ընդ Հռոմովք :

Ի յերրորդ ամին Կնտիոբու թագաւորեաց Աակեդոնացւոյն Փիլիպոս՝ ամս քըսան և չօրս<sup>(1)</sup> . և աստ կատարեցաւ մարդարէութիւնն Դանիէլի<sup>(2)</sup> , թէ թագաւորն հիւսիսոյ տայ պատերազմ ընդ թագաւորն հարաւոյ , որ է Կնտիոբոս ընդ Պտղոմեայ , որ ետ նմա զդուստր իւր և դարձաւ առ ՚ի նմանէ ըստ ոմանց ասելոյ :

Եւս այս Կնտիոբոս մեռաւ յլամացւոց աշխարհն<sup>(3)</sup> , քարկոծեալ՝ ՚ի տաճարն Աենեաց աստուածու հւոյն իւրեանց , որ (Կնտիոբոս) էր

(1) Եւոերիոս (Քրն. յէր. 254) տայ սմա ամս քառասուն և երկուս , յերրորդ ամէ Պտղոմեայ Փիլիպատովիւ:

(2) Դանի . ԺԱ. 11 :

(3) Իլամացւոց երկիրն է յաշխարհին Պարոից , որոյ գըւխաւոր քաղաքն է Շօշ :

այսակիր , յորմէ հետէ սպանան՝ ի նմանէ Շըմունի և որդիք իւր , որ և խրատ առեալ՝ ի գիտնոցն՝ զի բերցէ զնշխարս սպանելոցն և անկեալ առաջնոցա զզասցի . և հրամայեաց բերել առ ինքն . Եւ յորժամ տանէին յշնտիւ ոք , բարձեալ՝ ի ջորիս անդկօք , և հասեալ մօտ ՚ի Հադախ քաղաք<sup>(1)</sup> , գիսպեցան նոցա որք տացին զմահ թագաւորին : Եւ եգան նըշխարք նոցա ՚ի տեղւոջն ուր լուանն . որ և յետ ժամանակի յայտնեցան սքանչելեօք , և շինեցան տեղին վանք , և է մինչեւ ցայսօր ժամանակի :

Օ կնի մահուանն Ենտիոքու թագաւորեաց Աելեւկիոս . և ՚Վիոդորոս հաւատարիմ նորա յայժ նեղէր զնքրեայսն , և պատժեցաւ յիստուծոյ :

Ի թուին յորւոց ձև(131)թագաւորեաց Ենտիոքոս կափիքանէս որդի Ենտիոքու որկայր պատանդ ՚ի Հռոմ՝ ամս մետասան : Այ գրնաց՝ ի վերայ Պտղոմեայ յի գիպտոս , և արգելին զնա Հռոմայեցիքն . և դարձաւ ՚ի Հռեաստան , և ետ զքահանայապետութիւնն Յասոնի յեղքայրն լինիայ<sup>(2)</sup> . և վշտացան ընդմիմեանս : Ուատաթէ՝ որդի Յոհաննու որդւոյ Շմաւոնի քահանայի , յորդւոցն Յովիլա-

(1) Հադախ քաղաք մերձ է ՚ի Նիբկերտ :

(2) Եւսեբիոս . Քրո . յէր . 238 . Յօրինակիս ոռվարարաբ Անդր բրի :

գարայ, նստէր ՚ի Ամլդիիմ, և ուներ հինգ-  
որդիս, Յովհաննէս, Շմաւոն, Յուղա Ամ-  
կաբէ, Ղզիազար Աւարան, Յովիաթան<sup>(1)</sup> որ  
սպան զյանցաւորսն Աստուծոյ, և ելորդւովք  
խրովք ՚ի լեառն ապատամբեալ Անտիոքէ:

Ի ձես (149) թու ին մեռաւ Անտիոքոս Ե-  
պիփաննէս ՚ի Պարս հարուածօք հօր իւրոյ ՚ի  
ցասմաննէ Աստուծոյ: Քանզի մեծն Անտիոքոս  
էր որ պղծեաց զՃաճարն կանգնելով սպատ-  
կեր Օեւսայ ՚ի նմա, և ՚ի լեառն Պարիզին շե-  
նեաց տաճար Օեւսայ Քասանթոսի<sup>(2)</sup>, ա-  
զաշեցեալ զնա Ասմարացւոցն: Ի Գլուխուց  
ութեւտասն ամին թագաւորեաց Ղպիփան  
Աւգատոր<sup>(3)</sup> ամս երկու: Աս նեղէր զՆը-

(1) Տես ՚ի գիրս Բ. Ասկաբայեցւոյ Ա. Զ. յորում առ  
խրաբանչեւը անուանո զնին և մականուանք նոցին:

(2) Միւս Եարգմանութիւնն և շաղկապաւ եղեալ եր-  
կուս շաստուածս համարի, փոխանակ զասանեան՝ կամ ու զզա-  
գոյն եւս Քանդուն մակդիր դնելոյ Զեւսայ: Եւսերեայ  
թարգմանիչք, յորմէ առնու և Միխայել, հոյկական նշանա-  
կութեամբ դնեն օփաշտուեր. «Անտիոքոս ՚ի Շամբին (Ասմարիս)  
՚ի գարիզին լերին Արամազդայ (Զեւսայ) օտարասիրին մե-  
հեան շիներ, և զայն ՚ի Շամբատացւոց ստեալ զնա աղաչելոյ.  
(Ք. Հ. յէր. • 240:) — «Եւ ՚ի Շամբին զօտարասիրին Արամազ-  
դայ: » Սամուել.

(3) Շիմթութիւնք են յանուանս: Եպիփան՝ և Անտի-  
ոքոսն՝ յաջորդն Անտիոքոսի Եւպատովքի, զոր բնագիրք  
Ասորւոց այլափոխեալ կոչեն Ուղարիք: Ա յապէս և անունս  
Դորդուա, թուի թէ իցէ ասորական հնչումն փոխանակ Գոր-  
դիակ եղեալ, որ էր զօրապետ ընդ սպարապետութեամբ  
Անտիասայ: Ա. Ասկաբ. • Դ. 38 • Զ. 50—45.

րեայսն՝ խստագոյնս. և սա առաքեաց զիսուր զօրս զօրապետն իւր հարիւր քասն հազարաւ ՚ի վերոց Երուսաղէմի. և մեռաւ Դաշտարոս (Աշվաղար) ՚ի ներքոց փղի, և կոտորեցան յոյժ բազմութիւն Հարէլից, որ և ՚ի թաղելն զնոսա գտան ՚ի ներքոց հանդերձից նոցա նկալք պատկերաց կռոց<sup>(1)</sup>.

Յայսմ ժամանակի շինեցաւ տաճար Աշվաղոնտոս<sup>(2)</sup> Եղիսպոտոսի Անիոյէ. նման Տաճարին որ Աշրուսաղէմ, առանց հրամանի Աստուծոյ. և առնելին ՚ի նմա քահանացագործութիւն ըստ օրինացն. և զՏաճարն որ Աշրուսաղէմ նորոգեաց Յուղա Վակաբէ, և մնաց շեն մինչեւ ՚ի Տիտոս և ՚ի Անոպիանոս: Եւ զինի Յուղայի եկաց Յովնաթան, որ սպանաւ ընդ Աղէքսանդրու ՚ի Տրիփոնայ, և եկաց ՚ի տեղի նորս Շմաւոն: Այս առաքեաց ՚ի Հռոմ վահան ոսկեղէն, և ետքեւ տախտակ պղնձի նշան ուխտի դաշտանց.

(1) Խ գերս Բ. Մակրաբայեցւոց ԺԲ. 40. սյոպէս պատմի. «Երբեւ հասանելին ՚ի Ճակատու տեղի, գտանելին զիւրեանց եզրարց դիակուննն. և ՚ի ներքոց հանդերձից նոցա յուռութ ուլունս և բժժանս յամենայն կռոց, ուս ընդանութ ունելին»:

(2) Յեւեպոնտոս Ե յայտնի սիսալ փոխանակ գրելոց Յեւեպոնտոս (Արեգ քաղաք): Խակ Եւսեբիոս (ՏԵ. 240) կոչե Անարշիս, և Սամուել Անոնդիս: Եւսեբիոս՝ (անդ) որդւոց Անիոյ քահանացագետի ասէ շինեալ Արեգ քաղաքի զԱմապօղս: ուստի ամենայն հաւանութեան է ասէ Եթե բնելու կոչեաց յանուն հօր իւրոց Անիոյ:

և առաքեաց զՅովհաննէս զօրդին իւր և կոտորեաց զզօրսն Անտիոքու (Անտիոքոսի), և աղաստեցան ՚ի հարկէ նոցա : Եւ աստ կատարեցան երկըորդ գիրք Անակաբայեցւոցն :

**Ի ՃՀԴ (174)** թուշին սպանաւ Շմաւոն ՚ի Պտղոմեայ, և առ զտեզի նորա Յովհաննէս : Յայսմ ժամանակի կանգնեցաւ գլխաւոր Նրեաց ՚ի յԱւոհա մինչեւ ՚ի գալ անդ նախնեացն Արքարու արքայի<sup>(1)</sup>, Յայսմ ժամանակի գնաց Յովհաննէս քահանացապետն Նրեաց յԱւոհանիս սպատերազմիլ ընդ նոսա . և վտան այսորիկ կուցաւ նա Նուրկիանոս (Նիւրկիանոս : ) Յայսմ ժամանակի թագաւորեաց Անտիոքոս Ացբիպաս<sup>(2)</sup>, և եկն յԱրուսազէմ և նեղեաց զնոսա : Եւ Եբաց Յովհաննէս Նուրկիանոս զգերեզմանն՝ Դաւթի թագաւորին, և եհան զոսկին և զզարդըն ամենայն թագաւորացն, և եհան ՚ի նմանէ երեք հազար քանիքար սակւոյ, և ետ ՚ի նմանէ երեք հարիւր քանիքար Անտիոքու

(1) Զունիմք ՚ի սպատմութեանց ազգիս հաւաստիք թաւորելս Նրեաց յԱւոհա նախ քան զնախահարս Արքարու, եթէ ոչ յաւուրս Վաղարշակայ ՚ի Բագրատունեաց տանէ զոք գնիցեմք իշխեալ ՚ի վերայ Ռւոհայու տանուտերական իրաւումքք . և կամ մի ոք ՚ի Նրեաց գերելց ՚ի Տիգրանայ թւ որ և բնակեցոցն զնոսա ՚ի Միջագետաց կողմն, ըստ Պլինիոսի, գիրք Զ. Գ. 28. Տես և ՚ի Պատմ. Հայոց, Հայոց Ա. յեր . 570 :

(2) Լուս Եւսեբեաց Անդիուս Գուիդս :

և գնաց : Եւ յայսմ ժամանակի քակեաց Հուրկիանոս զլամարիա :

Ի թուին ՃՆՁ (196) թագաւորեաց Պտղոմէոսի ովտէր՝ ամս եւ թնետան : Եւ ՚ի նոյն ամի գնաց Վնտիոքոս և Հուրկիանոս ընդ նրանա, և սպանին զլիստիս (1) թագաւորն Պարթեւաց :

Ի չորրորդ ամի Պտղոմէայ թագաւորեաց Վնտիոքոսի իւղիկոս՝ ամս ութ և տան : Ի մետասան ամին Պտղոմէայ մեռաւ Յովհաննէս Հուրկիանոս և առ զտեղի նորա Վրիստաբուլոս որդի Յովինաթանայ՝ ամ մի : Այս առաջին թագ եղ և անուանեցաւ թագաւոր և քահանայապետ : Եւ երկու եղբարբ սորա Վղէքսանդրոս և Վնտիգոնոս նենդիւ սպանին զմիմեանս ըստ մարդարէութեան հօրն իւրեանց, որ Վնտուած նովաւ խօսէր : Օ կնի Վրիստաբուլէայ առ զպատիւն Յովհաննէս միւս եղբայրն իւր, որ կոչեցաւ Յաննէ, ամս քսանեւեւթե, որ և չարչարէր զազդն իւր զՀրեայս :

Յայսմ ժամանակի հալածեցաւ Պտղոմէոս ՚ի Վղէոսպատրեայ մօրէն իւրմէ, և թագաւ

(1) Զեք ուրեք ՚ի պատմագիրս Սիստիս անուն թագաւոր Պարթեւաց, ոչ Պարսից և ոչ Հայոց, և ոչ ՚ի գիրս Եւսեբեայ միշտակի այս վասն որոյ թուի այլափախութիւն իմն լւալ ՚ի ընադիրն Միլայելի, քանզի և Երկորին իսկ թարգմանութիւնք ունին Սիստիս :

Հորեաց Պաղոմէոս Աղեքսանդր ամս տասն : Ի վեց ամին սօրա բարձան թագաւորքն Ասիացւոց և Ասորւոց, և հնազանդեցաւ Անտաք Հռոմայեցւոցն։ Հայսմ տեղւոջ Գիրք հին կտակարանացն կատարեցան : ՅԵղամայ լինին ամք հինգ հազար եւթանասուն և երկու, և աստի մինչեւ ՚ի ծնունդն Տեառն մերց Յիշուսի Քրիստոսի՝ ամք հարիւր քրսան և չորս : Եւ թիւք ժամանակաց թագաւորացն Ասիացւոց ՚ի Ալեւեկոսէ, որ զինի մահուանն Աղեքսանդրու մինչեւ տիրեցին Հռոմայեցիք՝ ամք երկերիւր և վեշտասան :

Ի թուին (Ասորւոց) ՄԻԲ (222), դարձաւ Պաղոմէոս հալածեալն՝ յաթու իւր, (և եկաց) ամս ութ : Ի թուին ՄԼՀ (237) թագաւորեաց Պաղոմէոս ՚Իիսնէսիոս ամս երեսուն, որ էր որդի Առվտերայ և եղբայր Կղէոպատրեայ (1) : Ի հինգ ամին Պաղոմէայ մեռաւ Յովհաննէս Խնիա որ և Աղեքսանդրոս, և առ զթագաւորութիւնն կին նորին Աղեքսանդրա, որ կոչեցաւ Աաղինէ, ամս ինն, և էր օրինապահ : Աա ունէր երիս որդիս, Հիւրկիանոս և Արիստաքուլոս և Անտիգոնոս : Եւ եղեւ Հիւրկիանոս քահանայապետ և եղբայրն վեճէր ընդնմամինչեւ առ զթագաւորութիւնն : Եւ եկն Պոմապէոս զօրապետն Հռոմայ, և

(1) Եւսեբիոս. Քըն. Հու. Ա. յեր. 246, ուր զԴիոնէսիոն կոչ նոր Դիոնէսոս :

տարաւ կապանօք զլ' թիստաբուլս և կացոյց զնիւրկիանոս քահանայապետ ամս երեսուն և չորս : Այ շինեաց զպարիսպն Երուսաղէմի զքակեալն ՚ի Պոմպէէ : Եւ աստ եղեն Հրեայքն հարկատուք Հռոմացեցւոցն : Եւ բաղում աշխարհ հաւանեցոյց Պոմպէոս ՚ի Հայոց և յիսորւոց և յիշաբացւոց . և մեծացաւ Պոմպէոս այս մինչեւ Տուլլիանը<sup>(1)</sup> անուանեցաւ :

Եւ յայսմ ժամանակի մեռաւ Պտղոմէոս, և թագաւորեաց Աղէովատրէ<sup>(2)</sup> ամս քսանեերկու : Ի յերկրորդ ամին սորտ ըսպանաւ Պոմպէոս ՚ի Գայիոս Յուլիոսէ :

Յայսմ ժամանակի էր Հերովդէս . և այս է ազգն նորա : Այր մի Անթիպատրոս անուն Ասկաղոնացի՝ որդի Հերովդի քրմապետի կոոյցն Ապողոնի : Այս Անթիպատրոս գերեցաւ յիշոմայեցւոցն, և հայր նորա Հերովդէս չկարաց փրկել դնա, և սնաւ և մեծացաւ յիշոմայեցիս . և առ ՚ի կնութիւն զդուստր Արետայ թագաւորին Արաբացւոց զլուփրիտէ<sup>(3)</sup> և սա եղեւ բարեկամ Հիւր-

(1) Ընթերցիր Աւտոքիառ, Autocrate, որ նշանակէ բացարձակ տէր . զայս անուն տային Հռոմացեցիք ինքնակալաց :

(2) Այն է յիշատակեալն վերադոյն քոյր Պտղոմէայ Դինէսիոսի : Յօրինակիս սխալմանը գնի թագաւորել սորտ առ երկու փոխանակ գնելոյ քան և երկու , որպէս եգաքս :

(3) Եւսեբիոս (Ք. Հ. Բ. յեր. 254) զկիսրէ արաբացին առէ լինել մայր Հերովդի , և ոչ կին : Տես և ՚ի Յովին :

կանեաց քահանացապետին, որ և օգնէր նըմա ընդ եղբօրն կռուելով։ Վնացեալ վասն նորա առ Պիոմպէոս, և եղեւ ծանօթ չոռոմայեցւոց, և կացուցին զնա իշխան Հրէից։ և եղեալ էր նմա որդիք Յովսէփ և Փրօրա և Փեսաղոս (Փեսացէլ) և Հերովդէս, չորս որդի և դուստր մի անուն Առղոմէ։ Եւ եղեն Յովսէփ և Փեսաղոս ընդ հօրն իւրեանց իշխանք Հրէիցն։ Եւ ոմն ՚ի Հրէիցն (1) դեղովսպան զի՞նթիպատրոս երկու որդւովքն։ և եղեւ Հերովդէս փոխանակ հօրն իշխան Հրէիցն։ Եւ ՚ի կարեաց ժամու երթայրնա ՚ի Հռոմ, և ծանօթացաւ նոցա։

Եւ յոյտմ ժամանակի եկն զօրավարն  
Հայոց Բազափրան և գերեաց զարէաստան,  
և տարաւ գերի զիւրիկիանոս և զՓրօրա  
եղբայրն Հերովդի . և Հերովդի էս փախստա-  
կան անկանի ՚ի Հռոմ : Եւ առ զթագուռ

պոս" Փլատինոս (ՅՂ. Պատէր. Հը • ըստ հայ թարգմանութեան  
Գիրք. Ա. ԳԼ. 2) որ Կիպարիս անուանէ զմայրն Հերովդեայ:

(1) Յովկեպոս պատմէ (Յղ. Պատբերաւ, Հը : Դոլ. Ա. Գլ. Թ. ԺԳ.) Եթէ Մաղքոս անուն ունի դաւաճանեաց ըզ-իւսնիւ Անթիգատրի 'ի կոչունո 'ի ձեռն ծառայից Հիւրկանեաց : և զՅումէի որդի նորա 'ի ձեռն Պապիայ ուրումն անուանելոյ : Խոկ վասն Անտիգոնոսի առէ, ածեալ զնա Սովորայ կուսակալի Ասորւոց առ Անտոնիոս, սակրով ոսպանեալ Զիւրկանեաց ոչ ինչ որոշակի ծանուցանէ Խորենացի : Խոկ Յովկեպոս (Յղ. Պատբեր Հը : Գիրը Ա. Գլ. ԺԸ) առէ, եթէ առ զկասկած սրտի իւրայ փարատելոյ՝ սպան զնա Հերովդէս յետ գարձին նորա 'ի գերութենէ Հայոց :

բութիւնն ՚ի վերայ Հրէից , և եկեալ սպան զԱնտիգռնոս զոր եղեալ էր Հայոց , և ինքն նատաւ : Եւ յորժամ դարձաւ Հիւրկիանոս ՚ի Բագրատունեացն<sup>(1)</sup> յարձակմանէ յԵրուսաղէմ , և զնա սպան Հերովդէս և զորդի նորա զՅովնաթան : Եւ աստ կատարեցաւ բանն թէ , “Մի պակասեացէ պետ և իշխան ՚ի Յուղայէ , մինչեւ եկեսցէ որ իւրէ թագաւորութիւնն .”<sup>(2)</sup> զի աստ պակասեցան պետքն Հրէից :

Եւ եկն Տէրն արքսցորդին ծննդեամբ ՚ի Բէթղէհէմ , ՚ի կատարման եւթներորդացըն Դանիէլի (որ ասէ) . “Եւթներորդք եւթըն , և եւթներորդք վաթսուն և երկու .”<sup>(3)</sup> որ լինին ամք չորեքհարիւր ութսուն երեք՝ սկսեալ ՚ի վեց ամէն Դարեհի մինչեւ յաւիտեան : Ար և կայ ՚ի թարգմանութիւնն Արգարու , թէ Դանիէլ հիւանդացեալ մեռանէր ՚ի վերայ Տիգրիս գետոյ , և անկեալ ՚ի վերայ երեսացն գոչեաց առ Տէր . “Ճոցինձ Աստուած զՅրիատոսն քո , մինչեւ մեռեալ իցեմ .” և եկն առ նա Դարերիէլ և ասէ . “Հանդիր դու ՚ի խաղաղութիւն , այր ցանւ .”

(1) Առ Հերովդեաւ Արշակունիք և ոչ Բագրատունիք թագաւորէին ՚ի վերայ Հայոց . ուստի յայտնապէս սիսալ է աստ ափօխանակ գրելս ՚ի Բագրամիայ :

(2) Ճնունդք . Խթ . 10 :

(3) Դան . թ . 24—27 . Երեմիա Խթ . 20 :

կութեանց, զի դեռ չեւ է ժամանակն. այլ  
մինչեւ կատարին եւթներորդքնքո, ապա գայ  
Քրիստոս և խաչիւ մեռանի. և աղատէ զձեզ  
ի դժոխն առ ձեզ եկեալ. և արդ միսիթա-  
րեա զքեզ յուսով գալստեան նորա : ” (1)

Եւ մինչ ’ի տեսիլն ‘Դանիէլի’ թագաւո-  
րացն պատիւն Ռոմբիոս լինէր կոչեցեալ. և  
աստիսկանն Ե-պո-կարորը (Եւտովրատ) կոչել (2):  
Եւ յայնմ ժամանակի կուռք՝ որ կայր Ա-  
զիմպիոս, շանթիւք այրեցաւ, յորժամ թա-  
գաւորեաց (Օգոստոս կայարն : Եւ նոյն կայ-  
րըն զի ուսիտանիա կղզին քակեաց, և սկսաւ  
զմի մի ՚ի կղղեաց քակել. վասն զի դտաւ  
մռառութիւն (խռովութիւն) ’ի կղզիս (3): Բայց  
նախ Դայիոս, որ և Յուլիոս կոչեցաւ իսյու<sup>թ</sup>  
՚ի լեզուն Հռոմայ, զի մօրն մեռելոյ (յար-  
գանդէ) հանաւ կենդանի մանուկն. և բա-

### (1) Դանիէլ թ. • 21 •

(2) Ազօտ են բանք այսր հատածիս . միւս թարգմանու-  
թիւնն փոխանակ Բոմբիոսի՝ ունի Բոբիոս, որ և այն ոչինչ  
իմաստ ընծայէ : Զկնի Տարիինոսի վերջնոյ թագաւորին Հը-  
ռասմայ, որ եկաց յամոռն ՚ի վախճանել գերութեանն Հը-  
րէից ՚ի Բարելըն . նոտան հիւպատք բրուտեանք : և երբեմն  
ռամկապետք և դիկաստորք մինչեւ ցՅուլիոս Գայիոս որ կոչե-  
ցաւ ինքնակալԱւտոկրոս (Autocrate): Իսկ բառս Բոմբիոս մարթ-  
է առնուլ իբրեւ մակդիր և անուն պատուայ հիւպատիցն .  
իբր իտուալատ . և սասոյգ զայս նշանակութիւնն տայ բառդ ՚ի  
Լատինականն : Տես և յԵւսուքիոս ՚ի Քրոնիկան, յեր . 204:

(3) “Կայոր զԼիսիտանիա և զլմանս յԱվելիանի կղզիսն  
վանեաց . ո Եւսուք . Քըռն . Հա . Բ . յԵր . 250 :

բերաղդ եղեալ թագաւորեաց , որ խափանեալ էր թագաւորութիւնն Հռոմայեցւոց ամս չորեքհարիւր վաթսուն և երկու . ՚ի Տարկիանոսէ մինչեւ ՚ի Գայիոս Յուլիոս : Եւ ՚ի շինելոյն Հռովմայ մինչեւ ՚ի կրկնակի թագաւորութիւնն եւթն հարիւր և երկու ամ : Այս Գայիոս Յուլիոս իջեալ յշգիտոս հաստատեաց զթագաւորութիւնն Ալզէոպատրեայ կնոջ : Եւ Գայիոս իայնան թարգմանի : Այէ Անդրոնիկոս<sup>(1)</sup> թէ , հինգ ամ թագաւորեաց և ապա սպանաւ գաղտ : Եւ թագաւորեաց Օգոստոս ամս յիսուն և վեց և ամիսս վեց :

Ի յութ ամին Օգոստեայ թագաւորեաց Հրէիցն Հերովդէս և խափանեաց զթագաւորութիւնն և զքահանայութիւնն նոցա , զի ընդ ձեռամբ արար զվակասն և տոսյր կաշառօք : Եւ թագաւորեաց ամս երեսուն և հինգ . և զառաջինն ոչ ընդունէին զնա յշրուսաղէմ , մինչեւ արար պատերազմ և քակեաց զերկու սպարիսպն , և զքաղումն կոտորեաց ՚ի Հրէիցն , և ապա տիրեաց ՚ի վերայ նոցա : Եւ սո արար որ յամենայն ամի քահանայապետ փոխէր : Այ

(1) Միւս թարգմանութիւնն գնէ , աոր է Անդրոնիկոս կոչեցեալ յամանցոյ Խոկ բառդ իայնան ոչ ինչ ՚ի հայումն նշանակէ . թերեւս պարտի գրել Գայիոսն , որ և ՚ի Յոյն Եղուին որպէս և առ մեզ նշանակէ գեղարդն , նիշակ .

առաքեաց ՚ի Շաբեկըն և ետ բերել զԱնանէ<sup>(1)</sup>, և արար զնա քահանայապետ ամ միսոր չէր Դեւասցի. Եւ զկնի նորա արար զԱրիստաբուլոս որդի Հիւրկանեայ քահանայապետի զեղքայր կնոջ իւրոյ. և սպան զնա և հաստատեաց զԱնանէ: Ծայց թէպէտ և վոխեցաւ ստհման օրինացն և ամի ամի կաշառօք ունէին և վոխեին զմիմեանս. և այսու պատճառաւ բաղում էին քահանայապետք, այլ ՚ի ժամ մուսնելոյ ՚ի Առւրբն Արբոց ոչ ոք ՚ի նոցանէ համարձակէր, այլ ըգ-Օքքարիա և զԱքիա կարգէին մուանել, որք չին այնպիսիք, այլ ըստ օրինացն և արդարք:

Ի յերրորդ ամին Հերովդի եղեւ Ատմուսատ ընդ Հռոմօք, յազթեալ զօրացն Հայոց որ կային ՚ի վերայ Եփրատ գետոյ, և տային հարկս ՚ի Վիջագետաց<sup>(2)</sup>: Յայսմ ժամանակի զօրավարն Օգոստեայ Վնտանինոս ապրատամբեալ Օգոստեայ՝ թագաւորեաց և սիրեաց զԱղէոպատրա գնալով յԱգիպտոս ՚ի համբաւ նորա: Եւ եկն ՚ի վերայ նորա Օգոստոս և ըմբռնեաց զնա և աղաչանօք սին կղիտոսացն ապրեցաւ և իսաղաղացան. և մեծ գերութիւն առաքեաց յայսմ կողմանէ ՚ի Հռոմ Օգոստոսն: Եւ Կղէոպատրա ունէք նենգութիւն ընդ Հրեայս և ընդ Արաբաւ

(1) Ըստ Եւուերեաց Անանեցոս:

(2) Մովսէս Խորե. Գիբբ Բ. Գլ. 21:

ցիս, և խնդրեաց յշնտոնինոսէ իշխանութիւն՝ ՚ի վերայ նոցա, և ետ նմա. և այս պատճառաւս եղեւ երկրորդ խուռլութիւն Օգոստեայ ընդ Ենտոնինոսի . և դարձեալ յաղթեցաւ Ենտոնինոս և Կղէոպատրա, որք ՚ի միասին ընդդիմացան Օգոստեայ : Եւ յորժամ տեսին զպարտութիւն անձանց իւրեանց, անձնասպան եղեն երկրոբն՝ Ենտոնինոս և Կղէոպատրա . և Օգոստոս սպան զԱրեգակն և զԱռւսին զորդիսն Կղէոպատրեայ<sup>(1)</sup> : Եւ յայսմ ժամանակի քարձաւ թագաւորութիւնն Պտղոմեանց յշգիպտոսէ որ Յունաց կոչէին, տեւեալ ամս երկերիւրիննսուն և վեց, և եղեն ընդ Հռոմօք : Եւ են ոմանք որ աստի թուեն զժամանակն Օգոստեայ, որ կոչեցաւն Աեքաստոս, որ է յաղլող<sup>(2)</sup>, յորժամ սպանան Ենտոնինոս և Կղէոպատրա և որդիք իւր :

Եւ յայսմ ժամանակի երեւեցաւ Յուղա գալիլիացին ՚ի Կամազա քաղաքէ : Աև Ասդովիկ փարիսացին յարեան և ասացին . “Չէ արժան մեղ հարկս տալ Հռոմօց : ” Յիննետան ամին Օգոստեայ առաքեաց զՏիբերիոս զօրապետն իւր ՚ի Հայս<sup>(3)</sup>, և

(1) Եւուրիոս, Քրոնիկն . Հա . Բ . յեր . 256 .

(2) Սէբաստոս կամ Սէւտոսոս ըստ Յունաց նշանակէ Առաքորդ , և ոչ յաղլող, զոր Միթապէլ շփոթէ ընդ միմեանս :

(3) Միւս թարգմանութիւն ունի յև Շիրուր :

արար ընդ նոսա խաղաղութիւն . և դարձեալ՝ ի Հայոց՝ գնացեալ՝ ի կիւրենական տշխարհն , արար զնոսա հնազանդու , որ է անդքքան զիւդիպտոս : Յոյսմ ժամանակի շինեաց Հերովդէս զիւտմարիա , և Այբաստիա կոչեաց յանուն Օգոստեայ . և շինեաց զՓանիոն ՚ի Փանիա (<sup>1</sup>) , և մեծացոց զարքունիւսն յիշրուսաղէմ : Եւ շինեաց զանուանեալըն աշտարակ Ատրատոնեան՝ քաղաք , և անուանեաց Կեսարիա յանուն կայսեր . և նորոգեաց զԴաբաս ՚ի Գալիլեա : Եւ սա յաճախ արար հեղումն արեանց . և սա ըստան զիին իւր Մարի (<sup>2</sup>) անուն , և սպան զտմենայն օրինագէտ և զիմաստուն սոյր Հրեայ : Եւ յայսմ ժամանակի եղէն աւետիք Արքց Կուսին . և յետ ինն ամսոյ և հինգ աւուր՝ ծնունդ կենարար Բանին Աստուծոց Տեառն մերոց Յախուստ Քրիստոս ՚ի քառասուն Երեք ամին Օգոստեայ և յերեսուն Երեք ամին Հերովդի , և ՚ի թուին Ասորւոց Երեք հարիւր հնգետասան : ՅԱՇամայ մինչեւ ՚ի ծնունդն Քրիստոսի՝ ամք հինգ հազար Երկերիւր ութսուն և չորս . այս ըստ Եւսեբի , իսկ ըստ Եւթանասնիցն՝ ամք հինգ

(1) Եւսեբիս . Քրոնիկ . Հոռ . Բ . յեր . 258 .

(2) Այն է Մարիանէ կամ Մարիամնէ թոռն Հիւրկանեաց վերջեաց . զոր ՚ի զբգուռութենէ քեռ իւրոց Սողոմոնայ՝ ըստան Հերովդէս : Յովանեալ . Յշ . Պատերապ . Հբ . Գիւր . Ա . Գլ . ձ.է :

Հազար հարիւր իննուուն և ութ . և ըստ Եւ նանոսի՝ ամք հինգ հազար իննուուն և մի . և ըստ այլոց՝ հինգ հազար հինգ հարիւր և երեք . և ըստ Ասորւոցն՝ ամք հինգ հազար քըսան և վեց . Եւ էր մաւտ տարւոյն երկուշաբաթ , և երկուտասանալուսնեայ էր տարին :

Եքառասուն և երեք ամին Օդոստեայ առաքեցաւ Ախւրինոս իշխան ՚ի Ախնկղվառսէն Հռոմաց գրել զազգն Հրեից և գնել գլխահարկս վասն պատճառի Յուղայի Գալիլեացւոյն և այլոց բազմաց , ուք ասէին՝ «Չէ պարտէ մեզ հարկս տալ մահկանացու մարդոց <sup>(1)</sup> : » Եւ լսելի եղեւ բանն ՚ի Հռոմաց և բարկացան , և արարին բան զոր չէր լեռլ մինչեւ ցայնեամ , և ՚ի նմին ժամանակի յայտնեցաւ Տէրն մեր ծննդեամք : Յիշէ զայս ժամանակս կուգիանու հռոմայեցի որ կայր յայսմ կողմանէ , և գրեր առ կայսր զպատահեալսն . գրեաց և ասաց , թէ «Պարսիկք Եկին մտին յիշխանութիւնքո , և մատուցին պատարագ տղայի միոյ ծնելոյ ՚ի Հրեաստանի . և թէ ովէ , կամ ո՞ր որդի , գեռ չեմք լուեալ : » Եւ գրեաց կայսրն թէ , «զՀերովդէսդ արքայ կացուցեալ եմք ՚ի վերայ Հրեիցն , նա գրէ առ մեզ : » Եւ եկին մոգքն յերեսուն և հինգ ամին Հերովդէին Եւսեբի և Ախւսացին ասեն , թէ յորդւոցն

(1) Գարծ . Ե . 36—37 :

Բաղաամու մոգքն էին, և Յակովը ուռհայ-  
եցին ասէ, թէ յազգէն իլամայ Աեմացիք  
էին. և այլք ասեն, որդիք թագաւորացն  
Ըրաբայ և Ասբայ էին լստ Դաւթի բանի-  
ցըն (1). և Երեք թագաւոր էին, զի Երեք  
ցեղ պատարագ մատուցին: Եւ ոմանք ութ  
թագաւոր ասեն, որպէս Ակրիա ասէ. “Ուժ  
վարիչ մարդկան” (2): Եւ սուրբն Յակովը Եր-  
կոտասան իշխան ասէ, որ գտեալ էր գիրք,  
թէ Երեքհազար ձիաւոր և հինգ հարիւր  
հետեւակ ունէին: Եւ յորժամ եկին ’ի  
յշփրատ գետ, ’ի տեղին որ ասի Կալանի-  
կոս, որ է Արախզա, և լուան թէ սովէ  
’ի Նրէաստանի, և թողին անդ զըազումն, և  
Երկոտասան իշխան հազար հեծելավ գնա-  
ցին և տեսին. և յորժամ տեսին, դարձան  
առ զօրս իւրեաց, որոց անուանք են այս.  
Դահանդուր որդի Ըրտաւազայ. Շաթէփ  
որդի Գուգբարայ. Ըրշակ որդի Ահագու-  
գայ. Օքեւանտ որդի Վարիդուդայ. Ըրի-  
հու որդի Խոստրովու. Ըրտաշէս որդի Աւ-  
լիաթայ. Եշթանքուզս որդի Իշրոնայ.  
Ահագուք որդի Նումայ. Ըրշիրիշ որդի  
Ահապանայ. Ալտունա որդի Շելայ: Եւ թագաւ-  
որին որ առաքեաց զնոսա՝ Փիր-Շապուհ  
անուն: Կէպ Երկու ամաւ յետ ծննդ-

(1) Սաղմ. ՀԱ. 10:

(2) Ակրիա Ե. 5:

զեանն ասեն զգալ մոգուցն . բայց այլք ստուգեն թէ երկու ամառ յառաջ գուշակեցաւ աստեղը , և Ելին 'ի գալ . և յերեկոյն ծնաւ Տէրն , և մոգքն վաղն եկին : Եւ մը նաց Մարիամ Հոտուածածինն ՚ի Շեթղահէմ զքառասուն օր , և ապա գնաց ՚ի Տաճարն . և ընկալեալ ՚ի գիրկս իւր զՕծեալն Ախմէոն ծերունին , որ հրամանաւ Հոգւցն պահեցաւ կենդանի ՚ի Պտղոմեայ ժամանակացն , որ մի էր ՚ի թարգմանչացն , և ՚ի գրելն զիւսայի մարգարէ , եկեալ ՚ի տեղին որ ասէ . « Եհա կոյս յղասցի և ծնցի <sup>(1)</sup> . » Եւ յորժամ գրեաց՝ դարձեալ զղղացաւ , և ասաց . « Հեթանոսք զիա՞րդ հաւատան այսմ , այլ ծաղը առնեն զմեզ . » և ջնջեաց առ ժամայն զգրեալն , և դարձեալ տրտմեցաւ և ասաց . « Վորս թէ իմ ընկերքն գրեն , այսն լինիմ . և լինի հակառակութիւն : » Եւ ՚ի տրտմութենէն ննջեցին ինքն և ընկերքն իւր , և ՚ի զտրթնութն տեսին գրեալ զարմանալի գրով որպէս ոսկեղինաւ : Եւ խնդացեալ Ախմէոն ելաց և երանեաց զժամանակին կուսածին և զաշն որ տեսանէ և զշուրբթն որ համբուրէ զիմմանուէլին : Եւ ասէ ցնա Հոգին . « Աի տեսցես զմահ մինչեւ տեսցես դու զՕծեալն . » և կատարեցաւ բան Տեառն : Եւ յայն ժամն վաթսուն ամաց էր Ախմէոն ,

(1) Եասցի . է . 14 .

և երեքհարիւր քառասուն և չորս ամ այլ  
ապրեցաւ մինչ որ հասաւ երանութեանն։  
Իսկ Յօվոէփ և Վարիամ հանդերձ մանկամ  
ըբն գնացին 'ի Արազարէթ յետ ընծայելոյն։  
և հրամանաւ հրեշտակին գնացին 'ի Ահ-  
գիարտոսյետ վայժառուն և երկու ամին ծնըն-  
դեանն Տեառն, և այլք ասեն՝ թէ զինի եր-  
կու ամի գնացին։

Եւ Հերովզէս կոտորեաց ղմանկունսն  
խարեալ 'ի Վոգուցն, և զայրացեալ այրեաց  
զգրեանն Հրէից, և ջնջեաց զյիշատակ թա-  
գաւորութեանն և զքահանայութեան՝ զի  
լիքն իցէ, սեպհական և որդիք իւր ժա-  
ռանդ թագաւորութեանն։ Իսյց Ահգիար-  
տոս և յայլ աշխարհ պահեցան գրեանն խր-  
նամանին Վասուծոյ։ Եւ Տէր եհար զՀերով-  
զէս չարաչար ցաւօք յոտից մինչեւ ցգլուխ,  
և տրորեցաւ ամենայն անդամօք, և բժիշկք  
ոչ կարէին օգնել նմա. և եղին զնա 'ի ջեր-  
մին ձէթ, և խատեաց ցաւն։ Եւ ըմբռո-  
նեալ զգլիսաւորս Հրէիցն՝ և եղ 'ի բանտի,  
և պատուիրեաց փեսային իւրում Վլէքսին  
և քեռ 'իւրում Աղղոմէի, զի 'ի մահուան  
նորա սպանցեն զնոսա, զի ակամայ Հրէայ-  
քըն լացցեն յաւուր մահուան նորա. զօր  
և արարին իսկ։ Եւ նա նեղեալ 'ի դառն  
ցաւոց սպան զանձն, և չարամահ եղեւ  
յերեսուն և հինգ ամի թագաւորութեան

իւրոյ (1) : Եւ կացոյց (Օգոստոս թագաւոր զԱլքեղայոս զորդի նորա՝ ամս ինն : Եւզկնի ինն ամի տուաւ յաքսորս ՚ի Շենան քաղաք վասն չարեաց իւրոց (2), և առ զիշխանութիւնն Հերովդէս շարբորդապետ : Եւ ՚ի նմին ամին մեռաւ (Օգոստոս և թագաւորեաց Տիբեր ամս քան և երեք :

Եւաջին Հերովդէսն ունէր ինն կանայս և ութ որդիս : ՚ Դոսիոսէ (Դովլէս) Ենթիսպատրոս եղեւ, այն որ սպան զերկուս եղբարս իւր, և սպանաւ ՚ի հօրէն իւրմէ : Եւ ՚ի Մարէ (Մարիամնէ) դստերէ Հիւրկիանեայ (3) ծնաւ զԱղէքսանդրոս և զԱրիստաբուլոս, զոր սպան Ենթիսպատրոս, և զՀերովդէս՝ որ կոչեցաւ Ենթիսպատրոս, այն որ էառ զՀերովդիադա և սպան զՅովհաննէս (4) : Եւ ՚ի Մեղքոսա սամարացւայն ծնաւ զԱրքեղայս, որ թագաւորեաց զհետ նորա : Եւ ՚ի Կղէոպատրեաց երուսաղէմացւոյն միւս Հերովդէս և Փիլիպոս, որ ունէր զՀե-

(1) Յովեպոս : (Յշ. Պատրէ : Հը . Գիրք Ա . Գլ . ԻԱ.)

(2) Յովեպոս : (Յշ. Պատրէ : Հը . Գիրք Բ . Գլ . Ը .) և Եւսեբիոս (Քրտ. յեր . 262.) կոչեն նոյնապէս բէնան կամ բիենա : ՚ի Գաղատացւոց երկրին, և այն իոկ է զիենա մայրաքաղաքն Աւստրիոյ :

(3) Մարիամնէ ոչ դուստր՝ այլ թոռն էր Հիւրկիանեայ և դուստր Աղէքսանդրի :

(4) Այս Հերովդէս ոչ թոռինն Հիւրկիանեայ է որդի . այլ միւս Մարիամնեաց դստեր Սիմեոնի քահանայապետի :

բովդիադա կին, և առաւ յեղքօրէն . զինի  
և ինքն Փիլիպպոս սպանաւ . ՚ի նմանէ : Եւ ՚ի  
Բաղտայէ՝ Փիսալոս (Փասայէլ) : Եւ որդիք  
որդւոցն նորա են այտոքիկ . Արիստաբու-  
լեայ եղքօրն Աղեքսանդրի եղեւ որդի Հե-  
րովդէս, որ և թագաւորեաց ՚ի Բաղկիդա:  
Եւ Աքրիպպաս որ կոչեցաւ Հերոդէս, այն  
որ սպան զէջակովք զեղքայրն Յովհաննու,  
և որդնեռաց եղեալ մեռաւ : Եւ վանեաց  
աս զհօրեղքայրն իւր, և էառ զթագաւո-  
րութիւնն . և եղեւ սմա որդի Աքրիպպաս,  
որ թագաւորեաց զինի նորա : Եւ դատերը  
Շերինիկէ և Դրուսիզա, որ եղեւ կին Փե-  
լիքսայ իշխանին : Ի չորեքտասան ամին Տիբե-  
րեայ, որ է ՅԱՅ (337) թուին, առաքեցաւ Պի-  
ղոտոս իշխան Հրէաստանի, և յետ տարւոյ  
միոյ, որ է ՅԱԳամայ Հինդ հազար Հինդ  
հարիւր երեսուն և եւթն, մկրտեցաւ Տէրն ՚ի  
Յորդանան ՚ի Յովհաննէ, յունվարի ՚ի վեց  
և ՚ի տիրէթի քսան և մի, յաւուր կիւրակէի:

Եւ ՚ի նոյն ամի Դերմանիկոս կայսրն զօ-  
րացաւ ՚ի վերայ Պարթեւաց և Տիբեր ըդ-  
Տուրթէս (Դրուսոս) արար հազորդ իշխա-  
նութեան իւրոյ և ինքն դեղով մահու սպա-  
նաւ . և ՚ի նոյն ամի արքունիքն Յոմբիսով այ-  
րեցաւ<sup>(1)</sup> . և ՚ի Տիբերեայ ժամանակն շնեաց

(1) «Պամպէի թէատրոնն հրձիգ եղեւ : » Եւսեբ : Քրոն.  
յեր . 262 :

Հերովդէս զՏաքարիս (1) և զԲայիս (2) : Եւ Պիղատոս զագատկերն Օւեւեաց եմոյծ ՚ի Տաճարն , և զգանձանոնկ Տաճարին թափեաց ՚ի ըրէջոն :

Յայսմ ամի ընտրեցան Առաքեալք երկուտասան : Ա . Արմոն Պետրոս ՚ի ցեղէն Նեփաթաղիմոյ , որ շնեաց խորան յառաջ յԱնտիոք , և յամս Կղօդեայ կայսեր ել ՚ի Հռոմ , և եկաց անդ ամս քսանեհինդ , և յերեքտասան ամի ՚ի Ներոնէ կատարեցաւ : Անդրէաս եղբայր նորա որ քարոզեաց ՚ի Նիկիա և ՚ի Նիկոմիդիա և ՚ի Ակեւթիա և յԱքարիա , և սմա առաջին Աթոռն յԱզիւտուս : Գ . Յակոբ որդի Օւերեդեաց ՚ի ցեղէն Զաքուլանի , որ սպանաւ ՚ի Հերոդիէ Ացրիարտոյ , և եղաւ մարմին նորա իւր մարմարիկէ (3) : Դ . Յովհաննէս եղբայր նորա քարոզեաց յԱսիա , և եկաց մինչեւ ցեւթըն ամն Տրայիանոսի , և կատարեցաւ վաւ-

(1) Հերովդէս Անտիոքս չորրորդապետ Գալիքոյ շնեաց զքաղաքո Տէբէրէս , և ՚ի Պերիա զՅուլիադա քաղաք , զօր և յանուն կնոջ Տէբէրի կայսեր կոչեաց : (Յով . Յշ . Պատէր . Հր . Գիւլֆ . Բ . Գլ . Ժ .)

(2) Խոկ Եւսեբիս (Քբռն . յեր . 262) Պէրիադա անուանէ , զօր Միխայէլ կամ ընդ օրինակողք նորա վրիոդակաւ զըքէն Բայյիս կամ Աբայյիս :

(3) Կամ Յուրմարմարէնէ , բառ անիմանալի . իսկ քաղաքն յօրում աւանդի թէ կացցեն նշխարք մարմնոյ նորա՝ բաց ՚ի դլայն , և կոմքոստելա , յաշխարհին Սպանիացւոց :

աաւոր մահուամբ : Ե . Փիլիպպոս յազգե  
Առերայ , 'ի Շեղսաիդա . քարոզեաց յԱն-  
ըիկէ և թաղեցաւ 'ի Փոխդեա : Զ . Շարժո-  
ղիմէսս յազգէն Խապքարաց յԱղաւիր գեղջէ ,  
քարոզեաց 'ի Հայաստանեայս , և անդ կա-  
տարեցաւ սքանչելի նահատակութեամբ 'ի  
յԱբիանոսքազաքի<sup>(1)</sup> , որ այժմիոչի Հաղպակ ,  
'ի Անատրկոյ յամբարիշտ և յանօրէն թա-  
գաւորէն : Ե . Թաղմաս յազգէն Յուղայ , քա-  
րոզեաց Պարթեւաց և Անդացեաց և Հընդ-  
կաց , և անդ նահատակեցաւ : Զ . Վատթէսս  
յազգէն Խապքարաց , 'ի Ապարեթէ , մեռաւ  
'ի Քաբազա և թաղեցաւ յԱնորիք . և յետոյ  
տարաւ յայնեայս ծովուն : Թ . Արմոնն Կա-  
նանացին յազգէն Ափրեմի , ննջեաց 'ի Հա-  
մա . և յայլ տեղ գտաք , թէ 'ի Կուրիս : Ժ .  
Յուղա՝ որ կոչեցաւ Թաղէ . որ վասն իմաս-  
տութեան իւրոյ առէին 'Կերէսս , որ է սիրո  
և հոգի , քարոզեաց 'ի Հայս և յԱսորիս , և  
կատարեցաւ 'ի Անատրկոյ 'ի Հայս , 'ի տեղ-  
ւո՞ն յորում եհար զվէմն և բղխեաց աղ-  
բիւր երեքտասան ակն . երկոտասանն յա-  
ռաքելցն անուն , և միւսն Փրկչին մերոյ  
Յիսուսի Քրիստոսի . որ կայ մինչեւ ցայսօր  
'ի բժշկութիւն ամենայն ախտից և հիւան-  
դութեանց : Աւ է պատուական մարմին և

(1) Այս քազաք կոչի 'ի գերս Մովսէսի Խորենացւոյ Ա-  
շեքանու . Բ . 51.

Նշխարք ոսկերաց նորա և սրբոյն Ամանդիստոց  
կ տեղւոջ նահատակութեան իւրեանց ամ  
փոփեալ : ԺԱ . Յակոբոս Արքեայ օրդի՝ յաղ-  
գէ Ամանասէի , որ մեռաւ ՚ի Արուծ : Յու-  
զա մատնիչն յաղգէ Դանոյ ՚ի Ակարիստոյ  
գեղջէ : ԺԲ . Ամատաթէ փոխանորդն նորա՝  
յաղգէն Խորենի , յերկիրն մարդակերաց :

Դրեաց Յովլսեպոս վասն Տեառն մերոյ  
այսպէս . “Երեւեցաւ յաւուրս մեր այր մի  
որում Յիսուսն ասէին . և բազում նշանօքն  
զոր առներ նա , յայտնի էր՝ թէ նա է Քր-  
իստոսն . և վասն նախանձու մատնեցին զնա  
Պիղատոսի գատաւորի : Եւ սպանին զնա  
խաչիւ . և յետ երից աւուրց տեսսին զնա  
կենդանի . և ոչ մեկնեցան ՚ի սիրոյ նորա հա-  
ւատացեալքն ՚ի նա , և մինչեւ ցայսօր ա-  
ճէ հաւատ նորա . և ստուգեցաւ թէ նա  
ինքն էր Քրիստոս օրդին Աստուծոյ կենդան-  
ւոյ (1) : ”

(1) Ի բնագրին այսպէս ունի . “Զ այսու ժամանակաւ էր  
այր իմաստուն՝ անուանեալն Յիսուս . և եթէ արժան է մեզ  
այր կոչել զնա . զի էր ոքանչելագործ : և ուսուցիչ այնոցիկ  
որբ յօժարութեամբ ընդունին զծմարտութիւնն , և զբա-  
զումն ՚ի Հրէից անտի և . ՚ի հեթանոսաց աշակերտս ուներ :  
Քրիստոսն իսկ է նա , զոր շարախսուեալ իշխանաց ազգին մե-  
րոյ , Պիղատոս ետ զնա ՚ի պատիժ խաչի : Սակայն այնոքիկ  
որ իսկզբանէ սիրեցին զնա , ոչ գաժարեցին ՚ի սիրոյ անտի  
նորա . զի երեւեցաւ նոցա յետ երից աւուրց միւսանդամ-  
կենդանի , որպէս մարդարէքն Աստուծոյ զայս և այլ բա-  
զում ինչ ոքանչելիս զնմանէ նախ խօսեցան : Եւ մինչեւ ցայ-

Արդ՝ ըստ Յովսեապայ վկայութեանն՝  
նախ սկսաւ հաւաստ նորս երկոտասան ա-  
ռաքելովքն (1), զոր գրեցաք վերագոյն . և ա-  
ղա ընտրեցան եւթանասուն և երկու աշու-  
կերաբն , որոց անուանքն են այս : Ա . Ադէ-  
ք . Ախէ : Գ . Դաղար : Դ . Կնանիա : Ե .  
Յակովիք : Զ . Եղիա : Է . Բառնաբա : Ը .  
Աստենիս : Թ . Կիւրակոս : Ժ . Յովսէփի-  
ժան . Ամկողիմոս : ԺԲ . Ամթանայէլ : ԺԳ .  
Յուդա : ԺԴ . Յոստոս : ԺԵ . Շիզա : ԺԶ .  
Բառնաբա : ԺԷ . Յովհաննէս , որ նա ինքն  
է Ամրկոս : ՃՃ . Մմիուս : ՃԹ . Ամձէ : Ւ .  
Յասոն : ԽԱ . Ամնիլ : ԽԲ . Դուբիքսիմոս : ԽԳ .  
Եղէքսանդրոս . ԽԴ . Շմաւոն : ԽԵ . Կիւրինէ :  
ԽԶ . Լուկիոս : ԽԷ . Կղէոպա : ԽԸ . Ամէոն :  
ԽԹ . Յովսա : ԽԱ . Բուդիոս : ԽԱ . Դիւստ-  
րոս : ԽԲ . Օաքիդոն : ԽԳ . Տիսոս : ԽԴ .  
Պատրոբա : ԽԵ . Արմիր ԽԶ . Ետնեկորիտոս : ԽԷ . Պը-  
րիսկոս : ԽԸ . Դուկաս : ԽԹ . Արիստաբուլոս :  
ԽԽ . Դէմաս : ԽԱ . Տիմոթէոս : ԽԲ . Դէւի :  
ԽԳ . Եփրեմ : ԽԴ . Հերովդէս : ԽԵ . Ոիլու-  
բանոս : ԽԸ : Ամիլիտէս : ԽԷ . Յովհաննէս :  
ԽԸ . Ժէոդոս : ԽԹ . Ամկոս : Ժ . Ամրտուլոս :  
ՃԱ . Լասիոն : ԺԲ . Օաքարիա , որդի այր-  
ւոյն , զոր յարոց ՚ի Ասին : ԺԳ . Ամմոն բո-

սօր ժամանակի ոչ նուազի ժողովուրդն քրիստոնէից որ ՚ի  
աննէ անուանեալ էր : ո Յովսէպ . ՅՆ . Պատէր . ՀՀ . Բ . 10.

(1) Յօրինակիո ուստիւլն :

բռան : ծդ . Ատեփաննոս : ծԵ . Ատարոս : ծԶ . Ապեղէս . ծԷ . Իստոն : ծԸ . Շմաւոն . ծԹ . Յովզէփ , որ է Բառնաբաս : Կ . Երասոս : ԿԱ . Ամիմաս . ԿԲ . Յուլիոս : ԿԳ . Փելիպպոս : ԿԴ . Պրոքորոն : ԿԵ . Ամիկանովը . ԿԶ . Տիման : ԿԷ . Պարմենա : ԿԸ . Եգաբոս : ԿԹ . Կեփաս , զրմէ ասաց Պաւլոս՝ թէ ընդդէմ դարձայ նմա : Եւ ինքն Պաւլոս անօթն ընտրութեան , որ թէպէտ և տրուպ գրէր զինքըն , այլ մեծ էր յամենեսեան :

Յայսմ ժամանակի երեւեցաւ իմաստասէրն Փիլոն , երբայեցիւաղէքսանդրացի : Ասդրեաց զպատահմունս Հրեից և վասն Դայիստի , որ արար զանձն իւր աստուած . և ՚ի միայնակեացն Եղիսպատոսի . և վասն արարածոցն մեկնութիւնս . և վասն վաստակոց երկրի . և վասն մոաց արդարոց , որ յորժամ զարթնու՝ ազօթէ : Եւ վասն աւնըման լեզուաց . և վասն աշխատելց ՚ի վարդապետութիւնս , և վասն զանազանութեան անուանց գրենաց և երկու Կտակարանոց : Եւ վասն տեսլեանց և երազոց հինգ ճառս . և հինգ վասն ելանելց հոգւոյ ՚ի մարմեայ . և չորս վասն օրինացն , և այլս բազում : Եւ յաւուրս Վզօդեայ կայսեր եղաւ գրեանք նորա ՚ի տունն գանձուց թագաւորացն Հոռոմոց :

Յայսմ ժամանակի եւթն հերձուած գը

տաւ՝ ՚ի Հրեայս, որպէս ասէր Յովուեպօս<sup>(1)</sup>, առաջին՝ Դպրացն, որ կոչին օրինականք ։ Երկրորդն՝ ՚ի Եւտականք, որ ունին զաւանցութիւն ծերոցն։ Երրորդն՝ Փարփացւոցն, որ հաւատան յարութեան որպէս ՚Դպիրքն, և առեն և խոստովանին հրեշտակ և հոգի, և պահեն երկու օր ՚ի շաբաթն. և մլրտին յաճախ, և հաւատան աստեղաց և բախտից։ Չորրորդն՝ ՚Խաղուկեցւոցն, որ ուրանան զյարութիւն և զըրեշտակ և զհոգի, և առին զանուն ՚ի ՚Խաղովիայ քահանայէ ումեմնէ։ Հինգերորդ՝ ՚Վկրտողք, որք ասեն՝ թէ չկարէ մարդ ապրել, թէ ոչ յամենայն աւուր մլրտի։ ՚Եցերորդ՝ ՚Խատականք, որք չուտեն ինչ շնչուոր. և զ՚Յովուէս և զմարդարէսն ոչ ընդունին, և այլս ունին գրեանքս փոխանակ նոցա. ՚Եւթներորդ որ պահեն զօրէնս և ընդունին զմարդարէս, և մի ՚Ստուած՝ մի անձն դաւանին, և զզօրութիւն գրոցն ոչ իմանան<sup>(2)</sup>.

Հիննետան ամին Տիբերեայ կայսեր առաքեաց ՚Քրդար Հայոց արքայն առ Յիսուս

(1) Յովուեպօս, Յշ. Պատերու. Հը. Գիրք Բ. Գլ. Թէ.

(2) Յովուեպօս ՚ի զիրս իւր Յշ. Պատերու. Հը. չորեսին աղանդու և եթ ժիշտակէ, զՓարփակցւոց, զԱադուկեցւոց, զՅեսաեանց, և զՅուգայի գալիքեացւոց որ յորդորէր զհըրքեայս ոչ տալ հարկս կայսեր. նպատակ սոցա ապստամբութիւն գոլով, և ձկտումն նոցին ՚ի միաս կոյսերական գանձուն, պատժեցան ՚ի Հռոմայեցւոց։

թուղթ աղաջանաց ՚ի ձեռն Ենանիայի (Ենանէի) հաւատարմին իւրոյ , աշխատել և գալ առ նա , և լինել թագաւորակից նմա . և հաւատաց ՚ի նա և երկրպագեաց նմա յառաջքան զշարչարանս : Եւ Յիսուս գրեաց պատախանի և երանեաց զԵրգար , և խոստացաւ յետ յարութեան իւրոյ առաքել նմա քարոզ և պատճառ կենաց զմի յաշակերտաց իւրոց : Խակ նա վասն ջերմութեան սիրոյն զօր ունէր առ Տէր մեր , առաքեաց դարձեալ զԵսլաննէս նկարագիր (1) , փոխել և բերել զպատկեր նորա , զի գոնեա յայնմանէ վայելեցի : Եւ գեացեալ Յովլաննէս ոչ կարէր հաւասարել վայելըութեան գեղոյ նորա , այլ և փոփոխէր փառաց ՚ի փառս . և հիանացը նկարիչն : Եւ ապա ողորմութեան և գլութեան աղբիւրն խնդրեաց զգաստառակին և ետ ՚ի վերոյ երեսացն . և նկարեցաւ տիպն ՚ի հանդերձեղէնն : Եւ էր այս յառաջքան զշարչարանս քանն և չորս աւուրբք . և բերաւ և տուաւ Ըրգարու : Եւ մեծամեծ հրաշք և սքանչելիք լինէին ՚ի նմանէ , մինչեւ էին թագէսս առաքեալն : Ինոյն ամի խաչիւ

(1) Մովսէս խորենացի (Բ. 29) և այլք . առեն եթէ յառաջում նուագի յառաքել Արգարու զԱնանէ պատուիրեաց նուա հանել և զպատկերն Յիսուսի . խակ զերկրորդ գնացն ոշինչ յիշատակենեւ . և անունդ Յովլաննէս ՚ի Յայսմաւուրու (Օքու . 16) և եթ գտանի յիշատակեալ , թերեւս ՚ի սոյն գրոց Միխայել աւսեալ :

մեռաւ Տէրն և թազեցաւ, և յարուցեալ  
երեւեցաւ աշակերտաց իւրոց, և հաստա-  
տեալ օրհնեաց զնոսա՝ խոստանալով զնո-  
զին սուրբ . և ինքն համբարձաւ յերկինս :  
Եւ 'ի նոյն ամի յաւուր Պենտէկոստէին Պի-  
ղատոս զպատկեր կոյսուրն եմոյծ 'ի Տաճարն,  
որպէս Յովսեպոս գրեաց, և յայնժամ եղեալ  
ձայն 'ի շնորհացն որ կայր անդ, ասէին . «Իր-  
նամբ տատի, գնամբ . և այլ ոչ եւս դառ-  
նամբ ու Յիշէ զայս և Փիլոն յերկրորդ գիր-  
որն իւր :

Եւ Ագրիպպաս գնաց 'ի Հռոմ ամբաս-  
տան զներոդէէ հօրեղբօրէ իւրմէ, և ըմ-  
բռնեցաւ 'ի Տիբերեայ (1) : Եռ սա առա-  
քեաց Արգար արքայ Հայոց երկիցս անդամ  
վասն Վրիսատոսի աստուածութեանն, եւ  
տրտունջ զներէիցն . գրեաց և 'ի Տաբելոն  
առ Աերաէհ, գրեաց և առ Պարսից թագա-  
ւորն (2) : Եւ եղեւ այս 'ի խնամոցն Եստու-  
ծոյ, զի 'ի նորութեան հաւատոյն հակառա-  
կութիւն մի լիցի, և վասն այսորիկ զառա-  
ջինն առանց ընդդիմութեան տարածեցաւ  
սուրբ Աւետարանն, և թռեաւ վաղվաղակի  
ժամանակ այսր թագաւորաց, որբ ոչ հակա-  
ռակէին վասն Վրիսատոսի աստուածութեն,  
խրատեալք 'ի Արգարու արքայէ, յառա-

(1) Յովսեպոս . Յշ. Դատէր . Հր . Գիրք Բ . Գլ . ԺԱ:

(2) Մովսէս Խոր . Բ . 50 .

շեալ և նախապսակ թագաւորէ , որ առաջին ձեռն ետ ՚ի Վրիտոռ՝ որպէս ասաց՝ Դաւիթ։ Եւ Տիբեր կեցեալ եւ թանասուն և ուժ ամ և թագաւորեալ քսան և երեք ամ՝ մեռաւ։

Եւ Հերովդէս թագաւորեաց քսան և եւ տեք ամ , այն որ սպան զՅովհաննէս և ՚ի Տեառնէ պատուհասեցաւ . Հերովդիսւ կը նաւ իւրով , եղեալ ՚ի բանտի կապանօք ՚ի Պաւանիա (Ապանիա) , և անդէն սպանան երկոքեան (1)։ Եւ զկնի Տիբերի Դայիսս թագաւորեաց , և եհան ՚ի կապանաց զՎգրիտպաս , և եղ զեա թագաւոր Հրէից։ Ի սոյն ժամանակի առաքեցաւ դատաւոր Փելքս (2) Արդիպտոս , և սա յոյժ նեղէր զՀրեայսն ամս հինգ , և զաեղի պաշտաման նոցա պղծէր անսուրք զահիւք . և վասն այսր պատճառի առաքեցին դեսպանու առ Դայիսս աղաչեւրուն , յորոց մի էր և Փիլոն փիլիսոփայ երրայեցի Աղէքսանդրէ , և ոչ լուաւ նոցա , այլ և առաքեաց ՚ի Պատրանիա (5) իշխանն Ասորուց գնեւ զպատկերն իւր յամենայն մեհեաւ։

(1) Յովեալոս (անդ) , ուր ասէ . Հերովդէս որ ՚ի Հռոմ գնացեալ էր դատ վարել ընդդէմ Ագրիփապայ յանդիմանն ալ ՚ի Գայիսուէ , փախստական լինի ՚ի Սպանիան և անդ ընդ Հերովդիսւ կնաւ իւրով վախճանի ՚ի պանդիստութեան։

(2) Եւսեբիս (Քրոն . յեր . 268) Փղակոս Աւուղիս զաս անուանէ։

(5) Եւսեբիս (անդ) , Պետրոն կամ Պետրոնիա անսւանէ զիշխանն Ասորուց։

նրա, և 'ի տաճարս Հրեից պաշտել աստ-  
ուածս (1). և ասու կատարեցաւ ասացեալն  
'ի Դանիէլէ «Պղծութիւն աւերածոյն (2) : »  
Հայում ժամանակի Արման և Կերինդոս և  
Անհանդրոս 5) երեւեցան : Եւ յայսմ ժամա-  
նակի Փիլոն և Պետրոս (առաքեալ) հանդի-  
պեցան միմեանց 'ի Հռոմ, և խօսեցան ընդ-  
իրեարս առաջի Դայիստի : Եւ հարցեալ Փի-  
լոնի զՀՅովհաննէս աշակերտների միքատոսի,  
թէ «Օ բնիչ Եստուած . » և պատասխանի  
տուեալ Յովհաննէս ասէ . «Աէր է Եստ-  
ուած : » Եւ Փիլոնի հաւանեալ տարաւ 'ի  
տունն իւր արարեալ սէր . և հաւատացեալ  
մկրտեցաւ : Խոկ Դայիստ վասն կարի խրա-  
տութեանն սպանաւ 'ի ներքինւոյ միոցէ ,  
թագաւորեալ ամս չորս : Եւ թագաւորեաց  
կղօդիոս ամս չորեքտասան : Եւ Եգրիսպատ  
թագաւորեալ ամս եւլծն , և կացեալ չոր-  
րորդապետ ամս երիս , որ և ապա առ զՀե-  
րովդէին հարուած , և եհար զսա հրեշտակ  
Եստուածոյ և մեռաւ :

(1) Յովհապոս 'ի գիրս ՅՆ. Պատեր . ՀՀ . Գիրք Բ . Պ. Ժ. Ժ. Տ. մաներամանն պատմէ զանցո . և զսաստիկ հրամանն գայիստի : որ ոյ և. մահ սպանացեալ Պետրոննայ վասն հեղ-  
գաբար շարժելց 'ի կատարումն ամբողիչու հրամանացն : և  
քանի զդատապարտութեան վճիռն՝ վաղ հասեալ առ նա ըսւը  
մահուան կայսերն աղմտի 'ի տարապարտ կորուսնէ :

(2) Դանիէլ . թ . 27 :

(3) Եւսեբիոս . Պատմ . ԵԽՆ . Գ . 26 . 28 :

Յամն կղօդեայ 'ի տօնի Օ ատկին յանկարծ  
եղեւ ամբոխ յիշրուսաղէմ 'ի Տաճարին . և  
կովսեալ զմիմեանս մեռան երեսուն հա-  
զար անձինք : Եւ կղօդիոս կացոց թագաւոր  
Նրէից զ՛գրիպալաս որդի Ագրիպայ , և ըզ-  
Փելիքս առաքեաց դատաւոր Գալիլեացւոց  
և Ասմարացւոց : Եւ թագաւորեալ կղօդիոս  
ամս երեքտասան , մեռաւ 'ի տան իւրոյ : Եւ  
առ զթագաւորութիւնն Աերոն ամս երեք-  
տասան : Եւ սա առաքեաց զՓեատոս և ե-  
հան զՓելիքս , որոյ առաջի եկաց Պտուղոս :  
Եւ դարձեալ եհան Աերոն զՓեատոս , և եդ 'ի  
տեղի նորա զ՛լաբինոս (1) . և զայս ևս եհան  
և եդ զ՛ելուրոս . և յաւուրս սորա ապրո-  
տամբեցին Նրեայք 'ի կայսերէ : Յայսմ ժա-  
մանակի անկաւ հուր յերկինից 'ի Նռոմ . և  
այրեաց շինուածս բազումս , և ամբոխ մարդ-  
կան ընդ նոտա : Խոկ Աերոն յերեքտասան ա-  
մին իւրոյ յարոյց հալածանս եկեղեցւոյ , և  
սպան զ՛ռաքեալն : Եւ առաքեաց յիշրու-  
սաղէմ զՎեսպիանոս և զՏիտոս որդի նո-  
րա վասն ապստամբութեանն Նրէից :

Եւ 'ի Յուդեուդա (Յովհապատ) քաղաք  
ամբացեալ էր Յովսեպոս զօրավար և պատ-  
մագիլ (2) . և չոգաւ Վեսպիանոս և էառ ըզ-

(1) Յովսեպոս Ալբինոս զսա անուանէ . որոյ գործ ա-  
նիբաւութեան գրեալ կան 'ի զիրս . ՅՆ . ուսուէ . ՀՀ . գիրք Բ-  
ԳՀ . ԺԶ . Եւսեբի . ՔՐՆ . յեր . 270 :

(2) Նա ինքն է Յովսեպոս ֆլաւիոս հեղինակն գրոց հնու-

քաղաքն Յուղբուդա, և կոտորէր զնա. և  
զօրավարն Յավսեպոս երթեալ ընդ առաջ ա-  
սէ. « Եւետեմ քեզ Վեսպիանէ, զի փութով  
վճարի՝ Ներսն և թագաւորես ՚ի տեղի նորաց  
և վասն այնորիկ ոչ սպան զնա <sup>(1)</sup>. Եւ Ներսն  
առեցեալ յամենեցունց սպան զանձն իւր,  
և թագաւորեաց Վալտփոս (Վաղբա) ամիս  
եւթե, և սպանաւ ՚ի մէջ Հռոմայ, Եւ Առ-  
բատոլոս <sup>(2)</sup> թագաւորեաց ՚ի Կերմանիա, և  
Աւթոն (Աթոն) ՚ի Հռոմ. որ և զինի երից  
ամսոց սպան զինքն : Եւ թագաւորեաց ՚ի-  
տալիս (Ռիտիլիս) ամիսս ութ . և եղեալ  
ամբոխ ՚ի վերայ նորա սպանին զնա : Եւ այս  
համբաւ հասեալ ՚ի Վեսպիանոսի զօրքն որ  
ընդ նմա, քարողեցին զնա թագաւոր և Տո-  
կորոր : Եւ ինքն Վեսպիանոս յորժամ ե-  
թեանց Հրեից, և Պատմութեան պատերազմացն Հրեից :

(1) Յավսեպոս ՅՆ. Պատեր. ՀՀ. Գիրք Գ. Գլ. ԺԴ.՝  
Եւսեբի. Քրոն. յեր. 272 :

(2) ԶՍուրատոլոս ոչ ուրեք առ պատմագիրս գտանեմք  
յանուանէ յիշատակեալ ՚ի շարս կայսերաց զինի Ներսնի  
իշխել Հռոմայ : Այլ հոյեցեալ ՚ի զիրս Եւսեբեայ ՚ի Քրո-  
նիկոնին, յեր. 274, նոյն կարգաւ գտանեմք և Միհայելի պատ-  
մել և սիսալմամբ Սարտրուս փոխանակ Բիտիլիոն Եղեալ,  
քանզի յարէ անմիջապէս որպէս Եւսեբիս՝ զտեղի թագա-  
ւորելոյ նորին, այն է Գերմանիա : Իսկ զի յետ Ոթոնի դնէ  
առանձինն և զբիտալիոն : որ նա ինքն է Բիտիլիոս : զայս  
համարիմ յայլմէ պատմագրէ առեալ Միհայելի և ոչ յԵւ-  
սեբեայ, համարելով զնա ոյլ ոք լինել քան դիտսիլոս :—  
Յավսեպոս : ՅՆ. Պատեր. ՀՀ. Գիրք . Ե. Գլ. Զ :

զեւ այս նմա , թողեալ զորդին Տիտոս ՚ի վերաց Երուսաղէմի՝ և բնիքն գնաց յԱշդիակաս , և հնագանգեաց ինքեան զկողմաննան զայնոսիկ . և այնք կողմամբ գնաց ծավով ՚ի Հռոմ , և թագաւորեաց ՚ի վերաց նոցա ամս ինն և ամիսս մետասան :

Եւ Տիտոս էառ զԱրուսաղէմ ՚ի Օտտկի տօնին , և հարիւր քանիւվեց բիւր Հրեայք կարեան . և քակեցաւ Երուսաղէմ զյետին աւերն , և այրեցաւ Տաճարն յահկի ամսեան : Ենին ամք յԱղամաց հինգ հաղար չորեքհարիւր երեսուն և եւթն . և ՚ի յարութենէ Տեառն մերոյ ամք քառասուն , և յառաջին շինուածէն մինչեւ ՚ի յետին աւերն՝ երկու հաղար հարիւր իննոսուն և երկու ամք : Եւ յերրորդ ամին Վեսպիանոսի առաւ Երուսաղէմ . և մինչ գաղթեցան , յԱրուսաղէմ էին երեքհարիւր բիւր . և յայն Օտտկին որ ժողովեցան , ածաւ ՚ի զենումն Օտտկին քանիւ հինգ բիւր գառինս<sup>(1)</sup> , և զամեն գառն

(1) Ի հայ թարգմանութեան Յովանեակոսի ՅՆ. պատէր ՀՀ Գիրք Ե. 17. քանզի չունիմք ՚ի ձեռին զբնագիրն . դնե քըսն և հինգ բիւր՝ վեց հաղար և հինգ հարիւր գառինս , 256.500 . և քաղմականիեալ 10իւ՝ դնե ՄՆ (270) բիւրս . որ առնե 2.700.000 . փոխանակ դնելը 2.565.000 : Իսկ առա ՚ի թարգմանութեան Միիայելի գրոցն դնի հոգիւր տասն բիւր՝ փոխանակ հարիւր տասնի : որ առնե 2.500.000 . և տարրերութիւնն ծաղի ՚ի թռոց 6500 դառանցն զորոց զանց արարեալ է Միիայել :— Եւսեբ . քրոն . յեր . 274.

տասն այր ճաշակելին սուրբքն, և անառւրբքն ոչ կարելին ուտել, և որ կերանն, էլին երկերիւր և տասն բիւր. վեց բիւր սրբվ մեռան, և հարիւր տասն բիւր սովով, և տասն բիւր գերի վարեցան : Եւ ՚ի հնդետասանամենից ՚ի վեր յԱզգիսպոս առաքեցին յաղիւսագործութի, և ՚ի հնդետասանամենէ ՚ի վայր՝ բաժանեցան զօրացն : Եւ զայս քառասուն տմետ Արտուրած ժամանակ ապաշխարութեան, և յորժամ ոչ զզջացան, ինդրեցաւ վրէժ աշրեան Արդւոյն Արտուրոյ : Եւ աստ բարձաւ թագաւորութիւնն Հրեից, և մնաց միայն թագաւորութիւնն Հռոմայ յամենայն աշխարհի, բաց ՚ի Հռոմաց որ կային և նոցաթագաւորք :

Օկնի Վեսպիանոսի թագաւորեաց Տետտա որդի նորա : Եւ յերկըորդ ամի սորա Արտուրած քարոզեցաւ ՚ի զօրացն, և կարծեաց նա ՚ի միտս իւր ամբարտաւանեալ, և եհար զնա հրեշտակ Տետտն և մեռաւ : Եւ թագաւորեաց եղբայր նորա ՚իսմետիանու ամս հնդետասան և ամիտս հինգ : Աս հալածեաց ՚ի Հռոմայ զամենայն աստեղագետ և զկախարդ : և սա հրամայեաց այլ սցգի ոչ տնկել<sup>(1)</sup> : Յայսմ ժամանակի աճեաց

(1) « Դրոմեախանոս զուսողս և զիիլխոտիայս Հռոմայեցաց մերժեաց : » Եւսեբ . Քրոն . յեր . 276 : — « Հրաման և կայոր ՚ի քաղաքոս որթ մի տնկել : » ԱՆ . 278 :

քրիստոնէութիւննե . և և հարց Պատրուբռւ-  
լս զվարդապետն իւր Շոսինոս , թէ ի՞նչ նրա-  
շանակէ այսքան բազմութեան հաւատալ՚ի  
խաչեալ այր մի , որ և թէ ոգորոս իմաստա-  
պետն Վթենացւոց և Վիրիկանոս աղեքսան-  
դրացի և Վարտինոս իբաժմու (հիպատոս)  
հաւատացին ՚ի նա , թողեալ զվացելցութիւն  
աշխարհիս . իւս պատասխանի և ասէ . “ Ո՞՛  
զարմանաբ ընդ այդ , զի կարծեմ թէ և աս-  
տուածքն հնազանդին նմա : ո իւ նա ասէ .  
“ որպէս . ո և ասէ ցնա . “ Օք անախառւ-  
թիւն և անմեղսւթիւն և անընչութիւն է  
քարոզութիւն նորա . յայտ է զի ՚ի վեր է  
բան զամենեցուն քարոզդ այդ : ”

Յայսմ ժամանակի Վայովնիոս տիւանեցի  
շնեաց տլամեր բազում՝ դիւական զօրու-  
թեամբ , և ասաց . “ Վւազ , զի որդին Վա-  
րիամու կանիսեաց քան զիս : Օք ես կամէի  
հնազանդել զոշարհ ՚ի ձեռն արուեստիս  
իմոյ : Խոկ ՚իսմետիանոս վասն իստութեան  
սրափի իւրոց սպանաւ , և բարձան ազգն Վես-  
պիանէի : իւ թագաւորեաց Վերուաս ամ՝ մի ,  
և Վստուած քարոզեցաւ ՚ի սինկղիտոսէն ,  
և առականեցաւ հիւանդութեամբ և մե-  
ռաւ (1) : իւ թագաւորեաց Տրայիանոս ամօ-

(1) “ Վերուաս յախտէ առականեցաւ ՚ի Սաղուեստեան  
բուրաստանն : ու “ Սինկղիտոսն զներուաս աստուած հա-  
մարեցաւ : ո Եւսեր . Քըն . յեր . 280 :

ինեւտասն։ Այս հալածէր զքրիստոնեայս, և  
Շմաւոն Կղէսպեանց Երուսաղեմի եպիսկո-  
պոսն և Խգնատիոս Անտիոքու եպիսկոպոսն  
կատարեցան ՚ի Քրիստոս։ Եւ Ծիլինիոս Ան-  
կունդոս (1) հրամանաւ թագաւորին բազու-  
մբս կոտորեաց ՚ի քրիստոնէից. և զղջացեալ  
գրեաց առ Տրայխանոս, թէ “Քրիստոնէից  
ամենայն ինչ բարի է . բայց կուոց ոչ զսհեն,  
և ընդ առւուօտս Քրիստոսի երկրագագեն։”  
Եւ նա գրեաց թէ՝ Ծննդեա զգոստ (2)։

Յայսմ ժամանակի տպստամբեցին Հր-  
քեայքն յԱդիպտոս, և Եղին թագաւոր իւ-  
րեանց անուն | ումբաս, որ և առեալ ըզ-  
շրեայսն եկն յԱրուսաղէմ. և առաքեաց  
Տրայխանոս զլ ուսիս, և կոտորեաց զքիւրո  
՚ի նոցանէ, վասն այնօրիկ մնաց | ուսիս իշ-  
խան Հրէիցն (3). Յայսմ ժամանակի Հրեայ-  
քըն որ ՚ի Կիոլրոս կոռուեցան ՚ի վերայ Աս-

(1) Ամենայն օրինակք թարգմանութեանցն երկոցունց՝  
ունին Ախուշիոս փոխանոսէ Սէկունդոս, որպէս ունի Եւսե-  
բիոս ՚ի Քրոնիքնին՝ յեր. • 280.

(2) Եւսեբի. Պատմ. Էլեւ. Գ. • 55. ուր այսպէս ՚ի մէջ  
բերե զպատասխանին Տրայխանոսի. “Տահմն քրիստոնէից ան-  
խտիր մի՛ խնդրեացին ՚ի մահ, բայց եթէ գետ ումեք լիցի՝  
դատեացի” ։

(3) Օքինուկս մեք համաձայն Եւսեբեայ խօսի զապստամ-  
բութենէ Հրէիցն իսկ միւս թարգմանութիւնն շփոթ ունի  
զբանն և զլուսիաց ոչինչ յիշատակէ։ Եւսեբիոս, Քրո-  
յեր. • 282. Պատմ. Էլեւ. Գ. • 2. ուր ասէ, թէ եր իշխան

զամինայ քաղաքի, և առեալ զքաղաքն կոտորեցին զՅոյնսն որ ՚ի նմա : Նոյնպէս և Հրեայքն որ ՚ի Եթիա՝ մարտեան ընդՅոյնսն և կոռւէին . և Յոյնք որ յԱղէքսանդրիս և ՚ի Խիւռինէական աշխարհն , պատերազմ յարուցին և կոտորեցան ՚ի նոցանէ : Յայսմ ժամանակի Երեւեցաւ Աւելունդոս ի մաստասէր լռակացն : Օկնի Տրայիանոսի թագաւորեաց Եդրիանոս՝ ամս քսան և մի :

Ե չորրորդ ամի նորա թագաւորքն Հայոց որ յԱւոհա , բարձան , և լինէին անդ իշխանէք . և մնաց ՚ի մեծն Հայք թագաւորութիւն : Յութեւտասն ամին Եղրիանուդարձեալ ասպատամբեցին Հրեայքն յԱշրուսաղէմ՝ խաբեալ յառնէ միոջէ որ անուանէր Եստղ<sup>(1)</sup> : Եւ առաքեաց Եդրիանոս կոտորեաց զնոսա , և հալածեաց յԱշրուսաղէմէ զՀրեայսն , որ հոյիլ անդամ ոչ իշխէին ՚ի կողմն Երուսաղեմի : Եւ զԵրուսաղէմ քանդեաց . և առ ընթեր Երուսաղեմի շինեաց

՚ի վերայ ամենայն եզիստացւոց (Հրեից) Ղաղապոս անուննին :

(1) Եւսերի (Պատմ . Էլել . Դ . 6 .) անուանէ Բարբուզայ կամ Բարբուչբայ . Ասուն զորդի , այլ իրօք՝ էր այր սպանող և աւաղակ : Եւ առաքեցաւ ընդդէմնորա ՔԱղրիանոսէ Յութիս Սեւերոս , որ սրաշարեալ ժամանակս բաղումն զտեղի ապաւինի նորա , յաղթեաց և սովան զնա , և ամենայն Հրեայք ՚ի բաց մերժեցան ՚ի կողմանց Երուսաղեմի ընդ պատժով մահու :

քաղաք մի Ելիոս Ադրիանոս, և բնակեցոյց  
քրիստոնեայս և հեթանոսս, և սահմա-  
նեաց կտրել զականջս Հրեիցն ուր և իցեն՝  
զի նշանաւորք լինիցին։ Եւ սա սահմանեաց  
առանց այլ պատճառի վասն քրիստոնէու-  
թեան չհալածել զնոսա։ Ի քսան և մի ամին  
սորա ժողով եղեւ առաջին ՚ի Նիկիա, քա-  
ռասուն և երեք եպիսկոպոսօք, և նզովեցին  
զիաբէլ լիբէացին, որ ասաց թէ մի անձն  
է սուրբ Երրորդութիւնն։ Եւ նզովեցին  
զի աղենտիանոս որ ասաց՝ յերկնիցն բերել  
զմարմինն։ Յաւուրա սորա էր Ակիւղաս  
թարգմանիչ<sup>(1)</sup>։

Օ կնի Ադրիանոսի թագաւորեաց Տիտոս  
Անտոնինոս, որ կոչեցաւ Աերաստոս և Ար-  
դար և որդիք իւր ընդ նմա՝ ամս քսան և  
երկու։ Եւ Անտոնինոս հայր աշխարհի թարգմա-  
նի<sup>(2)</sup>։ Ի սորա ժամանակս Յուլստիանոս նի-  
կոպօլսեցի, որ կայ առընթեր Երուսաղեմի,

(1) Ակիւղաս էր պոնտացի, ազգական Ադրիանոսի կայ-  
սեր, որ ընկալաւ զքրիստոնէութիւն, և ՚ի մերժին յե-  
կեզգւոյն վասն յասեզագիտութիւնն պարագելց, դարձաւ  
՚ի Հրեաւթիւն, և թարգմանեաց զԱստուածաշունչ գիրս  
՚ի յոյն լեզու։ Ս. Եպիփան։ Վարդան, ՚ի Յառաջնորդութեան։ Սաղմ.  
Ֆիլոսոփիան։

(2) Այսպէս կոչեցաւ և Ադրիանոս վասն պեսպէս պար-  
գեւաց և բարեաց զոր ցուցանին ժողովրդեանն։ Եւ զհայր  
անունն դրումէին ՚ի սկիզբն հրովարտակաց իւրեանց և ՚ի  
վերայ դրամացն։ Եւսերի։ Քրոն։ յեր։ 584։ 286։

գնաց ՚ի Հռոմ և ետ թուղթ աղաջանաց առ թագաւորն, և դադարեցաւ հալածանքն քրիստոնէից<sup>(1)</sup>։ Իսորա ժամանակս կատարեցաւ Պօղիկարապոս եպիսկոպոսն Օմբուռնիոյ<sup>(2)</sup>։ Եւ աստ երեւեցան կերտոն, որ նո ինքն է Մարկիոն, և Մարկոս<sup>(3)</sup> եկեալ ՚ի Հռոմ, ասացին ոչ գոլ յարութիւն։ և զօրենան չար ասացին, և ոչ ասացին զՅիսուս որդի այնմ որ օրինօքն և մարդարէիւքն քարողեցաւ, այլ աներեւելոյն և բարերարին որդի։ և էին կախարդք։ և ՚ի վերայ մկրտելոցն ասէին՝ յանուն հօր աներեւելոյն, և յանուն մօր Ճշմարտի, և յանուն որդւոյն որ էջ ՚ի վերայ Յիսուսի։ Եւ այլ անուանա տողէին։

### Ի Թուին Ասորոց ՆՀԵ (475) Թագաւոր

(1) Յուստիանոս է ՚ի Կեապոլիս քաղաքէ (Կապուտո) ծնեալ յամի իրը 114. ՚ի հեթանոս ծնողաց, և հետեւող Պղատոնեան վարդապետութեան։ Յերեսներորդ ամի իենացն՝ գարձեալ ՚ի քրիստոնէութիւն վկայեաց վասն հաւատոցն ՚ի Հռոմ քաղաքի յամի 168. ամբաստանեալ ՚ի Վրէսկէս կիւնիկեան փիլիսոփոյէ։ Աւնի զանազան մատենագրութիւնն, գրեաց նաև և գիր ջատագովութեան զ քրիստոնէից առ կայսրն։ Եւսերի, Քրոն, յեր, 286. 288.

(2) Եւսերիոս + Քրոն + յեր + 288.

(3) Կերտոն աղդաւ Ասորի, և Մարկիոն աշակերտ նորա, որ եկաց գլուխ աղանդոյն Մարկիոնացւոց։ Խոկ Մարկոս էր աշակերտ Վաղենտիանոսի հերետիկոսի։ Եւսերի, Քրոն, յեր, 286. ուր զԼաղենտիանոսէ առէ, հասին ՚ի Հռոմ յեղիսկոպոսութեան հիւգինեայ։

քեաց Արկոս Աւրեղիոս ընդ որդիս Կնտոնինոս և | իւսիոս՝ ամս իննետասն<sup>(1)</sup> | յառաջին ամին սոցա Ա աղքէշ (Ա աղարշ) թագաւորեալ Պարսից Եկի յաշխարհն Հռոմոյ, և բազում գտւառս աւերեաց . և Ելին ընդդէմ նորա Կնտոնինոս և | ուսիոս Եղբարք, և Հնագանդեցին զՊարթեւս և զՊարս . և | ուսիոս զօրացեալ կայսր անուանեցաւ ընդ Եղբարս իւր<sup>(2)</sup> : | չւ Եղեւ այլ պատերազմ ընդ Հռոմոյեցիս և ընդ Գերմանացիս և ընդ Կարուտացիս և ընդ Սարմատացիս և ընդ Գալլեա<sup>(3)</sup> : | չւ դարձեալ զօրացաւ | իւսիոս . և անուանեցաւ | Հայունարդ : | չւ սա թագաւորեալ ամս ինն՝ և մեռու : | չւ Կնտոնինոս առ ընկեր թագաւորութեան իւրոյ զԼոմիդոս որդի իւր, զինեղէին զնա շրջակայքն . և Կնտոնինոս Հիւանդացեալ մեռանէր : | չւ Կոմիդոս թա-

(1) Անուանինոս՝ որ կոչէր Մարկոս Ղուկիոս (Ղուսիոս) Հեղիոս Աւրեղիոս կոմագոս Անտոնինոս, էր որդի Մարկոսի Աւրեղիանոսի, իսկ Ղուկիոս Վերոս կամ Բերոս էր Եղբայր նորին՝ որ ընդ իւր թագաւորեցոյց . և որդին իւր կոմագոս թագաւորեաց զկնի Ղուկիոսի Վերոսի յայտի 180.

(2) Եւսեբիոս . Քրոն . յեր . 288 :

(3) Եւսեբիոս (Քրոն . յեր 290) ուղղէ զանուանս աղգացոց ընդ որս պատերազմեցան Հռոմոյեցիք . “Էւսոմայեցոց պատերազմ” յարեաւ ընդ Գերմանացիս, ընդ Դակոյ և ընդ Սարմատոս և ընդ Կուադոս : Գալլեա յայտնի սիալէ օրինակողաց . յօրինակս միւս թագավանութեան գրի Գալլեացիս :

գաւորեալ ամս երեքտասահն՝ և խեղդեցաւ  
՚ի տան ձիոց <sup>(1)</sup>։ Եւ զկնի նորա թագաւոր  
բեաց Յերտենաք՝ վեց ամիս, և սպանաւ։  
Եւ թագաւորեաց Առւրինոս (Աեւերոս) ամս  
ութեւտասն։ Եւ յառաջին ամին նորա  
եղեւ սպատերազմ մեծ ընդ շրեաց և ընդ  
Աամարացիս. և յինն ամին յարոց հալա-  
ծանս քրիստոնէից, և բազումք վկայեցին։

Յաւուրս սորա յարեւմոից հիւսիսց  
եւ ազգ մի բարբարոս <sup>(2)</sup>, և գնաց ընդդէմ  
նորա Առւրինոս և սպանաւ <sup>(3)</sup>։ Եւ թագա-  
ւորեաց Յնտոնինոս (Խարակալս) որդի իւր՝  
ամս եւթն։ Աադարձոց զաքսորեալմն վասն  
հաւատոյ, և էր մի ՚ի նոցանէ Յղեքասնդր  
(Եպիսկոպոս) Երուսաղէմի. և Յնտոնինոս  
սպանաւ ՚ի Աիջագետս ՚ի մէջ Աւռհայոց և  
Խառանայ <sup>(4)</sup>։ Եւ թագաւորեաց Վակար  
ամ մի և սպանաւ <sup>(5)</sup>։ Եւ թագաւորեաց Յն-  
տոնինոս ամս չորս։ Ի ժամանակս նորա շի-  
նեցաւ Ամիկոլիս ՚ի Փղտացւոց աշխարհին,

(1) Եւսեբիոս՝ հեղձեալ յանկարծակի վախճանեցաւ, ա-  
սէ, ՚ի յաղարանսն Բեստիլիանոսի ։ Քըն. յեր. 294։

(2) Մովսէս Խորեն. Բ. 62. Ստեփ. Ասոզիկ Ա. 6.

(3) Եւսեբիոս Քըն. յեր. 294։

(4) Անտոնինոս Կարակալս մինչդեռ յԱսիա էր յարձա-  
կեցաւ. և ՚ի վերաց Ակտաւանայ Պապսից թադաւորին և մե-  
ռաւ. ՚ի սպատերազմի, որպէս յիշատակէ և Մովսէս Խորենա-  
ցի. Բ. 72։

(5) Ասյն է Մակրիոս ըստ Եւսեբեաց. Քըն. յեր. 296։

որ է Եմաւուս (1) : Եւ յետ սորա թագաւորեաց Աղեքսանդր Մամեայ՝ որդի երկիւշը և հաւատացեալ կնոջ, որ և շատ օգուտ արար քրիստոնէից : Եւ յերբորդ ամի սորա և ՚ի Ըստ (542) թուին թագաւորեաց Պարսից Արտաշեր որդի Հաբակոյ (2), որ է սկիզբըն թագաւորութեան Պարսից, որ տեւեաց ամս չորեքհարիւր ութեւտասն, որ և Ասսանեանք կոչին: Եւ կացին զկնի միմեանց թագաւորք քսան և եւթն, մինչեւ յարեաւ թագաւորութիւնն Արաբացւոց Մահմետիւ և երարձ զնա:

Օկնի Աղեքսանդրի թագաւորեաց Փելիպոս ամս եւթն (3), և խաղաղացանք քըրիստոնեայք : Եւ յառաջին ամին նորա թագաւորեաց Պարսից Ապուր որդի Արտաշերի՝ ամս երեսուն և մի: Յայսմ ժամանակի հազար ամ շնուրութիւնն Նումայ լցաւ: Եւ Դուգիս (Դեկոս) սպան զՓիլիպոս և զըր-

(1) Եւսեբիս, Քբն. յեր. 296:

(2) Ցետ կորուսանելոյ Արտաւանայ զպարթեւական Տէրութիւնն և զկեանս իւր ՚ի ձեռն Արտաշը որդւոյ Բարակոյ կամ ըստ այլոց՝ Սասանայ, սկսաւ սա ինքն Արտաշեր թագաւորել ՚ի վերաց Պարսից՝ կանդնելով զՍասանեան հարրատութիւնն յամի Փրկչին 226: Աքաթանգեղոս: —Մովես Խոր. Բ. 64: —Միք. Զամշ. Հա. Ա. յեր. 561:

(3) Եւսեբիս զկնի Աղեքսանդրի յիշատակէ զՄաքսիմինոս, որ եկաց յախժուն ամս երիսորում յաջորդեաց Գորգիսանա: ամս վեց, և ասդա Փիլիպոս: Քբն. յեր. 298:

դին իւր և թագաւորեաց ամ մի , և սպանաւ 'ի Շերուդոս<sup>(1)</sup> և թագաւորեցին Շուրոս և Դամուրինոս , և Դաղլոս և Շալոս ամ մի . և թագաւորեցին Աւլիրանոս և Դաղեցոս ամս հնգետասան<sup>(2)</sup> . և յարուցին հայածանք Եկեղեցւոյ : Եւ Ըապուհ թագաւորն Պարսից աւերեաց զԱսորիս և զՎիլիկիա և զՎապադովիլիա գերութեամբ<sup>(3)</sup> : Եւ Գոթացիքն անցեալ ընդ Տանաւիս գետ՝ գերեցին զաշխարհն և տարան : Յայնժամ Դաղերիս գաղարեաց 'ի հալածելոյ զեկեղեցի Աստուծոյ , և 'ի շնորհաց Աստուծոյ աճեաց հաւատոս սրանչելեօք 'ի ձեռն սրբոց արանց . և զի առնոցր Աստուծած վրէժոս 'ի թշնամեացն ճշմարտութեան 'ի հալածիչ թագաւորացն :

Ի թուին ՇՁԸ (588) թագաւորեաց Դաղատիս (Աղօդիս) ամ մի . և յետ նորա թագաւորեաց Ալաւրիս (Աւրեղիանոս) ամս

(1) «Դեկոս զՓիլիսոս հանգերձ որդւովին սպանանէ . և վասն նորա քինին և մերումն եւս կարգի հալածանս (քրիստոնէից) յարոյց Դեկոս հանգերձ որդւովին յԱրրիսոս սպանաւ ու Եւսեբ . Քրոն . յեր . 298:

(2) Բուրոս կամ Բարոս Հերեննիսոս . և Դամուրինոս՝ որ է Հոստիլիանոս ոչ յիշատակին 'ի գիրս Եւսեբեաց . այդ զինի Դեկոսի դնին Գաղլոս և Վաղոսիանոս . զոր Միիսայէլ Քալոս կոչէ . սպա Վաղերիանոս և Գաղիանոս : Քրոն . յեր . 298 . 500:

(3) Առվանես Խորեն . Բ . 74:

վեց և ամիսս վեց : Այս շնչեաց պարիսպ մի այլ շուռմայ . և սա յարսց հալածանս , և շանթահար եղեալ մեռաւ , և գաղարեաց հալածումն , և թագաւորեաց Տարտիանոս (Տակիտոս) ամս վեց . և սպանաւ ՚ի Պօնտոս , և թագաւորեաց Պուլիրիանոս (Փղորիանոս) և սպանաւ ՚ի Տարսոն Կիլիկիոց<sup>(1)</sup> : Իսկ Պարսից թագաւորեաց Որմիդդ :

Ի թուլին ՇՆԴ (593) ճնաւ Կոստանդիանոս : Իսկ զինի Պուլիրիանոսի թագաւորեաց Պրոբոս ամս եւթն : Եւ ՚ի նոյն ամի թագաւորեաց ՚ի Պարս Վարհարան (Վահրամ) ամս երիս : Եւ յետ նորա Վարհան որդի խոր թագաւորեաց ամս հնգետասան : Իսկ սինկղիտոսն յորժամ կամէր ապատամբել ՚ի շուռմայ , ամրացցց զի՞նտիոք և սպանաւ : Եւ զինի Պրոբեայ թագաւորեաց Կարսո և որդիք խոր Կարինոս և Կումիրինոս՝ ամս երկու<sup>(2)</sup> : Եւ Կարսո մեռաւ ՚ի Աիջագեաս , և Կումիրինոս սպանաւ յիշրիկէ (Յօրակէ) : Եւ Կարինոս ՚ի պատերազմի Պարմիացւոցն ըստանաւ<sup>(3)</sup> : Եւ թագաւորեաց ՚ի Կուկղետիւնոս . և աստի սկսանի թուականն թագաւ

(1) Եւսեբ . Քրն. յեր. 500 : — Մովսէս Խոր. Բ. 75 :

(2) Եւսեբ. Քրն. յեր. 502 : — Մովսէս Խորեն . Բ. 76 : — Սամուել :

(3) Եւսեբիոս որպէս և Մովսէս Խորենացի փոքր մի այլ լուրդ պատմեն զման առցաւ ՚ի Կարսց վախճանելն ՚ի Աիջա-

որելոյ Դիտկղետիանոսի , որ է Եսորւոց  
ՇՀԴ (594): Եւ զինի Դիտկղետիանու թագա-  
ռորեցին Մաքսիմիանոս , զորոյ զդուստրն  
կին ունէր Դիտկղետիանոս . և Մաքսիմինուն  
որդի Մաքսիմիանոսի թագաւորեցաց ՚ի Հը-  
ռոմ , և Կոստանդիանոս ՚ի Գալիս (1) . սոքա  
՚ի միում ժամանակի թագաւորեցին : Դիտ-  
կղետիանոս և Մաքսիմիանոս ՚ի կողմն արե-  
ւելից վարելին զիշխանութիւնն միաբանու-  
թեամբ միմեանց : Եւ յայսմ ժամանակի ա-  
պստամբեցաց Եգիպտոս , և գնացեալ Հռո-  
մայեցւոցն հնազանդեցուցին և զբազումն  
սպանին : Ի մետասան ամին Դիտկղետիանո-  
սի թագաւորեցաց ՚ի Պարսս Աերսէհ՝ ամս  
եւթն , և զինի նորա Արմիզդ որդի իւր՝ ամս  
հինգ : Եւ ՚ի յիննեւտասն ամին Դիտկղետիա-  
նոսի քակեցան եկեղեցիք և զօրացան հա-  
լածանք (2) , և ընդ հալածմանն սով սաստիկ ,  
մինչ մոլթ մի ցորեանն երկու հազար հինգ  
հարիւր դրամ էր (3) : Եւ վասն առաւել  
գետա , Կոմերիանոսի առ նովաւ լինէր սպանանել ՚ի թրակ-  
և Կարինոսի նոյնպէս ՚ի կոռնակայ պատերազմին : « Քըն .  
Ճեր . 502: Մովսէս Խորեն . Բ. 76: Խոկ Ապուլֆարան յա-  
ղագո մահուան Կարինոսի Խոսելով սպանաւ , ասէ , ՚ի պա-  
տերազմին ընդդէմ Գերմանացւոց , որով փոքր ինչ մերձենայ  
Գարմաշոց բառին . սակայն զերկոցունց խոկ զխալանոն  
ուղղեն Եւսեբի և Խորենացին որք ասեն ՚ի կոռնակայ հայ-  
կազնոյ սպանեալ :

(1) Յօրինակիս Գաւկլաւ : (2) Եւսեբի , Պատմ . Էլել . Ը . 5:

(3) Եւսեբիս , Պատմ . Էլել . Ը . 8 :

ամբարշտութեան 'Դիոկղետիանու Եհար ըզնա Աստուած , և նա յանձնեաց զթագաւորութիւնն 'ի Աքրսիմիանոս , որ ոչ էր պակաս չարեօք քան զնա : Եւ ինքն 'Դիոկղետիանոս աղդի աղդի ցաւօք նեղէր և տրորեցաւ . և գիտաց եթէ յԱստուծոյ էր հարուածն , և գրեաց թուղթ խաղաղութեան եկեղեցւոյ և շինութեան<sup>(1)</sup>: Եւ Աքրսիմիանոս ոչ կամէր , և չկարաց լուծանել զհրամանն , այլ առ ժամանակ մի դադարեաց հալածումնն<sup>(2)</sup> : Եւ դարձեալ ասաց թէ՝ “Աստուածքն հրամայեն շխափանել զհալածումննոյ և սկսաւ հալտնել և հանել 'ի քաղաքաց դքրիստոնեայս<sup>(3)</sup> , և խրատեցաւ աշխարհ երաշտով և տարածամ մահու , որ զտասն մեռեալն 'ի գերեզման մի դնէին<sup>(4)</sup> : Եւ խստացոյց պատերազմընդ Հայս , և եհաս նմա բարկութիւն , և դառն ցաւօք մեռաւ :

Եւ յետ այսորիկ թագաւորեաց կոտանդ հայրն կոստանդիանոսի . և ունէր երկու կին , զՀեղինէ և զթէոդորա դուստր Աքրսիմիանոսի : Եւ յութ ամի թագաւորութեան իւրում առ հաղորդ թագաւո-

(1) Եւսեբիոս , Պատր. Էլեզ . թ . 17:

(2) Եւսեբիոս , Պատր. Էլեզ . թ . 1:

(3) Եւսեբիոս , Պատր. Էլեզ . թ . 2—4:

(4) Եւսեբիոս , Պատր. Էլեզ . թ . 8 :

բութեան իւրոյ զիրստանդիանոս որդին Հեղինեաց, որ և երեք ամ ընդ հօրն թագաւորեաց և մեռաւ հայրն . և ինքն կրստանդիանոս թագաւորեաց ՚ի ՌԴ (623) <sup>(1)</sup> թուին Ասորւոց: Յովհաննէս ասխացինասէ. թէ հայրն կրստանդիանոսի գարձաւ յաստուածպաշտութիւն, և Անղյեւստրոս զհայրն բժշկեաց ՚ի բորստութենէ. և Պիտրոս և Պաւղոս երեւեալ կրստայ՝ խրառեցին զնա կոչել զԱնղյեւստրոս մկրտել զնա: Եւ յամ վկայէ Սոկրատ հռոմայեցի <sup>(2)</sup>: Եւ իգնատիոս միեւտինացին ասէ, թէ յորժամ թագաւորեաց կրստան-

(1) Եւսեբեայ Քընդիմն գագարին մինչեւ ՚ի քաններորդամին կրստանդիանոսի:

(2) Եւսեբիոս Աշկեղեցական պատմութեան իւրում (Ը. 14) բազում գովութեամբ խօսի զհօրէն կրստանդիանոսի, և ցուցանէ զնա իրբեւ արդարեւ հաւատացեալ այր, յասելըն. “Հանդարտ էր ամենայն փարուք իւրօվք և առ այնոսիկ որ ՚ի ներբոյ իշխանութեան նորա էին, քաղցրութեամբ էր, և առ Աստուած սիրով . . . Նո միայն յաւուրս մեր ըստ արժանի առաջնորդութեան թագաւորաց կատարեաց զժամանակ իշխանութեան իւրոյ, և այլով պատուով. և առ ամենոյն մարդ ՚ի շահ օգտութեան զանձն իւր տայր . . . Աչ զտաճարս եկեղեցեաց քակեաց նա, և ոչ նորոգեաց ՚ի վերոյ մեր ինչ մի (՚ի նեղութեանցն), վասն այսորիկ վախճան բարիոք կատարեալ երանութեամբ ընկալաւ նո. զի յաշխարհէ աստի յայսմանէ նո միայն ել ՚ի թագաւորութեան իւրում միաբանութեամբ և փառօքու իսկ որ ինչ յայսմիկ պատմի զկրտասայ, Սոկրատ (Ծ.): որդւոյ նորա կրստանդիանոսի վերագրէ . որդէս և աւանդութիւնն իսկ զայն հառտատէ: Տես և ՚ի Մովսէս խորեն. Բ. 2:

դիանոս, կային թագաւորք Ապօսիմիանոս և միւս Ապօսիմիանոս (Ապօսիմոս), և Ապօսիմինդէս (Ապօսենտիոս) և Աեւերոս, և ըսրեքինն հալածիչք էին. և ՚ի մեռանելն Աեւերեայ՝ իշխանիքն նորա ետուն զթագաւորութիւնն Կրտտանդիանոսի, և կեսար քառզեցին զլ իկիանէ փեսաց իւր : Եւ յեւ եւթն ամի կալաւ Կրտտանդիանոս թագաւորութեանն իւրոյ հաղորդ զլ իկիանէ, որ և գաղտ հալածէր զքիստոնեայս . յետոյ և ապստամբեաց և մեռաւ ՚ի նմանէ :

Եւ յերկրորդ ամի Կրտտանդիանոսի թագաւորեաց Պարսից Հապուհ եւթանասուն ամ : Եւ Կրտտանդիանոս գնաց պատերազմել ընդ Ապօսիմինտեայ որ ՚ի Հռոմ . և խորհեցաւ ՚ի միտս իւր և ասէ՝ թէ Այտուքն չօդտեաց ինչ առաջին թալաւորացն . ո և ասաց . « Որ Աստուած օդնէ ինձ ՚ի պատերազմիս , նմա երկրսպագեմ : » Եւ ՚ի հասարակ աւուրին ետես խաչ լուսեղէն , և գիր ՚ի նմա որ ասէր . « Այսու յաղթես : » Եւ որք ընդ նմա էին՝ նոյնապէս տեսին : Եւ յաց նրմ գիշերի երեւեալ նմա Քրիստոս , ասէր ցնու . « Արա զօրինակ երեւելոյն քեզ և յաղթես : » Եւ ելեալ ընդ առաւետն արար նոյնապէս (1) : Եւ աստի եղեւ օրէնք թագաւ-

(1) Եւսերիսս առանց յիշտտակեց գերեւումն խաչեն

Հորաց քրիստոնեից խաչ տանել առաջին է՛ւ յորժամ եղեւ պատուարազմ, յերեւել խաչին յաղթեցաւ ամբարտաւանն, գետասոյզ եշղեալ՝ ի Տեքերիսս գետ։ Ե՛ւ էր կին կոստանդիանոսի գուստորն՝ Դիոկղետիանոսի՝ Դիկղիտ անունն(1), որ և ՚ի միասին մկրտեցան, զի գեռ չէր մկրտեալ կոստանդիանոս(2)։ Յայսմ ժամանակի մեծն Վրիգորիսս ՚ի Հայո փառաւորեալ մեծամեծ նշանօք, որ և ՚ի ձեռն նորա դարձան տմենայն Հայք յաստուածաղաշտութիւնն . և նա եղեւ նոցա քարոզ և քահանայապետ երեւելի չնորհօք նման սուրբ Առաքելոցն Վրիստոսի։ Ե՛ւ ՚ի յերրորդ ամի իւրոյ թագաւորութեանն կոստանդիանոս ընդարձակեաց զի իւղանդիս, և աճեցցց ՚ի

յօդաւ ասէ՝ յետ յաղթութեանն և մոտանելը ՚ի Հռոմ, հըրամայեաց կանգնել՝ ՚ի քաղաքին զնշան Փրկչին։ Թւ. 11։ Մովես խորեն. Բ. 80. Սոկրատ. Զ։

(1) Մովես խորենացի (Գիրք. Բ. Գ.Լ. 80) և Սոկրատ (Ա. 3) ասեն Եթէ Մաքսիմինդա էր անուն դատերն Դիոկղետիանոսի, իսկ այլք Փաւուտա կոչեն՝ դուստր Մաքսիմիանոսի Հերքեւլեայ և Եւտրոպեայ, և ոչ Դիոկղետիանոսի որոյ դատեր անուն էր Վաղերիա, որ ամուսնացաւ ընդ Գաղղրիսի։

(2) Յաղագս մկրտութեան մեծին Կոստանդիանոսի այլ և այլ կարծիք են առ քննադատաւ Ճամանակակից պատմիչք յորս գտանին արք երեւելիք սրբութեամբ և ընդ հարս եկեղեցւ Համարեալք, և բաղըւմք եւս ՚ի յեսնոց պատմագրաց ասեն զկոստանդիանոսէ, Եթէ ՚ի Կիկոմիդիս լւալ և զգախճան իւր նկատեալ՝ ետ ածել զինքն ՚ի հանքային ջուրս Հեղիանուագոլոց, ապա յաշտարակին Աքիւրոնի, ուր ժողովեալ

նմա չորս (1) միլ. և զարդարեաց զնա զարդուք, և անդ փոխեաց զթագաւորութիւնն ձռոմայ, և յանուն իւր կոչեաց զնա կոտանդինուալոլիս, և արար զբնակիչս նորա ազատ. և շինեաց եկեղեցի մեծ իրինեայ (2) անուն, և միւս այլ յանուն Առաքելոցն։ Եւ երեւեցաւ միայն Եպոնիարոր, զամենայն զհոգն իւր եղեալ ընդ Կոստուծով։ Եւ շենել հրամայեաց ընդ ամենայն երկիր եկեղեցիս, և քակել զմեհեանս կռոցն. և եղ օրէնս մի ոք լինել զինուոր կամ ձիաւոր, որ ոչ իցէ ծնունդ սուրբ Առաղանին։ (3) էոդոգու (4) ասէ, թէ նկարիչք զտախտակ և զորմն զար-

նորա ղեղիսկոպոսունս (արիոսական) ընկալաւ զինիք մկրտութեան ։ Զայս օրինակ պատմէ և Եւսեբի ՚ի վարս Կոստանդիանոսի (Գիրք Դ. Գ. 61)։ Տես զայսմանէ և զմանքամանն կարծիս քննաբանից յԵրեւակին Յովհաննու պատուելոց Տերուենց. 1857. Համ. Ա. թիւ 4 և այլն, յորում ՚ի մէջ բերէ զհակառակ կարծիսն ։ Տ. Կերանմէ Բւնեղիկտեան կրօնաւորի, որ ցուցանէ զմկրտութիւնն կոստանդիանոսի ՚ի Հռոմ լինել ՚ի ձեռն Սեղբեուորոսի, որպէս ասէ և մերս Մովսէս Խորենացի. Պատմ. Բ. 80։

(1) Մովսէս Խորեն. (Բ. 85) հնդապատիկ, ասէ, մեծացցց զբաղաբն։

(2) Իրէնէ է բառ յունարէն, որ նշանակէ խաղաղութիւն, յայս անուն կոչեցաւ նախ մեծ եկեղեցին կոստանդինուալոլոփ. զօր նորօքեալ և գեղազարգեալ ազա ՚ի կոստանդեայ որդւոյ նորա և կրկին պարսպօք շընապատեալ կոչեցաւ սուրբ Սոփիա, որ է ինապունիւն ասպառածային կամ սուրբ։

(3) Յօրինակիս Դիոնիս, միւս թարգմանութիւնն Թէոդորոս կոչ։

դարեն՝ ՚ի զքօսանս մարդկան . խոկ ժամանակակից բանիւ զարդարեն :

Վրդ յայտմ ժամանակի երեեցաւ Վրիսս  
Երեց աղէքսանուրացի ՚ի մէջ եւթն երիցանց,  
զոր եգիտ զէն սատանաց , և ջանացր կրկնել  
զարարածոց երկրապատութիւնն , զի ետ նը-  
մա տոել զորդին Վրտուծոյ արարած : Եւ կա-  
յին նմա այլ համախոհք վեց , զոր ցուցանէ  
թուզլմն այն զոր գրեաց առ Եւսեբի նիկո-  
միդացի , որը են այսորիկ . Եւսեբիսս Կե-  
սարու (1) , և Յօհոնդոս Կառոդիկեայ , Յուլիա-  
նէ (2) Երոյ Եպիսկոպոս , Վթանաս Վնաւար-  
չաց , Վրիգոր Տարութոյ , Վթիսս Խոդիոյ (3) ,  
Եւ յորժամ յայտնեցաւ չարութիւնն նորա ,  
նզովեաց զնոս Պետրոս Եղիսկոպոս (4) . և նա  
սկսաւ զբաղում տունելիւր խորհրդակիցս .  
ԴՎարիս քաղկեդոնացի , զԵւսեբիսս նիկոմի-  
դացի , և զԵլիստոս Եպիսկոպոս Եգիսկոպուացի ,  
որ և ՚ի ժամանակ հալածմանն զոհեալ էր ,  
և լուծեալ յաստիճանէն , և զՀիմալէս , և  
զայլս բազումն :

(1) Այն է հեղինակն եկեղեցական պատմութեան զորմէ  
բազումք Արիստան տոեն լինել , որ ատպնջականնեաց խոկ  
զՎարիսս ՚ի մեկնել նորա Աղէքսանուրիոյ , և նզովեցաւ յեր-  
կարդ ժողովոն նիկիոյ ՚ի հինգերորդ նստին :

(2) Յօրինակիս Փռ-Լիտէ :

(3) Համարի թէ զթեովեռաց իշամի տոել . որ Եպիսկո-  
պոս էր Մարմարիկոյ որ ՚ի Լիբիս . զոր տառափոխու-  
թեամբ Լիգիս դնէ :

(4) Պետրոս էր Պատրիարք Աղէքսանուրիոյ որ մկայեաց

Եւ ՚ի սմին ժամանակի եղեւ շարժ ստու-  
տիկ յշգիպտոս , և զբազում շինուածս բը-  
նակչքն ապականեաց , զշարժումն աղան-  
դին (Արիստի) նշանակելով : Եղեւ այլ ինչ  
պատառումն յեկեղեցի վասն Օատկին . զի  
կողմանք արեւելից ընդ Հրեայսն տօնէին ՚ի  
չորեքասահն լուսնին , և կողմն արեւմաից  
միշտ ՚ի կիւրակէի : Եւ յայսմ ժամանակի  
նախ Աղեքսանդր արար ժողով Աղեքսան-  
դրիս բազմութիւն եպիսկոպոսաց , և նզու-  
մաց զիւրիոս և զամենայն խորհրդակիցո-  
ւոր : Եւ գրեաց զանէծն և ետ տանիլ ըզ-  
նա յամենայն երկիր , բայց ոչ շիջանէր հուրն  
ապականիչ , մինչեւ եհաս բանն առ թագա-  
ւորն կոստանդիանոս . և նա տրոտմեցաւ  
յոյժ և գրեաց թուղթս առ Աղեքսանդր ե-  
պիսկոպոս և առ Արիստ հաշտութիւն առ-  
նել ընդ միմեանս , և զչար կարծիքն բառ-  
նալ ՚ի մոտաց Արիստի : Եւ ոչ այսու խաղա-  
զէր պղտորումն եկեղեցւոյ . և սկսաւ տա-  
րածանիլ աղանդն , և հարկ եղեւ Անծին  
կոստանդիանոսի ժողովոյ հրաման տալ ընդ  
ամենայն երկիր , ժողովիլ ՚ի Նիկիա Շիւթա-  
նացւոց : Եւ ժողովեցան երեքհարիւր ութ  
ետան Եպիսկոպոսաք . և գլխաւորք էին այ-  
սոքիլ , Եւսիոս կուռուաբիոյ , Բիդոս և Շի-  
յամի Զ11 : Ասրա են նամակքն գրեալ առ Ակակիոս ՚ի վե-  
րայ հաւատոյ : Տես ՚ի ձեռագիրու

գեղ (Վիկենդ) երիցունք փոխանակ Պապուն Հռոմայ, Աղքատանդր Աղքատանդրու, Երիտակէս մեծ Հայոց և վարք Հայոց, Յուլիոս Աթբաստիոյ, Եւտոտաթէսս Կնտիոքու, Յակովը Ածբնայ: Եւ շնորհաց թագաւորն մեծ և ընդարձակ ապարանս, ուր նստէին ժողովն . և ինքն յոտն կացեալ անձամբ սպասաւորէր: Եւ նոքա տեսին շնորհս աստուածային յերեսս թագաւորին, և եղին նմամբոռ ՚ի մէջ իւրեանց, և տղաչէին նստել. և ոչ լուաւ նոցա, այլ կոյր և ծառայէր ըլք պէտօն և լսէր զբանս նոցա: Եւ էին ընդեպիսկոպոսունս երիցունք և սարկաւագունք հազարք և բիւրք . և թագաւորն սպաշտէր զամենեսեան իւրովք ծախիւք ՚ի քսանէն իարամայ մինչև ՚ի յութեւտան Հիւլիանայ ամսոյ:

Եւ զառաջինն սկսան քննել բանաւորքն (տրամաբանք) և հուետորքն իմաստասիրական ոճով, և բազումք երթային զհետ նոցա: Վագա յարուցեալ ոմն մանկագոյն իշխան առէ. «Վրիստոս և Վռաքետլքն ոչ աւանդեցին մեզ բանս արուեստաւորս, այլ հաւատ հաստատուն, որ պահի գործովք առաքինութեան: » Եւ ապա լոեցին նոքա, և թողին յեկեղեցականքն . և նոքա եղին զահման Վռաքելոցն՝ հաստատելով զնոցայն: Եւ բազումք անհաւան լինէին, և թագաւորն հաներ զնոսա ՚ի թուց ժողովոյն, և

Ճշմարտոք լնոյր զթիւն։ Եւ էին ոմանկը որ  
ետուն թուղթս հակառակութեան և նա-  
խանձու միմեանց առ թագաւորն. և նա հաշ-  
տեցոյց զնսսա և այրեաց զմուղթ վիճա-  
բանութեանն։ Եւ աղաչեաց թագաւորն  
՚ի միասին կատարել զտօն Յարութեանն Քր-  
քիստոսի, և զկիւրակէսն մեծարել ժողովով  
և պարապմամբ գործոյ։ Եւ այնպէս սահ-  
մանեցին յաւուր կիւրակէի տօնել զՅարու-  
թիւն Քրիստոսի Կոտուծոյ մերոյ զկնի հին  
Օտակին։ և պատուել զկիւրակէսն դա-  
տարկացեալ, ըստ կանոնաց Առաքելոցն շա-  
տանալ աստուածային գրովք և ոչ վայրա-  
պար գործովք։ և ՚ի շաբաթու յիշատակ  
Յարտիրոսաց կատարել։ Եւ ինքն թագաւու-  
րըն սահմանեաց զանարգողն քահանայից և  
եպիսկոպոսաց չար մահուամբ սպանանել։  
Ք.քսան ամի Կոստանդիանոսի եղեւ ժողովն,  
և լինին յԵղամայ հինգ հազար ութ հարիւր  
երեսուն և երեք ամբ։ Եւ արձակեցաւ  
ժողովն պատուավ և պարգեւոք թագա-  
ւորին։ և նզովեցան զկնի Արիոսի՝ եպիսկո-  
պոսն՝ Նիկոմիդու Եւսեբիոս, Թէոդնիոս ե-  
պիսկոպոս՝ Նիկիոյ, Արիոս՝ Քաղկեդոնի,  
Թումաս Արկտակի<sup>(1)</sup>, զլսաւոր արք։

Իսկ թագուհին Հեղինէ երազովք տես-

(1) Ընթերցիք Թէոդնաս Մարմարիկոյ եպիսկոպոս, զոր  
վերագոյն Աթիոս Ափդիոյ կոչեաց։

լեան եւ յիշրուսաղէմ հանդերձ Այեղետու  
բոսիւ Հռոմայ հայրապետիւն, և եգիտ ՚ի  
վերայ գերեզմանին պատկեր Ըստղիայ, որ  
է Եփրոդիտէս. և տւրք Խօսչն Քրիստոսի  
թաղեալ կայր ՚ի բաղաւմ ժամանակաց, և  
տանջեալ զնորեայն եգիտ Յուդայիւ զիսա-  
ըն: Եւ եր եպիսկոպոս Եշրուսաղէմի Այր-  
կոս անուն, և շինեալ զեկեզեցիսն ետ ցՈյր-  
կոս: Եւ արար դասա կուսանաց և կրօնա-  
ւորաց Եշրուսաղէմ. և իւրովք ծախուք  
խնամէր զնոսա:

Տայց Արիոս ՚ի ձեռն ոմանց կեղծաւու-  
րաց խաբեաց զթագաւորն զի տեսցէ զետ  
և լուիցէ ՚ի նմանէ դաւանութիւն, և հրա-  
մայեաց թագաւորն: Եւ նա գրեաց կոնդակ  
մի մեծ զՆիկից դաւանութիւնն, և փոքր  
մի այլ զիւր հայհոյութիւնն, և ունելով  
թագուն ՚ի ձեռն, ետ (զմեծն) ցթագաւորն,  
և ասաց. « Քան զայս աւելի ես ինչ ոչ դա-  
ւանեմ: » Եւ յորժամ առ ՚ի թագաւորէն  
զմեծ կոնդակն ՚ի ձեռն, յայն որ ուներ բզ-  
փոքրն, յորում եր գրեալ իւր հայհոյութին,  
ասաց. « Եզրով սաստիկ ՚ի վերայ՝ թէ այլ  
աղդ փառաւորեմ զԵստուած քան զայս որ  
աստ գրեալ է: » Եւ հաւասաց թագաւորն  
մինչեւ Եպոտուած խայտառակեաց զետ պա-  
տառմամբ: Եւ առաւել հաստատեցաւ ՚ի  
հաւասաս թագաւորն և յոյժ խնամով գթայր

յեկեղեցիս, և աղաստ արար զեկեղեցիս ընդ  
ամենայն երկիր, և ասլրանք և մուտք եկե-  
ղեցւոց և առանց հարկաց . « Եւ ունիցին,  
ասէ, ամենացն եկեղեցի զհին և զնոր Կտո-  
կարանս լիով, և որբք և այրիք կացցեն ՚ի  
ծախս եկեղեցւոյն . և գիտունք եղիցին ե-  
կեղեցականքն Վատուածաշունչ գրոց . և մա-  
սքն ինչ յաստեղաբաշխութենէ կալցի եկե-  
ղեցի զումարական արհեստն, զի մարթասցին  
զարեւ զժամանակս տօնից և զմոլորակացն,  
և զայլ բաջազմունու աստեղագիտութեանց  
մի ընկալցի եկեղեցի : »

Եւ Կոստանդիանոսի երեք որդիք էին .  
առագ որդին անուամք հօրն (Կոստանդին),  
և միջնոյն անունն Կոստան (Կոստան) և կրո-  
մերցն անունն Կոստոս (Կոստանդ), որ և ա-  
րար զնասա կեսար<sup>(1)</sup> : Եւագ որդին պահեոց  
զուղղափառութիւնն, նոյնպէս և կրտերն  
մինչեւ ցմահ . և զաւագ որդին կացոց ՚ի  
Կոստանդինուազօլիս, և զմիջինն յարեւելից  
կաղմն, և զիքսերն ՚ի Հռոմ : Յայսմ ժա-  
մանակի եղեւ սկիզբն հաւատալց Հնդկոց  
և Վրաց<sup>(2)</sup> : Եւ կազմեաց Կոստանդիանոս  
հանդերձեղէն եկեղեցի շրջեցուցանեւ ընդ-

(1) Յըմթացս գրոցս այլ ընդ այլս զնին անուանք որ-  
գուցն Կոստանդիանոսի վասն կարի յայտ մերձաւորութեան  
ժայնիցն . վասն որոց և շփոթին բազումք ՚ի պատմաբանից :

(2) Մովսէս Խորեն . Բ. · 85—Սոկրատ . ԻԳ · ԻԴ :

ինքեան . և շինեաց յԱնտիոք Եկեղեցի մեծ  
ութանկիւնի : Եւ շինեաց կամուրջ ՚ի վե-  
րայ Տանհաւիս գետոյ , և անցուցեալ զզօրսն  
՚ի վերայ՝ գնաց ՚ի Վիլիւթացիս որ են Ուուղը,  
և կոտորեաց զնոսա մասամբ , և զայլսն դար-  
ձոյց ՚ի քրիստոնէութիւն :

Յայսմ ժամանակի Եկն Շապուհ արքայն  
Պարսից ՚ի Վծրին , և դարձաւ ամօթով : Եւ  
Յակովը ուռհայեցին ասէ , թէ և կոստան-  
դիանոս կամեցաւ գնալ ՚ի վերայ Պարսից ,  
և Եկն ՚ի Ախիոմիդիա՝ հիւանդացաւ , և խնդ-  
րեաց միրտութիւն և մկրտեցաւ , զի չեւ էր  
մկրտեալ , քանզի ակն ունէր ՚ի Յորդանան  
մկրտիլ : Եւ արար կատկ Երից որդւոցն , և  
ետ զկտակն յերեց մի արխանոս Եւսեբի ա-  
նուն . և ժամանակն (հասակն) կոստանդիանո-  
սի վաճառւն և հինգ ամ . թագաւորեալ ե-  
րեսուն և երկու ամ՝ մեռաւ խաղաղութը  
՚ի մեծ կիւրակէն Պենտէկոստէին , ՚ի քսան  
երկու Խար ամսոյ : Եւ տարեալ զմարմինն  
՚ի կոստոսնդինուպօլիս՝ եդաւ յեկեղեցւոջ  
սուրբ Առաքելոցն :

Եւ կտակաւագ որդւոյն՝ ամոռն կոստանդ-  
նուպօլիս , և միջնոյն Վնտիոք և արեւելից կող-  
մբն , և կրոերոյն՝ Հռոմ : Եւ ՚ի մահուան օրն  
միջին որդին առընթեր հանդիպեցաւ ՚ի Ախ-  
իոմիդիա , և առ զկտակն յերիցուէն . և երեց  
որդին կոստանդիանափ Եկն յաշխարհն կըր-

սեր Եղբօրն՝ գնալով՝ ՚ի Հռոմ։ Եւ կըսեր  
որդին Կոստոս կեսար էր կարգեալ զ՛Դաշ-  
մատիոս ՚ի Հռոմ, որ էր Եղբայր մեծին  
Կոստանդիանոսի։ Այս Դաշմատիոս սպան  
զլրատանդիանոս՝ զաւագ որդին Կոստանդի-  
անոսի առանց կամաց կրտսեր Եղբօրն։ և  
Կոստոս սպան զ՛Դաշմատիոս փոխանակ ըս-  
տանանելոյ նորա զթագաւոր Եղբայրն իւր-  
։ Եւ ունէր Դաշմատիոս երկուս որդիս, ըզ  
Դալոս և զՀՅուլիանոս։ կամեցան և զնոսա  
սպանանել, և ոչ սպանան, զի Դալոս հի-  
ւանդ էր և Յուլիանոս աղայ, և զերծան  
այսու սբառձառաւուս։ Եւ յետոյ հաշտեալ  
ընդ նսաա՝ եդ ՚ի դպրոց ՚ի գիւղ մի Վակալի  
անուն, մօտ ՚ի Կեսարիա Հայոց։ Եւ յոր-  
ժամ զարգացան ուստամբ, եղեն վկայասէրք  
և սկսան շինել վկայարան սրբայն Վամասայ,  
և կողմն Դալոսի հաստատէր, և կողմն Յու-  
լիանոսի փլանէր, զոր հանդերձեալ էր լի-  
նել գուշակէր։

Եւ Կոստան միջին որդին զԴալոս կե-  
սար կարգեաց յԵնտիոք, որ և ապստամ-  
բեաց ՚ի վերոյ թագաւորին։ Եւ լուաւ  
թագաւորն և առաքեաց սպան զնա, և ըզ  
Յուլիանոս եդ ՚ի բանտի։ և թագուհին  
Եփսիա (Եւսեբիա) բարեխօս լեալ առ թա-  
գաւորն՝ եհան ՚ի բանտէն, և առաքեաց  
յԵմէնս ուսանել ուսումն իմաստասիրու-

թեան։ Եւ անդ էին Գրիգոր Աստուածու-  
քանն և Բարսեղ, և իւր եղբայրն Գրիգոր  
Նիւտացին։ Եւ մարդարէացան վասն Յու-  
մանոսի զար ինչ լինելոց էր։

Յայսմ ժամանակի կոստան որդին կոստան-  
գիանոսի Վեծի շնուաց քաղաք մի յերկրին  
Անդեւ կիայ, և անուանեաց զնա կոստանդնու-  
պօլիս<sup>(1)</sup>։ Եւ 'ի վեց ամին կոստոսի բռնացաւ  
Վագնենտիոս, և եհան'ի կոստոսէ զիտալիան-  
զնիրիկէ, և թագաւորեաց 'ի Անդրմի։ Եւ 'ի  
գաւմանէ զօրացն սպանաւ կոստոս։ Եւ ընդ  
նմին սպանաւ եղբօրորդին իւր կոստանդիա-  
նոս, որ երեք ամ թագաւորեալ էր ընդ նմաւ  
Եւ լուեալ զայս կոստանց և զայրացմամբ  
լցեալ չսքաւ և սպան զՎագնենտիոս, և  
ընդ նմին սպան զԱռվիլիս, որ էր յազգէ  
թագաւորաց, որ ընդ Վագնենտի էր թա-  
գաւորեալ։ Եւ յաւուր սպանման նոցա ե-  
րեւեցաւ նշան խաչին յարեւելից կողմո-  
նէ։ Եւ եմուտ թագաւորն 'ի Հռոմ երե-  
ւելի փառօք, և դարձեալ 'ի կոստանդնու-  
պօլիս՝ արար զՅուլիանոս կեսար, և ետ նը-  
մա կին զքոյր իւր զԱլինէ (Հեղինէ), որ  
կոսդիա կոչեցաւ։

(1) Միխայէլ և կամ թարգմանիչք և ընդօրինակողք որ-  
խացին աստ յանուանակոչութեան քաղաքիս, զար ամանք ըն-  
թեռնուն և կինողչիս։ Ազուլֆարան ասէ, եթէ կոստան  
կոցորն ընդարձակեաց զԱմիթ և կոչեաց զնա Աւագոստ (Քը-  
րն ։ ասք ։ յեր ։ 64 ։ )

Հայում ժամանակի Նրեացքն որ էին 'ի Պաղեստինէ , ապստամբեցին և սպանին ըզ-զօրականս Նուօմայեցւոցն . եւ առաքեաց թագաւորն և կոտորեաց զնոսա . Իսկ Յուլիանոս գնացեալ 'ի Գալիա (1) ընդդէմ բարբարոսայն , յաղթեաց , և հոգարտացեալ թագաւոր քարոզեցաւ . 'ի զօրացն (2) . Եւ լուեալ զայտ թագաւորն կոստան , զորհու-րեցաւ և մկրտեցաւ 'ի Օսյուսէ Եսիխոկո-սպոսէ (3) Կնարիոբու , որ էր արիանոս . և ել ընդդէմ Յուլիանոսի . և ընդմէջ Կիլիկիոյ և Կապագովիլիոյ մեռաւ՝ կեցեալ ամս քառա-սուն և ութ , և թագաւորեալ ամս քսան և հինգ : Եւ առ թեղետ խարեցաւ 'ի Աերի-սոէ արիանոսէ երիցու և սիրէր զէրիանոսքն :

(1) Գալիա է Գաղղիացւոց երկիրն . Gaule անուանեաբ 'ի հայոց :

(2) Յուլիանոս 'ի Բեննա քաղաքի Գաղատացւոց լեալ , ե-տես երազ , յորմէ գրգռեցաւ տալ արշաւոն ընդդէմ կա-տանայ . որ ըստ գուշակութեան իմիք և զելս վեմանէն՝ ոչ էր ապրելոց անդը քան զամն 561 : Յուլիանոս առ 'ի յանկու-ցանել զիւրեւ զզօրականու քարոզեաց ազատութիւն կրօնի-և ինքն իսկ առ ժամն կեղծաւորեցաւ դրբիստոնեռութիւն : Այլ հասեալ 'ի Լիւրիկէ , յայտնի գաւանեաց զկուռաս . և 'ի թրտոկէ հասեալ , առ քաղաքս բազումն : Յայնմ ժամանա-կի կոստաս որ ընդդէմ Պարաից կայր 'ի մարտս սրատերազ-մաց շաղեալ . եդ 'ի մոտի գառնալ Անտիոք . և ունել զդէմ շահատակութեանցն բռնաւորին :

(3) Եացյլու անուանեալ առ պատմագիրս . էր Եսիխոկո-սպոս Անտիոքաց յարիանոսաց , զորմէ ասի մեռեալ յանզէզ-ջութեան :

այլ արարած ոչ ասէր զորդին Վատուծոյ, այլ  
ծնունդ Նօր՝ բայց կրաեր ասէր։ Եւ սա ետ  
կանոնել առանց հաղորդելոյ ոչ ելանել ՚ի  
պատերազմ՝ առանց հոգեւոր վահանին,  
այլ ՚ի ժամ մահուանն զղացաւ և դաւա-  
նեաց զուղղառառութիւնն և վճարեցաւ։

Իսկ Յուլիանոս էաւ զթագաւորութիւնն  
կեսար լեալ՝ ամս հինգ, և թագաւորեալ  
ամս երկուս։ Եւ զայն եւս գտեալ է իմ,  
որ պաեն, թէ Յուլիանոս ՈՇՆ կոստանդիւ-  
անոսի եղբօրորդի է։ Քանզի ասեն, թէ  
երկու եղբայր ուներ ՈՇՆ կոստանդիանոս  
՚ի հօրէ կողմանէ, և ամափոս և կոստիոս<sup>(1)</sup>.  
և լամափոս իւր անուամբ որդի մի ուներ.  
և կոստոսի եղեն երկու որդի, Գալլոս և  
Յուլիանոս։ և Գալլոս ապստամբեալ սպա-  
նաւ։ և Յուլիանոս կեսար լեալ և յաղ-  
թեալ բարբարոսացն և անցանէր ընդ փողոց  
մի և սպակ հիւսուածոյ անկաւ ՚ի (մերայ)  
գլխոյն։ և այն եղեւ սպատճառ ոմանց ասե-  
լոյ, թէ յաղթութեան նշան է, և այլք կո-  
րստեան ասէին նշան։ Վ. յլ ես զառաջին  
պատմութիւնն ստուգեցի. քան զերկրորդու։  
Բայց զի վարժեալ էր Յուլիանոս կախար-  
դութեամբ և զիւաց ծառայութեամբ, ըդ-

(1) Լամփոսն է Գաղղմատիոս՝ եղբայր մեծին կոստանդի-  
անոսի, և կոստիոսն է Յուլիոս կոստաս միւս որդի նորա և  
հայր Գաղղմասի և Յուլիանոսի։

յաղթութիւն իւր և զմահ թագաւորին (1)՝ ի գիւացն համարէր : Եւ պղտորեաց զկարգ թագաւորութեանն , և ագանէր հանդերձա փիլիսոփայութեան և ծաղը առնէր զծիրա նիմ՝ զգենլով մաշկեակս առիմ : Եւ սա սկը սաւ ծածուկ զազբիւրակունան զոհիցն ա րեամբ պղծել , և ցանել տայր ՚ի վերայ ա մենայն կերակրոյ , զի կերողքն և ըմպողքն զնորին կամսն ստացին : Եւ ՚ի մտանելն ՚ի կոստանդնուպօլիս՝ Եպոնիարարութեաւ :

Եւ եկեալ Յնտիոք սղացոյց զդահեւ կանս , և առատացոյց զհաց և զգինի . և նոքա արարին նմա նախատինս՝ ասելով ցնա ամբոխն . “Օ Երկայն մօրուսդ ընդէր պա հես պարապ . կտրեա և արա չուան և դիր յեղջերսն զենյեացն քոց , և դովաւ տարնը ւէր դիւացն չաստուածոց քոց : ” Եւ նորա բարկացեալ կամեցաւ սրով մաշել զբաղաքն , և շիջոյց զնա իմաստասէրն | իրիանոս (2) ասե լով . թէ “Չպարտին քեզ մահ , այլ նախա տինս փոխանակ նախատանացն քոց . ” և ժո զոմեալ զնոսա նախատեաց զնոսա և եթող զնոսա : Եւ կայր ՚ի լեառն Յնտիոքու վանք մի Պաւուլա անուն (3) , և անդ կայր գե-

(1) Այն է կոստաս կայրը Բիւզանդիոյ որ մեռաւ ՚ի պատերազմին ընդդէմ Յուլիանոսի զոր պատմեաց վերադոյն :

(2) Լիբանաս կամ Լիբանոս էր փիլիսոփայ և վարժապետ հուետորութեան որբոյն Յովհաննու Ռոկերերանի :

(3) Միւս թարգմանութեան օրինակքն ունին Ասորաւ :

քեզմանն Խաբելայ Եպիսկոպոսին . և Յու-  
լիանոս կամեցաւ 'ի տեղւոջն կանգնել ըդ-  
պատկերն Ապողմնի , և արկանել վիճակ  
վասն Երթարց նորա 'ի Պարսս , և ոչ ետ  
ամա պատասխանի դեւն . և գիտաց թէ  
վասն Խաբելայ է , և հրամայեաց զնա հա-  
նել և տանել 'ի քաղաքն . և քրիստոնէիցն  
տռեալ խնդութեամբ տարան սազմօսիւք և  
լապտերօք . և գեւքն սկսան խօսել ընդ  
նմա բարիս (1) : Եւ նորա զուարձացեալ եղ  
առաջի պատկերին Երկու սեղան . զմինն  
ելլց խնկով , և զմիւնն սոկով . և եղ տ-  
ռաջի հուր , և ասէր . “ Ով արկանէ ափով  
մի խունկ 'ի վերայ հրոյ , թող առնու ա-  
փով մի սոկի : ” Եւ բազումք 'ի սպարզամտաց  
խաբեցան և առին զոսկին . և յետ այնորիկ  
յուտել և յըմպել նստան , և ըստ սովորու-  
թեանն նկարէին զիսաշն 'ի վերայ գինւոյն . և  
ոմն ասէ . “ Օ ի՞նչ է այդ , յետ ուրացու-  
թեանդ խաչակնելլդ : ” Եւ նորա զարհու-  
րեալ ասէին . “ Ե՞րբ ուրացաք : ” Եւ նա ա-  
սէ . “ Յառնուլն զոսկին յետ խնկոյն : ” Եւ  
նորա ընկեցեալ զգինին և արտաքս գիմեալ  
ընկեցին զոսկին յերեսս թագաւորին՝ քրիս-

հանորի և թէ իցէ տեղի կռոյն Ապողոնի 'ի Դամինի մերձ  
յԱնոնք քաղաք . խոկ յօրինակիս մերում գրի Պաւուրա ,  
որ մերձագոյն և անուան որբոյն Բաբելոյ քան Ապողոնի :

(1) Յովհ . Ասկէբերան . 'ի սուրբն Բաբելոն . ԳԼ . ԺԵ .

տնեաց ասելով զինքեանս։ Եւ թոյլ ետ նոցա զտանջելի ՚ի ժաման յայնմիկ, զի մի անուն մարտիրասի առցեն։

Այս փոխեաց զանուն քաղաքաց, զինքարիա կոչեաց Շաղկէ, և զինքատանդինուազոլս՝ Շիւզանդիա (1). և շինեաց հիւրանոց, աղքատանոց և աեզի որբոց և այրեաց դարմանոյ խաբէութեամք։ Եւ հրամայեաց ընթեռնուլ զտուասպելս հեթանօսաց, և շարդելուլ զորդիս քրիստոնէից յարտաքին ուսմանց։ Եւ ելեալ յիշտիոքայ սպառնալեօք թէ դառնայ ՚ի Պարսից խաղաղութեամք, և առաքեաց յիշուհա սպատրաստելինչ նըմա, և ոչ ընկալան։ Եւ գնացեալ ՚ի խռուան զոհեաց դիւաց, և պատուեաց զըրբեացն որ անդ կային։ և հրամայեաց երթալ յիշուսազէմ և շինել զծաճարն և զոհել ըստ օրինացն։ Եւ նոքա առեալ երեք հազար մալթ կիր և ժողովեալ ՚ի ցրմանէն և գնացեալ սկրան շինել. և հողմ ուժգին ցրուեաց զկելին, և շաղախտվ կամեցան շինել, և իջեալ հուր այրեաց զշինուածսն և զգործիսն։ Եւ Նըրեայքն որ յիշուհա, յարեան ՚ի վերայ քրիստոնէիցն և սատակեցան ՚ի նոցանէ։

(1) Անունն Բառին եթե սպարտ իցէ ընթեռնուլ Մաժան, ոչ եթե փոխեալ համարին անուանակոչութիւնք յիշեալ քաղաքաց։ այլ զտուազին անուանն զօր ՚ի հեթանուութեանունէին, նորոգեալ։

Խակ Յուլիանոս յամեւալ՝ ի խառան՝ և  
գարձեալ զոհեաց դիւաց առաջի կոոյն զոր  
կանգնեաց ՚ի խառան. և մինչ զոհէրն, ան-  
կաւ թագն ՚ի գլուցն, և ձին զոր առընթեր  
ունէին, կոխեաց զնա և պատառեաց զհան-  
գերձն. և ասացին բարեկամք իւր, թէ ավա-  
սըն քրիստոնէիցդ է զոր զհետ քո տանիս առ  
Եւնա գարձոյց քսան և երկու հաղար ՚ի զօ-  
րացն. բայց զնշան խաչին զոր տանէին ըստ  
(սովորութեան) առաջնոցն, ոչ գարձոյց, զի  
ասաց. « Վ դիտէ, թէ յաղթեն մեղ Պարսք,  
պարտութիւնն խաչին իցէ. ո և տարաւ ընդ  
իւր զօրք երեք հարիւր իննառւն և հինգ հա-  
զար պատերազմով, բաց ՚ի սպասաւորացն  
և ՚ի զործաւորացն. և ուր և երթային՝  
կանգնէր կուռս և զոհէր, և հարցանէր, և  
սաէին գեւքն, թէ « Հոմագունդք գամք ընդ  
քեզ աստուածոց բազմութիւնք. և տամք  
քեզ զճակատագիրն Աղէ քսանդրու և զբախ-  
արն, և Արէս աստղն կայ ՚ի գլուխ զօրացդ<sup>(1)</sup>: առ  
Եւ եկն ՚ի Տիսքոն և աւերեեաց: Եւ ելեալ  
Հապուհ գնաց փախստական, և առաքեաց  
առ նա տալ նմա գանձ բազում զի գարձցի,  
և ոչ կամեցաւ. և ազա ժողովեալ զՊարսա,  
եկն ՚ի վերաց Տիգրիս գետոյ. և գնացին  
պատգամաւորք առ երկոսին, և ոչ կարացին  
առնել խաղաղութիւն: Եւ յանկարծակի

(1) Աշէս ըստ գիցաբանից էր շաստուած պատերազմի:

եկն նետ մի դիպեցաւ փորոտեացն Յօւլիա-  
նոսի, և վայթեցաւ արիւնն . և առեալյա-  
բենէն ափովին՝ ձգեաց ընդ երկինս ասելով .  
“Յաղթեցեր, Դալիլեացի . արդ առ ՚ի վե-  
րայ Աստուածութեանդ և զթագաւորու-  
թիւնս : ” Եւ ինքն ոչ ագանէր զրահս և  
սաղաւարտ՝ հպարտացեալ դիւացն խոստ-  
մամբ . այլ զնետն ՚ի յօդիցն էառ , թերեւս  
ոչ ՚ի մարդկանէ , այլ ՚ի զօրութենէ Աստու-  
ծոյ . և կատարեցաւ մարդարէութիւնն որ  
եղեւ նմա յԱնտիոք . զի յորժամ գՔրիս-  
տոսի պատկերն ՚ի տանէն տեռատես կնոջն,  
ուր բազում բժշկութիւն լինէր , քակել ետ  
Յօւլիանոս և կանգնեաց ՚ի տեղին կուռք ,  
և իջեալ հուր՝ սցրեաց զկուռամն<sup>(1)</sup>. և եկեալ  
պատմեցին նմա մինչ մտանէրն յԱնտիոք . և  
նա ՚ի ժամն ետես վարդապետ մի ՚ի քրիս-  
տոնէիցն , և ասաց ընդ լիբիանոս իմաստա-  
սէրն . “ Հարց ընդ վարդապետդ , թէ ո՞ւր  
է ձեր հիւսանն որդին : ” Եւ պատասխա-  
նեալ նորա ասէ . “ Յարուեսան իւր կայ . Բա-

(1) Եւսեբիոս ՚ի գիրս որ վասն Եկեղեցւոյ (Ե. 17) պատ-  
մէ զպատկերէս , զոր կինն տեռատես կանգնեալ էր . ասէ ,  
՚ի յիշատակ սքսնչելեացն զոր եցոյց նմա Տէր . ՚ի գենադա-  
քաղաքի առաջի գրաց տան իւրոյ ՚ի բարձր վիսի , և էր սիր-  
ղնձի : Զայս պատկեր ետ Յօւլիանոս կործանել , և ՚ի տեղի  
նորա կանգնեալ պատկերս կռոց , որ ՚ի կոյժականց մաշեցաւ :  
Եւսեբիոս իրը ականատես պատմէ զպղնձի պատկերէս , որ  
կայր , ասէ , տակաւին յաւուրս իւր :

— Ա (դադաղ) շինէ թագաւորիդ մահուանն. և լուս եղեն : Եւ նոյն բանն ել ՚ի զլուխ . և կտղմեցին լաւագ կամք և զօրութեամբ հիւսանն Արդւոյն , և եղին ՚ի ներքս :

Եւ ընտրեցին այր մի զօրագլուխ (1) և ասացին . «Ձագաւորեա՞ դու փախանակ Յուլիանեայ ՚ի վերայ մեր . ո և նա ասաց . «Ես դիւապաշտից ոչ թագաւորեմ : » Եւ նոքաընդ մի բերան ասացին . «Եւ մեք ամենեւքեան քրիստոնեայք եմք : » Եւ ետ դնել զլօգագն ՚ի զլուխ խաչին . և ասաց . «Եկայք երկրապագեցեք . ո և ամենեքեան երկրապագեցին . և ապա առեալ եդ ՚ի զլուխ իւր : Եւ վասն սովոյն և սղութեանն արարին սէր ընդ Պարսիկս . և ետուն զիջքին առանց մարդկանն , հանելով ՚ի նմանէ զբազմութիւն քրիստոնէից բնակելոցն ՚ի նմա : Եւ դարձան՝ բերելով զմարմին անօրինին ՚ի Կիլիկիա , և պահեցին ՚ի սահմանս Տարսոնի անարգապէս : Եւ եթող Յուլիանոս ՚ի բանից իւրոց ճառս քառասուն :

Դակ Յութիանոս այր բարի և աստուածապաշտ ուրախ արար զքրիստոնեայս . և եղեւ մեծ ցաւոցն բժշկութիւն , բայց չեաք արժանի վայելման . ոչ յերկարեաց , այլ ՚ի մէջ Դաղատից և Շիւթանիոյ կալաւ զնացաւ երիկամանցն և մեռաւ՝ եւթն ամիսս

(1) Այս է Ցովանոս, զօր վոքք մի զինի կոչէ Յութիանոս :

միայն թագաւորեալ, և ոչ հասաւ ՚ի կրուտանդնուպօլիս։ Եւ եկեալ զօրքն ՚ի Նիկիա թագաւորեցուցին զլլ աղենտիանոս որ էր ՚ի Փանիոյ (Պանանիա), ՚ի Լապտալիոն քաղաքէ, այր իմաստուն. և կամեցան դնել նմա ընկեր, և տաէ ցնոսա. « Այդ չէ ՚ի ձեր կամքդ, այլ յիմն, դուք զիս ընտրեցիք, և զընկերն իմ ես ընտրեմ։ » Եւ հաւանեցան նմա. և նոսու իւր ընկեր զեղբայրն իւր զլլ աղէս, որ մկրտեալ էր յիւրաքանչ եպիսկոպոսէ, որ էր արիանոս, նորա դաւանութեամբն. և զնաեդ թագաւոր յարեւելից կողմանէ. և էր ջատագով արիանոսացն։

Եւ Վաղենտիանոս առ զշոօմ և պահեաց զհաւատն՝ Նիկիոյ, և զօրդին իւր ըշ Դրատիանոս օգոստոս քարոզեաց։ Եւ գլուխեալ Վաղէս յիգիպտոս ՚ի Վարկիանուպօլիս. և ՚ի հասանելի նորա անդ՝ եզեւ շարժ, որ այլ բնաւ չէր լեալ և ոչ լուեալ. զի՞ ՚ի շարժել ծովուն, եզարկ զնաւան ընդ սլարիսով քաղաքին. և դարձաւ ծովին և զնաց ՚ի ներքս քահամանոս իւր, թողեալ զտեղին։ Եւ ժողովեալ քաղմութիւն մարդկան յափշտակել ինչ ՚ի նաւացն, և դարձաւ ծովին և կը լաւ զամենեսեան և տարածեցաւ ՚ի վերայ ցամաքուն, և բազւմ քաղաքս և գաւառոս ընկղմեաց զապականութիւն Վաղեսի նշանակելով։ Իսկ Վաղենտիանոս յանդիմանէր

զեղբայրն վասն չարափառութեանն , և 'ի յոչ լսելն՝ բարկացաւ և ոչ տայր նմա օգնական պատերազմելնմա ընդ Գոթացիսն , ասելով . “Ոչ օգնեմ ես առն որ ընդ Արտածած պատերազմի : ”

Եւ ինքն Վաղենտիանոս չոգաւ ՚ի պատերազմ ՚ի Արմատիս , և զարհուրեցան Արմատացիքն , և խնդրեցին խաղաղութիւն ՚ի նմանէ պատգամօք : Եւ զարմացաւ Վաղենտիանոս ընդ գարշութիւն նոցա և ընդ տգիտութիւնն . և հարցեալ զնոսա և խմացեալ զի այնք որ առ նա եկին՝ ընտրելու գոյնքն էին , և բարկացաւ և ասաց . “Եղակ զշումնոյեցիք , որ թողեալ են ձեզ թագաւորութիւն և իշխանութիւն անասնոցդ . ” և մեծ աղաղակաւ քաջալերէր զզօրսն չառնել ընդ նոսա սէր , այլ բառնալ զնոսա . և ՚ի խստագոյն գոչմանէն պատառեցան երակը փողիցն , և մեռաւ ութսուն և չորս ամաց՝ թագաւորեալ ամս մետասան(1) : Այս արտաքոյ օրինաց երկու կին էառ . առաջին ըզ Աեւիրէ (Աեւերա) և երկրորդ զՅուստինէ դուստր Յուստիանոսի : Այս Յուստիանոս ետես տեսիլ և պատմեաց թէ յինէն ծիրանի նիւթ ելանէր , և էր իշխան . և լուեալ Վաղենտիանոս սպան զնա , զի մի ծնցի , առէ , թագաւոր . և յետոյ էառ զդուստր նո-

(1) Առկրատ . ԴԱ.

բա . 'ի նմանէ ծնառւ որդի մի , զոր յիւր ա-  
նուն կոչեաց Վաղենտիանոս , և երեք դուռ-  
տրբ , զԴալիէ՝ որ եղեւ կին Ո՛եծին թէոդոսի ,  
և 'ի նմանէ ծնան Արկադէոս և Անորիոս <sup>(1)</sup> :  
Եւ ՚ի մահուանն Վաղենտիանոսի չէր մօտ ա-  
ռաջին որդին Գրատիանոս , որ էր յառ աջին  
կնոջէն , այլք 'ի զօրացն թագ եղին 'ի գլուխն  
Վաղենտիանոսի որդւոյն փոքր , որ էր չորեց  
ամաց :

Իսկ Վաղէս արար զօրագլուխ զԴրատի-  
նոս և առաքեաց 'ի պատերազմ ընդ Գոթա-  
ցիս , և յաղթեցաւ : Եւ Վաղէս նախատեաց  
զնա , և Գրատիանոս ասէ . «Պարտութիւնս  
այս չէ իմ , այլ քո , զի պատերազմիս ընդ  
Գրիստոսի <sup>(2)</sup> » :

Յայսմ ժամանակի Ուաւիէ դշխոյն Տաճ-  
կաց բազում վիշտս հասուցանէր Հռոմայե-  
ցւոցն . և խոստանայր խաղաղութիւն , եթէ  
ձեռնադրեն գաւառի նոցա եպիսկոպոս ըդ  
Ուլսէս անապատաւոր : Եւ Վաղէս լուեալ

(1) Առկատ (ՂԱ) ոչ յիշատակէ եթէ 'ի գալիէ  
(Գաղզա) ծնան Արկադէոս և Անորիոս , քանզի սոքա ար-  
դարեւ յէլլոյ Պղակիտայէ 'ի միւս կնոջէն թէոդոսի եղեն .  
որ էր գուստը Անտոնի Սպանիացւոյ , որ եղեւ հիւպատոս  
յամի 582 :

(2) Յայսմ պատերազմի ոչ եթէ գրատիանոս՝ այլ Տրայե-  
անոս վարեր զպաշտօն զօրավարութեան . առ որ յանդիմո-  
նութիւնս արար Վաղէս յաղագս անյաջողութեամբ յետս  
գառնալց : Ամմիանոս Մարկեղիոս ՂԱ . 7 . 8 :

զայս՝ առաքեաց յանապատն ինդրել կրօնաւոր, որոյ անուն Վովսէս իցէ . և գոտեալ զոմին բերին առ նա . և ոչ կամեր ձեռնադրիլ յարիանոսացն , այլ յաքսորելոցն ուղղափառաց : Եւ հրամայեաց թագաւորն . և առեալ զեսլիսկոպոսութիւնն ՚ի հալածելոց ուղղափառացն , գնաց : Եւ ընդ երթալն նորա բազում Տաճիկք քրիստոնեայք եղեն , զի դըշխոյն Վաւիէ հռոմայեցի էր ազգաւ , գերեալ ՚ի Տաճկաց . և վասն գեղեցկութեան իւրոյ կին լեալ Տաճկաց թագաւորին . և յետ մահուան թագաւորին , ինքն ուներ զժագաւորութիւնն : Եւ վասն նորա բազումք դարձան ՚ի քրիստոնէութիւն (1) : Եւ յայսմ ժամանակի շինեաց Վաղէս Ռիմոն յՆոտիաք, որ է բանտ ուղղափառացն : Եւ յանկարծակի երեւեցաւ զօրք՝ գնալով ընդ երկինս մարմնաւոր տեսլեամբ : Յայսմ ժամանակի ծնաւ մա-

(1) Սոկրատ (ՂԴ) ՚ի հայ թարգմանութեան այլապդպատմէ զՄովսիսէ : Եւ , ասէ , Վովսէս արարացի ազգաւ , և հաւատացեալ ՚ի Քրիստոս , առանձնացեալ Հգներ յանապատի , սքանչալի լեալ առաքինութեամբն : Լուեալ սորա ըղպատերապք զոր տայր Մաւիա թագուհի ընդդեմք քրիստոնէից , երթեալ համոզէ զնա ՚ի խաղաղութիւն , և հաստատէ դաշինս սիրոյ : Տեսեալ զվարս սորա բռնադատեն ձեռնադրիլ ՚ի քահանայութիւն ՚ի Ղուկիսուէ եպիսկոպոսէ Առզէքսանդրիոյ , որ էր արիստական : Վովսէս արհամորհեալ զնա վասն աղջնոցոյն . ընդունի զձեռնադրութիւն յեպիսկոպոսաց անտի ուղղափառաց որ ՚ի հալածանո կոյին , և գարձեալ առ Մաւիա՝ քումն տայ հաշտութեանն :

նուկ մի յէնտաք միականի , որ ունէր չորս  
տաք և չորս ձեռք և մօրուք :

Յայսմ ժամանակի ելին Գոթացիքն և  
գերեցին բազում գաւառու , զիկիւթիա և  
զիթրակիա և զիշւսիա և զիակեդոնիա և  
զէքայիա և զամենայն Ելլադա . և Վաղէս  
փախեաւ ՚ի կոստանդինուպոլիս , և ամբոխն  
նախատեին զնա ասելով . « Տուր մեզ զէն և  
երթիցուք կուռեսցուք : » Եւ ել զայրաց-  
մոմք և սպառնացաւ նոցա՝ որ ՚ի գառնալն  
քակէր զքաղաքն : Եւ գնացեալ յազմեցաւ  
՚ի նոցանէ , և փախեաւ ՚ի գիւղ մի . և պա-  
տերազմողք բարբարոսաց պատեցին զգիւղն ,  
և նա թաքեաւ ՚ի տուն յարդի . և յուզեալ  
զնա ոչ գտին , այլ այրեցին զգիւղն և այրե-  
ցաւ նա ընդ յարդին , առ հաւատոցեայ յա-  
ւիտենական հրոյն(1) , և կեցեալ ամս յիսուն ,  
և թագաւորեալ ամս եւթնեւտան : Եւ առ  
զթագաւորութին Գրատիանոս , որ յաւուրս  
հօրն Վաղենտիանոսի Եւագրիակար էր ՚ի Հը-  
ռոմ . և սա կանգնեաց զուզղափառութիւն ,  
և արար հաղորդ թագաւորութեան խրոյ  
զիթէոդոս սպանիացի , որ նա էր քարտզեալ

(1) Պատմագիրք ոչ համաձայնին ընդ միմեանս ՚ի պատ-  
մէլ զեղանակ մահուան Վաղէսի : Սոկրատ ասէ . « Հասեալ  
յԱզրիանուպոլիս . հրով այրեալ սատակեցաւ անհաս ՚ի  
մարդկան գիտութենէ՝ թէ զիարդ և կամ զի՞նչ օրինակաւ  
հրով սպրեցաւ . » Դև : —Մոլսէս խոր . Գ . 55 .

յառաջագոյն թագաւոր զԴրատիանոս, և նոս  
փոխարինեաց և ետ նմա զԼոստանդինուազ  
լիս և զամենայն արեւելս։ Յայսմ ժամանակի  
շնեցաւ հրամանաւ սոցա Խասլայն։ Եւ ը-  
ւեալ բարբարոսացն զկորուսոն Վ աղէսի, ե-  
կին մինչեւ ՚ի պարիսպն կոստանդինուազօսի.  
և ելեալ թէոդոս կոտորեաց զնոսա, և գը-  
նացեալ յաշխարհն նոցա, արար զնոսա ընդ  
հարկաւ։ Եւ եղեւ խաղաղութիւն եկեղե-  
ցւոյ և աշխարհի զինի քառասուն ամի ա-  
րիանոսացն չարութեան (1)։

Յայսմ ժամանակի մեռաւ. Արտաշեր թա-  
գաւորն Պարսից, և առ զթագաւորութիւ-  
նըն Շապուհ որդի նորա։ Եւ յերրորդ ա-  
մին թէոդոսի սպանաւ Դրատիանոս ՚ի Վաք-  
սիմիանոսէ բռնակալէ ՚ի Հռոմ (2), և թա-  
գաւորեաց փոքր Վ աղենտիանոս ՚ի Հռոմ։  
Եւ թէոդոս և Վ աղենտիանոս մարտուցեալ  
ընդ Վաքսիմոսի բռնակալի, սպանին զնա,  
և ինքեանիք երեւելի փառօք մտին ՚ի Հռոմ։

(1) Առկրաս, Դէ։

(2) Կղեմէս Մաքսիմոս սպանիացի, եր բարձրագոյն պաշ-  
տօնեայ պատերազմի ՚ի բանակին որ կայր յերկրին բրիտա-  
նացւոց, համհարզ թէոդոսի, այլ ՚ի լսել զնորա դահակա-  
լութիւնն որ եղեւ ՚ի ձեռն գրատիանոսի, յարձակեալ ՚ի  
Գաղղիա և զհեւա մտեալ նորին որ փախուցեալ ՚ի Մաքսի-  
մոսէ ՚ի Լիոն քաղաք սպաստանել փութայր, զմահ ետ համ-  
բուրել ՚ի ձեռն ուրումն Անդրագաթ կոչեցելոց։ Սոկրատ  
գլխովին ոյլազգ պատմէ զմահ Գրատիանոսի, զոր տեսցես  
՚ի գիրս նորա, ՃԴ։

Եւ ապա եկն թէոդոս ՚ի կոստանդինուպօլիս, և առաքեաց լոգոտիկոս յարեւելը գործակալ<sup>(1)</sup>. և յորժամեկն յԱնտիոք, ետես անդ հակառակութիւն յեկեղեցին, և արար խաղաղութիւն և եղ զաթոռն ՚ի Վելետիոս։ Եւ ՚ի չորրորդ ամին թէոդոսի կամեցաւ սրբել զեկեղեցի յարիանոսացն . և արար մեծ ժողով հարիւր և յիսուն եպիսկոպոսաց . և գլխաւորք էին այսոքիկ։ Վելիոս Կնտիոքու, Տիմոթէոս Վղէքսանդրու, Ավերեղ Երուսաղէմի, սուրբն Ներսէս Հայոց Վեծաց՝ դարձեալ յաքսորանացն, Գրիգոր աստուածաբան կոստանդինուպօլիսի, և Գրիգոր նիւսացին . և նզովեցին (նախ) զաղանդն Արիոսի, և ապա զէյակեդոնին, որ իշխեաց յանդգնել և զսուրբ Հոգին արարած ասել։ Եւ հաստատեցին զհաւատն Նիկիոց, և յաւելին՚ի Հաւատուամբն վասն սրբոյ Հոգւոյն, զի այս խնդիր յետոյ շարժեցաւ<sup>(2)</sup>։

Եւ զինի տասն ամի եպիսկոպոսութեան

(1) Առբարդիսն ՚ի յցն լեզու զօրավար նշանակէ, և էր անուն նորա Շապուհ . որ եկեսլ յԱնտիոք ետես բաժանեալ զեկեղեցին ՚ի մէջ Մելետիոսի և Գաւլինոսի . իւրաքանչիւր սուանձինն կալեալ աթոռ : Գաւլինոս ոչ հաճեալ ընդ առաջարկութիւն Մելետիոսի : որ ասէր Երկուցն եւս աթոռոց մնալ մինչեւ ՚ի մահ . իսկ որ նախն մեռանիցի՝ բարձցի նորա աթոռ, վասն որոյ Շապուհ յանձնեաց զաթոռն ցՄելետիոսառեալ Գաւլինոսի զմի միայն եկեղեցի :

(2) Առկրատ . Ճ . ՃԱ : —Մովսէս Խոր . Գ . ՅՅ :

իւրոյ , Աստուածաբանն ել՝ ՚ի կոստանդնուպօլիք , և էառ զաթոռն՝ Վերտառիոս : Եւ թէոդոս յորժամ ետես զՎելիոս , ասաց թէ ՚Օստ տեսի ես յերազի , որ օրհներ զիս թագաւոր : ՚Եւ սա մեռաւ ՚ի ժողովին , և խօսեցաւ Գրիգոր նիւսացի վասն նմագերեղմանական ձաւս . և բերաւ մարմինն յՆոտիոք : ՚Եւ Վելիոս խափանեաց զբահանացն ընդունելոց զխոստովանութիւն , և սոհմանեաց զի կատարեալքն առցեն և յամենեցունց վկայեալքն : ՚Օի քահանաց մի յՆոտիոք հրապարակեաց զխոստովանութիւն սորիաւագի միոյ , որ անկեալ էր ՚ի իին մի մեծազգի , և եղեւ յոլով սպանութիւնս (1) : ՚Եւ ասաց Վելիոս , թէ ՚| աւէ զաջ գնել ՚ի վերայ գժնեկի վշյ և ոչ ՚ի վերայ տգիտաց և անկատարից : »

Յայսմ ժամանակի հանդիպեցաւ թէոդոս ՚ի թէոսազնիկէ , և հիւանդացաւ , և մկրտեցաւ յՆքիլասայ և առողջացաւ . և եկեալ ՚ի կրտանդինուոզօլիս շինեաց ըկմեծ եկեղեցին զՎաստասիա (Յարութիւն) : ՚Եւ յայսմ ժամանակի ծնաւ նմա որդի ՚ի Գալիէ (Գալլայ) կնոջէն , և կոչեաց զանուն նորա Անօրիոս . և Գալիէ ծնեալ զՎարիոս՝ մեռաւ (2) : ՚Եւ կայր նմա պատկեր յՎա-

(1) Սոկոստ . ՃՔ :

(2) Տես ՚ի ծանօթութեան 3 . յեր . 154 .

տիոք, և լուեալ զմահ նորա՝ քարշեցին և ընկեցին ՚ի շուկայն։ Եւ բարկացաւ յոյժ թագաւորն թէոդոս։ և առ զիշխանութիւնն Անտիոքու, և ետ զետ լ ատիկ (Պատոդիկէ) քաղաքի՝ զանուանին մայրաքաղաք և ամֆոռ Աւետարանչին։ և գատաւորքն արարին յուլ սպանութիւնն վասն այնմ գործոյ (1)։ Եւ լուեալ զայն միայնակեաց մի Ապողոս անուն (2). եկին և յանդիմանեաց զիշխանան, և գրեաց առ թէոդոս, թէ և վ ասն սղնձի պատկերի միոյ չէ պարու այնչափ բարկանալ, և զպատկեր Աստուծոյ ապականել՝ զմարդիկ Պղնձի պատկեր շատ կարես կազմել. թէ պատկեր Աստուծոյ անկարանաս շինել, զայտ ոչ գիտեմ։ Եւ քանի եւս զհոդիս մեր անարդեմք մեղօք, և չէ ումեք հոգ, որ է պատկեր Աստուծոյ նախատեալն։ « Եւ զայտ

(1) Ըստ պատմութեան Յունաց՝ թէոդոս եդ նոր հարկըս ՚ի վերայ Ասխացւոց առ ՚ի տօնախմբել զհնդամեանն որդւոց իւրայ և զտանամեանն իւր։ Անտիոքացիք ընդդէմ կացեալ հրածանիխու և զարձանն իսկ սղնձի զիտոյսեր արկեալ կործանեցին։ Աստիկ զայրացեալ կայսեր ընդ անարդանան զանցաւորսն մահու գտաւեաց, և գլուաւորքն ՚ի բնակչաց եդան ՚ի բանտի։ Յայնժամ Փլարիտնաս հայրապետ Անտիոքայ երթեալ առ կայսր, հզօր բանիւք իւրովք հաշտեցուցանէ ընդժողովրդեանն, և զագառնալիսն նորս ՚ի բաց գարձուցանէ Յովհ. Առկ. ճառ անդրդիտին, ԻԱ։

(2) Ապազոս կամ Ապողոն էր միայնակեաց և այց առանց գպրութեան, Մակեդոնիսս կոչեցեալ ըստ թէոդորեատի, և գորէին մականուանեալ։

ըուեալ թագաւորին՝ լուեաց ՚ի բարկութեանէն և հաշտեցաւ ընդ քաղաքին։

Յայսմ ժամանակի թեսաղնիկէ, որ է գլուխ Խոալիոյ<sup>(1)</sup>, ապստամբեալ ՚ի թագաւորէն քարկոծեցին զիշխան թագաւորին որ ՚ի քաղաքին։ Եւ թագաւորն զայրացեալ հրամայեաց կոտորել զբաղաքն։ և մեռան եւթն հազար արդար և մեղապարտ։ Եւ Վմբրոսիս եպիսկոպոս եկն առ թագաւորն ՚ի Ո՞եդուլիէ (Ո՞իլան) քաղաք և դիսկաւ թագաւորին առ դրան եկեղեցւոյն, զի կամէր մտանել, արգել զնա և ասէ։ « Չամաչես, արեամբ շաղախեալ, մտանել ՚ի տուն Ըստուծոյ. այլ դարձիր և առ կապանս ՚ի ձեռութ իմ, զոր առաքեաց քեզ Ծոտուած։ » Եւ թագաւորն դարձաւ. և յետ ութ ամսոյ եկն տօն ՝Օ՞ննդեանն. և թագաւորն նառեալ լսյր դառնապէս. և եհարց զնա մագիստրոսն Ծուփինոս<sup>(2)</sup>, և ասէ. « Օ յի՞նչէ, արքայ, ընդէր լսաւ ։ Եւ նա ասէ. « Ի՞նդէր չլամ, զի ահա ծառայք և մուրացկանք մասնեն յեկեղեցի, և ես արգելեալ կամ յեկեղեցւոյ և կապեալ յերկինս։ » Եւ նա

(5) Աստ փոխանակ իրավոյ՝ պարտ է ընթեռնուլ իւնիոյ, այն է լիւրիկէ։

(2) Ալ յս Ծուփինոս էր պաշտօնեաց թագաւորին, որ գրգռեաց զթէռդոս ՚ի մահ մասնել անձինս հնգետասան հազար լստ այլոց պատմագրաց։

ասէ . « Ես փութամ և աղաչեմ զեպիսկուպոսն : » Եւ ասէ թագաւորն . « Ես ոչ հաւատամ թէ լսէ քեզ , և ակն առնու երեսաց , և արհամարհէ զօրէնս Աստուծոյ : » Եւ սակայն գնայ Շուփինոս . և թագաւորն երկիւղիւ զհետ երթայր : Եւ յորժամ ետես եպիսկոպոսն զիուփինոս , բարկացաւ և ասէ . « Պիզծ , քո խրատու եղեւ այն ամենայն : » Եւ նա անկեալ առ ոտան աղաչեր և ասէր . « Ահա և թագաւորն գայ ըզհետ իմ : » Եւ նա ասէ . « Չթողում զնայեկեղեցի . և թէ կամիցի՝ ընդունիցիմ ըսպանութիւն ՚ի նմանէ որպէս և զայլն : » Եւ գնացեալ ընդդէմ թագաւորին՝ պատմեցին զասացեալս ՚ի սրբոյն . և ասէ թագաւորն . « Յոող երթամ և խնդութեամբ ընդունիմ զնախատինսն ըստ արժանեացն իմոց : » Եւ յորժամ եկն , կայր արտօքոյ և աղաչեր արտասուօք . և ձայնեաց առ նա եպիսկոպոսն և ասէ . « Ամբարտաւան , անօրէն , ընդէ՞ր եկիր այդր : » Եւ ասէ թագաւորն . « Յօժարութեամբ ընդունիմ , հայր սուրբ , զանարդանսդ և զբանադրանքդ , և առանց քո կամաց ոչինչ առնեմ . միայն մի փակեր (զդուռոն) ընդդէմ երեսաց իմոց , զի արտօքուստ ՚ի ներքս տեսից զերեսս քո և զեկեղեցիդ Աստուծոյ : » Եւ եպիսկոպոսն կայր յեկեղեցին և ասէ . « Օ՞ր ապաշխա-

բութիւն կրեցեր, զի զիս և զգուռան եկեցեցւոս տեսցես : « Եւ թագաւորին ասէ . « Վիայն ցոյց գեղ վիրաց իմոց և արարից : » Եւ ասէ եպիսկոպոսն . « Խիստ ես ընդդէմ վնասակարաց . գրել տուր օրէնս , զի արքելցեն զնասասապարտան երիս աւուրս . և թէ տակաւին կասկածանօք է , քառասուն աւուրս . և հարց և փորձ լիցի , և վկայիւք և քննութեամբ ՚ի յայտ եկեցէ իրաւն . և զինչ տեսցեն զինի շիջման բարկութեանն , արացէ զիս պատշաճն պատուհաս : » Եւ նոյն ժամայն գրեցին . և առաքեաց առ ամենայն դասաւորս և իշխանս երկրի , զի այնպէս արացեն : Եւ ապա հրամայեաց թագաւորին մտանել յեկեղեցին . և նա մտեալ յեկեղեցին՝ ընկեց զինքն ՚ի վերաց գետնոյն ասելով . « Ո՞րձեցաւ անձն իմ ՚ի հող . Տէր ապրեցո զիս ոզորմութեամբ <sup>(1)</sup> տ Եւ արտասուեալ արքայ կանգնեցաւ և գրնաց մերձ ՚ի խորանն . և կամեցաւ երթալ յիւր տեղին , և արգել զիս եպիսկոպոսն և ասէ . « Լու է քեղ լինել յետոյ և ՚ի վայր քան զամենեսեան , մինչեւ կատարեալ ապաշխարես : » Եւ յանձին կալաւ ամենայն խոնարհութեամբ , և դնաց կանգնեցաւ ընդայլ ապաշխարողն : Այսպիսի էր երկիւղ և հաւատ թագաւորին <sup>(2)</sup> :

(1) Ապղմոս . ՃՃԸ . 25.

(2) Սուրբ Օգոստինոս , Յշ . տաշտին Աստրածոյ . և . 26 .

Յայսմ ժամանակի գտան նշխարք Ամբակումայ մարդարէին և Վիքիայ, Ալլութրաբուլոս Պաղեստինացւոց<sup>(1)</sup> յայտնութեամբ եպիսկոպոսին. և Աշուասաղէմ գտան նըշխարք սրբոյն Ատեփաննոսի և որք ընդ նմա առ Յովհաննու եպիսկոպոսին Աշուասաղեմի:

Դյերեք ոստան ամին թէոդոսի քարոզել ետ զօրդին զԱրկադէոս թագաւոր յարեւելու և յայնժամ Աւգանոս (Աւգինէոս) և Աւրբոգոստոս (Արբոգաստոս) իշխանք խարէութեամբ սպանին զԱպենտիանոս ՚ի Հռոմէ Եւ թէոդոս թագաւորեցոց զԱնորիոս ՚ի Հռոմէ Եւ Ելեալ սակաւուք ընդդէմապլատամբացն որ էին բազումք, և ասեն ցմագաւորն որ ընդ նմա էին . “ թոյլ տուր մինչեւ հասանեն զօրքն : ” Եւ նա եմաւտ ՚ի քարայր մի սուանձինն , և գոչեաց առ Տէր . և Երեւեցաւ նմա Յովհաննէս Աւետարանիչն և Փիլիպակոս առաքեալն , և ասեն ցնա . “ Վիզ զարհուրիր և օգնականի մի մնար , զի մեք եկաք ՚ի Քրիստոսէ օգնելքեղոյ որ եղեւ իսկ զի վաղիւն կորեան Երկորին բռնակալքն<sup>(2)</sup>:

(1) Այս է Ելեւթերոպօլիս քաղաքն Յուդայաստանի : ՚ի ցեղին Դանայ :

(2) Սոկրատ ասէ , եթէ Եւգինէոս պարտեալ ՚ի մարտին յոտս թէոդոսի գիմէր յանցիշաշարութիւննորին ապաստաննալ , և զօրքն անդէն զնա գլուատեցին : Իսկ Աւրեգաստոստոս ՚ի հետամարդն իւր ոչ կարացեալ զերծանիլ , բնդ սուր իւր ելեալ վախճանէր . ՃՃԴ :

Եւ յորժամ դարձաւ թագաւորն յաշխատութենէն և եկն ՚ի Վիդիլի (Վիլան), կալազնա ցաւ երիկամանցն և մեռաւ, կեցեալ ամս վաթսուն, թագաւորեալ ամս վեշտասան և ամիսս ութ (1):

Յայսմժամանակի թագաւորեաց ՚ի Պարսս Աւոհարօն Գերմանշահ (Առամ Կրման), որդի Շապհոյ, եղբայր Արտաշրի՝ ամս մետասան:

Այս թէոդոս ՚ի կենդանութեան իւրում աղաչեցեալ Ամզլիքոսէ Եսլիսկոպոսէ Հալածել զարիանոսան, և ոչ լուաւ նմա, մինչեւ յաւուր միում նստէր թագաւորն և թագաւորեալ որդի նորա Արկադէոս ընդ նմա. և եմուտ Ամզլիքոս, և ետ ողջոյն թէոդոսի, և յորդին ոչ հայեցաւ, և կարծեաց թագաւորն թէ ոչ տեսաւ զորդին, և ասէ. «Հայր օրհնեած զորդիս ո Եւ նա ասէ. «Դուքաւական ես մեղ թագաւոր, զդա ոչ պատուեմ, բայց թէ զմի ՚ի ծառայիցդ : » Եւ տրտմեցաւ. և զայրացաւ յոյժ թագաւորն : Եւ ասէ Եսլիսկոպոսն. «Դու մահկանացուդ զնախատինս որդւոյդ չկարես տանել. իսկ անմահն Աստուած զանպատուութիւն որդւոյն իւրոյ ոչ խնդրէ ՚ի ձեռաց քոց : » Եւ հաւանեալ թագաւորն հրամայեաց հաւածել զարիանոսան, և ընկենուլ յամենայն համարձակութենէ :

(1) Սոկրատ. Ճժե :

Յայսմ ժամանակի յլ շմաւուս Պաղեստին  
նեաց ծնաւ մանուռկ մի , որ 'ի լանջացն 'ի վեր  
երկու էր զլխովք , և չորս ձեռօք . և ապրեւ  
ցաւ երկու ամէ Հորժամ մինն ուտէր , միւսն  
չուտէր . և երբ մինն ննջէր , միւսն արթուն  
կայր . և էր զի խաղային ընդ միմեանս , և  
երբեմն լային , և երբեմն ծիծաղէին , և մինն  
քան զմիւսն երկու աւուրբք յառաջ մե-  
ռոււ :

Իսկ թագաւորն Արկագէռոս էր ողջախոհ  
և ժուժիալ . և ներքոյ ծիրանեացն ագանէր  
'ի ծածուկ մազեղէնս , և սիրէր զկրօնաւորսն  
Յայսմ ժամանակի ածաւ Յովհանյոյժ փա-  
փարանօք 'ի Առանեղինուպօլիս , և էր զօ-  
րուոր բանիւք և նշանօք և վարդապետու-  
թեամբ : Բայց կային ոմանք որ անգոսեին ըզ-  
նա վասն ոչ յստակագոյնս խօսելոց 'ի բարբա-  
ռին Յունաց , զի Ասորի էր ազգաւ և այնու  
էր վարժեալ : Աս մեռաւ յաբսորս 'ի Կոմանա  
Հայոց , կեցեալ ամս յիսուն . և եւթն ամ  
եպիսկոպոս եկաց և զերիս ամս յաբսորս ե-  
կաց (1) : Եւ յորմէ հետէ մկրտեցաւ , ոչ էր  
դուաւ և ոչ երգուեցոյց , և ոչ սոււտ խօսե-

(1) Առօրք Յովհաննես Ուկերերան յաջարդեաց ԴՆէքառ-  
ուիս յամի 597 , և 'ի 26 վեպրուարի ամսոյ գատտապարտեցու  
յաբսորս յամի 404 . և վախճան նորա եղեւ յամի 407 . յորմէ  
յայտ է Եթէ եկաց նա յաթռոն ամս իբր եւթն : — Սոկ-  
րատ , ՃՃէ :

ցաւ, և ոչ նղովեաց զօք, և ոչ արբ գիհի, և ոչ ծիծաղեցաւ, և լնդ մարդոյ ոչ ճաշուկեաց . և յորժամ երթայր յաքսորս, եհար զձեռն յեկեղեցին և ասաց. Ալղջ մնա, սուրբ Եկեղեցի, բնակարան փառացն Տեառն: Եւ ես 'ի պարգեւացն՝ զօք առի յլ' ստուծաց, երկոտասան հաղար ճառս եդի 'ի գանձս քո, որ են ութ հորիւր գիրք: "

Յետ այսորիկ հիւանդացաւ Արկադէսս, և եդ քարսղել զորդի խւր զի՞ւէսդոս թագաւոր ութամեայ: Եւ Անորիսոսի ոչ եղեւ որդի, և նա միայն եր ժառանդ, երկեաւ Արկադէսս վասն որդւոյն և արար կտակ, եւ յանձնեաց զորդին 'ի Պարսից թագաւորն Յաղտաճառ (Յաղկերտ): Եւ խնդաց յոյժ յորժամ լուտւ Յաղտաճառ, և առաքեաց դաստիարակ մանկանն այր մի բանաւոր Անտիոքոս անուն, և առաքեաց սպառնալիս յամենայն տուն թագաւորութեանն Հոռոմոց, և թէ ոչ ահիւ և դողութեամբ տեսցեն զմանուկն: Եւ մեռաւ Արկադէսս թագաւորեալ ամս Երեքտասան: Եւ կայր խաղաղութիւնն 'ի մէջ Պարսից և Հոռոմոց: և Քրիստոնեայք որ 'ի Պարսս էին, աճէին և կային անկասկածս 'ի ձեռն միջնորդութեան Արքութայի եւպիսկոպոսի: Եւ մեռաւ Անորիսոս 'ի Հռոմ անորդի, և թագաւորեաց կոստանդիանոս (Առատաս գ.) և նա

ոպանաւ ՚ի բռնակալէ ումեմնէ , և մնաց թէսդոս միայն զինի Անորիտասի , որ թագաւորեաց ամս երեքտասան , և ժառանդ ոչ եթող : Եւ յայնժամ թէսդոս զլ աղենտիանս հօրաքեռորդին իւր արար կեսար , և առաքեաց ՚ի Հռոմ ընդ մօր իւրոյ . և յետ այնորիկ առաքեաց նմա թագ , որ և թագաւորեաց ամս երեսուն և երկու : Եւ էր թէսդոտոս այր սուրբ և չորակեր , և անձէթ և անգինի էր սեղան նորա զաւուրոս պահոցն : Եւ սա զՔեթրոնի եպիսկոպոսին մաղեղէնն առնոյր զինի վախճանելոյ եպիսկոպոսին , և զգենոյր զամենայն գիշեր . և էր անոխակալ և ողորմած այնչափ , որ ՚ի հարցանելի թէ անդէր թողուս զմահապարտոն կենդանի ու ենա ասէ . « Երանի թէ զմեռե ալսն կարէի ՚ի կեանս գարձուցանել , թող թէ զկենդանիսն ՚ի մահ փոխել : Եւդ Էմտուծոյ է գործ՝ սպանանել և կեցուցանել : »

Յայսմ ժամանակի Յաղտաճատ թագաւորն Պարսից մեռաւ , և առ զթագաւորութիւնն Աքհարան որդի նորա ամս քսան և երկու <sup>(1)</sup> : Եւ բարձու սէրն ՚ի միջոյ թագաւորացն . և հարան Պարսիկք յողավ անդամ աղօթիւք թագաւորին :

Յայսմ ժամանակի առաքինի երեւեցաւ

(1) Այն է Վարամ Բ . որ նստաւ զինի Յաղկերտի յատի 419 կամ ըստ այլոց 421 :

Ակակ Ամթայ եպիսկոպոսն, գնելով զգերեալ ողն՝ ՚ի Պարսից մինչեւ տայր զապաս եկեղեցւոյն . զարձաթեղէնս և զոսկեղէնս՝ ՚ի գիս ծառայիցն ասելովթէ Վատուածն մեր պէտո ոչ ունի սոկեղէն և արծաթեղէն սպասուց: Եւ գոլեցաւ հաւատ նորա ՚ի Պարսս . և խնդրեաց զնա Պարսից թափաւորն , և յոյժ մեծարեաց ՚ի փառս Քրիստոսի: Հայոմ ժոմանակի հռչակաւորք էին Արմենի սիւնակեաց յշնոտաք և Ոօր Պարտամա ՚ի սահմանըս փաքք Հայոց :

Ի սոյն ժամանակս էր Վեստոր պատրիարք ՚ի Կոստանդինուլոլիս . և էր նորա քահանայ մի Ենաստաս անուն , որ յաւուր միում յամպիսնն խօսեցաւ զնոր հերձուածն , ՊԵտրիամ մարդածին և ոչ Վատուածածին դաւանեալ: Եւ ակն ունէր ժողովուրդն Վեստորի պատուհանել զնա . և նա ոչ միայն ոչ մեղադրեաց , այլ և առ ՚ի նմանէ զհերձուածն և տարածեաց: Եւ վասն սորին պատճառի եղեւ մեծ ժողովն յիշիւսոս ՚ի քառասուն և մի ամբն թէսոդոսի , և ՚ի ԶԻՐ (742) թուին Վարւոց . և ՚ի Քրիստոսէ չորս հարիւր քսան և երեք<sup>(1)</sup> , եղեւ առաջին ժողովն յիշիւսոս . և էին անդ երիերիւր եպիսկոպոտաք , և եւթն ՚ի նոցանէ ելին նզովիւր

(1) Ժողովն Եփեսոսի գումարեցաւ յամի 451: ՚ի 24 ամի իշխանութեան թէսոդոսի:

՚ի թուոյն, և մնացին յուղղափառութեան հարիւր իննառւն և երեք եպիսկոպոսք երեւելիք։ Եւ Վեծն Աահակ Հայոց մեծաց անալարապ եղեալ, գրեաց թուղթ հաւանութեան զոր ինչ և սահմանեսցեն։ Եին և բաղմութիւն քահանացից և կրօնաւորաց, և գլխաւորք էին այսոքիկ։ ՚ի Հռոմայ Արկադէոս և Պրոկոպիոս եպիսկոպոսք փոխանորդք կելիստիանու Հռոմայ սկավուն։ Կիւրեղ՝ Աղքասանդրի։ Վեմնոս՝ Վիեսոսի, Յովհաննէս՝ Յոտիոքու, Եկակ՝ Ալտենեոյ, Յոքնաղ՝ Երուսաղէմի, և այլք որ արարին նղովս Աեստորի, և Յովհաննէս Յոտիոքու<sup>(1)</sup>, և քամն և վեց եպիսկոպոսք ընդ նմա ոչ գրէին նղովս Աեստորի, մինչեւ ինքնանք նղովեցան ընդ նմա։ Եւ գնաց Աեստոր յաքսորս։ Եւ ապա եղեւ ընդ Կիւրղի Յովհաննէս, և խոստովաննեաց զանգիտութիւնն, որ ոչ գիտէր զարութիւնն Աեստորի։ և ապա հաստատեցին և ասացին։ « Եթէ ոք այլ ժողով կամ եպիսկոպոս կամ թագաւոր, նոր հաւատ և նոր սահման դնէ յետ այսորիկ, եղիցի նղովեալ։ այլ զԵմիկիայն հաստատուն կացի սուրբ եկեղեցի մինչեւ ցկատարած աշխար-

(1) Յովհաննէս եպիսկոպոս Անտիոքայ աշակերտակից գուղլ Աեստորի, զնորս կողմն ուներ զառաջինն, այլ յետոյ ՚ի վերաց հասեալ մնջրութեան նորին, յետս եկաց ՚ի հաւարդակցութենէ նորա։

Հի : Եշւ նզովեալքն զինի Աւստորի այսոքիկ  
էին . Յմէոդօրիտոս՝ Կիւրիա քաղաքի . Անդքէ՝  
Ասմուստեայ , Ազէքսանդրոս՝ Մնթէճայ , Աւ-  
րիանոս՝ Արոյ , Յովհաննէս՝ Կիլիկիոյ , Աւթ-  
րիոս՝ Տարօնայ . և այլք ընդ նոսա . և ՚ի տե-  
ղի Աւստորի եղին զՄաքսիմօս ՚ի Կոստան-  
դինուպոլիս (1) :

Պատճառ ժողովոյն Քաղվելոնի :

Ի քսան և յինն ամի թագաւորութեան  
իւրոյ լուաւ Յմէոդօս զազմուկն Փլարիա-  
նոսի եպիսկոպոսի Կրստանդինուպոլսի , և  
զիշտիքի վանասպետի , և հրամայեաց երկրորդ  
ժողով լինել յիշիւսոս , զինի ութ և տասն  
ամի առաջին ժողովոյն որ առ Կիւրզիւ (2) .  
և գրեաց առ Դէոսկորոս զայս օրինակ .

“ Ե-սո-իարտոր կայոր Յմէոդօս և Ա ազեն-  
տիանոս յաղթող թագաւորք . առ սուրբ  
հայրդ Դէոսկորոս եպիսկոպոսապետ առա-  
քելական աթոռացդ Ազէքսանդրու . Գիտու-  
թիւն լիցի սրբութեան ձերոյ , զի արմատ  
դառնութեան Աւստորի շառաւիղեալ թուի  
առ Փլարիանոս , և Մանեայ կարծիքն առ

(1) Առկաստ . ՃՀԱ :

(2) Երկրորդ ժողովն Եփեսոսի եղին յամի 449 . ՚ի 42 ամի  
Յմէոդօսի , և ոչ ՚ի 29 որոգեա սխալմամբ գրէ Միհայէլ :

Եւտիքէս վանական, որպէս լուաք . և գործս  
այս մշակութեան ձեզ է պատշաճագոյն .  
սրբել զեկեղեցի անարտա հարսն Քրիստոսի,  
վասն որոյ փութացիր ՚ի թիկունս հասանել  
տրտմութեան երկնաւոր առագաստին . և  
բերցես ընդ քեզ տասն մետրապօլիսս և  
տասն այլ եպիսկոպոս բանաւորս խմաստու-  
թեամբ, որ կարող են զպայծառութիւն հա-  
ւատոյ ուղղափառութեան վառեալ և դնել  
՚ի վերայ աշտանակի՝ յուրախութիւն երկ-  
նաւորաց և երկրաւորաց : Եւ ՚ի գալն քո  
ածցես տասն այլ եպիսկոպոս ՚ի Պազեստինէ .  
և ՚ի Փղստացւոց . բեր և զՅօրնաղ եպիսկո-  
պոսապետն Երուսաղէմի, զի ընդդէմ էր նա  
Անստորի և Եւստի չարափառաց . և մի  
բերցես զհիւանդացեալն ՚ի հաւատս առ  
Ափւրղիւ՝ զթէ ոդորիսոս եպիսկոպոս Ափւրիայ  
քաղաքի, և զայլս ընդ նմա : Եւ Յուլիանոս  
հռոմայեցի որ առ մեզս է, ըսու զտեղի  
Հռոմայ, զի և նա հիւանդ ցուցաւ յ՛շիե-  
ստի ժաղովն իւր տումարովն : Եւ ած զմեծ  
ճկնաւորն և զհայրն անապատի փոխանակ  
ամենայն արեւելից վանօրէից զլոր Պարսա-  
մա, զի կարի ջանայր նա հակառակ Անս-  
տորի և տումարին Եւստի :

Եւ սուրբն ՚ի ոսկորոս առեալ զթուղիմ  
թագաւորին, արար որպէս հրամայեցաւն .  
և եկն յ՛շիեսոս ՚ի ժողովն, հարիւր քսան և

ութ եսլիսկոպսաօք : Եշ գլխաւորք էին ոյտքիկ . ‘Դէռակորոս՝ Վզէքսանդրի , Յօրնաղը Երւանաղէմի , ’Դոմիանոս՝ Վնտիոքու , Եշստալմէոս՝ Վհւրիտոս , Ծ.էոդոլիս՝ (Ծ.էոդոլոս) Կեսարիոց Հայոց , Եշսեբիս՝ Վիլիկիոյ. Վասիլիսո Աելեւկիոյ , և Ո՞ր Պարսամա գլուխ վանականաց : Եշ արարեալ քննութիւն յալով , Եշտիքէս զղջացաւ կերպարանօք և ոչ ճշմարառութեամբ , վասն որոյ ոչ եղեւ բնկալեալ , և նզովեցաւ , զի առ աչօք ասէր զմարդկութի Տեառն մերոյ : Եշ ապա արարեալ էր գաւանութիւնն Փլաքիանոս , բերին յառաջ և կարդացին , որ ունէր զԱւստորի մտածութիւնն . և գտաւ ՚ի նմա ձեռագիր ՚ի Վասիլիսէ Եսլիսկոպսուէ Աելեւկիոյ և զՅուլիանոսի հռովմայեցւոյ և զԵշտիքափ կիպրացւոյ , և զԱելեւկոսի Եմեսացւոյ : Եշ ՚ի լսելն զայս ամենայն ժողովն՝ նզովեցին ասելով . ‘Բարձէք , բարձէք , այրեցէք հրով զանաստուած տումարդ ո՛ւ և նզովեց ընկեցին յաթոռուոյ զՓլաքիանոս և զԵշսեբիս և զԴոմիանոս Վնտիոքու , և հինգ Եսլիսկոպոս յընկերաց նորա , և զՄրիանոս Արոյ , զՎկամիս Պետպուլոյ<sup>(1)</sup> , զԾ.էոդոլիսոս Վհւրիտոյ , և զՄբաս Աւոհայոյ , զԱելերիսոս Ծ.լմզոյ<sup>(2)</sup> , զԴանիէլ Խառանու , և զտամարն Աեւոնի արհամարհեալ յառաջին ժռ

(1) Ըստ Աստեմանեայ՝ Սովորնիս Դէլոյ :

(2) Ըստ Աստեմանեայ՝ Եստէվոս Տորելոյ :

զովոյն, ոչ համարեցան սպատշաճ ընթեռնուլ:

Եւ եկն թուղթ ՚ի թագաւորացն ՚ի թէ-  
ողասէ և ՚ի Վաղենտիանոսէ, ոչ յաւելուլ  
և ոչ պակասեցուցանել ՚ի հաւատոյ ուղղա-  
փառութեան Նիկիոյ, Կրօստանդնուպօլսին  
և Եփեսոսին, այլ զեոյն հաստատել. վասն  
որոյ դաւանեցին՝ մի Տէր, մի Վրիստոս, մի  
Որդի, մի դէմ, մի բնութիւն յետ անձառ  
միաւորութեանն. նոյն Կյոտուած և մարդ  
կատարեալ, հոգի, մարմին, միոք, ճշմար-  
տապէս և ոչ կարծեօք:

Խակ զկնի արձակման ժողովոյն, յորժամ գլ-  
նացին(առաքեալքն) առ ՚ի Եւռնէ, և պատ-  
մեցին նմա զոր ինչ եղեւն, շարժեցաւ ՚ի  
բարկութիւն Եւռն, և առաքեաց կոչեաց  
առ ինքն զՓլաբիանոս, և լուաւ նմա զդա-  
ւանութիւնն և հաճեցաւ. և այնշտոփ զայ-  
րացոց Փլաբիանոս զլ Եւռն ընդդէմ ՚ի կո-  
կորասիասելով, թէ ալ ըհամարհեաց զքո տո-  
մարն և նեստորական ասաց զքեզ. ու Եւ նա  
՚ի տարակոյս անկեալ խնդրէր հնարս ընկե-  
նուլզ ՚ի կոսկօրս փախանակնախատանաց իւ-  
րոց: Յայսմ ժամանակի գնացին թագուհին  
թէողասի և քոյր նորա Պողքեր ՚ի պատճա-  
ռըս ազօթից ՚ի Հռոմ, և ըստ պատշաճի  
մէծարեցան ՚ի Վաղենտիանոսէ թագաւորէն  
և յամենայն բնակչաց Հռոմայ: Եւ արքայն

Վաղենտիանոս առեւալ զնոսա երթայր ՚ի  
տաճար առաքելոցն Պետրոսի և Պաւղասի,  
ուր կոյին նշխարք նոցա . և զայն իմացեալ  
Լեւոնի . ընկէց զինքն ՚ի գետին ՚ի ներքոց  
վարագուրին , և երեսք ՚ի վայր , և ու յար-  
եաւ ընդառաջ նոցա , մինչեւ վերացու-  
ցեալ զվարագոյրն՝ և տեսին զի լայր հեծե-  
ծանօք , և հարցեալ զպատճառն աղաջանօք ,  
բուռն հարկանեին նստուցանել զնա , և ա-  
սէր (1) . «Պատառեաց ՚Իէսոսկորոս զհաւասա  
ռւզզափառ և արհամարհեցաւ աթոռ սուրբ  
Ըռաքելոցս ՚ի նմանէ : » Եւ նոքա մխիթա-  
րեցին զնա և ասեն . « ի ինի ըստ կամաց քոց՝  
զոր ինչ հրամայես : » Եւ կալաւ զնոսա բա-  
րեխօս առ թէոդոս թագաւորն , տալ հրա-  
ման տիեզերական ժողովոյ , խափանել զ՚Իէ-  
սոսկորոսին . և նոքա երգմամբ յանձն առին :  
Եւ ՚ի դառնալ կնոջ թագաւորին և քեռ  
նորա Պողքերայ , գրեաց զկեի նոցա թուղթ  
աղաջանաց զի արասցէ ժողով յոլովաթիւ-  
քան զ՚Իէսոսկորոսին՝ քննել ստուգիւ զիւր  
տումարն և չդնել զնա ընդ ՚Անստորի չարա-  
փառի : Խոկ իբրեւ լուաւ թագաւորն , հը-  
րաժարեաց ՚ի նորա խնդրոյն , և սաաց .  
« Ես հաստատեալ եմ և հաւանեալ կիւրզի  
և ՚Իէսոսկորոսի սուրբ տահմանին , որբ դա-

(1) Յօրբնակին և նորէ :

տեցան զոռումարն | Եւսնի զուգաբան՝ Նես-  
տորի անիծելոյ : » Եւ ուղղափառութեամբ  
կեցեալ թէոդոս թագաւորն՝ մեռաւ յիսուն  
ամաց, թագաւորեալ քառասուն և երկու-  
ամ. զի ութամեայ թագաւորեաց :

Եւ թագաւորեաց Անարկիանոս քեռոր-  
դի թագաւորին թէոդոսի ընտրութեամբ  
Պողքերայ, այր ծեր ագէտ և առանց գըստ-  
րութեան : Եւ թագաւորեաց ամս վեց ե-  
ամիսս հինգ, որ և ասեն թէ պոռնկութեամբ  
միաւորեալ էր ընդ Պողքերայ յառաջագոյն :  
Եւ յառաջին ամի թագաւորութեան նորա-  
գայ թուղթ աղաչանաց ՚ի | Եւսնէ այլ նոյն  
օրինակ զոր յառաջագոյն գրեաց, վասն ժո-  
ղովոց առ Անարկիանոս և առ Պողքեր, յի-  
շեցուցանելով նմա զիանխաւ խոստումն :  
Եւ ետ բերել առ նոսա զիւր տումարն, զի  
նոցա սաստիւ և հրամանաւ շրջեցուցանեն  
ընդ աշխարհն ասիական առ եպիսկոպոսս,  
զի ձեռնարկ արասցեն ՚ի տումարն նախ քսն  
զժողովն : Եւ նոքա հաւանեցան վասն եր-  
կու պատճառի . առաջին՝ վասն խոստմանն  
և երդմանն Պողքերի, և երկրորդ՝ զի օրէնք  
էր չդնել թագաւոր ՚ի կաստանդնու պօլիս ա-  
ռանց թագաւորին Հռոմայ և հայրապետին  
Եւ այս առանց նոցա եղեւ, և յերկիւզի  
էին վասն մխորման, (վասն այնորիկ) գրեցին  
թուղթ աղաչանաց և սպառնալեաց յերե-

աաց թագաւորին և Պաղքերոյ, և իշխանօքն  
և ՚ի | Եւոնէ Եկեալ Եպիսկոպոսքն առա-  
քեցին ընդ աշխարհ, և ՚ի հաւան ածին ձե-  
ռագրով չորս հարիւր քառասուն և վեց Ե-  
պիսկոպոս :

Եւ յորժամ դարձան և տարան առ թա-  
գաւորին և առ Պաղքեր զլ Եւոնի տումարն,  
յորում կայր չորս հարիւր քառասուն և վեց  
Եպիսկոպոսի ձեռագիր, խնդացին և իւրեանք  
այլ ձեռնագրեցին . և հրաման ետուն ժո-  
ղով ընդ ամենայն Երկիր՝ բաց ՚ի Հայոց, որ  
չեր ընդ իշխանութեամբ նոցա: Եւ յերկրորդ  
ամին Վարկիանէի ժողովեցան Եպիսկոպոսը  
Եւթն հարիւր . և գլխաւորք էին այսոքիկ .  
՚ի Հռոմէ փոխանակ | Եւոնի Տրոմոպիկոս,  
| Ելոբաս, | Խիլինիսոս, | Ակոզայոն . Յոբնաղ՝  
Երուսաղէմի, Դէռոկորոս՝ Աղէքսանդրի, Դո-  
մանոս՝ Անտիոքայ, Վասիլիս Աելեւկիոյ, և  
Պետրոս Ալիրիացին՝ Եպիսկոպոսն Գաղացւոց  
և գլխաւոր Փղտոացւոց աշխարհին, և Յէ-  
ռադորիսոս զոր Աիւրեղ նզովեալ էր յիշիե-  
սոս՝ Եգին գլուխ ժողովոյն . և ասաց Դէռո-  
կորոս . “ Վ՞նչ է այդ անօրէնութիւնդ . ա-  
աէ աստուածընկալն Պաւլոս, թէ — Օ որ քա-  
կեցին՝ վերտոնին շինիցեմ, յանցաւոր առնեմ  
զանձն իմ (1) :— Օ քակեալդ նզովիւք զիանդ ”

զներ գլուխ , և շինիչ զմեռեալդ : » Եւ օգանէր նմա զառաջինն Յօրնաղ . և շարժեցան և եղեն ամենն ընդ Վէսկորոսի և տատցին . « Ավերեղ սահմանեաց նզովիւք , որ այլ նոր իլք չդնիցի , և մեր զնոյնն առեմք , նզովեալ եղիցին որ այլ նոր սահման դնեն և կամ նզովեալն Վիւրդի ընդունին : » Եւ յիտ այսորիկ թագաւորն սկսաւ փաղաքչել , և ինքն անձամբ սպասաւ որէր , և աղաչէր և կաշուէր . և ետ Յօրնաղոց երեք գաւառ ՚ի Փղշտացւոց աշխարհէն . և բազում թախանձանօք ած զնա ՚ի հաւան չորս հարիւր քառասուն և վեց եալիսկոսոսօքն , որ նախ ծեռնագրեալ էին : Եւ մնացին յաւզզայիսուութենի ընդ Վէսկորոսի երկերիւր յիսուն և չորս , որ կրեցին բանդ և կապանք և նեղութիւնք և մահ , և ոչ մեկնեցան ՚ի սիրոյն Վրբիսոսի : Եւ հաւանեալքն տումարին կ եւոնի , երկու բնութիւն տատցին յատկոցեալ , և խաբէութեամբ զկոյսն Կատուածածին , զի թէ յատկանայ բնութիւն մարդոյն ըստ նոցաշարեացն . զիանրդ է Կատուածածին : Եւ լցան տիեզերք խոռվութեամբ և արեամբ . երկու ամ և կէս յամեաց ժողովն . և դարձան աքսորեալքն և նզովեալքն ՚ի Վիւրդէ և ՚ի Վէսկորոսէ ՚ի պատիւ և յիշխանութիւն զօրականօք և թղթով թագաւորականաւ . ընդ որս և Յօրնաղ գնաց Ալբուսաղէմ :

Եւ եղեւ խռովութիւն մեծ յիշուսացէմ, զի շընդունէին զնա, և ձեռնադրեցին իւրեանց պատրիարք զմէկոգոսիոս (1) . և Յօբնաղ գրեաց առ Ամրկիանէ, և առաքեաց զօրագլուխ զօրօք, և հանին զմէկոգոսիոս և հաստատեցին զՅօբնաղ։ Եւ շընդէր վերստին ընդ աշխարհն Պաղեստինէ և ընդ Փղիշտ, և գարձուցանէր ՚ի մոլորութիւն . և զուղղափառուն ծեծէին և հալածէին, յափշտակէին զինչան . և բաղումք ՚ի Նրէիցն շընդէին և կոտորէին զուղղափառուն։ Տայց ՚ի Պետրոսէ պատկառէին ՚ի Կազացւոցն եպիսկոպոսէ, զոր ասեն որդի թագաւորին Վրաց պատանդ լւալ ՚ի Կրոստանդիւնուպոլիս և յօժարեալ ՚ի խիստ կրօնս, և զւեւ հռչակաւոր առաքինութեամբ . և հորկեալ արարին եպիսկոպոս։ Եւ սա յանդիւննեաց զԱմրկիանոս, և նզովեաց զմողովն, և գնաց տրտմութեամբ։ Եւ ոչ ոք իշխէր ընդդիմանալ նմա վասն գերազանցեալ առաքինութեան նորա։ Վյո Պետրոս գրեաց ՚ի Նայս, և երանեաց վասն ոչ լինելոյ նոցա ՚ի ժողովն, և ասաց յայտնապէս . «Ի քաղ-

(1) Արեւմտեանք զմէկոգոսիոս համարին իբր կրօնաւոր ոք յանդուգն բարուք . և վասն իրիք յանցանաց առարագրեալ Անշեքսանդրիոյ և փախուցեալ ՚ի Պեղետստինէ ռւնել զաթուշն Երուսաղեմի ՚ի ժամանակի զի Յօբնաղ ՚ի ժողովն զըտանէր քաղկեդոնի .

կեդոն ուրացան զի՞րիստոս . դուք պինու  
կացէք ՚ի հայրենի հաւատդ որ շնորհեցաւ  
ձեզ ՚ի Տեառնէ և աշխարհիդ ձեր . զի որ  
պէս երբեմն սերմն մարդկութեանս այդ ուստ  
սփռեցաւ ընդ աշխարհ , նոյնպէս առ ձեզ  
պահեցաւ սերմն ուղղափառ հաւատոյ . և  
՚ի ձէնջ տարածելոց է ընդ բազում : Ողջ  
մերուք յանսասան վէմն . Բրիստոս , որդեակը  
իմ : ո Շնդ որո և մեք հաւատացեալքս ՚ի  
Այսոււած Հայրն ամենակալ և յօրդին մի-  
ծին ՚ի Տէրն և ՚ի Փրկիչն մեր Յիսուս Քր-  
իստոս , և ՚ի Հոգին սուրբ Կյատուած ճը-  
մարիս , փառաւորեմք զսուրբ Երրորդու-  
թիւնն և զմի Կյատուածութիւնն , այժմ և  
հանապաղ յաւիտեանս յաւիտենից . ամեն :

---

Յովհաննու. Միայնակեցի տեսանողի , աշակերտի Պետրոսի եպիսկոպոսի Վիրիացւոյ, եթէ անօրէն եւ ամպարտաւան ժողովն Քաղկեդոնի ՚ի բարկութենէն Աստուծոյ եւ ՚ի թողցոյ ՚ի ձեռաց եղեւ եւ ոչ ՚ի Հոգւոյն Սրբոյ , որպէս Նիկոլայն , Կոստանդնուպոլիսին եւ Եփեսոսին . եւ Ակայեն այսմ հախատեսութիւնք սրբոցն որ եղեն յառաջազգոյն եւ որ զկնի ժողովոյն :

Ա. « ԱՅՍ աղանդոյ սկիզբն Նեսոսոր եղեւ , զոր սրատմեաց մեղ հայրն մեր և հայրապետն սուրբն Պետրոս , եթէ Ես եի ՚ի կրտանդինուապօլիս , և ՚ի տօնի սրբոց Քռուասնիցն հայեցաւ Նեսոսոր ՚ի պատկեր Տերամօրն որ կայր յեկեղեցին և ասաց . « Ո՞սպարծիր , ով Խարիամ , թէ զԵստուած ծընար . զի ոչ ծնար զԵստուած , այլ դու մարդես և մարդ ծնարու Եւ ՚ի նոյն ժամն լկեցաւ ՚ի դիւէ , և զարկաւ զգետնի , և բարձեալ սարկաւագացն տարան ՚ի յարկս իւր : Եւ այս եղեւ սկիզբն պղտորման և ամբոխի սուրբ Եկեղեցւոյ : »

Բ. « Պատմէր մեղ նոյն հայրն մեր վասն Պալակիոսի ուռհայեցւոյ , որ էր այր սուրբ միայնաւոր , և ունէր հոգի մարդարէութե .

առ լուաւ զհերձուածն իբասայ (1), և սառտեալ նմա և զայրացեալ եկն ՚ի Փղիշո, և կայր հանդարտութեամբ : Եւ էր անդ իւիլոս եպիսկոպոս, այր սուրբ և սքանչելի, և հանապազ գայր առ նա ՚ի Գաղացւոց քաղաքն վասն հոգեւոր իրաց . և յաւուր միում եղեւ ՚ի զարմացման, և հարցեալ զկնի զպատճառնասէ ցՊէտրոս . “Յառնէ թագաւոր մի Վարկիանոս անուն, և առնէ ժողով և հալածէ զուղղափառման . և կրեմք ես եգու, և ՚ի նոյն կատարիմք : ” Եւ էր այս յառաջ քան զեւթն ամն ժողովոյն : ”

Գ. . “Նոյն յիշեցեալն Պալակիոս յաւուր միում ետես տեսիլ, և սկսաւ ասել . “Ա այ Պողքեր, վայ Պողքեր . ” և ժողավեցան ՚ի հարցանել, և ասաց . “Պողքեր՝ որ նուիրեաց զինքն Վատուծոյ, պտոնկեալ անկանի յՎատուծոյ, և հալածէ զուղղափառ հաւասացեալն ՚ի նա ՚ի ձեռն Վարկիանոսի : ”

Դ. . “Պատմեաց մեզ Պալակիոս վասն Պամփիլոսի սարկաւագի : ” Յաւուր միում, ասէ, աղօթմէր ՚ի սուրբն Գողդոթայլը ուսաղէմ, որ եղեւ ՚ի հիացման, և սկսաւ ասել երիցս անդամ . “Ա այ Եւիլիոս (Պրայիլիոս)

(1) Իբաս եպիսկոպոս Եղեսիոյ համախոհ գտաւ Նետարի խոստովանութեանն, վասն որոյ և ՚ի բաց մերժեցաւ յաթոռոյն : Ա յլ յետոյ ՚ի թոյլոտուութենէ ժողովոյն Քաղկեդոնի դարձաւ կրկին յաթոռ իւր և վարեաց զնոյն ցկեանս :

պատրիարք Եղառսաղէմիոյ Եւ Հարցեալ զնո՞  
ասէ . “Այս Եւիլիս որ տեսանէք սկատուեալ  
յամենեցունց , լինի ժողով ՚ի Քաղկեդոն ,  
և ընկենուն յանարդանս և յաքսորս և ՚ի մահա-

Ն . “ Եւ ասաց Պալակիսս ցՊետրոս Հայ  
բապետ և ցՅուլսէփ ներքինի . “Եյժմ կար-  
դացէք զգրեանդ , զի զգուշաղիք Եկեղեցւոց  
զոր յանձնեաց ձեզ Եստուած : Օ ի գայ  
ժամանակ , որ ոչ պարապէք ՚ի հարածանաց : ”  
Եւ Պետրոս զարմացաւ . և ասէ . “ Օ ինչ  
ասես : ” Եւ նա ասէ . “ Տրտմութիւն մեծ  
կրեսցէ սուրբ Եկեղեցի յետ առուրց . և  
յորժամ լինի , յիշեցէք զիս : ” Եւ ինքն սկը-  
սաւ միայն ալօթել գայս . “ Տէր Եստուած  
իմ անսասան պահեաւ զիս յուղիդ հաւատու .  
և մի տանիր զիս ՚ի ժամանակ տրտմութեան  
Եկեղեցւոցքո , այլ որպէս կամիս , առ զհո-  
գիս՝ թէ ՚ի տուէ , թէ ՚ի գիշերի , թէ ՚ի  
տան և թէ ՚ի բացեաց : ” Եւ յաւուր միւ-  
սւմ երթալով նմա ՚ի Ճանապարհ , ետես  
այր մի սուրբ և ասէ ցնա . “ Յիշեա զիս  
յաղօթս քո : ” Եւ ինքն անկեալ մեռաւ .  
և աղդ արարեալ առնե ՚ի մերձակայ գեղջի ,  
Եկին և տարան , պատուով թաղեցին : ”

Զ . “ Պատմեաց մեզ Յովհաննէս քա-  
հանայն աղէքսանդրացի , թէ ” Ոինչ էի ես  
մանուկ , գնալ կամեցայ ՚ի մեծ քաղաքն Ե-  
աւալս յուառամն իմաստասիրութեան , և

՚ի գնալն մասի յայրն ուր կայր մարդարէն մեռ  
ուեալ . և սկսաց աղօթել հանդիպիլ հաճոյի-  
ցըն Եպտուծոյ . և եղեւ ձայն առ իս . “ Ու-  
դեակ շկայ խաղաղութիւն , չկայ ժամանակ  
բարւոյ . զի յառնէ թագաւոր Վարկիանէ  
անուն և առնէ ժողով , ուր ուրանան ըգ-  
մահն Եպտուծոյ խաջիւ . և յառնէ պատրի-  
արք ուղղափառ ՚Իէսուկրոս անուն , որ կայ  
ընդդէմ չար ժողովոյն , և ’ի նոյնն կատարի  
վկայութեամբ . և փոխէ զդաւանութիւն  
նորա Տիմոթէոս անուն . և շփոթ ժողովոյն  
մնայ մինչեւ յԱեռնն : ”

Է . “ Հայրն Օւնոն որ կոչէր մարդարէ ,  
՚ի ՚Քրազրու գեղջէ՝ փղառացի , ասաց ցհայ-  
րըն Ետեփաննոս . “ Յէկ կամիս բարեգոր-  
ծութիւն առնել , արդ արա . եթէ կամիս  
յօտարութիւն գնալ , արի գնա , զի ժողով  
կամի լինել չար , և հալածումն յառնէ եւ  
կեղեցւոյ : ” Եւ ինքն խնդրեաց յԵպտուծոյ  
մահ , և ննջեաց քան զժողովն ՚Քաղկեդոնի  
յառաջ : ”

Ը . “ Պատոմեաց հայրն Ենոկտիոս Պատ-  
փիեցի գլուխ եղարց , թէ յԱյր մի սուրբ  
բնակէր յառանձնական տեղւով , և եկի առ  
նա սատանայ և ասէ . Հնազանդեաց ինձ :  
Եւ նա ասէ . Վի՞ , բարէ քեզ<sup>(1)</sup> : Եւ ասէ  
սատանայ . Չհնազանդիս . ահա առնեմ ժո-

(1) Ցօրինակիս Մէ բարէ չեւ :

զով որ ամենեքեան հնաղանդին ինձ : Եւ զայս ասաց զի հաւանեցոց զժողովն ասել, թէ ոչ խաչեցաւ Կոտուած, այլ մարդն : ”

Թ. “ Նախ քան զժողովն, յորժամ կամեր լինել, նաև մացաւ արեգակն . և տեղաց օդդ քարինս և հող . և քարինքն որպէս ձեռագործ էին մարդկան : Եւ ոմանքը Երուսաղեմացիք և Փղաւացիք առին ՚ի ձեռս և կուրացան : Եւ Եւսեբի առեալ ՚ի քարանցն առաքեաց առ Եւդոքսիա ՚ի Կոստանդնուպոլիս . և գուշակեաց թէ՝ պատճառ խաւարման եկեղեցւոյ լինելոց է : ”

Ժ. “ Եւ Պետրոս և Անդրէ աշակերտն իւր վկայեցին , թէ յորժամ եղեւ ժողովն, կուրացեալքն այն օծանելին զաջ իւրեանց արեամբ սպանելոցն վասն ուղղափառութեան, և բժշկէին : ”

ԺԱ. “ Եւ յետ ժողովոյն , ՚ի Կեսարիա յորժամ վիճէին Քաղկեդոնացիքն, թէ մարդըն խաչեցաւ , եղեւ պատարագն իւրեանց միս և արիւն մարդոյ . և չկարացին ճաշակել, և մնաց առ բազումս պահեալ :

ԺԲ. “ Եւ յորժամ զառաջինն թագն ՚ի գլուխն եղաւ Վարկիանսախ , խաւար կալաւ զամենայն երկիր , գուշակելով զիսաւարումն եկեղեցւոյ . և ինքն ասաց թէ՝ “ Օ այն նշանակեաց որ մինչեւ յիս խաւար էին աշխարհքու և ինեւ սկսանի լոյս և բարութիւն : ”

ԺԴ. «Յեկեղեցւոյն վերայ, որ շինեալ կայ՝ ի տեղւոջ համբառնալոյ Տեառն, կայր խաչ մի սակեղէն, և ընդ լինել ժողովոյն՝ յան կարծ այրեցաւ և փոշի եղեւ, և սուրբ եղեւ ժողովթոցն. և գրեցին ՚ի կրօտանդնուպօլիս, և առաքեցին խաչ պղնձի և եղին ՚ի տեղւոջն.»

ԺԴ. «Կրաց հայրն Խսայի թէ՝ «Կրաց ինձ հայրն Պօղոս եթէովլացի, որ էր հարիւր և տասն ամաց. թէ յետ քսան ամի լինի շփոթ մեծապէս ՚ի ձեռն Վարկիանէի, որ թագաւորէ վեց ամ։ Ղւ զինի լինի սակաւ մի խաղաղութիւն եկեղեցւոյ, և գառնան անդրէն ՚ի նոյն չարիս մինչեւ ՚ի սուր Քրիստոսն.»

ԺԵ. «Կրաց հայրն Օւնոն, որ ասի Ղը բերեակը լըան, որ յանդիման<sup>(1)</sup> Աղէքսանդրի էր, թէ «Գնացի առ նոյն հայրն Խսայի, և տեսի որ զսիրայն ՚ի ձեռին ունէր, և միոք իւր վերացեալէր, և կարծեցի թէ աղօթէր, և դարձայ. և կոչեաց զիս և ասէ ցիս. Դը բեա, թէ սուրբն Տիմոթէոս, որ այսօր յաքսորս է, յետ սակաւ ժամանակի դառնայ, և կանգնէ զուղղափառութիւնն երկու ամ. և ապա ննջէ. Ղւ յետ իւր լինի սարկաւագսպետն եղիսկոպոս. և յաւուրսն յայնոսիկ լինի պատառումն յեկեղեցի, որ ոչ ուշ

(1) Յօրինակիս յանդապն. :

ջանայ մինչ ՚ի յայտնել պիզծ ՚ԱԵՌԻՆՆ : "

Ժ. 2. " Հայրն Պաւղոս անապատացին սրատմեաց, թէ Այն միայնակեաց տեսանող տեսանէր, զի ժողովեալ էին ամենայն եպիսկոպոսաք և վառէին թոնիր. և կալան լուսապատկեր երիտասարդ մի, և ձգեցին ՚ի ներքս և ծեփեցին. և յետ երեք աւուր ետես և լեալ, և ասէ . " Տէր, ով էին որ այրէին ըղքեղ, և զիանրդ զերծարաց Եւ ասէ . " Հրեայքն ՚ԱՅՍՈՐԱԿԱՆՔ, Վաղիե դոնայք եպիսկոպոսքըն, որ ասեն՝ մարդն խաչեցաւ, և ոյրեն զեկեղեցի իմ: Եւ ծեր մի որ ոչ միաբանեաց ընդ նոսա, զերծոց զիս ամենեւին յացրմանէն: Եւ ասեմ. Տէր, ով էր նա: Եւ ասէ, Դէռսկորուս, և որպէս կիւրենացին էր Աիմոն, որ երարձ զխան իմ. և կիւրենա աշխարհէ Երիոյ, որ բառնան զխան իմ պարծանաց ՚ի ձեռն Դէռսկորեայ եւ սպահեն զուղղափառութիւն: "

Ժ. 3. " Տիմոթէոս ՚ի ժամ ննջման իւրոյ սրատմեաց, թէ Այն մանուկին էի և երթայի ՚ի դպրոց, հանդիպեցաւ ինձ փառատեսիլ ծեր մի, և համբուրեաց զգլուխ իմ և ասաց երեք անգամ. Ողջոյն ընդ քեզ Տիմոթէոս, հայրապետ կատարելութեան<sup>(1)</sup>: "

Ժ. 4. " Եւ դարձեալ ասէ նոյն Տիմոթէոս,

(1) Միւսն յաւելու. Դուք վնիս ուստի ուղղաբեան անդամոց քը պարուի:

թէ ավտեսլեանն երթայի ես 'ի Աելովամ, և  
տեսի վառք մի աւերակ. և դարձեալ էին  
մրգաբեր ծառքն ՚ի փուշ և այդին բեկո-  
տեալ. և հարցի թէ այս Բնէջ է . և ասէ ոմն  
ցիս . “Այս վանքն Խւինիլիստի (Յոթնաղի) է ,  
յորմէ կոչեցաւ յեպիսկոպոսութիւն , և ե-  
զեւ հակառակ ՚ի ժողովութիւն ՚ի ժողովն Քաղ-  
կեդռնի . և կատարեցաւ առ նա բանն , թէ  
“Եղիցի բնակութիւն նորա աւերակ , և ՚ի  
յարկու նորա մի ոք իցէ որ բնակիցէ”<sup>(1)</sup> :

Ճ. “Ի յաղուհացան շրջէր Խւինիլիսո-  
ստ հին ժամանակին ՚ի վանորայսն , և գնաց  
՚ի դուռն տեսանողի մենաւորի ումեմն . և  
փակեաց ընդդէմ նորա : Եւ նա բախէր . և  
ասէ մենաւորն . “Դնա սուտ քրիստոս , դնա  
Յուդա մատնիչ : ” Եւ ասէ . “Պահքն տա-  
րեալ է զիսելքն : ” Եւ գնացին ամօթով : ”

Ի. “Ենագանոս”<sup>(2)</sup> մի յշրուսաղէմ ՚ի Պիտ-  
ոպատիկէն տեսանէր զԾէրն , զի մտանէր ՚ի  
Տաճարն հրեշտակօք , որ ունէին լազտերս  
շիջեալս , և առէր . “Վոռացան զերախտիսն  
իմ և զպարգեւսն իմ : Եղկելին Խւիլիսու  
արար զտունս իմ այրս աւազակաց , բողանոց  
և պոռնկանոց և շնանոց : ” Եւ բացաւ առաջի  
նորա խորհրդանոցն , և սկիհն էր ազտեղի  
և փոշտեալ հանդերձիւ ծածկեալ . և ա-

(1) Սաղման . կը . 26 .

(2) Հնթերցող :

սաց Տէրն . “ Հանեք , ձգեցեք , զի ոչ է իմ  
դաշտ Եւ յանագանոսն ասէ . ” Եւ աստիշտ Եւ  
նա ասէ . “ Աղօրմութեամբ օգնեան ինձ Տէր ա  
Եւ եւ Տէրն և գնաց : Եւ այս տեսիլ յայտնի  
եղեւ ամենայն քաղաքին . և լուաւ Խելին  
նիսս թէ համբաւեցաւ տեսիլն . և ’ի գի-  
շերին աներեւոյթ արարին զմանուկն . եւ  
թէ զինչ արարին , Վսառուած գիտէ : ”

Իւ . “ Քաւուրսն յայնոսիկ Պետրոս ոմն  
սուրբ , ետես զսուրբ խորհուրդն ապակա-  
նեալ . և այլ ոչ եւս հաղօրդեցաւ մինչեւ  
ցմահ : ”

Իբ . “ Ոմն անապատաւոր Պաւղոս անուն,  
որ բնակեալէր հեռի յշրուսաղեմէ հնգե-  
տասան միլ , տեսանէր դաշտ մի , և ’ի մէջ  
զաշտին բլուր մի , և ’ի բլրին խորան մի , և  
’ի վերայ խորանին սիւն մի ոսկի՝ ակամբ և  
մարդարտով զարդարեալ . և ցոլմունք շա-  
ռաւեիլոց հրեղինաց հատանէին ’ի նմանէ .  
և շուրջ զնովաւ բազմութիւն զօրաց՝ որ  
կոյին նմա ’ի սպասու . և եղեւ ձայն յեր-  
կից որ ասէր . “ Աղովեալք են ամենեքեան  
որ ասեն երկու բնութիւն : ” Եւ որք շուրջ  
զխորանաւն կային , ասացին . Վմէն : Եւ ա-  
զինք ամենայն լցեալ ունէին զգաշտն սառա-  
նեալք յոյժ : Եւ եղեւ այլ ձայն որ ասէր .  
“ Աղովեալք եղիցին որ բաժանեն զմին զան-  
բաժանելին , նզովեալք եղիցին ուրացողքն

զմիննայ և ամենեքեան աղաղակէին . Ամէն ։ ։ ։  
Իդ . “ Եւ յետ սակաւ մի տեսին զի իւիւ  
նիսս զի անցանէր , և ասաց . “ Ա ասն այսորիկ  
անցանեմ ընդ քեզ , զի այլ ակն ոչ ունիմ  
տեսանել զքեզ . ՚ի պատերազմ երթամք ,  
և նեղութիւն ունիմք կրել . կամ կոխել ըզ  
խորհուրդն Ծատուծոյ կայ առաջի , կամ մե-  
ռանիլ . զի խնդրեն ՚ի մէնջ ուրանալ զհայրե-  
նի հաւատու մեր , և զի իմոնին և զշրէիցն  
խոստովանել , թէ ոչ էր Ծատուած որ չար-  
չարեցաւ և մեռաւ <sup>(1)</sup> ։ ։ ։ ”

Իդ . “ Ո հետ այսր ետես նոյն ինքն ծերն  
Պաւզոս զի որնաղ մերկ կանգնեալ յանկեան  
մի և սեւացեալ իբրեւ ղալուն : Եւ ասէ  
ծերն . “ Նդէր է այդպէսայ Եւ ասէ . “ Տեսա-  
նեմ զամօթ իմ , զի ոսկի բազում ժողովեալ  
եմ սուտ քրիստոսին , այն որ պատերազմե-  
լոց է ընդ բնութիւն հողոյ : ” Եւ իմացաւ  
ծերն , թէ ընդ մարդկային բնութիւնս է  
պատերազմելոց , որ ՚ի հողոյ ստեղծեալ : ”

ԻԵ . “ Կը վանք մի ՚ի սահմանս Տրապօ-  
լեայ , (որոյ) առաջնորդին անունն Պանուփրի-  
սու , որ եղեալ էր ՚ի հարկէ եպիսկոպոս : Եւ  
Վասիլիոս եպիսկոպոսն Աելեւկիոյ մինչ եր-  
թայր ՚ի ժողովն Քաղկեդոնի , տարաւ զնա

(1) Թարգմանիչն ՚ի բացատրութիւն անուանս իւինիվա-  
կամ Ավագինայ յաւելեալ ունէր աստ զայս բան . “ Մեր բա-  
ռով Յորնաղ էր այս ։ ։ ։ ”

՚ի հետ . և ետես զի զառաջննն ամենեքեան նզովէին զասողան երկու բնութմիւն , միա քանեալքն ընդ ՚Վէոսկորոսի , և յետս դարձեալ ուրացան զմինն և աքսորեցին զ՚Վէոսկորոս . և նորա արտմեալ արգելեաց զինքն ՚ի տուն մի , և արտօասուօք հայցէր ինքն յշտուծոյ յայտնել նմա զկամս իւր : Եւ եզեւ ՚ի հիացման , և տեսանէր կոնդակ մի օսկեգիր տարածեալ ՚ի կամարէն երկնից մինչեւ ՚ի վայր , և յերկուց կողմանց գրեալ լուսաւոր գրով . “Եզովեալ լիցի ժողովն Քաղկեդոնի . ուրացան զիս , ուրացան զիս . նըզովեալ եզեցին , նզովեալ եզեցին : ” Եւ ՚ի գիշերին մտեալ ՚ի նաւ , գնոց և պահեաց զքաղոքն Տրապօլիս յուղղափառութեան հնդետասան ամ : ”

ՏԶ . “ Ատեփաննոս հայր եղբարց , ՚ի Աելեւկիս ՚Վակու վանից , ասաց թէ “ Չհաւատամ թէ Ա ասիլիսս եպիսկոպոս անկաւ ՚ի ճշմարտութենէն , զի գիտուն և (այր) շնորհաց է : ” Եւ յորժամ դարձաւ ՚ի ժողովոյն , խնդրեաց ՚ի Տեառնէ ցուցանել նմա՝ թէ ունիցի զուղղափառութիւն . և տեսանէ տեսմիլ զի մտանէր յեկեղեցին , և պատուեցին զնա ժողովուրդքն . և եմուտ ընդ նմա այր մի լուսաւոր . և յորժամ կամէր բանալ զբերանն և ասել աղօթս , էած զմասն ՚ի բերանն , և դարձոյց եհան զնա յեկեղեցւոյն

և ասէ . “Չես արժանի . այլ որպէս դարձուցեր դու զերեսդ յիշառուծոյ , դարձուսցէ Աստուած զիւրին ՚ի քէն : ”

Իէ . “Այս Ատեփաննոս խնդրեաց յիշառուծոյ ցուցանել նմա ստուգութեամբ , թէ զի՞նչ կոչի ժողովն Քաղկեդոնի . և տեսաներ զմի յառաքելոցն Քրիստոսի , որ տաներ զնա յաբքունիս , ուր կային եղիսկովով ժողովոյն , և ասէ . “Այս են ատելիքն Քրիստոսի , այս են ուրացողք նորաւո Եւ ետնրմա խարազան և ասէ . “Հան զամենեսեան զատելիքդ Քրիստոսի : ”

Իօ . “Այր մի հոգեւոես Որոմաննոս անուն , ՚ի գեղջէ Աբէլմէուլայ (Քաղեստինի) առաջնորդ եղբարց վեցհարիւրաց , որք առեին ընդ նա , թէ “Յնդէր լուեալ կաս , և ոչ նախանձիս զնախանձ Տեառն վասն չար ժողովոյն Քաղկեդոնի : ո Եւ ասաց . “Աերեցէք ինձ զաւուրս տամն : ” Եւ գնաց ընդ անապատն ՚ի կողմանս հարաւոյ և աղօթեաց անսուաղ տամն օր . և խնդրեաց ՚ի Տեառնէ յայտնել նմա զՃշմարտութիւնն : Եւ եղեւ ձայն առ նա . “Դնա պահեա զհաւասն Նիկիոյ : ” Եւ չոդաւ պատամեաց եղբարցն , և նոքա ասեն . “Իսկ Յոյնք ասեն թէ զնացայն մեք ունիմբ , այդ զի՞նչ է : ” Եւ դարձեալ գնաց կրկնեաց հայրն զպահքն . և եղեւ ձայն . “Դնա լոէ Պետրոսի , Դէռակորոսի ,

Դրիգորի Աստուածաբանին, Դրիգորի նիւսացւոյ, Բարսղի, Դրիգորի սքանչելագործիուն Եւ գնաց պատմեաց վանիցն . և նոքա ասեն. “Վ ասն Քրիստոսի սրբեա զմեր սիրտս, զի և նոքա ասեն, թէ մեք զԴրիգորին և զԲարսղին ունիմք և զայն ՚ի յուղղափառացն հաստատեցաք:” Եւ գնաց երրորդեաց զպահքն, և ետես տումար պարզեալ յերկնից մինչեւ յինքն, և էր գրեալ “Ուրացան զիս ՚ի Քաղեղոն, և անցին ընդ սահման ուղղափառացն. վայէ նոցա, և նղովքէ բաժին նոցա:” Եւ իբրեւ ընթերցաւ, ոչ գնաց առեղքարսն, այլ յԵրուսաղէմ գնացեալ պատմեաց: Եւ շարժեցան եկեղեցականքն ՚ի վերաց Յօրնաղոյ: Եւ ընկեցին ՚ի յաթոռայն և եղին պատրիարք զԾէոդոսիոս: Եւ լուաւ Վարկիանէ, և առաքեաց վերստին հաստատեաց զՅօրնաղ յԵրուսաղէմ:”

Իթ. “Պատմեաց քահանայն Եւ փիլոս կեսարացին, թէ “Վինչ էր Տիմոթէոս յաքսորս ՚ի Խրախսաւսանաս կզզի<sup>(1)</sup>, գնացի առնա, և տեսի յոտս նորա վէրս սաստիկ, նա՝ սուրանքշկելի. և մերձակայքն ոչ դարմանէին զնա. և ես աղաչեցի զի թոյլ տացէ ինձ հըսկի և մաքրել զմարտիսն, և ասէ ցիս. “Ոչ տեսանես սպի յաջ իմ:” Եւ ասեմ “Եյնուան Եւ ասէ ցիս. “Վինչ կայի ես ՚ի ժողովն Քաղ-

(1) Ըստ այլ թարգմանութեան Խրախսանոս:

կեդոնի , և առանձնացեալ կայի յաղօթս , երեւեցաւ ինձ սեաւ մի Աթէովացի . և ունէր ՚ի ձեռին տումար մի , յորում կայր ձեռագիր բազում եպիսկոպոսաց . և ասէ ցիս . « Բնդէր չդնես զձեռագիր քո ՚ի սմա . դիր , թէ չէ՝ առից զոգիդ : » Աւ իբրեւ ոչ լուսոյ նմա , եզարկ զաշս իմ , և վայթեցաւ արիւն յաշացս իմ . և թուեաց թէ՝ փլաւ պտուղն . և գոհացեալ զլոտուծոյ , եղի զձեռս իմ անուամբն Քրիստոսի աշացս և բժշկեցաւ , և մնաց սպիս յիշատակ իրացն : Այնպէս և այս վէրս ՚ի սատանայէ է , որ կազացոյց զիս . և արդ թոյլ տուր , թէ պատեհ տեսանէ Տէր , կարող է բժշկել . և այս չէ շատ ՚ի դիւական ժողովոյն ինձ : »

Ա . « Ամեն Պետրոս՝ զօրապետ Վարկիանէի պատմեաց զօրապետին Օւենոնի , թէ « Յոյժ սիրով ընկալայ զժողովն Քաղկեդոնի . և էի հալածիչ ուղղափառացն , մինչեւ տեսի ՚ի տեսլեան ոմն որ ասէր ցիս . « Եշարէդ ՚ի բաց կաց . և եկ տես զօր ցուցանեմ քեզոյ Աւ տարաւ եցոյց ինձ տեղի անձառելի լուսով լցեալ . և կայր անդ թէոդոս (1) . և եցոյց (այլ) տեղի , յորում հուր բորբոքէր , և անդ կայր Վարկիանոս և ամենայն դաւաւնողքն Աւոնի . և զայն տեսեալ ՚ի բաց կացի , և եղէ ընդ Դէոսկորոսի և ընդ Տիմոթէիո:

(1) Միւսո թարգմանութիւնն յաւելու և կոռպանդիւնու :

ԱՅ. « Եշրկու տքեղայք կիսլրացիք , առնուն միոյն կիրակոս և միւսոյն Յօւլիոսոս , պատմեցին թէ՝ « Խայր առ մեզ վիսյարան մի նշանագործ , և յետ ժողովոյն ձայն եղեւ ՚ի շերմէն՝ ՚ի շնորհէն որ անդ կայր , թէ « Վ. յլ ոչ կամ ես ասո . մի գոյք առ իս . ուրացան գՅրիստոս ՚ի Ք.աղկեդոն , և ընկալան բաղումք և դուք ընդ նոսա : »

ԱԲ. « Ի Կեսարիա Փղշտացւոց կայր երկու տապան , Յօվհաննու Ոկրտչին և Եղիսէի մարգարէին . և սարկաւագ մի կոստոնէ գին անուն աղասաւորէր սրբութեամբ . և զինի ժողովոյն Քաղկեդոնի սկսաւ լալ . և ետես զնա ոմն Ազօղոս անուն և եհարց թէ վասն էր լսո : Եւ նա ասէ . « Յամենայն առաւօտու մտանէի , և տեսանէի նստեալ ՚ի մերայ տապանացն զՅովհաննէս և զԵղիսէէ , և մխիթարէի . և արդ ՚ի տարածել աղանդոյն Քաղկեդոնի կամիմ գնալ և զակիլ ՚ի տեսլէնէ սրբոցս : » Եւ նա ասաց թէ՝ « Յառաջ խնդրեա ՚ի սրբոցդ , և առ զխրաստն ըստ Աստուծոյ կամացն այս լուաւ նմա , և սկրսաւ խնդրել պաղատանօք . և երեւեալ սրբոցն ասեն . « Վրի գնա աստի , զի և ոչ մեք մնամք աստէն , այլ գամք զհետ քո , և ոչ թողումք դըեզ . մի տրտմիր : »

ԱԳ. « Հայրն Օռսիմոս անաղատաւոր խնդրեր տեղի , և եկն ՚ի Տեթէլ . և կայր

անդ վանիք մի , և աղաչեցին լինել առ նոսա-  
և նա ասէ , թէ “ Յաղանդէն Քաղկեդոնի  
փախչիմ : ” Աւ նոքա ասեն , թէ “ Առ մեզ չէ  
մոեալ աղանդն այն . ” Խաքելով զնա : Աւ  
հաւատաց նոցա , և յանձն էառ մնալ առ  
նոսա . և ’ի գիշերին յայնմիկ երեւեալ նմա Յա-  
կովը նահապեան ասաց . “ Ո՞ի կենար ասո-  
զի յուրացողացն Քրիստոսի են դոքաւ : ” Աւ  
յարուցեալ գնաց :

ԱԴ . “ Պատմեաց Հայրն Պետրոս վասն  
Եղեւթորոսի (Ալեւթերս) սրբոյ , որ բնա-  
կեալ էր ’ի Ալիլիկիո ՚ի լեառն Տօրոս . և էր  
գիսաւոր և ընդակեր , մինչեւ որսորդք ըմ-  
բռնեցին զնա որպէս անասուն . և իբրեւ  
իմացան՝ աղաչեցին զնա լինել ընդ եղբարս ,  
և նա յանձն էառ . և ժաղովեցան առ նա  
աշակերտք : Այս ’ի վախճանելի իւրում ասաց  
ընդ աշակերտան իւր . “ Կրեցէք , որդեակը ,  
և առաքեցէք ընդ ամենայն երկիր , թէ յետ  
քսան և չորս ամի լինի ժողով և ուրանան  
դՔրիստոս . փախիք և գուք և գնացէք ’ի Ան-  
ծըն Հայք և յԱգիպտոս , զի անդ մնայ ուղ-  
ղոփառութիւն , և անտի աճէ ’ի Անջապետու ,  
և փառաւորի Քրիստոս ’ի նոցունց :

ԱԵ . “ Կարձեալ պատմեաց Հայրն Պետ-  
րոս թէ՝ “ Ամեռանելն թէ ոդոսի թագաւորի ,  
ոմն ’ի յանապատն Ապիստոսի (Ագիպտոսի \*)  
ետես հոգւովին զման թագաւորին և ձայ-

նեաց ուժգին և ասաց . « Վեռաւ այսօր ուղղափառութիւն ՚ի բազմաց . ահա վլաւ երկինքն, և ոչ ոք է որ ցաւի և ողբայ զաղէտսա»

Աջ . « Յորժամ էր Վեռաոր յաքսորս ՚ի թերաս Եղիպտոսի , գնաց ոմն ՚ի թագաւորէն Կոմիտոս տալ հռոգ զօրացն արքունի . և երթեալ առ Վեռաոր ասաց , թէ « Կամին մեծարել զքեզ ՚ի ժողովն Եւ զինի այնորիկ եկն մագիատրոս ոմն ՚ի խնդիր նմա . և ըսկըսաւ տսել Վեռաոր . « Վիթէ սուտ ասէի՝ թէ Վարիամ չէ Վստուածածին և ոչ ծնեալն ՚ի նմանէ Վստուած : » Եւ նոյն ժամայն թափեցաւ լեզուն , և սկսաւ ուտել զլեզուն և զայլ միաքն , մինչեւ սատակեցաւ և գերեզմանն ընկալաւ զնա : Եւ զայս պատմեաց Տիմոթէոս ՚ի գիրս իւր : »

Աջ . « Փոսիմոս միայնակեաց սկիւթացի , եկն Եղիպտոս և ասաց . « Պետրոս հայր , մի որտմիր վասն չար ժողովոյն և Պռոտերի զոր առաքեցին աստ պատրիարք . քանզի երկնառուն Երաւառաղէմ աղաչեն զԼյոտուած վասն սուրբ եկեղեցւոյ և վաղագոյն սատակեն զՊռոտէր : »

Աջ . « Ոմն սարկաւագ Վասիլ անուն , աշակերտ հօրն Պետրոսի թերայեցւոյ , որ կեցեալ էր առանձնական երեսուն և հինգամ , եղեւ ձայն առ նա երկնաւոր , թէ « Եւ յաշխարհ և օգնեա ուղղափառութեան : »

Եւ եկն ՚ի | իկիա գաւառու և բնակեաց անդ  
երկոտասան ամ։ Եւ եղեւ կրկին ձայն առ  
նա թէ՝ “Երթ յանդիմանեա զ՛Յեստոր” ։  
Եւ մինչ յանդիմանէր, և նա շտէր, և ա-  
ռեալ զնա մագիստրոս ոմն, տանջեաց զնա  
և արկ ՚ի բանտ . և նա աղոչէր զՏէր ՚ի  
բանտին, և յանկարծ անկաւ ՚ի գլխին թէ-  
դոսի թագաւորին կզմինտը մի յօդիցն և շատ  
ցաւեցոց . և ՚ի տեսլեանն ասացաւ նմա ,  
թէ՝ “Վասն Վասիլի տանջանացն եղեւ քեզ  
այդ” . ո զի յորժամ յանդիմանէր զ՛Յեստոր ,  
թագաւորն մօտ կայր և լրեաց : Իսկ յոր-  
ժամ զտեսիլն ետես թագաւորն, զահի հա-  
րաւ և եհան զլասիլն ՚ի բանտէն, և առեալ  
խրատ ՚ի նմանէ և թողութիւն . և խրատն  
էր ժողովն Եփեսոսի որ եղեւ : ”

Աթ. “Եին մի անունն Ըլինէ (Հեղինէ)  
երկիւղած յլստուծոյ, ետես տեսիլ թէ՝  
“Յետ երեք ամի Եկեստոր անուն լինի պատ-  
րիարք, և դու մի հաղորդիր ՚ի նմանէ ո բայց  
լրեաց զտեսիլն մինչ Վասիլն յանդիմանեաց  
զ՛Յեստոր . զնոյն տեսիլ ետես և վասն ժո-  
ղովոյն Քաղկեդոնի որ եղեւն : ”

Խ. “Պատմեաց հայրն Պետրոս փիւնի-  
կեցին, թէ՝ “Եինչ մանուկն էի ես առ վար-  
դապետին խոնոմ, և էաք ՚ի Կոստանդինու-  
պոլիս, և անկաւ ՚ի վերայ իմ հիացումն, և  
ոկաց որոնել թէ զիսդու Երրորդութիւնն

միահաւասար է , և երեք՝ և մի է այս իշլ երես և ցաւ ինձ սուրբն Պիտրոս առաքեալն , և եհան զիս 'ի բլուր մի , և եցոյց ինձ լոյս ան պարագիր մեծութեամբ և անհաս , և ասաց . « Եհա Հայրն իշլ եցոյց ինձ այլ լոյս անսպարագիր և ասաց . « Եհա Արդին : » Իշլ ասեմ . « Աման է Հօրն : » Իշլ եցոյց ինձ այլ լոյս անսպարագիր և ասէ . « Եհա Հոգին Սուրբ այս իշլ ասեմ նման է Հօր և Արդւոյ : » Բայց Արդին մարդկապէս փայլատակէր անձառ և անհատական , և կայր 'ի մէջն յաջմէ Հօրն , և սուրբ Հոգին յաջմէ Արդւոյ : »

ԽԱ . « Ենինոս ոմն աղեքսանդրացի , որ մկրտեալ էր 'ի հօրէ մերմէ , ուներ կին Քաղէ կեդոնի աղանդովն , և չմիաբանէր ընդ հաւատ առն՝ մինչեւ հիւանդացաւ մերձ 'ի մահ , և յափշտակեցաւ 'ի տեսիլ , և ետես գրախտ անսպատմելի և ասացին . « Եյս է տեղի տռն քո : » Իշլ ետես խաւար , և անտի կայր ձայն լալոյ . ( և ասեն . « Եյդ է տեղի այդմ աղանդոյ ուր կասդ : »<sup>(1)</sup>) Իշլ առողջացաւ և դարձաւ յուղղափառութիւն : »

ԽԲ . « Եաւտիննէ , որ կոչի խոստովանութիւն , այսինքն խնամատար եկեղեցւոյ , էր յոց ողորմած , բայց խմորեալ էր 'ի ժողովն Քաղէ կեդոնի : Իշլ սա հիւանդացեալ ետես

(1) Ի մէջ փակագծի եղեալն պակասէթ յօքինակիս , և լրացուցաք 'ի միւս թարգմանութենէն :

աեսիլնման ասոցեալ կնոջն . և ետ տանել զինքն՝ ի վանքն Ուամանոսի , և հաղորդեցաւ յուղղափառութիւնն : Եւ յետ երեք աւուր նեղեաց . և իւր սղորմածութիւնն եւ զեւ պատճառ վրիութեան իւրոյ , որ չեթող զինքն՝ ի կօրսանեան : ”

ԽԳ. “Պունիտաս ոմն երեց՝ աղգաւ ՅՈՒ ուանդ , որ ոչ հաւանէր երկու բնութեանն ոչ մտօք և ոչ բանիւ , ետես ՚ի տեսլեանն հոտեալ մեռեալ մի ՚ի սուրբ Յարութեանն , որ յանկարծակի կենդանացաւ . և ունէր ՚ի ձեռին թուղթ ոսկէներկ արտաքոյ և ներքոյ . և յորժամ եբաց , լցեալ էր աղտեղութեամբ . և յորժամ զարթեաւ , մեկնեաց և ասաց . “Դարձեալ նորոգի աղանդն Քաղ կեդոնի . ” զի յայնժամ նորոգեալէր ՚ի Օենոնէ արքայէ : ”

ԽԳ. “Յարկաւագ մի սպասաւորէր սուրբ Յարութեանն (տաճարի) յլուսազէմ . և եղեւ նմա շնալընդ կնոջ , և եմուտ ննջելզգի շերն ՚ի սուրբն Վողգոթա . և եղեւ ձայնթէ ” Ապականեաց Յօրնաղ և աշակերտք իւր զտեզի սրբութեան իմոյտ Եւ վաղիւն գտաւ ձգեալ ՚ի փողոցին , և խոստովան եղեւ զեղեալն . և լուեալ բաղմաց սղջացան յաղանդոյն : ”

ԽԵ. “Պատմեաց Վասիլիսս երանելին թէ , ՚ի գեղ մի էր Պատաւլինէ անուն եւ

բեց մի Քաղկեդոնիկ, որ վիճեր ընդ աշխարհականի ու զլափառի . և կատարումն իրացն եղեւ, զի երեցն խնդրեաց հրավ փորձել զհաւատատան . և կապէցին զմէկ ձեռն ուղղափառին և զերիցուն ընդ միմեանս, և վառեցին ՚ի ներքոյ հուր, և սցրեցաւ ձեռն երիցուն, և ուղղափառն անհոգ կայր, և փառաւորեցին վթիտառոս :

ԽԶ. « Ի գիւղ մի անուն Այալտու, այր մի Եպիփան անուն չհաղորդէր ընդ այլսն, և երեցն սպառնացաւ, և նոս առեալ զկիններ փախեաւ . և երեցն նոյն օրն հարեալ ՚ի բարկութենէն Վստուծոյ՝ մեռաւ : Եւ դարձուցեալ զհապիփան ՚ի տուն իւր, ամեն գեօղն դարձան յուղղափառութիւն :

ԽԵ. « Յօրժամ Պետրոս պատրիարքն էր ԱՌէքսանդրիա յաքսորս, եղեւ ձայն առ Պիուր միայնաւորն սուրբ, թէ « Արի գնատո հայրն Պետրոս, և միսիթարեա զնաւ Եւ առաջնորդեաց նմա սիւն լուսոյ, և ած զնաւը կայրն Պետրոս, ՚ի տան միում : Եւ ետես տանօւտէրն շնորհ երկնաւոր ՚ի վերայնոցա, և աղաջեաց մկրտել զորդին իւր, և դարձան յուղղափառութիւն :

ԽԸ. « Ետես հայրն Պիու, զի բազում սբեղայք խաչ մի առեալ ձգէին առ իրեարլո և վիճեին . և ասաց թէ « Հերձուած մի լինի, որ ոչ բժշկի մինչեւ ՚ի կատարածու

Խթ. « Կին մի երանելի յշրուսազէմ Ուշ  
ասկիս անուն , գնաց երկրպագել ՚ի տա-  
ճար Համբարձմանն , և ետես զԾիրամայրն  
անդ նատեալ փառօք , և յերեսս ՚ի վայր ան-  
կաւ . և Ծիրուհին կանգնեաց զնա և ասէ .  
« Ո՞ի վախեր , և կաց յուղղափառութեան ,  
վի չարչարանք Որդւոյ իմոյ այլայլեցաւ ՚ի  
բերան պղծոց . և եղեւ եկեղեցի որպէս ըդ-  
կոսորդեալ անտառ առ լերամբ , և ոչ խաղա-  
վի մինչեւ ՚ի կատարած : »

Ճ. « Եւմնտիսս ասկազնացի , մարգա-  
րէացաւ վասն նորա Օքնոն անապատական  
թէ՝ « Ենիս եպիսկոպոս , բայց ոչ մեռանիս  
եպիսկոպոս : » Եղեւ եպիսկոպոս և սիրելի  
Նեստորի . և ՚ի յաքսորիլն՝ Նեստորի , աղաչէր  
զՅոքնաղ հաստատել զՆ, եստորի աղանդն :  
Եւ ՚ի լինել ժողովոյն գնաց առ նա (Եւոն-  
տիսս) և ջանայր յոյժ յերկու բնութիւնն . և  
՚ի դառնալն յիւր քաղաքն , կամեցան քարկոծ-  
առնել , և փախեաւ ՚ի Վիպրոս , և բարկու-  
թեամբ (Տեառն) սատակեցաւ . և իւր ըն-  
տանիքն գնացին և բերէին զնա նաւով . և  
եղեւ հողմն սաստիկ և ընկեցին զնա ՚ի ծովն  
նաւորդքն , գիտելով թէ աշխարհական է , զի  
կայր աշխարհական մի այլ կոստանդնուպօլ-  
սեցի մեռեալ . և այնպէս ՚ի գլուխ ել մար-  
գարէութիւնն Օքնոնի որբոյ առնն Կատու-  
ծոյ : »

ծ. « Այն մի ասկազնացի 'Անկիտէ աշնուն , սաստիկ յանդիմաներ վթաղկեդնեացին . և երեւեալ նմա սատանայ 'ի կերպարանս հրեշտակի , ասէ զնա . « Ի՞նդէր հոյհոյէս զսուրբ ժողովնեալ Եւ վլսց զաղիւսէ պատն 'ի վերայ նորա , և ոչինչ եղեւ նմա . և յարուցեալ խաչակնքեաց ընդդէմ (սատանացի) և չիք եղեւ : »

ծբ . « Պատմեցին մեղ երկու եղբարբ կիլիկեցիք , թէ « Վնացաք առ թէոդորոս Անուեստացին (Վոգառեստացի) , որ անկեալ 'ի խելաց և արարեալ էր մեկնութիւն Դործոցն և Աւետարանին Յովհաննու գըւխոյն , և յանդիմանեցաք զնա . և եհար ըզնա հրեշտակ Տեառն , և յետ երից աւուրց սատակեցաւ , որ էր յաշակերտացն 'Անտորի (1) : »

ծգ . « Ե Պամիկիլիա երկու դասք , ուղղափառք և հերետիկոսք , փայտ կոտորեին , և վիճեին վասն հաւատոյ . և վիայութիւն ճշմարտութեանն կամեցան խնդրել , և գրտան հնար զայս . բերին զտումարն | Եւոնի և զտահմանն ուղղափառացն , և ընկեցին 'ի հուր . և այրեցաւ տումարն | Եւոնի և անաւ

(1) Թէոդորոս Մոգառեստացի 'ի Մամեստիա քաղաքէ , ոչ աշակերտ՝ այլ առաւել վարժապետ և ուսուցիչ գտաւ Նեսոտրի , որ 'ի նորա զբոցն հաւաքեաց զթոյնս չարտապառութեան իւրոյ :

բատ մնաց ու զղափառացն . և միաբանեալ գարձան յուղղափառութիւն : ”

ծԴ . “ Եսին քան զժողովն Քաղկեդոնի երեք ամսաւ , յՆը ուսազէմ յեւթնելորդ ժամու ուռաւրն երեք արեգակն երեւեցաւ , մի յարեւելք , մի յարեւմուտք , և մի ՚ի մէջ երկնից , որ ցուցանէ թէ երեք ժողովն է լուսաւորիչ աշխարհի և ոչ այլքն : ”

ծԵ . “ Ի դառնալն Յորնաղայ ՚ի ժողովոյն Քաղկեդոնի՝ ելին ընդդէմ եկեղեցականիք և ժողովրդականիք յանդիմանել զնա . և Հայրն Պետրոս նոտաւ ՚ի լութեան , և երեւեալ նմա Փրկիչն ասէ . “ Ես զրկեցայ և հուասոս իմ այլայլեցաւ , և դու Հանգիստ խնդրես քեզ : ” Եւ յարսւցեալ գնաց նա՝ և ՅԱՀ օդուսիս ընդ նմա , այն որ յետոյ ձեռնոտդրեցաւ եպիսկոպոս , որ և կարի իսկ Հայհոյեր զՅօրնաղ : Եւ հրամայեաց Յորնաղ զօրականի միում ըմբռնել զնա որպէս խոռվարար . և շարժեցաւ Հայրն Պետրոս , բուռն եհար զուրարէն Յորնաղայ և պատառեաց , և ասաց . “ Դու ես որ Հաւատ փոխես . զայն թող , զքո գործքն այս գիշեր ասեմ՝ զի՞նչ գործեցեր . և խնդրեմ Հուր երկնաւոր մաշել զքեզ և զքոյսդ : ” Եւ անկառ յոտո նորա և ասաց . “ Ազորմեա . Հայր սուրբ , խնայեա : ” Եւ առեալ զՅԱՀ օդոս գնաց Պետրոս ՚ի յարկս իւր : ”

ծ. 4. «Յմէոսովիոս սյր իմաստուն և սուրբ, տանջելը ՚ի խորհուրդս իւր վասն երկու բը- նութեանցն, և խնդրէր յ՛ստուծոյ լալով՝ յայտնել նմա : Եւ երեւեցաւ նմա Յովհաննես Աւետարանիչն և ասէ . «Որ էրն ՚ի սկզբանէ, նա է զօր շօշափեցաք, զի՞անն կե- նաց, և ոչ է երկու բնութիւն : » Եւ զայս լուեալ հաստատեցաւ ՚ի մի բնութեանն : »

ծ. 5. «Այր մի սուրբ տեսեալ բազում ժողով եպիսկոպոսաց, և ՚ի միջինոցա Պատ- զոս առաքեալ որ ասէր . «Այդ է իմ պատ- ռէրն, զայդ ուսուցի . արդ եկացք առեք ՚ի սափորոյս և լուացէք զերեսս ձերոյ Եւ իբ- րեւ լուացին՝ ամենեքեան սեւացան, և ասէ . «Այդպէս ամենեքեան սեւացայք : »

ծ. 6. «Վարկիաննէ ոմն աշխարհական յան- գիմանեաց զՊամիկլայ եպիսկոպոսն, որ առ- նէր քարոզ երկու բնութիւն ասելով . և մատնեցին զնա տուկի (դքսի) քաղաքին, և տանջեաց զնա արջառաջքք . և այր մի լու- սաւոր մօտ կայր նորա՝ եգեալ ձեռն, և ոչ ցաւէր նմա, սակայն իջաննէր արիւն . և ա- րար բժշկութիւն ցաւոց ՚ի ժամուն յայն միկ : »

ծ. 7. «Ուրբն Տիմոթէոս պատմեաց հօրն Յովհաննու յորժամ յաքսորս էր, թէ աՅոր- ժամ կամէր լինել ժողովն Քաղկեդոնի, և եւ կին հրաւիրել զնա, և յացնմ գիշերի տանէին

զիս յեկեղեցին ՚ի պատարագի , և նշխարն էր սեւացեալ իբրեւ զածուխ , և բաժակն քացախ , և ոչ կարացի հազօրդել , և իմացայ զոր կամէր լինել :

Կ. « Ենաստաս արեղայ ուռհայեցի , աշակերտեցաւ հօրն մերում Պետրոսի և հազօրդեցաւ ՚ի նմանէ , և յայնմ գիշերի նոր մկրտեալ տեսանէր զինքն , և ոմն ծեր մեկնեաց , թէ յուզզափառութիւն դառնալ նորանալ է սրբութեամբ :

ԿԸ. « Թամասին երէց պատմեաց մեզ , թէ և Յորժամ գայր հերետիկոս եպիսկոպոսն ՚ի ժողովոյն Քաղկեդոնի , մկրտէի ես տղայ մի , և տեսայ ես և ժողովրդականքն , զի Հռդին Առւրբ աղաւնակերպ ել յաւազանէն և գնայր , և ասաց յօդաւոր ձայնիւ , թէ « Ես ոչ այլ դառնամ յայդ աւազանդ :

ԿԲ. « Պատմեաց մեզ հայրն Պետրոս , որ կայր իւր եկեղեցական մի , որ խմորեալ էր յաղանդն Քաղկեդոնի , և դիակեցաւ նա ՚ի նեղ շուկայ մի , և ջանաց դարձուցանել զերեսս իւր , և նեղ էր տեղին չկարուց . և եկեղեցականն երկրպագելով ողջոյն ետ , և նա յամօթոյն էառ զողջոյնն . և յայնմ գիշերի տեսանէր դաշտ մի , ուր ժողովեալ կային ամենայն սուրբք , և Քրիստոս Ետոռուած ՚ի մէջ նոցա փառօք նատեալ : Եւ գնաց եր կրպագեաց նմա , և Տէրն դարձոց զերեսս

իւր ՚ի նմանէ . և գիտաց թէ այն է պատճառն , զի էաւ զողջոյն հերեաիկոսին , և անկաւ յերեսս իւր . և մինչ բարեխօսէին ամենայն սուրբք , ոչ հայեցաւ ՚ի նա : ”

ԿՊ. “ Ամանք աշխարհականք արեւելեան ու զղափառք գնացին ճանապարհաւ ՚ի Եիւ բիտոնիա , և գնացին առ Աիւնակեաց մի , և նա ասաց ցնոսա . ” Ասեմ թէ ոչ հաղորդիք յեկեղեցիսս մեր : ” Եւ նոքա ասեն . ” Աւ նիմք առ մեղ հաղորդ ՚ի հարցն մերոց ուղղափառաց , և նոցա հրամանաւ հաղորդիմքոյ Եւ նա սատեաց և ասէ . ” Դուք աշխարհականքդ և զիանդիդ իշխէք նախատել զմեղ . և զոր ունիք առ ձեղ , այդ չէ հաղորդ : ” Եւ նոքա արտմեցան և ասեն . ” Օ ի՞նչ է այս : ” Եւ յաւուր կիւրակեի տեսին զհազրդն իւրեանց և էր վառեալ լուսով և անոյշ հոտով . և ոմն ՚ի նոցանէ հաւատացեալ էր Աիւնակեցին , և տեսանէր զիւր մասն միս արիւնաթաթախ , և մեղայ ասաց . և հաստատեցան յիւրեանց կրօնան , և փոխեցաւ մասն և հաղորդէին անխիղճ : ”

ԿՊ. “ Ատեփաննոսի սարկաւագապետին Երուսաղէմի քոյր մի կայր կուսան սուրբք , որ պահօք և աղօթիւք կատարէր զաւուրս իւր . և եհաս ՚ի կատարելութիւն այնչափ , որ յորժամ երթայր յեկեղեցին սուրբք Ատեփաննոսի և Յովհաննու , տեսանէր զուրբն

Ատեփաննոս և գիշովհաննես . և յետ ժողովյն Քաղկեդոնի գարձեալ գնայր աղօթեր ըստ սովորութեանն ընդ խմորեալն յազանդըն . և Երեւեալ նմա սուրբն Ատեփաննոս ասէ . “ Քոյր, Երթ նիստ ՚ի տան քո , մի գար այսր . և մեք առ քեզ ւ ամք . զի ընդ այս ժողովոյս չկամիմք լինել ուրացողաց Քաղկեդոնացւոց : ”

ԿԵ . “ Այն մի ուղղափառ պամիիլացի բը նակեր յիշուսազէմ , և գնաց ընդ մեծ ժողովոյ ՚ի տաճար Համբարձմանն , և գիպեցաւ նմա մնալ ՚ի տաճար Համբարձմանն , և փակեցաւ դուռնն , և զգիշերն աղօթեաց յեկեղեցին , և վաղիւն չոգաւ ՚ի Խրճիթն : Եւ յետ աւուրց կալաւ զետ ցաւ մահու , և աեսաներ զի կային առ ընթեր նմա հրեշտակք , և վիճէին ընդ նմա . գարձաւ առ մերձակայքն և ասէ . “ Տեսէր զինչ ասեն ընդ իս մեղագրութիւն , թէ զիարդ վճարես ուղղափառութեամք զկեանս քո . և համարես զքեզ կատարեալ , զի զանարժանիցն պատարագն տեսէր և զհազորդութիւնը , և աղօթեցեր ընդ նոսա : ” Նոյն կինն այն կանդնեալ ՚ի հիւանդութենէն՝ ապաշխարեաց , զի խնդրեաց յիշառուծոյ և ընկեց զինքն յանդիման սեղանոյն Կոտուծոյ , և գոչէր արտասուօք թէ՝ զիարդ խոստովանես ցուք զհաւատն ուղղափառ , յայտնեա մեզ

սուրբ Եկեղեցի : Եւ Եղեւ ձայն ՚ի սուրբ  
սեղանոյն և ասաց . “ Որդին Վատուծոյ նոյն է  
որ ծնաւն ՚ի կուսէն , նոյն է որ խաչեցաւն ,  
նոյն է որ թաղեցու , նոյն է որ յարեաւ և  
գալոց է : ”

ԿԶ. “ ՅԱՌԱՋԻԱ(1)Պամփիլացւոց կուսանաց  
վանաց աւագ մի կայր , որում անուն էր Օսյի ,  
և էին ուղղափառք : Եւ յաւուր միում  
յափշտակեցաւ մոօք ՚ի դրախտն , և ցուցին  
նմա զծառն կենաց . և տեսանէր թէ որպէս  
պարք մեղուաց գոյին և ջանային յարենալ  
՚ի ծառն կենաց : Եւ սարկաւագ մի ըստ  
գրեցեալ հալածեաց զիոսա . և հարցանէր  
Օսյի թէ ” Օ Յնչ է այդ ։ Եւ ասէ սարկա-  
ւագն . “ Օառս Քրիստոս է , և մեղուքս ժո-  
ղովն Քաղկեդոնի , որք չեն արժանի մերձե-  
նալ ՚ի Քրիստոս : ” Եւ մինչ եկն կլոդոնիոս  
եպիսկոպոսն յԱՌԱՋԻԱ(1) , յանդիմանեաց ըդ-  
նա Օսյի , թէ ընդէր ձեռագրեցեր ՚ի տումա-  
րին Եւոնի : Եւ նա ասաց . “ Մատամբ գրե-  
ցի , և ոչ մոօք ։ Եւ ասէ Օսյի . “ Մեռեալ  
ձեռք զիա՞րդ կարէ գրել առանց կենդանի  
մատանց : ” Եւ հրաժարեաց ՚ի նոյանէ իւր  
կուսանօքն : ”

ԿԵ . “ Եւոնտիոս անապատական տեսա-  
նէր զեկեղեցի մերկ , և զխորհուրդն վայ-

(1) Յօրինակիս Իրավու :

թեալ, և ասէին . « Այս է նոցա եկեղեցին և պատարագն , որ չորրորդութիւն խոստովանեցան ՚ի Քաղկեդոն : »

Կը . « Եւ այլ ոմն սուրբ և տեսանող տետեսանէր զեկեղեցին կոստանդինուալախ ախոռ լեալ , և լի անսուրբ անասնովք և գարշ և զաղիր հոսով : »

Կթ . « ( Եպիկտիտոս ) Եպիսկոպոս Հայր վանից Պամիիլոյ տեսանէր զեպիտիկոպոսն Վճ զիքոս զիւգեսեայ քաղաքի , այն՝ որ կոչէր ոզորմած , և զիւպիտիան Պերկացի՝ թաղեալ ՚ի ցեխոս գարշ մինչեւ ցպարանոցն : Եւ ասէ Վճզիքոս ( ցիւպիտիան ) . « Դու բարի գործովք զարդարեալդ , զիստրդ եղեր այդպէս : Եւ պատասխանի ետ ( Եպիտիան ) և ասէ . Կիւարին յԱստուծոյ էր և չարս ՚ի մէնջ . զի հնազանդեցաք ժողովոյն Քաղկեդոնիան Եւ ասէին թէ՝ նա էր նորոգել զտումարն | Եւսնի : »

Հ . « Վին մի սուրբ և զգաստ Վկթասաւլի անուն , յետ ժողովոյն Քաղկեդոնի մտօք յերկուս բաժանեալ տարակուսէր՝ թէ յորոց Հաղորդիցի , և Հայցէր յԱստուծոյ ցուցանել նմա . և տեսանէր Եկեղեցի մի երկխորանի , և մեծ խորանն էր մերկ և Քաղկեդոնիկ մի ՚ի վերայ , և փոքրն զարդարուն և ճառագայթաւոր և մանուկ մի հրեղէն ՚ի վերայ նորա , և ասէր՝ թէ « Վռիս եկ՝ Հաղորդեաց , ՚ի բաց կաց յուրացողացդ : » Եւ էր

ինքն Քրիստոս որ ասէք զայս : ”

ՀԱ . “ Եվանս հօրն Որոմանոսի էին երկու եղբարք , Տիմոթէոս և Յովհաննէս . Տիմոթէոս վախճանեցաւ և պատեցին զնա և տարան ՚ի թաղել , և յանկարծ նստաւ ՚ի դագաղն առընթեր գերեզմանին և ասէ . “ Կիտէք , եղբարք , որ առ իս չկայր այլ մեղաց պատճառ քան զայն՝ որ իրաւ կարծէի զերկու բնութիւնն : Եւ վասն այնորիկ տանին զիս ՚ի տանջանս , և խնայեաց յիս ողորմութիւնն Վատուծոյ , որ ասէմ ձեզ զայս վասն ձեր զգուշութեան , և որ հայցէք վասն իմ թողութիւն ուղղափառութեամբն ձերով : ”

ՀԲ . “ ՅԵՒնախոք Վարուց մերձ յարքունիսն բնակեալ էր ոմն այր սքանչելի , որ ոչ առնոյր ինչ յումեքէ , բայց սակաւ բանջար , որով լնոյր զպէտսն իւր . և զի սաստիկ և յայտնի յանդիմանէր գՔաղկեդոնիկոն , ըստ պանաւ ՚ի նոցանէ տանջանօք . քանզի ասէր նա՝ թէ “ Հոտ անօրէնութեան գայ ինձ հանապազ ՚ի տեսանելն իմ զնոսա . և ոչ կարեմ՝ տանել լոռութեամբ : ”

Ի վեց ամին Արքիանէի և ՚ի շպաթութեան  
 Ասորւոց սպանաւ. Վաղենտիանոս Հռոմաց  
 Թագաւորն . և աստ պատառեցաւ Թագաւ-  
 որութիւնն Հռոմայ ՚ի Կոստանդնուպօլէ-  
 Արպէս Արքիանէ առանց Հռոմայ կամա-  
 ցըն նստաւ յաթու Թագաւորութեանն ,  
 նոյնաղէս և նոքա գնացին ըստ կամաց իւր-  
 եանց : Ի՞նդ նմին և պատառեցաւ կարգ ե-  
 կեղեցւոյ և բարձաւ խաղաղութիւն եկե-  
 ղեցւոյ զինի ժողովոյն Քաղկեդոնի : Եւ մե-  
 ռաւ Արքիանէ լցեալ նզովիւք ՚ի որբոց ա-  
 րանց ժամանակին , Թագաւորեալ վեց ամ-  
 իւ ՚ի նոյն ամի Թագաւորեաց ՚ի Հռոմ-  
 Եւոն Թրակացի ազգաւ՝ յիշւանացն Ար-  
 քիանէի <sup>(1)</sup> . Եւ ՚ի նոյն ամի Թագաւորեաց  
 Պարսից Պերսզ , և արար հալածումն Քրիս-  
 տոնէից . և արար պատերազմ ընդ Հռոմայ-  
 եցիս : Եւ Լեւոն ետ զդուսոր իւր ՕԵնո-  
 նի , և կացոյց զես Թագաւոր կողմանցն ա-  
 րեւելից <sup>(2)</sup> , և զի՞ասիլիսկոս արար ստրատե-

(1) Լեւոն Թրակացի որ եր հրամանատար , կոչեցաւ ՚ի ծերակուտէն յաթուն կայսերական կոստանդինուպօլսի :

(2) ՕԵնոն խաւրացի ազգաւ , փեսայացեալ Լեւոնի՝ կա-  
 ցուցաւ ընդհանուր զօրապետ Աբեւելից բանակին :

լուս ՚ի թարակիա (1), և Վիտուրինոս եղեւ կեսար ՚ի Հռոմ (2), և յետ սակաւու ըսպանաւ յԲակմիոսոց և քարոզեցան Անթիմոս և Լուքարոս կեսարիք :

Յասմ ժամանեակի շինեցաւ կալանիկոս, որ է Ուազայ, հրամանաւ Լեւոնի թագաւորի, և կոչեցաւ Լեւոնտիպօլիս : Եւ աստ ՚ի սոյն ժամանակս եղեւ հրացրեաց ՚ի կրտանդնուապօլիս, որ ոչ էր լւալ յաւիտենից, և սյրեցաւ ՚ի ծովի մինչեւ ՚ի ծով . և ել

(1) Բասիլիսկոս եղբայր Վերինեայ կնոջ Լեւոնի կայսեր, եղաւ գլուխ բանակին որ առաքեցաւ ընդդէմ Գիններիկայ թագաւորին Վանտաւալաց :

(2) Միտուրինոս (Մայորիանոս) կացուցաւ կայսր՝ ի ձեռն Ռիվիլմերայ, որ ուներ յայնեւամ՝ ՚ի ձեռնին զաստ գերագոյն կառավարութեան Հռոմոց . և Լեւոն հաստատեաց զկայսերութիւն Միտուրինոսի յամի 457 : Յետ սակաւու մախացեալ Ռիվիլմերայ ընդ առաւելութիւն իշխանութեան Միտուրինոսի առ որով ստուերանայր ճօխութիւն իւր, ևտ սպանանել զեա ՚ի Գորդոնա որ ՚ի գոււառին Միլանու, յամի 460, և կացոյց նմա յաջորդ զոմի լուկանացի՝ Լիրիոս Սեւերոս կոչեցեալ, զոր Միլայցել Լուտրոս անուանէ : Զկնի վախճանի տորա Ռիվիլմեր կացոյց կայսր զԱնթեմիոս հաճութեամբ Լեւոնի : յամի 467 : Եւ զսա յաջորդեցին հետզհետէ Ռզիւրիսոս Գոնդըպոտ, Գլիւսերիոս . ոյլ կայսերութիւն սոցա ոչ ընկալաւ հաստատութիւն ՚ի Լեւոնէ կայսերէ Բիւզանդիոց . որպէս սովորութիւն էր ցայն վայր, վասն որոյ նա ինքն Լեւոն առաքեաց կայսր յԱտալիա զմի ոնն յընտրելոց իւրոց Յուլիոս Կեսար, որ էր ՚ի կոյսերական գերգաստանէն . և պատկեցաւ յամի 474 : և եղեւ վերջին ՚ի կայսերո Հռոմոյ, յորմէ և այսր գաղաքեաց կայսերութիւնն Հռոմ մէտական :

թագաւորն զվեց ամիս և ոչ կարաց մոտանել  
՚ի քաղաքն : Եւ յայնժամ սահմանեաց | եւ-  
ոն կայսր , թէ յաւուր կիւրակէի յեկեղե-  
ցիս կացցեն մեծ և փոքր՝ յաղօթս և յու-  
սումն , և այլ ինչ մի գործեացեն յաւուր  
կիւրակէի :

Եւ յաւուրս | եւոնի ամիս մի օդդ հող  
և մոխիր տեղաց , և տռաւել ՚ի կաստանդի-  
նուալօխս , և կուտեցաւ թիղ մի , և զահի  
հարան աշխարհ և ակն ունեին անցման . և  
՚ի բաղում տեղիս հուր վայթէր և այրէր ըդ-  
տեղիս տեղիս : Եւ յայնմ ժամանակի կիցի-  
կոն քաղաք ՚ի շարժմանէ և ՚ի կացականց  
շրջեցաւ . և բաղում քաղաքք և գեօդք ՚ի թը-  
րակիս ապականեցան : Եւ թագաւորն | եւ-  
ոն աղէցաւութեամբ մեռաւ . թագաւո-  
րեալ ամս ութեւտասն : Եւ յաւուրս սորա  
ոչ պակասեաց խռովութիւն և աւեր աշ-  
խարհի և եկեղեցւոյ , և գիտաց ամենայն  
խմաստուն թէ ժողովին Քաղկեդոնի զայրա-  
ցոց զի՞ստուած : Եւ խռովեցաւ հոգինորա  
սուրբ յամագարիչու գաւանութեանց նոցա :

Եւ թագաւորեաց փոքր | եւոն հրամա-  
նաւ մեծ | եւոնի , վեցամեայ , որ էր թոռն  
նորա , և որդի Օքնոնի՝ կողման արեւելից  
թագաւորին : Եւ յետ ամի միոյ եկն հայր  
նորա Օքնոն՝ զի երկիրապագք որդւոյն . և  
կին նորա , մայր տղայոյն , խարեաց զնա որ-

պէս զմանուկ և ասէ . « Հյորժամ գայ հոյք  
քո և երկրպագէ քեզ , դիր զմագն ՚ի գը-  
լուխ նորա և դու երկրպագեա նմա : » Եւ  
արար այնպէս . և յետ սակաւ մից մեռաւ  
տղայն Եւսն , և տրտմեցան բաղաւմք : Եւ  
էր Օենոն յԱսորի ազգէ , և ազաշէր զնոս  
թագուհին մեծ Եւսնի Շերինիա (Ու էրինէ )  
վասն ժողովոյն Քաղկեդոնի՝ զի ընկալիք ըզ-  
նա , և ոչ լուաւ նմա : Իսկ թագուհին ըն-  
կեց զնա ՚ի թագաւորութենէ և եղ զեղ-  
բայր իւր զիասիլիկոս , որ էր մինչեւ ցայն-  
վայր ապատամքեալ ՚ի Եւսնէ յԱրակիլիա :  
և քարողեցաւ թագաւոր և արար զօրդին  
իւր զիարկոս՝ կեսար : Եւ Օենոն փախեաւ  
յերկիրն Ասորւոց՝ թաղեալ զմագաւորու-  
թիւնն , և մասեալ ՚ի բերդն Աաղամէ դա-  
դարեաց . և կին իւր Արկանիա (Ու եկն առ-  
նա գաղտագնաց :

Եւ Քասիլիսկոս որդւովին թագաւորեաց  
ամս երկու . և էր սղիզծ և շարադեւ , և գը-  
րէր ամենայն ուրեք վՔաղկեդոնին հաստա-  
տել և քարողել ՚ի վերաց աշտարակի , և  
հալածել զուզլափառմն , և եղեւ առելի  
յաջս ամենեցունց . և գային առ Օենոն ,  
և եղեւ ժողով մեծ : Եւ Քասիլիսկոս առաւ-

(1) Արկանիա . այն է Արիադնէ՝ կին Զենոնիոք դռւառք  
էր Եւսնի Ա . կայսեր Յառնաց :

քեաց զԱրտիմաս (Արմատիոս) զօրագլուխ պատերազմիլընդ Օհնոնի : Եւ Օհնոն խօսեցաւ ընդ նմա ՚ի խաղաղութիւն , և խօսացաւ զեա կեսար առնելը Եւ առեալ ըդ Օհնոն զօրօքն ածին ՚ի Կոստանդնուպօլիս , և ընկալսն քաղաքն խնդութեամբ . և փոսիւեաւ Շասիլիսկոս որդւովքն յեկեղեցի մին և առաքեաց Օհնոն մերկացաց զեա ՚ի ծերանեացն , և առաքեաց ՚ի Լամիս Կաստրա (1) Կապադովիացւոց . և ածին ՚ի բուրգն մի և փոսկեցին յամենացն կողմանց , և դառնապէս մեռաւ անդէն : Եւ Օհնոն արար զԱրտեմիս զօրապետ և զօրդին իւր կեսար (2) . և զինի այնարիկ սպանաւ Արտեմիս, և զօրդին արարին ընթերցող եկեղեցւոց :

Յայնժամ թագաւորին ՚ի ձեռն Ակակայ պատրիարքի Կոստանդնուպօլիսի յորդորեալ յուղղափառութիւն առաքեաց առ Պետրոս պատրիարքն Անտիոքու և առ Տիմոթէոս պատրիարքն Աղչքսանդրու , որ կային ՚ի բանտի ՚ի Կոստանդնուպօլիս, հարցանել հաւատոց խաստավանութիւն . և նոքա ետուն

(1) Կառուր ՚ի լեզու Յունաց և Լատինաց նշանակէ աշտարակ , բերդ , խոկ Լամիս է Ամմես ամբոցն : ուր բանտարկեալ լինէին կասկածաւոր անձինք առ բիւզանդեան կայսերութեամբ :

(2) Արդին Արտիմոսի կոչեր Բասիլիսկոս որ ապա զրկեալ յիշմանութենէ՝ և զեւ եպիսկոպոս Ամեղիկոսի , ՚ի Բիւթանիոս

գրով զՆիկիայն և զՎիւրդին և զՎիսկորոսին, և ասացին թէ՝ “Ո՞ք յայդ եմք :” Եւ թագաւորն առաքեաց ընդ ամենայն երկիր և ձեռնագրեցին ՚իդաւանութիւնն յոյն եւթն հարիւր եպիսկոպոսք, և ասացին թէ՝ “Ազովեմք զտումարն լեւոնի, նզովեմք ըլժողովն Քաղկեդոնի, նզովեմք զՎկակ, նզովեմք զՆեստօր որ պատառեցին զհաւասս, և նզովեալք եղիցին ոչ նզովոչք նոցա :” Եւ ընկալեալ թագաւորն և հաւանեալ՝ առաքեաց զՊետրոս զոր Թատիին կոչեն, ոպատուով մեծաւ յԱնտիոք յախոռն իւր, և անդ կատարեցաւ : Եւ զՏիմոթէոս յԱղեքսանդրիա, զոր ձեռնագրեալ էր ուղղափառացըն զինի Պրոտերաց, և կայք յաբարս :

Դ յայսմ ժամանակի ապատամքեցին Ասմարացիքն, և եղին իւրեանց թագաւոր հաստատուն, և զբազում կոտորեաց ՚ի քրիստոնէից, և մտեալ ՚ի Կեստրիա՝ քակեաց զեկեղեցիսն : Դակ զօրքն Հռոմայեցւոց գընացեալ ՚ի վերաց նոցա կոտորեցին . և զՀռոտոս թագաւորեալն Հրէից առաքեցին առ

(1) Պրոտերիոս էր ՚ի Քաղկեդոնականաց, որ յաջորդեաց ղաթոռն Աղքանդրիս զինի Դեսոկորոսի զոր Մարիկիանոս կայսր աքարեաց ՚ի Գանդրաս Պապլագոնիոց վասն պաշտոն երեւելց Եւստիքեայ մոլորութեանն :—Եւագրիոս, Պապ : Եւեւ. Բ. 5 :

(2) Ա մէ Յոստոս կամ Յոստոսս կոչեցեալ, որ էր զըլուի յԵլւղակաց :

Օենոն թագաւոր, և զշինեալի ՚ի Հրեից  
տաճարն՝ օրհնեցին եկեղեցի յանուն սրբոյն  
Խարիամայ, և զգտեալ Հրեայսն յէնտիոք  
կոտորեցին :

Յայսմ ժամանակի եղեւ շարժ, և Նիկո-  
միդա քաղաք կործանեցաւ . և էր այս վե-  
ցերորդ շրջումն Անիկոմիդայ ՚ի շարժմանէ :  
Եւ յետ այսորիկ մեռաւ թագաւորն Օե-  
նոն վաթուուն տմաց, թագաւորեալ ամս  
վեշտասան : Եւ Փիւրոս (Պիւրոզ) թագաւորն  
Պարսից, դառն հալածիչն քրիստոնէից չարտ-  
մահ եղեւ, և էառ զթագաւորութիւնն  
Բալաւշ (Ապղարշ) ամս չորս . և յաւուրա  
սորա խաղաղութիւն եղեւ քրիստոնէից : Եւ  
թագաւորեաց Ենաստաս ՚ի տեղի Օենոնի,  
և ընդ թագաւորեն գտաւ չարիք ՚ի ման-  
կունս դպրոցացն, և լուեալ թագաւորն  
բարկացաւ և կոտորեաց զամենայն դպրոց  
Կոստանդինուպոլսի : Եւ սորա հրամանաւ  
շինեցաւ քաղաքն զոր Տարա կոչեն, վասն  
անդ սպանանեելց զԴարեհ, և անուանեաց  
զնա Ենաստաս յանուն իւր՝ Ենաստասուպո-  
լիս <sup>(1)</sup> : Եւ յաւուրա սորա ՚ի շարժմանէ ըն-  
կրզմեցաւ Անիկոպոլիս : Եւ զկնի Բալաւշը  
թագաւորեաց Պարսից Կուտ (Կաւատ). և  
Համալասուպ <sup>(2)</sup> եղբայր նորա հալածեաց ըզ-

(1) Միքայել Չամչեան. Պատմ. Հայոց, Հատ. Բ. յեր. • 255:

(2) Համալասուպ է սխալ օրինակողաց, փոխանակ գրելց Համ-  
չ կամ Զամառապ :

կուտն ամս երկու . և դարձեալ զօրացեալ  
կուտն սպօն զեղբացըն և թագաւորեաց ա-  
մսո երեսուն : Եւ յայնժամ ելին շնչք և  
յաղթեցին Պարսից , և կարծեցին Պարսիկք  
թէ շռոմայեցւոց բանիւ եղեւ , և ժողո-  
վեալ զօրս՝ եկին յերկիրն Վիշագետաց և  
առին քաղաքս բազումն (1) :

Յայսմ ժամանակի եղեւ Պատրիարք Կոռ-  
տանդնուողօլսի քսաներորդ՝ Տիմոթէոս , յոյժ  
առաքինի և խմատուն , որ ասաց թագաւ-  
որին և գրեցաւ կանոն զուրբ Կյտուածն  
խաչցար ասել ընդ ամենայն երկիր . և խըն-  
դաց Կնաստաս եւ սահմանեցաւ յերկիր  
ամենայն : Եւ եղեւ ժխոր մեծ ՚ի Կոստանդի-  
նուողօլիս՝ թէ զերրորդութիւնն իսաշեն . և  
էին Կեստորականիք և սպառնացան Տիմո-  
թէի , և սպանին երեց մի զՏիմոթէի . և  
Տիմոթէոս զայրացեալ գնաց ՚ի քաղաքէն :

Յայսմ ժամանակի երեւեցաւ այրն բա-  
նաւոր Փելիքսիանոս արքեպիսկոպոս , որ է  
Վնբէջայ , ձեռնադրեալ ՚ի Պետրոսէ Կնտիո-  
քու : Սո արար յոլով գրեանո ուղղափառ  
վարդապետութեան : Օսմանէ լուաւ թա-  
գաւորն (Կնաստաս) և առաքեաց տարաւ ՚ի  
Կոստանդինուողօլս եպիսկոպոսք և վարդա-  
պետօք , և մի էր ՚ի վարդապետացն Ոեւե-  
րիանոս և երկու հարիւր քահանաց ընդ նմա-

(1) Մեթացեւ Չամչեան , Պատմ . Հայոց . Հատ . Բ. յեր . 252:

և հրամացեաց թագաւորն ըննութիւն առնել վասն հաւատոց . և յաղթողք երեւեալ վարդապետութեամբ Փիլաքսիոս (Փելքսիանոս) և Աեւերիանոս ընդդէմ չարագառացն : Եւ հրամացեաց թագաւորն հանել 'ի գերեզմանէն Եւփիմեայ վկայի զտումարն | եւանի և Քաղկեդոնի , և այրեցաւ հրով : Եւ Բաղասիոս (Փլարիանոս) ոչ կամէք զայրելն , և ցուցու այնու թէ հոմախոհ է Քաղկեդոնի , որ էր պատրիարք Ենախոքու , և նզովցաւ և գնաց յաքսորս : Եւ Փիլաքսիոս ձեռնադրեաց եպիսկոպոս 'ի Կոստանդինուպոլիս զմեծն Աեւերիանոս , լի հոգւով և իմուտուուն և փարթամ Եստուածաշունչ պրովք . և յաւուր ձեռնադրութեան իւրոյ սոաց զճառն , որոց սկիզբն այս է . “ Աբբբաժաննեն զմիաւորութիւն Արդւոյն Եստուծոյ . ո և կոյ 'ի նմա տմենայն արատ աղօնցաւորոց , զր (զճառն) և ունին Յոյնք և կարդան 'ի յանդիմանութիւն իւրեանց : Յայս ժամանակա էր Արձոյ եպիսկոպոսն , և ունէր չնորհ աստուածային և ոչ 'ի դպրութենէ մարդկան . զր ընկալաւ զնորա վարդապետութիւնն Աեւերիանոս պատրիարքն Ենախոքու , այն որ ձեռնադրեցաւ 'ի Կոստանդինուպոլիս յաքսորելն զի՞աղաւիոս Եստ երեւեցաւ Ամսն բրուան , որ արար ճառս և շարականս ուղղափառ դաւանութեան :

Յայսմ ժամանակի թագաւորն Պարսից կուտն (Կաւատ) ժողովեալ զօրս՝ Եկե ՚ի Կարնոյ քաղաք և էառ զնա . և արար սէր և ոչ կոտորեաց զնոսա , զի ոչ անարդեցին զնա յորժամ պաշտրեալ էր զքաղաքն . և գարձու Եկե յԱմիթ յաշնան ժամանակն և սառ տիկ նեղէր զնոսա : Եւ Եկեալ էր առ նասա Յովհաննէս վանական ՚ի Կարթմայ և քարոզէր մեծատանց ողբրմել աղքատացն , և ընդայլ ամբոխն ասէր . “ Արքեցէք զձեզ պահօք և լալով և հսկմամբ գիշերականօք : ” Եւ Երեւեալ նմա հրեշտակ Կատուծոյ ասէ . աՅսով հաննէս , կորնչի քաղաքս այս վասն մեղաց , և դու վախճանիս և ոչ տեսանես զաւեր քաղաքիս : ” Այլ նա ոչ դադարէր յազօմից և ՚ի քարոզելց . և Եկե անձրեւ ոսսատիկ և Երկայն հանգերձիւք իւրեանց Պարսիկքն ըսկըսան նեղիլ և տկարանալ . և զի շնեալ են ին փայտեզէն քերգս , և տարեալ առ պարիսպն , և քաղաքին իմաստունքն ջուր հաց համեմի արկին ՚ի վերայ և այրեցին՝ ձգելով կրակ ՚ի նա : Եւ թագաւորն Պարսից խրնդրեաց ինչս և ուկիս զի գնասցէ . և նսքանարդեցին զնա և ՚ի չարիս իւրեանց ոչ զզնացան . և քարկացաւ Տէրն և մատնեաց զքաղաքն և կոտորեցին ՚ի նմա անձինս ութուն հազար , և զայլն գերեցին . բայց միայն զի մեծ Եկեղեցին լցեալ էր ժողովրդեամբ :

խնդրեաց զօրագլուխն Հայոց և թողաւ այն<sup>(1)</sup>: Եւ եմուտ թագաւորն յեկեղեցին , և եւ տես զպատկերն Փրկչական նկարեալ ՚ի խռանն , և հարցեալ թէ ով է . և ասեն՝ թէ « Աստուածն է քրիստոնեից : » Եւ երկրպագեաց նմա թագաւորն , և ասաց . « Ոս երեւեցաւ ինձ ՚ի տեսլեան և ասաց . մի երթար , մատնեմ զքաղաքս ՚ի ձեռու քո : Արդոչ ես առի զքաղաքս , այլ Աստուածն իւրեանց ետ ինձ , զի մեղան նմա<sup>(2)</sup> : »

Եւ առեալ գերի բազում գնաց ԱԽոհան , և ոչ կարաց առնուլ զնա . և գնաց յերկիր իւր՝ թողեալ ՚ի յԱմիթ հեծեալ : Եւ լււեալ զօրացն Հռովմայեցւոց , եկին պաշարեցին զԱմիթ և ոչ կարեին ինչ առնել քաղաքին , զի ոմն ՚ի գլխաւորացն Կկղոն անուն , յոյժ զօրաւոր և խոհեմէր , և յաղթահարէր զՀռովմայեցիսն : Ազա այր մի Դադան անուն եկն ՚ի Կարթայոց գեղջէ և խօսեցաւ ընդ Հռովմայեցւոցն զօր ինչ առնելոց էր , և չոգաւ խարեաց զԿկղոն և ասէ . « Առընդ քեզ չորս հարիւր ձիաւոր և երթամք բերեմք հինգ հարիւր ձի , որ կան յարօտս ՚ի բացեայ : » Եւ յորժամ գնացին , ելին դարանամուտքն և սպանին զնոսա . և իմացեալ Պարսից զնենգութիւն առնն , բարկացան և

(1) Այն է Վարդ սպարապետն Հայոց՝ եզրայր Վահանաց

(2) Մեքոցէլ Զամշեան , Պատմ . Հայոց , Հտ . Բ . յէր . 252:

առան հազար այր՝ ՚ի քրիստոնէիցն արգելվն ՚ի տեղի մի, և այնչափ սովորուցին, մինչ կերպան ՚ի սովորյն դկօշիկս իւրեանց, և ինքեանք (Պարոիկը) ՚ի գիշերի միում ելին և գնացին յաշխարհն իւրեանց :

Ի քսան և երկու տմբին Վնասառառոց առաքեցաւ ՚ի նմանէ զօր յաշխարհն Հայոց, և արարին զնոսա ընդ ինքեամբք՝ ՚ի բաց կալ ՚ի Պարսից . իսկ Վնասառա թագաւորեալ քսան և եւթե ամ, մեռաւ ՚ի քսան և ինն թամուղ ամսոյ :

Ի ՊԼԲ (832) թուլին Վոորւոց թագաւորեաց Յուստիանոս թրակացի. և այս եղեւ սկիզբն Յօյն թագաւորի, որ էր ՚ի գեղջէ Քեդրինեաց, որ յետոց արարին զնա քաղաք՝ յանուն իւր կոչեալ. և զջուրն սորա ասեն թէ այնպիսի պիղծ է, որ թէ շատ եփեն՝ լինի արիւն. Եւ Յուստիանոս էր այր պարզամիտ՝ անվարժ գրոց. և յոլովք ՚ի թրակիա ծածկաբար մնացեալ էին աղանդովին Շաղկեդոնի. որք խարեցին զնտ և ասեն. “ թէ գաւանես զմողովին Շաղկեդոնի, ամենայն տիեզերք հնազանդ լինին քեզ : ” Եւ ասացին թէ “ Դրած է ՚ի ժողովին թէ՝ որ ընդունի զերեք ժողովմն, թող ընդունի և չորսն, զի այս է կատարումն և գլուխ եւ ցից : ” Եւ վաղվաղմի էլ հրաման ՚ի նը-

մանէ և քարոզ ժողովոյն Քաղկեդոնի զօրք հեծելօք ընդ ամենայն երկիր . և հալածեալ լինէին ուղղափառքն և յաթուոց զըրկեալք . և Վեւերիոս պատրիարքն Ենտիոքոյ գնաց Աղքանդրիա զկնի վեց ամի եպիսկոպոսութեան իւրոց . և կոկծելիս նզովեաց զթագաւորն , և առաւել զեկեզեցականս , Աւ որք հաւանին չար ժողովոյն , լուծեալք են ՚ի քահանայութեան աստիճանէ : Եւ ընդ ելանելն նորա յԵնտիոքայ , իջեալ հուր այրեաց զարբունիսն որ յԵնտաք , և վեց ամիս ոչ շիֆաւ հուրն , մինչեւ այրեաց զբովանդակ քաղաքն , և թուեր թէ կենդանի է հուրն : Եւ յետ ամի միոյ գնալոյն Վեւերեայ , Պօղոս անուն Հրեայ , որ էր անօթքարկութեան , նստաւ յաթուոն Ենտիոքայ . և սա ժողովեաց զամենայն եպիսկոպոսունունու Եսորւոց և նեղէր զնոսա ընդունիլ զժողովն Քաղկեդոնի , և զհաւանեալսն՝ յաթուոնն իւրեանց առաքէր , և զանհաւանան՝ յաքսորլու : Եւ որք պատրեցան և կացին յուղղափառութեան՝ այսոքիկ են , զօր առէ Յովհաննէս ասիացին :

Ենդիբիւրոս՝ Ենաւարզոյ , Յուլիոս՝ Հանգոնի(1) , Հավհաննէս մեարապօլիս՝ Վանուեատիայ (Վամեստիա) , Պօղոս՝ Երեբայ(2) , Յովհաննէս

(1) Միւս թարգմանութիւնն ունի Հանգոնի . որ թուի եթէ իցէ Հարդան քաղաքն . որ է Համբան մերձ ՚ի կոնիսօն :

(2) Միւս թարգմանութիւնն Եբերէն , գուցէ Բերիոյ :

Հաննէս՝ Յօրապօլսի, Պօղոս՝ փօքրը Աղեքսան-  
դրու, որ է Ակնդրուն (Փոկէնտէրուն)։ Աի-  
կոլայոս՝ Տարառնիւ։ Եւ ՚ի կապադովմկացւոց  
Երկրէն Պրոկղ՝ Կողմնիայ. Մասինս՝ Արմա-  
վասիկայ<sup>(1)</sup>. Աիկափորոս՝ Աերաստիոյ Հայոց-  
Եւ ՚ի յշտիոքայ Ասորւոց, Կոստանդիա՝  
Լատկին (Լաւոդիկեայ) Եպիսկոպոս, որ վասն  
առաքինութեան և սրբութեան իւր մերձ  
պատրիարքաց նստէր աթուով և քարոզեալ  
չննէր ՚ի պատարագս տմենայն դինի պատրիար-  
քին։ Կնոսնինէ՝ Հալպայ, Փիլաքսին՝ (Փելիք-  
սիանոս) արհինեպիսկոպոս Վնբէջոյ, զոր յետ  
քազում խոստման և խոշտանգանաց ՚ի Գան-  
գրա այրեցին ՚ի կրափուռն։ Հաղրա՝ Եփի-  
մոյ (Եպամիոյ), Ցաւոգոսիոս և Վնեսիմոս՝ Օքո-  
մոյ<sup>(2)</sup> և Աւրէմին. Նոնաս՝ Աելեւկիոյ. Իս-  
գորակ՝ Կնշոի (Կեսարիոյ). Մարի (Մարաս)՝  
Ամմայ. Ցոււմա՝ Դամասկոսի, այր ճգնա-  
ւոր որ զքսանեւութ ամ հաց ոչ եկեր,  
այլ թանջար։ Աղեքսանդրոս՝ Աբէլքաղաքի,  
Ցոււմա՝ Նարգաբայ. Յովհանն՝ Ցաւուրայ  
(Ցոււրեր). Յովհանն միւս՝ Ահուրանի. Մար-  
գիս՝ Կիւրիուսայ. Ցոււմա՝ Գերմանիկոյ,  
որ է Մարաշ. Պօղէ՝ Աւոհայոյ. որ յետոց  
թուլացաւ և դարձաւ յաթու իւր. Յով-  
հաննէս՝ Խառանեու. միւս այլ Յովհաննէս՝  
Եմիլնու. Եւ ատաթէ՛ Փիւրնին. Պատրէ՛ Մաս-

(1) Միւս թարգմանութիւնն Աբմասոյ, կամ Աբմասոյ։

լին . 'Առնա Կարկիսոնի (Արկիսոն <sup>2)</sup>) . Պօղու՝  
Կալինիկոսի (Կալանիկոս) . Այսրիոն՝ Հռոմէ-  
քարին , որ է Հռոմելլայն . Յովհաննեէս՝ թշա-  
ցին . Թումա՝ Տարացոյ . Եհարոն՝ Եշմուշաց-  
էւ յերկրէն Ասիացւոց ՚ի Կարիս՝ (Կարիս ,  
Եյֆը) Եպիսկոպոսապետն լլ . Փումիոս . Են-  
տիոքոյ Պիսիդէայ՝ Ամինիքսմոս . յԵլեսոյ  
Քաղաքէ՝ Օուքսիտ . յԵլանտայ՝ Պետրէ . Յու-  
միէ Եղեկառնացի , որ յետոյ հերձուած խօ-  
սեցաւ . Թուսեպիոս՝ Եփեսոսի , որ տրար  
սքանչելիք ՚ի Կոստանդինուոլովիս , որ յետ  
բաղում վիճմանց կանգնեցաւ երեք օր յոտն  
և հրեշտակի Տեառն աւանդեաց զՀոդին .  
և մարմին նորա վառեցաւ երկնաւոր լու-  
սով զտիւ և զդիշեր , և զարհուրեցաւ քա-  
ղաքն , և կամեցան զեադնելընդ լարտիւրոսս.  
և եղեւ ձայն ՚ի մարմինյն թէ՝ այիմ աթոռն  
տարէք թաղեցէք : ո Ելերինէ՝ Նիոկեսարու .  
Ելափիտ՝ Կաստուրանայ . Թէ ոդորոս՝ Աւլի-  
բիոյ . Դուկաս՝ ՚ի Ակրու (Օմիւռնիա <sup>3)</sup>) քա-  
ղաքէ . Հեփաիրայ՝ Հեգրոնոսի . Պատրէ՝  
Վալուդի . Պիկատուր՝ Փիլադելիոյ . Պատ-  
րէ՝ Վանգէի . Ակոթոդոր՝ Ասոնի . Փաղէկ՝  
Վանտարի . Բուստինոս՝ Աքսենիայ . Եղէր-  
սանդրոս՝ Քանքարայ : Թող զայլ մանր տե-  
ղեաց Եպիսկոպոսունսն զորս թողաք , և երի-  
ցանց և սարկաւագաց թիւ ոչ գոյ , որք ընդ-  
ասացեալ Եպիսկոպոսունս գլխաւորս գնա-

յին յաքսորս՝ ՚ի կաստանդինու պօլիս և յշղէք-  
ռանդրիա . եւ յետ բազում քննութեանց և  
խոստմանց և սպառնալեաց և ոչ հաւանե-  
լց , մխով խեղդեցան :

Եւ որբ ՚ի տեղիս և յաշխարհն Ծորուոց  
սպանան և չպնացին յաքսորս , են այսոքիկ :  
Ուփրինտոս՝ ՚ի գաւառէն Ծնախարու և Ծղի-  
անէ՝ Վասուփտումի չարչարանօք ՚ի զօրա-  
գլիսէն Ծնախարոյ սպանան : Յովհաննէս իւ-  
մաստունն փախուեաւ ՚ի Աթլեւկիս ՚ի Շըռա-  
վանք , և հասեալ սպանին վանօքն հանդերձ :  
Եւ Կիրիսո գլուխ վանացն Ծնախարոյ ամեն  
եզրարբքն սպանաւ . և վանականքն Յմշա-  
տայ ՚ի տեղւոջն չարչարանօք կատարեցան :  
Եւ վանքն սուրբ Ուոմանոսի և որբոյն Ոիմէու-  
նի վանքն և Ծիզոյ առաքելց վանքն յեր-  
կիրն Քեսանոյ , և Խղնատն՝ գլուխ ամենայն  
վաներոյն , յետ բազում վիճմանն ընդ Քաղ-  
կեդոնիկմն , ինքն և ամենն ՚ի միասին մե-  
ռան : Եւ Յովհաննէս Քաբրայի վանապետն  
սպրացին , և վաներ բազում շուրջ զՈւռհայ  
քաղաքաւ , ամեննեքեան ՚ի տեղիս իւրեանց  
կատորեցան : Եւ վանքն սուրբ Յովհաննիսի ,  
որ է յարեւելից կողմաննէ Խառանու , և  
վանքն Վականոսի և վանքն որբոյն Սարգսի ,  
և մեծ վանք լերինն որ ասեն Յառեմա առա-  
քելցին հիմնարկեալ , ՚ի տեղւոջ իւրեանց  
սպանան : Եւ մեծ վանքն սուրբ Սահակայ ,

և մեծ վանքն Ախիփոսաց և Վիզալոյ և Շեգուգել, և հինգ վանք առաքելագիր յիշեթայ երկիրն, իւրեանց եպիսկոպոսօքն և վանականօքն կոտորեցան ՚ի միասին։ Եւ վանքն սուրբ Ծննդիանց և վանքն սուրբ Աքրահամնւ և վանքն սրբոյն Դանիէլի և վանքն սրբոյն Ամմուէլի, և սոքա միապէտ նահատակեցան։ Եւ վանքն սուրբ Կոբամայ, և վանքն Յօրացի առընթեր Բառլին, զորս կոտորեցին։ և յիշաոլէն մինչ ՚ի Պաղտատատ անապատ արարին, զքաղաք և զգեօղ և զվանք ջնջեցին։ բացց թէ ունակ փափչէնն և զերծնուին առ ժամն, յետոյ ՚ի բուռն անկեալ մեռանեէին։

Եւ վարդապետք որ ՚ի գրոց վլաճէին և քաջալերէին զհաւատան, են այսոքիկ։ Եղիա՝ Խկաւնաց, և Ատմի և Կողմայ և Յովհաննէս և յարուն յարեւելից, և Կափթայ և Արգիս այր սուրբ և սքանչելոգործ, և Ծնտոն և Եղիա միւս, և Ախմէսն և Կայզը և Արգիս միւս, և Յովհաննէս և Ախմէսն այլ, և Ծնանիա այր Յոտուծոյ սքանչելագործ։ Աքա տմենեքեան ՚ի միասին գնացին առ թագաւորն յանդիմաննել զնա, և եհան զքազումն ընդդէմնոցա, և յաղթահարեալ եզեն ՚ի սրբոյն։ և սպանին զամենեսեան սքանչելի արան, և զվաներն որ կոյ շուրջ Ուաղայ՝ զառւրբ Զաքէ և զսուրբ Աբէ և զսուրբ Ասգէ ե-

սլիսկուզոսօքն և կրօնաւորօքն իւրեանց կոտորեցին : Եւ կայր անդ Վիւնակեաց մի, որ զամենայն աւուրս կենաց իւրոց հաց ցան կութեան չէր կերեալ, Յաղջաննէս անունն(1), բայց միայն արմատս և բանջարս, զոր տային աշակերտքն, և թէոդորիտէ որոյ միտքըն վերացեալ յաճախ և ՚ի զարմացման լինէր, և երթեալ առ նա զառաջիկայն հարցանէին և լսէին : Եւ թումա տարացին Վիւնակեաց մեծ վարդապետն, յորմէ և երկնաւորք պատկառէին, զնոսա յետ բազում հարցափորձի սրով կատարեցին :

Իսկ անօրէն չեսլիսկուզոսն Աւոհայոյ՝ Պօղէ, գարձեալ նա յաղանդն Վաղիեգոնի, արեամբ շաղախեաց զամենայն Վիջագետս, և գնային ՚ի նմանէ վախսատական ՚ի Պարսիկս և ՚ի նոցանէ մեռանէին . և ոմանք մերկ և բոկ ՚ի լերինս շրջէին զամառն և զձմեռն . և ոչ կարեմք զչարիս նորա ընդ գրով արկանելս Վա բազում աղաքանօք կոչեաց առ ինքն ըղսուրքն Յակովը Արձոյ եպիսկոպոսն . և նա աղօթեաց զի ճանապարհ նորա կամօք Տեառն լիցի, և յարեաւ գնալ . և հասեալ ՚ի վանիքն որ Պարսից կոչեն, և անդ երեւեցաւ նմահրեշտակ և առէ . “ Դարձիր և պատուիրեա աշակերտացն քոց վասն ու զղափառութեան, զի յետ երկու աւուր կատարիս : ” Եւ դար-

(1) Միւս թարգմանութիւնն ունի Սիմոն անուն :

ձաւ և արար պատրաստութիւն ելից իւրոց,  
և զգուշացոց զհօտն իւր և զաշակերտն, և  
վախճանեցաւ ըստ բանի հրեշտակին յետ  
երկուց աւուրց :

Յայսմ ժամանակի խնդրեաց կուտ (Ար-  
ւատ) թագաւորն Պարսից 'ի Յուստիանոսէ  
հինգ հաղար հինգ հարիւր կենդինար ոսկւոյ  
տալ զօրավորին որ սկահեր զգուռն չօնաց,  
և ոչ կամեցաւ տալ : Եւ ել թագաւորն  
Պարսից 'ի Վիջագետս և 'ի կողմանս Վնտիո-  
քայ և գերեաց, և գտաւ 'ի գերեալսն չօրս  
հարիւր կուսանս, և զոհեաց զնոսա Ուղի  
կոոց իւրոց <sup>(1)</sup> :

Եւ յայսմ ժամանակի կորեաւ և անյայտ  
եղել ջուրն Վելովամաց ամս հնգետասան : Եւ  
'ի սոյն ժամանակս անկաւ հուրյերկնից և այ-  
րեաց զՊալքաք քաղաք, զոր շինեալ էր Վոզո-  
ման 'ի լեառն ի իբանանու, և զարքունիքն որ  
անդ էին . բայց զերեք վէմն զոր եղեալ էր  
Վոզովման 'ի խորհուրդ Երրորդութեանն՝ ոչ  
վեասեաց <sup>(2)</sup> : Եւ յայսմ ժամանակի երեւե-  
ցաւ կին մի որ երկայն էր քան զամենայն  
մարդ գիրկ մի . լեզուով ոչ խօսէր, և կե-  
րակուր մարդոյ ուտէր, և յամենայն խանու-  
թէ առնոյր փողմի . և կեցեալ քազում ժա-

(1) Միւս թարգմանութիւն՝ կրաշեայ իտոյ իւրոց :

(2) Երեւելի էր 'ի քաղաքիս տաճար կոոցն Երեքարեան  
կոչեցեալ զոր թէոդոս մեծն կործանեաց : Մովես Խոր. գ. . օօ:

մանակո՞ անյացտ եղեւ, և ասէին բազումք թէ՝ յաւերժմահարսանցն էր :

Դժուին Վարդոց ՊԼ. (836) էր յիւռհա Եսկղիսպ Եսլիսկոպոս, և սա նեղէր զհաւաւ տացեալսն հաւանիլ անօրէն ժողովոյն : Այս ժողովեաց քսան այր՝ միայնակեացս սքանչելիս, և չարչարեաց զնոսա անողորմն, և արկ զեսսա ՚ի բանս . և ՚ի յերրորդ ժամ զիշերոյն եղեւ հեղեղ սաստիկ եկեալ ՚ի լերանցն, և ընդդէմ պարսպին բազիսեալ դարձաւ յետը . և դարձեալ եկին և եզարկ և փլոյց զպարիսպն, և անցաւ ՚ի վերայ քաղաքին և Ելից զքաղաքն, և սպան զմարդ և զանասուն, և առեալ տարաւ Ելից յԱշփրատ գետեւ ՚ի Կլոյն (յամրոցն) քաղաքին զերծաւ Եսկղիսպ, և թուով արքն որ զերծան՝ կամեցան քարկոծել զկղիսպ և փախեաւ յԱնտաքը Եւ Եփրեմ աղանդակիցն իւր, պատրիարքն Ենտիոքու (1) ասէր . « Տեսէք, Եղբարք, զերկը բորդ ՚Եց զերծեալ ՚ի հեղեղացն որ վասն մեղաց ոչ ընդունողաց զժողովին Քաղկեդոնի եղեւ : » Եւ Յուստիանոս առաքեաց ոսկի բազում շինել զիւռահա . և ՚ի պեղելն դտաւ գիր մի ՚ի վէմ մի, թէ « Երեք անդամ ջրհեւ

(1) Եփրեմ ամթեցի՝ էր իշխան Անտիոքայ, իսկ պատրիարքն կոչեր Եւփրասիոս . որոյ ընդ կորնչելն ընդ առերածովք քաղաքին ՚ի պահու սասանութեան, կացուցաւ նման Եփրեմ իւր տեղակալ, յամի 526 :

զեղ կրէ Աւոհա քաղաք . “ և էր քաղդեացի գրով . և զգտեալ մարդիկն խեղիքած՝ ըսկրսան թաղել , և էր թիւն երեսուն և վեցհազար , և ’ի թուելն զմնացորդան՝ հաշուեցան որտարեալ էր հեղեղ երկու հարիւր հազար :

Իսկ Ասկղիսպ և Հփրեմ պղծեցին զԱնտաք ՚ի չար աղանդն , և շարժեցաւ նոր բարկութիւն Աստուծոյ ՚ի վերայ Անտաքոյ , և շարժեցաւ ամենայն քաղաքն հինգերորդ շարժումն , և ամենայն շինուած տան և աղքունեաց և եկեղեցւոյ ՚ի վայր շրջեցաւ . և բորբոքէր երկիրն հրով . ջուր և հուր ՚ի վերգայր յանդնդոց և բերէր խեցեմորթս և դորտըս և խեչեփառոս և ոսկերս , և հոտ մահաբեր բուրէր , և մեռանէին մարդ և անասուն ՚ի պէսպէս չարեաց . և աւուրս ինչ հուրն իբրեւ զանձրեւ տեղոյր յօդոց : Եւ զամմի և կէս ոչ կտրեցաւ շարժն և ոչ հրեղէն անձրեւքն . և մեծ եկեղեցին զոր շինեալ էր Կրտանդիանոս , գողաց զեւթն օր իբրեւ զհասկ ՚ի հողմոյ , և ասկա պատառեալ գետնոյն ել հուր և այրեաց զեկեղեցին , և ապրեալքն ՚ի պատուհասէն էին հազար երկերիւր և յիսուն այր : Եւ երեւեցաւ յանկարծ լուսեղէն խաչ յերկինս յետ երեք աւուր կորըս տեանն , և աղաղակեցին . “ Տէր ողորմեա , Տէր ողորմեա . ” և ծածկեցաւ <sup>(1)</sup> . և ’ի շրջելն

(1) Ասմուել անեցի յամի Փրկչին 527, առև. “ Արեգակն”

ընդ քաղաքն կենդանեացն մնացելոց, տեսանեին զպատառուածն ՚ի տեղիս տեղիս, և ըստին ձայն հեծութեան յընկղմելոցն յելանել ոգւոց նոցա . բայց զԱսկղիս և զՃփրեմ ոչ գտանէին զի խնդրեսցեն խրատ և ազօթը , և ոմանքը ընտանիք նոցա ասէին թէ՝ Աստուած յերկինքն էառ զնոսա ՚ի բարկութենէս . և ապա գտին զնոսա ՚ի պղինձ մի կպրեփեցաց , և կային մարմինքն ՚ի պղինձըն մերկացեալ ոսկերքն ՚ի մասն և գլուխքըն ՚ի դուրս , զի ճանաչիցեն թէ ով ոք իցեն : Եւ Աելեւկիս Ասորւոց որ կայ ՚ի վերայ ծովուն և Դամինի քաղաք և քսան միլ շուրջ զԱնսիորաւ ապականեցան . նոյնպէս և Անաւարդա Կիլիկիոյ գլուխ , և Կորնթոս գլուխ Հըլադայ ընկղմեցան շարժմամբ :

Քամիրացւոց երկիրն կայ յարեւելից Եղիպատոսի , և Հնդկաց ՚ի հիւսիսոց կողմէն<sup>(1)</sup> Հրեայ ոմն<sup>(2)</sup> թագաւորեաց ՚ի վերայ նորա

ամենեւիմք նուաղեցաւ . յետ որոյ սովին խստագոյն :

(1) Քամիրացւոց երկիրն է կոչեցեալն ՚ի դրոց Արեա, յերջանիկն Արարիա , այն է Եւմեն . բստ Յունաց երկիր Հոմերացւոց անուանեալ : Խոկ Հնդկիք ըստ Հնոցն խացուածոյ . ևն հարաւային կողմանք Արարից՝ յեղերս Կարմիր ծովուն . անդ ուր միանաց վերջենս այս ընդ Հնդկաց ավկիանու , և կոչեն Հնդկիք կամ երկիր Հնդկաց վասն գոլոյ ՚ի վերայ ճառապարհին Հնդկաստանի :

(2) Ըստ Յովհաննու պատմագրի ասիացւոց՝ կոչէր անուն Հրեայ թագաւորին Տիմիոն կամ ըստ այլոց Տիմիանոս : Խոկ

՚ի ժամանակս Յուստիանեայ, և լուաւ եթէ  
 Շռոմայեցիքն նեղեն զՆրեայսն ՚ի գաւառն  
 իւրեանց, և կոսորեաց զվաճառականսն Շռո  
 մայեցիս որք երթային ՚ի Հնդիկս, և փակե-  
 ցաւ ճանապարհն յերթեւեկացն : Եւ ա-  
 ռաքեաց առ Նրեայ թագաւորն՝ Հնդաք  
 թագաւորն՝ Քուշանաց այսինքն Հաբաշից, և  
 մեղադրեաց վասն կտրելոյն զՃանապարհորդ-  
 սրն, և Նրեայն արար նմա ընդդէմ պատռա-  
 խանի : Եւ ժողովեաց զօրս Հնդաքն և ուխ-  
 տեաց Վասուծոյ՝ որ թէ յաղթէ Նրէին՝ լի-  
 նի քրիստոնեայ . և գնաց ՚ի վերայ Նրէին և  
 յաղթեաց նմա երիցս անդամ և հալածեաց  
 յերկրէն զՆրեայսն, և առաքեաց երկուս իշ-  
 խանս առ Յուստիանոս և ծանոյց նմա զիր-  
 սրն, և եպիսկոպոսս խնդրեաց զի արացեն  
 զնոսա քրիստոնեայս : Եւ նորա խնդացեալ  
 առաքեաց իւր աղանդովն եպիսկոպոս Յով  
 հաննէս անուն (1), որ երթեալ մկրտեաց ըզ-  
 նոսա և եղեւ երկիրն քրիստոնեայ : Եւ ա-  
 ռաւել զօրացեալ և խրախուսեալ ՚ի Քրիս-  
 թագաւորն Հապէշից ըստ նորին Յովհաննու՝ կոչէր Այտուկ,  
 այլ խկական անուն նորա եր Էլա—Ամետոյ . և քաղաք նո-  
 ցա ամոռանեխան՝ եր Աքտում Տես ՚ի գիրո Տիմոթէոս վար-  
 դապետի Սափրիչեան . Երանեայ ունեդիպութիւն ՚ի Հառէշոսն .  
 Գիւր Ա. յեր. 125, Տպեալ յԵրուսաղէմ. 1871:

(1) Այն է Յովհաննէս Պարամնարիսոս, զօր Պատրիարքին  
 Աշէքսանդրիոյ ձեռնադրեաց եպիսկոպոս ՚ի վերայ Աքտում  
 քաղաքի, որոյ եկեալ մկրտեաց զթագաւորն և զաւագանին  
 յամի իրը 524 :

տոս, արար հնազանդ զերկիրն Քամիրայ, և  
եղ նոցա թագաւոր Աբրահամ անուն, և  
կային յոլով քրիստոնեայք ՚ի Քարմիրավէշւ ա-  
ռաքեաց Աբրահամ թագաւոր յԱղեքան-  
դրիա առ Տիմոթէ, ոս պատրիարք և խնդրեաց  
հովիւս այնր հօտի. և նա առաքեաց ուղ-  
ղափառ հաւատով եպիսկոպոս և քահա-  
նայս որք երթեալ հակառակեցան և Աստուա-  
ծաշունչ վարդապետութեամք յաղթեցին  
ողղափառքն Յովհաննիսի, և ձգեցին զնա  
և դարձուցին յուղղափառութիւն զերկիրն  
Քուշանացւոց և Քամիրացւոց :

Եւ գիտել պարտ է զի երեք թագաւո-  
րութիւն է Հնդկաց, և չորք թագաւորու-  
թիւն Քուշանացւոց<sup>(1)</sup>, որք կան ՚ի հարա-  
ւց և ունին զաւելի մասն երկրին հարաւց  
և արեւելից Քանզիքսանն և չորս վերապէ աշ-  
խարհս և զչորեքտասասնն Քուշացիքն ունին  
որ են Հասպաշիք : Եւ ազմուին Քաղկեդոնի  
անկառ ՚ի մէջ ներքին և արտաքին Հնդկաց  
թագաւորին՝ Հքսանտոն անուն, և ներքսա-  
գունին՝ Վնծուք (Վնտուկ կամ Հնդաք). և ՚ի  
սոցա աղմկելն դարձեալ զօրացան Հրեայք և  
եղին իւրեանց թագաւոր յերկիրն Քամիրայ.

(1) Յաղագս բաժանման երկրին Հասպեշից ՚ի զանազան  
թագաւորութիւնն, տես ՚ի գիրս Տիմոթէոս վարդապետի  
Սափրիչեան, Երևանայ ուսուդիսութիւն ՚ի Հասպեշան . գիրք Ա.  
յեր . 58 .

և արար հալածումն և յաճախ մահ քրիստոնէից քաջալերելով զնա Յութիանեայ, զի առաքեաց առ Հրեայ թագաւորն և ասաց . «Ի՞արձ զազանդդ զայդ, զի դօքա ոչ ընդ մեղ են և ոչ ընդ ձեզ. և որպէս տեսանեմք՝ մեր և ձեր ասելով վասն Քրիստոսի՝ ՚ի մէկ իբր հայի. զի դուք ասէք՝ որ հարքն ձեր յիշուսազէմ մարդ խաչեցին, և մէք ասեմք զնոյնն՝ թէ զմարդն խաչեցին Հրեայքն. իսկ այդ աղանդդ ասեն Կրտուած խաչեցաւ ու Եւ նա լուեալ զբատուերն Յութիանեայ՝ չոդաւ ՚ի վերայ Նիգրան քաղաքի, և կոտորեաց զքրիստոնեացմն որ անդ կային, որպէս և դրեալ պատմաթիւնն ծանուցանէ. և զմեացեալն ՚ի թրդ թէն Յութիանեայ և ՚ի դեսպանացն ուսցիս : Եւ այն դեսպանիքն որ գնացեալ էին առ Վնդուր (Վունդիր) թագաւորն Տաճկաց (Վրաբացւոց) սիրոյ աղագաւ, դրեցին առ Յութիանել նախ քան զդառնալն զայս օրինուկ :

«Դիտացէ ձեր ինքնակալութիւնդ, որ եկած Կրտուծոյ յաջողելովն ՚ի Հերեթա քաղաք թագաւորանիստ Տաճկաց, և չգտաք անդ զթագագաւորնն. ապա ելաք գնացաք առաջնորդ առեալ մեղ՝ ընդ անապատ աւուրըս սասն ընդ աւտզուտ լետան. և հանդիսեցաք Վնդուր թագաւորին. և ՚ի տեսանելը զմեղ՝ սկսան ծաղք առնել զմեղ և.

կատակել ասելով . “ Ուր է Վրիստոսն ձեր ,  
որ արարէք Տէր և Աստուած Երկնի և Երկ  
րի . և այժմ որպէս լուսք՝ առիք յիւրմէ (1)  
և զթագաւորութիւնն Հռոմայեցւոց , և դա-  
ւանեցիք զնա մարդ մեռեալ և կենդանա-  
ցեալ : ” Եւ ՚ի շատ կատակաբանելն նոցա-  
եկին դեսպանքն ՚ի Հրէից թագաւորէն , և  
բերին աւետիք թէ՝ զօրացաք մեք Աստու-  
ծով և հալածեցաք ԴՄալիլեացին և զհաստա-  
տեալն ՚ի նա կորուսաք . գնացաք և ՚ի  
Նիդրան և նենդիւ Երդուաք և առաք զքա-  
զաքն , և ստեցաք զերդումն՝ գիտելով թէ  
չմեղադրէ զմեզ Աստուած ջնջելով զթշնա-  
միս նորա : Բայց չկարեմք ասել զսէրն զը-  
ռունին առ Վրիստոսն իւրեանց , զի մանաւէ  
մի չկարացի պատրել և գարձուցեալ յեսս  
՚ի Վրիստոսէն , և ոչ կին մի և ոչ ծառայ ոք:  
Օ ՚ի էր անդ կին թագաւորի չորս դատերք ,  
և խնայեցի ՚ի նա և զամենայն հնարս փոր-  
ձեցի , և ոչ հաւանեցաւ ինձ ՚ի բաց կա ՚ի  
Վրիստոսէ , և ապա ասացի նմա թէ՝ “ Ո՞յ  
արացէ Տէր թէ ես ապականեմ զգեզ ե-  
րեսացդ քոց . միայն ասա զոր ասէ թագաւ-  
որն քո Յուստիանոս թէ՝ մարդ էր Վրիս-  
տոս և մարդ խաչեցաւ : ” Եւ զայրացեալ  
եթուք յիս և չարամահ սպանի զինքն ընդ-

(1) Միւս թարգմանութիւնն յաւելու : ոչ մայն ուստանածու-  
թիւնն : այս կը :

գստերսն իւր : Եւ արդ մի արասցես սէր ընդ Հռոմայեցիս , այլ գնասցուք և բարձրացուք զթագաւորութիւնն Հռոմայեցւոց = Եւ զայդ յառաջագոյն գրեցաք առ ձեզ ՚ի ձեռն Արքահամու երիցու որ է ընդ մեզ , և զինչ կամին տալ մեզ պատասխանի ոչ գիտեմք : » Եւ յետ այնորիկ միաբանեալ ընդ միմեանս Տաճիկքն և Պարսիկքն , եկին մինչ յԱնտաք և յԱփեմիա և գերեցին :

Յայսմ ժամանակի եղեւ շփոթ ՚ի կոստանդինուպօլիս և սպանին զգատաւորն , և ՚ի նմին ժամու այրեցաւ մեծ կաթուղիկէ եկեղեցին . և այս ամենայն պտուղք էին շարեացն Յուստիանեայ , զոր մէք զսակաւն գրեցաք զոր ինչ անցոյց նա ընդ աշխատին և ընդ եկեղեցի , որ էր այր ծեր ՚ի թագաւորելն իւրում , և արար զքուերորդին իւր Յուստիանոս (Յուստինիանոս) կեսար , իւրով անուամբն կոչելով . և ետ նմա իշխանութիւն ՚ի թագաւորութեանն , և առաքեաց զնա ընդդէմ Պարսից . և յորժամ եկն ՚ի Վնրէճ և լուաւ վասն կուսի մի որ էր դուստր երիցու , և խնդրեաց ՚ի կնութիւն , և նա ոչ կամէր տալ ասելով թէ՝ « Հանես զնա յիւր դաւանութենէն : » Եւ երդուաւ նմա թէ՝ « Թռղ պահէ իւր կրօնիւքն իւր եպիսկոպոս և քահանայս , և թէ լինի հնարք քարողեցից զգաւանութիւնդ ձեր ընդ ա-

մենայն Երկիր : » Եւ ետ նմա զաղջիկն ու բում անուն էր թէոդորիա . և եղեւ 'ի ձեռըն նորա բազում դիւրութիւնն ուղղափառաց , և տարաւ ընդ իւր եպիսկոպոսունու և քահանայս 'ի Կոստանդինուպոլիս . և յետ Երեք ամսոյ մեռաւ անօրէն ծերն Յուստինանոս՝ թագաւորեալ ամս ինն : Եւ էաւ ըդ թագաւորութին տղայն Յուստիանոս(Յուստինիանոս) և թագաւորեաց ամս Երեսուն և ութ և ամիսս Եւթն :

Յայսմ ժամանակի թագաւորն Պարսից կուտն (Ալաւատն) ետ զորդին իւր 'ի գորոց 'ի Վանիքեցիան յերկիրն իւրեանց , որ և ուսաւ զիրօնս նոցա և ուխտեաց վարդապետացն՝ իւր որ թէ թագաւորէ՝ պաշտէ զազանդն նոցա , և նոքա տաացին՝ ազօթենք որ թագաւորես : Եւ մայր տղայսյն աղացէր ըդ Կուտն թագաւորեցուցանել զորդին 'ի կենդանութեան իւրում , և իմացաւ թագաւորն զպատճառն և Երկեաւ , թէ գուցէ լսեն այլ թագաւորք մոգուց , և ասեն թէ՝ 'ի ժամանակս նորա բարձաւ մոգութիւնն : Եւ արար մեծ ժողով և կոչեաց զի՞անիքեցիան զամենեսեան իւրեանց եպիսկոպոսօքն և կոտորեաց զամենեսեան , և զորս Եգիտ արտաքոյ՝ այրել հրամայեաց , և ետ զեկեղեցիս նոցա քրիստոնէից : Եւ կային 'ի Վանիքեցւոցն 'ի Կոստանդինուպոլիս բազումք , և զա-

նացին դարձուցանել զնոսայաղանդոյն և ոչ  
կարացին, և այրեցին զնոսա առհասարակ:

Յայնմ ժամանակի առաքեցաւ Վալիսի-  
րիս (Վելիսարիս)՝ ի Պարսս մեծի զօրու՝ յա-  
ւագ շաբաթն մեծի Օտակին, և խնդրեաց  
թագաւորն Պարսից թէ՝ «Պատուենք զտօնա  
Հրէից և Քրիստոնէից, և չպատերազմինք  
՚ի տօնիս վասն ձեր և վասն Հրէից որ ընդ-  
մեղ ենո՞ Եւ ոչ լուան, այլ արարին մարտ ՚ի  
մեծի շաբաթուն ճրագալուցին։ Եւ եղեւ  
բարկութիւնն Եստուծոյ ՚ի վերայ Հռովմա-  
յեցւոցն, և բազումք գետամոյն եղեն և  
յոլովք սրով մեռան։ Եւ յետ այսորիկ մե-  
ռաւ կուան և թագաւորեաց խոսրով որդի  
նորա. և մայր նորա չարչարէր ՚ի դիւաց, և  
չկարէին օգնել մոգքն, և գնաց առ Վոլես  
միայնակեաց, մկրտեցաւ և բժշկեցաւ։

Եւ յայնմ ժամանակի Հրեայքն որ ՚ի Առ-  
մարիա՝ կացուցին խրեանց գլխաւոր և կո-  
տորեցին Շնիկոսլոլիս (1) և բազում միասս  
գործեցին. և եկեալ զօրքն Հռովմայեցիք  
ջնջեցին զնոսա (2): Իսկ թէ ոդորիա թագուհին

(1) Ընթերցիր Նեապոլիս, այն է Նապոլան քաղաքն ար-  
դի, ուր գտանին ցարդ Ասմարացի Հրեայք։

(2) Պատմագիրք Յունաց տուն, եթէ որտմուեալ Սա-  
մարացւոց ՚ի հալածանացն Յունաց և ընդ խիստ օրէնս զոր-  
ետ Յուստինիանոս ՚ի վերայ ամենայն ազգացն ոյլակրօնից։  
ապատամբեալ կացուցին ինքեանց թագաւոր զուն Յուլիա-  
նոս անուն որդի Սաբարայ. որ ած բազում աւերս երկրին։

աղաչեր զթագաւորն վասն ուղղափառութե՛ն.  
և թագաւորն առաքեաց թուղթ յանապատն  
Եղիպտոսի առ կրօնաւորսն զի եկեսցեն և  
խրեանց պարկեշտութեամբն և առ Վատ-  
ուած համարձակութեամբն ընտրեսցեն քըն-  
նութեամբ զլաւն և զհաճոյն Վատուծոյ :  
Եւ առաքեաց առ սուրբն Սեւերիոս որ կայր  
Աղեքսանդրիա, զի աշխատ լիցի և եկեսցէ  
՚ի գործ եկեղեցւոյ : Եւ եկին յոյժ բաղմու-  
թիւն սննապատաւորաց և սուրբն Սեւերիոս  
՚ի կոստանդինուպոլիս : Եկին և ՚ի գաւառաւաց  
գաւառաց եպիսկոպոսունք յերկուց կողման-  
ցըն՝ յուղղափառացն և ՚ի չարափառաց, և  
արքարին տարի մի քննութիւն . և այնչափ շա-  
հեցան ուղղափառքն՝ զի դադարեաց հալա-  
ծումնն : Եւ Վնթիմոս պատրիարքն կոստան-  
դինուպոլիսի դաւանեաց զուղղափառութիւն  
յաղթեալ ՚ի ճշմարտութենէն, և գրեթէ ա-  
մենայն բաղմութիւնն քաղաքին դաւանեցին  
զճշմարտութիւնն՝ բաց յեկեղեցականացն,  
որք ամողաբատաւանեալք աքացէին ընդդէմ  
Ճշմարիտ աստուածապաշտութեան :

յաւարի առ և զՍկիւթուպոլիս և տիրեաց Նաբլուս քաղա-  
քի : Թէոդոր Ակենոս, իշխան Պաղեստինի և զօրավար բա-  
նակին Յունաց : բախսեցաւ զօրոք ընդ Յուլիանոսի : ապա և  
Երենէոս կոմա ըստ կարգի իւրում ել ՚ի վերայ Սամարացւոց  
մինչդեռ ապաստանեալ կային ՚ի լերինս, և սատակեցցց զգըւ-  
խաւորս նոցա որք բանակիցք լինէին ընդ Պարսս, յուսալով  
օդնութիւն առ ՚ի նոցանէ գաանել :

Եւ մինչ յայսոսիկ էին, եկին եհաս համը բաւ առագատակի թշնամեաց, և ելեալքսան հազար արանց գնալ՚ի պատերազմ, և գնային խնդութեամբ յուսով գառնալոյ ամենեցուն յուղղափառութիւն։ Եւ թագաւորն ելեալ յուղարկել զզօրսն և գարձաւ աղօթել յեկեղեցւոցն, և շարժեցաւ քաղաքն և լցան փողոցք և տանիք և վերնայարկիք և գաւիթք եկեղեցւոյ արամբք և կանամբք որք աղաղակէին . “ Ի արեպաշտ թագաւոր, միադաւան՝ միահաւատ արա զամենեսեան : ” Եւ ելաց թագաւորն զբաղում ժամս, և պատասխանի ետ ժողովոյն, թէ “ լինի ըստ կամաց ձերոց : ” Եւ նոքա այլ աղաղակէցին . “ Փութա թագաւոր, և ՚ի կեանս քո արա խաղաղութիւն եղքարց բաժանելոց, որ միւաւորելով Կատուծոյ Իանին ՚ի մի բնութիւն՝ միաբանեմբ ամենեքեան : ” Եւ դարձեալ ելաց արքայ լալիւն մեծ . և ապա տաէ ցնոսա . “ Դնացէք և թոյլ տուք, լինիցի որպէս հայցէք : ” Օ ի յորժամ գիտացին ժողովը դականքն, թէ միայնակեացք որք երկնային վարուք են և աստուածախօսք, մի բնութիւն դաւանեն, այն է Ճշմարիտն : Եւ կամէր թագաւորն հաստատել զուղղափառութիւնն, զի գիտաց թէ ուրացողք են Քաղկեդոնականքն . բայց զի մտանեին Քաղկեդոնիքն ծածկաբար առ թագաւորն և եր-

կիւղ սրբանէին նմա հոգեւոր և մարմնաւոր,  
ասելով թէ՝ « Այուլի կամիս լինիլ Եստուծոց  
և մարդկան հաւանելով կնօշդ . զի վեց հա-  
րիւր երեսուն և վեց եպիսկոպոսքն բանա-  
գրեալ են զոչ հաւանող նոցա բանիցն , և  
յամեն երկիր տարածեալէ դաւանութիւնդ  
այդ , ոչ կարեն հանգարանել քեզ աշխարհք  
ամենայն : » Եւ երկեաւ թագաւորն և  
կայր ՚ի տարակուսի : Եւ զայս լուեալ Ան-  
ւերիստի ասաց . « Ապաքէն Պետրոսի տուաւ  
իշխանութիւն կապել և արձակել , իսկ որք  
ոչ ունին զՊետրոսի դաւանութիւնն , ոչ կա-  
րեն կապել և արձակել , ոյլ ինքն անք են դա-  
տապարտք և կապածք . զի Պետրոս երկու  
բնութիւն ոչ դաւանեաց , ոյլ ասաց միաւոր՝  
« Դու ես Արդի Աստուծոց , այդ որ մեզ ե-  
րեւիս . » և երանեցաւ ՚ի Տեառնէն : Իսկ  
անապատականքն տեսեալ թէ յամեաց բանն  
և ոչ լինի կատարեալ խաղաղութիւն , ասեն  
ցթագաւորն . « Վվ թագաւոր , հաւատս մեր  
չէ մանկագոյն և փոքր՝ որ մեծանայ , և ոչ  
ծերացեալ որ թէ նորանայ , և ոչ թերի՝ որ  
չու , և ոչ առաւելեալ՝ որ պակասի . այլ զոր  
Հոգին Առւրբ սերմանեաց մարդարէիւքն և  
ժողովեաց առաքելօքն , և Տէրն մեր Յիառուս  
Քրիստոս Աստուած Ճշմարիտ կատարեաց և  
հաստատեաց , մեք յայնմանէ ոչ թիւրիմք ,  
ոչ պարգեւօք և ոչ փաղաքշանօք , ոչ մահ-

ուամբ և ոչ կապանօք , այլ կամբ և մնամբ  
առաջի մարդկան՝ որպէս և եմբ առաջի Աս-  
տուծոյ : ” Եւ զայս ասացեալ գնացին յա-  
նապատն իւրեանց , և Աեւերիանոս զԱնթի-  
մոս առեալ գնաց յԱզէքսանդրիա :

Եւ լուսու զայս սսւրբ Խօր Օօրաւ (Օռհար)՝  
սիւնակեացն որ՝ ի սահմանս Ամթայ , և գնաց  
տասն աշակերտօք ՚ի Կրատանդնոււպօլիս յան-  
գիմանել զթագաւորն : Եւ յանդիման եղեալ  
թագաւորին ասաց . ” Վինչեւ յԵ՞րբ է անի-  
ծեալ ժողովայն Քաղկեդոնի չարիքն , ընդէր  
չքառնաս և սրբես զեկեղեցի : ” Եւ զայրա-  
ցաւ թագաւորն ընդ անարդանսն և ընդ ա-  
նէծս ժողովայն , և Եհար ձեռօքն զկուրծք  
սրբոյն և ասէ . ” Օ Բինչ նշան ցուցանէք դուք  
զի գիտացուք թէ ձերդ է ճշմարիտ . և զի-  
արդ իշխեցեր առաջի իմ նզովել զսուրբ ժո-  
ղովն : ” Եւ նա ասաց . ” Ազովեցի և Եղիցի  
նզովեալ և հաւանեալքն նմա . և զի խընդ-  
րես նշանս տեսանել , հաւատամ յԱստուած  
կենդանի որ զքեզ առնէ նշան : ” Եւ ել  
բարիութեամբ ՚ի թագաւորէն , և երեւե-  
ցաւ այն թագաւորին մեծ անարդանք , և  
ետ գրել վաղվաղակի , թէ որ յայսմ հետէ  
իշխէ նզովել զժողովն Քաղկեդոնի , նոյն ժա-  
մայն սպանցի : Եւ տարածեցաւ հրամանն ,  
և հրեշտակ Տետոն յայտնեաց զտեսիլն իւր  
թագաւորին , և Եհար ձեռամբ զգլուխ թա-

գաւորին և անկաւ թագաւորն և անշնչացաւ և թափեցաւ ՚ի խելացն . և գնացեալ թագուհին անկաւ յոտս սրբոյն, և աղաջեաց գոլ և աղօթել և դնել զձեռնն ՚ի վերայ՝ զի կենդանացեալ արացէ զկամս նորա : Եւ եւ կեալ սրբոյն եղ ձեռն և աղօթեաց և յարեաւ վաղվաղակի և խնդրեաց ժողով զի հաստատեսցէ զուղղափառութիւնն . և եկն Աեւերիանոս և թէ սոդորէ պատրիարքն Աղեքանդրու և Անթիմոս և այլք բազումք, և չարափառ պատրիարքն Անտիոքու ՚ի ձեռն Ապրդսի բանաւորի ծանոց Ագաթոնի Հռոմայ պատուն և եկն ՚ի կրոտանդինուպօլիս, և մեծարեաց թագաւորն և քաղաքն զմուտ նորա . և երեք պատրիարքունքն ոչ ելին ընդգէմ նորա, Աեւերիանոս և Անթիմոս (1) և թէ սոդորոս : Եւ յետ աւուրց սկսաւ մեղագրել թագաւորին, թէ ա՞վլէ այն խաբեքայն Զօրաւ որ վասն նորա շարժես զկրօնս սուրբ ժողովոյն Քաղկեդոնի . տուր զնա ՚ի ձեռս իմ . և հրամացեաց թագաւորն : Իսկ սուրբն առանձնացեալ էր ՚ի պահս և ՚ի ճգնութիւն, զի առաջին շաբաթն էր աղուհացիցն : Եւ առաքեաց առ նա և ասէ . և կամ եկ գու առ մեղ, կամ ես և թագաւորն գամք առքեղ : ո Եւ գնացեալ ասացին ՚ի դրանէն

(1) Յօրինակին Տիմոթէոս :

ի ներքս . Ետ պատասխանի և ասէ . « Ես  
մինչեւ յաւագ հինգշաբաթ օրն ոչ ես եր-  
թամ առ ոք և ոչ ընդունիմ առ իս զայլ : »  
Եւ նա բարկացեալ արար ատեան և նղովեաց  
զիւերիոս և զի՞նթիմոս և զիմէոդորոս և ըդ-  
սուրբն Օօրաւ (Օռհար) և դաւանեաց երկու  
բնութիւն և զի՞ւստորի աղանդն , և վաղ-  
վաղակի ժամանեաց բարկութիւն յլստու-  
ծոյ ՚ի վերայ նորա , և թանձրացաւ լեզուն  
և չուաներ զնա բերանն և թափէր արտաքս ,  
և երեք անդամ կտրեցին բժիշկք և ոչ դա-  
դարէր կեզն և բորբոսն մինչեւ ՚ի մեծ հինգ  
շաբաթ օրն , և չարամահ սատակեցաւ <sup>(1)</sup> :  
Յայնժամ եքարձ թագաւորն զեղեալ սահ-  
մանն սպանման նղովողացն Քաղկեդոնի ժողո-  
վոյն , և գնացին սուրբքն ՚ի տեղիս իւրեանց :

Եւ աստ յայտնեցաւ նշխարք սրբոյն Ան-  
դինեայ ՚ի գաւառին Ենախոքու , ՚ի Շենտէ-  
րիս գեղ , անփուտ և մածեալ ընդ տախտակ-  
սըն , և էր ամենայն մարմինն վէրք . և եզեւ  
բազում բժշկութիւն , և բերաւ յլնտուք :

Եւ յայսմ ժամանակի եկին Պարսիկք և  
գերեցին զշալպ և զլնտաք , մինչեւ տա-  
րան կամակարութեամբ սիւնս մարմարեայս  
՚ի Պարսս . և գնացին Հռոմայեցիք և առին

(1) Զանակնեկալ վախճան Ակաթոնի պապի ՚ի կոստան-  
դինուպոլիս , հաստատեն և արեւմտեան պատմագիրք : Տես  
Գլքորեայ , Պատմ . Եկեւ . 1.Բ . 52—54 :

զվրէմն գերելով զաշխարհն Պարսից : Եւ  
յետ այնօրիկ եկեղեց խոսրով թագաւորն Պար-  
սից ՚ի վերայ Ուռհայոց և չկարաց առնուլ,  
և գերեալ զլլուճ և քակեալ զշնոաք՝ գը-  
նաց :

Յայսմ ժամանակին Քաղկեդոնի ազան-  
դովն եպիսկոպոսք ՚ի Կոստանդինուպոլիս,  
Եսայի՛ Ուգոսի, և Վղէքսանդրոս՝ Դիղբար-  
սոսի ըմբռնեալք յարուամոլութիւն, հա-  
տան երանք նոցա ՚ի թագաւորէն, և վե-  
րացեալ ՚ի ձող՝ ցուցաւ քաղաքին, և քարոզ-  
քըն ազազակէին թէ՛ և լոյս է դատաստան-  
որք զայնպիսին գործեն . . . և կատարեցաւ  
բանն Պաւղոսի թէ՛ և Արտվշետեւ ոչ իմա-  
ցան զշտուած ունել ՚ի գիտութեան, մատ-  
նեաց զնոսա Վստուած գործել զանարժան-  
ութն (1) : ”

Ի հնգետասան ամին Հուստիանեայ ելլին  
Պարսիկք և գերեցին զՄիմիտոն և զլարա-  
նիկոս, և զՊելլա քակեցին և ՚ի Պելլայ տա-  
րան զնշխարս սրբոյն Բագոսի և զոսկին ոք  
՚ի վերայ տապանին սրբոյն Ասրգոսի (2) :

(1) Թուղթ առ Հռովմայեցիս . Ա . 28:

(2) Ապուլֆորաճ կոչէ զանտւանս քաղաքացու Դէկտոր-  
իալըննիւս : Բէլլ-Բարսոս Խոկ ՚ի Վարս Սրբոց գրի . եթէ  
սուրբն Բարսոս նահատակէցաւ ՚ի Բարբալիսոն քաղաքի . և  
սուրբն Սարգիս ՚ի Ուռծափ քաղաքի Ասրւոց մերձ Ալոքա-  
միա, որ է Համա :

Ի թուլին Ասորւոց ՊԽԸ (848) եղեւ նշան  
 ՚ի վեր քան զհաւատալ, որ թէ չէի գտեալ  
 ՚ի բաղաւմ գիրս սրբոց գրեալ, (և ոչ ես կա-  
 րէի գրել): Խաւարեցաւ արեգակն ուժեւ  
 տասն ամիս, զի երեք ժամ աւուրն լցոս տայր  
 և զայլն որպէս ոչ լոյս և ոչ գիշեր. և ոչ հա-  
 սան պտուղք տարւոյն, և ամենայն բնա-  
 կիչք աշխարհի եղեն իբրեւ զիլիսակենդանո  
 և որպէս այլակերպս: Եւ յետ այնորիկ ե-  
 ղեւ մահ տարածամ, որ բնու. չէր լեալ  
 յաւիտենից. նախ սկսաւ ՚ի կրոտանդինու-  
 պօլիս լնդ ելանել սրբոցն ՚ի նմանէ: Հա-  
 ռաջին օրն մեռան հինգ հազար, և միւս  
 այլ օրն տասն հազար, և միւս այլ օրն հնգե-  
 տասան հազար, և յայլում աւուր ուժեւ  
 տասն հազար. և եղ թագաւորն թուողս ՚ի  
 դրան քաղաքին և համարեցան մինչեւ յե-  
 րեք հարիւր հազարն, և ապա թողին զհա-  
 մարն: Կախ սկսաւ յաղքատօն և ապա ՚ի  
 մեծասունան և յիշխանան և ՚ի տուն թագա-  
 ւորին, և ուռնոյր ցալքն (անութք) և պա-  
 տառէր, և երթայր շարաւն. և հոտեցաւ  
 քաղաքն և լնուին ՚ի ծովն ոչ կարելով թաղել  
 Օ ՚ի ՚ի վերայ միոյ յաճախէր չարն, յառաջ  
 երեք սեաւ պտեր (չփղաներ) երեւեր ՚ի մէջ  
 ափին և այլ ոչ ժամանէր փոխել զոտն: Հա-  
 զումք այս նշանովս մեռանէին. և զոր ընկե-  
 նուին ՚ի ծովն, դարձեալ արտաքս բերէր

ծովն . և նեխեցաւ քաղաքն և թագաւորն քառասուն դահեկան հրամայէր տալ որ մի մեռեալ հաներ ընդ քաղաքն , և նոքա ՚ի տանել զմեռեալսն՝ անկանէին և մեռանէին : Եւ բաղումք մտանէին ՚ի տունս թափեալք ՚ի մարդոյ և լի գանձիւք և հանդերձիւք , և բառնային շարակով , և ՚ի հանելն ընդ դուռըն՝ անկեալ մեռանէին <sup>(1)</sup> :

Եւ տարածեցաւ մահն յերկիրն Եղիպտոսի , և ջնջեցաւ քաղաք մի , ուր եւլծն արև և տղայ մի մնացին , և ՚ի ջրջելն ընդ քաղաքն՝ յանկարծ անկան եւլծն արքն և մեռան , և տղայն ետես զհրեշտակ Կատուծոյ ՚ի կերպարանս ծերոյ . և տեսեալ զի լսոր տղայն , և հան զնա ՚ի քաղաքէն և ասաց . “Վնա և մի լսր , զի բարկութիւնս վասն հերձուածոյ և մեղաց է : ”

Եւ ՚ի Փղտացւոյ երկիրն գնացեալ սկառուհասին ՚ի քաղաք մի՝ երեւեցան զեւք և ասացին , թէ “Վտանէք պատկեր մի պըզնձի , երկրագագեցէք նմա և ոչ մեռանիք : ” Եւ ջրջեալ գտան զպատկերն և երկրագագեցին . և յաճախեաց մահն , և ոչ մնաց ՚ի նոցանէ և ոչ մի : Եւ եհաս բարկութիւնն ՚ի

(1) Զայս գետս կոտորածի մահտարաժամու հաստատեն և Յովհաննես Ասիացի և Զաքարիա Մելւտինացի . և պատմագիրք Յունաց . և պատահեցաւ յամի 524. առ թագաւորութեամք Յուստիանոսի , և տեսեաց ամս տամա :

Հայս և 'ի Պարսս : Բայց Հեմս քաղաք ,ուր  
կայր գլուխ Յովհաննու Ակրտչին , և բնակ-  
չացն ապաւինեալ 'ի նա և 'ի բարեխօսու-  
թիւն նորա , ապրեցան :

Յինն և տասն ամին Յուստիանեայ բար-  
բարոսք առին զառոմ և աւերեցին , այնչափ  
զի մնացեալքն ելին յառընթերակայ աւե-  
րակսն , որ չէին կարող բնակել 'ի քաղաքսն :  
Եւ յայսմ ժամանակի փոխեցաւ 'ի Քրիստոս  
սուրբն Աւերիանոս յԱղէքսանդրիա , և ե-  
դաւ պատուով 'ի տապանի . և ուղղափառ-  
քըն եդին պատրիարք զԱրդիս ճգնաւոր  
Ենտիոքայ : Յայսմ ժամանակի այրեցաւ վանք  
սրբոյն Ախմէօնի յԵնտաք և թափուր եղեւ  
'ի բնակչացն : Եւ 'ի սոյն ժամանակս (պա-  
տահեցաւ) խանգարումն Օատկի : Եւ 'ի  
քսան և երեք ամին Յուստիանեայ գետն  
Տարսոնի ելաւ և տարաւ զքաղաքն : Եւ 'ի  
սոյն ժամանակս 'ի շարժմանէ կորեան 'ի լա-  
տիկն եւթն հազար այր : Եւ 'ի Ախւսիա ըն-  
կղմեցաւ կէս քաղաքն Պօնոպօլսի <sup>(1)</sup> և իջին  
բնակիչքն կենդանւոյն 'ի խորս , և ձայն հեծ-  
մանն գայր զաւուրս , և ոչ կարէին օգնել :  
Եւ 'ի Փիւնիկէ ընկղմեցաւ Տրապօլիս և Պիւ-  
սոս <sup>(2)</sup> և Տրովլաս և ամենայն քաղաքն Գալի-

(1) Ախւս թարգմանաւթիւնն Պոնոպօլսի : զոր ոմանք  
իմանան զՊենտապօլիս քաղաք :

(2) Այն է Բիբողոս , կամ Բիբլոս , որ ըստ Տամկաց

լեացւոց . և 'ի ներքս գնաց ծովին երկու միլ  
և նաւքն մնացին 'ի ցամաքի :

Յայսմ ժամանակի առաւ Պատրա (1) 'ի  
Պարսից և ամրացաւ , և լուեալ Հռոմայեց-  
ւոցն գնացին սղարեցին զքաղաքն զեւթն  
ամ և գարձեալ առին : Եւ յայսմ ժամանա-  
կի եղեւ սով սաստիկ , մինչ զի ուտէր մարդ  
հինգ լիտր հաց և ուռնոյր և ոչ յագենայր:  
Եւ եղեւ մահ անառնոց երկու ամ , և էր ընդ  
ամենայն երկիր , և պակասեաց եղին վաս-  
տակ յերկրէ : Եւ եղեւ շարժ 'ի Կոստանդիի  
նուպօլիս զքառասուն օր , և բազում տուն  
գերեզման եղեւ բնակչացն , և տապալեցան  
յոլով եկեղեցիք , և մասն ինչ 'ի Վիկոմիդայ  
կորեաւ : Եւ 'ի յերեսուն ամին Յուստիա-  
նեայ երկու պարիսպգքն Կոստանդինուպօլի  
շրջեցան՝ շինեալբն 'ի Կոստանդնէ և 'ի Յակո-  
վոսէ : Եւ Ռիկոն քաղաք 'ի վայր շրջեցաւ ,  
և զտան օր շարժեցաւ երկիր որպէս տե-  
րեւ : Եւ յայսմ ժամանակի երեւեցաւ սուրբն  
Յակովը անուանեալն Կուրդնկար (2) :

Յայսմ ժամանակի առաքեաց թագաւո-  
րըն Արարեկաց քրիստոնէից Հերեթն առ

ձեռնէլ կոչեւ : Խոկ Տրուան թուի թէ՝ ասիցէ Տիւրու :

(1) Միւս թագմանութիւնն Սպառուս :

(2) Այնէ Յակով Ասորի ծանծալոս կոչեցեալ 'ի Յու-  
նաց և Պուրատունո յԱսորւոց , և 'ի սուրբս համարեալ առ  
Ասորիս :

Յուստիանոս մեղադրանք, թէ ընդէ՞ր աւելիցիք՝ գլքիստոննէութիւնս ժողովովին Քաղկեդոնի և արարիք զիշրորդութիւնն չորրորդութիւն։ Եւ Յուստիանոս առաքեաց արտիմաստունս պատասխանել նմա։ և յորժամգնացին՝ տեսաւ զնոսա թագաւորն և ասէ։ “Եւ դուք յաշակերտացն անիծեալ ժողովոյն էք։” Եւ նոքա ասեն։ “Ինդէ՞ր հրամայէ ձեր թագաւորութիւնդ զայդալիսի իրս, նզովել զվեց հարիւր և զերեսուն և վեց սուրբքն։ զի թէ վայրապարք և աշխարհականն էին, պատկառել արժան էր, թողթէ եկեղեցւոյ առաջնորդք և սուրբ մարդիկ։” Եւ ասէ թագաւորն։ “Ես բարբարոս մարդ եմ և չգիտեմ (խոսել) ՚ի գրոց, բայց ասեմ ձեզ բան մի։ թէ լինի յոլվութիւն կերակրոց և անկանի ՚ի ներքո մուկըն մի, պղծի թէ ոչ. և ասեն՝ “պղծի։” Եւ ասէ ցնոսա. “Եւ զիարդ ոչ ապականնէին վեց հարիւր երեսուն և վեց եպիսկոպոսունք տումարովին Եւոնի, որ ՚ի Հրէութիւն դարձցց զիքրիստոննէութիւնս։” Եւ յետ բազում բանից ասեն արքն. “Հրամայեսցէ ձեր քաջութիւնդ՝ և առնեմք պատարագ որ հայրդիք, ցոյց սիրոց և խաղաղութեան ձեր և թագաւորին մերոց։” Եւ ասէ ցնոսա Հերքեթն. “Վեք ՚ի ձենջ ոչ հաղորդիմք և ոչ զձեղ հաղորդեմք։” Եւ հրամայեաց հաց

պատրաստել և ոռօճիկ՝ միս ըղտու . և ՚ի բերելն առաջի՝ ասէ . “ Եթայք . ” և նոքա ասեն . “ Ո՞ք զայդ ոչ ուտեմք , զի պիղծ է . Եւ թագաւորն ասէ . “ Եւ զիարդ ոչ պղծիմք մեք ՚ի մարդոյ մնէ , զի այդ է պատարագն ձեր : ” Եւ ապա արձակեաց զնոսա ամօթով :

Յայնժամ մեռաւ Ծէոդորիա թագուհին ուղղափառ խոստովանութեամք , և թաղեցին զնա Ենթիմոս և Ծէոդորոս պատրիարքունք :

Եւ յայտնեցան հերձուածք ՚ի ժամանակս Յուստիանեայ՝ այսոքիկ : Եռաջինն՝ հատեալքըն ՚ի Ուանիքեցւոցն , որք եկին ՚ի Պարսից՝ կերպիւ աբեղացից , որք արեամք սպիտակ հաւոյ և սպանեալ տղայոյ հաղորդին , և ՚ի տարւոջն մի անգամ առնեն ոճրագործութիւնս զՈւանիքեցւոցն : Եւ երկրորդն՝ Ատեփաննոս Ուռհայոյ , որ ասէր՝ ըստ չափոյ մեղացն զուանջանքն մեղուցելոցն , և յետ այնորիկ հաւասարին արդարոց : Եւ երրորդն՝ Յովհաննէս յլ՛փեմիոյ (յլ՛պամիոյ) , որ նիւթասէր զԱյտուած իբրեւ զմի ՚ի տարերացու : Եւ չորրորդ՝ Յուլիանէ ալիկառնացին , որ ասէր՝ թէ Քրիստոս զանասպական մարմինն Եղամայ որ յառաջ քան զմեղսն՝ էառ , և ոչ զապականացուն որ զուղղափառ խոստովանութիւնն ունի : Ո՞ի Եղամ կրկին է . զառաջինն չունէր խառնուած , և զկնի մեղացն

խառնեցաւ ապականութիւն։ Օսա յանդիմանեաց սուրբն Անտերիսս ՚ի յաստուածային գրոց, և նա ոչ զղղացաւ, և մնաց խմորն (1)՝ Հինգերորդ՝ Յովհաննէս արիթացին որ երեք բնութիւն ասէր զաստուածութիւնն։ սա աշակերտ էր Այամուէլի ռասլացւոյն։ Օսա կոչեաց Յուստիանէ թագաւոր, և ըւեալ զհերձուածն՝ հալածեաց զնա . և գնացեալ արար գրեանս, վկայութիւն որսալով յԱստուածաշունչ գրոց իւրում աղանդին։ Վեցերորդ՝ Փոտիննէ անտիօքացին, նոյսէս երեք բնութիւն և էութիւն և անձնաւորութիւն ասէր, և արար գրեան ՚ի կոստանդինուագօլիս։ Եւթներորդ՝ Թէոդորոս կապադովիացին, զնոյն աղանդն հաստատէր թէ՝ Քրիստոսի աստուածութիւնն չէ Հօր աստուածութին։ Անթերորդ՝ Կթանասիսս որդի գստերն Թէոդորիայ թագուհւոյ, որ աշակերտեցաւ Ամանի ուռհայեցւոյ և յետոյ Արդսի երիցու, որ եղեւ պատրիարք Կնտիօքայ։ Աս զՅովհաննիսի աղանդն քարոզէր՝ երեք բնութիւն ասելով Երրորդութեանն։

(1) Զաղանդաւորացս այսոցիկ Յուլիանիտաց խօսի և Յովհաննէս Ասիացի ՚ի գիրս իւր Հոտ։ Բ. Գ. Ժ. Ժ. Արորց սմանք, ասէ, եկին և ՚ի Հոյս յաւուըս Մովսէս կաթողիկոսի ՚ի տարածել զաղանդն իւրեանց, զրոս և արտաքսել։ Նցնպէս և յետ ժամանակի ՚ի կաթողիկոսութեան Յովհաննու իմաստափրի ժողովով գատապարտեցաւ այն աղանդչարափառաւ։

և թագաւորն ազաշեաց զիմէոդորոս պատրիարքն առնել զնա երեց, և ոչ հաւանեցաւ. և զկնի մահուանն թէոդորոսի կամեցաւ առնել զիմանաս պատրիարքը Աղէքսանդրի, և գրեաց թագաւորն Աղէքսանդրիս և ոչ առին յանձն : Եւ Կայնոն Տարոսի եպիսկոպոսն և Ուգէն Աւլեւկիոյ, աճեցուցին զազանդն Աթանասի, և վասն այօր ազնդոյ և այլ ամենայն հերձուածոյ արարընդդէմ ճառոս թէոդորոս պատրիարքն Աղէքսանդրի : — Իններորդ՝ Ամբիկոս (Անթիմոս) կոստանդինուալուսեցի, ասաց թէ՝ “Որ ոչ խոստովանի երեք անձանցն յատուկ բնութիւնս, նա չըրեաց է և հակառակ ուղղափառութեան : ”

Յայսմժամանակի եկն Հերեթ թագաւորն Տաճկաց առ Յուստիանոս (Յուստինիանոս) և ունէր գիր հաւատոյ զարեւելեան եպիսկոպոսաց Հայոց Անձաց, և զՅակովոյ Կուրդնկարին և զԱղէքսանդրու պատրիարքին, և ասաց . “Որ ոչ ձեռագրէ ’ի գիրս յայս, նա հերձուածողէ և չարափառ . ” և ոչ ձեռագրէին բազումք . և բարկացաւ Հերեթն ’ի վերայ Յուստիանոսի և ասաց . “Անդգայ և ափշեալ, ոչ իմանաս եթէ այս ամենայն ցասումն երկնաւոր ’ի վերայ երկրի վասն չարժողովյն է . վասն էր ոչ բառնաս զնիւթքարկութեանն Աստուծոյ ու Եւ պատասխա-

նի ետ (Ծուստինիանոս) և ասէ . “ Եղածեմ  
զբեզ մի զայրանար , չկարեմ զայդ առնել և  
ունել զթագաւորութիւնս . ոյլ վասն քո ե-  
րեսաց չտամ վստահութիւն և հպարտու-  
թիւն . Քաղկեդոնացւոցն ՚ի վերայ ուղղափա-  
ռաց , և գագարէ հալածումն ուղիղ խոս-  
տովանողացն՝ վասն քո , զի զբեզ պատճառ  
գնեմ և չմեղագրէ ոք ինձ վասն ուղղափա-  
ռացն , և աճեն և բաղմանան , և Ծատուած  
հոգասցէ ՚ի ձեռն կարող ժամանակաց և թա-  
գաւորաց : ” Եւ ապա Հերեթն թագաւոր  
առ ինքն կոչեաց եպիսկոպոս ուղղափառու  
և զՀակովք , և ձեռնադրել ետ ՚ի Կոստան-  
դնուալօլիս պատրիարք ուղղափառացն , նոյն-  
պէս և յԱնտիոք և յԱղեքսանդրիա , և ետ ՚ի  
վերայ սպառնալիս՝ զի մի ոք նեղեոցէ զնոսազ-  
Եւ գնաց Հերեթն ՚ի թագաւորութիւն իւր-  
իայց զի ասէին ուղղափառքն ընդ . Քաղկեդո-  
նիաքն , թէ դուք զԱնստորին , զթէնուրէն-  
սին և զթէոդորին հաստատեցիք զաղանդն ,  
վասն այսր պատճառի ժողովեաց թագաւորն  
բաղմութիւնն եպիսկոպոսաց պատասխանի  
առնել ուղղափառացն . և պատրիարքունք  
էին . Դոմինաս Ծնտիոքայ , Ըպողինար Աղեք-  
սանդրի , Եւտիքէս Կոստանդինուալօլիս : Եւ  
Բաքիլոս (Ա եղիլիոս) կայր ՚ի Կոստանդինու-  
պոլիս , վասն զի աւել էր Հռոմ : Եւ ոչ գայր  
սա ՚ի ժողովն , ամսպարտաւանեալ թէ՝ ես

չեմ դոցա ընկեր . և յորժամ կամեցան նզու վել զնեստոր և զիմէոդոր (իմէոդորետոս) և զիմէոդոր Ամուստացին և զՏարսոնացին , ոչ ետ թոյլ Բաքիլս նզովել զնոսա , ասելով թէ՝ « Ոչ է արժան զկնի հարիւր երեսուն ամի հանգստեան Արբոցն նզովել զնոսա : » Եւ զի ոչ նզովեցին զնոսա , ոչ ոք ընկալաւ զժողովն զայն (1) :

Ի թուրին Կոորւոց ոկէ (667) յայտնեցաւ աղանդն Յուլիանեայ առ աչօք ասողին ըզտնօրինականն Քրիստոսի, յԱւեփեսոս, յաշակերտացն Յուլիանեայ : Եւ եկն առ նոսա Եպիսկոպոսն Պրոկոպոս և յանդիմաննեցաւ 'ի բազմաց՝ և ոչ զզջացաւ , և 'ի ծերութեան նորա աղաչէին զնա աշակերտքն նորա զի արացէ Եպիսկոպոս իւր փոխանորդ , և ոչ առ յանձն ասելով թէ՝ « Ես մի եմ և չէ պա-

(1) Երկրորդ ժողովն կոստանդինուսպոլսի եղեւ առ Յուստինիանոսիւ , յամի 553 . 'ի ներկայութեան Եւտիքիոսի կոստանդինուսպոլսի Եպիսկոպոսի , Ապողինարայ՝ Աղէքսանդրիոյ , և Դոմինոսայ՝ Անտիոքայ : Անդ 'ի մայրաքաղաքն գտանէր և Վեգիլիոս հայրապետ Հառոմայայլ առ ամազաբատաւանութեան ոչ հաղորդեցաւ ժողովոյն , անաաստելով հրաւիրանաց Յուստինիանոսի : Ի սմին ժողովի նզովեալ մերժին գիրք թէոդորոսի Մոպատեստացւոյ , թէոդորետոսի Կիւրացւոյ և Իրասոյ Եղեսացւոյ , որ կոչին Երես Գլուխու : Նշյնակէս և նոյն ինքն թէոդորոս նզովի ՚ի նմին ժողովի , թէոդէտեւ կանխաւ իսկ վախճանեալ էր նա . քանզի վճիւ հան ժողովն , եթէ արժան է նզովս դնել 'ի վերոյ ուրուք հերետիկոսի զինի վախճանի նորին :

տեհ . Երեք արքեպիսկոպոս պիտի՝ որ ձեռնադրեն Եպիսկոպոսաց Եւ ՚ի մեռանիլն նորակալան աշակերտքն զմի ոմն՝ որում անուն էր Աւտրուպիտոս (Աւտրոպիտոս), և Եղին զձեռն (Պլուկոպիտի) ՚ի վերայ գլխոյն , և արարին զնա Եպիսկոպոս , և նա արար տան Եպիսկոպոս , և առ աքեաց ընդ ամենայն Երկիր սերմաննել զաղանդն : Եւ մի ոք ՚ի նոցանէ , Արգիտ անուն , գնաց յերկիրն Քամիրացւոց<sup>(1)</sup> և խաբեաց զըազումն , և արար նոցա

(1) Քամիրացիք Են Շամմարք կոչեցեալ ազգն , որոց Երկիրն է յարեւելից հարաւոյ Անապատն—Արաբիոյ : Այս ազգը սրբէս յիշատակէ Միխայէլ Ասորի և պատմագիրք Յունաց , էին քրիստոնեայք , և զլխաւոր քաղաք նոցաէր կասսան և Հեթա զոր բնագիրք մեր Հերեթա կոչեն : Յառաջնումքառորդի վեցերորդ դարու Եթովլպացիք տիրեցին Քամիրացւոց . իսկ Հրեայք որ բնակէին անդ , յարուցեալ ՚ի վերայ նոցա կտորեցին և կացուցին թագաւոր զմի ոմն ՚ի Հրեից անտի . որոյ զօրացեալ սպան զքրիստոնեայս արաբացիս : և յարձակեալ ՚ի վերայ Կիդրան քաղաքին առ զայն , և զքահանայս և զժողովուրդս որ ապատանեալ կային յեկեղեցւոջ . խողլսողեաց և զեկեղեցին այրեաց , որպէս յիշատակեցաւ վերագոյն յեր . 231 : Մի էր ՚ի թագաւորաց քրիստոնէից Հարետ (Հերեթ) հինգերորդ ՚ի կարգի հոմանուն իշխանաց , և նատէր ՚ի կասսան , զոր Ասորիք կոչեն թագաւոր Արաբաց , իսկ Յշնք Արեթաս զնա անուանեն : Զոսա Յուստինիանոս կայսր գիմակաց արար Մունդիրայ Գ թագաւորին Հիրայ , և կոչեաց զնա գլուխ ամենայն Արաբաց Ասորւոց՝ Պատրիկ անուամբ , յամի 559 : Սոյն սա եկն ՚ի կաստանդինուպոլիս յաւուրս Յուստինիանոսի , յամի 562 : առաջի առնել կայսեր ինչ ինչ խնդիրս քաղաքականս . իսկ թէ արդարեւ բանք եղբն զիրօնից և զդաւանութենէ , ոչ ինչ յիշատա-

Եպիսկոպոս Վովչես անուն, և յետ երից ամաց մեռաւ : Եւ այլք յայլ տեղիս գնացին և զրապարտէին զսուրբն Եթւերիանոս՝ թէ Դիքիստոսի մարմինն ապականեալ և որդնեալ ասէր 'ի գերեզմանն .քայլ Եթւերիանոս զայս ասէր , թէ ապականացու և մահկանացու մարմին զգեցաւ , և ոչ թէ 'ի գերեզմանին ապականեցաւ , և նզովէր զայնպիսիսն որ ասեն՝ ապականեալ : Խոկ Ծուլիանիտքն ասեն թէ 'ի յորավայնի կրւսին անմահ և անապական մարմին էառ և անշարժարելի . և սյն որ չարչարեցաւ և մեռաւ , կերպարանօր և առաջօք էր և ոչ ճշմարտութեամբ : Եւ ոմն 'ի նոցանէ գնաց յԱղեքտանդրիա , և խառնեցան 'ի նա այլ ազանդք , Պանտիտացիք և լագինացիք , և ձեռնադրեցին իւրեանց պատրիարք , և նա արար բազում եպիսկոպոսս և առաքեաց յամեն Երիա . և սօքա յետոյ կանգնեցան միմեանց հակառակ : Եւ երկու

կեն յոյն մատենագիրք : Ըստ պատմութեան Միխայելի՝ Քամբացիք հակառակք էին չորրորդ ժողովոն : Առ նոսա զընաց Սարգիս ոմն աղանդաւոր և ուսոյց նոցա զաղանք իւր : Թերեւս նա իցէ Սարգիսն նեստորական որ ուսուցիչ եղեւ Մահմետի ըստ աւանդութեան : Եւ թուի ամենայն հաւանութեամբ , եթէ 'ի տարածել մահմետականութեան յԱրաբիա , թողին և Քամբիրացիք զբրիստոնէութիւն և դարձան 'ի նոյն գեն : Յամի յորում կամքս (1871) , ապստամբեալ ոսցա ընդդէմ Օսմանեան տէրութեան , յարձակեալ կան յԱսիա , այլ զօրութիւն Բ . Դրան ընդ փոյթ նուանեացէ զնոսա :

՚ի նոցանէ ՚ի բանտի կային ՚ի Վճրին , և  
խնդրեաց զնոսա թագաւորն Պարսից և ար-  
ձակեցան , և ոմն ՚ի նոցանէ գնաց զհիւսիսիւ  
և խաբեաց զբազումն , և եկն յԱրդուն և  
՚ի Հայս , և ոչ ընկալան Հայք . այլ առաքե-  
ցին յերկուց կողմանցն թուղթ առ պատրի-  
արքն թէ ոդորոս ուղղափառացն , և նա կա-  
տարեալէր զկեանսակա ապա գրեցին թուղթ  
մի Պաղկեղոնիտքն և թուղթ մի ուղղա-  
փառքն , և միմեանց չէին վկայ գրեալքն և  
հողածեցին զնոսա : Եւ ՚ի Կապադովկիա յո-  
լովք խաբեցան և ասեն , թէ առ ժամանակ  
մի զտեղի կողաւ ՚ի մասն ինչ Հայոց , մինչեւ  
՚ի կատարելոցն սրբեցաւ չարութիւնն :

Եւ յայնմ ժամանակի կամեցաւ Յուռ-  
աֆիանոս նորոգել զեկեղեցին որ յանուն Ե-  
ռասքելոցն և զուապանատուն թագաւորացն ,  
և ՚ի բրելն գտան երեք տապան արձրճած ,  
և գիր ՚ի վերայ տապանացն Անդրէաս , Դու-  
կաս , Տիմոֆէոս , և յոյժ ուրախութիւն ե-  
ղեւ քաղաքին ընդ գիւտ սրբոց առաքելոցն  
Քրիստոսի : Եւ յայս ժամանակս Աեւաստոսն  
որ ՚ի Կեսարիա Պաղեստինոյ , առաքեաց աջ  
մի ՚ի Կոստանդինուպոլիս , ասացեալ թէ՝  
Յովհաննու Վկրտչի է , և եղեւ կարծիք թէ  
իցէ նորա , թէ ոչ . սակայն պատուեցաւ ու-  
կեղէն յարկօք :

Եւ Յուռուսիանոս շինեաց երկոտասան

վանք և իննառուն և վեց եկեղեցին . և ոչ դադարեաց սա յիւր ժամանակն ՚ի շինելոյ եկեղեցիս և հիւրանոցս և աղբատանոցս :

Ի Պէտք (871) թուին Վարուոց , սկզբըն է թուականիս Հայոց :

Յետքառասուն տմի հարսծմանն և սերմանելոյ աղանդին Վաղիեղոնի , քաղաքն Ամիթ կրեաց սով սաստիկ զութ ամ . և յետյագենալոյն հացիւ , (պատահեցաւ ՚ի մարդիկ) տարի մի դիւական մոլեգնութիւն և կատաղութն և թափութն ՚ի խելաց , մինչ ոչ ճանաչել նոցա զինչս և դոունս իւրեանց . այլ ըստ պատահման մտանեին ՚ի տունս , և հրապարակաւ և յեկեղեցիս գործեին շնութիւն . և ելեալ ՚ի քաղաքէն ընդ վայր հաշեին որպէս շունք , և կանչեին որպէս անբան անասունք և իբրեւ զաքաղազ , և մերկանային և փախչեին առանց պատճառի , ասելով . “ Դան Պարսիկք , գան , փախիք : ” Եւ շրջակայ գաւառոն և Ռոռհա գային և պահեին զնոսա , և խնդրէին յլ ստուծոյ ողօրմութիւն . և յետ տարւոյն զգաստացան և զգեցան սեաւս , և դասս դասս գնացին յլ ըուսաղէմ և յայլ ուխտս : Եւ յետ այսորիկ եղեւ մահտարաժամ , և մեռան երեսուն և վեց հավար մարդ ՚ի սակաւ ժամն ժամեն ժա-

Խակ թագաւորն Յուստիանոս յամեն ժա-

մանակս իւր ընդուներ զժողովին Քաղկեդոնի, բայց զթուղիմն Հիբասայ ուռհայեցւոյ ոչ ընդուներ, և ոչ հաւատացար որք ասէին թէ՝ “Քաղկեդոնի ժողովին ընկալան զթուղիմն նորա:” Իսկ յորժամ ասաց Հաքիլոս (Ո իդիլիոս)պապն Հռոմայ թէ՝ “Ճողովին Քաղկեդոնի ընկալան զթուղիմն Հիբի (Իբասայ),” ո կանգնեցաւ (թագաւորն) և երեք անգամ ասաց. “Ճողովին Քաղկեդոնի նզաված է:” ո Հայոց խաթեցաւ նա ՚ի յաղանդն Յուլիանեայ յեպիսկոպոսէն Եպեմիոյ. և գրեաց առ Ենաստաս (1) պատրիարքն Ենտիգու զաղանդն, և հրամացեաց ժողով առնել և ձեռագրել զնա: Եւ ժողովեցան հարիւր իննը սուն և հինգ եպիսկոպոս յէնտաք, և ոչ ընկալան. և գրեցին առ թագաւորն վկայութեամբ գրոց՝ չար հերձուած զասելն առ աչօք զչարչարանսն Տեառն: Եւ տարան ըդթուղիմն առ թագաւորն. ոմանք ասեն զըլ ջացաւ տեսանիելով զթուղիմն, և յերկոցունց աղանդոցն գարձոց զերեսս, ՚ի Քաղկեդոնէ և ՚ի Յուլիանեայ, և ուղղափառ կատարեցաւ մահուամբ, թագաւորեալ ամս երեսուն և ութ և ամիսս հինգ: Եւ ՚ի մեռանելն Յուստիանեայ, մի ոմն ՚ի սքանչելի արանց տեսաւ տեսիլ և պատմեաց, թէ “Տեսանէի դաշտ մի ընդարձակ, և ՚ի մէջ դաշտին հնոց

(1) Միւս թարգմանութիւնն Ամենա:

մի բորբոքեալ հրով, և դսղացի և ասեմ.  
“Ում է այս գառն տանջանարանքս, ո և ա-  
սէ սմն ցիս. “Այս Յաւստիանեաց էր պատ-  
րաստած, բայց իւր եկեղեցափրութիւնն և  
աղքատասիրութիւնն չեթող զինքն հերձ-  
ուածով մեռանել, այլ գարձաւ յուղաւթիք  
և ’ի աեզիս ուղղափառացն գնաց:”

Դւյեա նորա թագաւորեաց քորորդինո-  
րա իւրով անուամբն Յաւստիանոս (1) և թա-  
գաւորեաց ընդ նմաս և կիմն իւր. և էր ահայք  
կու և ոչ եղեւ ժխոր ուրեմք, այլ և խոյս ե-  
տուն ամենայն շարագործք. և էր թրակացք  
և այլ քաջ, բայց ցաւեին տօքն նորա: Յա-  
ռաջին ամին սորս երեւեցաւ յօդք հուց  
քորբոքեալ, և յօլովք ասեին թէ նշան ա-  
րեան է (2). և թագաւորն առաքեաց և ե-  
բեր ’ի Օամբրոսնէ և ’ի Վանդոնէ արուես-  
տաւորք, որք կանգնեին փայտ՝ և զանձինս  
վառեին հրով, և ելանեին ’ի փայտսն եւ  
իջանեին օճեալ զանձինս տալիսով և ոչ այ-  
րեին: Դւյ գարձեալ երեւեցաւ յարեւելք

(1) Այն է Յաւստիանոս թ., որ թագաւորեաց յոմի 565: Արեւելեան պատմագիրք հայք և Ասորիք միով անուամբ  
կունքն զերեսին եւս Յաւստիանոս, որով և շիտթութիւն  
արկանեն ’ի պատմութեանը:

(2) Ի սմին ամի՞ , այն է 566—567 ամի՞ Քրիստոսի, ա-  
սէ Սամուել անեցի (’ի Քրոնիկոն.) “Աջ աստուածային ե-  
րեւեցաւ ’ի սուրբ մատրանն , այլ և նշան ահեղ հրաշափաց  
և արիւնատեսակ յերկինս:”

և 'ի հիւսիս այնպիսի հուր՝ որ բազումք ՚ի տեղենէն մեռան, և բերէր օդն եղէդն այրեցած և թուղթ այրեցած, և բազումք ժողովեցին ՚ի զամբիղս. և զարհուրեցաւ թուգաւորն, և գնաց յեկեղեցին յաղաշանս, նոյնպէս և քաղաքն ամենայն. Եւ ՚ի յինն ժամ աւուրն ել ամայ մի հրախառն, և կայր ՚ի նմա խաչ մի նկարեալ, և տեսեալ զայն բազմութիւնն աղաղակեցին. «Տէր, ողորմեա. Տէր, ողորմեա ըստ մշտի ողորմութեան քում»: «Եւ պատրիարքն ասաց յիշոգաւորն. «Տեսանեն զինչ եղեւ յաւուրսքո. որպէս յաւուրս մեծին Կոստանդիոնի նոսին նշան խաչի փայլատակեալ երեւեցաւ. արդ առաքեա և տուր բերել յիշվեմիայէ (Կպամիա) Կորւոց զիսաշափայտն Քրիստոսի որ կայ առ եպիսկոպոսի մի:» Եւ առաքեաց թագաւորն և բռնութեամբ առին զիսաշն և բերին յԱնտաք, և խիղարեալ ընդ մէջն, զիէսն թողին յԱնտաք և զիէսն տարան ՚ի Կոստանդինուտօլիս. և ելին քաղաքացիքն և թագաւորն և պատուով տարան ՚ի քաղաքն և եղին յաւագ եկեղեցին:

Եւ յերկրորդ ամին Յուստիանեայ առաքեաց զպատրիկն Յափշաննէս պատարագօք ՚ի Պարս սիրոց աղագաւ առ Խոսրով թագաւորն Պարսից, գնաց և դարձաւ պատուով: Եւ յայնմ Ժամանակի ոչ գոյր թա-

գաւոր Հայոց, քանզի մոեալ էին ընդ Պարսկաց իշխանութեամբ, և Խոսրով թագաւորն Պարսկաց սկսաւ նեղել զՀայոց՝ Երկրպագել կրակի. և ապստամբեցին Հայք և խնդրեցին օգնութիւն ՚ի Յուստիանոսէ զօրք, և յաղթեցին Պարսկաց և հալածեցին յաշխարհէն: Եւ առաքեաց Խոսրով առ Յուստիանոս՝ մի օգնել Հայոց, և տալ հրաման գառնալոյ ՚ի Պարսկակա և կամ տալ զհարկն: Եւ Յուստիանոս արար ընդդէմ պատասխանի և ասէ. «Տուր յիս զԱճբին որ քրիստոնէից լեալ է, և վասն սիրոյ գարձուցին առ ձեզ»: Եւ զայս լուեալ լուեաց Խոսրով<sup>(1)</sup>, Եւ պատրիկն Յովհաննէս հրաման առեալ ՚ի թագաւորէն խօսել վասն միաբանութեան հաւատոյ ընդ Հայս և ընդ Ասորիս. և եկն յԱտղաղա պատրիկն և ասաց ընդ Յակոբ կուրդնեարն: Եւ եղեւ ժողով ՚ի Կալանիկէ, որ է Ատղա<sup>(2)</sup> և ոչ միաբանեցան, նոյնպէս և Հայք քամահեցին զբանիւք նոցա:

Եւ ՚ի չորրորդ ամին Յուստիաննեայ եղեւ խանգարումն Օքատիկի, և թիւր Օքատիկ ա-

(1) Զարատերազմունս Յունաց և Հայոց ընդ Պարսկամ տես՝ ՚ի Պատմ. Հայոց, Համ., Բ., յեր. 285—288:

(2) Կալանիկոս որ և Ատղաղա կամ Ատակա կոչի. զորմեացմիցս լինի յիշատակութիւն ՚ի պատմութեանս, եր քաղաք ՚ի Միջազգեատո Ասորոց ՚ի վերայ Եփրատ գետոյ, յարեւելից կուօն, և անհանի ՚ի հարաւակողմն խառանու: Սեբէստ Կաղամիկոս անուանին զայս քաղաք. յեր. 51:

բարին Յօյնք : Յաւուրս յայսոսիկ Յովհաննէս եպիսկոպոս Արմիացի (1) այր ապականիչ և աներկիւղ յԱյտուծոյ, եղ ՚ի կամ թագաւորին առնել խռովութիւն եկեղեցւոյ ուղղափառացն, առնուլ ՚ի նոցանէ զաթոռ և զեկեղեցի և զհամարձակութիւն, և մատնել կապանաց և բանդից և մահուան, որ եղեւ իսկ զկնիքառասուն ամի հալածանացըն . և շրջէին եպիսկոպոսք զօրականնօք, և զհաւաննեալսն վերստին մկրտէին և եկեղեցական ձեռնադրէին, և զոչ հաւաննեալսն պէսպէս չարչարաննօք սպանանէին և յաքսորս և ՚ի բանտ տային : Եւ լցու երկիր մեծ բարկութեամբ և խռովութեամբ, զոր ոչ կարեմք ՚ի գրի առնել զաղէտս անցիցն այնոցիկ զոր կրեաց սուրբ եկեղեցի : Եւ յետ հաղարաց և բիւրուց սպաննելոց ՚ի յանաստուած Յովհաննիսէն որ էր պատրիարք կոստանդինուպոլսի, տաղտկացաւ թագաւորն ընդ անհնարին աղէտոսն, և ասաց ընդ նա . “Տուր ձեռագրով զդաւանութիւն քո յիս .” և գրեաց Յովհաննէս և ետ ցթագաւորն : Եւ ընթերցեալ թագաւորն՝ ճանաչեաց թէ Նեստորի աղանդովնէ, և բարկացաւ ՚ի վերայ նորա և ընկեց զնա յաթուոյն և եղ ըզնա յաքսորս, և ասաց ընդ Անաստաս զօրապետն իւր . “Դարձո վաղվաղակի զուղղա-

(1) Միւս թարգմանութիւնն՝ Սովորութիւն :

փառան որ կենդանի իցեն, և այլ մի տացես Երեւել առաջի իմ քաղկեդոնականացդ : Հայց զօր ինչ նախ քան զայս Եղեւ, ոչ է արժան անտես առնել :

Վեծ այրն Արտուծոյ Յովհաննես հռչակաւորն, որ զգիրս հարանցն գրեաց, և յոլով գիրս գրեաց և եթող ՚ի զարդ եկեղեցւոյ, աքսորած և ՚ի բանտի կոսր ՚ի կատանդինու պօլիս, և պատկառելով յառաքինութենե նորա՝ առաքեին առ նա թագաւորն և Յովհաննես պատրիարքն ելանել ՚ի բանտէն, և ոչ ելաներ . և աղաչեին բազում աղաչանօք լինել միջնորդ խաղաղութեան եկեղեցւոյ և ընդունել զմողովն չորրորդ . և նա սաստիկ նպավեր զժողովն և զպատրիարքն և զթագաւորն: Եւ բարկացան և արգելին ՚ի նմանէ զերւթեւեկմն, և արկին ՚ի տուն գէջ. և անկառ սուրբն յոտնացաւութիւն և ՚ի գլխացաւութիւն, և եռացին ՚ի նա ողիլք և բորբոք և վշրք ՚ի մարմինն, և ուտելին ճանձք և պիծտկեք զցայդ և զցերեկ, և նա ոչ կարէր ծածկել զինքն և կայր որպէս զմեռեալ ՚ի բազում ժամն: Եւ յետ յոլով ժամանակի եկն առ նա երիտասարդ մի գեղեցիկ ողառմուճանաւ զարդարեալ, և թուեաց նմա ՚ի զօրականաց թագաւորին ուղղափառ գոլով. և երթեալ համբուրեաց զնա և զսպեաց, և ոկառ ՚ի հանդչել և փարատիլ ՚ի ցաւոցն, և ել ընդ-

գուռնն։ Եւ դարձեալ եկն և եբեր նմա գինի և արբ, և օրհնեաց զնա և ասէ . «Օրհնեալ ես դու, որդեակ, որ հանգուցեր զիս ։ Եւ այսպէս ու թ օր ծառայէր զնա և ողջապուրէր եւ բանալերէր ասելով . «Հայր համբերեա, և երանելիք են որ այսպիսի պատահումն կրեն վասն ու զզափառութեան . » և բերէր միացութիւնս ՚ի գրոց վասն հաւատոց և վասն առաջնոցն համբերութեան : Եւ Յովհաննէս զուարձանայր ընդ իմաստութիւն նորա և ասէ . «Արդեակ ուստի է քեզ այդ ամենայն գիտութիւնն ՚ի տղայութեանդ՝ զոր և ծերութեամբ իմով ոչ գիտեմ», . և ասէ ցնա . «Հայր, ամենայն ինչ հնարաւոր է Հոգւոյն Արբոյ . այլ գու ու բախի լեռ զի եւ բնես աստի և զբազումն լուսաւորես» . Եւ յետ այսորիկ եկն առ նա արհի եպիսկոպոսն զբարիսըքին և ասաց . «Առ-րբ Հայր, լսէ և հնազանդեաց թագաւորին, և լինի միաւորութիւն անդամնոցն Քրիստոսից Եւ սուրբն պատասխանի ետ և ասէ . «Քրիստոս Կոտուած նզովիշ զձեզ. զիարդ չամաչէք, որ թէ Ճմարիտը էիք՝ յետ այսքան վշտացս զոր անցուցեք ընդ եկեղեցի Կոտուծոյ, չեր պարտ հաշտել ընդ ձեզ, թող թէ հերեաիկոսք և ասելիք Կոտուծոյ» . Եւ գնաց ՚ի նմանէ եւ պիսկոպոսն . և եկին և հանին զնա ՚ի բանասէն հրամանեաւ թագաւորին և տարան ՚ի

կղզի մի բարբարոսաց կռապաշտից , և անդ  
արգելին զնա , որ և 'ի վարդապետութենէ  
նորա և 'ի նշանագործութենէ դարձան առ  
Քրիստոս անձինք քսանեւութ հարիւր բիւր  
( ) 'ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ , որ  
է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից . ա-  
մէն :

Այս համբու հալածանաց ուղղափառ  
ոաց եհաս յերկիրն Պարսից , և ժողովեցան  
մողքն և գնացին առ թագաւորն իւրեանց  
խոսրով , և ասեն . « Ինդէր ոչ առնես դու՝  
որպէս առնեն Հռոմայեցիքն , որք ոչ դառ-  
նան 'ի կրօնս իւրեանց՝ չարաչար սպանաւ-  
նեն , և ընդքո թագաւորութիւնդ խաղա-  
ղացեալ կան՝ որք ոչ պաշտեն զհուր իբրեւ  
զքեղ : » Եւ ըւեալ թագաւորին Պարսից  
և արար հալածումն մեծ ընդ ամենայն աշ-  
խարհ իշխանութեան իւրոյ . և ըմբռնեալ  
երեք եպիսկոպոս և եհան զմորթս նոցա ,  
և զայլսն ազգի ազգի տանջանօք սպան և բա-  
զում վանորայս քակեաց , և թիւ ոչ դոյր ըս-  
պանելոցն . և առաքեաց 'ի Հայս շինել անդ  
տուն կրակի , և նոքա զայրացեալք սպանին  
զնոսա անողորմ՝ խրախուսեալք յԱստուած-  
Եւ Կաթողիկոսն մեծ՝ որ նատէր 'ի Դուխ ,  
գնաց 'ի Կոստանդինուպոլիս ածել զօրք ընդ-  
դիմանալ Պարսից : Եւ գնացեալ 'ի Կոս-  
տանդինուպոլիս , ելին ընդառաջ նմա Պատ-

րիարքն և ամենայն քաղաքն ընդունել ըդ  
նա . և զայս պատիւ լուան՝ ՚ի Հայք զի  
Քաղկեդոնիոքն այնպէս փարէին զնովաւ ,  
և պատրիարքն առ իւր ունէր զնա հանապաղ,  
երկեան թէ գուցէ խաբիցի . և առաքեցին  
առ նա մի հաւանել կալ ընդ նոսա վասն  
կարեաց իւրեանց , զի յոյսն մեր Քրիստոս  
է , և զուղիղ հաւատս ոչ տամբ վասն երկե-  
զի մեռանելոյ : Եւ մինչ գնացին և տարան  
զմռուզմն , և նա վաղագոյն իմացեալ էր ըզ  
հերձուածոյ նոցա չարութիւն , և մեկնեալ ՚ի  
նոցանէ՝ կայր առանձին , որ և յամելով նորա  
՚ի կրտանդինուպօլիս , ննջեաց ուղափառ  
խոստովանութեամբ , և մեծ պատուով ամ  
փոփեցաւ յուղղափառացն , որոյ եղեւ մեծ  
ամրութիւն և հաստատութիւն հաւատոց  
և պարծանք ուղղափառացն , մնալ Հայոց ՚ի  
Ճշմարտութեան յերկուց կողմանց՝ ՚ի Պար-  
սից և՝ ՚ի Քաղկեդոնացւոց , Աստուծով միայն  
զօրացեալ և օգնական ՚իմարդկանէ ոչ ոք (1) :

Իսկ Ասդիա կին թագաւորին՝ քորադուս-  
տը (դսւստր քեռ) էր թէոդորիայ թագուհ-

(1) Բանք Ամիսայէլի ակնարկէն ՚ի Առվանդ կամուղիկոս  
եղելարգեցի . այլ սա ոչ չոգաւ . ՚ի կ. սովոր . խնդրել ձեռն  
օգնականութեան ընդգէմ Պարսից : այլ Վարդան զօրափար  
փախատեաց անկաւ անդ : և յունական զօրօք դարձեալ ՚ի  
Հայու պատերազմեցաւ ընդ զօրս Խոսրովու : Իսկ Առվանդ  
կամուղիկոս վախճանեցաւ ՚ի Հայու յԱմոռ իւր յամի ՏՅՇ-  
տա թագաւորութեամբ Որմղոյ՝ սրգւոյ Խոսրովու :

այն, ուղղափառութեամբ մնեալ, որ էր առաքինի և երկիւզած, մինչ զի հոգեւոր տեսիլ տեսանէր և հաղորդէր յուղղափառ երիցուէն Վնդրէասայ: Եւ եղեւ զի հաւանեցուցին զնա մեծարել դիմաղկեդոնիկսն, և հաղորդել ՚ի նոցանէ: և երեւեցաւ նմասուրը կոսն Վարիամ և ասէ յնու. «Դուստր, ընդէր թողեր զիս և գնացեր առ հերետիկոսն ու և նա ասաց. «Օք ոչ գիտեմ դաւանութիւն, ուստի ինձ: » Եւ ասէ սուրբ Կյուն. «Բաւականէ քեզ տերէ Հայր և Վարդի և Հոգին Սուրբ, և շհաղորդիլ ՚ի Վաղկեդոնացւոցին: » Եւ զայս տեսեալ և լուեալ, ՚ի բաց եկաց ՚ի նոցանէ և այլ ոչ հաղորդեցաւ:

Եւ յայնժամ՝ զՎարկիանէ՝ թագաւորն (Յուստիանոս) արար կեսառ, զմօր քեռ պրդին իւր, ՚ի յութ ամին իւրոյ, և առաքեաց ՚ի վերայ Վճրնայ: Եւ գնացեալ ՚ի Տարա Վարկիանէ, առաքեաց զզօրսն յերկիրն Պարսից, և ասպատակեալ առին աւար բազում և դարձան ՚ի Տարա. և զարհուրեցան Պարսիկըն: Եւ մարզուանն (մարզպանն) որ կայր ՚ի Վճրին, կաշաւոք և ծառայական խոնարհութեամբ յամեցոյց զՎարկիանէ ՚ի քաղաքին, մինչ բերին ՚ի քաղաքն (Վճրին) ռոճիկս և աղդեցին թագաւորին իւրեանց, և դքրիստոնեայն հանին ՚ի քաղաքէն: Եւ

կ Օատիլի տօնին պատեցին զքաղաքն, և եւ գեալ կուիւ. յամենայն կողմանց՝ ածին յառնուլ զնա : Եւ յայնմամբ գայ Վկակիսն հրամանաւ թագաւորին՝ փոխանակ Վարկիանէի, հանել զնա . և ասացեալ Վարկիանէի թէ՝ « Ներեւա ինձ աւուրս երկու, ո և ոչ լուաւ, այլ ընկէց ՚ի նմանէ զպատիւն և ՚ի բաց եւ հոն զնա ամբարտաւանու թեամբ : Եւ արտմեցան զօրքն և թողին զքաղաքն, և բաղումք կարծեցին թէ՝ մեռեալ է թագաւորին . և ցրուեցան և ամբացաւ քաղաքն և զպատճառ հանելըն Վարկիանէի ասել արժան է :

Երկիրն Տաճկաց (Արաբաց) ընդ երկու բաժին էր. կէսն ունէին թագաւոր քրիստոնեաց և էին քրիստոնեայք, և կէսն էին կը ռապաշտ և ընդ թագաւորութեամբ Պարսից . և քրիստոնէից թագաւոր էր յայսմանանակի Վնդուր՝ զինի հօր իւրոյ Հերեթ թագաւորին . և էին բարեկամք և օդնականք Հռոմացեցւոցն միշտ հայրենեօք :

Արդ գնաց Վնդուր յերկիրն Պարսից և գերեաց, և եկին նստաւ վրանօք յերկիրն Տաճկաց (Արաբաց), որք գիտացին թէ Պարսից թագաւորին է՝ որում հնազանգն էին, և եկին առ նա առանց զինուց . և նա կոտորեաց վեսա, և առ զերկիրս Տաճկաց և աւերեաց և գերեաց և գարձաւ ծանր աւարաւ : Եւ լուեալ զայս Պարսիցն, եղեն ժողով

մեծ և խորհեցան գնալ յերկիրն Անդուրայց Եւ խմացեալ Անդուրն առաքեաց առ Յուստիանոս և խնդրեաց սակի բաղզում՝ առնուլ զօրս ՚ի վարձու ընդդէմ Պարսից . և տրտմեցաւ Յուստիանոս վասն խնդրոյն , կարծել լով թէ հարկս խնդրէ : Եւ նոյն ժամայն գրեաց երկուս թուղթու : Առ Անդուրն գրեաց, թէ “Եկ առ Արքիանէ և առ սակի և զօրք, ես պատուիրել եմ նմատ Եւ առ Արքիանէ գրեաց թէ” “Յորժամ գայ առ քեզ Անդուրն , գաղտ առ զգլուխ նորա , և առաքեա ինձ աւետիս : ” Եւ ՚ի խնամոցն Աստուծոյ փոխեցան թուղթքն . որ առ Անդուրէր (գրեալ) առ Արքիանէ տարան , և որ առ Արքիանէ՝ առ Անդուր : Եւ յորժամ ընթերցաւ Անդուրն , ասաց . “Այս որ չարի փոխարէն է՝ զոր կամեցան առնել ինձ . ” և օրհնեաց զեախատեսն Ստուած , որ փրկեաց զնա ՚ի չար խորհրդոցն Յուստիանոսի : Եւ լուեալ Յուստիանոսի կարծեաց թէ Արքիանէ առաքեաց զիմ գրեալ թուղթն առ Անդուրն , և արար նմա բարեկամութիւն : Եւ առաքեաց զԱկակ դնել զԱրքիանէ յերկաթս :

Իսկ Պարսից դօքքն խմացան թէ ՚ի բաց եկաց Անդուր ՚ի Հռովմայեցւոց միաբանութենէն , և Հռովմայեցիքն պաշարեալ են զԱծբին քաղաք , թողին զգնալն առ

Վնդուր և գարձան՝ ՚ի Վիջագետս, և կոտորեցին զզօրսն Հռոմայեցւոց, և զայլսն փախուցին. և գնացին մինչեւ յշնտաք և Աշխեմիա, և գերեցին զամենայն Վիջագետը որ ընդ Հռոմօք. և ապա գնացին ՚ի վերայ Տարայոց. և բազմութիւն զօրացն Հռոմայեցւոց որբ փախստեամբ զերծան ՚ի Պարսից, անկան ՚ի Տարա, և երթեալ Պարսիցն նստան շուրջ զքաղաքաւն։ Եւ ապա ընարեաց Խոսրով թագաւորին Պարսից հինգ հազար կուսանս աղջկունս ՚ի գերեացըն, և պատրաստեաց զօրականս և տայրտանել զհինգ հազար կուսանսն յերկիրն թետալացւոց ՚ի թուրքաստանն (1) պատարագըն նոցա բազում գանձիւք զի եկեցեն օգնեսցեն նոցա երթալ ՚ի վերայ Հռոմայեցւոցն և Հայոց և Վնդուրաց։ Եւ յուզի անկեալ տանէին զաղջկունան, և նոքա լընուին զճանապարհն արտասուօք, զի գառինքն Քրիստոսի գնացին կերակուր գայլոց։ և գնացին իջան առ մեծ գետովին Պարսից։ Եւ խորհեցան կուսանքն ընդ միմեանս խորհուրդը, և ասացին ընդ զօրսն. « Արարէք մեզ ողորմութիւն և ՚ի բաց գնացէք յաշաց մերոց, զի լուանամբ ՚ի գետս վասն աշխատու-

(1) Թետավիա է յերկրին Պարսից սահմանակից Խորասանց, ու կարի ՚ի բացեայ ՚ի Կոստանդնով ծովին։ Մովսէս Խորենացի. Ա. 8.

թեսն ճանապարհիս . ո և հաճոյ թուեցաւ  
նացա , և յարուցեալ մեկնեցան և գնացեալ  
հեռացան : Եւ նոքա յարուցեալ աղօթեցին  
և ասացին , “Քրիստոս Կոստուած , փրկութիւն  
քրիստոսնէից և պատկ և սուրբ վեռայ կու-  
սից , եկ առ մեզ և ընկալ զմեզ յառագաստ  
քո սուրբ , և գաղանաց մի մատներ զանձինս  
որ խոսատվանիմք զբեզ : Վցաչանօք սրբոյ կու-  
սի անարատ մօր քո Կոստուածածնին և աղօ-  
թիւք ամենայն սրբոց քոյ և արեամք ծնո-  
զացն մերոց սպանելոց յանօրինացն որ բողո-  
քեն առ քո մարդասիրութիւնոր : ” Եւ ե-  
լեալ ամենեցուն ’ի կամուրջն՝ լցան ’ի գետն  
առ հասարակ և մեռան ’ի ջուրն : Եւ իմացեալ  
զօրացն եկին և մի ոչ գտոււ ’ի նոցանէ կեն-  
դանի , և դարձան պատմեցին թագաւորին  
իւրեանց . և զարմացաւ յոյժ և խափանեցաւ  
խորհուրդն<sup>(1)</sup> : Եւ զօրքն Պարսից երկու ամ  
պաշարեցին զբաղաքն Տարա , և ելեալ զօրքն  
Հռոմանց ’ի դուրս՝ արարին առաւելքաջու-  
թիւնս . և զօրքն Պարսից խաբէութեամք  
մեկնեցան ’ի քաղզքէն . և Հռոմայեցիքն աշ-  
խատեալ էին , թողին զպարիսպն և նստան  
յուտել և ըմզել . և յանկարծ բաղխեցան  
գործեալ Պարսիկքն և փութանակի եղեալ

(1) Յայսմաւուըք , Սեպտեմբեր 7:—Միքայել Չառչեան ,  
Պատմ . Հայոց , Հատ . Բ . յեր . 243 :

սանդուխս յամենայն կողմանց և առեալ ըգ-  
քաղաքն կոտորեցին.

Յետ այսորիկ թագաւորն Յուստիանէ  
հաշտեալ ընդ Յովհաննէս պատրիարքին, և  
՚ի նմանէ և յայրոց Քաղիեղուացւոց շար-  
ժեալ՝ դարձաւ ՚ի հալածումն ուղղափառաց,  
և մահ և ազգի ազգի տանջանաբանք և նախա-  
տինք, որ և զանցոց զկռապաշտ թագաւո-  
րօքն, և գիր ոչ տանի և լսելիք ոչ բաւեն զառ  
՚ի նմանէ գործեալ չարութիւնն ընդ ուղղա-  
փառուն՝ գրել և հաստատել ։ ասն որոց առա-  
քեաց Յոտուած ախտս մոլեկանս և գեւու  
՚ի թագաւորն, նմանապէս և ՚ի պատրիարքն,  
երբեմն հաշէին նման շան, և եր զի իբրեւ  
զկռատու վակէին, և տասն մատամք ձեռացն  
կեղեքէին զերեսն և զմուրուսն, և վիժէին ՚ի  
բարձր տեղւոց և ոչ կարէին արգելուլ պէս  
պէս հնարիւք. և յետ բազում խայտառա-  
կանաց և ծանականաց՝ խեղդմամք ՚ի դիւացն  
բարձան երկրին ՚ի կենացս ։ Եւ նախ քան  
զմահն նորա, յորժամ սակաւ մի դիւրէր նը-  
մա, հարցանէին թէ ով նատցի յամռոռ թա-  
գաւորութեանս. և նա բազում անդամ ա-  
նուսնէր զնօտար մի Յարակացի Տիբերիոս ա-  
նուն, և զնա եղին թագաւոր, ազգաւ Յոյն-  
զի ՚ի Գայիս Յուլիոսէ մինչեւ ՚ի վերջինս  
Յուստիանոս՝ յիսուն թագաւոր Պուանդ է-  
ին ազգաւ, և զօրք և թագաւորութիւնն

Հռոմացեցիք կոչեին, նախ վասն Հռոմայ և ապա վասն Կոստանդինուպօլի . վասն զի՞ Կոստանդիանոս նոր Հռոմ զնա կոչեաց . և խառն էին ընդ միմեանս լեզուաւ և գրով, և չէին զատած մինչեւ ՚ի Տիբերիոս, որ և ՚ի նմանէ սկսանի Յունաց թագաւորութիւնուն Եւ նախ եղեւ ՚ի հին ժամանակն Վակեդունացւոց թագաւորով երեսուն և ութ, որք և Յունաց կոչեին, ՚ի Կռոնոսէ Վակեդոնացւոց մինչեւ ՚ի Տրաոս (Պերսէոս), ՚ի թուականին Յորբւոց թշ (288): Եւ աստ երկրորդ անգամ սկսաւ ՚ի թուիս Յորբւոց գշ (886), և ՚ի թուիս Հայոց ՚ի ձե (15):

Յայսմ ժամանակի հպարտացաւ թագաւորն Պարսից (Խոսրով) յաղթութեամբն որ եղեւ նմա ՚ի Վեջագետս . և եկն յերկիրն Հայոց և յուցին մեծ քաջութիւնս Հայք՝ սատարելովն Յունաց, երկիցս անգամ դարձուցին հարմամբ : Վպա երրորդ անգամ ժողովեալ թագաւորն գնաց զկողմամբն հիւսիսի առ լերամբն սպատելով, թողեալ զՀայս և եկն ՚ի Կապադովիլիս, և ընդդիմացան նըմա Յոյնք : Եւ եկն ՚ի Աեբաստիա և էառ զնա և սցրեաց հրով . և դարձեալ զօրացան Յոյնք և եկին առին զբանակն նոցա և զտուն կրակին զոր շրջեցուցանէին զկնի իւրեանց, և քակեցին . և թէ չէին սպատառեալ ՚ի միւմեանց Յոյնք, սպառեալ էին զՊարսիկս, զի

անկաւ աղմուկի ինչ ՚ի Յօյնս , և զօրացան  
Պարսիկը և գնացին առին զլելիտինէ Հա-  
յոց և այրեցին։ Եւ առաքեցին առ նա զօրքն  
Յունաց և ասացին . “Օ յօնէ այդ զոր առ-  
նես՝ աւերումն և այրումն. այդ չէ թագաւորի  
օրէնք. այլ զտեղի առ և պատերազմեաց, և թէ  
յաղթեա՝ քո լինի երկիրս . և զայդ մեք ոչ ա-  
րարաք ՚ի քո երկիրն՝ զինուորքս առանց թա-  
գաւորին : ” Եւ լուեալ զայս ամաչեաց Պար-  
սիկն, և զտեղի առ յարեւելից կուսէ քաղա-  
քին. գնացին և զօրքն Յունաց և կանգնե-  
ցան հանդէպ նոցա յառաւոտէ մինչեւ ՚ի  
յինն ժամաւուրն և ոչ կուուեցան։ Եւ ապա  
Պարսիկըն սկսան գնալ անցանել ընդ Եփ-  
րատ, և Ելին Յօյնք զինի և շուալի ալք ՚ի  
յանցսն՝ բազումք գետակուր եղեն. և Պար-  
սիկըն գնացին յաշխարհն Հայոց և յերկիրն  
իւրեանց։ Եւ ետ օրէնս խոսրով չելանել թա-  
գաւորի յաւար և ՚ի պատերազմ երկրի և  
հեծելց, բայց թէ ընդդէմ թագաւորի։

Իսկ զօրքն Յունաց գնացին առ հիւսիսիւ-  
պատերազմել ընդ մասն ինչ Հայոց աշխար-  
հին և առնուլ աւար ՚ի նոցանէ . և զի քրիս-  
տոնեայք էին, ելանէին վաներն և գեղերն  
խաչիւ և աւետարանաւ ընդ առաջ Յունա-  
կանացն . և նոքա լրբութեամք ընկենուին  
զխաչսն ՚ի գետին, և մերկացուցանէին զե-  
կեղեցականսն և զաշխարհականսն սպանա-

նեին և գերեին, և զհաւատաւոր կուսանսն խայտառ ակեին . և զգինդո կանանցն ական-ջօքն կորդէին, և 'ի չկարելն հանել զապա-րանջանան՝ զձեռան կորեին և կորդէին, և այլ բազում չարիս գործէին . և առեալ աւար՝ դարձան ուրախութեամբ որպէս 'ի մեծ յաղը թութենէ : Եւ թաղեալ զերիվարան և թա-փեալ յինքեանց զկազմած զինուցն, նստան յուտել և յըմակել : Եւ դարձան զօրքն Պար-սից, և ժամանեցոց բարկութիւնն Առոտուծոց պշարիս իւրեանց 'ի գլուխս իւրեանց զոր ա-րարին ընդ քրիստոնեայսն : Եւ եկեալ Պարո-կացն կոտորեցին զիոսա, առեալ բովանդակ զձիսն և զզէնան և զոր ինչ ունէին, և դարձան մեծաւ յաղթութեամբ :

Յայսմ ժամանակի ժողովեցան եպիսկո-պոսք և քահանայք և միայնակեացք Ոիջա-գետաց և Հայոց որ ընդ իշխանութեամբ Յունաց էին, և գնացին առ Տիբերիոս ինդ-րել զիսաղաղութիւն, զի կոլցեն համարձա-կութեամբ զուղղափառութիւն : Եւ ոմանք 'ի Քաղկեդոնականացն ջանային բարկացու-ցանել զթագաւորն վասն ուղղափառացն . իսկ ժագաւորն արար ատեան և ասէ մե-ծաձայն . “ Լուարուք ինձ ամենեքեան զոր ասեմն . քանզի յոլովք 'ի ձէնջ ոչ գիտեն թէ սրապէս մեռաւ թագաւորն Յուստիանոս, զի չէիք 'ի մօտ, և զիս առ իւր ունէր զպայգ և

զգերեկ, և յոլովք ՚ի ձենջ գիտեն և վկայեն.  
 քանզի թագաւորն զատ ՚ի դիւխն չարեացն՝  
 ուներ ցաւս չարաչարս . և յորժամ դեւն  
 թողոյր, գայր ՚ի զգացութիւն, և տեսանէի  
 զի հրեշտակ Կատուծոյ կայր առ գլուխն և  
 ՚ի յիշատակ բերեր նմա զամենայն գործն իւր  
 զոր արարեալ էր նորաընդուղափառսն, և ա-  
 սէ թագաւորն . “Կատուծ ողորմած, հասո  
 նոցտ որք արարին զիս հալածիչ ուղղափա-  
 ռացն : Հւասէ ցիս . “Տես, որդեակ իմ Տի-  
 բերիսու(1), զհատուցումն զայս, զի կենդանեւոյն  
 զրկեաց զիս Կատուծած ՚ի թագաւորութիւն նորա  
 ըստ իմում չափոյ . մի նմանիլ դու չարեաց  
 իմոց, այլ պատկառեա յԱստուծոյ, պատկա-  
 ռեա յուղղափառացդ յինէն հալածելոց .  
 պատուեա զթագուհիդ որ թագաւորեր քո  
 և այժմ եղեւ քեզմայր : Հւ որ ինչ այսպիսի  
 բանք են՝ պատուիրեր ինձ . և զցաւն որո-  
 վայնի և զպատուհասն գիտեք դուք և զդի-  
 ւին չարաչար լլկելն, որոյ պատճառ նմա մա-  
 հուան այն էր . մի ոք զչարն Յուստիանեայ  
 յիս դարձուացէ չար խրատովքն իւրովք, զի  
 ոչ լսեմ զկորստական բանսն : Հւասէ ցը-  
 ժողովեալ ուղղափառսն . “Վնացէք, հարք  
 իմ սուրբք, կոսցէք անհողութեամք և իւրն-

(1) Յօրինակիս Տէմուկու:

գութեամբ ՚ի սահման հաւատոյ ձեր, և առարեք ՚ի վերայ մեր աղօթս : ”

Հայց Աստիա թագուհին ոչ թողոյր ըդկինն Տիբերեայ ՚ի Կրատանդինուպօլիս, և պատրիարքն ասէ ընդ Տիբեր . “ Յմող զքոկինն և առ զթագուհին ու Եւ նա տրտմեցաւ և ասաց . “ Արդ գիտեմ եթէ Երկիւղ Տեառն ոչ գոյ յաղանդդ ձեր, Քաղկեդոնականք զիմնն իմ օրինաւոր, որ Երեք զաւակ ծնեալ է ինձ և յաղքատութեան իմում պանդըխատակից էր ինձ, արդ ասես զնա թողուլ, և զնաց պատրիարքն ամօթով մեծաւ : Եւ ըստաւ Աստիա և ետ ածել զիմնն Տիբերեայ ՚ի քաղաքն . և սիրեր զնա, և կոչեաց զանունն նորա Հեղինէ : Իսկ Տիբեր նախ ՚ի հիւանդութեան թագաւորին կեսար Եղեւ . և էր առատաձեռն և ողորմած, և յորժամ թագաւորեաց, եղ իւր սահման յամենայն աւուր եւթանասուն և Երկու կենդինար գանձ բաշխել աղքատաց :

Յայսմ ժամանակի ըստաւ Անդուր (Այունակի Դ) զմահն Յուստիանեայ և զթագաւորելն Տիբերեայ, և եկն առ նա, և Եղեւ ուրախութիւն մեծ . և մեղագրեաց Տիբեր՝ թէ ընդէր թոյլ ետուր Պարսից յարձակիլ ՚ի վերայ մեր : Եւ նա հանեալ զթուղթն Յուստիանէի առ Վարկիանէ վասն սպանման

նորա, և ետ ՚ի Տիբեր։ Եւ ընթերցեալ Տիբեր՝ զարմացաւ յոյժ։ Ծայնժամ ասէ Այն դուրն. « Ես վասն քո բարեացն զոր արարեր ընդ ուղղափառսն, հաշտեցայ և եկի . և արդ աղաչեմ զի քարողեսցի յայտնապէս ուղղափառութիւն ընդ ամենայն երկիր։ » Եւ ետ հրաման Տիբեր, և գրեցին զքարողութիւն ուղղափառութեան։ Եւ գնաց Անդուր ՚ի Անտաք զի հաստատեսցէ զուղղափառութիւն նախ անդ, և խօսեցաւ ընդպատրիարքին Գրիգորի։ Եւ մինչ ՚ի յայս եւին, եկին թուղթ յորդւոցն, թէ Պարսիկք կամին գալ ՚ի վերայ մեր. և գնաց Անդուր յերկիրն իւր։

Ի չորրորդ ամին Տիբերեայ Ելին Վկանքն (Վկալաւոնացիք) և առին աւար բազում ՚ի ծծրակիոց և ՚ի ծծեսաղնիկէ, և առին զերամակ թագաւորին և հեծան, և ժողովէին յերկրէն զէնո և աղանէին, զի մինչեւ ցայն վայր չէին կալեալ ոչ ձի և ոչ զէն և ոչ պատրաստութիւն ձիաւորի. և եկին նստան ՚ի Աերմի (Աերմիոն) քաղաք, և առաքեցին առ Տիբեր՝ տալ նոցա զքաղաքն Աերմի։ Եւ թագաւորն յամեցոց զնոսա երկու ամ, ական ունելով լունկիվարտացն<sup>(1)</sup> գալոյ, և յորժամ ոչ եկին, ՚ի հարկէ ետ նոցա զքա-

(1) Են բնակիչք Լոնգոբարտիայ գաւառի, որ ՚ի հիւմիսայ խտալիոց։

շաքն և զինչըն և ոչ զմարդիկոն, և մատոլ ՚ի քաղաքն տեսին լքեալ և ներքեւեալ ՚ի սովոյ, զի կերեալ էին զցուն և զկատու . ՚ի հետարին (՚ի պաշարման), և արարին նոցա բազում մարդասիրութիւն Ալլաւքն, տալով հաց և գինի . և ՚ի յուտելի յաճախ՝ մեռանեին, և նոցա իմացեալ սկսան կակզագոյն և սակաւ կերակրովը ՚ի հոգի ածել զնոսա : Եւ յորժամ հաստատեցան, հանին զնոսա ՚ի քաղաքէն և ինքեանք բնակեցան : Եւ յետ միոյ ամի այս բեցաւ քաղաքն, և ելեալ գնացին բարբարոսքն :

**Յայսմ ժամանակի** արար Տիբեր կեսար զԱյօրիկ<sup>(1)</sup> և առաքեաց ՚ի Պարսս . և նոտ գընացեալ գտաւ զկամուրջ մեծ ՚ի գետոյն քակեալ, և կարծեաց թէ Անդուրն է ազդեալ Պարսից : Եւ եկն առ Տիբեր և չարախսուեաց զԱնդուր, և անկան ՚ի հնարս թէ որպէս որսացեն զնա : Եւ ոմն իշխան Անդանա (Ագնոս) անուն յանձն էառ ըմբռնել զնա, և զնաց զօրօք որպէս թէ ՚ի Պարսս երթայ .

(1) Մօրիկ էր ազգաւ Հայ, յԱրագածոսան գաւառէ, յՕշական գեղջէ, որ կացեալ ՚ի ծառայութեան կայսերական Դրան, եղեւ ընդհանուր զօրապետ . և յաղթեալ Պարսից, փառաւորեցաւ ՚ի Տիբերեաց . և զինի վախճանի կայսեր, ամսւնացաւ ընդ գստեր նորա, և յամի 582 եղեւ կայոր : Սուեփան Ասողիկ, Բ. 6.- Կիրակոս, յեր. 27. տիպ Մոսկուայ, և այլք : Իսկ Միխայել, որպէս և բաղումք ՚ի պատմագրացն Յունաց, կապագովկացի ասեն զնա լինել, և յոյն աղքաւ :

և աղաջեաց գոլ տեսանել զնոսաւ և սահմանել։ Եւ Վնդուր առանց կասկածանաց եկին առ նոսա, և արարեալ բազում խրախութիւնը, և ՚ի գիշերի ըմբռնեալ զնա առաքեցին առ Տիբեր, և եղաւ ՚ի բանտի։ և լուեալ զայս որդին Վնդուրաց Ղման<sup>(1)</sup>, եւ զօրոք յերկիրն Հառմացեցւոց առնուլ գանձս և չորբոտանիս բազումն, բայց մարդոյ ոչ վիտասէր։ և խորհեցան վասն նորա չարիս՝ որսալ և զնա։ Խոկ նա յորժամ գիտաց թէ ոչ արձակեն զհայրն, նեղեալ ՚ի գթոյ հօրն՝ մահ յանձն առեալ եկին առ Տիբեր երդնուլ նրան կալ ընդդէմ Պարսից՝ եթէ արձակեացէ զհայրն։ և յանձն առ Տիբեր, և արարին երդումն։ և ապա ասաց անօրէնն Ոօրիկ, թէ «Այս է նշան պահել զերդումն քո՝ եթէ հազարդիս ընդ մեզ ՚ը նա ասաց։» Օ այդ ոչ կարեմ առնել, զի բազում է աղջնիմ և քարկանան ինձ։ թող զայն որ ոչ ասեմ՝ զի մի տրամեցուցից զձեղ։ ատելի լինել Աստուծոյ ոչ կարեմ։» Եւ յորժամ զայս լըւան՝ բարկացան, և կալեալ զնա առաքեցին առ հայրն յաբսորս։ Եւ այս համբաւ հասեալ յերիրն Տաճկաց (Արաբացւոց), եղեն հնգետասան բաժինն, հաստատելով իւրեանց առաջնորդս։ և միմեանց ոչ հնազան-

(1) Այս Կոման Ս. Ապու-Քապուս կոչեցեալոր թագաւորեաց յամի Տեառն 583—605։

գելին . և ոմանք ՚ի նոցանէ եղեն ընդ Պարսից իշխանութեամբ , ոմանք ՚ի Քամիրական երկիրն ետուն ձեռն , և կեսք եղեն ընդ Հռոմայեցւովք . և ՚ի պատճառս չար ժողովյն Քաղկեդոնի բարձաւ վացելու թագաւորութիւնն այն :

Իսկ Տիբերյաւել յողորմածութիւն , զի զսորրորդ մասն յամենայն ստացուածոց իւրոց տայր աղքատաց : Եւ եբարձ զբաժն յամենայն իշխանութենէ իւրմէ . և էր բարեխորհ և անցասումն և աննենդ . և սա թագաւորեալ չորս ամ և հիւանդացաւ , և ետ զդուասոր իւր Օդոստիա՝ Ո՞րկայ կայսեր ՚ի կնութիւն (1) , և արար զնա թագաւոր , որ էր ՚ի Կապադովկիայ , յԱրփառուս քաղաքէ (2) . Իսկ Տիբեր մեռաւ և տրտմաւթիւն ոչ սակաւ եթող աշխարհի . և Ո՞րիկ առ զթագաւորութիւնն :

Հայց Հռոմ ապստամբեալ ՚ի Ո՞րկայ , եղին իւրեանց թագաւոր զԴարամիոս (Դերմանոս ) (3) : Եւ թագաւորն Պարսից Խոսրով մեռաւ և թագաւորեաց Արփղդ որդինորա , և առաքեաց ՚ի Հռոմ՝ զի հնագան-

(1) Դաւստրն Տիբերեայ կոչեր Կոստանդինա .

(2) Այս է որ կոչե այժմ Եպրկոս , մերձ ի Զէյթուն . և գիւղ Փոքրիկ հայաբնակ և ունին Եկեղեցիմի : Առ պատմագիրս ուրեք կոչե քաղաքս այս և Եփեսոս

(3) Գերմանոս էր աներ թէոդոսի՝ որդաց Մօրկայ :

դեսցին նմա . և ոչ ընկալան զբանն նորա  
հռոմայեցիքն , այլ գնացին յերկիրն Պար-  
սից և գերեցին , և երեք հազար գերի ու-  
սաքեցին Վօրկայ . և հնազանդեցաւ Գա-  
մարիս Վօրկայ , և յոյժ ուրախ եղեւ Վօրիկ-  
Եւ հրամայեաց ընդարձակել զԱրփառւս քա-  
զաք ուստի ինքն էր , որ է յերկրորդն Հայք,  
որ զինի չորս ամի շրջեցաւ ՚ի շարժմանէ , և  
դարձեալ շինեաց լաւագոյն քան զառաջինն  
մեծաւ հոգաբարձութեամբ , և վերստին  
ընկղմեալ եղեւ շարժմամբ :

Յայսմ ժամանակի Վօրիկ եղ զօրադլուխ  
զՓիլիկտոն (Փիլիպպիկոս) փեսայ իւր , որ էր  
քեռայր իւր , և առաքեաց զնա ընդդէմ  
Պարսից . և Պարսիկքն առաքեցին ՚ի Վծբնայ  
քաղում գանձս ՚ի Վուփարդինն , և առին  
զնա . և գնաց Փիլիկտիոս և դարձեալ էառ  
զնա , և կոտորեաց զՊարսիկքն որ ՚ի նմա : Եւ  
՚ի նոյն ամի յարեան Պարսիկքն ՚ի վերայ Ու-  
մբղդի Պարսից արքային և հանին զաջ նորա,  
և մեռաւ յութ ամին Վօրկայ : Եւ ՚ի յինն  
ամին Վօրկայ թագաւորեաց Խոսրով որդի  
Արմղդին <sup>(1)</sup> :

Եւ Վօրիկ արար զթէոդոս որդին իւր կե-  
սար , և արար նմա հարսանիս (հանդէս) մեծ ,

(1) Աերեռու, յեր . 56—57 : Միքայէլ Զամշեան . Պատմ .  
Հայոց հատ . Բ . յեր . 295—296 :

և պատրիարքն կապեաց զթագ նորա : Եւ ՚ի նոյն ամի իշխանն Պարսից Վահրամ ապստամբեաց ՚ի խոսրովոյ . և երկեաւ խոսրով և եկն յլլուհա , և առաքեաց առ Վօրիկ լինել նմա հայր , և կալ նմա օգնական՝ առնուլ զՊարսա<sup>(1)</sup> : Եւ Վօրիկ առաքեաց զզօրս թրակիայ և զզօրս չայոց , և տարան հաստատեցին յաթոռիւր , և պարգեւօք դարձան , և դարձաւցին ըդ Տարաե զի խասլոյն (Վծբին)՝ ի չռառվմայեցիս<sup>(2)</sup> : Եւ Վօրիկ ետ զգուստը իւր Վարիա<sup>(3)</sup> խոսրովու ՚ի կնութիւն , առաքելով ընդ նմա եպիսկոպոս և քահանայո . և խոսրով երեք եկեղեցի շինեաց ՚ի Պարսս վասն կնոջ իւրոյ . և պատրիարքն Վնտիորու գնաց և օրհնեաց զնոսա , զմէկն յանուն Վստուածածնին , և զմէկն յանուն սուրբ Վռաքելոցն , և զերորդն յանուն սուրբ Վարգսին . և եղեւ մեծ խաղաղութիւն :

Եւ Վօրիկ թագաւորեալ ամս քսան , և

(1) Թողմա Արծրունի (յեր. 94) . և Սեբէոս (յեր. 57) ՚ի մէջ բերեն զպատճեն թղթոյն խոսրովայ առ Վօրիկ :

(2) Ի սմին պատերազմի գտան Ներսէս հայ իշխան և Մուշեղ Մամիկոնեան հայեցի քաջ զօրօք ՚ի կողմանէ Վօրիոյ եկեալ ՚ի վերայ Վահրամոյ ապստամբի . զօրոց տես հանգերձ պարագացիւր ՚ի Պատմ . Հայոց . Հար . Բ . յեր . 296—500:

(3) Պատմագիրք Յունաց ասեն զմանէ դռւստր լինել քրիստոնէի ուրբուք և . ոչ Մօրկոց , և կոչեն զնա Սիրի , յորմէ Շէրէնի երգքն առ արեւելեան բանաստեղծու ՚ի վերայ սիրոյ նորին ըներ խոսրովու արքացի : Խակ Սեբէոս յայտնագոյն եւս ասէ ընել դռւստր քրիստոնէի ՚ի խուժաստան աշխարհէ : յեր . 76:

հողարտացեալ արհամարհէր զզօրսն . և եղե  
գալ իուղարացն ՚ի թօրակիա, և ելեալ զօքըն  
չոռվմացեցւոց՝ և հալածեցին զնոսա, և ե-  
կին ՚ի կրստանդինուպօլիս և առ աքեցին առ  
Մօրիկ և տսացին . «Վոտուած խաղաղութիւն  
արար յաւուրս քո . բայց խաղաղութեամբ  
զօրքն ոչ ասպիին, այլ հուգօք . կամ տուր բդ-  
կարգեալ ոսճիկսն անթերի, կամ տես յոյցան  
հետէ զմեղ թշնամիս քեզ : » Եւ նա խստա-  
ցաւ ընդդէմ նոցա, և ասացին զօրքն ցՊետ-  
րոս եղբայրն Մօրիայ . «Վպանցուք զեղբայրն  
քո և թագաւորեա դու : » Եւ նա ոչ կամե-  
ցաւ, այլ գնաց պատմեաց Մօրիայ : Եւ զար-  
հուրեալ Մօրիայ փախեաւ ՚ի Վաղիեդոն . և  
երթեալ զօրացն անդ, սպանին զնա, և թա-  
գաւորեցուցին զՓոկաս զոմն ՚ի զօրագլխա-  
ցըն <sup>(1)</sup> :

Եւ լուաւ զայս խոսրով թագաւորն Պար-  
սից՝ եթէ սպանին զՄօրիկ և զորդիսն, յոյժ

(1) Փոկաս էր ՚ի զօրալարացն Մօրիայ, որում յանձն  
եւալբանակն կայսերական առ զդէմ ունել ապստամբութեան  
Բուղարաց, նա ընդհակառակն խաղաղոց զլօքն ՚ի վերաց  
կ, Պօլսի, և կալեալ զՄօրիկ հանդերձ հնգեքումբք որդւովք  
խողխաղեաց անխնաց, և յինքն տարաւ զաթուն : Սերես  
պատմէ (յեր. 85—86), թէ յառաջնում արշաւանին զոր ե-  
տուն Յոյնք ընդդէմ թօրակացւոց (Բուղարաց, Վավարաց),  
գտանէին և զօրք հայոց ընդ զօրավարութեամբ Մուշկզաց  
Մամիկոնէի, որոյ խորագոյնս զհետ թշնամեաց սինդեալ գլ-  
տանդեցաւ, և ձերբակալ լեալ սպանաւ :

տրամեցաւ և զգեցաւ սեաւ ամենայն տամբն Պարսից, և ելաց զնա աւուրս բազումն . և յետ այնորիկ ծանուցանէր զերախտիան զօր արար Ո՞րիկ Պարսից. «Օ ինա հաստատեաց զիսախտեալ թագաւորութիւնս՝ի ձեռս իմ. արդ սվէ ՚ի ձենջ որ առնու զվսէժ արեան նորա ՚ի գիւրութիւն սրտի իմոց ։» Եւյառաջ եկն ոմն ՚ի մեծ իշխանացն, որում անունըն էր Ո՞սմիզոն, և ասէ . « Ես երթամե. կատարեմ զկամս քո ՚ի վերաց Հռոմայեցւոցն, և ընում արեամբ զերկիր նոցա զորս գտանեմ ՚ի Հռոմայեցւոցն ։» Եւ ասէ ցնա թագաւորն . « Ո՞չ կոչեսցիս դու այսուհետեւ Ո՞սմիզոն, այլ Հահրպարզ (Հահրվարազ), զի այր քաջ ես դու ։» Եւ առաքեաց զնա ամենայն զօրօքն Պարսից, որոց եկեալ էառ զջարա և զի խասլոյն և զի Երտին, և ձմերեաց ՚ի Ո՞իջագետս . և առ զխառան և զալս և զնոտաք, և այլ առն ոչ մեղանչէր՝ բայց միայն Հռոմայեցւոյ . Եւյութերորդ ամին Փոկայ եղեւ ամենայն Ո՞իջագետք Պարսից . և ապա անցին ՚ի Կապադովիկիա և ՚ի Գաղատիա և յնիկիւրիա և յնիսիա, և մինչեւ ՚ի Քաղկեդոն գնացեալ յաւարի հարին (1) . Եւ ՚ի միտոս իւր խորհեր Խոսրով ՚ի վերաց Հռոմայեցւոցն այլ թագաւորել, զի որդեգիր էր Ո՞րկաց կայսեր և փեսաց :

(1) Աերեսոս, յեր . 121—122:

Իսկ թագաւորն Փոկաս արար բաղում սպանութիւնս զօրապետաց և զօրաց, և եղեւ ատեցեալ յամենեցունց։ Եւ յայնմ ժամանակի երկու պատրիկը էին յԱֆրիկէ՝ երեւելիք և քաջք ՚ի մարտս պատերազմաց, անուն միոյն Վրիգոր և միւսոյն Հերակլ. և խորհեցան երկոքին զմահ թագաւորին, և պատրաստեցին զօրականս և առաքեցին զորդիս իւրեանց զօրօք՝ զմինն ընդ ծով և զմիւնն ընդ ցամաք։ Արդին Հերակլի անուամբ հօրն Հերակլիսս անուն, եհաս նորա վիճակ ընդ ծովին երթալ, և որդին Վրիգորի ընդ ցամաք։ և ուխտեցին նոցա թէ որ վաղագոյն երթայ ՚ի կոստանդինուտօլիս՝ նա թագաւորէ, և որյետոյ երթայ՝ լինի նմա կեսար։ Եւ գրեցին ՚ի քաղաքն և յարբունիան զխորհուրդն զի սպանցեն զՓոկաս, և զնախաժամանեալն առ նոսա յորդւոց իւրեանց թագաւորեցուցեն։ Իսկ Հերակլիսս յաջողակ հողմոյ գիպեալ գնաց յառաջագոյն, և տեսեալ ըզթուղթսն՝ վաղվաղակի սպանին զՓոկաս։ Եւ թագաւորեաց Հերակլ այր քաջ և իմաստուն, և եղեւ խնդութիւն ամենեցուն և հանդարտութիւն։

Իսկ թագաւորն Պարսից յորժամ տիրեաց Ախղագետաց, առաքեաց ՚ի Պարսից եպիսկոպոս Նեստորականս և Շաղկեղոնիկս, որոց գլխաւորին անուն էր Աշխիմիա<sup>(1)</sup>, իսկ ուղ-

(1) Այսու թագավանութիւնն Ախշիմիա։

զափառքն որ 'ի Ակադեմիա, ոչ ընկալան զնուսա , և գրեցին աղաջանս առ թագաւորն Պարսից՝ զի մի խախտեցէ զհայրենի սահմանս նոցա : Եւ լուաւ թագաւորն և անդքէն կոչեաց . և նոքա խնդրեցին 'ի Խոսրովայ զի հրամայեցէ նոցա քննութիւն առնել , թէ վասն էր ոչ ընկալան զմեզ : Եւ առաքեաց Խոսրով 'ի Հայո և 'ի Ակադեմիա գրնալ առ ինքնի խմասնոց և աստիճանաւորաց և պատասխանի առնել Քաղկեդոնացւոցն և Վեստորականացն : Եւ գնաց մեծ կաթողիկոսն Հայոց Վերսէս<sup>(1)</sup>, և պատրիարքն Յառ-

(1) Հայո ժողով յիշառակէ և Սեբէստ, յեր. 188-195. յորմէ առնու Ասողիկ 'ի պատմութեան իւրում (յեր. 94-99). 'ի մէջ բերեալ և զնամակն զօր գրեաց Ներսէս Գ. առ կառանդ կոյսր, յորում յիշէ՛ եթէ և յաւուրս խոսրովու Բ. որդւոց Որմզդի եղեւ ժողով 'ի գուռն արքունի յազագս բանի հաւատոց Հայո պատմութիւն մերեւո շփոթեալ Միիսայելի ընդ անուան Ներսէսի որ յետոյ և իբր 20 ամօք և աւելի քան զժողովին որ յարբունիոն խոսրովու , համարի եթէ առ նովին իսկ Ներսիսիւ եղեալ իցէւ, Քանզի առ թագաւորութեամբ խոսրովու Բի նոտան յաթուն կաթողիկոսական՝ Աբրահամ, Յովհանն Գ. Կոմիտաս և Քրիստոնիոր : Դարձեալ Ասողիկ այլազդ իմ պատմէ զարատճառո ժողովշնու Լուեալ, ասէ, խոսրովու ըզ հանապազօքեաց վէճու զիստութիւնո որ լինին 'ի մէջ Հայոց և Յունաց վասն բանի հաւատոց, հրամայեաց ժողովիւ 'ի գուռն արքունեաց իւրոց Եպիսկոպոսաց արեւելեաց և Ասորեստանեայց ընդ վերակացութեամբ Սմբատայ Բագրատունւոյ : Ի ժողովի յայսմիկ գտուու և Զաքարիա պատրիարք Երուսաղէմի որ 'ի գերութեան կայր և գերեկիցք նորին եպիսկոպոսք Աղէքսանդրիոյ , այլ և կաթողիկոսն Աղուանից,

Հոց ուղղափառաց Աթանաս և Անեւերիանոս  
եղբայր իւր, որ հրաշալի նշանօք կոչեցեալ  
էր՝ ի.քահանայապետութիւնն այսպիսի օրի-  
նակաւ :

Եյր մի էր՝ ի Ասմոստիա<sup>(1)</sup> բարեպաշտ և  
ողջորմած, որ մեռաւ և եթող երկուս օրդիս,  
զԱթանաս և զԱնեւերիանոս, ընդ մօրն՝ բա-  
զում ստացուածօք . և մայր նոցա Վանի ըս-  
պասաւորեաց զամենայն ինչս իւր աղքատաց,  
և ետ զողայն՝ ի դոլրոցս . և մնուցանէր զնու-  
սա աղօմիւք և հաւատովք, մինչ զի յորժամ-  
տեսանէր եպիսկոպոսս և քահանայո և միայ-  
նաւորս, ասէր . “ Խառը հանյիմ վերայ . ” եւ  
ինքն տարածանէր զթեւսն առաջի, և որպէս  
զգոյաւոր իրք ծրարէր, և երթեալ՝ ի տունն  
թափէր զթեւսն՝ ի վերայ գլխոյ տղայոցն, և

եւս և “ Նեստորականք և Անեւերիանոսն անք : Եւ՝ ի լինել հար-  
ցաբնութեան՝ հերետիկոսք ամենայն՝ ի բաց մերժեցան,  
նշյալէս և Քաղկեդոնականք պարտեցան . իոկ դաւանու-  
թիւնն չայց որ զերիս և եթ ժողովն ընդունին, իրեւ  
ուղղափառական ճշմարիտ դատեցաւ առաջի ժողովոյն և  
խոսրովու արբայի, որում վկայեաց և Զոքարիա պատրիարք  
Երուոաղէմի՝ յաղթեալ՝ ի ճշմարտութենէ, որպէս առէ Ա-  
սողիկ, վասն որոյ և խոսրով հրաման, ետ եթէ և Ամենայն  
քրիստոնեայք որ ընդ իմով իշխանութեամբ են, զհաւատո  
չայց կալցեն : ” Եւ այսպէս հաստատեաց կրկին զվիռա-  
հարց իւրոց կաւատայ և խոսրովու Ա : որբ գրեալ էին՝ ի  
թուղթս և պահեալ՝ ի տան գանձուց, կնքեալ մատանեաւ  
իւրեանց :

(1) Յօրինակիս մերում ՚ի Անու :

ասեին տղայքն , թէ « Եւդ բնչէ մայր . » և  
մայրն ասեր . « Օրհնութիւն է , որդեակը ,  
զօր առի ձեզ ՚ի սրբոց Կատուծոյ : » Եւ զար-  
գացեալ մանկանցն գնացին ՚ի վանս սուրբ  
Յովիշաննիոի : Եւ յետ բազում ամաց եղին  
զի թանաս ուղղուպան , և երթեալ բերեր ըդ-  
պէտո վանիցն : Եւ ՚ի սահմանս Որուծափայ-  
վանք մի եր ուղղափառաց , և գնաց առ նոսա-  
յամենայն ուղղափառաց աղաչանք , զի ընտ-  
րութեամբ ըստ Կատուծոյ կամացն դիցեն  
պատրիարք : Եւ ընտրեցին երեք , և գրեցին  
զանուանս նոցա յերեք թուղթ , և ՚ի թուղթ  
մի Դքրիստոսի անունն . և եղին ՚ի մոմ , և ե-  
ղին ՚ի սեղանն , և մատեաւ պատարագ . և  
զինի պատարագին առնուլ ետուն երեք օր  
զինի միմեանց , և գայր Դքրիստոսի անունն .  
և փոխեցին զմարդիկն յայլս , և նոյնպէս գայր  
Դքրիստոսին՝ առ ՚ի ցուցանել թէ Դքրիստոս է  
քահանայապետ , մինչեւ այլ արժանաւոր ըն-  
տրեք : Եւ Դքրիստոսին վասն այնորիկ գրեն ,  
որ թէ յերեք անուանցն մի անունն գայ , մէկ  
մի այլ անունն Դքրիստոսին գայ , գետենան թէ  
վայելէ սորս սրբութեանս : Կապա թէ ոչ գայ  
Դքրիստոսին , յայլ անուաննելոցն գայ , չէ ընդու-  
նելի , և թէ միայն Դքրիստոսի գայ , ամենն են  
խոտան : Իսկ այն վանքն երեք օր և երեք գի-  
շերհսկեցին և լացին առաջի Կատուծոյ . և յեր-  
ըորդ աւուրն երեւեցաւ Դքրիստոս և տաէ .

“Ալ աղիւն առաւօսուն գայ այր մի ուղոուք,  
անունն Կթանաս, զնա ձեռնադրեցէք ու Եւ-  
նոցա ուրախացեալ սպասէին նմա ՚ի վաղիւն-  
և ՚ի բանտլ գրանն կայր Կթանաս կանգնեալ,  
և հարցեալ զանունն եւ իմացեալ, մեծաւ ա-  
զաշանօք և երգմամբ և երկիւղիւ Կստուծոյ  
ածին ՚ի հաւան և ձեռնադրեցին . և յետ  
ձեռնադրութեանն ասէ . “Աիրովն Քրիստոսի  
աղաչեմ զձեզ ծածկեցէք զբանս և թոյլտուք  
ինձ իմ հանդերձիւն տանել զուղոսն և լը-  
նուլ զտարին իմ: ո Եւ հազիւ հաւանեցան.  
և արար այնպէս: Եւ ՚ի ընուլ տարւոյն խընդ-  
րեցին և գտին:

Եւ եւ համբաւ զնմանէ մինչեւ ՚ի Պարսից  
թագաւորն: Եւ կոչեցաւ Կթանաս պատ-  
րիաքն և գնաց, և եղբայրն զինի . և տեսեալ  
զնա հայրապետին Հայոց՝ սիրեաց զնտ և մե-  
ծարեաց, նոյնպէս և թագաւորն խորով: Եւ  
յետ բազում հարցափորձի և քննութեան  
յազթեցան Պարսից եպիսկոպոսքն և Նեստո-  
րականքն և Քաղկեդոնիկքն: Եւ զգացուցին  
խորովու, և կոչեաց առաջի իւր զժողովն,  
եհարց և ասէ . “Օ յի՞նչ է ձեր հակառակու-  
թիւնդ, ասացէք ու Եւ ասեն Քաղկեդոնացիքն  
և Նեստորականքն: “Անք ամեն քրիստոնեայքս  
Կստուած խոստովանիմք զՔրիստոս որ մար-  
մին էառ, բայց դոքա ասեն զԿստուած և  
զմարմինն մի բնութիւն, և զԿստուած խա-

չեալ ասեն՝ և առանձինն մեք ասեմք, թէ մարմինն որ մեղաւ՝ նա մեռաւ, և Վատուած որ ոչ մեղաւ՝ նա ոչ մեռաւ : Այս ասեն ուղղափառքն ցիժագաւորն . “ Այդ շատ բան է և բազում ուսման և յերկար ժամանակոց պէտք են, և արարեալ են վասն այդորիկ քըննութիւն առաջին թագաւորքն : ” Այս ասաց թագաւորն . “ Ովկին թագաւորքն . ” և նուքա ասեն . “ Կոստանդիանոս և Ծէոդորքն առաջինն եւ երկրորդն . ” և այլքն ասացին : “ Այս Վարկիանոս . ” և ուղղափառքն ասացին . “ Եթէ զի՞արկիոնին ոչ ընդունիմք : ”

Այս խոսրով ասէ . “ Սեմ որ յաղթեցաւուք դուք որ զի՞արկիոնին ընդունիք . այլ և ես ասեմ, որ Վարկիանէ չէ հաւասար այնց թագաւորացն . և յորժամ ասէք միաւորիլ Վատուծոյ և մարդոյն, բաժանել չէ պարտ, զի ինձ ճշմարիտ թուի ասեյն, թէ մահ մարդոց չկարէր վրկութիւն առնել : Քանզի ես յորժամ եկի յաշխարհն ձեր բազում անդամ լուայ վասն այսորիկ, և տեսի ՚ի նոցանէ բազում նշանիս և սքանչելիս՝ որ մահ Վատուծոյ ասեն : Այլ և պատմեցին ինձ զօրքն իմ, թէ “ Ոտաք յեկեղեցի մի զօր ուղղափառքն անուանեն, և քահանայն կայր ՚ի պատարագի և կամէր հաղորդել զժողովուրդն, և վասնայնորիկ յորժէր պատրաստեալ զհացն և զբաժակ գիւնացն ըստ իւրեանց խորհրդոյն . և ՚ի մտանելն

մեր յեկեղեցին, ոչ հայեցան ՚ի մեղ և ոչ ոստեան, և մեք հրամայեցաք՝ որ կոտորեցին զսմանս ՚ի ժողովրդոցն, և այլօցն թոյլ տուաք փախոչիլ. և հայելով մեր ՚ի պատարագողն (որ) կերաւ զբազմութիւն հացին միայն և արք զգինին, և յետ այնորիկ հարցաք թէ՝ “ի՞նչ խոստովանիք զայդ կերակուրդ” : Եւ նա ասէ . “ Ոիս և արիւն Արտօնծոյ : ” Եւ ասացաք . “ Հոգեւոր է՝ թէ մարմնաւոր կերակուրդ : ” Եւ նա ասէ . “ Հոգեւոր : ” Եւ բացաք զփոր երիցուն և ամենեւին ոչինչ գրաք նշան ՚ի նմա՝ թէ կերեալ ինչ էր : ” Եւ թէ այսպէս է , իրաւ ևն միաւորողքն : ” Եւ զայս ասացեալ թագաւորին ոչ յիւրմէ՝ այլ յԱրտօնծոյ յազդմաննէն , որպէս Փարաւոն և Յարուգոգոնոսոր և Բաղաամ և Կայիաիա տեսին զճշմարիտն և իմացան վասն օգտի աստուածապաշտութեանն , նոյնպէս և Խոսրովու ասելն՝ ՚ի փառոս Ճշմարտութեանն , զի զօրաւոր է Ճշմարտութիւնն ըստ Եղիշ սրբոյ<sup>(1)</sup> : Վ ասն որոյ պատուեաց թագաւորըն զհայրապետն Հայոց՝ տալով զորդին իւր նմա սան և զաշխարհն Հայոց ՚ի հրամանս նորա , և պարզեւո մեծամեծս ետ նմա և Աթանասայ , և զաշխարհն Պարսից ետ ՚ի ձեռս նոցա խնամել զքրիատնեայսն ըստ իւրեանց օրինացն , կարգել եպիսկոպոսս և քահանացա

և սարկաւագունս, և շնորհ եկեղեցիս, և ապրանք եկեղեցեացն. և այսպէս Վատուած զիառաւաւորիչս իւր փառաւորէ. և նմա փառք յաւիտեանս :

Իսկ Հերակլ թագաւորեալ ՚ի քսան և մի ամին խոսրովու, և առաքեաց առ խոսրով խնդրել սէր ասելով, [թէ «]Սպանաք զՓոկաս զսպանողն Ոօրկայ, և դու արա ընդ մեզ խաղաղութիւն:» Եւ ոչ կալաւ խոսրով յանձին, այլ յարուցեալ եկն ՚ի Կեսարիա Հայոց, և առ զնա և կոտորեաց զբիւրս բիւրուց<sup>(1)</sup>: Եւ ՚ի չորրորդ ամին Հերակլեայ հնազանդեաց Հահրապարզն զ՝ Կամասկոս՝ Պարսից. և ՚ի գալ տարւոյն առ զ Վալլիլիա, և ՚ի վեց ամին Հերակլեայ առ զ Երուսաղեմ և սպան ՚ի նմա արս իննուուն հազար<sup>(2)</sup>: Եւ Հրեայքն զգերեալ քրիստոնեայսն գնեին սակաւ գնոյ, և սպանանէին վասն չարութեան իւրեանց: Եւ զօրավարն Պարսից առ զ Խաչն Քրիստոսի և առաքեաց ՚ի Պարսս, և ընդ նմա զ Օսքարիա պատրիարքն Երուսա-

(1) Սեբեսս, յեր. 125: — Վարդան, յեր. 86. աից Մոոկուայ:

(2) Խոսրով առ զԵրուսաղեմ յամի 616. զոր Սեբայէլ Զամշեան գնէ երկու ամօք յառաջ՝ 614 ամին. և սպան արս յիսուն հազար կամ ըստ ունաց՝ յիսուն և եւթն. և գերեաց անձինս երեսուն հազար: Սեբեսս, յեր. 150: — Մոոկու Կաղանկայտուացի, Գիրք Բ. Գ. Ժ. — Թաղված Արծրունի, յեր. 98: — Սամանէլ:

զեմի քաղկեդոնիկ . և յետոյ զամենայն Հրբեայսն ջնջեաց յիշրուսաղէմէ և յամենայն սահմանացն և առաքեաց ՚ի Պարսս : Եւ ՚ի գալ միւսոյ տարւոյն գնացյալ գիպտոս և առ զնա, և հնազանդեաց զամենայն լիբիա Պարսից Հահրապարզն մինչեւ ՚ի Քուշացիսն : Եւ ՚ի նոյն ամի եկն Հահէն զօրավար մի այլ Պարսից ՚ի վերաց Քաղկեդոնի, և առ զնա և կոտորեաց<sup>(1)</sup> : Եւ գարձաւ առ զիթիլիկիա և բազում գերութեամբ և աւարաւ գնաց ՚ի Պարսս . մինչեւ զսիւնս մարմարեայս և զանօթս պղնձի և երկաթի տարան ՚ի Պարսս : Եւ եղեւ հնազանդ Պարսից ամենայն իշխանութիւնն Հռոմայեցւոց ՚ի ծովէ մինչեւ ՚ի ծով : Խակ Հերակլ զորդին իւր կոստանդին արար օդոստոս , և առաքեաց ընդդէմ Պարսից<sup>(2)</sup> :

### Հայում ժամանակի երեւեցաւ Այհմէտ

(1) Աերէսս (յեր . 141) յորմէ առեալ և թուլմա Արծրունի , զՀահրապարզաց ասեն եկեալ ՚ի Քաղկեդոն , և առերեալ զաշխարհն , ուր ՚ի մէջ բերեն և զբանս Հերակլի վասն խազաղութեան խօսեցեալ առ մեծ զօրավարն Պարսից , և ըզպատճէն հրովարտակին խօսրովայ առ Հերակլ կոյսր ուղղվեալ լի ամբարտաւանութեամբ . յեր . 100—101 :

(2) Աերէսս (յեր . 144) , թուլմա Արծրունի (յեր . 102) . և Մովսէս կաղանկայտուացի (Գիլքք . Բ . Գլ . Ճ.) առեւ եթէ Հերակլ թագ կապեալ որդւոց իւրում կոստանդնի , եթող ՚ի ձեւս նորա զկառավարութիւն Դրանն , և ինքն ընդհով ել ՚ի ձանապարհ յաշխարհն Եգերացւոց և Պարսից , և անձամբ մղեաց պատերազմ ընդ Հահրապարզաց և խօսրովու :

որդի Արդըսի յԱթրապէ (1) Արաբիայ : Եւ  
է Արաբիա՝ 'ի հիւսիսոց և յԱփրատ գետոց  
մինչեւ 'ի ծովն հարաւոյ, և 'ի յարեւմոից 'ի  
կարմիր ծովին մինչեւ յարեւելս 'ի Պարսից  
ծովն . և բնակիչքն կոչին խամայելացիք վասն  
խամայելի, և Սարակինոսք վասն Սառայի, և  
Հագարացիք վասն Հագարայ, և Մադիանա-  
ցիք վասն Կենդուրայ որդւոյ Մադանայ :

Այս Մահմետոս ելանէր յԱթրապ քաղա-  
քէն և վաճառականութեամբ գոյր 'ի Պա-  
ղեստինէ և յԱգիստոս, և եղեւ ծանօթու-  
թիւն նման ընդ մինակեցի ումեմն՝ որ էր Ա-  
րիանոս, և 'ի քարոզութենէ նորա հաւատաց  
յԱստուած՝ և գնաց քարոզեաց ազգին, և  
զոմանս հաւանեցոց . և ելնոքօքյանապատ,  
և զանհնաղանդան գերէր և աւերէր, և յո-  
լովք յարեցան 'ի նա, և երթային արշաւէին  
'ի կողմանս Պաղեստինի, գերէին բերէին . և  
փարթամացան, և յաճախեաց և բաղմացաւ  
զօրքն, և ել համբաւ զնմանէ : Եւ միաբանե-  
ցան Հրեայքն ընդ նմա, և ետուն նմա կին  
յաղգէն իւրեանց, և հալածէին դզօրսն Պար-  
սից և տիրեցին բազում աշխարհաց (2), Եւ  
սկիզբն երեւման նորա յերկոտասան ամին

(1) Աթրապ է նոյն՝ որ կոչեցաւ յետոյ Քաղաք մարդա-  
րէի . և այժմ հասարակաբար կոչի Մէտինէ :

(2) Մովսէս կազմնկայտ, Գիրք Գ. Գլ. Ա. — Ստեփան  
Ասողիկ, Գիրք Ա. Գլ. Դւ-Կիրակոս, յեր. 32. տիսլ Մոտկուայ-  
թումա արծրունի, յեր. 109 : — Արդան, յեր. 88 :

Հերակլեայ, և 'ի ԶԼԳ (933) թուին Վաղոց  
և 'ի Հայոց թուին Կ (60) :

Ծայսմ ժամանակի խաւարեցաւ կէս ա-  
րեգականն յԱրեգ ամսոյ աշնանն մինչեւ 'ի  
Քաղոց ամիս՝ սկիզբն ամարան, և ասէին մար-  
դիկ՝ թէ այլ ոչ զորդի արեգակնն յաւիտեան:

Իսկ 'ի հնգետասան ամին Հերակլեայ ա-  
ռին Պարսիկը զի Խոդոն կղզի և գնացին Շա-  
հրադարզն և 'Վարատօղն (1) իջան 'ի վերայ կոս-  
տանդինսւպօլսի, և զօրքն ափուեցան 'ի Տօրա-  
կիա, և ունանք յարեւմուտո կոյս, և ամ մի պա-  
շտեցաւ կոստանդինուպօլիս և անյուսացաւ  
յամենայն կողմանց : Եւ յանկարծ եղեւ նո-  
ցա դիւրութիւն այսպիսի պատճառաւ : Ծայ-  
նըմ ժամանակի բանսարկեցին առաջի խոս-  
քովու թէ հպարտացեալ է Շահրապարզն ընդ-  
գործո իւր, և առէ . « Կնամովն խոսրով նըս-  
տեալ է 'ի մէջ հարճից և վարձակաց, և կար-  
ծէ թէ ինքն է թագաւոր . և զայս ոչ իմանայ-  
թէ ևս առի զմագաւորութիւնս Հռոմայ-  
եցւոց և յաւելի 'ի Պարսս, և արարի նմա-  
հանգիստ : » Եւ լուեալ զայս խոսրով Բարիա-  
ցաւ և Գրեաց Եռ-Ղը առ՝ 'Վարատօղն երիրրտ զ-  
բագլւի, եթէ յորժամ ուսանես դիւրտ՝ հադ դիւրտ՝  
Շահրապարզտ . և առ իս առաքէա (2) : Ծուուզմն ան-

(1) Առվաէս կաղանկայտուացի Քըստարին անուանէ ըզ-  
աս . (Գիլք Բ . ԳԼ. ԺԱ), զոր և Յոյնք Քարբարինս կոչեն :

(2) « Եսարագրեալքն եղծեալք էին 'ի մերում բնագրի,

կաւ՝ ՚ի ձեռս ծառայիցն Հերակլեայ, և նու  
ազդ արար զիրսն զօրագլխին (Շահրվարազայ)  
և ձայնեաց առ ինքն և եցոց նմա զմուղմն,  
և հնարիմացութիւն փոխեաց զմուղմն Շա-  
հրպարզն և գրեաց ՚ի Խոսրովու երեսաց թէ՝  
“Շահրպարզ և Ղարատօղան, ՚ի գալ թղմոց-  
առ ձեզ՝ սպանէք երեք հարիւր իշխանս ։”  
գրեաց և զանուանս իւրաքանչիւրոց իշխա-  
նացն, և եցոց Ղարատօղին զմուղմն և  
յայտնեաց զբանն մեծամեծացն և շարժեցան.  
՚ի բարկութիւն ընդդէմ Խոսրովու, և ապրո-  
տամբեալ ՚ի Խոսրովայ՝ արարին սէր ընդ  
Հերակլ, և ետուն նմա պատանդ զորդին  
Շահրպարզին և գարձան ՚ի Պարս՝ թողեալ  
զերկիրն Հռովմայեցւոց ։ Եւ առաքեաց Հե-  
րակլ առ թագաւորն հիւսիսաց Խաքան (1), և  
խոստացաւ նմա տալիին զդուստոր իւր Եւ-  
գոբսիա՝ եթէ նայանձն առցէ տալ նմա քա-  
ռասուն հազար հեծեալ ՚ի վերայ Պարսից ։  
Եւ Խաքանն խոստացաւ կատարել զինդիրսն  
նորա, առաքել զղօրսն ընդ դուռն Կաղքից ։

Եւ ելեալ Հերակլ գնաց ընդ Հայս ՚ի  
վերայ Պարսից ։ Եւ լուեալ զայս թագաւորն

ըսր առաք ՚ի միւս թարգմանութենէն ։

(1) Այն է թագաւորն Խազքաց Զերու Խաքան որ ընդ  
Հերակլեաց միաբանեալ մարտ եղ ընդ Խոսրովու զամա ե-  
րիս։ Մովսէս կաղանկայտուացի երկար բանիւք պատմագրէ  
զանցու աղէտից պատերազմացս և մահուն Խոսրովու ։ Գիրք  
Բ. Գլ. ԺԱ—ԺԳ. ։ Վիրակոս, յեր. Յ0, և այլք ։

Պարսից, ժողովեաց զօրս և եղ գլուխ զօրացն զիուղի—Շահան (1), և առաքեաց ընդդէմ Հերակլեայ . և յաղթեցան Պարսիկք ՚ի դիպելն Հերակլեայ , և սպանաւ Շիուղի—Շահան . և լուաւ Խոսրով և փախեաւ ՚ի Աակարդայամուրն իւր (2): Եւ Շիրի որդին Խոսրովու որ կայր ՚ի բանտին , եւ ՚ի բանտէն կամաւ Պարսից և սպան զհայրն ՚ի ձեռն հրամանի իւրոյ , և թագաւորեաց Շիրի (3): Եւ Հերակլ դարձաւ ձմերեւ ՚ի յԱթուր (4). և

(1) Մովսէս կազանկայտուացի զզօրապեան զոր առաքեաց Խոսրով բանակաւ ընդդէմ կայսեր . Ռուճիւն կոչէ , յայս անուն փոխեալ , ասէ , զառաջին անուանակոչութիւն նորին :

(2) Վաղաքն ուր ապաւինեցաւ Խոսրով յերեսաց զօրութեան Հերակլիւէր Վեհ—կաւատ , տեղի ամրութեան . յայնկոյս Տիգրիս կամ Դկլաթ գետոյ , ուր կային ամրացեալ և ամենայն տիկնացք և որդիք և զանձք արքային : Սերեսո , յեր . 150:—Թավմա Արծրունի . յեր 104—105 : Իսկ Մովսէս կազանկայտուացի (Գիլք Բ . Գլ . Ժ.Գ) Վեհ—Արտաշիր կոչէ զանուն քաղաքաբերդիս :

(3) Շիրի , կամ Շիրուշ ըստ Պարսից , կոչէր և կաւատ , որ էր անդրանիկ որդի Խոսրովու , և ըստ գրելոյ Մովսէսի կազանկայտուացւոյ (Գիլք Բ . Գլ . Ժ.Գ) դայեակ սորին՝ որ մի էր ՚ի նախարարացն , խորհրդակցեալ ընդ կաւատոյ և գըրաւեալ զմիրտս ամենայն աւագացն , հան զնոսա ընդդէմ Խոսրովու որք միաբանեալ թագաւորեցուցին զկաւատ . և նա յետ կոտրելոյ զամենայն եղբարս իւր ըստ թելադրելոյ դայեկին իւրոյ . և զհայր իւր որ թագուցեալ կայր ՚ի բուրաստանս ընդշմաւոք , կալեալ եդ ՚ի զգուշութեանս . և զկնի քանի ինչ աւուրց երարձ ՚ի կենաց—թավմա արծրունի , յեր . 105 :

(4) Ամուր , յորմէ Ամուրացիք կոչին Ասորիք , նշա-

Ծիրի առաքեաց առ նա խնդրել սէր, և խոս-  
տացաւ նմա կոչել զզօրսն իւր յաշխարհէն  
Հռովմայեցւոց։ Եւ Հերակլ հաւանեցաւ և  
դարձաւ ՚ի Ոիջագետսյառաջքան զինքն ա-  
ռաքեալ զթէոդորիկէ (զթէոդոր) զեղբայրն  
իւր։ Իսկ զօրքն Պարսից որ յիւռհա՛ ոչ հը-  
նազանդէին Ծիրէին (1), և Հրեայքն վասն  
ատելութեան քրիստոնէից օդնէին Պարսից  
և զթէոդորս ոչ ընդունէին յիւռհա՛. և նո-  
քա մարտ եղեալ յաղթեաց Պարսից և տո-  
ղբաղաքն։ Եւ Հրեայ մի կախեալ ընդ պա-  
րիսակն, կնաց առ Հերակլ ՚ի թիլմօզ (2) և  
եթէր հրաման չկոտորել զՀրեայսն, որ մինչ  
՚ի գալն նորա զբաղումն սպանեալ էին։

Եւ եկն Հերակլ յիւռհա՛, և ել ընդա-  
սածնորա եկեղեցականաց բազմութիւն յոյժ  
և վանորայք լերինն յիւռհայոյ, զորսց ասեն  
զթիւն իննառւն հաղարաց։ Եւ ՚ի տեսանելն՝  
զարմացաւ Հերակլ ընդ բազմութիւնն, և  
խոնարհեցոյց զերեսն յերկիր առաջի նոցա։  
և յորժամիմացաւ թէ ոչ ընդունին զժողովին  
Քաղկեդոնի, ասաց՝ թէ « Զէ արժան զրկել  
նակէ զբաղաքն ամսուե՛, զոր շմանաց Ասուր որդի Անձայ ։  
Ճնդոց, Ժ. 11։

(1) Ու հնազանդէին զօրքն Պարսից գաշանցն որ հաստա-  
տեալ էր ՚ի մէջ Հերակլեայ և կաւատայ, որով յւռհա՛ լի-  
ներ մասն իշխանութեան Յունաց։

(2) Թիլմօզ էամ թթմուզ, և քաղաք հին և աւերակ ընդ-  
մէջ Ռասլնի և Մրճյ, և իբր տասն մղոն հեռի ՚ի Ռասլնէ։

զմեղ յաղօթից այսքան բազմութեան վասն ժողովրդն Քաղկեդոնի : » Եւ ՚ի տօնի Շնըն գեանն մտաւ ՚ի սուրբն Առքի յեկեղեցին ուղղ զափառաց , և պատուեաց յոյժ զքահանացն ընծայիւք . և ՚ի ժամ հաղորդելոյն յառաջ գընաց հաղորդիլ , և արգել զնա արհի եպիսկոպոսն չսացի և ասէ . « Ասխ նղովեա զժողովն Քաղկեդոնի և զտումարն Եւոնի : » Եւ բարկացաւ թագաւորն վասն այնր բանի , և առ զեկեղեցին ուղղափառաց և ետ ՚ի Քաղկեդոնիկան :

Եւ ինքն եկն ՚ի Անբեճ և ել ընդառաջ նորա պատրիարքն Աթանաս երկոտասան եպիսկոպոսօք , որ նախ եկեալ յԱնտիոքայ՝ մընային նմա . և անուանիք եպիսկոպոսացն են այս . Թումա՝ Թրմուրին , Վասիլ Հեմսայ , Ապրդիս՝ Արիսոյ , Յովհաննես՝ Կուրիսոյ , Թումա՝ Անբեջսյ , Դանիէլ Խոառանայ , Եսային՝ Առոհայոյ , որ եկն առ պատրիարքն յառաջ քան զգալ թագաւորին . Աւելիրէ (Աւելերոս) Ալինշրոյ , Աթանասիոս՝ յԱրապիսոյ . Կողմա՝ Եպիփանիայ քաղաքի Կիլիկիոյ , Աւելիրէ՝ Ամմոստիայ : Եւ ընկալեալ զնոսա թագաւորն և նստան ՚ի քննել զերկոտասան օր . և ասպա խնդրեաց թագաւորն դաւանութիւն գրով . և նոքա տուին ըստ սահմանի ուղղափառաց , և գովիեաց և գոհացաւ զԵպտուծոյ և ասէ . « Այսէ Ճշմարիտ խոստովանութիւն

նզովեալէ ժողովն Քաղկեդոնի և տումարն Եւսնի (1) : » Եւ դրան եպիսկոպոսն իւր հակառակեցաւ նմա, և թագաւորն հրամայեաց կտրել զքիթ նորա, և զպատրիարքն մեծ պատուի արձակեաց :

Եւ յետ աւուրց եկն Հերակլ Յշնախոք, և ժողովեցան Քաղկեդոնականիքն և իշխանիք և տուին նմա խորհուրդ և խրատ, թէ «Տարածեալ է դաւանութիւնդ այդ, և մեծն Հռոմ'ի յայդ կայ, և ոչընդունին զքեզ և ոչ կարես յերկարել'ի թագաւորութիւնդ, եթէ ոչ յայտնապէս յարուցանես հալածանա աղօնդոյդ զօր ատեն Հռոմայեցիք : » Եւ պատրեալ զթագաւորն սիրեաց զփառսմարդկան քան զփառս Վատուծոյ, և ետ հրաման այլ մի երեւել առաջի նորա՝ որ ոչ դաւանէ զՔաղկեդոնին, և այսուհետեւ ոչ գոյ դատաստան և իրաւունք՝ որք սպանանեն և կողոպտեն և հալածեն զնոսա : Եւ մի կալցին կաթուղիկէ Եկեղեցի, և մի համարձակութիւն : »

Եւ ժողովեցան ՚ի թէոդոսօլիս և դարձոյց զբաղումն ՚ի Հայոց յաղանդն իւր ՚ի ձեռն Եզրի, զօր կաշառեաց զագահութիւն նորա և խարեաց զանմտութիւն նորա (2) : Վ. Ա.

(1) Միւս թարգմանութիւնն այլ իմ ասացուած բանից այս կայսեր, որ յարմարագոյն եւս թուի . և Եւ ասէ թագաւորն. բիծ ինչ ոչ գոյ ՚ի ձեզ, այլ զմերս պահեսցուքութ:

(2) Ամենայն պատմագիրք մեր միաբան հաստատեն զա-

ոչ հնագանդեցան նմա վանորայքն արեւելից և իմաստուն եպիսկոպոսքն և զբաղում աշխարհս սպահեցին յուղղափառութիւն անշարժելիս, մինչեւ յաղթեցին ձմարիաքն և բարձաւ աղանդն չարութեան ՚ի ձեռն լսքանչելագործ և իմաստուն առնն Կոտուծոյ Յովհաննու օձնեցւոյն, որ յետ ութեան և չորս ամաց տգիտաբար հաւանելոյն Եղբայ, Յովհաննէս օձնեցին Կաթողիկոսն Հայոց Անծացագայծառ կարգօք զարդարեաց զեկեղեցի աղօթիւք սրբոյն Գրիգորի Հայոց Ուսաւորչին և սուբք որդւոցն իւրոց<sup>(1)</sup>:

Նարի բարս և զթուլամտութիւն Եղրի և ղագահութիւնն, վասն որս ոչ առեալ ընդ իւր զՅովհան մայրավանեցի (մայրագոմեցի), որ աստուածային գրաց բանիբուն ձանաչէր, որպէս ասէ Սամուէլ, և ոչ զեպիսկոպոսն Սիւնեաց զՄաթուսաղայ, զբարեհամբաւեալն իմաստութեամբ և աստուածաբանական հմտութեամբ, այլ զսորսա աշակերտն առեալ ընդ իւր գնայ, ու ստի և տկարացեալ ՚ի բանս՝ ընդունի զսահմանադրութիւնս ժողովոյն Քաղկեդոնի, փոխարէն ընկալեալ ՚ի պարգեւ զաղահանսն Կողբայ: Աւրէսո, Գլ. Իթ.—Ստեփ. Ասողիկ, Գիրք Բ. Գլ. Բ.—Սամուէլ—Վարդան, յեր. 86:—Կիրակոս, յեր. 51:—Ստեփ. օրպելեան, Գլ. Իթ.

(1) Ստեփան Ասողիկ (յեր. 104) համաձայն Միհնայելի ասէ Եթէ Յովհաննէս իմաստասէր, զոր փիլիսոփիայ կոչէ, այն է Օձնեցին, արար, ասէ Ժողով ՚ի Մանազիերտ, որբելով յաշխարհէս (Հայոց) զԲաղկեդոնականացն երկարնակ խոսապանութիւն և այն, որ յաւուրցն Եղրի մինչեւ ցայն վայր մնացեալ էր յաշխարհիս Հայոց ՚ի բաժնին ՅունացՄիքայէլ Զամշէրան երկար քննութեամբք բանից ջանաց ցուցանել թէ այս ժողով ըստ իցէ ՚ի տեղապահութեան Յովհաննու Մանազ-

Իսկ Շերի թագաւորն Պարսից զինի ինն ամսոյ թագաւորութեան իւրոյ մեռաւ , և թագաւորեաց Արտաշելիր որդի նորա երկուամ . և ապա Շահրվազն սպան զնա և ինքն թագաւորեաց , և պահեաց սէր ընդ Հերակլի<sup>(1)</sup> : Եւ Պարատօղնարար ընդ ինքեան զոմանս և պատառեցաւ թագաւորութիւնն Պարսից , և օգնեաց Հերակլ Խոռիանէի (Շահրվարազ) և սպան զՊարատօղն : Խոռեան ամ մի թագաւորեալ սպանաւ և նա , և

կերտցւոյ՝ որպէս ինքն անուանէ . և թէ նախորդն Օձնեցւոյ՝ Եղիա կաթողիկոս որ պարտ էր ջառագով լինել Քաղկեդոնականաց , ընդ հակառակն թշնամի էր նոցա որպէս գրի ՚ի պատմութեան Մովլէսի կազմնկայտուացւոյ (Հռ. Բ. յեր. 11-18) . զի զՆերսէս կաթողիկոսն Ազուանից ժողովով նույնաց վասն ընդունելոյ զժողովն Քաղկեդոնի : Ասեմք , եթէ զինի Եղիա ցայն վայր , հաղորդութիւնն զօր ունեին Հայք ընդ Քաղկեդոնականացն՝ էր ՚ի բաժնին և եթ Յունաց , իսկ այնորիկ որ էին ՚ի բաժնին Պարսից պահէին զնախնական դաւանութիւն իւրեանց . վասն որոյ Յովհաննէս իմաստաւէր ՚ի ժողովի անդ զօր կալաւ ընդ Ասորիս , ջանաց խափանէլ զՀաղթութութիւնն զօր ընդ Քաղկեդոնացիս ունեին՝ այնոցիկ որ էին ՚ի բաժնին Յունաց , որպէս բացայացտ առէ Ասովլիկ :

(1) Հերակլ ՚ի կենդանութեան Արտաշրի գրեաց առ Շահրվարազ և խոստացաւ տալ նմա զԾագաւորութիւնն Պարսից՝ օգնութեամբ զօրաց իւրոց . և ՚ի փօխարէն խընդրեաց ՚ի նմանէ գարձուցանել առ ինքն զսուրբ խաչն որ կայր ՚ի գանձնան արքունիւնի Երթեալ Շահրվարազյ ՚ի Տիգրոն սպան զԱրտաշեր և յինքն առ զԾագն , և զխաչն գարձոյց առ Հերակլ : Սերէսոս , յեր . 455: Յորմէ առեալ գրէ և Յովլան Արծրունի , յեր . 104—107 :

թագաւորեաց Պարամ (1) դուստր խոսրովու սակաւ աւուրս՝ և մեռաւ։ Եւ թագաւորեաց Օքրմանդուխտ քայլ իւր (2)։ Եւ զիետ նորա թագաւորեցին Հահրորի, Դաբուրան Խոսրով, Պերոզ, Օքուանդուխտ, Արմիզդ, ազգականիք թագաւորին Պարսից, ամենն յերկու ամի վճարեցան (3)։

Եւ Ահմետ բազում աշխարհաց տիրեալ զեւթն ամ (4), մեռաւ և առ զիշխանութիւնն Շուքաքը (Ապուղէքը) ամս երկու և ամիս հինգ։

Խոկ Հերակլ ՚ի վերաց ամենայն չարեաց իւրոց ՚ի ծերութեան իւրում առ զիշխանինէ զեզքօր իւրում դուստր ՚ի կնութիւն իւր, և ծնաւ ՚ի նմանէ զիշքակլիէ անօրէն որդի (5)։

Խոկ զինի Շուքաքը թագաւորեաց Ամար (6)։ Եւ սա բազում գերիս առաքեաց յէ-

(1) Այն է ըստ հայ պատմագրաց՝ Բբոր կամ Բոր՝ դուստր խոսրովու և կին Հահրովազոյ։

(2) Ըստ ոմանց՝ Աշորիութեան կամ Զամբէն։

(3) Սեբէս այսպէս ունի զթիւ և զիարդ թագաւորացն որ յաջորդեցին մեծին խոսրովու, կռաւատ, Արտաշէր, խոռեմ, Բբոր, խոսրով յազգէ Աստանայ, Ազարմիդուխտ, Արմիզդ և Յազկերս, Վարդանան ոչ յիշէ զիսոսրով, և Կիրակոս՝ զիրմիզդ։ Խոկ ժամանակիք տեւողութեան սոցա մինչեւ ցՈրմիզդ են ամք հինգ։

(4) Ահմետ Ա վարեաց զիշխանութիւնն ամս տանեական աւուրս յիտուն։

(5) Արտինէ դուստր էր քեռ Հերակլի։

(6) Կ բնագրիս մերում անխորիք գնի Անար և Անար։

ըսթիա։ Եւ սա էառ զի՞ասր (Տասրա) յի՞սորի իշխանէ, և աւերեաց քաղաքս բազումն Եւ առաքեաց զօր՝ ՚ի Պարսիկս, և գտան զնոսա ամբոխեալս, զի ոմանք զլ՛ցոաճատ (Յազ կերտ) և ոմանք զլ՛ըմիզդ առէին թագաւոր։ Եւ սպանաւ Արմիզդ, և թագաւորեաց Վատաճատ։ Եւ զօրն Տաճկաց բազում աւար առեալ դարձան և զօրացան ՚ի վերայ Պարսից և ՚ի վերայ Հռոմայեցւոցն։

Եւ առաքեաց Հերակլ վեզքայր իւր ըգ թէոդորիկէ ՚ի վերայ Տաճկաց, և եկին յերկիրն Ենախոքու ՚ի գեղն որ կոչե կօսիտ։ Եւ կայր անդ սիւնակեաց մի աղանդովին Քաղկեդոնի, Աիմեօն անուն, և գնաց առ նա թէոդորիկէ և իշխանք իւր։ և ասաց Աիմենակեացն։ « Ավստեցէք ինձ որ ՚ի դառնալըն յաղթութեամբ ջնջէք զոչ ընդունողսն Քաղկեդոնի ժողովոյն, և հաւատամ ես թէտացէ ձեզ Վատուած յաղթութիւն։ » Եւ երդուան նմա, և ասացին թէ։ « Եւ մեք ունիմք պատուէր ՚ի թագաւորէն սատակել զնոսա և կորուսանել։ » Եւ ոմն իշխանուզ զափառ յոյժ տրտմեցաւ, զի գիտաց եթէ հասեալ ՚ի վերայ նոցա բարկութիւն յատուծոց։ Եւ ելեալ գնացին մեծաւ վրացմամբ, և ՚ի ցասմանէն Վատուծոց հարան և դարձան ՚ի փախուստ յոյժ սակաւք, և այլն անկաւ ՚ի սուրն Տաճկաց և առաւ ամենայն

պատրաստութիւն նոցա։ Եւ եղբայր թագաւորին մազապուր եղեալ և յամօթոյն չիշխէր յակն անկանել մարդկան։ Եւ դարձեալ զօրաժողով արարեալ Հերակլեայ ՚ի ձեռն Արկլարոյ զօրապետի<sup>(1)</sup>, և հանեալ զօրդին խոռի անէ ({{խոռեմայ}}) և առաքեաց զնոսա ՚ի վերայ Տաճկաց եւ թանասուն հազարաւ, և երթեալ կոռւեցան առ գետովն ՚ի ամասկեայ. և յաղթեցան Յոյնք, և անկան ՚ի նոցանէ քառասուն հազար հեծեալ<sup>(2)</sup>։ Եւ որդին խոռիանէի մտեալ ՚ի Հեմա առ Ամար՝ տալ նմա զօր երթալ ՚ի Պարսս և հնազանդել նմա զՊարսս. այլ զի կային առ Ամար դստերք խոռովու թագաւորին Պարսից ՚ի գերութեան, ասացին ցնա. “Արդի ապստամբի է, և երթայ որ ընդդէմքու թագաւորէ. մի հաւանիր։” Եւ առաքեաց Աւմար և սպան զնա խաջիւ մահու։ Եւ յետ այնորիկ առ զ՚ի ամասկաս<sup>(3)</sup>

(1) Միւս թարգմանութիւնն չունի զանունդ Աւար ոգրագիր։ Թէոփանէս և ՚Նիկեփոր պատմիչք Յոյն, յիշատակնեն ՚ի ամին ժամանակի ՚ի ծառացութեան կայսեր լինել և թէոփորս Ռշտունի և Վահան կամսարական որդի Ամբատայ զօրավարութեան պաշտօնիւ։ Խոկ անունդ Ակլար թերեւս իցէ Աւար, որ նշանակէ զօրավար։

(2) Աերէսս պատմէ զայս պատերազմ, և զտեզի ճակատամարտին առէ լինել յայնկոյս Յորդանանու. և ոչ առ ՚ի ամասկեայ գետովն. (յեր. 166)։ Նեւոնդ Երեց, տիպ Փարիզու, յեր. 21։ Թումբա արծրունի, (յեր. 115)։

(3) ՚ի ամասկաս առաւ յամի 654. ձեռամբ Հալետայ և Ապու—Օպէիտայ։

և զշրջակայ գաւառուն և զքաղաքոն, և զքրացաւ յոյժ :

Յայսմ ժամանակի ելեալ Ասդն<sup>(1)</sup> զօրավարն Տաճկաց՝ ՚ի յԱթրաբայ, և եհար զքանակ իւր ՚ի վերայ Քուբար քաղաքի : Եւ ըեալ Վզտաճատ թագաւորն Պարսից, և եկն բանակեցաւ ընդդէմ նորա ՚ի վերայ Եշիքատայ . և յետ այնորիկ եղեւ պատերազմ ստատիկ, և յաղթեցին Տաճիկքն Պարսից, և փախուտական տարան զնոսա մինչեւ ՚ի կատիզբոն, սակաւք և անզէնք ՚ի Տաճկաց՝ զքազումն և զզինեալս ՚ի Պարսից . մինչ զի՞ ոմն իշխան ՚ի Պարսից, սպառազինեալ յոյժ, երթացր փախստեայ առաջի մերկ և անթամք ձիաւորի Տաճկի, և բազում անգամ դառնոյր և հարկաներ ՚ի վերայ սրտի Տաճկին և ոչ բաներ նետն . և մինչ երթացրն, հանդիպեցաւ իշխանին բահ ցցեալ ՚ի ճանապարհին, և փորձով եհար զքահն, և թափ անցոյց ըդնետն, և գիտաց թէ յԱստուծոյ է, և անկաւ յերիվարէն և սպանաւ ՚ի մերկ Տաճկէն և կողոպտեցաւ : Եւ ոմանք ատեն, թէ պատմեաց Արաբիկն թէ՝ « ուսն(պայտ ձիոյ) կտոր

(1) Ասդ եր որդի Մելիք Ասլու—Վաւաքքալոց, որ հրամանու Ոմարայ չոքաւ ՚ի պատերազմ ընդդէմ Պարսից յամի 656 մերձ ՚ի Տիղբոն, և զօրավար բանակին Պարսից եր Ոռոստամ իշխանն Ատրապատականի որդի խոռոխ Որմզդի, որը յիշատակէ և Աերեսու . (յեր. 159):

Ճի կայր՝ ՚ի գրապանս , և տասն անգամ ձգեցաւ նետն և զիալէր յայն , որ և ինձ ինչ ոչ մեղանչէր : ”

Եւ յաւուրսն յայնոսիկ եղեւ տօն վկայիցն Ախմէօնի , և ժողովեցան անդ աօնողք . և իմացեալ Տաճկացն , գնացին և կոտորեցին զետա : Եւ բազումք գայթմակղեցան , թէ Ծառուած ընդէ՞ր մօսանեաց , և զայն ոչ իմանան՝ թէ սահման առաջին տօնովացն բարձաւ . զի նորա պահօք և արտասուօք տօնէին , և այժմ ուտելով և արբեցութեամք . յորս ոչ հաճի Ծառուած , և ՚ի մեզո և յոչ աստուածպաշտութիւն համարեալ է այնպէս տօնեալն :

Յետ այսորիկ եկն Վզտաճատ ՚ի Տիգրիս գետ . գնացին և Տաճիկքն . և յորժամ տեսին զբազմութիւննոցա Պարսիկքն , վլուցին զկամուրջն : Եւ ասեն Տաճիկքն . “Եկայք անցցուք , զի Ծառուած որ օգնէ մեզ ՚ի ցամաքի , օգնէ մեզ և ՚ի ջուրս : ” Եւ անցին՝ և մի ՚ի նոցանէ ոչ պակասեաց , և հարին զՊարսիկքն և փախուցին : Եւ Վզտաճատ չորիցս անգամ եկն ՚ի վերսց Տաճկաց և յամենայն յաղթեցաւ . և ապա իմացաւ եթէ հասեալ է նոցա կատարածն , և փախեաւ գնաց ՚ի Արկիստան յերկիրն Արագանի , ՚ի սահմանա թուրքաց , զոր Ասդաստանն կոչեն . և թաքեաւ անդ ամս հինգ , և սպանաւ ՚ի թուրք

քացն (1)։ Եւ այսու օրինակաւ բարձաւ թաւ գաւորութիւնն Պարսից, տեւեալ ամս չորս հարիւր ութեւ տասն, որ կոչէրն Աստանայ. և առին Տաճկունք (Արաբացիք) զիշխանութիւն Պարսից։

Իսկ Հերակլ՝ի զօրանալն Տաճկաց սկսութիւնաքց մինչեւ՝ի Կոստանդինուպոլիս բազում կողապուտու առնել՝ի քրիստոնէից, զի ասէր՝ լաւ է մեղքան Տաճկաց։

Իսկ Ամար գնաց Աշգիպտոս, և ելընդգէմնորա Եպիսկոպոսն Կաւրա, և խոստացաւ տալնմա յամենայն ամի երկու հաղար դահեկան՝ զի մի մոցէ նա Աշգիպտոս, և դարձաւ։ Եւ Հերակլ բարկացաւ և եհան ըլլկաւրա յեսլիսկոպոսութենէն, և առաքեաց զօրագլուխ մի Ամեուիլ անուն, Հայ ազգաւ, սլահել զերկիրն, և յորժամ գնացին հարկառուքն զի առցեն զհարկն, ասաց. «Ես չեմ կաւրա որ տամ ձեզ ոսկի. զի նա վիլըն ունէր և ես թուր»։ «Եւ շրջեցան զօրքին Տաճկաց Աշգիպտոս և առին զի գիպտոս, և դարձաւ եկն Աշրուսաղէմ Ամարն. և եկն առաջինուրա Ասդրինոս (Ասդրինիմոս) Եպիսկոպոսն Երուսաղէմի, և ետես զԱմար զի զգեցեալ

(1) Աերէսս (յեր. 168—169) առէ՝ փախեաւ ՚ի զօրս հարաւայ. և (յեր. 214—215) առէ՝ փախեաւ ՚ի զօրս թեսալաց և ՚ի նոցունց սպանաւ. — Ղեւոնդ, գլ. Բ. յեր. 25, — թառլմա արծրունի, (յեր. 115):

էր հին հանդերձ և հին մուշտակ, և երեր  
նմա պատուական հանդերձ, և աղաչէր ըզ-  
նա զգենուլ, և նա ասէր . “ Ետ Ծատուած  
՚ի ձեռս իմ՝ զամենայն գանձս Պարսից ՚ի Տիո-  
բոն, և նոյնպէս զառոմայեցւոցն և զԴա-  
մասկեայ և զամենայն գաւառաւաց Եգիպտա-  
ցւոց, և ոչ փոխեցի զհանդերձ աղքատու-  
թեան իմոց՝ զի մի մոռացայց զիս և հպար-  
տացայց . ” և ոչ առ ՚ի նմանէ : Եւ ետ ե-  
պիսկոպոսին զիշխաննութիւն աշխարհին . և  
խնդրեաց ՚ի նմանէ եպիսկոպոսն հանել ըզ-  
շրեայն յլլրուսաղեմէ, և ետ ՚ի հրամանս  
նորա (1) : Եւ ետ հրաման շինել ՚ի Տաճարին  
տեղն մզկիթն նմա : Եւ անտի եկեալ յլլորիս,  
և Յովհաննէս զօրապետ շերակլի որ կայր  
յլլուհա, գնաց առ նա ՚ի կընջրի, և ետ նո-  
ցա հարիւր հազար գահեկան հարկ տարւոց  
միոց, զի այլ մի մոցեն ՚ի Վիջագետոս յարե-  
ւելից կողմանէ : Եւ լուաւ շերակլ և բար-  
կացաւ և տարեալ զՅովհաննէս ետ ՚ի կա-  
պանս . զի Ծատուած որ կամէր հանել ՚ի նր-  
մանէ զաշխարհն, ետ նմա միտս դառն և  
հպարտ : Եւ ՚ի գալ տարւոյն եկեալ մոտին :

(1) Եհրովարտակին զօր ետ Օմար՝ Հայոց, ոչ միայն յիշա-  
տուկի արտաքսումն շրեից ՚ի ոուրբ քաղաքէ, այլ և ոչ ոք :  
ասէ, ՚ի Յունաց որ ՚ի շրջակայս Երուսաղեմի իցեն, ՚ի գալ իւ-  
րեանց յուխտ, մի բնակեացին ՚ի քաղաքին . քանզի Յոնիք ա-  
պրատամբք համարեալ էին :

՚ի Այլագետոս Տաճկունք . և ՚ի գալր յիւռուհա ելին ընդառաջ եկեղեցականքն սիրով . և խմաստութեամբ իւրեանց հանին զզօրականքն սիրով՝ զշառամայեցւոցն որ անդ էին : Եւ տիրեցին Տաճկեք Այլագետաց : Իսյց ֆրմօղն և Տարա ոչ հեաղանդեցան սիրով , և առին զնոսա բռնութեամբ և կոտորեցին զզօրսն որ ՚ի նոստ : Եւ յամին յայն եղին գլխահարկ ամենայն քրիստոնէի որ լնդ իւրեանց իշխանութեամբ :

Եւ յայսմամի մեռաւ Հերակլ թագաւորեալ ամս երեսուն և ամիսս հինգ : Եւ թագաւորեաց կոստանդիանոս որդի նորս ամիսս չորս : Եւ ունէր Հերակլ երեք որդի , միոյն անունն կոստանդիանոս (Հերակլ-կոստանդին) և միւսոյն Կրակլիս , և կրսերոյն Երակլեակ : Եւ Արտինէ կինն Հերակլեաց գեղով սպան զլիստանդիոս (Հերակլ-կոստանդին) , և թագաւորեցոց զկրուեր որդին Երակլեակ , և դժուարեալ իշխանքն սպանին Դերակլեակ և եղին թագաւոր զլիստոս զորդին կոստանդիոսի՝ զթոռն Հերակլեաց (1) :

Իսկ Ամար յետ յաղթութեանն Պարսից

(1) Հերակլեաց յառաջին կնոջէ ծնաւ Հերակլ-կոստանդին , և ՚ի Արտինեաց յերկրորդէն ծնան Հերակլեակ : Դաստիթ և Արտինոս . իսկ կոստոս , որ և յանուն հօրն կոստանդին կոչեցաւ , եր թոռն առաջնոյն Հերակլեաց : Այրեան : յեր . 164 :

և շռոմայեցւոց՝ սպաննաւ ՚ի ծառայէ միոջէ  
որ աղաչէր առնելնմա դատաստան, և նա  
յամեցանէր. և յաւուր միում յորժամ ա-  
զօթէր Ամար, Եհար զնա դանակաւ, և մե-  
ռաւ թագաւորեալ ամս Երկոտասան։ Եւ  
առ զիշխանութիւնն Օթման. և էր սա ա-  
գահ և անցանէր զսահմաննաւ առաջնոցն,  
և խորհեցան իշխանքն սպաննանել զնա. և ի-  
մացաւ Օթման և աղաչեաց զի ներեսցեն  
նմա, և կոցցէ ՚ի սահմանի առաջնոցն, և թո-  
ղին զնա։ Եւ եկին զօրագլուխ զԱյաւի<sup>(1)</sup>.  
և եկին Վաւի զօրօք ՚ի Կեսարիա Սորբատոն-  
եան<sup>(2)</sup>, և առ զնա և կոտորեաց զՀռոմայե-  
ցիօն որ ՚ի նմա։ Եւ ՚ի հինգ ամին Կոստան-  
դիանոսի յաւարի հարեալ զԵրկիրն՝ գնաց։ Եւ  
թագաւորն Կոստոս մողավեաց զօրս և արար  
բաժինս Երկուս, զմինն ետ ՚ի ձեռս Հայկազ-  
նոյ ումեմն, որում անունն ՚Իաւիթ էր<sup>(3)</sup>,

(1) Մաւի կամ Մաւիսո (Մոավիէ). Էր որդի Ապու-  
Սոֆիանայ իշխանին Սիւրից։

(2) Կեսարիա Սորբատոննեանն էր յերկրին Պաղեստինոց-  
ւոց, որ և կոչի Կեսարիա Պաղեստինի, զոր շինեաց Հերով-  
դես. և կոչէր յաւալագոն տեղին՝ Ալարտի Սորբատոննեան, զոր  
ինքն ՚ի սպասիւ Օգոստեայ կայսեր անուաննեաց Կեսարիա. և  
է այժմ աւերակ և երեք ժամաւ հեռի ՚ի Ցոպպէ և Ցոլիկապոս,  
Գյում։ պարերալ. Հըմէից. Գիրք Ա. Գլ. ԺԶ։

(3) Այն է Դաւիթ Սահառունի, զոր Հերոկլ Ա արար  
ինւրապաղատ ՚ի վերայ աշխարհին Հոյոց յամի 651. և զնա  
յաջորդեաց թէոդորոս Ուշտունի յամի 656։ Իսկ Սեբէոս՝

և զմիւսն՝ ի ձեռս Վաղինեայ<sup>(1)</sup>, որ գնաց ընդ  
Վիլիկիա և սպանաւ ՚ի Տաճկացն որք Եկեալ  
էին հնազանդել զԼիլիկիա, և Ելին ընդդէմ  
նորա և սպառեցին զՅօյնան, սակաւ ինչ թու  
ղեալ փախստեայս : Եւ Դաւիթ գնաց վերին  
կողմամբն , և զօրքն Հռոմայեցիք որք ընդ  
նմա , ոչ ինչ պակաս քան զՀագարացիսն գոր-  
ծէին կողոպտելով զբրիստոնեայսն , և առ-  
նուին ոսկի և արծաթ և հանդերձս , այլ և  
զիանայս խայտառակէին յանդիման արանցն:  
Եւ ոմն գնացեալ առ Դաւիթ ասաց . « Ի՞ն-  
դէ՞ր տաս գործել զօրացդ այդպիսի չարիս .  
զի՞նչ պատասխանի տաս առաջի Կյառուծոց :  
Խակ նա զայրացեալ սաստեաց Հունականա-  
ցըն , և ասէ . « Այս է պատճառ քրիստոնէից  
կորստեան , զի ոչ ինչ է խտիր ընդ մեզ և ընդ  
անհաւատսն գործովք և լրբութեամբ : Եւ  
առեալ զնոսա գարձաւ ՚ի կոստանդինուպո-  
լիս :

Յայսմ ժամանակի Պատրիկն Դրիգոր ա-  
պստամբեաց ՚ի յԱֆրիկէ . և յանկարծ մտին  
Տաճիկքն յԱֆրիկէ և գերեցին , և Դրիգոր

Թուման անուն զոմն իշխան , ասէ . արձակեաց ՚ի Հայո .  
(յեր . 179) \*

(1) Վաղենտիանոս : քանզի օգնեաց կոստանոյ որ և  
կոստանդուռն կայսերութեան , կարգեցաւ ՚ի նմա-  
նէ զօրավար Զասա Արշակունի մինել ասէ Սեբէոս , յեր . 175 :  
Եւ սպանաւ յաղմիկ ուրեք յամի 644 , կամ ըստ Սեբէոսի՝  
արկաւ ՚ի հուր ՚ի ժողովոցն՝ յետ գլխատելց զնա , (յեր . 179) \*

Հնազանդեալ գնաց՝ ի կոստանդինուպօլիս :  
 Եւ ՚ի սոյն ժամանակս հրամանաւ Այս-  
 եայ եկին հազար և եւթե հարիւր նաւ յէ-  
 գիպտոսէ , և առեալ զնոսա Այսէի՝ գնաց՝ ՚ի  
 Կիպրոս կղզի և խնդրեաց՝ ՚ի նոցանէ հարկո-  
 և ամրացան՝ ՚ի քաղաքս և ոչ կամեցան տալ .  
 և յարձակեցաւ՝ ՚ի վերայ նոցա սուրն Հա-  
 գարու և կոտորեաց բաղմութիւն յոյժ : Եւ  
 չոգաւ ՚ի քաղաքն Կոստանդիա որ գլուխ էր  
 կղզւոյն , և լցեալ կայր մարդով և գանձիւք ,  
 և նստեալ շուրջ զնովաւ՝ էառ զնա և կոտո-  
 րեաց և ելից զնա արեամբ . և արար պըղ-  
 ծութիւնս յեկեղեցի նոցա ՚ի կաթուղիկէն  
 զոր շինեալ էր սուրբն Եպիփան(1), փոխանակ  
 զի ոչ սպահեցին զուղղափառ հաւատն Եպի-  
 փանու և ոչ զսահմանեալ կանոնս նորա և  
 զգործս : Եւ լցան զօրքն Հագարու յաւարէ  
 նոցա , և տուեալ մասն եկելոցն Այդիպտո-  
 սէ՝ գնացին յերկիրն իւրեանց :

Եւ յայնմ ժամանակի գրեաց սուրբն Ա-  
 թանաս պատրիարքն Ասորւոց ուղղափառաց  
 ՚ի սուրբն Վրիստափոր (Գ) կաթողիկոսն Հա-  
 յոց , զի խնամ տարցի կողմանցն Պարսից և  
 Աթուրացւոց (Ասորւոց) քրիստոնէլց՝ զգու-

(1) Կոստանդիա , որ և Սալամինա , և արդ կոչի ըստ Տաճ-  
 կաց թասուլս , քաղաք է ծովեղերեայ , յորում շինեաց Եպիփան  
 զին եկեղեցին և մեծացոց ՚ի ժամանակս Եպիփակոպոսութեան  
 իւրում այնր քաղաքի : Առաջ սրբոց , յեր . 271:

շացուցանել զնոսա յաղանդոյն Աեստորի և  
Քաղկեդոնացւոցն. “Բանզի գտաք մեք, ասէ,  
թուղթ զարբոյն Վարութայի, եթէ որպէս  
շնորհօքն Կստուծոյ ապրեցայք ազգդ Հայոց  
ի Բարսումայէ ապականչէ” (1). Յորում մը թղթ-  
թի գրեալ կայր այսպէս, եթէ Բարսումա մի  
եր յաշակերտացն Աեստորի և կայր ՚ի Արծ-  
քին, և յորժամ լիներ ժողովն Աշխեսոս առ  
թէոգոսիւ, ոչ գնաց Բարսումա ՚ի ժողովն,  
այլ ասաց՝ եթէ “Ես ընդ իշխանութեամբ  
Պաւեայ կաթողիկոսի եմ զոր ձեռնադրեալ  
են Հայք ՚ի Պարսից աշխարհնեա Եւ զի առա-  
քեալ էին Աշխեսոսէ ՚ի Պարսս խնդրակս  
Պաւեայ և այլոց եպիսկոպոսացն որ ընդ ձե-  
ռամբ նորա էին, և Պաւի գրեալ թուղթ  
ուղիղ գաւանութեան և ՚ի ձեռն երկու ա-

(1) Այն է Բարծումա եղեսացի ներմ աշակերտն Շերի աշակերտն Շե-  
տորի, որոց ուսումն մոլար վարդապետութեանն հասեալ և ՚ի  
Հայոց յաւուրո Քրիստոափորի Աւ գրեաց կաթողիկոսն առ Բա-  
քուէ (Պաւիէ), որ էր կաթողիկոս քրիստոնէիցն՝ որ ՚ի Պարսս և  
այլ տեղիս առ ՚ի զգուշացուցանել զնոսա յաղանդոյն Բար-  
ծումայի: Խոկ սա զծեւամբ ածեալ զթուղթն որպէս և զայն  
զոր Բաքուէ գրեաց առ եպիսկոպոսունս արեւմտեաց և  
առ աջի արարեալ զայնս Պերոզի, բազում ինչ ստութեամբ  
խոսելով զՀայոց և զԲաքուայի իրրու եթէ սպատամբել խոր-  
հիցին ՚ի աէրութենէ, և Պերոզ ետ սպանանել զԲաքուէ.  
Խոկ Հայոց ոչ ինչ կարաց Բարծումա հասուցանել չարիստ այլ  
և ՚ի բաց մերժնաւ անտի սպառնալքօք Ներշապուհ իշխա-  
նին Արծրունւոյ: Թովմա Արծրունի, յեր • 88: Տես և ՚ի  
պատմութեան Միքոյէլի Չամշևան: Հատ. Բ. յեր • 152-155:

բեղայի առաքեաց յիշիսոս : Եւ դրեալ էր  
 'ի թուղթն թէ՝ « Վի մեղադրէք զմեզ վասն  
 չգալօյս , զի ընդ իշխանութեամբ անօրինաց  
 կամք , և երկեաք եթէ պատճառս կարկա-  
 տեն 'ի վերայ մեր , և սուրբն սպանող հարցն  
 մերոց գտցէ և զմեզ . այլ զոր ինչ սահմանէք  
 ուղիղ դաւանութիւն , հաւանիմք մեք : »  
 Եւ թղթաբերքն առ դայլ հարսումա եկին  
 'ի Ոծքին , և տեսեալ զթուղթն՝ էտո և  
 դարձոյց զնոսա և ասէ . « Ես տանիմ զթուղ-  
 թըս , դուք դարձարուք և գնացէք զի մի  
 կարծիս լրտեսութեան տայք զուովմայեցւո-  
 ցրն : » Եւ նոքտ սպարզմտութեամբ դարձան ,  
 և ոչ մեղադրեաց նոցա կաթողիկոսն , այլ տ-  
 տաց՝ « հարիոք արարիք լսելով եղքօրն մերոց : »  
 « Եւ յորժամ իմացաւ հարսումա՝ թէ  
 նզովեցաւ Նեստոր , բարկացաւ և գնաց առ  
 թագաւորն Պարսից և ասէ ցեա . « Նոր մի  
 'ի կաստանդինուպօլիս , առաջնորդ եկեղեց-  
 ւոյ , խորհէր հանասկազ բարիս առ Պարսիկոս  
 և արգելոյր զուոմայեցիս ասպատակել ի  
 Պարսս , և վասն այսր սպատճառի առաքե-  
 ցին զեա յաքսորս , և պատահմանեալն ի նմա-  
 նէ զկարգն խոտեցին և նզովեցին : Եւ կա-  
 թողիկոսս այս (Պաւի) լրտեսէ առ ձեզ զու-  
 ցոյ և զուոմոց , և ահա թուղթս որ գր-  
 րեալ է զձեզ անօրէնս և արիւնասէրա : »  
 Եւ հաւատաց նմա թագաւորն : Եւ խընդ-

ըեաց ՚ի նմանէ (Քարսումա) և ասէ . “Տուր ինձ իշխանութիւն ՚ի վերայ ամենայն քրիստոնէից որ ընդ քո իշխանութեամբ են , զի հաստատեցից զկրօնս ‘Աեստորի բարեկամի Պարսից , և յանհաւանելցն ժողովեցից քեզ գանձս : ” Եւ ետ նմա իշխանութիւն և զօրք Եւ ասէ . “Տուր ՚ի ձեռս իմ զկաթողիկոս զայս : ” Եւ ետ նմա հրաման առնել զոր ինչ կամի . և գնաց առ կաթողիկոսն և ասէ ցնա . “Դաւանեա զ’Աեստորին . ” և նա ասաց . “ Եռայ որ նզովեցաւ ‘Աեստոր , և Եղեցի նը զովեալ : ” Եւ կորեաց զեզու նորա : Եւ լուաւ թագաւորն և տրտմեցաւ , և կոչեաց զՔարսումա և ասէ . “ Ի՞նդէր արարեր զայնոյ Եւ ասաց . ” Օ ի հայհայեաց զքեզ : ” Եւ ասէ թագաւորն . ” Յէ այդպէս է , գնա և զգը լուխն այլ կորեա , ո և չոգաւ կորեաց :

” Եւ եկն ՚ի Քաղզատ և հնազանդեաց ‘Աեստորի զեռսա , և անտի գնաց ՚ի Այնուէ . և կալաւ զՔարտիրոս արհի եպիսկոպոսն երկրոտասան եպիսկոպոսօք և իննուն երիցամբք և ասէ ցնոսա . “ Կամ հաղորդեցէք զիս , կամ հաղորդեցարուք յինէն : ” Եւ նոքա ասեն . “ Ոչ տամբք զարբութիւն շան , և ոչ առնումք զարբութիւն ՚ի շանէ : ” Եւ նա զայրացեալ սպան զքահանայսն և զեպիսկոպոսունսն , բերեալ ՚ի Վծբին եղ ՚ի բանաի ՚ի տան Հրէի միում , և յետոյ քարկոծել ետ զօրացն , և

ապա կախեաց զփայտէ , և երեւեցաւ նշան  
երկնաւոր ՚ի վերայ նոցա , և հաւատաց Հը-  
րեայն և մլրտեցաւ : Եւ ել անոի և կամե-  
ցաւ մոտանել ՚ի Հայք , և իմացեալ Հայոց  
առաքեցին և հալածեցին զնա և սպառնա-  
ցան նմա , թէ կրկնէ զգալն՝ հրով մաշելըզ-  
նա և զզօրսն իւր : Եւ առաքեաց Խարսումա  
՚ի Պարս , և գրեաց առ թագաւորն՝ թէ ա-  
պատամբեցին Հայք ՚ի քէն : Եւ առաքեաց  
թագաւորն Պարսից ՚ի Հայս առ զօրապետն՝  
զի հրամանաւ թագաւորին իւրեանց եկես-  
ցէն ՚ի Պարս՝ թէ թագաւորն ոչ կամեսցի  
գալ . և առ թագաւորն նոյնպէս գրեաց գալ  
և պատասխանի առնել վասն հաւատոյ : Եւ  
գրեաց թագաւորն Հայոց պատասխանի և  
առէ . “Ո՞ք քեզ վասն հաւատոյ չպարտիմք  
ինչ , ոչ գալ և ոչ պատասխանել . բայց թէ  
երթաս ՚ի վերայ բարբարոսաց , մեք երիցամբք  
և խաչիւ գամք . այս է քո երդումն և մերն :  
Կայս թէ ոչ կամիս կալ ՚ի բանն քո , և ոչ  
մեք կամք ՚ի բանն մեր : <sup>(1)</sup> Եւ լռեաց թա-  
գաւորն :

(1) Աիհայէլ պատմագիր անգէտ թուի լինել պատմու-  
թեան Հայոց , քանզի ՚ի ոմին ժամանակի , այն է՝ առ Պերս-  
զիւ , մարզպանք կառավարեցին զՀայս ՚ի կողմանէ Պարսից ,  
և երեւելի էր յայնժամ Աւհան Ատամիկոնեան , Դարձեալ  
զպայման գաշինն եղեալ ՚ի մէջ Պերոզի և նախարարացն Հա-  
յոց : ոչ ուրէք գտանեմք առ պատմագիրս մեր աւանդեալ .  
Պերոզ ՚ի թախանձելս Աշուշայի Վրաց բգեշիս և Շղմէ-

ո Եւ սուրբն սատանայի և երկրորդ ջրհեղեղն աշխարհի այսու պատճառաւ ոչ եմուտ ՚ի Հայո, այլ գարձաւ ՚ի վերայ Ասորւոց վասրն բազում մեղաց մերոց։ Եւ արար երեք ժողով, ՚ի Կատիղբոն, ՚ի Գաղրի, ՚ի Գրաւմիա, և գրեաց զանօրէնութեան<sup>(1)</sup> սահմանն Աւստրի՝ կանոնս։ Եւ զու հաւանեալն սատակեր անողորմաբար, կամ նահատակիլ արժան է ասել Ճշմարտապէս՝ պայծառագոյն պատկաւ քան որ ՚ի կռապաշտիցն կատարեցան։ Քանզի՝ որպէս լեմ, եւթն հաղար և ութ հարիւր եկեղեցական եպիսկոպոս և եւրէց և սարկաւագ կատարեցան ՚ի նմանէ, և աշխարհականացն թիւ ոչ գոյ. և վասն այստիկ աղաչեմք զձեր որբութիւնդ, զի ըստ կարի երթաց ՚ի ձենջ բժիշկ ուր յաճախեաց հիւանդութիւնն, կատարելով զԱռաքելոյն թէ՝ “‘Դուք որ կարողեք, զոկարութիւնն տիսրացն բարձէք.» զի մի պակասեսցի ցուրեանն սուրբ ամենեւին հեղձեալ յորոմանցըն բաղմութենէ։ Ողջունեմք զամենայն աթուակիցս ձեր մերովք աթուակցօքս։ Ողջ լերուք ՚ի վէմն հաւատոյ ուղղափառութեան ՚ի Տէր մեր Յիսուս Քրիստոս։”

Դթուին Ասորւոց ԶԿԵ (965) և Հայոց

շապհոյ Պարսկի և այլոց միջնորդաց հետզետէ եթող յաշատութիւն զնախարարաբն առանց թէութեան, յամի 466։

(1) Յօրինակիս՝ ունիցէնութիւն։

ԴԲ (92) (1) կրկին աւերեցաւ կիսլրու ՚ի Տաճակաց . զի լուան թէ դարձեալ ժողովեցան ՚ի նա բնակիչք , և գնաց Շղղուր (Ապուել-Հավտար) զօրագլուխն Տաճկաց (Վրաբոց) և արար զնա գետնափոր և եղեւ ծակամուտ , և ինչ ՚ի նմա ոչ եթող ստացուածս , բայց սակաւ մարդիկ , յորոց երգումն առեալ եթող անդ : Խոկ Վաւի գնացեալ ՚ի Ոտդոն կղզի և առ զնա և աւերեաց . և անտի գընացեալ ՚ի Կրետէս , առ զնա վութանակի , նմանապէս և զի Վարութ և զի Խու (2) , որ են կրդ զիք ամրագոյնք , առ եալ և (ետ) քակել զնոտաւ Խոկ ՚ի Ոտդոն կղզի տեսեալ զդատկերն պղնձի մարդակերպ , որ մի էր յեւթն հրաշեցն , զոր բազում պարանօք և նգօք շրջեցին . և դտաւ չափ երկայնութեան նորա հարիւր և հինգ ոտըն , և վառեալ ՚ի ներքոյ հուր՝ թուլացան շամփուրքն և քակեցին և կապեցին երեք հազար բեռն . և գնեաց զնոսա Հրեայ մի ՚ի Հեմսայ :

Յայսմ Ժամանակի եղեւ սով սաստիկ , մինչև կերան և ընդ ոյլ գարշելիս՝ զմիմեանս Եւ ՚ի Գերմանիկէ , որ է Վարաշ , այր մի առնունն Եղիշէ բնակեր յայրի մի , և զինի սո-

(1) 965 թիւն Ասորեոց պատասխանէ 102 թուցն Հայոց :

(2) Մարութ է Արագոս կղզին , և կու է կով կղզի միշատակեալն ՚ի Գործո Առաքելոց (ԳԼ. ԻԱ. 1) , որ ՚ի Տաճկաց կոչք Գործ արտաւը :

վոյն ոչ եթող զանօրէնութիւնն , այլ գողս նացր մանկունս և ուտէր . և կարծէին զնա մինակեաց , և ինքն մխիթարէր զծնողսն ման կանցն . և յետ ուտելց նորա յիսուն և մէկ մանկունս , յայտնեցաւ և կախեցաւ : Եւ ՚ի սոյն ժամանակս հողմ ուժգին հիւսիսային եւ կեալ վլոյց բազում եկեղեցիս և բրդունս բազում , և քակեաց անտառս բազում :

Եւ յաւուրս կոստանդեայ որդւոյ Հերակլեայ երեւեցաւ այր մի ՚ի կոստանդինու պօլիս Մաքսիմոս անուն , որ խօսեցաւ հերձուածս ՚ի Քրիստոս՝ երկուս կամս և երկուս ներգործութիւնս , և ոչ ընդունեցաւ , բայց ՚ի Հռոմու ոչ արհամարհեցաւ յորժամշտան(1) : Խակյացսմ ժամանակիս յաւուրս կոստոսի թուաբնն Հերակլեայ , ՚ի կոմանա Հայոց կոմս մի անուն Յօհովորէ խնդրեաց ՚ի պատկէն Հռոմայ , որում անուն էր Ագաթոն , զի վասն այսորիկ արասցէ քննութիւնն , զի շնչնեն ասէ ումանք վասն երկու կամաց և երկու ներգործութեանց : Եւ Ագաթոն արարեալ ժողով

(1) Մաքսիմոս էր երեց վանացն Կրիստոպոլսոյ , որ խօստովանէր ՚ի Քրիստոս երկուս կամս , վասն որոյ ՚ի ժողովի ուրեք գումարելց ՚ի կոստանդինու պօլիս յամի 675 դատապարտեցաւ . և աքսորեցաւ ՚ի Լազիկէ : Զինի հնդից ամաց (680) եղեւ ժողովի կոստանդինու պօլիսի , յորում որոշակի Ընկալան դաւանել ՚ի Քրիստոս երկուս կամս և երկուս ներգործութիւնս ըստ երկուց բնութեանցն , և դատապարտեցին զմիակամադաւանսն :

հաստատեաց զհաւատոն Ամբոխմոսի յետ հարիւր քաան և հինգ ամի ժողովոյն Քաղկեդոնի, զի ասացին թէ՝ բնութեանն յատուեկ կամք պիտի եւ ներգործութիւն, և զայս ոչ զգացին յիմարեալքն այն, թէ և անձն այլ պիտի առանձինն և յատուեկ որ է Աւատորին (1)։

Ի թուին Եպօրեոց ԶԿԶ (966) և Հայոցն ԶԳ (93), և յերեսուն և եւթն ամի Երաբեկաց բռնակալութեանն, և ՚ի տամն ամի Կոստոսի և յինն ամի Աթմանայ. Աւեի զօրապետն կաղմել ետ ՚ի Տրապօլիս յոյժ բազմութիւն նաւաց՝ երթալ ՚ի Կոստանդինուպոլիս։ Եւ էին ընդ վերակացուան երկու զինուորք՝ որդիք հաւատացելոց, (որք) հանին գֆրանդ ծառացսն որ կային անդ, և սպանին զամենայն զզօրսն և այրեցին զիաւսն առ հասարակ, և ինքեանք ելեալք ՚ի մի նաւոյն՝ գնացին ՚ի Հռոմ (2)։ Եւ զայս լուեալ Աւեայ՝ արար այլ սպատրաստութիւնս նաւաց, և կազմեաց զօրս և ետ ՚ի ձեռն Եպուլուրի (Եպու-էլ-Հավուար) երթեալ ՚ի Կոստանդինուպոլիս։ Եւ զայս լըւեալ Կոստոսի, եկն ՚ի Փիւնիկէ, որ է Աքայ (3)

(1) Այս ժողով եղեւ յաւուրո կոստանդնի Պուդոնատոսի յամի 680. այն է զկնի երկերիւր քաան և ինն ամաց ժողովոյն Քաղկեդոնի, զոր թերեւս թարգմանիշք սիսալեալ են։

(2) Աւերես. յեր. 185. — Ստեփան Ասողիկ. յեր. 125—124. — Վարդան, յեր. 98.

(3) Բառքս՝ որ է Աքայ յաւելեալ թուի ՚ի Թարգմանչեն. զի ոչ ՚ի Պատղմայիս եկն կայորն, այլ մերձ ՚ի լեառն Ոլոմ պիտ որ և կոչի Փիւնիկ, մերձ ՚ի Պատղմայիս քաղաք։

և էր ընդ նմաս թեսողոսիէ եղբայր իւր բազմութեամբ նաւաց ընդ ծով եկեալ։ Եւ յորժամ գիտացին Հագարացիքն, առ եալ զնաւան ելին ընդ գէմ նոցա . և յայնմ գիշերի որ վազիւն լինելոց էր մարտն, կոչեաց կոստոս թագաւորն երազահան, և ասէ . « Տեսանեի զիս յերտոցի ՚ի թեսաղնիկէ » . Եւ ասէ երազահանն . « Ե ան թէ չէիր ննջել, ոչ զքեզ յայն տեղին տեսեալ . զի թեսաղնիկէ յաղթութեան պարգմանի<sup>(1)</sup> » . Եւ արհամարհեաց ըզբանս նորա թագաւորն, և եղեւ պատերազմ ՚ի վերաց ծովուն սաստկագոյնա՝ մինչեւ փոշին որպէս ՚ի ցամաքի պղտորէր զօդն, և յաղթեցաւ կոստոս և հազիւ վերծաւ սակաւուք . և թիւ անկելոցն զօրս գտին յեզր ծովուն՝ քսան երեք հազար արանց . Եւ կամեցան գրնալ Հագարացիքն ՚ի կոստանդինուայօխս և եկե Պաղոմէոս հրամանաւ թագաւորին և խոստացաւ տալ հարկս և ստեաց, և գնացին Հագարացիքն յերկիրն Առւրացւոց . և եկե Պաղոմէոս և երեք հարկս երեք տարւոյ, և Դրիգոր զորդին իւր պատանդ, և գնաց<sup>(2)</sup> . Եւ կոստոս վասն երկեղի թագաւորելոյ՝

(1) Թեսաղնիկէ նշանակէ ըստ Յունաց Աստուածացազլթ, այսպէս կոչեաց զայն Փիլիպպոս արքաց Մակեդոնացւոց յառնութիւն զնա յաղթութեամբ .

(2) Սեբէոս (յեր. 185—186), և այլ պատմագիրք Հայոց Պռոկոպ կոչեն զՊաղոմէոս զօրավարն Յունաց, որ կատարեաց ընդ Մաւեաց զպայման հաշտութեանն ՚ի Համասկուա

սպան զեղբայր իւր թէոդոսիէ , և եղեւ ատեցեալ յամենեցունց , և գնաց ՚ի Հռոմ . և կոչէին զնա ՚ի Հռոմայ ՚ի Կրտտանդինու պօլիս : Եւ ելեալ ՚ի Հռոմայ՝ եկն ՚ի Ախակուսա . և հաճեցաւ ընդ տեղին , և առաքեաց կոչեաց զօրդիսն , և ոչ ետուն զօրքն , այլ արարին զնոսա Եւտուկարտոր՝ զլիստանդիս , զՏիբերիս , զՀերակլ , և նստան ՚ի Կրտտանդինու պօլիս . և թագաւորն ոչ իշխեաց ելանել ՚ի Ախակուսայ , զի լեզր թէ կոչեն զիա զօրքն երկրորդ Կային՝ սպանող եղբօրն :

Եւ յայսմ ժամանակի սպանաւ Աթման թագաւորն Տաճկաց ՅԱթրասլ քաղաքի վասն պիղծ գործոց , և պատառեցաւ իշխանութիւնն յերկուս , ՚ի Շաբելսն և յԱգիպտոս : Ելի փեսայ Վահմետի թագաւորեաց ՚ի Շաբելսն և յԱյորիս , և յԱգիպտոս Վաւի թագաւորեաց : Եւ փոխեալ Վաւի զթագաւորութիւնն ՅԱթրասլոյ ՚ի Դամասոկոս , և թագաւորեաց ամս քսան : Եւ զինի եւմն ամի խաղաղութեանն գնաց Վաւի և աւերեաց ՀԴաղլատիա և զԵպիա և զԵփւթանիա :

Եւ ՚ի սոյն ժամանակս սպան Ծնդրէ ստրատելատ զլիստոս ՚ի Ախամի (1) , ՚ի ժամ քաղանեաց լուսալ զգլուխն սապոնաւ , և ՚ի փակել աշացն՝ եհար դանակաւ և մեռաւ , և թա-

(1) Կոստոս որ և Կոստանդ , սպանաւ . ՚ի Սիրակուսա քաղաքի Սիկիլոյ և ոչ ՚ի Սիրմիոն :

գաւորեցուցին զպատրիկ մի չայ աղդաւ ,  
Վէմէժ անուն , և էր բարեսլաշտն : Իսկ  
որդին Կոստոսայ Կոստանդին զօր ժողովեալ  
սպան զՎէմէժ և ինքն թագաւորեաց ընդ  
եղբարս իւր :

Եւ ՚ի սկիզբն թագաւորութեան նոցա գե-  
րեցան Ամբիկէ ՚ի Տաճկաց ութսուն հաղար  
անձինք , և գարձեալ եկին Տաճկիքն ՚ի լիւ-  
կիս (1) և կոտորեցան ՚ի Յունաց երեսուն հա-  
զար անձինք , և այս էր առաջին պարտու-  
թիւն նոցա :

Յայսմ ամի այր մի ՚ի Բալբաքոյ Կալանիկէ  
անուն , Վարի աղդաւ , առաջին իմացաւ ըլ-  
՚ափտն (2) , և այրեաց զնաւ մն ՚ի վերայ ծո-  
վուն՝ լցեալ զօրօք Տաճկաց : Եւ յայսմ ժամա-  
նակի երեւեցաւ ծիածանդ զբովանդակ գի-  
շեր մի լի երկնիւք՝ բոլորեալ և պարագրեալ  
զգունդն երկնից , և զարհուրեցաւ ամենայն  
աշխարհ :

Դյինն ամի Կոստանդիայ ելին ՚ի Յունաց  
զօրք և բնակեցան ՚ի լեառն լիբանանու և  
կոչեցան ապստամբք , և Վարիք կոչեցին ըզ-  
նոսա Շուռածանք . և առին ՚ի լիբանանու

(1) Միւս թարգմանութիւնն ունի Կէլէլիա , ըստ մեզ՝ կարծի թէ իցէ Լիւտիա գաւառ յարեւմնից Փռիւգիոյ :

(2) Կափան է նախք , այլ աստ կամի նշանակել զառնա-  
կան հուրն , որ վառէր և ՚ի մէջ չըս , որով Յոյնք յաղթող  
գտանէին ՚ի ծովամարտո՝ այրելով զնաւս թշնամեաց :

լեռնեն՝ մինչեւ ՚ի սեաւ լեառնն . և թուի  
թէ՝ այսու պատճառաւ կոչին Վրացիք Շուռ-  
ճանք<sup>(1)</sup>, զի ապատամբեցին ՚ի Հայոց ծառա-  
յութենէ և ՚ի հաւատակցութենէ: Եւ ելին  
Տաճիկք և ջնջեցին զապատամբս :

Եւ յայսմամի Յովհաննէս որդին Աէմե-  
ժայ հալածեաց զիստանդին զեւթն ամիս  
վասն սպանութեան հօրն , և ապա սպանաւ  
և ինքն: Եւ հպարտացաւ կոստանդին յաղ-  
թութեամբն , և արհամարհեաց զերկոսին  
զեղբարսն և ընկէց ՚ի թագաւորութենէ .  
և իշխանն Եւոն ասաց յնա . “Ուտամքեզ  
միայն թագաւորել:” Եւ նա կաշորօք կու-  
րացոց զզօրսն և կարել ետ զեղունն և զձեռն  
և զոտն Եւոնի: Եւ եղեւ նմա որդի և կո-  
չեաց Յուստիաննէ:

Եւ զինի Վաւեայ թագաւորեաց Տաճ-  
կաց Եզիտ որդի նորա՝ ամս երեք և ամիս  
վեց, և մեռաւ: Եւ ապատամբեաց Վուխ-  
թար ՚ի Ռաբիլսն, այր կեղծաւոր և սուտ որ  
ասէր զինքն տեսող և մարգարէ . և ՚ի Աթ-  
րաբ թագաւորեաց Աբգլա<sup>(2)</sup>: Եւ ՚ի Դա-

(1) Վիրք առ Եւրոպացիս կոչին ՃիօրՃիանո , և առ  
Մահմետականս կիւրՃիւ . իսկ Վրացիք կոչեն զինքեանս Քար-  
թուէլի, ելեալ ՚ի Քարթլոս բառէն, որ համարի առաջին նա-  
խահայր իւրեանց :

(2) Վուխթար որդի էր Ապու—Ոբէիդայ . և տիրեաց  
Քուֆայ՝ յամի 685 : Իսկ Աբգլա էր որդի Զոտէիրայ , որ  
էր Խալիֆայ Մէքքէի :

մասկոս զորդին Եղիստայ խորհեցան դնել թաւ-  
գուռոր . և Եղեն սկատերազմունք , և այր մի-  
ծեր յԱթրաբոյ (1) անկեւալ 'ի մէջ նոցա աղա-  
չէր խաղաղանալ . և ետ նոցա խրատ՝ 'ի յե-  
րեք նետ գրել երեք մարդոյ անուն , և իցէ  
յերիցն մի՛ ինքն , և ձգել զնետսն 'ի գետինն  
(և) տայցեն առնուլ զնոցանէ զմինն տղայի մի ,  
և որոյ նետն առցի՛ այն թագաւորէ : Եւ ել  
վիճակն ինքեան՝ և թագաւորեաց , որ և յետ  
ամի միոյ մեռաւ : Եւ դարձեալ բաժանե-  
ցան , բայց թագաւորեաց Աբդլմիլք որդին  
Արուանայ : Եւ յայսմ ամի մեռաւ կոստան-  
դին և թագաւորեաց Յուստիանոս որդին  
նորա : Իսկ Աբդլմիլքն նեղեալ յապստամբա-  
ցըն՝ արար սէր ընդ Յուստիանոս ամս տասն ,  
և խոստացաւ նմա տալ յամենայն ամի հա-  
զար դահեկան և ձի մի և ծառայ մի , և Վիպ-  
րոս տացէ հարկ Տաճկաց և Յունաց : Եւ  
Հայք ձեռն ետուն 'ի Յոյնա : Եւ զի երկրորդ  
անգամ բնակեցան 'ի Լիբանան երկոտասան  
հաղար ապստամբք , հանին զնոսա Հռոմա-  
յեցիք և տարան 'ի Հռոմ (2) :

(1) Այս է Մրուան որդին Հաքեմայ : որ եւ յիշեանու-  
թիւն խալիֆայութեան յամի 684 :

(2) Աբդ-ըլ-Մելք որդին Մրուանայ նեղեալ յապըս-  
տամբացն որ 'ի Լիբանան լիրին 'ի Մարդայիտաց : զար Սէ-  
րեսոս (յեր . 216) Մարդոցէք անուանէ : տեսէ ալ և զյաջող-  
ուածս Յունաց : կըռէ դաշն խաղաղութեան ընդ Յուստի-  
անոսի Բ : Աբդ-ըլ-Մելք յանձն առնու հատուցանել նմա

Իսոյն ժամանակս էր սուրբ վարդապետն Յակոբ ուռահայեցին՝ ի գաւառէն Անտիոքաց, որ ուսաւ լեզու և գիր յունարէն և երարայեցերէն, որ գնաց և եմուտ պատճառաւ ընդ հրէութեամբն, և թարգմանեաց զծածուկան Հրէիցն յասորի լեզու։ Եւ արարմեկնութիւնս բազում գրոց, և եղեւ եղիսկոպոս Աւռհայոց, և կատարեաց զկեանս իւրյերկիրն Քետնոց, ի վանսն որ կօչի սուրբ Յակոբաց։

Իսկ Աբգլայն հնազանգեաց զապտտամբարն ։ Եւ ի ժամանակին յայնմիկ գերեաց Յուստիանոս զիլիպրոս։ և եղեւ շմար ընդմիմեանս Պարսից (Արաբոց) և Հոռոմոց։ Եւ առաքեաց զինահմէտ Աբգլայն՝ զամիլացն Զ զիրոց յերկիրը<sup>(1)</sup> Հոռոմայեցւոց ի Կեսարիա։ Եւ Հոռոմէ ի վարձու առեալ զիլլաւսն, եկին պատերազմել ընդ Մահմէտ, և կոտո-

ռմ յամէ հաղար գահե կան ուկի, նժոյդ մի և ծառայ մի, և Յուստիանոս շնորհէ Ամիրային զիկս հարկացն Ախալքոսի, երկիրին Հայոց և Վրաց, նոյնպէս յանձն առնու կայուրն ազատէ զԱրարացիս յարշաւանացն Մարդայիտաց, ընդ որս անդադար ի կուռի կայր ձեռնոտութեամբ Հայոց, որոց զօրավարեր թէոգորոս Ուշտունի՝ ըստ պատմելոց Սէրեսոսի, և ի լրումն այսոր յօդուածոց գաշինն Յուստինիանոս ի բաց հանեալ ի Աերանանէ Երկոտասան հաղարս յաղստամբացն Մարդայիտաց։ յըրուէ զնոսա ի Հայոց, ի Պամիկիբա և ի թրակիա։

(1) Այս Մահմէտ էր որդի Մրուանայ եղբօր Աբդ-ըւ-Մելքը ամիրայի, որ յամէ 692—708 կառավարեաց ըզ-Միջագետու, զՀայոց և զԱստրապատական։

բեցան Հռոմայեցիք, և մնացեալ Աղլաւքն  
եղեն ընդ Տաճկաց՝ Եւթն հազար անձինք,  
և եղին զնոսա Տաճիկքն յԱնտաք և ՚ի Կու-  
րիս<sup>(1)</sup> տուեալ նոցա կանայք և ասպրանիք :

Ի ՌԶ (1006) թուին Եսորւոց և ՚ի ՑԼԳ  
(133) թուին Հայոց եկին Հռոմայեցիքն յեր-  
կիրն Ենտաքայ պատերազմել ընդ Տաճկաց,  
և կորեան ՚ի նոցանէ բազումք, և մնացեալքն  
՚ի նոցանէ փախեան . բայց և յերկոցունց  
կողմանցն անկան բազումք զառաջինն, և ա-  
պա յազմթեցան Հռոմայեցիք . և թիւ սպա-  
նելցն յերկոցուն կողմանցն գտաւ քառա-  
սուն բիւր, յերեքն Եպրիւ ամսոյ, և տեղի  
պատերազմին Պուշլրիքն, ուր մինչեւ ցայսօր  
երեւին ոսկերքն ՚ի հերկել անդաստանացն :

Ի յեւթանասուն և հինգ ամին իւրեանց  
Տաճկունք բարձին զպատկերս ՚ի դրամէ և ՚ի  
դահեկանէ, և շինեցին միայն գրով առանց  
պատկերի դահեկանս և դրամս և վող՝ վասն  
նախատանաց պատկերապաշտութեսն : Ի  
սոյն ժամանակս Յուստիանոս խատացեալ  
սպան զբազումս յիշխանացն և ՚ի զօրացն, և  
զըարեալ կալան զնա և կտրեցին զբիթն և  
եղին ՚ի բանտի, և թագաւորեցուցին զոմն  
Եւսն անուն<sup>(2)</sup> : Իսկ Եփիմիոս (Եբսիմո-  
րոս) զօրապետն որ էր ՚ի Ախլիկիա, եկին և

(1) Կուրիս քաղաք է ՚ի սահմանս Եփիմատացւոց :

(2) Աեւսնգ, Գլ, Ե, յեր, 57 :

եհան զի եւոն և ինքն թագաւորեաց . և սա հնազանդեցոյց զԱլլաւսն . և սա ելեալ ՚ի վերայ Տաճկոց յերկիրն Աամիսոն , և սպան ՚ի նոցանէ հինգ հաղօր ոյր , և առեալ աւար և գերի՝ գարձաւ :

Իսկ Աբդլս<sup>(1)</sup> կացոյց երկու զօրապետ , զԱյահմէտ և զՃաշտաջ , որք անողորմաբար կացին և վարեին զիշխանութիւնն : Այս Այահմէտ նենդիւ ժողովեաց զարքայազունսն չայց ՚ի Աախոջաւան , և ջանաց գարձուցանել ՚ի կրօնս իւր . և յոչ հաւանելն նոցա , ածեալ ՚ի մեծ եկեղեցին՝ հրովարեաց զնոսա<sup>(2)</sup> : Յայսմժամանակի գովեցաւ իմաստութեամբ և աստուածապաշտութեամբ այր մի ՚ի յիւռահա՝ Աթանաս անուն , որդի Կումայի , և տարան զնա առ Աբդլս և մեծարեաց զնա , և եղ ՚ի տան թագաւորութեան իւրոյ մատակարար և վերակացու տան և ամենայն ընչից իւրոց . և տայր նմա յամենայն ամի վաթուն հաղար գահեկան , և թիւ զօրացն տային նըմա ամեն մին՝ դահեկան մի ՚ի տարին : Եւ սա արար բազում գիւրութիւնն քրիստոնէից ուղղափառաց : Եւ սա շինեաց յիւռհա երկուս եկեղեցիս , զմինն յանուն Աստուածած-

(1) Կոչե սա և Աբդլս—Աբդլէր :

(2) Ակեւոնդ գլ . Զ . յեր . 56.—Ստեփ . Ասողիկ , Գիրք Բ . գլ . Դ . յեր . 127.—Յովհ . Կաթ . գլ . Իւ . յեր . 125.—Սամուէլ :—Վարդան , յեր . 99.—Կիրակոս , յեր . 57 .

Նին և միւս եւս յանուն սուրբ Յօհովորոսին, բերեալ զնշխարս նորայի շխայիտոյ՝ որ է Ազ լոթայն<sup>(1)</sup> և եդ անդ։ Եւ ՚ի մէջ երկու եկեղեւ ցւոյն շինեաց գետնափոր տեղի՝ Դաստառակին, և գնեաց զսուրբ Դաստառակին ՚ի Տաճեաց ՚ի յիսուն հազար դահեկան, զի ընդ իշխանութեամբ նոցա էր յայնժամ, և եդ զայն անդ ՚ի ծածուկ. և իջանէին սանդզօք և ՚ի տօնին հանէին ՚ի տեօիլ ժողովրդոցն, մինչեւ ՚ի ժամանակս Յավհաննէս պատրիարքին, և նա ամփոփեաց եւս խորագոյնս, եղեալ ՚ի մէջ վիմաց, և ոչուրեք գտանի. որ և գրեաց իսկ ճշմարտապէս որ ամփոփեացն թէ՝ «Ես պահեցի առանց գտանելոյ վասն երկեղի տնօրինացն.» և թէ՝ որ է զոր Հռոմայեցիք ունին, ոչ գիտեմք։

Եւ յայսմ ժամանակի թագաւորեաց Արդըլըբին որդին Վասրամա յերկրին Ալնըքոյ, որ է Հալպ։ Ի տասն և ինն ամին իւրոյ Արդըլըբը առաքեաց զՎալիմ<sup>(2)</sup> ՚ի վերայ Վանուեստիոյ և առ զնոսա։

(1) Ասպասթայն է Ասպագա կոչեցեալն ՚ի հնոց, որ հասարակ անուամբ Եւխայիտա ճանաչի. և է զիւղ ՚ի սահմանս Ամասիոյ Փոնտացւոց, ուր ծնաւ սուրբն Յօհովորոս ստրանելոդ, և անդ ամփոփեացւ մարմին նորա։

(2) Մալամա կամ Մոլիմ, ըստ Յունաց՝ Մասալմաս. Էր արդարեւ որդի Արդըլըլ-Մելեքայ, որ վարեաց զկնի եզրոյ իւրոյ Վլթայ՝ զիշխանութիւնն խալիքայութեան, և ըստ կարգի պատմութեանն համարի եթէ առ կենդանու-

Եւ 'ի սոյն ամի ել Յօւստիանոս 'ի բանատէն զկնի տասն ամի արգելմանն , և դնաց առ Խաղան թագաւորն Խաղաց . և նա խընդութեամբ ընկալաւ զնա , և ետ զդուսոր իւր նմա 'ի կնութիւն . և ձեռն ետ 'ի Շուշ զարսն , և եկն 'ի Կրոտանդինուպօլիս և Եփիմրոս (Վրսիմարոս) վախեաւ , և զլ եւոն սպան և զբազումս կոտորեաց յարքունեաց և զայլն աքսորեաց , և արար զարքունիսն դատարկո . և գտեալ վեց հազար Տաճիկ գերի ազատեաց գնալ խաղաղութեամբ : Եւ բազում զօրս առաքեաց 'ի խնդիր կնոջն և խեղդեցան յալիս ծովուն . և լուեալ Խաղան տրումեցաւ և առաքեաց մեղադրեաց նմա և ասէ . “ Անմիտ , ընդէ՞ր բազմութիւն զօրաց առաքեալ 'ի խնդիր կնոջ քո . կարծէիր թէ արգելուլ կամիմ . արդ առաքեա սակաւ և առ զնա : ” Եւ լուեալ ուրախացաւ , և առ

թեամբ հօրն վարեաց և զպաշոն զօրավարութեան նոյնպէս և եղբարցն Վլիմայ և Սիւլյամանայ : Ղեւոնդ զրէ , թէ Սիւլյաման յորժամ վիխանորդեաց զիշխանութիւնն , առաքեաց զՄալիմ զօրավար 'ի գրունս կառից 'ի Դարբանդ (Գլ . Զ . յեր . 64) : Յովհաննէս կաթողիկոս ( 'ի պատմութան Գլ . ԻԱ . յեր . 126) : Վլիմակիման անուանէ , եթէ չիցէ խանդարեալ յօրինակչաց , զօր մարթ է ընթեռնուլ Մասլաման և Սուլյաման , բայց յետինն ուղղագոյն երեւի . քանզի յաջօրդ գնէ զնա Վլիմայ Տես և 'ի Մայնէս կաղանկայտուացի (Հառ . յեր . 46) : — Ստեփան Ասողիկ (յեր . 126) , որ զրէ համաձայն Ղեւոնդայու — իսկ կիրակոս (յեր . 57 . տիսդ Մոսկուայ ) Սուլյաման , ասէ : առ զԴարբանդ :

ռաքեաց երեր զկինն իւր և զորդին Տիբերիս (1) :

Ի թուին Ըստրոյ ՌժԵ (1015) և Հայոց ՃՃԲ (152) (2) և շինեաց Վալիմն զՎանուեստիա ընդարձակի՝ բարձր և տմուր պարսպով, և կացոյց ՚ի նմա զօրս՝ կալ ընդդէմ Հառմայեցւոցն : Եւ ՚ի սոյն ամի մեռաւ Վրդլմիքն և Թաղաւորեաց Վ լիթ ամս ինն և ամիսս հինգ : Յայսմ ժամանակի հալածեաց Յուստիանոս զազդս Հայոց յիշսանութենէն իւր ՚ի ձեռն Փիլիպիկոսի, և խնդութեամբ ընկալան զնոսա Տաճիկք ՚ի Վելտինի և ՚ի Վեջագետու : Եւ եղեւ մեծ ամրութիւն ուղղափառաց Ըստրոյ՝ կալով ընդդէմ երկաքնակացն, և շինեցան վանորայք և անապատք և գիւղօրէք Հայաստանեայց, և կան մինչեւ ցայսօր :

Իսկ անօրէնն Վահմէտ յարոյց սաստիկ հալածանս հաւատացեալ Վրաբկացն, և ըմ-

(1) Յուստիանոս փախուցեալ առ Թագաւորն Խաղբաց, ամուսնացաւ ընդ դստեր նորս թեոդորայ, յորմէ եղեւ Տիբերիս : Իսկ Աբսիմար երկուցեալ ՚ի նիզակակցութենէ նոցա, խորհեցաւ կաշառել զմագաւորն Խաղբաց առ ՚ի սպանանէլ զՅուստինիանս : որոյ խմացեալ փախեաւ առ Բուլղարս, և առեալ ՚ի նոցանէ յօգնականութիւն հնգետասան հալար զօրս, դիմեաց ՚ի վերայ կոստանդինու պօլսի և առ զայն : (Յ.Էռփանէս, յեր . 312—Նիկե փոր, յեր . 27): Վեւոնդ՝ խաբանայ զօրօքն, առէ, եկեալ և տիբեր կոստանդինու պօլսի : յեր . 38 :

(2) Յօրինակին ճիշդ :

բրոնեաց զգլսաւորն նոցա և չարչարեաց աղդի ազգի հարուածօք վասն հաւատոյ և սպան զիա , և ձգեցաւ մարմին նորա զաւուրս երեսուն , և ոչ հոտեցաւ և ոչ մերձեցաւ թռչուն և ոչ գաղան , և յամօթ եղեւ Ամհմէտ : Եւ հաստատեցան քրիստոնեայքն ՚ի մեռանելն նահատակութեամբ վասն անուանն Քրիստոսի՝ բազմութիւն յոյժ . և նա անխնայ կոտորէր :

Ի սոյն ժամանակս գնաց Խալիմ յերկիրն կապադովկացւոց և սպանին ՚ի Հռոմայեցւոց քառասուն հազար անձինս ՚ի զօրացն Յուստիանեաց . և առին զՅօնա (Յիանա) քաղաք և առ Խալիմ զՃարանդա , և եկեալ ՚ի Կիլիկիա առ զՃռճօմ և զՊաւտանդա , և այլ բազում քաղաքս . և զօրն Տաճկաց կոյր ՚ի Տարանդա յայնմհետէ : Իսկ Փիլիպիկոս սպանեալ զՅուստիանոս և զՃիբերիոս որդի նորա , և թագաւորեաց ինքն : Եւ ՚ի սոյն աւուրս ել հրաման ՚ի Վլթայ՝ զքրիստոնեայս ածել յեկեղեցի և սպանանել եթէ ոչ ուրանան ՚ի հաւատոց . և անթիւ կոտորեցան ՚ի հրամանէ նորա ՚ի Քրիստոս հաւատացեալ : Եւ Փիլիկոս (Փիլիպիկոս) թագաւոր վարժեալ էր գրովք սրբովք , այլ և արտաքնոցն ես . սա ջանաց և արհամարհեաց զվեցերորդ ժողովն զաղանդն Վաքսիմոսի , և ոչ կամեցան խմորեալքն յաղանդն : Ի սոյն ժամա-

նակս առ Անդիմ զիշմասիա, և առին զինտիոք  
Պիսիգեայ. և յետ երկու ամին թագաւորե-  
ցա Փիլիկատոսի, հանին զաշ նորա և աքսորե-  
ցին, և թագաւորեաց Անաստաս ամս երկու-  
էւ մեռաւ Վլիթ և թագաւորեաց Առոլի-  
ման ամս երկու: Էւ ՚ի սցն ամի առ Անդիմ  
զերկիրն Գաղատացւոց և զբերդսն որ ՚ի նմա:  
Էւ առաքեաց Անաստաս զօր ՚ի կողմն արեւ-  
մոխց, որ և ամփոխեալք սպանին զօրսպլուխն  
իւրեանց. և թագաւորեցուցին զիօնէոդո-  
սիէ, և փախեաւ Անաստաս ՚ի Նիկիա:

Էւ Անդիմ գնաց յերկիրն թուրքաց և  
դարձաւ բազում աւարաւ. և գնաց ՚ի վերսց  
Ըսիոյ և առ զիշրայքմիա(Պերգամոն)և զի արդիա  
և գերեաց: Էւ հաղարտացեալ Անդիմ և ժողո-  
վեալ երկու հարիւր հաղար հեծեալ և հինգ  
հաղար նաւ լի սպառազինօք, և առ ընդ իւր  
այլ եւս երկոտասան հաղար զօր ՚ի Առուղա-  
րաց, և վեց հաղար ուղտ և վեց հաղար էշ  
բարձեալ կերակրօք եւ պատրաստութիւն  
բազում ամաց. և եղ զօրագլուխ զիմար և  
երդուաւ բակել զիտստանդինուազօլիս. և  
կային ընդ նմա զեհիդք (1) երեսուն հաղար.  
և եղեն երկու բանակ, մինն ընդ ծով և միւսն  
ընդ ցամաք: Էւ Լեւոն զօրագլուխն թէո-  
գոսիէ (2) եկն առ Անդիմ և եղ ընդ նա ուխտ

(1) Զէհիդ նշանակէ աստ՝ կամաւոր զինուոր:

(2) Թէոգոսիէ, ընթերցիք թէոգոսեաց: Մատենագիրք

Վալիմ, որ թէ առնու գքաղաքն, զնա դիցէ թագաւոր. և եմուտ (¶ ևոն)՝ կ կոստանդինու պօլիս : Եւ Տաճկունքը ընդ որ գաւառ և ընդ քաղաք անցանէին, տային բան խաղաղութեւ Եւ ինքն Առւլիման թագաւորն եկն զկնի նոցա երկոտասան հազարաւ, և նստաւ ՚ի Նիկիա, և սղարեաց զնա : Խակ թագաւորն թէոդո սիոս իմացաւ զսուտն Եւսնի, և կալու զընտանիս նորա և արկ ՚ի յարդելս . և Եւսն փախեաւ և եկի առ Առւլիման, և առ վեց հազար հեծել իջաւ ՚ի վերայ Կմուրին<sup>(1)</sup> և ասաց ընդ քաղաքն գազա երդմամբ թէ ։ Նենգութեամբ շրջիմ ընդ սոցա : „ Եւ նոքա գնացին բերին զընտանիս և ետուն ցնա . և սկսան գնալ ՚ի կոստանդինու պօլիս երկորեան կողմանքն . և ՚ի յառաջանալն նոցա Ելն զօրք քաղաքին ընդառաջ Եւսնի եւ հնագանդեցան նմա, և տուին ՚ի ձեռս նորա զրդին թէոդոսի և քարոզեցին թագաւոր, և դարձան ՚ի քաղաքն : Եւ լուաւ թէոդոս և գերծեաց զգլուխն և եղեւ եկեղեցական : Եւ Եւսն թագաւորեաց, և լուեալ Առւլիման խնդաց՝ կարծելով թէ տայ զքա ժԱ. ժԲ. դարուց զյատուկ անուանոն վերջառուեալս ՚ի է, ՚ի գործ ածեն և փոխանակ սեռականի . ՚ի տեղի ևայ մաս նկան որպէս զաղեստինէ, խորիանէ . առ որս մեք յաւելաք ուրեք զտառն է :

(1) Ամուր կամ Ամորիոն կամ Ամորիս է քաղաք ՚ի գաղատիա :

դոքն ՚ի ձեռս նորա . և նա սկսաւ խաբել զնա բանիւք , և ամրութիւն տռներ քաղաքին . և գիտաց Վալիմ թէ խաբէ զնա , և անց ՚ի միւս կողմն և զօրքն երթային տռաջի , և ինքն չորս հազարօք զինի , և ելին ՚ի վերաց նորա Ռուլզարք վարձաւորք և կոսորեցին զշորս հաղարսն , և զերծաւ Վալիմ , և էանց ՚ի միւս բանակն . և բախւեցին զօրքն Տաճկաց յարեւմտից կողմն քաղաքին հանդէպ Ասկի ՚իրանն . և կային ՚ի ծովու կողմանէն երեսուն հազար արտնց որ պահէին զնաւսն , և քսան հազար պահէին ՚ի Ռուլզարաց կողմանէ , և պատերազմէին ՚ի ծովէ և ՚ի ցամաքէ ընդ քաղաքին . և ելեալ Ռուլզարք յոլովս կոսորեցին ՚ի Տաճկաց : Եւ երկեան Տաճիկքն զի եհաս ձմեռնն , և էառ զնոսա տարակյա տհի ՚ի ծովէն և ՚ի Ռուլզարացն և ՚ի քաղաքէն . և եղեւ սով ՚ի Տաճիկքն որ ուտէին զաղք և ըմպէին զմէզիւրեանց : Եւ մինչ յայս նեղութիւնս կային , մեռաւ Առւլման թագաւորն Տաճկաց , և առ զմագաւորութիւնն Ամար , և առաքեաց առ Վալիմն թողուլ զքաղաքն և երթալ . և դարձաւ սակաւուք և այլքն ջնջեցան սովով : Եւ յայնմ հետէ Ամար<sup>(1)</sup> սկսաւ նեղել զքրիստոնեայսն վասն քինու՝ թէ զօրք նորա անցան (ջնջեցան)

(1) Միւս թարգմանութիւնն Մոլիմայ առէ նեղել զքրիստոնեայս ՚ի վրէժ քինու սպանման զօրաց իւրոց :

՚ի պատճառու նոցա , և ջանայր դարձուցա-  
նել ՚ի կրօնս իւր :

Եւ յայսմ ժամանակի այր մի Աեւերոս  
անուն , Ասորի ազգաւ , սկսաւ ասել ընդ  
Հրեայսն՝ թէ « Ես եմ Քրիստոսն . ժողովե-  
ցէք ինչս , որպէս զի պատրաստեմ զօրս և  
երթամբ թագաւորեմք յԱրուսաղեմ : » Եւ  
հաւատացին ՚ի նա , և ժողովեցին գանձս  
բազում . և իմացեալ Ամարսյ կոչեաց ըզ-  
նա և առ զժողովեալ գանձն և եթող զնա :  
Եւ այս Ամարս եղ օրէնս չառնուլ դքրիս-  
տոնէին վկայութիւնն , և ոչ հեծնուլ քրիստո-  
նէին ՚ի թամբօք գրաստ . և թէ սպանանէ  
Տաճիկն դքրիստոնեայն , ոչ մեռանի վասն  
նորա , այլ տայ զարեան գինքն հազար դրամ :  
Եւ ազատ արար զեկողեցականսն ՚ի հարկէ ,  
որ ոչ տան յամենայն ստացուածոց իւրեանց  
՚ի յարքունիս : Եւ սա եղ օրէնս ոչ ըմակել  
գինի Տաճկի :

Եւ մեռեալ սորս՝ թագաւորեաց Իզիտ ա-  
մրս չորս : Ի վերայ սորս ապստամբեաց այր մի  
՚ի Հեր , որ ասէին և նմա Իզիտ , և յոլովք  
եղեն ընդ նմա , և առաքեաց Իզիտ թագա-  
ւորն և սպանին զնա : Ի սոյն ժամանակս բա-  
զում աշխարհ անմարդ եղեւ ՚ի սովոյ՝ ՚ի գալ  
մարախոյ : Այս Իզիտ առաքեաց ընդ ամե-  
նայն երկիր ջնջել զպատկերս յեկեղեցեաց ,  
՚ի հանդերձից , ՚ի գրոց և յամենայն իրաց :

Այս եւ և կերոն ջնջեաց յեկեղեցեացն Հռոմացւոց . և եղեւ տրատէնջ զնմանէ , և յարաց հալածանս ՚ի վերայ ամենայն ազգ մարդոց որք ոչ դաւանեն զնօրայն , և բազում Հրեայք մկրտեցան և եղեն քրիստոնեայք և այլքն փախեան : Եւ մեռաւ Խզիս և թագաւորեաց Հեշմ ամս ինն և տասն . և էր նեղիչ և հարկադահանջ : Եւ սա եհան յշփառաս գետոց ջուր ՚ի վեր քան զիալանիկէ՝ ու սոգանել զդաշտու : Եւ սա գնացեալ ՚ի Նիւտիւսարն , և առ զնաւ . և առին ՚ի նոյն ամբ զանառիկ բերդն յերկիրն Ալիլիլիոյ , որ կոչել է իզէ (Ըիկութին<sup>0</sup>) :

Յայտմ ժամանեակի էր Աթանաս պատրիարքն Յատիոբայ Ասորւոց և Յովհաննէս հայրապետն Հայոց (1) . և կողմանիրն Աթապուրականի և Ասոնց և Այուանք և Աիւնիք և Յակոբիկ Յոորիք էին ՚ի մի դաւանութիւն առաքելական հիմամբ : Եւ վասն այնորիկ էր Թային Յոորիք առ կաթողիկոսն Հայոց և առէին . Այնք ՚ի սուրբ Գրիգորի դաւանութիւն եմք . ո և առնութին ձեռնադրութի . և չկայր հակառակութիւն ՚ի նոսաւ : Եւ յայնմ ժամանակի երեց մի հարշապուհ անուն և սարկաւագ մի Գաբրիէլ անուն ՚ի Առքիարինայ , եղեն բանսարկուք ՚ի մէջ Հայոց և Ասորւոց .

(1) Նա ինքն է Յովհաննէս կաթողիկոս Օձեւցի . Ամառապեր կոչեցեալ :

գնային և ասէին ընդ կաթողիկոսն Հայոց ,  
թէ « Յակոբիկըն զմարմինն Քրիստոսի ա-  
պականացու ասեն . » և գային առ Աթանաս  
և ասէին , թէ « Հայք Յուլիանոսք են : »  
Եւ գրեցին առ իրեարա երկու պատրիարքքն  
Հայոց և Կոորւոց՝ մեղաղըութիւնս : Եւ ա-  
պա խնդրեցին դաւանութիւնս ՚ի միմեանց .  
և գրեցին դաւանութիւն և տեսին՝ զի մի եւ  
ին երկուցն , բայց յոմանս մնացեալ էր պըշ-  
տորումն Եզրայ : Իսկ Յովհաննէս պատրի-  
արքն Հանդիսիւ ՚ի գեղաքաղսքն Վանծ-  
կերտ՝ յերկ ւց կողմանց՝ Հայոց և Կոորւոց .  
և արարին քննութիւն ուղղափառութեամք ,  
և բանսարկուքն՝ երէցն և սարկաւագն Յու-  
լիանիոսք <sup>(1)</sup> . և չկայր ինչ մէջ ընդ Հայք և  
ընդ Կոորիք , բայց միայն արարողութիւնս՝  
որ չարարին ոչինչ փայթ : Բայց ոմանք յԿոոր-  
ւոց ասացին , թէ ՚ի Գործս առաքելոցն գր-  
քալէ թէ՝ « Կոստուած յարսց զՅիսուս ՚ի  
մեռելոց , և այսուեւու ոչ դառնայ յապա-  
կանութիւնն <sup>(2)</sup> : » Եւ արտօմեցաւ հայրապետն  
Հայոց , և ասաց թէ՝ « Երդ այնպիսի է , որ  
թէ նախ ապականացու եր : » Եւ Խոդրեաց

(1) Բառքս՝ և Շահարիուան՝ երեցն և առքիսաւին Յուլիանիոսք  
առելորդ թուին , և թէ շղուցէ այլ բառ կամ բայց պակաս :

(2) Գործք Առաքելոց . Բ . 51 . 52 .

զօրինակն Հայոց, և գտաւ ճշմարիտն՝ որպէս և էրն, և բերեալ զԴ' սորւոցն՝ նոյնպէս գրտին. և այն որ ասէին թէ՝ « Եյտ-հեռէ ոչ դառնայ յապականութիւն, ոչ չգտաւ ուրեք գրեալ. և ամաչեաց տգիտութիւն նոյա, և ուրախ եղեն. և զթիւրութիւնն Եզրայ որ ՚ի սակաւս մնացեալ էր, ուղղեցին. Եւ ըղիարշապուհ և զԴ' աբրիէլ նղովեցին. և եւ դին դաշն սիրոյ և խաղաղութեան չառնուլ չարախօսութիւն ՚ի միմեանց Հայք և Եպորիք. Եւ եղեւ սյս ՚ի թուին Հայոց ձկն (164)<sup>(1)</sup>, և յԴ' սորւոցն ՚ի Ռւէ (1035)<sup>(2)</sup>:

Յայսմ ամի ապստամբեաց Եղիպտոս ՚ի Տաճկաց, և գնաց Տաճկին և սպառեաց ըղնոսա, զի որք զերծանն ՚ի կոտորածէն, ՚ի նումուեալ փախեան. Եւ ՚ի գալ ամին ել թուրքըն յերկիրն Տաճկաց յԱրտուղին<sup>(3)</sup> և առին քաղաքս քաղումս. և այս է սկիզբն ելանելց թուրքացն<sup>(4)</sup>. Եւ գնաց ընդդէմնոցա Արա-

(1) Միւս թարգմանութիւնն գնէ ձկջ, կամ ձւէ. որ երեքեան եւս սիսալ են, քանզի ըստ պատմելց Սամուէլի և Կիրսկոսի Գանձակիեցւոյ (յեր. 38—39) ժողովս այս Մանազկերտի եղեւ ՚ի թուին Հայոց ձկն (175):

(2) Կիրակոս, յեր. 38.

(3) Արտուղին է Ատրպատական երկիրն, յորում է քաղաքն Արտաւիլ, և թերեւս զայս քաղաք կամի ցուցանել Միիսցէլ. Ղեւոնդ յիշատակէ զթարգու քաղաք, ուր երթեալ բանակեցաւ, ասէ, Մոլիմ. (յեր. 65):

(4) Թուրքն իմա աստ զխաղիրքն կամ զՍկիւթացիս, որ են թաթարք, ՚ի հիւսիսակողմն կովկասու:

լիմ, և յերկուց կողմանցն անկան հաղարք և բիւրք : Եւ ապա արարին սէր քաղաքաւն զոր առեալ էին թուրքներն (1), զի թողին զայն նոցա և ինքեանք դարձան :

Եւ ՚ի սոյն ամի եղեւ անձրեւ սաստիկ, որ թուէր բանաւլ սահանաց երկնից . և վերստին վկոց զպարիսպն Ուռհայոյ և տարաւ զբաղաքն : Եւ ՚ի գալ ամին գնացին Տաճիկքըն յերկիրն Հռոմայեցւոց և առին զՃենճերս (2) քաղաք և զՃիկիս և քակեցին զնա . և ել հրաման ՚ի Հէշմայ սպանանել զամենայն գերեալսն . և եղեն քննութիւն յՈւռհա վասն սպանելոցն թէ վկայք են՝ թէ ոչ, և ոչ յայտնեցաւ ճշմարիտն :

Եւ ոն թագաւորն Հռոմայոց ա՛ռ զգուստրն խաղանաց խազրաց թագաւորին՝ կիւն որդւոց իւրոյ կոստանդիանոսի (Ե), մկրտեալ

(1) Միւս թարգմանութիւնն ասէ, Տաճիկքն (Արաբացիք) թողին խազրաց զառեալ քաղաքսն . իսկ աստ իմանի ընդհակառակն խազրաց թողուլ զքաղաքս ՚ի ծեռա Արաբացւոց, Քանզի տուէ Մովուէս կազանկայտուացի (Հու. Բ. յեր. 46) եթէ ջառահ որդի Արգրլսահայ, յամի Տեառն 729. Երկրորդ անգամ մտեալ զօրք ՚ի խազիրս, սպանաւ յԱսորդինայ . և ՚ի թուրին Հայոց 22, (751) դարձեալ Մալիման շինէ զԴարբանդ յանուն Տաճկաց : Սամուէլ Սուլիման կոշէ զՄոլին : Տես և ՚ի գիրս Հեւոնդայ, յեր. 64, և 131-152, ուր անունդ ջառահ փոխեալ է ՚ի Հարաշի, կամ Աէժ Հարաշի, որ է Սայիտ ջառահ :

(2) Ճենձերաէ Գանդր քաղաք, այն է Չոնչը ըստ Տաճկաց :

զետ նախ, և ետ զթագաւորութիւնն որդւոյ իւրոյ : Եւ մեռաւ լ եւսն թագաւորեալ ամբա քսան և չորս : Եւ Արտաւազ(1) փեսոց թագաւորին աղստամբեալ եմուտ ՚ի Կոստանդինուագօլիս . և Կոստանդին փախեաւ յԱնառոլիկոն (յԱնառոլիան<sup>2</sup>), և խոստացան օդնել նմա , և եկն յԱմուրին քաղաքն մեռնել<sup>(2)</sup>: Եւ լուաւ Արտաւազ, զօր ժողովեալ և ՚ի վերոյ Կոստանդիանոսի գնաց , և եհար և փախոց զետ , և մնացեալքն եկին առ Արտաւազ : և թագաւորեաց Արտաւազ :

Իսկ Հեշմ զինի իննետանն ամի թագաւորութեանն իւրոյ մեռաւ : Եւ թագաւորեաց Վլիմ , և արար չար տանն Հեշմոյ : և արար զօրապետ իւր՝ զլքաս , և էարկ ըղնա յոսկի և ՚ի գանձ թագաւորութեանն Տաճկաց իբրեւ ՚ի ծով . որ և զամենայնն բաշխեալ զօրացն՝ առ զթագաւորութիւնն . բայց ոչ ընդունեին զետ յոլովք , զի հարճորդի էր<sup>(3)</sup> , և Վլիմ չարագործ և գինարք էր և ոչ զետ ընդունեին : Եւ թագաւորեցուցին դիղիտ եղբայր (հօր եղբօրորդի) սոցա ՚ի ՚Իամամկոս . և նա առաքեաց կորեաց զգլուխ եղբօրն<sup>(4)</sup> , և ցցեալ ՚ի ցից զգլուխ եղբօրն ,

(1) Արտաւազդ էր Հայ աղջաւ , և սիրեցեալ յաշա Լեռնի տուեալ էր նմա զգոււստը իւր Աննա :

(2) Ծներեւո՞ յիշեւ :

(3) Արքան էր բնական օրդի իզիտի և եղբայր Վելիմայր :

(4) Ղեւմոդ (Գլ. Ը. յեր . 146) այսպէս պատմէ բայ-

և տկով գինի շրջեցուցանէին ընդ քաղաքն : Եւ յետ այնորիկ յարեան ՚ի վերայ միմեանց ամիրացքն ամենայն խնդրելով իւրեանց թագաւորութիւն, և կոսորէին զմիմեանս . զերկիլն Պարսից Վահիդն էառ , և Մըուան ըզշայս , և զիորասաան Ասրիգ . և զ՛վրիկէ Երդլէհ (Վաղու-Վուտիլ) . և Խղիան զինի հինգ ամսոց մեռու . և առ զտեղին Երէհիմ (Խոպրահիմ) . այր բարեբարոյ և ողորմասիրու : Եւ առ զինի սակաւուց մեռաւ : Եւ ելեալ Մըուան ՚ի Հայոց՝ հանդիպեցաւ եղբօրն Խուզմանայ ՚ի վերայ Հափրատայ , և ՚ի մէջ նոցտ սպանան Երկուտասան հազար այր . և փախեաւ Խուզման յԱրուծափ , և Մըուան եկն ՚ի Գամսոկոս և թագաւորեաց . և առեալ զգանձ թագաւորութեանն երեք հազար բեռն ուղարու , երեր ՚ի խառան . և ապա գնաց ՚ի Հէմա և էառ զնայամիս չորս : Եւ քակեաց զպարիստն Բաղրաքոն : Եւ գնաց յԱթօւր՝ որ է Ախնուէ , և ՚ի Պարթեւո՝ որ է Բահլ : Եւ Երդլա Ալէ (Ալեայ) որդին եկն ՚ի խորասանայ<sup>(1)</sup> ՚ի վերայ մահ Վէլիտայ . և Համստոհմ նախարարացն առեսեալ զգործ իշխաննեն իւրեանց . զի վարէր անպիտան զազքալից պղծութեամբք . հարցին ցհաւատարիսմ հաւատայն իւրեանց որ անուանին կուռայք (կարդացոՂք) . . . . և ըստ հրամանին նոցա մտեալ յարքունական ապարանս՝ գտին զնա թմբրեալ զննեցելութեամբ : և սպանին զնա սրով : Տես և ՚ի Ստեֆան Ասողիկ : յեր . 153 : —Վարդան : յեր . 102 :

(1) Միւս թարգմանութիւնն ունի այսպես . “Եւ Ան

Աղաբայ՝ որ է գետ Աթուրայ, որ նա ինքն է Տիգրիս, և փախեաւ Արուան և առին Պըտոցիքն (ազդ Արաբաց) ՚ի Արուանայ եւլին հարիւր բեռն դահեկան և դրամ<sup>(1)</sup>:

Եւ Կոստանդիանոս առեալ զօդնականս իւր եկն ՚ի Կոստանդինուպոլիս, և եհան զաշն Արտաւազայ և աքսորեաց, և ինքն հաստատեցաւ. և եղեւ նմա որդի և կոչեաց զնայանուն հօր իւրոյ Եւսոն: Եւ ՚ի Տաճկաց պատերազմիլն խաղաղացան Հռոմայեցիքն, եւս առաւել Հայք: Եւ ՚ի ժամանակս յայս եղեն նշան մեծամեծք ՚ի Արտի ամսեան մինչեւ ՚ի Ապրիլ. օդդ հող և փոշի տեղաց և տիւն գիշեր թուեր: Եւ ապա երեւեցան երեք սիւնք ամսկեղէնք հրախառն ՚ի կողմն հիւսիսց երեք օր, և ելանէին ՚ի վեր և իջանէին ՚ի խոնարհ: Եւ զինի այնք երեւեցաւ

որդին գնաց ՚ի Խորասան:

(1) Զայս կոտորած զոր ետուն զօրք Խորասանայ ամիբապետին Մրուանայ, յորում և մեռաւ իսկ, յիշէ և Ղեւոնդ (Գ.Լ. Ը. Ա. յեր. 157—158), որ Եղեւ ասէ ՚ի ձեռն Աբդլայի. որոյ հասեալ մինչեւ յԱկողա, որ թուի թէ նշանակիցէ զբուֆա քաղաք մերձ ՚ի Բագդատ, և գիտ ձեռն օդնականութեան և ՚ի բնակչաց տեղւոյն, այն է Պետուիքն: (Տես և ՚ի Ստեփան Ասողիկի յեր. 154): Այս Աբդլա՛ էր Ապուլ Աբրաս Աբդալլահ Էս—Սաֆֆահ կոչեցեան, որդի Մահմետի, որդւոյ Ալեայ. և յանուն սորա կոչեցաւ հարոտութիւնն Աբրասեան, և էր իշխան Պարսկաստանի և Իրաբայ՝ յորժամ հրատարակեաց զինքն խալիֆա յամի 750, և մեռաւ զինի չորից ամաց:

աստղ մի անծանօթ՝ լուսնին չափ , ամեն առաւօտ ելանէր յարեւելից և գնայր յարեւմուտս՝ զտիւն ամենայն տեսանելով մարդկան։ Եւ լինէին ցոլմունք աստեղաց զամենայն գիշեր որ թռչէին ընդդէմ յարդգողին (1)։ Եւ յետ այսորիկ եղեւ շարժ սաստիկ , և պատառեալ երկիրի ելին աղքիւրք՝ ի գոյն արեան։ և զկնի այնորիմկ խառնակումն մեծ եղեւ ՚ի վերայ ծովուն մեծի , և բարձրանայր ալին և թռւէր մերձ առ երկինքն վերացեալեւ եռայր որպէս ՚ի կաթսայս . և բազում մարդիկ և անասունք մեռան ՚ի ճայթմանէ որոտմանն որ առ ծովեղերքն կային։ Եւ բերդ մի որդւոցն (Նմոնայ՝ որ կայր ՚ի ծովու , և ջերմուկն որ գտաւ յաւուրս Աաղովմանի ՚ի ծովուն և շննեաց ՚ի վերայ նորա Աաղովման բուրգն և պատրաստութիւն յոլով , այն փլաւ և ընկըդմեցաւ։ Եւ եղեւ յետ այնորիկ սով սաստիկ , և ապա մահտարաժամ փողացաւութեամք , որ ՚ի Շասրա քաղաք մեռանէր յաւուրն քսան հաղար անձինք։ Եւ լուաք թէ՝ յերկիրն Աաղիամու կատաղեցան կապիկը և բազում վեասս գործէին՝ ապականելով զմարդ և ղանասուն։ Եւ զայս ամենայն տեսաւլ Արուան թագաւորն Դամասկոսի , որ փոխեաց զարքունիսն իւր ՚ի խառան , զղացաւ և անկաւ

(1) Աամուէլասէ , ՚ի թռւին Հայոց Մթ . և Փրկչին 762. Երկու աստեղք երեւեցան . մի յարեւելու և մի յարեւմուտս

մահ՝ ի վերաց նորա , և գրեաց ընդ ամենայն  
տեղիս ապաշխարութիւն . և սասանեցաւ  
երկիր և յորդեցին արտասուքը և հսկմունք և  
ազօթք ամենայն ուրեք , զի կարծէին թէ  
հասեալ է կատարած աշխարհի յազգի ազգի  
նորանշան պատուհասիցն . քանզի նորանշան  
հրաշք լինէին , մինչ զի գեղ մի յոտն լերինն  
ֆափորաց ՚ի շարժմանէն յիւր տեղացն ՚ի  
բաց վաշեաց երկու միլ և ինչ ոչ խախտե-  
ցաւ շնուռած , և ոչ պակասեաց հաւ մի . և  
Ո՞ւրեմն քաղաք ընկղմեցաւ ՚ի տեղւոջ իւ-  
րում : Եւ ՚ի կատանդինու տօլսէ երրորդ  
մասն անկառ , և ՚Ախկիա բովանդակ վլաւ .  
և բաղում քաղաքք . ՚ի Շիւթանիա կործու  
նեցան : Յայնժամ կաշառեցին զՄըրուան  
Քաղկեդոնիկըն և եղին իւրեանց պատրի-  
ոքք զթէոփիլէ մազմանի որդի , և գնաց ՚ի  
խառան և դարձեալ կաշառօք էաւ զեկեղեց-  
ին Վարւոց ուղղափառաց . և արքեպիս-  
կոպոսն թէոփիլէ եհար զձեռնն ՚ի խորանն  
և ասաց . « Վլ պղծեալ խորան , վաղիւ սրբ-  
իս օրհնութեամբ և ուղղափառ պատա-  
րագաւ : » Եւ նոյն ժամայն մինչ կայր յոտն .  
վառեցաւ հրով և սյրեցաւ , և եղեւ երկիւղ  
մէծ ՚ի վերաց պատրիարքին թէոփիլի , և ա-  
ռեալ զայրեցած ոսկերսն ՚ի գիշերի փախեան .  
և մնաց եկեղեցին ուղղափառաց :

Եւ յայսմ ժամանակի եկն Վքդլէ օրդին

Ելէ (Վլեայ) 'ի խառան, և փախեաւ Վրուան  
Ասկաղզն վեց ուղուուք բարձելօք ոսկւով  
և արծաթով, և անտի ելեալ գնաց յաշխարհն  
'Առւբեաց, և Վրդլա զհետ նորա, և հասեալ  
նմա 'ի 'Առւան 'ի վերաց Նեղոս գետոց, և պո-  
տերաղմեալք ընդ միմեանս սպանաւ Վրո-  
ւան<sup>(1)</sup>. և առեալ զգանձն Վրուանաց զրը  
ժողովեալ էր ագահութեամբ, զամենայն  
ստացուածո նորա գրաւեաց 'ի յինքն Վրդլ-  
այն և թագաւորեաց միայն. Եւ մինչ նոտաւ  
'ի վրանն իւր, յանկարծակի եղեւ ամբոխ  
յոյժ, և սկսան գնալ ամբոխն 'ի գերեզմանսն.  
գնաց և Վրդլս, և աեսին զի ելանէին 'ի գե-  
րեզմանացն արք ութ ներկեալ մօրուօք և  
միջօք չափ ելեալ՝ զտեղի առեալ կային զե-  
րիս տիւս և զերիս գիշերս, և կացոց Վրդլ-  
ըն պահապանս 'ի վերաց նոցա, և կացին կեն-  
դանիս, և հանապազ հարցանէին, և ոչ ետուն  
պատասխանի և ոչ խօսեցան ամենեւին. և  
նորա նեղեալք՝ դարձեալ թաղեցին զնոսա  
հրամանաւ թագաւորին և ինչ ոչ խմացան.

Իոկ թագաւորն կոստանդիանոս այր ի-  
մաստուն էր և հմուտ գրոց, և 'ի ծածուկ  
ունէր զուղղափառութիւնն. և մեռաւ կին

(1) Դեւօնդ զտեղի մեծի բանակին Մրուանաց գնէ մերձ  
յԱկոլս քաղաք և 'ի Պատրա. ուր և 'ի վրանի իւրում ըս-  
պանաւ առէ. առանց ուրեք յիշելց զիսխաւուտ նորտ յեր-  
կիրն Կուրիս. (Գ.Լ. Ը. յեր. 158).

նորա գուշաստը խաքան թագաւորին , և այլ  
ոչ կամեր առնուլ կին ըստ օրինաց քրիստո-  
նէից թագաւորաց . և բռնադատեցին զնա  
երիս ամս՝ առնուլ կին , և ապա ասէ ցնոսա .  
“Չէ պարտ երկրորդ կնաւ թագաւորել  
ինձ . և ապա թէ զայդ կամիք ինձ , դիք զր-  
դին իմ թագաւոր , յայնժամ ես առնում  
կին : ” Եւ արարին այնպէս . և թագաւո-  
րեաց | Եւսն , բայց հայրն խնամեր և հոգացը  
զաշխարհն և զտուն թագաւորութեանն : Եւ  
առեալ նորա կին և ժողովեալ զօրք , եկն ՚ի  
Անրոխինի Հայոց և ՚ի մերձակայ գաւառսն ,  
և առեալ զՀայս և զՅուրիս որ ընդ իշխա-  
նութեամբ Տաճկաց էին (1) տարաւ՝ ասելով  
ցՅոյնսն . “Քրիստոնեայք են , ասէ , ընդ մեզ  
մցին իբրև եզրացը և որդիք մեր : ” Եւ տե-  
սեալ զնոսա . Քաղկեդոնացւոցն , մատեան առ  
թագաւորն և ասեն . “Ի՞նդէ՞ր բերեր զդոսա ,  
զի հայհոյեն մեզ և ատեն և նզովեն զժողովին  
չորրորդ : ” Եւ կոստանդիանոս խնդրեաց ՚ի  
նոցանէ դաւանութիւթիւնս գրով . և նըս-  
տեալ Հայոց գրեցին , նոյնպէս և Յորւոցն ,  
որ էին միաբան և մի կամոց և մի ներդոր-  
ծութիւն . Քրիստոսի (2) . Եւ տեսեալ թա-  
գաւորն և ամենայն իշխանք նորա , հիացան

(1) Աեւսնդ . յեր . 161 .

(2) Խմա՝ դաւանեցին ՚ի Քրիստոս մի բնութիւն . մի  
կամբ և մի ներդործութիւն .

և գովիճին, և ասացին. « Այս է Ճմարիտ  
քրիստոնէութիւն և ուղղափառութիւն. »  
և վասն այնորիկ հրամայեաց ժողով լինել,  
զի յայն դաւանութիւն դարձուսցէ զամե-  
նայն երկիր. և եղեւ ժողովն զոր Եւթնե-  
րորդ կոչեն : Եւ ասաց Թագաւորն. « Եղա-  
չեմ զձե՞լ երկու իրք բարձէք, մի՝ զժողովն  
Քաղկեդոնի, և մին՝ զպատկերագրութիւն  
յեկեղեցիս տռնել. » և ոչ կամեցան, և ան-  
կան յոտս Թագաւորին և աղաչէին՝ զի մի  
հարկեացէ զնոսա վասն երկու խնդրոցն : Եւ  
տրտմեցաւ յոյժ թագաւորն, և դարձաւ և  
ասէ . « Խոկ սվէ Ապօբիմոսի աղանդն անի-  
ծեալ Եւստորականին, բարձէք զնայն . » և  
լուան նմա, և նղովեցին զԱպօբիմոս՝ որ եր-  
կու կամք և երկու ներգործութիւն ասաց  
Քրիստոսի : Եւ վասն այսորիկ յոլովք ՚ի Յու-  
նաց ոչ մեծարեն զժողովս զայս<sup>(1)</sup> : Բայց Թա-  
գաւորն ՚ի ծածուկ պաշտէր զուղղափառու-  
թիւն, և ետ հրաման Հայոց գնալ յերկիրն  
իւրեանց, « Օ ի մի, ասէ, յետ մահուան իմայ  
չարչարեացեն զձեզ. » և ետ պարգեւս և պա-

(1) Այս ժողով եղեւ յամի Տեառն 754. յորում գտան  
երեք հարիւր երեսուն և ութ եպիսկոպոսնք, և վճռեցաւ  
կռապաշտութիւն համարել զպատկերացն պատիւ, և նղովե-  
ցին զպատկերապաշտոն . և յանուանէ նղովեցան Գերմանոս  
պատրիարք որ վախճանեալ էր, Յովհաննէս Դամասկոցի  
և Գեորգ կիսլուցի :

շար՝ ՚ի ճանապարհն և օգնականո՞ւ տանել զնոստ խաղաղութեամբ :

Յայսմամի եկն մարախ և Եկեր բազում դաւառս, և ՚ի գալմիւսոյ ամին եկն կարկուտ անտես և անբուր՝ որ վլոյց բազում շինուածս, և սպան կենդանիս բազում, և կը եցին ըդմեկն ութ լիտր։ Եւ մեռաւ յայսմամի Երշալամ թագաւորին Տաճկաց՝ թագաւորեալ եւթն ամ, որ զինի միւս Երդլային Երլաբասայ՝ (Եպուլ-Երբաս) <sup>(1)</sup> տիրեաց Պարսից և Երաբացւոց։ Եւ թագաւորեաց Եպուլ Զափր, որ և շինեաց զԱլանենի և զիրանց բազաք՝ զոր Յոյնք Կալանիկէ կոչեն և Երաբացիք Երզում, որ է մորչ ծառի <sup>(2)</sup>, և ըդկամախ՝ զորս աւերեալ էր զնոսա Կոստոս (Կոստանդին) թագաւոր <sup>(3)</sup>։ Եւ ՚ի նմին ամի առին Տաճկունք զԱփրիկէ, և առին ՚ի Տաճկաց (՚ի Պարսից) աշխարհն զԵրբրաստան և զՀրջակայսն ամենայն, և տորին զԱլէ։

Ի թուին Եպուլոց Ռէգ. (1073) և ՚ի Հա-

(1) Արդլա՝ որ մեռաւ ՚ի սմին ամի 755. նոյն է որ կոչվ Ապուլ-Երբաս, որց նախորդն էր Մրուան թ., և Ապուլ-Երբասաց յաջորդեաց Ապուլ-Ճաֆար Ալ-Մանառուր (յազմող) որ էր եղբայր Ապուլ-Երբասայ. և ՚ի զիրս Հայոց կոչե Զափրէ Ա. կամ Երդլա թ.։

(2) Արդրամ նշանակէ Երկիր Հռոռոմոց։

(3) Ղեւոնդ յիշէ զնորոդութիւն կարնոց ՚ի ձեռն Խղետի, որ էր կարգեալ սատիկան ՚ի կողմանէ Զափրաց ՚ի վերաց Հայոց, (յեր. 161)։

յոցն Մ (200) շինեաց Զ ափար ՚ի վերայ Տեղ՝ 151P.  
րիս գետոյ ՚ի վեր քան զլատիզբան քաղաք, և  
անուանեաց զնա Պաղտատ՝ որ թարգմանի  
միջ, զի ընդ մէջ է Պարսից և Վարչուց<sup>(1)</sup>։  
Յայսմ ամի ելաւ Քուրդն և գերեաց ՚ի Վո-  
զանայ յիսուն հաղար անձինս։

Եւ ՚ի սոյն ամի համբաւեցաւ կին մի ՚ի  
Քուրքրայ, որ ասէին թէ ՚ի ծնանելն կաթե  
ոչ եկեր ՚ի մօրէն, և զարդացաւ և եղեւ կին  
կատարեալ, և ոչ եկեր ինչ և ոչ կերաւ ա-  
մենեւին . և բերին զնա ՚ի Պաղտատ առ  
Զ ափր, և փորձեաց և գտաւ այնպէս։ Եւ  
արար Զ ափրն ժողով գիտնոց, եթէ լեալի-  
ցէ այնպիսի ինչ երբէք, և ասացին՝ թէ ոչ<sup>(2)</sup>։  
Եւ յայսմ ժամանակի ապստամբեցին Վոգըն  
և եղին իւրեանց թագաւոր<sup>(3)</sup>, և գնաց Տո-  
ճիկն ՚ի վերայ նոցա, և յաղթեցան ՚ի Վո-  
գուցն . և երկրորդ անգամ չոփաւ Տօճիկն  
՚ի վերայ Վոգուցն, և կոտորեցին ՚ի նո-

(1) Ըստ Միքայէլի Չամչեան (Համ. Բ. յեր. 408),  
Զ ափրէ շինեալ դքաղաքն Բաղդատ, կոչեաց զնա Մէրինոս  
Աստալամ, որ է քաղաք խաղաղութեան, այլ զի բնակէր անոր  
յառաջնորդուն և իշխան ոնն Բաղդատ անուն, անտի առաւ կո-  
չիւ Բաղդատ։

(2) Զ այսն սրատմէ և Ամրուկոս, թէ յաւուրս իշխանու-  
թեան Զ ափրայ ծնաւ կին մի, որ եկաց ամս երեսուն և  
ոչ ինչ կերաւ, յեր. 44։

(3) Միւս թարգմանութիւնն ասէ, եթէ յայսմ նշանա-  
խաբեալ Վոգուցն՝ ապստամբեցին ընդդէմ տէրութեան Ա-  
րաբացւոց։

ցանէ քառասուն հազար անձինս , և հնաւ  
զանդեցոյց զլոգսն և դարձաւ : Եւ ելեալ  
Զափրն ՚ի Վիջագետս , և կացոյց երկու հար-  
կահանս , Տաճիկ մի Ալիման անուն և Հրեայ  
մի Վուսէ անուն , որ և դադարի արարին  
զաշխարհս յոսկւոյ և յարծաթոյ : Եւ բա-  
զումք փորէին զգերեզմանս՝ գտանել ինչ և  
տալ նոցա , զի կեղեքեալ և տանջեալ լինէին  
՚ի բռնութենէ նոցա : Եւ լուեալ Յունաց  
սկսան և նոքա պեղել զգերեզմանս հնոց  
մեռելոցն . և մինչ փորէին ՚ի Նիկոմիդայ քա-  
զաքի , գտին զգերեզմանն Նիկոմիդեայ շի-  
նողի քաղաքին , և բազմութիւն ոսկւոյ և ա-  
կանց պատուականաց ընդ նմա ամփոփած .  
և ազդ արարին Կոստանդիանոսի , և գնաց և  
ետես , և ոչ կամեցաւ առնուլ ինչ ՚ի նմա-  
նէ , այլ կոփածու վիմօք փակեաց , և ասաց .  
«Օ Բնչ գարշագոյն քան կենդանեաց կո-  
ղոպտել զմեռեալս և այնու վայելել . » և  
սաստեաց նոցա զի այլ մի արասցեն զայն :

Խոկ ՚ի չարաչար ագահութենէն Զափրի  
այնչափ պակասեաց արծաթն , զի զեղն և  
զէշ դրամի միոյ վաճառէին , և զտղայն հինդ  
դրամի տային պահանջողացն : Եւ սա զկնի  
քսան ամի սատակեալ , հանգեաւ երկիր ՚ի  
չարեաց պղծութենէ նորա : Եւ ՚ի նոյն ամի  
մեռաւ Կոստանդիանոս թագաւորեալ ամս  
երեսուն և չորս : Եւ | Եւոն (Դ) որդի նորա

Հաստատեցաւ՝ ՚ի տեղի նորա։ Եւ ՚ի վերայ  
Տաճկաց թագաւորեաց Ամահաղի որդի  
Գափիրի, և ցրուեաց զամենայն ինչն որ  
գանձեալ էր հայրն, և ետ զինքն կախար-  
դութեան, և աստեղօք վարեր։ Եւ ըւեալ  
Եւոնի՝ առաքեաց նմա զգիրսն Յանեսայ  
և Յամբէսայ կախարդացն՝ զոր ինչ գործեալ  
էին ընդդէմ Առվակսի. և ընկալաւ խնդու-  
թեամբ։ Եւ եկն Ամահաղի ՚ի Հաղապ, և ե-  
լին ընդդէմ նորա երկոտասան հազար Կոորի  
պատուել զնա. և զարմացաւ ընդ բազմու-  
թիւնն, և յորժամ նստաւ՝ կոչեաց զնոսա  
և ասէ. « Ո՞ի յերկուց առաջի կայ ձեր, կամ  
մեռանել կամ դառնալ ՚ի կրօնս մեր։ » Եւ  
տաճկացան հինգ հազար այր, և այն ամենն  
մեռան վասն հաւատոցն որ ՚ի Քրիստոս։ Եւ  
կանայք և մանկունք ուրացողացն թողին ըզ-  
նոսա և փախեան։ Եւ գնաց Ամահաղի յեր-  
կիրն Արարիսոյ ՚ի Հռոմայեցին. և զԱհարսն  
որդի իւր առաքեաց յաւարի. և գնացեալ  
յԵփեսոս գերեցին եւթն հազար անձինս, և  
պակասեաց ՚ի նոցանէ չորս հազար այր<sup>(1)</sup>։  
Եւ Եւոն առաքեաց զօր ՚ի Ամագետու,  
և տարան զքրիստոնեայսն՝ Հայս և Կոորիս  
ուղղափառու, և բնակեցց ընդ ինքեան ՚ի  
թրակիա<sup>(2)</sup>։ Եւ գնաց սա ՚ի ճանապարհ հօր

(1) Իմա՝ ՚ի զօրաց իւրոց։

(2) ԱՃԵԼ Եւոնի գաղթականու ՚ի Հայոց և յԱսորոց՝  
23

իւրոց, և ոչ երկրապագեաց պատկերաց և ոչ  
ետ երկրապագել, և ոչ հաղորդեցաւ ՚ի Քաղը  
կեդոնացւոցն . վասն որոց ՚ի Հյունոց ժամա-  
նակագրացն տրտնջելով Յակոբիկ կոչեն ըշ-  
տա : Եւ սա թագաւորեալ ամս տառն՝ մե-  
ռաւ . և թագաւորեաց Կրոտանդիսնոս (Ե)  
որդին նորա երկուանանամեաց , և Իրինէ  
մայրն նորա ընդ նմա քարոզեալ ընէլր թա-  
գաւոր վասն տղոցութեան նորա • Եւ Կհա-  
րոն եկն յերկիլրն Հռոմոյեցւոց և դարձաւ  
ամօթով : Յայսմ տմի շինեաց Ելի հրամա-  
նաւ . Վահագի զշագ քաղաք յերկիրն Վա-  
րացոյ : Եւ մեռաւ Վահագի և թագաւո-  
րեաց որդի իւր Վուսի ամս երկու , Եւ ե-  
կեալ Հռոմացեցւոյն զինի երկու տմի շինե-  
լոյն զշագ , քակեաց զեռ : Եւ մեռաւ Վու-  
սի , և թագաւորեաց Կհարոն եղբայր նորա  
որ կոչեցաւ . Ուաշիու : Եւ դարձեալ շինեաց  
Երդլմէլէք զՈւաշիու (1) , և պատրոսատեաց  
Երկու հաղաք սայլ , և քակեաց զեկեզեցիսն  
որ կոյին յարեւմոխց Ընձէ զետոյն (2) որ է

՚ի թրակիա , զըր արար ձեռամք Միքոյելի զօրապետի թրա-  
կացւոց , որպէս և Կոտոռնոգին Ե գաղթեցոյց յառաջ քան-  
դաս ՚ի Կոտոռնոգինու ոլոլիս , ոչ յաղադս այլը իրիք պատճա-  
ռի Եր , բայց Եթէ առ ՚ի ընոււ զտեզի բնակչացն որք մեռան  
՚ի մահարաժամէ , որ տեւեաց յամէ 747—750 :

(1) Ամենայն օրինակք ունին Հաշիդ : Այս քաղաք շե-  
նցաւ հրամանաւ չարուն Էլ-Ռէշիայ :

(2) Տես ՚ի ծանօթութեան մերում 268 . ՚ի գիրա պատ-  
ճառթեան Մատթէսոփ ուռահայեցւոց , յեր . 576 :

մերձ Ասմուստայ, և քակեցին զառոքելաշէն  
եկեղեցին Վեսնոյ հնդետասան խորանին,  
և տարեալ սայլիւն զքսդին շննել զշադ :

Յայսմ ժամանակի գտաւ տապան մի  
յիւռհա՛ շրէի, որ գրեալ էր թէ՛ աշաւաւ  
տամ որ գայ Վրիստոս, 'ի կուսէ ծնեալ. և  
ծագեսցէ՛ լոյս նորա 'ի վերայ իմ : ա

Ե յայսմ ամի իմացու Կրոստանդիանոս,  
եթէ Փիլիտէ (Հելլիտիոս) սբատրիկն Աիկի-  
լոյ չնայր ընդ մայրն նորա, և կամեցաւ ըմ-  
բունել և հանել զաչս նորա . և փախեաւ  
Փիլիտէ և եկն առ Տաճկունք, և առեալ  
քառասուն հաղար զօրք՝ գնաց դարձուցա-  
նել զի Աիկիլոյ 'ի Տաճիկք : Եւ գնացեալ նոցա  
ձիւնարդել եղեն, և յոլովք մեռան և մնա-  
ցեալքն եկին 'ի Կրոստանդինուպոլիս և արա-  
րին նոցա մարդասիրութիւն, և թողին ըզ-  
նոսա . և Կրոստանդիանոս այլ ոչ ետ քարոզել  
զմայրն յեկեղեցին յետ չնութեանն : Եւ  
մեռաւ կինն Կրոստանդիանոսի, և նա արհա-  
մարհեաց զկանոնք Առաքելոցն, և առ այլ  
կին (1), և ատելի եղեւ բազմաց : Եւ ապա-  
կանէր զդստերա իշխանացն . և մայրն ըւեալ

(1) Կրոստանդին Ե ամուսնացաւ նախ ընդ Մարիամայ  
դստեր նախարարի միոյ հայկազնոյ յերկրէն Փափլագոնիոյ ,  
և էր Մարիամ սքանչելի գեղավ . այլ յամի 795 թողեալ  
զնա կայսեր՝ եմուս 'ի վանա կուսանաց : և ինքն առ զթէս-  
դոտա նաժիշտ մօր իւրայ Եռինեայ , յորմէ ծնաւ Աեւոն :

զարտունջ իշխանացն, կուրացոյց զաչս որդւոյն և թագաւորեաց ինքն, և արար երկրորդ իւր զներքինին իւր **Փիլադի** (Վէդիս<sup>o</sup>) :

Ի ժամանակի յայս կային ՚ի թռուանցն Աթանասայ կոմայի որդւոյ, որբ փորեցին զտունս իւրեանց, և գտին բազում գանձս և ոսկեղէն օձս և կարիճս փորածոյս շինած, և մէջն լցեալ քեմիայիւ, որ ցանէին ՚ի վերայ հալեալ պղնձոյ և դառնայր յասկի. և գրած էր ՚ի նոսա բաժինս աղքատաց և եկեղեցեաց : Եւ զայս գտեալ մեծոցան յոյժ և ստացան ձիս և ջորիս և շունս և բազէս, և ելանէին որսային : Եւ եհաս բանս այս ՚ի թագաւորն Տաճկաց, և տարաւ զնոսա տոինքն, և չարչարեց և էառ զոր ինչ ունէին, և առեալ զօձն և բացեալ և զլցեալ քեմիայն գիտէին թէ հողէ, և թափէին ընդվայր, և յետոյ իմացեալ զպատուականութիւն իւրացն և յոյժ տրտմեցան : Եւ կուսան մի սուրբ ՚ի նոցանէ տուին ՚ի Քաղկեդոնացի մի ՚ի պահուստ, և եհան զնա ՚ի վերնատուն մի և եղ պահապանս Տաճիկս . և նա երկուցեալ ՚ի խայտառականաց՝ մեռաւ ընկենլով զինքն ՚ի բարձր տեղւոջէ ՚ի վայր . և լուեալ թագաւորն Տաճկաց ողորմեցաւ և եթող զայլսն<sup>(1)</sup> :

Եւ Տաճիկքն սկսան արհամարհել զըր-

(1) Իմա զեղբարսն կուսին՝ զթառունս Աթանասայ :

ռոմայեցիսն վասն կնոջն Երինեայ , և առին խորհուրդ զօրքն թագաւորեցուցանել զԱմեկիփոր Կասպաղադովկացի . և լուեալ Երինէ , կամեցաւ հանել զաշնորա , և ներքինին թագոց զնա . և գտեալ զնա զօրացն թագաւորեցուցին . և սա պատուով ունէր զդշլոյն և զներքինին : Եւ դարձեալ իմացաւ Նիկիփոր թէ խորհին նմա չարիս , առաքեաց զԵրինէ յաքսորս Աթէնս , և թոյլ ետ ներքինւոյն , և չարար նմա չար վասն երախտեացն առինքն :

Յայսմ ժամանակի շինեաց թագաւորն Տաճկաց քաղաք մի յերկիրն Տաճկաց և կոչեաց զնա Օռւալատրա<sup>(1)</sup> , և եկին Հռոմայեցիք և յաւարի առին զերկիրն Տաճկաց : Եւ Նիկիփոր էր այր հզօր և խորհրդաւոր . և ասեն վասն սմա՝ թէ 'ի Տաճիկ ազգէ էր, որք արհամարհանս գտեալ յազգէն իւրեանց՝ ըլքիստոնէացեալ էին յառաջագոյն և 'ի նոցանէծնեալ էր Նիկիփոր : Եւ Ալիփի (Փիլիտէ<sup>(2)</sup>) տրւեալ զՆիկիլա 'ի Տաճիկք , եկն առ նոսա և պատմեաց՝ թէ Նիկիփոր այր քաջ է և պահող և աղօթող . և գրեցին առ Կհարոն : Եւ ժողովեալ բաղմութիւն յոյժ գնաց յերկիրն Հռոմայեցւոց . և եւ ընդդէմ նորա Նիկիփոր , և նատան ամիսս երկուս հանդէս

(1) Զայս քաղաք շինեաց չարուն Եւ-Ռէշտ ամիրայ 'ի գոգր հայս , մերձ Մաղաթիոյ :

միմեանց և խօսեցան՝ ի խաղաղութիւն, և  
արարին սէր և խառնեցան զօրքն՝ ի միմեանց  
և տուեալ Եհարոն՝ Աթկիփորայ զամենայն  
վրանմն և դարձաւ (1):

Եւ շինեաց Եհարոն քաղաք՝ ի վեր քան  
զլալանիկոս և անուանեաց զնա Երակլիս  
(Երակլիս) (2), զի առեալ էր կին Երակլացի.  
և Աթկիփոր շինեաց զլնկիւրիա:

Յայսմ ժամանակի Ենանիա եպիսկոպոսն  
Վերտինց, որ էր ի լեռնէն Հաղպարաւորաց,  
որ է լեառն Աինուէի. սա շինեաց զվանքն  
սուրբ Ենանիանցն. գտեալ աւերակ բերդ  
մի և գնեաց զնա ի Տաճկաց, և փորեաց ի  
մէջ նորա և արար սրբատուն ծանր ծախիւք,  
և բերեալ ի Տարայոյ զնշխարս Ենանիանցն  
և եղ ի նմա. և բերեալ զնշխարս Բարթու  
զիմէոսի Առաքելոյն ի Հայոց և զՓիլալոսի (3) ի  
Վընթէնց. և գնացեալ ի Հռոմ Ելաց հան-  
գէտ սրբոց Առաքելոյն, և տուաւ նմա մասն  
ի Պետրոսէ և ի Պօղոսէ, և բերեալ զայն.  
և գնացեալ ի Բաբելոն եղիս անդ զնշխա-  
րս Դանիէլի մարգարէին և զիշեկիէլին և  
զԱմայ սրբւոց Ացի, և այլ բաղումնշխարս,

(1) Այս գեղք աշխազգ պատմի ի միւս թարգմանու-  
թեան:

(2) Այն է Երեխէ ի վերաց ճանապարհին Խկոնից՝ որ  
տանի ի Տարսոն:

(3) Զնապագիր բառս որ պակաս եին ի մերումն ընա-  
գրի, լուցոք ի միւս թարգմանութենէ:

և բերեալ զնոսա եղ՝ ՚ի սրբատունն զոր շինեաց, և ՚ի վերայ նորա շինեաց եկեղեցի գեղեցիկ, և յինչեւ ցայսօր կատարին աղօթք խնդրազացն։

Իսկ Վհարոն թագաւոր Տաճկաց արար համար գանձուն իւրոյ և գտաւ առաւելքան զոր Պափրն էր հաւաքեալ, հազար բիւր. և յոյժ ուրախացաւ, և կրկնեաց երբեք ծունք Վատուծոյ և զթագաւորութիւնն խոստացաւ Վահմետի աւագ որդւոյն իւրոյ, և զինի նորա Վամունդին, և յետ նորա կասումայ (1). և այս եղեւ պատճառ խախտելց թագաւորութեան նոցա, Օ Վահմետ եղ՝ ՚ի Վազտատ և զկասում յԱսորիս և զՎամունն տարաւ զհետ իւր ՚ի խորասան։ Եւ ետ նմա դժանձն իւր. և անդ մեռաւ թագաւորեալ ամս քսան և երեք։

Իսկ Նիկիփոր գնոց զօրու ծանու ՚ի վերայ Շուլդարաց, և հաս ՚ի քաղաք թագաւորութեան նոցա, և արար բազում կոսորուածս, մինչեւ արկանէր տարածոց զմանեկունս նոցա և անցուցանէր կամնասայլս ՚ի մերայ նոցա անողորմաքար. և զայրացեալ Ձիրանգ մի, և հար և սպան զնա։

(1) Անուանք երից որդւոցն Հարուն Էլ-Ռեշիտայ և այսոքիկ ըստ առողջանութեան Աքարաց. առաջինն՝ Ապու Մուսա Առհամմետ Ալ-Ամին, երկրորդն՝ Ապու Շաֆար Աղմա-Ալլահ, այն է մականուանեալն՝ Մամուն կամ Մամաւուն. երրորդն՝ Էլ-Քաուէմ Խոկրահիմ Գիլա։

Եւ թագաւորեաց Տաճկաց Վահմէտ, և  
եհան զգանձս հօր իւրոյ ՚ի կալանիկոյ և տա-  
րաւ ՚ի Շաղոտատ, զի թագաւորեալ էր Վա-  
մունն ՚ի Խորասան, որ էր կիրթ ուսմամբ  
և իմաստութեամբ : Եւ կամեցաւ Վահմէտ  
խռովութիւն առնել և ստել ուխտի հօրն, և  
ոչ տայր զգանձն Վամունդին (Վամտունին)  
և սկսան պատերազմիլ ընդ միմեանս Վահ-  
մէտ և Վամունդն . և լուեալ զայս բազումք  
ապօտամբեցին ՚ի Փղտացւոցն . և Վահմէտ  
արար ժողով և եղ զօրապետ զԱլլի<sup>(1)</sup> . և ա-  
ռաքեաց ՚ի վերայ Վամունդին . և նա ա-  
ռաքեաց զօրս ընդ դէմ նորա և պատերազ-  
մեցան, և յաղթեցաւ զօրքն Վամունդին և  
փախեան և ոմանք գետամոյն եղեն : Եւ ե-  
կեալ Վահմէտ ՚ի Վամուսատ, և շինեաց ըզ-  
բերդն և ամրացաւ, և ՚ի ձեռն Երդլմելքի  
հնազանդեաց զապստամբն . և շինեաց ըզ-  
պարիսապն Ուռհայոյ կրկին և զՎամուսայ  
պարիսապն և գՅեսնոյ՝ քրիստոնէից ստաց-  
ուածօք զօրս կողոպտէրն : Եւ Հիւսէն զօ-  
րապետն ապստամբեաց, և կալեալ զՎահ-  
մէտ՝ եղ ՚ի կապանս, և գնաց նատաւ ՚ի  
Շաղոտատ : Եւ Վահմէտ առաքեաց ազաշա-  
նըս առ Հիւսէն, զի միայն թողցէ զնա կեն-  
դանի և ոչ պիտի նմա թագաւորութիւն .

(1) Նա է որ ՚ի միւս թարգմանութեան կոչե Հիւսէին,  
որպէս և աստ փոքր մի յեաց կոչե Հիւսէն :

և խղճացեալ ետ նմա կեանս և զթագաւորութիւնն : Եւ գնաց Այահմէտ ՚ի վաղտատ, և Վամունդն առաքեաց զորթում զօրապետն իւր, որ երթեալ պաշարեաց զի՞աղտատ. և սպառեցաւ քար ՚ի քաղաքէն, և քակեցին զեկեղեցիսն և ձգէին ՚ի դուրս : Հատաւ և այն և մասին ՚ի քաղաքն, և գտին զԱյահմէտ թագուցեալ ՚ի տան միում, կալան և սպանին զնա: Եւ եկն Տահիրն (Տահիր) միւս զօրապետն Վամունդին չորս հազարաւ. ՚ի Ալալինիկոս, և սկսաւ սպառել զավատամբն :

Յայսմ ժամանակի եղեւ շարժ ահագին, և լերինքն Կողոտու որ կան աստի և անսի, հպեցան առ միմէանս, և տեսին մարդիկ. և փլաւ. լեառն մի և անկաւ յԱվրատ, և արդելեաց զնա օր մի, որ գնայր գետ ՚ի վեր. և բազում լերինք խլեցան, և յորսվ աղբիւրք բացան ջրոյ և կապրոյ և նաւթոյ, և բազումք խցան յաղբիւրականց :

Եւ Կուրիշոցիք ազգ մի են Տոմճկաց որք գրին իւրեանց թագաւոր ՚ի Պաղտատ զՊերէհիմն (1). և Տահիրն (Տահիր) յորժամ լըւաւ զայս՝ իշխանացաւ ՚ի խառան և ՚ի Կալանիկոս, և հրաման ետ՝ թէ իցեն կուտապաշտք՝ յայսմ ժամանակի յայտնապէս զոհեսցեն և անհոգ լիցին . և գտան բազումք:

(1) Իպրահիմ պէն եւ Մէհատի որ եր հօրեղապր եւ Մամունայ :

Եւ զԱրդլա կացցց Տահիրն յԱւոհա , որ  
նեղէր գըրիստոնեացն ասելով . “Երիք գը-  
րացէք առ ձեր քըրիստոնեաց թագաւորան , զի  
հանգիցուք մեք . փոխանակ զի մինչ ՚ի յայս  
ժամանակս անապատաբնակը և բացօթեայք  
էսք , և այժմ առաք զերկիրս թրով , և մեր  
է սցուշեաւեալ Եւ տրտմեին քըրիստոնեացք՝  
զի ոչ գոյր առեղի ապաստանի :

Իսկ զինի Նիկեֆորայ թագաւորեցուցին  
զի եւոն . և Վիխոյէլ զօրապետն Հռոմոց  
սպան զի եւոն և ինքն թագաւորեաց<sup>(1)</sup> : Եւ  
յայսմ ժամանակի ապատամբեաց Նաորն<sup>(2)</sup>  
՚ի Սրուճ և առաքեաց առ Վիխոյէլն տալնը-  
մա ձեռն , և առաքեաց Վիխոյէլ դեսպանս  
առ Նաորն , և թիւրեցին զՆաորն ազգն  
իւր , և սպան զգեսպանն :

Իսկ Վամունն ունէր առ ինքն իշխան մի  
Հռոմոյեցի թումաս անուն , որ եկեալ էր  
առ Եհարոն հայրն իւր և ասացեալ թէ՝ “Ես  
կրտանդիանոս թագաւորին որդի եմ . ո և  
ունէին զնտ պատուով , և Վամունն ետ զօր  
նմա գնալ ՚ի կրտանդինուպօլիս կամ թա-

(1) Զինի Նիկեֆորայ էլ յաթուն Ստաւրաքի ամիսս  
վեց . որում յաջորդեաց Վիխոյէլ Ա Ռանգապէ կոչեցեալ .  
որ էր փեսայացեալ Նիկեֆորայ . ամ մի և ամիսս իննո Զռա  
փոխանակեաց Հեւոն Ե Արծրունի՝ ամս եւթն . և աղա Սի-  
քոյէլ Բ թլւատն կոչեցեալ . որդի Հրեէի . յամի 820 :

(2) Նաոր էր մի ՚ի զլսաւոր կրտանդիցաց Մահադիի կամ  
Քարանց . զարմէ զինի :

գաւորել, կամ առնել զնոսա անհանգիստս : Եւ գնաց թումաս և պաշարեաց զլոստան՝ դինուագօլիս վեց ամիսս (1) : Եւ Վիխայյն հանեալ զջաձիկ ծառայսն խոստացաւ աղատութիւն նոցա՝ եթէ սրտի մտօք կռուեսցին ընդդէմ Տաճկոց . և կռուեցան և փախուցին զմասմաս , և հասեալ կալան զնա և կտրեցին զոտսն և զձեռան , և շրջեցուցին ընդ քաղաքն . բայց զծառայսն ոչ աղատեաց Վիխայյն :

Յայսմ ժամանակի եկն Վամունն ՚ի Շառլոտատ, և գնաց Տահիրն առնա և առաքեաց զնա իշխան ՚ի Խորասան , և Պրէհիմն փախետ . և անցացտ եղեւ : Եւ յայսմ ամի ծովն Առիանոս ընկեց յերկիրն Կիլիկիոյ ձուկն միոր քառասուն գիրկ երկայն եր և նոյնչափ ըստն և հաստ , ոչ եր իբրեւ ձուկն՝ այլ որպէս բլուր մի սոսկալի տեսլեամբ : Եւ ժողովեցու երկիրն և կարատեցին և ապխտեցին և կերան և ձէթ քաղում հանին և վաճառեցին յԱնտաք , և այրէին և ուտէին զնա բազում ժամանակս :

Ի թուին Յորւոց թագի (1140) և Հայոցն ՄԿ (267) (2) , մեռաւ Վիխայէլ թագաւորին

(1) Սամուել յիշէ զգալ սուտ թագաւորին թումասու ՚ի կարնայ քաղաք ՚ի թուին Հայոց ՄԾ.Գ (253) :

(2) Միւս թարգմանութիւնն գնէ ՄԾ.Զ (256) և երկրին ևն սխալ փոխանակ դնելոց ՄՀ.Հ . այն է ՚ի թուին Քրիստոնի 828 կամ 829 , յորում ամի մեռաւ Վիխայէլ Բ:

Յունաց , եւ թագաւորեաց թէովիլոս : Եւ եկին Շուլըարք ՚ի հնազանդութիւն նմա և Քուրտանիք և մասն ինչ յլրաբացւոցն , որք են լեզուք առանձինն Քուրտանիքն (1) : Եւ ՚ի հին ժամանակացն կայր ՚ի մէջ Քուրտանացն բան ինչ զիւթական , եթէ յայտնելոց է այր մի Վահագի անուն , և տիրէ ամենայն երկրի . և որ հաւատաց ՚ի նա և մեռանի , յետքառառւն աւուր յառնէ , և ժամանակ ինչ կեցեալ փոխի յանմահական աշխարհն : Եւ ոմանիք ասէին՝ թէ Վատուած է , և այլք՝ թէ թագաւոր է , և սովասէին նմա : Եւ յայտ ժամանակի երեւեցաւ ոմն Վահագի անուն , և կարծեցին թէ նա է . և ինքն հաւատաց թէ ինքն է , և սկսան ժողովիլ առ նա , և թագ եղ և ձգէր քող երեսացն . և ել համբաւ զնմանէ , և զարհուրեցաւ Վամուն ՚ի նմանէ : Եւ գնաց Վահագի և արար զբնակութի իւր ՚ի լերինս Երարագայ յաշխարհն Հայոց և երթայր յամենայն կողմանս և զամենայն ազգ միապէս կոտորէր . և եկն ՚ի Ճղիրոյ սահմանսն , և հարկանէր և աւերէր առհասարակ : Եւ լուեալ Հասան զօրապետըն Վամունայ , և պնդեալ զինքն խազաց գնաց ՚ի վերայ նորա և սկսաւ կոտորելւ Եւ փախեան ՚ի նմանէ բազմութիւն ամբոխին :

(1) Թառի թէ ասիցէ զՎարաց , որ են Քուրտաք :

Եւ ինքն Մահաղի ընկեցեալ զթագն և ըզ-  
քողն՝ փախչէր, և անկաւ յերկիրն Հայկա-  
զնոյն Մահակայ, և Տաճիկքն առին զբանա-  
կըն նորա և դարձան . և Ամակ իշխանն  
Հայտղուն ըմբռնեաց զՄահաղի և կարեաց  
զգլուխ նորա . և չոգաւ Ամակ և կոտոր-  
եաց զբաղումս ՚ի Տաճիկաց, և Քուրտանքն  
պատեալ էին զբերդն Ամակայ, և նա դար-  
ձեալ ՚ի կոտորածէն՝ եգիս սպաշարեալ ըզ-  
տուն իւր և կոտորեաց զնոսա, և սակաւք ՚ի  
նոցանէ զերծեալք եկին առ թէտիիլոս այ-  
սու պատճառաւ : Եւ այն Տաճիկքն որ ընդ  
Քուրտանսն գնացին, և նոքա հաւատացեալ  
էին ՚ի Մահաղի, որ երբեմն ասէր՝ թէ ես  
եմ Քրիստոսն, և երբեմն՝ թէ ես եմ Հո-  
գին սուրբ . և այնպէս հայէին ՚ի նա՝ որպէս  
լսէին ՚ի նմանէ<sup>(1)</sup> : Խակ յորժամ ետես թէու-  
փիլոս զփախուցեալըն որ գնացին առ նա,  
ուրախ եղեւ . և եւ նոքօք յիշխանութիւնն  
Տաճիկաց, և գնաց ՚ի Օրուապատրա և առ ըզ-  
նա և քակեաց, և զբնակիչսն տարաւ դերի:

(1) Վարդան յիշատակէ զՄահաղիո զայս և կոչէ զնա  
Բար կամ Բարան . զորմէ ասէ Եթէ ՚ի սուր սուսերի ըս-  
պանանելով զիսմայելոցիս . եկն մինչեւ ՚ի գեղարքունիս .  
ԱմհԼ (Ամակ<sup>2</sup>) որդի Սմբատաց, ըմբռնէ զնա և ընդունի  
փոխարէն պարգեւս յոյժ յԱֆշնէ, որ եր յոյնժամ սոտիկան  
կարգեալ ՚ի Հայս . և զոտս և զձեռս Բարանայ հատեալ  
կախէ զնա զփայտէ : (ՑԵՐ. 107—109) : — ՄիքայէԼ Զամ  
շեան . (Համ . Բ . յեր . 441) :

Եւ ՚ի գալ միւսոյ ամին դարձեալ շինեցին  
Տաճիկն զ.Օ ուղատրա :

Եւ պատրիկն Մանիլ<sup>(1)</sup> ապօտամբեալ ՚ի  
թէ ոփիլէ , եկն առ Մամուն և ստիպէր զնա  
մուանել յերկիրն Հռոմայեցւոց . և յորժամ  
եկն ՚ի խառան՝ արդել ՚ի քակելց զեկեղե-  
ցիս : Եւ եկեալ Մամունն ՚ի յԱռհա և  
հարցեալ զմուտս կաթողիկէ եկեղեցւոյն ,  
և ասացաւ թէ՝ հարկատու է Տաճկաց , և  
ել հրաման ՚ի նմանէ արդելման հարկի եկե-  
ղեցւոյ : Եւ ՚ի ժամանակո ամարան գնաց  
Մամունն ՚ի կապողագովկիս , և առ անտի  
բերդս չորս , և դարձաւ ձմերել ՚ի Դամաս-  
կոս : Եւ ՚ի գալ միւսոյ ամին յԱպրիլ ամ-  
սեան եկն դարձեալ ՚ի Հռոմայեցիսն , և իւ-  
ջաւ ՚ի լուլայ բերդի<sup>(2)</sup> , և ոչ կարաց առ-  
նուլ զնա և դարձաւ ՚ի Քեսունն . և ել ընդ  
առաջ նորա Դիոնէսիոս պատրիարքն , և ա-  
րար նմա մեծ պատիւ , և ետ նմա գիր ա-  
զատութեան եկեղեցւոյ : Եւ մինչդեռ խօ-  
սէր ընդ պատրիարքին , բերդիւ աւետիս՝ թէ  
առին զ լուլան զօրքն զոր թողեալ էր ՚ի վե-

(1) Մանիլ կամ Մանուէլ էր յազգէ Մամիկոնէից ըստ  
Վարդանաց (յեր. 107) , որ ընդ քաջութեան ըօրդեալ  
ունէր և զոդի բարեպաշտութեան : Աս ինքն պաշտպան ե-  
կաց ընդդէմ պատրիարքարից , և հաստատեաց ժողովով  
կրկն զպատկերապաշտութիւն յամի 842 :

(2) Այս է Լուլայ բերդ ՚ի Ափիկիս , ընդ հարաւա-  
կողմ Իկոնից :

րայ բերդին, և յաւել՝ ի սէր պատրիարքին։  
 Եւ յայնժամ Վանիլ պատրիկն թողեալ  
 զՎամունն գնաց առ թէովիլոս . և առա-  
 քեաց թէովիլոս խնդրել սէր ի Վամունաց,  
 և ասէ Վամունն . “թէ տայք ինձ հարկս և  
 անուանէք զիս թագաւոր ի վերայ ձեր, ա-  
 րարից ընդ ձեզ սէր :” Եւ թէովիլոս այլ  
 ոչ ետ նմա պատասխանի : Եւ գնաց Վամու-  
 նին ի Վիլմկիա . և եկն ամեն շուոմայեցի առ  
 նա և ասաց զինքն որդի թագաւորի . և Վա-  
 մունն հաւատաց և արար նմա թագ յերեք  
 հաղար գահեկանէ, և ասաց ընդ չոր պատ-  
 րիարքն Կոստիսքու՝ օրհնել զնա թագաւոր  
 ըստ օրինի քրիստոնէից . և արար այնպէս :  
 Եւ լուեալ ի Կոստունդինուպօլիս նզովեցին  
 զՅոր : Իսկ խաբերայն երկու ամ կեցեալ  
 ի մէջ Տաճկաց և ոչ արար ոք նմա հոգ, և  
 նա ուրացաւ զՔրիստոս և տաճկացաւ :  
 Եւ Վամունն գնաց յերկիրն շուոմայե-  
 ցւոց և սիրով խարեւութեան զամենայն  
 աշխարհն հնաղանդեաց մինչ ի Տայանու  
 (Տիանա) քաղաք զոր քակեալ եին Տաճիկք,  
 և սկսաւ շինել ի հարկաց երկրին զոր պա-  
 հանջէր խստութեամբ, մինչ ամենայն լեզու  
 նզովէր զնա . և եհատ յականջս Տեառն զօ-  
 րութեանց, և սպան զնա Կոստուած և մե-  
 ռաւ : Եւ թագաւորեաց Կբուսահակ եղ-  
 բայր նորա, որ և այրեաց զինուած քաղա-

քին և զամենայն կազմուածն . և գնաց ինքն  
 'ի հաղոստ և հնազանդեաց բռնութեամբ,  
 թէպէտ ոչ էին ընդ նմա : Եւ յայնժամ եւ  
 կին 'ի հասրայ, և արտնջեցին զկզզոյն՝ որ կո-  
 չի հանատի, թէ միշտ ապստամբանոց է, և  
 կոսորեն զվաճառականսն որ գնան յէ՛թոպիա  
 և 'ի շնդիկս : Եւ կայ կղզին այն 'ի մէջ ծովուն  
 հանդէպ տեղւոյն՝ ուր խառնի Եփրատ և  
 Տիգրիս 'ի ծովն որ կոչի Պարսից : Եւ առա-  
 քեաց թագաւորն զօրս 'ի վերայ նորա, և  
 ոչ ինչ կարացին առնել վասն ամրութեան  
 տեղւոյն և հնարիմացութեան նոցա և քա-  
 ջութեան արանցն . ապա յայնժամ առաքեաց  
 թագաւորն յէ՛գիպտոս և 'ի Ասքա և ետ  
 ածել անտի արուեստաւորս և ծովամուտք,  
 որ ծածկէին զդգայարանսն սազմով մանկանց  
 և առեալ ձեւթ փշոտվ լնուին 'ի ծովն, և որ  
 տեղաց հանդէպ պիտէր՝ մտանէին 'ի ծովն  
 և ելանէին : Եւ առաքեաց զնոսա ընդ զօրսն՝  
 զի յորժամ ելցեն բնակիչք կղզոյն նաւօք 'ի  
 կոխւ ընդ նաւսն Տաճկաց, մոցեն նոքա յան-  
 կարծակի 'ի քաղաքն և այրեսցեն զնա, զոր  
 և արարին իսկ . և բարձան ապստամբքն և  
 լինէր գիւրութիւն վաճառականաց և եր-  
 թեւակաց և աշխարհին հասրայոյ շնուր-  
 թիւն և ընդարձակութիւնս յոլով :

Յայսմ ամի եւ Աբուսահակ և շինեաց  
 'ի մէջ Նինուէի և հաքիլոնի զգեղն Համրա

արքունիք մեծ և ընդարձակ, և բերեալ յիշ-  
գիստոսէ բալասանի տունկ և այլ բաղում՝  
աղգո տնկոց, և շինեաց անդ դրախտո և  
վայելութիւնս զքօսանաց։ Եւ գիտացես՝  
զի այլ է Շաքելն և այլ է Շաղտատ, չորս  
աւուր է միջոց նոցա։

Հայամ ժամանակի առաքեաց Արուսահյն  
գետպան ՚ի Նուբիսն սյուռ պատճառաւ։ Ի  
հին ժամանակաց կայր Խաղաղութիւն ՚ի մէջ  
Տաճկաց և ՚ի մէջ Նուպեացն, և Տաճկունք  
տային Նուպեացն ցորեան և գինի և ձեթ  
և հանդերձս շատ յայժ։ Եւ թէ ելանէր թա-  
գաւորն Նուբեաց յերկիրն Տաճկաց, հնա-  
զանդէին նմա Տաճկունք յամենայն իրս որ-  
պէս իւրեանց թագաւորին։ Եւ Նուբիքն  
տային Տաճկաց երեք հարիւր սեաւ ծառայ,  
և տասն ապուղնայ և զուրափէ մի, որ է  
կենդանի գոմիշոյ չափ և խայտ, և առ աջքն  
բարձր, որ է գինն քսան հաղար դահեկան,  
և փայտս անփուտո։ Եւ յորժամ անկաւ բա-  
ժանումն ՚ի Տաճկունք, խափանեցաւ սահ-  
մանն այն զոր խնդրէր Արուսահյան։ և յոր-  
ժամ գնաց գետպանն, իշխան մի Օքաքարիս  
անուն որ գրեալ էր զորդին թագաւոր Գէ-  
որդի անուն, որ էր ՚ի կնոջէ թագաւորազնէ.  
զի առ նոսա օրէնք է հայրենեօք թագաւո-  
րել, և որ լինի յազգէ թագաւորի։ Հաճոյ  
թուեցաւ Օքաքարիսի առաքել զորդին առ

Եթուսահն։ Եւ յորժամ լուսւ զգալուստն նորա թագաւորին Տաճկաց, արար ուրախութիւն մեծ, և առաքեաց և արար պատրաստութիւն ճանապարհին ծախը մեծամեծք՝ մարդոյ և գրաստուց. և եհան հրաման եւ լանել ընդ առաջ նորա Տաճկաց և քրիստոնէից եկեղեցականաց և աշխարհականաց. և յորդեալ ընթանայր աշխարհն ամենայն ընդ որ գայր նա՝ առաջի նորա, զի տեսանէին նոր իրք. մանուկ քսանամեայ վայելու Հաւակաւ նստեալ յուղու, որ գարդարած էր նոր և անգին թամբօք և կուբոյ (1) ոսկեղէն ականակաղ և մարդարտաշար ՚ի վերաց նորա գմբեթաղարդ, և ՚ի վերաց գմբեթին խաչ ոսկեղէն։ Եւ ունէր հանդերձ անասելի բանիւ, և թագ ՚ի գլուխն անգին, և խաչ ոսկի ՚ի վերաց խնձորց ՚ի մի ձեռնն, և գաւաղան ոսկի ՚ի միւս ձեռնն, և չորք եպիսկոպոսք ընդ նմա և բազմութիւն քահանայից, և չորս քահանայս տատի և անսոի բարձեալ խաչ ոսկիս. և զօրքն զարդարունք պէսսլէս հանդերձիւք, և հիանային տեսողքն։ Եւ թագաւորին Տաճկաց եւ ընդառաջ նորա վառեալ բազում զօրք, և տարաւ զնա՝ ՚ի Շաղտատ, և նստան ՚ի միում բարձի։ Եւ կոչեցաւ ՚Իմոնէսիոս պատրիարքն և արար պատարագ և հաղոր-

(1) Կո-բայ է գահն կոմ հովանոցն կաղմեալ ՚ի վերաց ուոյ ուղու կամ փղե։

գեցաւ թագաւորն Գէորգի . և զարմացաւ  
պատրիարքն ընդ իմաստութիւն պատանեցն  
և ընդ հանձարեղ գաւառնութիւննորա ուղ  
զափառութեամբ , և օրհնեաց զնա : Եւ թա-  
գաւորն Տաճկաց ետ թագաւորին քրիստոնէ-  
ից պարգեւս անկշխու և անթիւ , զի գիտէր  
թէ այնպէս յառաջ քան զնա ոչ ոք փառա-  
ւորեցաւ ՚ի թագաւորացն որպէս ինքն՝ գա-  
լուստեամբ թագաւորին Նուբեաց : Եւ հա-  
տատեցին զգաշինուն և զբազաքնոր կոչի Նը-  
ւան և Գաւզան՝ արարին կիսարաժինս , որ  
կան ՚ի վերայ Նեղոսի ՚ի մէջ Տաճկաց և  
Նուբեացն : Եւ գնաց թագաւորն Գէորգի  
մեծապատիւ փառօք . բայց երկու եպիս-  
կոպոօք և այլ բազումք մեռան ՚ի նոցանէ ,  
զի չէին սովոր փոփոխական օդոց ամարան և  
ձմերան :

Եւ յայնժամ երկու զօրագլուխքն Տաճ-  
կաց Նասրն և Պապաքն հաճեալ ընդ կրօնս  
քրիստոնէից զօր տեսսին ՚ի Նուբեացն , բա-  
զում զօրօք գնացին առ Ծէոփիլոս թագա-  
ւորն Յունաց և եղեն քրիստոնէայք : Եւ  
Ծէոփիլոս հպարտացեալ նոքօք և առեալ զօր  
եկն ՚ի Օռւպատրա և քակեաց զնա , և կո-  
տորեաց հաւասարապէս զՏաճիկն և զքը-  
րիստոնէայսն . և ապա գնաց ՚ի Ուլտենի և  
գերեաց . և ելաւ յշմուշա և ՚ի Հանձիթ  
և գերեաց զքազումն և գնաց : Եւ լուեալ

զայս Աբուսահլայն՝ էջ յերկիրն Հռոմացեցւոց Երկու բանակօք որ կային ընդնոսա, եւ ըեսուն հաղար Վուզրի<sup>(1)</sup> և Երեսուն հաղար վազառական, և յիտուն հաղար ուղտ և քսան հաղար ջրի բարձեալ ուոճիկս. և գնացեալ էառ զԱնկուրիա: Եւ Ել յԱմուրին քաղաք մեծ և բաղմամարդ, ամուր և վայելուչ, որ ոչ գոյր նման նմա ՚ի վերայ Երկրի, և Երկուատսան օր պաշարեաց զնա սաստիկ պատերազմաւ, և առ զնա մատնութեամբ իշխանի միում Շօռնան անտւն. և կային ՚ի նմա հաղար վանիք կուսանաց, զորս ետ կանայս ծառսցից իւրոց. և սպանին ութեատան հաղար անձինս, և այրեցին զքաղաքն և զեկեցիան. և անձառ է իրաւունիք դատաստանին Վատուծոյ և ոչ ոք է հասու նմա<sup>(2)</sup>:

Եւ կայր որդի մի Աբուսահլայ Դաւութ անտւն: Այս ինդրեաց ՚ի հօրէն բառնալ ըլքքրիստոնէից համարձակութիւնն, ոչ բառնալ մեռեալ վերամբարձ, և ոչ հարկանել:

(1) Վուզրիք են Մաւրիսանացի Արտակ, Մաղրբուզիք:

(2) Աւելոնդ յիշել զպաշարումն քաղաքիս լեալ ՚ի ձեռնեղ բորբդւոյ նորին՝ Աբաս զօրավարի, որ տեւեաց, ասէ, ամիսս Երիս, և ոչ ինչ կարացեալ միասնել քաղաքին ՚ի պատճառս Ասգառիս (Զախարիա) գետոյ, որ շուրջ զնայվաւ տղմացեալ անկուտելիք պահեր զնա, թողին զպաշարումն և ՚ի բաց գընացին: Յեր. 190—191: Այլ ամենայն պատմագիրք Յուղաց և Ասորեց ասեն եթե մատնեցաւ քաղաքն ՚ի ձեռն ուրումն մարդոյ, զոր կոչեն Պոյիսիցէ, և զոր պատմագիրս Ճորչ կամ Ճորճան կոչէ:

ժամահար, և ոչ երեւելիսաչ արտօքոյ եկեղեցւոյ, և ոչ պաշտելյացտնապէս զպաշտոն խորհրդոյ եկեղեցւոյ, և ոչ մտանելգինի ՚ի քաղաք և ջնջել զլսողն յերերէ . և այսպէս ատեայր զքրիստոնեայս ՚Դաւութին :

Յայսմ ժամանակի յայտնեցաւ Աբուսահլայ թէ Աբաս եղբօրորդին իւր կամի սպանանել զիա, և բազում իշխանք ուխտեալ են առնուլ օդնական զնուոմայեցիս և բառնալ զթագաւորութիւնն Տաճկաց, և լինել ընդ Հուոմօք . և եդ զնոսա ՚ի կապանը և մեռան ՚ի սովոյն . և գրեաց ընդ ամենայն Տաճկունք թէ Աբաս կամէր եղծանել զիշխաննութիւնն Տաճկաց, և վասն այնր պատճառի տտեն զԱբաս անունն Տաճկունք :

Յայսմ ամի երեւեցաւ ՚ի կողմանս հիւսիսոյ կարմիր ամսգ իբրեւ զհուը, երեք գիշեր, և ապօտ եկն անձրեւ անլուը և անտես, որ բերէր քարինս և կեղեւեաց զծառս, և մերկացոց հեղեղն զդաշոս երկրի ՚ի հողոց, և ելաւ հեղեղն ՚ի վերայ խառանայ և խեղեաց անթիւ բազմութիւնս մարդոյ և անասնոյ, և տապալեաց գիւղս և գաւառս բազումն, և տարաւ ելից զնոսա յԵփրատ :

Հետ այսորիկ տռաքեաց թէոփիլոս թագաւորին նուէրս Աբուսահլայ և խնդրեաց ՚ի նմանէ փոխել զգերիսն, տալ զնուոմայեցիսն և առնուլ զՏաճիկսն Եւառաքեացնմա

(Վըուստհլ) կրկին պատարագս՝ յիսուն քեռն  
ուղտու, և ասաց . “ Չէ օրէն Արաբկաց փո-  
խել զմարդ Արաբ ընդ Յունի, զի պատուա-  
կան են Արաբիկը . բայց թէ տաս զմերն,  
առնեմքեղ գարձուածս բազումա: ” Եւ ար-  
ձակեաց (Յէովիլոս) զբազում Տաճիկս, և  
եղեւ խաղաղութիւն ՚ի մէջ նոցա:

Բայց երեւեցաւ զայսու ժամանակաւ ՚ի  
Պաղեստին այր մի Յամամմ անուն, և ասէր  
զանձնէ պատգամաւոր Ծատուծոյ և նախան-  
ձախնդիր պատգամաբերին առաջնոյ . և ա-  
սէր թէ “ Չէ արժան ՚ի քրիստոնէից հարկ  
առնուլ, բայց միայն չըրս դրամ . ” և խըն-  
դային քրիստոնեայք, և ժողովեցան երեսուն  
հազար այր մերկ և բոկ և աղքատք . և եւ  
նոքօք Աշրուսաղէմ և քակեաց զառւրք Յա-  
րութիւնն : Եւ եկն առ նա Պափր<sup>(1)</sup> զօրա-  
գլուխն ՚ի Դամասկէ և սպան զնա: Եւ յայն  
ժամն մեռաւ Վըուստհլն և թագաւորեաց  
Ահարոն որդի նորա<sup>(2)</sup>:

Եւ ՚ի նոյն ամի մեռաւ Յէովիլոս, և թա-  
գաւորեաց Վիխայէլ որդի նորա երեք ա-  
մաց, և Յէովիլոս մայր նորա կարգաւորէր  
զժագաւորութիւնն :

Իսկ Ահարոն թագաւորն (էր) այր կերող և

(1) Յօրինակին Զափ :

(2) Ահարոն թ. - Ապուճաֆար Հարուն էլ - Ամթէք  
կամ Վասեք Կոշեցեալ, թագաւորեաց յամէ 842-847 \*

արքեցող, և ինչ ոչ իմանայր ՚ի յանցից և ՚ի պատահմանց աշխարհին, թողեալ զթագաւորութիւնն ՚ի ձեռն արանց սմանց, (թագաւորեալ) զհինգ ամ և մեռաւ :

Եւ թէ ոդորա վարեաց զթագաւորութիւնն չորեքտասան ամ ընդ որդւոյն և մեռաւ և հաստատեցաւ Ոիխայէլն : Եւ ՚ի ժամանակս սորա վեց թագաւոր փոխեցաւ Տաճկաց . Ահարոն, Զափար, Վահմադ, Ահմադ և միւս Ահմադ, Ապու-Աբդլա՛սը յարքեցութեան իւրում սպանանէր զբազումն առանց պատճառի . զինի նորա Վուհդի<sup>(1)</sup> որ եւ ՚ի խորասան և եկն ՚ի Ծաղտատ :

Խոկ Ոիխայէլն զքսանեհինգ ամ թագաւորեալ մեռաւ, և զի ոչ գոյր սմա որդի, թագաւորեաց ոմն Վասիլ անուն երկու ամ<sup>(2)</sup> . և զհետ սորա թագաւորեաց Եւոն (Զ) որդի իւր ամս քսանեհինգ և ամիսս ութիւն մեռաւ Վհուդ (Ալ-Ահդատի) յաւուրս սորա, և թագաւորեաց Ահմատ ամս քսան երեք :

(1) Այն է Ալ-Մոհատի Մահմէտ, որ թագաւորեաց յամէ 869—870 . Զաս յաջորդեաց Ալ-Մոթամէտ Ահմէտ յամէ 870—892 :

(2) Վասիլ եր Ալբշակունի ազգէ . և եր սենեկապետ Միխայէլ կայսեր . յամի 866 արար զնա իւր գահակից, այլ զինի միոց ամի կացոյց փոխանակ նորա զոմն յաննշանից Վասիլիկիանոս անուն, վասն որոյ և Վասիլ զերկոսին եւս սպանեալ ինքն թագաւորեաց ամս ութ և տասն, և ոչ ըստ առելց Միխայէլի՝ ամս երկու :

Իսկ թէոփիանա մայրն | Եւսնի զինի մետասան ամի թագաւորութեանն կամեցաւ սպանանել զօրդին, և որդին զմայրն. և յան կարծ մեռաւ մայրն վկայեալ բարի գործովք լը, յետ ամի միոյ մեռաւ կինն | Եւսնի, և նա կոխեաց զկանոնս Առաքելոցն և էառ այլ կին, և եղեւ պտելի ամենեցուն. և թողեալ զկինն առանց պատճառի, և առ մի կին այլ և էառ այլ երրորդ կին, զի ոչ գոյր յան դիմանիչ, և առ չորրորդ կին կենդանի. և ըստ կըսաւ կանոնել թէ պարտ է առնուլ չորս կին ամենայն մարդոյ. և յետոյ ինքն աղեցաւութեամբ մեռաւ : Եւ յայն ժամն յայտնեցաւ 'ի պատրիարքն կրօստանդինուպօլսի կախարդութիւն, և հանին զնա և դրին միւս այլ, և գտաւ նա կախարդ և կռապաշտ, զի եգեալ էր ներքոյ վարագուրին կռւոք եւ պաշտէր զնա 'ի ժամ խորհրդոյն . և յայտնեցաւ չարիքն և վասն սյար պատճառի բարձաւ վարագոյրն յեկեղեցեաց նոցա ժամանակս յոլովս : Եւ եղին պատրիարք մի այլ՝ և նա պաշտէր կռւոս և ձգեցին զնա, որ աւէր թէ՝ « Ի ձեր հայրապետացն եմուսեալ զայս, թէ ոչ մինչ 'ի յայս ոչ գիտէի զայս »: Եւ այս եղեւ նոցա՝ զի ոչ ունէին զկատարեալ սահման հաւատոյ, թոյլ ետ նոցա Առառուած գործել զանարժանան :

**Զինի այսորիկ թագաւորեաց Աղեքսան**

պրոս որդի լեւոնի ամ մի (1). և էր սա հետեւող կախարդաց . և 'ի ժամանակս սորա եղեւ շարժ 'ի թարակիս , և պատառէր երկիք և կըանէր բազում եկեղեցիս և շինուածս . և մեռաւ Աղէքսանդրոս հարուածօք , և թագաւորեաց կիսեղբայր նորա կրոստանդին (ե) ամս յիսուն և եւթն . և զի տղայ էր , եղին նմա դաստիարակս և օգնականս մինչեւ հաստատեցաւ :

Ի սորա ժամանակս փոխեցաւ թագաւորութիւնն Տաճկաց (Արաբաց) 'ի ցեղն (Վահմետի 'ի ցեղէն Ալեայ (2), և թագաւորեաց Աբլաբաս (Ապուլ-Աբբաս) ամս քսան : Եւ յայսմ ամի ել գլխաւորն Բուլղարաց և զօրացաւ 'ի վերայ Յունաց , և արկ վնօսա 'ի կրոստանդինուալովիս և նեղեաց յոյժ , և ոչ հանդարտեաց սրատերազմն նորա զամենայն ժամանակս կրոստանդեայ :

Յերեքտասան ամին կրոստանդեայ թագաւորեաց Արաբկաց (Վահմէտ ամս վեց : Եւ 'ի քսան և ինն ամին կրոստանդեայ թագաւորեաց Պափար ամս քսան և չորս : Ի յիսուն երեք ամին կրոստանդեայ թագաւորեաց Աբունաօր (Ապուլ-Վանսուր) 'ի վերայ Արաբացւոցն ամս երկու . և 'ի յիսուն և չորս ա-

(1) Աղէքս կամ Աղէքսանդր էր կրակը եղբայր Լեւոնի սրում յաջորդեաց եղբօրորդի իւր կրոստանդին է , ամս 47:

(2) Յօրինակիս՝ և 'ի ան Ալեայ :

մին կոստանդեայ թագաւորեաց Աքլաբաս  
(Ապուլ-Աքլաբաս) ամս հինգ : Եւ ՚ի յիսուն և  
հինգ ամին հիւանդացաւ կոստանդին և մե-  
ռաւ , և թագաւորեաց վեսայ նորա (Ոռ-  
մանոս (1) , Եւ յացսմ ամի եկին Ախմոն դլսա-  
ւորն Բուլղարաց և գերեաց զթրակիա , և  
շոգաւ նստաւ ՚ի վերայ Անդրիանուպօլիսի և  
նեղեաց զնա յոյժ և առ զնա և քակեաց : Եւ  
առաքեաց (Ոռմանոս առ Ախմոն և խնդրեաց  
աէր , և ած ՚ի հաւան և տեսին զմիմեանս ՚ի  
վերայ ծովուն և եղեւ խաղաղութիւն նոցա  
յարեւմտից կողմաննէ , և դարձան ՚ի կողմն  
արեւելից :

Եւ վասն զի կապադովիլիս Հայոց և  
Վիջագեաք Ըսորւոց և Վիլիլիս ընդ ձե-  
ռամի Տաճկաց էին ՚ի Հերակլեայ (Հետէ) ,  
բայց այժմ ակարացան վասն արբեցութեան  
և շնութեան իւրեանց : Եւ եւ Վիրակոս զօ-  
քավարն Ոռմանու և եկին ՚ի Անըսենի փրքը  
Հայոց , և քաղաքն խնդրեաց ներել նոցա  
զքառասուն օր , զի առաքեացեն առ թա-  
գաւորն իւրեանց եթէ զի՞նչ հրամացեցէ .  
և լուաւ նոցա Վիրակոս : Եւ հանին դես-  
պան որ գնայր , և կալան և ածին զգեսպանն

(1) Այս Ոռմանոս Ա , եր աներ կոստանդնի կացսեր  
Պերփերումենայ , և որդի Վաշտակայ հայկաղնայ , որ ՚ի կեն-  
քանութեան քեսայի իւրայ թագաւորեաց ամս 26 : Միքա-  
յիլ Զամշեան , Հատ . Բ , յեր . 816 :

առ Կիւրակոս . և նա վասն երկեղի սպանման  
երդուաւ նոցա արատով տալ նոցա զքա-  
զաքն . և յամեաց առ նոսա , և ապա մտեալ  
՚ի քաղաքն ետ նոցա աւետիս թէ՝ “ Այսօր  
հասանեն զօրքն մեր , և ՚ի ժամ երեկոյին  
բացէք զգուռոն որ մտանեն ՚ի քաղաքս : ”  
Եւ հաւատացին նմա : Եւ կազմեցան Հոռ-  
մոցեցիքն իբրեւ զզօրս Տաճկացն , և եկին  
՚ի ժամ երեկոյին և մտին ՚ի քաղաքն . և լցաւ  
քաղաքն զօրօք , և առին զնա . բայց ոչ սպանին  
զՏաճիկոն զի երդուեալ էին , և հանին զնոսա  
և գնացին (1) : Եւ զլարնոյ քաղաք առին և  
զԲեսուն և զամենայն երկիրն . և գնացեալ  
՚ի Կիլիկիա առին զնա և տիրեցին նմա : Եւ  
ելեալ գնացին յԱնտաք և ՚ի ծավեզերայս և  
Աշրուսաղէմ , և հաւանեցան փութանակի  
զի տկարացեալ էր Տաճկին :

Եւ յայսոսիկ մեռաւ Ռոմանոս (Ա) և թա-  
գաւորեաց Կոստանդիանոս վեսոյ նօրա որ  
էր այր վարժ գրոց և բարեգործ : Եւ ՚ի չոր-  
րորդ ամին նորա թագաւորեաց Աբուսահը  
՚ի վերայ Արաբկաց . և առաքեաց Կոստան-  
դիանոս զորդի իւր զլ ասիլն որ եկին և էառ  
զլամուսատ : Եւ եկին համբաւ գուժին՝ թէ  
մեռաւ Կոստանդիանոս (Ը) և թագաւորեաց  
Ռոմանոս (Բ) որդի իւր : Եւ ՚ի նոյն ամի մե-

(1) “ Յաւուրս Աբասայ և Ռամանոսի առաւ Մելոն է  
՚ի Տաճկաց յՅԶՀԴթ թուին : ” Վարդան , յէր , 120 :

ԶԱԿՅՐ

ռաւ Աբուսահին՝ թագաւորն Տաճկաց, և  
թագաւորեաց Եպու Խանասն ամս վեց:

Իսկ Ոտմանոս թագաւորեալ՝ արար պատիւ զօրացն և ետ պարգեւս առատաձեռն,  
և առաքեաց զօր և առին դաշլալ և նեղէին  
զՏաճիկսն: Եւ մեռաւ Ոտմանոս (Բ) և զօրքն  
թագաւորեցուցին զԱխիկիփարոս ՚ի վերայ իւ-  
րեանց. այր ատեցող ուղղափառաց՝ ՚ի բազ-  
մաց պատրեալ: Առ ելեալ ՚ի Վելտենի ե-  
տես աւերակ զքաղաքն և զաշխարհն, և ա-  
ռեալ խրատ ՚ի հաւատարմացն իւր թէ՝ “Ա-  
ռաքեա առ Աթանաս (1) պատրիարքն Ասոր-  
ւոց որ բերէ զազգն և շինէ զաշխարհս, որ  
թէ դարձեալ զօրանան Տաճիկը, ըստ է մեզ  
զի նոքա կորիցեն և անկցին ՚ի ձեռն Տաճ-  
կաց: Եւ առաքեցաւ (առ) տէր Յովհաննէս  
յԱնտաք և երդուաւ նմա, որ թէ լնու զաշ-  
խարհն ուղղափառաց նա, կամ դարձուցնէ  
զամենայն երկիրն յուղղափառութիւն, և  
կամ ոչ երկաբնակացն տացէ արհամարհել  
զնոսա: Եւ հաւատաց նմա Պատրիարքն,  
և գնաց ժողովեաց յամենայն տեղեաց ուղ-  
ղափառս խոստմամբ թագաւորին, և շինեաց  
զՎելտենի և զերկիրն և վանորեայս բա-  
զումս, և արար զընակութիւն իւր ՚ի Պերի-

(1) Աթանասոք՝ սխալ համարի թարգմանչին փոխանակ  
գրելոց Յովհաննէս, որ էր յայնժամ կաթողիկոս Ասորւոց,  
որպէս փոքր մի զկնի ուղղէ զախալն:

տրն՝<sup>(1)</sup> : Եւ յորժամ՝ յաջողեցաւ իրքն, կոչեաց թագաւորն զնա՝ ի կոստանդնուպօլիս պատճառանօք խոստմանն . և գնաց Տէր Յովհաննես բաղում՝ եպիսկոպոսօք՝ ի կոստանդնուպօլիս :

Ի թուին Կոսորւոց ԽՄՁ (1280) և Հայոցն աև (407) ժողովեալ էին անդ երկարնակը բաղում, և արարին քննութիւն բաղում վասն հաւատոց երկու ամիս . և այնշափ ութեցան Քաղկեդոնիկքն, որ չմնաց կարծիք ձշմարտութեան ՚ի նոսայամենայն լողացն : Եւ ապա դարձեալ խաքեցաւ թագաւորն յոմանց և սկսաւ ողոքել և խոստանալ աթոռարա և պատիւս եպիսկոպոսացն թէ հաւանին և ընդունին զդաւանութիւն նոցա, և սպառնալիք՝ թէ ոչ հաւանեսցին : Իսկ նոքառ յողոքանացն պատրեցան և ոչ՝ ի սպառնալեցն երկեան, այլ ասացին . “ Ո՞ք ոչ կարեմք բաժանել զմիաւորեալ բանն Կոտուած յերկուս և բաժանիմք՝ ՚ի նմանէ կամ վասն պատւոյ և կամ վասն երկեղի : ” Եւ լուեալ զայս թագաւորն բարկացաւ ՚ի վերաց նոցա և եդ զնոսա կապանօք ՚ի բանտի չորս ամիս :

Եւ բարկութեամք եհար Կոտուած ըզ թագաւորն և մեռաւ, և առ զմագաւորութիւնն Յովհաննես այր սպատերազմող

(1) Պերիսն է անուն վանացն ղոր շնեաց Պատրիարքն Ասորւոց :

և անձնեայ . բայց տաեն թէ կինն՝ Նիկիվորաց թէ՛տիանէ զայրն իւր սպան , զի չէր ամուսնացեալ ընդ նմա , և առ զՅավիշաննէս , որ յառաջագոյն բառնայր և գնէր զըմուշկ<sup>(1)</sup> թագաւորին և շնայր ընդ թագուհին . և թէ՛տիանէ առ զնա սյր և եղ նմա թագ , և կոչեցաւ վասն այսորիկ Չմշկիկ<sup>(2)</sup> . Այս եղեալ աջողակ՝ էառ գաւառս բազումն ՚ի Տաճկաց . և սա եհան զբատրիարգն Եսորւոց և զեպիսկոպոսն իւր ՚ի բանտէն և գնացին ՚ի գաւառս իւրեանց :

Եւ յայսմ ժամանակի եղեւ պատրիարքըն Ենտիոքու Քաղկեդոնիկ՝ Ելափի (Եղափիոս) անուն , որ արար հալածանս ուղղափառաց ձեռնտուութեամբ ոմանց իշխանաց՝ զբոց որդինն սան էր առեալ յաւազանէն . որ և առեալ զԵւետարանն Եսորւոց և զմեռոնն և զհազրոգն երեք կրկին ջանաց սյրել հրով բորբոքնլով , և ոչ այրեցաւ ՚ի շնորհացն Եստուծոյ պահարանեալ . և ոչ զըշացաւ անօրէնն , այլ ասէր լըբութեամբ թէ՝ « Կախարդութեամբ դոցա ոչ այրին . ո որ և

(1) Յօրինակիս եղեալ էր նախ՝ պառակ , որպէս ունի և միւս թարգմանութիւնն , և յետոյ յաւելեալ էր ՚ի մերումն տառս չ բայց թէ մին և թէ միւսն անցարմար է մեկնութիւնս զոր տայ Միխայել Չմշկիկ անուան որ էր մականուն Յօվիշաննու կայսեր :

(2) Տես ՚ի գիրս Մատթեոսի ուռհայեցւոյ . Ա . 7 . Յոր . 6 . տպեալ յԵրուսաղէմ :

չարագոյն գտաւ սա քան զի, աբուգողոնու-  
սոր, որ ՚ի տեսանելն զերիս մանկունսն ոչ  
այրեցեալ զզջացաւ և փառաւորեաց զի՞ս-  
տուած: Եւ սա յանդգնեալ ՚ի տօնի Յայտ-  
նութեն եհան յեկեղեցեացն և ՚ի քաղաքէն  
զայք և զի՞սորիք՝ արամբք և կանամբք, և ար-  
տաքոյքաղաքին արարին զտօնն: Որ և խնդրե-  
ցին յիստուծոյ արտասուօք և եդինուխտ ոչ  
մտանել ՚ի քաղաքն մինչեւ տեսցեն առեալ  
զվրէմ իւրեանց: Եւ կատարեաց Յստուած  
վազվաղակի զհայցուածս նոցա, և եհարցաս-  
մամբ և չարաչար ցաւօք զոյրն ամբարիշտ  
և մեռաւ, և գարձուցին զնոսա աղաչանօք  
և պատուով ՚ի քաղաքն՝ փառաւորելով զա-  
նունն Յստուծոյ: և գործեցաւ այս ՚ի թու-  
ին Յսորւոց՝ հաղար երկերիւր ութսուն և  
հինգ, և Հայոցն՝ չորս հարիւր երկոտասան:

Իսկ Զմշկիկ թագաւորն էր ՚ի Հանձիւ  
թայ գաւառէ և զայնը կողմամբ առներ ըզ-  
բնակութիւն իւր: սա աղատեաց զծառայսն  
ամենայն, և էր առատածեռն և ողորմած  
սրտիւ, և սիրեցաւ յամենայնէ: Ոս շինեաց  
մեծ եկեղեցի ՚ի Կոտանդինուպօլիս: և ասեն  
զնմանէ թէ Հայ էր աղդաւ: Ոս թագաւո-  
րեաց ամս երեք<sup>(1)</sup> և մեռաւ, և եղեւ սուգ  
մեծ առ հասարակ ընդ ամենայն աշխարհն:

(1) Յովհաննէս Զմշկիկ թագաւորեաց ամս վեց և ամի-  
ալս ինչ:

Հռոմայեցւոց : Եւ թագաւորեցին Ա ասիւ  
լըն և կրտանդին որդիքն Ուոմանոսի թա-  
գաւորին . և կային սիրով առ միմեանս ,  
քանզի Ա ասիլն կացոյց զեզքայրն ՚ի թագա-  
ւորութեանն , և ինքն կայր ընդդէմ Տաճ-  
կաց , որ և թագաւորեաց ամս յիսուն և  
հինգ , և զամենացն աւուրս իւր յաղթու-  
թիւնս բազումն կատարեաց և հնազանդեաց  
զբազում աշխարհս , և կայր ընդդէմ Հայոց  
և արեւմտից և արար հնազանդ զՀայս և  
զԲուլղարս <sup>(1)</sup> . և մեռաւ , և կրտանդին և զ-  
բայր նորա եկաց ՚ի տեղւոջն երկու ամ և  
կէս և մեռաւ :

Եւ յաւուրս սոցա թագաւորեաց Տաճ-  
կաց Արփատլ ամս քսան և ինն , և զինի նորա  
Շուբաբը ամս տասնեինն , և յետ նորա  
Ապլաբաս (Արուլ Արբաս) ամս քառասուն  
երկու :

Եւ զինի կրտանդիանոսի (ը) թագաւո-  
րեաց Յունաց Ուոմանոս (գ) եզրօր որդին  
կրտանդեայ <sup>(2)</sup> , և ելեալ ՚ի պատերազմ ՚ի  
մերայ Տաճկաց և յաղթեցաւ և եղեւ փա-  
խտական : Եւ սա արար հալածումն մեծ

(1) Զգործս պատերազմացն Վասիլի տես ՚ի զիրս սպառ-  
մաթեան Ստեփ . Ասոզկոց . Գիրք Բ . Գլ . ԺԴ . և այլն :

(2) Ուոմանոս Գ. էր փեսաց կրտանդնի Ը . զորոյ գրուս-  
ըն Զայի առեալ էր : Մատթեոս Աւոհայեցի Ա . 41 : յեր.  
65 : — Սմբատ . յեր . 50 : տիտ Փարփղու :

ընդ ամենայն երկիր իշխանութեան իւրոց . և սա գոչեաց զտէր Յօվհաննէս ՚ի կոստանց դինուագոլիս . և գնաց վեց եպիսկոպոսօք և բազմութեամբ քահանայից . և եգիտ ժողովեալ ՚ի կոստանդինուագոլիս երկերիւր եպիսկոպոս քաղկեդոնիկ , և արարին քննութիւն հաւատոյ : Եւ յոտն ունէին զՊատրիարքն և ինքեանք նստէին . և Պատրիարքն այր ծեր էր և աշխատէր յոտն , և երկու եպիսկոպոսք աստի և անտի անցեալ պեղէին ըզնա . և նա խօսէր գրոց վիայութեամբ և յանդիմաննէր խատագոյնս . և խօստացան տալնըմա զաթուռն (Նախիոքութիւն) խօսք մի ասէ՝ երկու բնութիւն յետ միաւորութեանն : Եւ պատասխանի ետ և ասէ . « Ես զաթուռն Պետրոսի ունիմ յերկըի և յերկինս , և մարմաւոր աթմուռոյ ոչ ցանկամ . և զայդ որ մի խօսք ստիպէք զիս ասել՝ երկու բնութիւն , Երրորդութեանն ուրացութիւնն այլ ի՞նչ է՝ քան մին խօսք : » Եւ Վելտենց եպիսկոպոսն թէոդորոս ած նմա ապտակ ՚ի ծնուն աջոյ . և նա մատոյց զմիւսն . և յարեաւ ոմն եպիսկոպոս (Վարփի) և եհար զթէոդոր , և կայր յոտն առ ընթեր Պատրիարքին . և ասէին նմա նստիլ , և նա ասէ . « Ես զԲրիստոս ապտակեալ տեսանեմ և յոտն , և ես նստիմ : » Եւ գարձան արձակեցին զժողովին վասն տըրտմութեանն , զի սկսան ՚ի լալ թագաւորն և

իշխանքն : Եւ յետ այնորիկ սկսան դնել աւտեան , և ասեն . “ Դուք քրիստոնէութիւն կատարեալ ոչ ունիք . առէք մկրտութիւն և ապա քահանացութիւն և գնացեք : ” Եւ առէ Պատրիարքն . “ Վկրտութիւնն Քրիստոսի և քահանացութիւնն առ մեզէ , զոր ետուն մեղ սուրբ Առաքեալքն և պահեցին Դէռակորոս և Անտերիսս , և դուք իսկի ոչ ունիք . բայց թէ միայն նզովք ՚ի գլուխս ձեր : ” Եւ բարկացան և ետուն հրաման երթալ յարեւմաւտո յաքսորս . և տարան զնոսատ քսան և ութ օր , և դարձեալ զզչոցան և դարձուցին ՚ի Կատանգինուպօլիս և եդին զնոսաս ՚ի բանտի , օր լինելին յոլով բժշկութիւն , և ել համբաւ սքանչելեացն , և ոչ մնաց իշխան և ժողովրդական օր ոչ զարմոցան , և բազում կոյրք բացան և դիւահարք բժըշկեցան : Եւ անդ ՚ի բանտին կատարեաց բդկեանս իւր երանելին Ծովհաննէս պատրիարքն մարտիրոսական հանդիսիւ ՚ի փառա Աստուծոյ , և ամփոփեցաւ յաշակերտաց իւրոց , և եդաւ ընդ սուրբս յիշատակ նորա և ընդ մարտիրոսս մարմին նորա :

Եւ բարկութիւն Տեառն եղեւ ՚ի վերաց Ռոմանոսի և մեռաւ չարապէս . և թագաւորեաց Վիխայէլն (Դ) ամս ութ . և յայնժամ Տաճկաց թագաւոր Աբլաքս (Աբգալահ) էր : Եւ ոմն ազգային Վիխայէլի Կալափատ

անուն, ապստամբութիւն խորհեցաւ հինգ  
տմիս, և խառարեցին զայս նորա : Եւ յա-  
ռուրս Ոիխայէլի Ուղիման տաճիկ ետ զիւռ-  
հա ՚ի Հոռոմիք (1), և մեռաւ Ոիխայյն, և կա-  
րան զթագաւորութիւնն Օցի և թատուն  
(Թէսդորա) դստերըն կաստանդիանոսի :

## Դ.

Պարտ է զի յայսմ միջոցի գլեմք սակաւոք  
ասկս Թուքքաց ելիցն թէ յորմէ ազգէ են, և  
կամ ո՞ր է բնակութիւնն նոցա, և, կամ զիանդ  
բնակեցան առ, մեզ, զայով յերկիրս յայս-

Ա. Սէ սուրբն Անվաշէս ՚ի գիրս արարա-  
ծոցն (2), թէ « թորդոմ ծնաւ զԴովկ և զայլս  
ընդ նմա . » յայտ է՝ զի յազգէ Յարէթի է  
Թուքքդ, որ է Դովկ և Անագովդ : Եւ Թուքք  
վասն թորդոմաց ասին, որ յետ աշոտարակին

(1) Ամառթէռս Ռւռհայեցի (Ա. 45. յեր. 65—72).  
Երկար բանիւր ճառէ զանցս Ռւռհայոյ, և առէ եթէ Սալ-  
ման (Սիւլէյման) բերդապահ քաղաքին ձանձրացեալ ՚ի ներ-  
քին խռովութեանց և պատերազմաց, յանձնէ զքաղաքն  
՚ի ձեռս Մանիակաց որ էր իշխան կարգեալ ՚ի կողմանէ կաց-  
ուր ՚ի վերաց քաղաքաց Եփրատաց : Եւ այս եղեւ առ կայ-  
սերութեամբ Ռոմանոսի գ և ոչ Սիխայէլի : — Սմբատ .  
յեր. 51 :

(2) Ճննդոց : Ժ. 2. 5.

գնացին յարեւելս և դարձան ՚ի կողմն հիւսիսոյ, և առին բնակութիւն ՚ի մէջ երկուց լերանց մեծաց և երկայնից . և ձգեցան տաշըածեցան յարեւելից հիւսիսոյ մինչեւ յարեւմուտս հարաւոյ . և ունին երկու գրունքս, մին դուռն բանայ ՚ի Պարս և մին դուռն ՚ի Վիրս, զորս փակեաց Աղեքսանդր Վակեդոնացին: Եւ են նոքա պարկեցո ՚ի ցանկութիւն կանանց և հեղ գնացիւք և անագահք, և պաշտեն մի Աստուած, և կարծեն թէ երկինքն է այն մի Աստուածն . զի ասեն ի՞ն պահգիտ, և կօնն ըստ նոցա լեզուին կապսոտ կոչի, որ է կապոյտ Աստուած, զոր կարծեն վասն երկնից : Եւ ուտեն զամենայն մեռելոտի և զգարշելի, և ագանին բրդեղէնս և մողեղէնս, զի այլինչ ոչ լինի առ նոսա . և ոչ ունին օրէնս ինչ գրով և ոչ աւանդութեամք, զի ոչ գնաց առ նոսա Վարդարէ կամ Առաքեալ<sup>(1)</sup>: Եւ վասն այնորիկ դրամքը արդելին զնոսա, զի մի ապականութեամք լցուն զերկիր և բազմութեամքն խրեանց աւերեսցեն զաշխարհս : Եւ զգուռնն զայն՝ որ բանայ ՚ի Պարսս, առաւելամբացուցին Պարսիկը զշինեալն Աղեքսանդրէ բերդ մի, և շնացին բերդս վեց և կացուցին պահապանը . և յորժամ պէտս ունէին զօրացն, հա-

(1) Ասմուել, Վարդար, յեր. 127: Կիրակոս, յեր. 455.

նեին ՚ի նոցանէ Պարսից թագաւորքն վարձուք, և ՚ի վճարմանն պատերազմին դարձեալ տանէին արկանէին ՚ի ներքս :

Ասէ վասն նոցա Եղեկիէլ մարգարէն բանիւ Տեառն, ելանել Գովկայ և Վագովկայ՝ իշխանաց թարելայ և Առամսաօքայ, նորօք սպառնայ ազգին Նըեից, և անդէն կոտորիլ ասէ Աշրուսաղէմ. և Երկիցս կրկնէ մարգարէն զպոտուէրին Գոգայ և զապականութիւն նոցա<sup>(1)</sup> : Այլ և թէ ուսումնասէր կամօք միտ դիցէ պը, Երեք անգամ կրկնէ զելիցն նոցա, որ առաջինն Եղեւ յաւուրս Կամքիւսեայ Պարսից արքայի, զոր ոմանք Երկրորդ Վարուգուգոննոսոր կոչեն : Այս վարձեաց ՚ի թուրքաց և յաղթեաց թագաւորին Վթուրացւոց, և առաքեեաց ՚ի ձեռն Նողամփառնայ (Նողամփեռնեայ)՝ Պաղեստինէ : Եւ զինի նորա այլք ՚ի թագաւորացն Պարսից հանին և բերին օգնական իւրեանց ՚ի Վակեգոննոցւոցն ՚ի Ասսանեանցն, որը գային և տային (տանէին) յաշխարհն իւրեանց ոսկի և արծաթ և հանդերձս և պտուղս և այլ բարութիւնս բազումն, և նոցա ցանկութիւն շարժէին ելանելոց՝ թէ լինի հնար : Եւ նախ քան զգալուստն Քրիստոսի հինգ հարիւր և մետասան ամաւ դիպեցաւ նոցա ելանել այսպիսի պատ-

ճառաւ : Յորժամ ըստ սովորութեանն դարձուցին զնոսա ղհանեալ թուրքն յերկիրն իւրեանց և գնացին մերձ ՚ի դուռն , դարձան ՚ի վերայ տարողացն Պարսից և սպանին զնոսա , և յափշտակեցին բերդ մի և մուեալ ՚ի ներքս ամրացան , և աղդ արարին ազգին իւրեանց , և ելին բաժին մի և առին զայլ բերդորն և արարին ընդ իւրեանց հրամանաւ ըդդուռն . և յաճախեաց յայնժամ ելանել բազմութեանցն որ կային ՚ի ներքս : Եւ յայնժամ գիտացեալ՝ դարձեալ ամրացուցին զդուռնն , և ելեալ եկին յերկիրն Արազոյ , յաշխարհն Պարսից , և ասեն՝ թէ սպիտակ կենդանի ինչ իբրեւ զըուն առաջնորդէր նոցա , և յորժամ ցրուիլ ջանացին՝ կանչէր կենդանին և դառնացին առ նա և երկրագետն նմա . և այտպէս յաշխարհէն իւրեանց մինչեւ յԱրազա առաջնորդէր նոցա , և ապա եթող զնոսա , և անյայտ եղեւ երեւումն :

Եւ նոքա եղեն երեք բաժին , և ձգեցին վիճակ երեք գոււազան . մինն անկառ ՚ի կողմն հարաւոյ , և գնացին բաժին մի ՚ի նոցանէ ՚ի կողմն Հնդկաց և խառնեցան ՚ի նոսա հնազանդութեամբ : Եւ երկրորդն անկառ յուրեւմնւս հիւսիսոյ : և գնաց միջի բաժինն նոցա յարեւմոից թրակիոյ և բնակեցան անդ , և յանուն աշխարհին կոչեցան Արմանիք : Եւ երրորդն անկառ ՚ի միջոցս երկրի ,

և եկին խառնեցան ՚ի Պարսիկո : Եւ յետոյ  
ելին այլք բազումք , և դարձեալ փակեցին  
զգուռնն : Եւ էին ՚ի նոսա եւթանասուն  
գլխաւորք , որք եկին ՚ի յԱրազայ և արարին  
՚ի մէջ իւրեանց ծիր եւթանասուն իշխանքն ,  
և կանգնեցան բոլորեալ զծրաւն , և իւրա-  
քանչիւր գաւաղան ՚ի ձեռին իւրում , եւ  
ասհմանեցին և ձգեցին զգաւաղանսն վեր ՚ի  
յերկինս եւթանասուն գլխաւորքն և աստ-  
ցին՝ թէ « Ոյր գաւաղան անկանի ՚ի մէջ  
ծիրին , նա թագաւորէ . » և իւրեւ ձգեցին ,  
ինն գաւաղանն անկաւ ՚ի ծիրն և մէկն ցը-  
ցեցաւ : Եւ կանգնեցին ՚ի տեղւոջն ինն թա-  
գաւորութիւն , և ութն հնաղանցեցան մի-  
ոյն՝ օրոյ գաւաղանն ցցեցաւ , և կան անդ  
հաստատուն և ունին զգուռնն : Եւ տիրեն  
ներքոյ երկու լերանցն , որոց անուանք լե-  
րանցն կոչին Ատինք աշխարհի . և նոյնպէս  
տիրեն արտաքոյ լերանցն բազում աշխար-  
հաց . և անուն գլխաւորին իւրեանց հանա-  
պազ կոչի խաքան , զի այն էր առաջնոյ թա-  
գաւորին անունն , և գայ ազգէ յազգ : Եւ  
վասն զի բազումք ՚ի նոցանէ խառնեցան  
յԱրաբացիս , և նոցա անուամբն կոչին Վալի-  
ման , ՚ի Վալմայ առեալ զանուանակոչութին ,  
որ էր առաջնորդ զօրացն որք գնացին ՚ի Կո-  
տանդինուազօլիս : Եւ այսու մանաւանդ յա-  
րեցան ՚ի նոսա , զի մի Կոտուած քարսզեն

Տաճիկք իբրեւ զնոսա : Եւ լուան՝ ՚ի նոցանէ թէ մի երկրպագէք արարածոցս . վասն այնորիկ անարդեն զսաշն : Խակ այլքն որ գրնացին ՚ի Հնդիկս, որք յարեցան ՚ի քրիստոնեայս՝ քրիստոնեայք եղեն, և որք ՚ի կռապաշտան յարեցան, նոյնպէս կռապաշտք եղեն . այսպէս և որ յարեւմուտս՝ պէսպէս օրէնս առին :

Ամանասպէս և ժամանակաւ ընդ միւս դուռըն հանին Հայք և Վիրք, օգնական իւրեանց, և յարեցան ՚ի նոսա, և եղեն քրիստոնեայք : Ի նոցանէ են և Խիւլիսն անուանեալք ըստ բառին Վրաց . զի ըստ նոցաւեզուին իւն ձոր կոչի, և շին աման, որպէս թէ՝ ՚ի ձոր ամանած կան, և հանեն որպէս յամանոյ :

Արդ, առաջին ելանելն կամբիւսիւ է, որպէս ասացաւն . և երկրորդն՝ որ առ Տաճկաց (Արաբաց) թագաւորօքն եկին ՚ի Պաղեստինէ, և որպէս Յովհաննէս ասխացին ասէ, թէ “ Չորս հազար թուրք կային զհետ Արու Ասհակայ<sup>(1)</sup>, յորժամ էաւ զՄուրիաքաղաք : ” Խակ երրորդն գեռ եւս լինելոց է մօտ ՚ի կատարած աշխարհի . որպէս մարդուրէն Եղեկիէլ ստուգէ երեք անգամ գալ

(1) Այս է Աբուսահել զորմէ տես ՚ի վեր յեր . 572 և Դեւոնք վարդապէտ (188) Մահմետ կոչէ . փախանակ Ահմադայ :

նոցա ընդ միջոցս աշխարհի ՚ի Հրեաստան  
երկրի : Եւ ասեն , թէ յորժամ Տիբեր կայսր  
առաքեաց գեսպանս առ նոսա , նոյնպէս և  
Յուստիանոս և Հերակլ , ՚ի տեսանելն ըզ-  
նոսա՝ լայր Խաքանն . և հարցեալ նոցա ըու-  
պատճառն լալեաց , և ասէ . « Կայ առ մեզ  
նախագիտութեան բան ՚ի հարցն աւանդից ,  
թէ յորժամ Հոռոմոց Թագաւորքն ընծա-  
յիք և կաշառօք հնազանդին թուրքաց .  
յայնժամ մերձեալ է աւերն աշխարհիո Եւ-  
եհարց Խաքանն , թէ « Դուք Հոռոմայեցիք  
հարկս առաջք Պարսից » թէ ոչ : « Եւ նոքա  
ասեն . « Վէ , այլ Պարսիկք հարկին Հոռոմոց ,  
զի Տրայխանոս հարկ եղ ՚ի վերայ Պարսից : »  
Եւ զարմացաւ Խաքանն : Բայց գեսպանքն  
որ գնան առ նոսա , ոչ թէ ՚ի բուն աշխարհն  
նոցա երթան , այլ ՚ի դուրս կցո աշխարհն  
որ ասի Վարազա : Եւ զհինդ հազար կու-  
սանսն Շապուհ Խաքանայ առաքէր <sup>(1)</sup> , որ  
արտաքսյ բուն աշխարհին իւրեանց նստի  
յլնդարձակ վայրի : Բայց կան նոքա բուն  
օրինօք աշխարհին իւրեանց , զատ անտի որ  
մարդ ոչ ուտեն իրբե զգաւառին իւրեաց :

Իսկ ՚ի թուին Ասորւոց ՌՅԿ (1361) , և  
Հայոցն ՆԶԸ (488) Թագաւորեաց Յունաց  
կրատանդիանոս (Ճ) Աննոմախն՝ ամս երկու

(1) Տես ՚ի վեր յերես 269 :

տասան, այր մեծահոգի և առատաձեռն. և ուներ զա ցաւն՝ Ալլին<sup>(1)</sup>: Եւ զՃաճկաց թագաւորութիւնն Եբլաբաս (Եպուլ-Ավուար) <sup>(2)</sup> ուներ:

Յոյսմ ժամանակի ընկղմեցաւ Եղնկաց քաղաքն Հայոց ջրով, և մնաց միայն տուն մի հաւատացեալ և ողորմած տռն, որում անունն Ավրակոս էր, և հոգետուն մի: Եւ ՚ի սոյն ամի եղեւ շարժ ասստիկ ՚ի պահքն Եւաջաւորաց <sup>(3)</sup>: Եւ ՚ի նոյն տարւոջն եղեւ հակառակութիւն յԵնախոք եկեղեցականաց ուղղափառաց վասն իրաց ինչ, և ոմանք ՚ի նոցանե գնացին առ պատրիարքն երկաբնակ, և նա դարձոց զնօսա յազանդն իւր, և զայլ ուղղափառան բովանդակ հալածեաց ՚ի քազաքէն. և առ ՚ի նոցանե զեկեղեցին որ շենեալ էր ՚ի վերայ գերեզմանին <sup>(4)</sup> Պուկասու Եւետարանչին, զինի առնելյն զուրբն Պիտրոս: Եւ ՚ի զատկի տօնին՝ ՚ի նոյն աւաւրս եհան Եպտուած ընդ կառավին նորա. անկառ հուր յերկնից և այրեաց զեկեղեցին պատրիարքաւն և աշակերտօքն իւրովք, և այլ քաղում ժողովրդով, այնովէս զի և ոսկր մի:

(1) Առնացաւութիւն.

(2) Մատթեոս Առահոյեցի, Աղուառար կոչէ զատ. Ա. 54: որ էր ամիբազմ Պարսից և նատէր ՚ի Դուբին, և առեալ էր զգուստը Դաւթի Անհողինի:

(3) Մատթեոս ուռահոյեցի, Ա. 67:—Միտստ, յեր. 65. ախոց Փարիզու:

ոչ կարացին հանել՝ ի տեղւոջէն . և հաւատացաւ թէ դատաստան ՚ի Տեառնէ եղեւ ճշմարտապէս . և գարձուցին զուղղափառսըն ՚ի տունսն իւրեանց . և որք մնացեալէին յուրացողացն յայրեցմանէն , գարձան և նոքա ՚ի կրօնս իւրեանց <sup>(1)</sup> :

Իսկ յորժամ լուս թագաւորութեանն Տաճկաց չորս հարիւր և երեսուն ամ , յայնժամսկիզբն էառ թագաւորութիւնն իմուրքաց ՚ի Խորասան , և անուն նորա Տուղթիւրք , և առաքեաց զօրք ՚ի սահմանս Հայոց , և եկին ՚ի Վելտենի և առին վնա և գերեցին և գարձան . և կալաւ վնասա ձիւն սաստիկ ՚ի լւառն Ասանոյ և անկան ՚ի սպազէն երեք հազար անձինք . և գերիքն ազատեալ գարձան , զի կիրթք էին պաղց և ցրտոց և ոչ մեռան <sup>(2)</sup> : Եւ մեռաւ Աննումախն և առ ըլթագաւորութիւնն դուստրն իւր իմոդունն (իմէոդորա) <sup>(3)</sup> ամ մի . և զինի նորա Աիխոյն <sup>(4)</sup> այր ծեր , ամ մի . (Կր սա) այր սուրբ և պահող և ոչ ուտէր զայլց վաստակ , այլ ձեռոք իւրովք առներ դրգալս և վաճառէր

(1) Զայն պէտս պատմէ և Մատթէոս Ուռհոյեցի ձախագոյն եւս բանիւրք , Բ . 77 :

(2) Տես զարշաւանս ու զրիլ պէկի զոր արար յաշխարհն Հայոց . ՚ի զիրս Մատթէոսի Ուռհոյեցւոց . Ա . 69 . 70 . 78 :

(3) Իմէոդորա էր քենի կոստանդնի Մոնումախի , և քոյր Զայեաց : Մատթէոս ուռհոյեցի , Բ . 79 :

և անորի ուժէք : Այս յորժամ ետես թէ զօրանայ թուրքն , եհան զքրիստոնեացն՝ որ յայսմ կողմէ ծովուն և անցոյց յայնկոյս , և եկեալ թուրքն եգիտ զերկիլն անմարդ , և բնակեցան ՚ի տեղին : Եւ բազումք մեղադրեն նմա , բայց նա մարդասիրութիւն արար :

Եւ յայնմ ամի յարեաւ ոմն իշխան Կոմանաս , և առ զժագաւորութիւնն . և Ախիսոյին գերծեալ զդլուխն գնաց ՚ի վանք , և Կոմանասն թագաւորեալ երկու ամ<sup>(1)</sup> , և յետ նորա թագաւորեաց Կոմանեգիանս Տուկիծն յերկրէն Պամիղագոնայ որ զօրացաւ ՚ի վերաց թուրքաց և շննեաց պԱլուենոյ պարիսպն , և յետ ինն ամի թագաւորութեան իւրոց մեռաւ :

Եւ յայսմ ամի եկն Քսիսարի<sup>(2)</sup> զօրապետն Տուղիլին ՚ի Հալապ և առ զնա : Եւ այս եղեւ սկիզբն առնըց նոցա քաղաք ՚ի խորին Ասորոց Ախջագեաց , ՚ի Դամասկոսէ :

(1) Տես ՚ի զիրո Մատթէոսի Ուռհայեցւոյ . (Բ . 79) ըգզ գործ որատերազմացն զոր յարոց կոմանաս (Խոհհակ—կոմենսատ) ՚ի վերաց թագաւորութեան Յունաց՝ մինչեւ զբանամի զայն :

(2) Քսիսարի թուի ազաւազեալն Ալար—Խորասան անուան : զի այս էր զիսաւոր զօրապետ բանակին Տուղիլոյ , նոյնագէս և Ասմաւիս . Ամր—Քաֆր . Գիճամիր , Մճճէ և Խոռուլք . զօրոց անհնարին արշաւանս և զաւերս զոր ածին Հայոց աշխարհին և փորուն Ասիոյ յամն թագաւորութեան Տուկիծաց և Դիստինի ունիս տեսանել ՚ի պատմաթեան Մատթէոսի Ուռհայեցւոյ . Բ . 85 , 86 , 91 , 92 :

և 'ի Հալպոց 'ի կողմն Աշխրատաց մինչեւ 'ի ծովին Աղբիանաս, որ է Ավելիկիոյն. և գնաց զօրապետն Տուղթիլին մինչեւ 'ի ծովին Պօնտոսի:

Յաւուրա յայտոսիկ հնչեաց սատանաց 'ի սիրտ Պատրիարքին Կրատանդինուպօլիսի, որ արար գործ մի սոսկալի հրեշտակաց և մարդկան. զի զդրեանն և զմեռոնն ու զզափառաց Հայոց և Արորւոց այրել տայր և կրիսել ու տիւք, որ անգամ հացի և ձիթոց պատիւու առնելին՝ հաղորդին և մեռոնին. և ետ տանել զգատրիարքին Աթանաս քսանե հինգեպիսակոստոօք 'ի Կրատանդինուպօլիս. և նախ քան զերթալին նոցա պատառ եցաւ անաստածն այն նախատիչն՝ Քրիստոսի իբրեւ զԱրիսու: Եւ փոխանորդ նորա Պատրիարքին արար քննեութիւն, և նորա զայրացեալ և այրեցեալ սրտով խատագոյնա յանդիմանեցին զնոսա, և 'ի վերայ այսորիկ արգելան 'ի Դիոս կղզի<sup>(1)</sup>, և հրամանաւ թագութեայն դարձան 'ի տեղի իւրեանց<sup>(2)</sup>: Իսկ զինի Տուկիծին թագաւորեաց 'Իւօժանն Որոմանոս:

(1) Ընթերցիր՝ 'ի Հայոց գայլառի, ուր սովոր եմն Յոյնք արտորել զեկեղեցականա:

(2) Առ թագաւորութեամբ ոյն կայսեր Կրատանդին Տուկիծայ ածառ Յակոբ անահնեցի ընդ Առումաց և Աբուսահլի իշխանաց Հայոց 'ի Կրատանդինուպօլիս, առ 'ի միարանել զերկոսին եկեղեցին: և ետ Յակոբ վարդապետ զգիք դաւանութեան, զոր արքայն Գագիկ հասեալ 'ի Կ. Պօլիս, պատառեաց զթուղթն զայն առաջի կայսեր: Մատթ. Աւու հայեցի: Բ. 95 — Սմբատ, յեր. 7:

Եւ յայսմ ժամանակի մեռու սուլտանն թուրքաց Տուղթին, որ ասի 'Դօղլաբոք' (1) : և սուլտանացաւ Ըլլասալլամ (Ըլլա-արալան և եկն անձամբ 'ի Հայս և 'ի Յոյնս . և հարան Յոյնը յլլասալլամայ և ըմբռնեցաւ 'Դէօժանն (2) . և լուեալ 'ի Կոստանդնուպօլիս՝ թագաւորեցուցին զԱՇիխայլն . և զերծեալ 'Դէօժանն խաւարեցաւ աչօք, և սպանաւ հրամանաւ ԱՇիխայլին :

Եւ առաքեաց Ըլլասալլամ զքորորդին իւր զԱՇիխման, և առ զաշխարհն Հայոց և թագաւորեաց. և եղեն երկու սուլտանք, մին 'ի Յոյնը և 'ի Հայք, և մին 'ի Խորսասն՝ աղքաւ թուրքը : Եւ եկն ԱՇիխման և 'ի գիշերի մտաւ յանկարծակի յԱնտիոք և առ զեա, և արար զսուրքը Պետրոս մաքիթ (3) :

Եւ 'ի սոյն ժամանակս ամիրայ մի անունն 'Դանշման, ելաւ 'ի թուրքաց և եկն եմուտ յերկիրն Կապադոկացւոց, և առ զԱՇեւաստ և զԱՇխարիս և իշխանացաւ 'ի վերայ երկրին : Եւ այս է սկիզբն տանն 'Դանշմանայ (4) :

(1) Վարդան ճշոտագոյն եւս արտաքերէ զանունս զրել Գուլլաբէն, որ է Տուղթիւ-պէկ . (յեր. 127). Նոյնպէս և զծագմանէ նորա բացայաց խոսի, առեալ 'ի բանից Միփթարայ անեցւոյ :

(2) Մատթեոս Ուռհայեցի . 105 : յեր. 242 :— Վարդան, յեր. 156 :— Կիրակոս, յեր. 58 :— Սմբատ, յեր. 84 :— Սամուել :

(3) Մատթեոս Ուռհայեցի . Բ. 125 :

(4) Տես վասն Դանիշմանայ 'ի պատմութեան Մատթ .

Եւ յորժամ եղեն պատառմունքս այս ,  
ելին ոմանք 'ի շայոց արք թուով յիսուն և  
բնակէին յանապատս և ծեծէին զթուրքն և  
առնուին 'ի նոցանէ ինչո ՚ի պէտո իւրեանց  
Եւ եկին յերկիրն Վարաշայ , և գտին անդ  
այր մի հայ ազգաւ՝ Փիլարտոս անուն , այր  
անձնեայ և գեղեցիկ , և եղեւ նոցա գլուխ  
և մոխն յերկիրն Վիլիկիոյ , և տիրեալ էր  
թուրքն երկրին , և առին 'ի նոցանէ բերդ  
մի և ամրացան ՚ի նմա . և անտի առին զա-  
մենայն երկիրն քաղաքօք և բերդօք , և ա-  
ռին շուրջանակի Վիլիկիոյ աշխարհս բաղու-  
մը , զի արաշ , զթեսուն , զի պատմայն և ըդ  
Ալոենի և զի ւուհա՝ յայնկոյս Եփրատայ , և  
զայլս բաղումն : Եւ լուան Ծոյնք և տուին  
Փիլարտոսին պարգեւո , և կոչեցին Աեւառ-  
տոս : Եւ յետ այսորիկ ժողովեցան ՚ի վերայ  
Փիլարտոսին յամենայն կողմանց թուրք և  
առին 'ի նմանէ զկէս աշխարհի նորա . և գը-  
նաց ՚ի հաղուատ առ խալիփայն և տիրարա-  
ցաւ ՚ի հաւատոցն վասն երկրին , և առ ՚ի  
նմանէ գիր զի առցէ զերկիրն դարձեալ . և  
մինչ նա եկն , առեւալ էին և ՚ի մնացեալ աշ-  
խարհացն և ոչ ետուն նմա . և ասեն թէ  
զզնացաւ և դարձաւ ՚ի հաւատն իւր , և գը-  
նաց յասպաշխարութիւն ՚ի վանս <sup>(1)</sup> :

Աւոհայեցւոյ . Բ . 167 . և ՚ի ծանօթութեան 200 .

(1) Մատթէոս Աւոհայեցի ընդհակառակն սկաբսաւանօք

Եւ յայնմ ժամանակի յորժամ զօրացան թուրքն , հնազանդեցան նոցա Արաբացիքն որ Տաճիկը կոչէին վասն իշխանին իւրեանց ժառաւորի և իմաստնոյ , որում անուն էր Տայաւ : Եւ խառնեցան թուրք և Տաճիկը և եղեն ազգ մի : Եւ որ ՚ի Վազտատ իշխանն էր յազգէն Վահմետի , զայն թողին անդ և խալիփա անուանեցին , որ է յետ մնաց , այսինքն մնացորդ ՚ի Վահմետէ . և կալաւ պատիւ ՚ի Տաճիկ և ՚ի թուրքէ , և անտի առնուն օրէնք և պատիւ , և անտի սկսան ամիրայք ՚ի Խորասանաց Ելանել թիստով սուլտանին և խալիփային , և գային առնուին իւրեանց աշխարհ և տիրէին : Եւ եկի այսու պատճառամնօք ՚ի կողմանս Հայոց ամիրաց մի Սուդման անուն , ազգաւ թուրք , և կոչեցին զեա Հահի արմէն , որ է թագաւոր Հայոց : Եւ սմե ամիրա եկի ՚ի Վիջագետս , նոյնապէս թուրք ազգաւ , Արթուխ անուն և կոչեցան ազգաւ Արթուխիք<sup>(1)</sup> :

Խոկ թագաւորն Յունաց Վիխային թոյլ և կնատ , կայր անհոգացեալ ՚ի պատերազմաց , յուտել և յըմպել , և յարեաւ ՚ի վե-

Խոսի զՓիլառոսէ , և առէ զնմանէ՝ թէ իցէ հայորդի , այլ յունագաւան կրօնիւ . (Բ . 106, 107, 111, 122, 125, 128.)

(1) Յաղագս Սուդմանաց և Արթուխէանց , տես ՚ի գիրս Մատթէոսի Ուռհայեցւոյ , Բ . 146 և ՚ի հետեւեալս , և ՚ի ծանօթութիւնն մեր անդ՝ 179:

ըստ Նորա 'Աիկիվոր (Գ. Վ ստոնիատ), և եկե  
'ի Կոստանդինուպօլիս զօրօք և առ զնա, և  
սկսաւ կոտորել գքաղաքն . և Վիխայյն առ  
զմագն 'ի ձեռնիւր և գնաց ընդ առաջ նո-  
րս և առէ . « Վ զա զոր խնդրես և ար-  
գել զառւրդ 'ի քրիստոնէից : » Եւ առ զմա-  
գըն , և հրամայեաց գերծուլ դգլուխն և  
տանել 'ի վանք . և առ զիլին թագաւորին իւր  
'ի կնութիւնն (1) , և կրտեաց զերկու որդիս  
նորս , և վասն այնորիկ ատեցաւ յամենե-  
ցունց : Վ ասն որց ոմն յիշխանացն Վլէքս  
անուն , աբար իւր խորհրդակիցս բազումն ,  
և առ զմագաւորութիւնն . և նոյնպէս ա-  
րար Վլէքսն 'Աիկիվորայ՝ որպէս և նա Վի-  
խայյին : Եւ թագաւորեաց Վլէքսն 'ի վերայ  
Ծունաց ամս քսան և ինն (2) :

Վկիզքն թագաւորութեան սորա Վլէք-  
սալում առ զԴամասկոս և սպան զՎլէքսիս (3) .  
Եւ յայսմ ամի ելին 'ի Հռոմայ կոմսունք,  
և կուտեալ զօր բազում եկին 'ի Կոստանդի-

(1) Մատթէոս Ուռհայեցի , Բ. 109 , և 'ի ծանօթու-  
թեան 148 :

(2) Ալէքս Կոմենոս էր որդի Յովհաննու Կոմենոսի ,  
որ կալու զնթուն ամս իբր 57 : Մատթէոս Ուռհայեցի ,  
Բ. 117 :

(3) ԶԴամասկոս քաղաք ոչ Ալբ-Արտան՝ այլ որդի նո-  
րս Դգուշ առ 'ի ձեռաց Աքսիսի , այն է Ազիզ Խան-Ալք ,  
որ էր կառավարիչ կարգեալ Դամասկոսի 'ի կողմանէ Մե-  
լեք շահ սուլտանին Պարսից : Մատթէոս Ուռհայեցի , Բ. 127 :

նուպօլիս և պաշարեցին զնա զեւթն ամ. և  
այս է պատճառ Ելանելոյ նոցա : Հյորժամ  
Ըրթուխ ամիրայն առ զիշրուսաղէմ հրա-  
մանաւ Վելլիք շահին , և արար զՎերեղ-  
մանն ընդ հարկաւ , զի առնուխն յաղօթա-  
կանայն յամեն մէկէ կարմիր մի : Եւ յայ-  
նըմ ժամանակի Եկն 'ի Ֆուանկաց կոմս մի  
Օնջիլ<sup>(2)</sup> անուն՝ յշրուսաղէմ յերկրագագու-  
թիւն անօրինական տեղեացն . և յորժամ  
մոանէր 'ի Վերեղմանն աւելի պահանջէին  
'ի նմանէ քան զեղեալ հարկն , և 'ի յոչ տալին  
զարկին զնա և հանին զմէկ ակն նորա ՚ի ասս-  
տիկ զարկուցմանէն : Եւ առ եալ իշխանն ըդ-  
հանեալ ակնն եդ 'ի գրապանն , և տարաւ-  
զեա ՚ի Հառմ , և շրջեցց ընդ կոմսունսն  
ամենայն , և շարժեաց զնոսաւ 'ի նախանձ  
Տեառն<sup>(3)</sup> . և Ելին և Եկին նախ ՚ի կոստանդիւ-  
նուպօլիս : Եւ մինչ կային նոքաւ 'ի վերաց  
կոստանդինուսօլուի , եղեւ շարժ 'ի յնտիոք  
և անկաւ ողարիսապն և խլեցաւ բուրգն մի  
յարմատոց<sup>(4)</sup> , և գտաւ 'ի նա բազում պատ-

(1) Կարմիրն է անուն ուկի դահեկանի :

(2) Այն է կոմսն Ռեմանաւ ոք Սէն-Ժիլ (Raymond de Saint-Jilles) :

(3) Զայս դեպս և Վարդան յիշատակէ , (Ժեր . 146) :

(4) Ցիշէ և Մատթէոս Առօհայեցի զայս շարժ ահազգին  
ոք եղեւ յԱնտիոք , յորում բազում անձինք մնացին ընդ-  
փառակաք , և եղեւ առէ յամի Փրկչին 1092 յամեսան Սեղ-  
տեմբերի , (Բ . 155) : — Սմբատ , յեր . 87:

կերք պղնձիք, և էին որպէս պատկերք Ձը-  
ռանդի, որ կային 'ի վերաց ձիոց, և ագու-  
ցած էին 'ի բերանս նոցս երկաթք և փա-  
կած. և ետ բերել զնոսա ամիրայն առաջի-  
նւր, և ետ քննել թէ զի՞նչ իցէ : Ամանք ա-  
սէին թէ՝ կուռք են 'ի հին ժամանակաց. և  
հրաման ետ մանրել զնոսա . և փշրեցան և  
ցրուեցան պատկերքն : Եւ լուաւ կին մի  
ծեր և կոյր, և ասաց. « Այն պատկերքն տը-  
լամեր էին 'ի Հունաց շինեալ՝ զի մի՛ զօրաս-  
ցի Ֆռանդն և թագաւորեացեն և անցցեն  
յայսկոյս ծովու : Իսկ ամիրայն յորժամ լը-  
սեաց՝ յոյժ տրտմեցաւ վասն խորտակման  
պատկերացն . և նոյն ժամայն առին (Ֆռան-  
դըք) վլրուանդինու պօլիս և անցին յայսկոյս  
և զօրացան, և եկին նաւօք յիշուիոք :

Երկու 'ի նոցանէ յազգէ թագաւորաց  
էին, Պեմունդն և Տանդրի, և եւթն կոմ-  
սունք էին, Խոջելը (Խոժէր), Պեմունդն,  
Պաղտինն, Շօսլինն, Կալարանն (Վալերան),  
Կոնդովիրի (Կոտըվիրոա), Վալկէսն<sup>(1)</sup> : Իսկ  
թէոգորոսն<sup>(2)</sup> զօր եղեալ էր զնա 'ի յիւռ-  
հա Փիլարտոս հայն, և կայր 'ի նորա ժամա-

(1) Անուանք զլխաւորացն Խաչակիր բանակին այլամիո-  
խեալք են ըստ մեծի մասին, և ամանք անիմանալի լւալք: Տես  
և 'ի գիրս Մատթէոսի Աւռհայեցւոյ, Բ. 150:

(2) Թորոս կիւրազազատ էր որդի հայոց Հեթում կոչէ-  
ցելց, որ ըստ ասելց Մատթէոսի Աւռհայեցւոյ (Բ. 145-154),  
կացուցաւ իշխան Աւռհայոց 'ի Դառնամիրայէ, յամի 1094:

նակացն անդ , և առաքեաց ՚ի յԱնտար առ  
Ֆուանգն և խոստացաւ տալ զքաղաքն ՚ի  
կոնդ տիրի . և խնդացին նոքա յուրախութիւն  
մեծ , և ասացին . “ Որպէս Ուռհա քաղաքն  
նախ քան զԵրուսաղէմ հաւատաց ՚ի Քրիս-  
տոս , և ինքն Քրիստոս հաւատովին Երգա-  
րու արքային Հայոց յառաջ յՈւռհա թա-  
գաւորեաց , նոյնպէս և յողորմութենէն Քր-  
իստոսի նախ քան զտիրելն մեր Երուսաղէ-  
մի , Ուռհայի տիրեցաք : ” Եւ առաքեաց կոն-  
դտիրի զեղբայրն իւր զՊաղտին , և իշխանա-  
ցաւ յՈւռհա . և այլքն նստան ՚ի վերայ Են-  
տաքոյ ինն ամիս : Եւ կային ՚ի քաղաքն Եփ-  
սան և Ելիւսան ամիրայք<sup>(1)</sup> . և ել Վիսանն ՚ի  
քաղաքէն և գնաց , և հանգիպեցան նմո արք  
երկու ազգաւ Հայք , և սպանին զԼիսանն  
և բերին զգլուխն առ Ֆռանգն : Եւ կային  
՚ի պողձ մի երկու Եղբայր՝ նոյնպէս ազգաւ  
Հայք , որք քաջացան և սպանին զիմուրքսն  
որ կային առ նոսա , և ազգեցին Ֆռանգին ,  
և մտին ընդ պողձն ընդ այն և առին զքա-  
ղաքն , և յետ սյնորիկ տիրեցին նմա : Եւ  
՚ի նոյն ժամանակս սպանաւ Ոուլիսան յԵ-

(1) Վիսան և Ելիւսան ցուցանեն զմի և զնոյն անձն այն  
է Աղեւսիանն Մատթէոսի Ուռհայեցւոյ (Բ . 144 , 151) .  
որ եր զօրապետ Դդուշի , և իշխան Անտիոքայ : որ յետ առ-  
ման քաղաքին ՚ի Պեմունաց , յամի 1098 : փախուցեալ ՚ի  
քաղաքէն սպանաւ ՚ի գեղացւոց (Բ . 155) :

կոնիսն , և թագաւորեաց Խղիճ ասլան :

Եւ լուսւ սուլտանն որ ՚ի խորասան զելն  
Ֆուանդին՝ի վերայ Վնտաքոյ, և առաքեաց ըդ-  
կիւրապաղասն հարիւր հազար հեծելով<sup>(1)</sup>,  
և եկին պաշարեաց զիւանգն ՚ի յլնտաք .  
և այնչափ նոր էին առեալ զլնտաք, որ մինչ  
մտաւ Գուանգն ՚ի քաղաքն , զօրքն թուր-  
քաց հասին ՚ի Պաղբաս<sup>(2)</sup>, վասն որոյ շատ նե-  
զեցին վնոսա սովով : Եւ նոքա ասլաւի-  
նեալք յլստուած ազօթիւք և արտասուօք  
գաին զգեղարդն Յիրիստոսի , և ելեալ կո-  
տորեցին զիժուրքն և տարան զնոսա կոտո-  
րելով օր մի և դարձան<sup>(3)</sup> . և եղեն փախո-  
տական ՚ի Վիջագետաց թուրքաստանք : Եւ  
գնացին զօրքն Գուանգաց և առին զծովե-  
զերայսն և զինոպակէ և գնացին յլըրուսա-  
զէմ : Եւ նախ քան զիւանգին գնայն ա-  
ռեալ էին զլըրուսաղէմ Եգիպտացիքն և տիւ-

(1) Կերտողա զօր Միխայել, կամ լաւ եւս թարգմանիւ  
նորա վրիպակաւ զրէ կիւրապաղատ , եր զօրավար Պարկի-  
արուսի օրդւոյ Մելիք շահի սուլտանին Պարսից : (Մատ-  
թէսս Ռւռհայեցի . Բ. 155.)

(2) Պաղբաս , որ և Պաղբաս , եր գղեակ մեծ յԱրաբաւ  
գաւառի յերկիրին Կիլիկիոյ .

(3) Մատթէսս Ռւռհայեցի Երկար սպասմէ զգիւտ գե-  
ղարդանն և զպատերազմ զօր ետուն Փուանկք ընդ Կերող-  
զա . (Բ. 155. յեր . 322) : Խոկ Վարդան առէ , թէ եր գե-  
ղարդն այն որով Հրեայք խացեցին ՚ի Պերութ քաղաքի ընդ  
կատակս զպատկերն փրկչական , և եւ անտի արիւն և ջուր :  
Տէս զինի յեր . 416 .

բեալ էին նմա, և ՚ի նոցանէ առին Վուանգըրն և առ հստարակ կոտորեցին զնոսա . և ոմանք փախեան ՚ի Տաճկոց և մոխն ՚ի տաճարն , և հանեալ զնոսա սպանին : Եւ թագաւորեաց յշրուսաղէմ Կրնդոփրի ամս երկու . և յետ նորա Պազտինն ամս հնգետասան :

Յայսմ ժամանակի եկն Խոիճ տօրսն ՚ի վերայ Ալտենոյ , և լուաւ դզօրանալն Վուանգին և դարձաւ : Եւ յայն ժամն եկն ՚Իանիշմանն ՚ի Ալտենի և ոյրեաց զմուտքն և դարձաւ . և նոյնպէս առնէր վերեք ամ : Եւ Գաբրիէլ յոյն կայր ՚ի Ալտենի , զօր կացուցեալ էր Փիլարտոսն հայ , և խատագոյնս նեղէր զքաղաքն քան զարտաքոյսն : Եւ յոյնժամ կային գլխաւոր իշխանք ՚ի Հայոց Ասմիլն , որ ՚ի ժամանակին Փիլարտոսին ունէր զԲեսուն և զԻապան , և ոմանք ՚ի Ախլիկառ կոչին որդիք Ասոբինայ , ՚ի Փիլարտոսէ իշխանացեալ ՚ի տեղիս տեղիս , ոչք առարեցին և տարան զկամժողիկոսն Հայոց ՚ի Ախլիկառ յայսմ ամի ետ Գաբրիէլ յոյն զԱլտենի ՚ի ՚Իանիշմանն , և ստեաց Վուանգին և ոչ ետ ՚ի նոսա ըստ խոստմանն (1) : Եւ արար դիւրութիւն և շինութիւն Ալտենոյ ՚Իանիշմանն , և խնամ արկ ՚ի վերայ նոցա՝ տալով նոցա հաց և անասունս և ազատութիւնս , և շիւ-

(1) Մատթէոս Ուռհայեցի , թ 167: Վարդան յեր. 148:

նեցան : Եւ այս՝ Դանիշմանս էառ գերի զՊե-  
մունդ թագաւորն և վաճառեաց ՚ի հարիւր  
հաղար գահեկան (1) :

Եւ յաւուրս յայսոսիկամբոխեցաւ թուր-  
քաց թագաւորութիւնն ՚ի խորասան, և գար-  
ձեալ ամբարձին զգլուխս իւրեանց Տաճիկը.  
և ելաւ ՚ի Հեմասյ Ողլաղիք տաճիկ և էառ  
զիփեմիտ և ամբարձաւ ՚ի Դամասկոս : Խոկ  
Դոգաս և Ուրատոն (Ուտոււան<sup>2</sup>) ամիրայք  
՚ի Հալպ և Ումար առ զինձարն և զխարուրն  
(Խարան<sup>3</sup>), և անկան թուրքը և Տաճիկը (Ըրա-  
բացիք)՝ ի յիդար վիճավ (2) : Խոկ՝ ի Հիւթանիաւ ՚ի  
Կապագուկիտ ոչ գոյր Տաճիկ . այլ թուրքն  
ունեին և վիճեին ընդ Հունաց . և զիգիակ-  
տոս Տաճիկըն ունեին . և եղեւ թշնամու-  
թիւն ընդ Դանիշմանն և ընդ Խոլիճ ասլան և  
պատերազմին ընդ միմեանս : Եւ ՚ի յայսոսիկ  
(աւուրո) մեռաւ Դանիշմանն յետ առնջն եր-  
կուց ամաց զիլտենի . և ել Խոլիճ ասլան ՚ի  
վերայ Ոլտենոյ . և Ծղուսինն կայր ՚ի Ոլտենի  
որդին Դանիշմանայ , և առ վնա երդմամբ :  
Եւ յայսմ ժամանակի անուաննեցաւ սուլ-

(1) Մատթեոս Ուռհայեցի ասէ . եթէ միջնորդութեամբ  
Գող Վասիլի գնոյ առին ֆռանկիք զՊեմունդն (Բանմանա), և  
թէ՝ տասն հաղար գահեկանս եւս ինքն Վասիլն ետ (Բ .  
478) : — Վարդան . յեր . 149 :

(2) Զյառնել ամիրայիցո այսոցիկ ՚ի վերայ միմեանց յի-  
շատակէ և կիրակոս յիւրում պատմութեան , որոց անուան-  
քըն անծանօթ են մեղ . ասէ : (Յեր . 69)

տանն խորասանաց Խիւաթատին, և առաքեաց զաւվլի զօրօք ընդդէմ Ջուանդին, և եկն ՚ի Վուլ<sup>(1)</sup>: Եւ եր անդ ամիրայն Վգարմիշ (Շկրմիշ), որ եւ ընդդէմ Զաւվլի և պատերազմեցան, և յաղթեցաւ Զաւվլի, և ըմբռնեցաւ և ածաւ կապանօք ՚ի քաղաքն: Եւ զինի սակաւուց մեռաւ Վգարմիշ (Շկրմիշ), և աղատեցաւ Զաւվլի, որ և գնացեալ ժողովեալ այլ զօրս բազումս, կամէր դարձեալ դալ ՚ի վերայ Վօսլայ, զի կացուցին նորազորդին Վգարմշին (Շկրմիշ) ամիրայ . և իմացեալ Վօսլցիք զգալ Զաւլայ, առաքեցին առ Խլիճ ասլան և բերին զնա և տուին զքաղաքն ՚ի նա: Եւ Զաւվլի գնաց և առ զխաբուրն, և Խլիճ ասլան գնաց ՚ի վերայ Խաբուրին. և ՚ի յանցանելն ընդ գետն՝ ընկղզմեցաւ և մեռաւ<sup>(2)</sup>. և Զաւվլի թագաւորեաց ՚ի վերայ Վօսլց և Վծբնայ, և ժողովեալ գանձս՝ գընաց ՚ի խորասան: Եւ ՚ի Վելսենի լուեալ զմահն Խլիճ ասլանայ, եղին թագաւոր զորդին նորա զՃուղ ասլան (Տուղթիւ-Վրալան),

(1) Զաւվլի: այն է Զառուաղի-Սաքառուա, եր նախ կառավարիչ Մուսուլյայ, և ապա եկաց Ֆարս գաւառուին Պարսկաց և խնամակալ (Աթաբէկ) գեւահասակ մանկան Շակիրայ որդւոյն Մահամետի: Խակ Շկրմիշ եր իշխան Շըղիբէի, և կոչէր Հեմ-Էտառոլա Շկրմիշ յաջորդ Կերպողայի: (Մատթէոս Առահայեցի, գ. 194:)

(2) Մատթէոս Առահայեցի մեռաւ, ասէ, ՚ի պատերազմի: (գ. 196:)

և արար զօրագլուխք երկու, զիշտ ասլան և ըդ-  
Պիղմիչն՝ թէ անկաւ ընդ մօրն իւր՝ և մե-  
ռաւ : Եւ առ զմայր նորա Տուղարան : Եւ  
կային երեք որդի այլ խլիճ ասլանայ, Երաբ  
և Շահան շահ և Վասուտ : Օ Երաբն եւ  
պան Եմիր խաղի որդին՝ Դանիշմանայ, և  
Շահան շահ եսպան զ Վասուտն :

Իսկ ՚ի յայնմ ժամանակի յորժամ էր Պաղ-  
տինն երկրորդ թագաւոր յիշրուսաղէմ, եկե  
՚ի Հռոմայ իշխան մի Կուտափի (1) անուն՝ Ե-  
րեսուն ձիաւորով յիշրուսաղէմ. և ուխտ էր  
առեալ որ ոչ դառնար անդրէն : Եւ յետ ա-  
մի միոյ եղեւ աբեղոյ, և երեսուն ձիաւորքն  
իւր ընդ իւրեանն վախեցին զհանդերծ իւ-  
րեանց և կային սրբութեամբ և աղօմիւք =  
Եւ զի թուրքն նեղէին զըրիստոնեայսն, ա-  
զաշեցին զնոսա ելանել ՚ի պատերազմ ՚ի վե-  
րայ . . . նաց ընդ զօրս քրիստոնէից ասե-  
լով թէ այն առաւել հաճոյ է Վստուծոյ և  
շահ հոգւոյ : Եւ ետուն նոցա ապրանք գե-  
ղեր՝ թագաւորն և պատրիարքն . և ետուն  
՚ի նոստ զհաճարն ՚ի բնակութիւն, և եկին  
այլք յարեցան ՚ի նոստ, և ապա հաստատե-  
ցին իւրեանց կանոնք . և եղեն միաբանեալ  
եղքարք, և որ կենան սրբութեամբ և կու-  
սութեամբ, և չունիցին առանձնական ինչ:

(1) Թէրեւո կամի ասել Հուկս ալ Փէն (Hugues de Pains),  
զի այս էր անուն գլխաւորին կարգի Տաճարականաց :

և կռուիցին ընդգեմ . . . նայ: Եւ ել բանս  
այս ՚ի Հռոմ և ամենայն ուրեք, և սկսան  
միաբանիլ ընդ նոսա աղքատք և մեծատունք  
և իշխանք, և ստացան բերդս և փարթա-  
մացան: Եւ այս եղեւ սկիզբն՝ Փրերացն<sup>(1)</sup>:

Եւ յայիմ ժամանակի զօրացաւ Պաղակն  
որ էր Արթուրինացն: և սա տիրեաց բա-  
զում գաւառաց: Եւ առ սա գնաց կինն Խլիճ  
ասրանայ և եղեւ նմա կինն, թողեալ զրդիքն.  
և յամեն Արթուրիքն չեղեւ ոք իբրեւ ըդ-  
Պաղակն:

Ի թուրին Վարւոց թու (1430) և Հայոցն  
շնչ (557) Ամիր Խազի թագաւորեաց և գը-  
նաց եւ մն հազարաւ ՚ի վերաց Վնտարց, և  
ել ընդգեմ նորա Ոտձելն (Ոտժեր) և հարաւ  
՚ի նոցանէ: Եւ լուեալ Պաղտինն՝ թագաւորն  
Երուսաղէմի, և եկն և կոտորեաց զնոսա, և  
զմնացեալն փախստական արար:

Եւ յայսմ ամի թագաւորն Ուրտենոյ  
Տուղարան (Տուղիլ-Վրալան) էառ զԵպլըս-  
թայն, և եկն Ջուանդն և գերեաց զաշխար-  
հըն Ուտենոյ. և թագաւորն Ուլտենոյ և Պա-  
ղակն գնացին ՚ի վերաց կամախայ և գերե-  
ցին, և տէրն կամախայ Ունկուձակն (Ու-  
նուչէ) փախեաւ ՚ի Տրապիզոն՝ յուսացեալ ՚ի

(1) Քէեւ նշանակէ եղբայր այսպէս կոչէին միաբանեալքն  
կարգին Տաճարականաց: կամ ռաբիթալէ: զի ունէին ռա-  
բիթալ այն է հիւրանոց կարգեալ վասն ուխտաւորաց:

Յոյնո : Եւ առեալ դօր ՚ի Յունաց և ըզ-  
խաւոազն գլուխ, և եկն ՚ի վերայ Պաղակին .  
և յաղթեցան Յոյնք , և ըմբռնացաւ Խան-  
կուճակին և խաւոազն, և վաճառեցին զիսու-  
ռազն երեսուն հազար դահեկան :

Ծնդ այն ժամանակու արքայազունքն Հա-  
յոց, որ յաւուրս Վասլի կայսեր եկեալ էին  
՚ի Վասպուրականէ և բնակեալ ՚ի Խեւաստ  
և ՚ի Խեսարիա և ՚ի Խաւատանէքն , և ըրո-  
նացեալ ունէին զբազում տեղիս , մտին յեր-  
կիրն Ավիլիկեցւոց : Ոմանք ՚ի նոցանէ Ոտքի-  
նեանք կոչեցեալք , որք էին յերկուց մեծա-  
մեծաց զարմից , հայկազունք և Խենեքարի-  
մեանք , խնամութեամբ խոռնեալ ընդ մի-  
մեանս , որք թագաւորեցին ՚ի Վասպու-  
րական յորժամ և Բագրատունիքն թագաւ-  
որեցին ՚ի մեծ Հայք , և այժմ սկսան տի-  
րել երկրին Ավիլիկեցւոց : և թագաւորեալ  
արիական քաջութեամբ Ոտքէն նախ և Կոս-  
տընդին և Եւսոն և Յորոս , և այլքն մի-  
ըստ միոջէ :

Ի թուին Վաորւոց ՌԱԴԴ (1434) և Հայո-  
ցըն ՇԿԱ (561) եղեւ մեծ պատերազմի թուչ-  
նոց , զի կռունդք և արագիլք զբազում ա-  
ռուրս ժողովեցան յերկրին Վմթայ ՚ի Յոր-  
խմաւ : Եւ սկսան եւթն եւթն գեսպանս ար-  
ձակել ՚ի միմեանս . և յետ բազում Երթե-  
ւակաց կռուեցան յերբորդ ժամէ աւուրն

մինչեւ ցինն ժամն . և յերկոցունց կողմանցն անկան կուտոցք մշամեծ սպանեալք . և յաղթեցան արտգիլքն և փախեան , և խռազացաւ պատերազմն , և զպատճառն Արարեցն միայն գիտէ (1) :

Դհինդ հարիւր ամի իշխանութեանն Տաճկաց լուաւ Խիաթատին սուլտանն Խորասանայ , եթէ թագաւորեաց Աստաղա (2) տաճիկ ՚ի վերայ Յակրիմաց . և ել ամենայն ուժով իւրով ՚ի վերայ Աստաղայ և պատերազմեցան ՚ի վերայ Տիգրիս գետոյ , և յաղթեցան Տաճիկք և սպանաւ Աստաղա . և աստանօր բարձու թագաւորութիւնն Տաճկաց , որ և տեւեաց հինդ հարիւր ամ : Եւ Ասորւոց թիւն էր Ռուզ (1433) , և Հայոցն ՇԿ (560) , զինի եւթանասուն ամի ելանելոյն Յառուբրաց :

Հայեմ ժամանակի լուաւ Խաղի զմահն Պաղակին , և եկե ՚ի վերայ Մելտենոյ և ոչ կարաց առնուլ զնա . և դարձաւ Խաղի որդին ՚Իանիշմանայ՝ թողեալ զրդին իւր ՚ի

(1) Զայոյն գէպս պատմեն և Մատթէոս Ուռհայեցի (գ. 257) , և Սմբատ (յեր . 92) . իսկ տեղի այսր տեսարանիս առն լինել գաւառն Մելիքինու : Մատթէոս գնէ ՚ի թուքին Հայոց ՇՀԲ , և Սմբատ ՇՀ . իսկ Միհնայէլ ՇԿԱ . քանզիս համեմատութեամբ Ասորւոց թուզյն պակաս դնէ միշտ ամս տասն կամ մետասն :

(2) Ցաղացս Սագաղացի տես ՚ի ծանօթութիւն մեր 266 . ՚ի պատմութեան Մատթէոսի Ուռհայեցւոյ , տպեալ յերուսաղէմ :

վերայ նորա զօրօք, որ և արկին զնոսա ՚ի  
մեծ կարօտութիւն սովոյ և առին զնա: Եւ  
գլխացեալ ՚ի վերայ նոցա՝ ոչ ինչ մեղաւ նոցա,  
այլ ետ նոցա հաց և ոսակն. և եղ նոցա ուխտ  
խաղաղութեան, և գնաց անոտի: Եւ զօրա  
ցեալ Վմիր խաղի՝ ջնջեաց զթուրբսն որ կա  
յին յերկրին կապագովիցւոց, և ինքն մի  
այն թագաւորեաց: Եւ յաւուրսն յայնոսիկ  
լուաւ թէ՝ Յոյն մի կասիանէ անուն, ունի  
բերդեր յեզր ծովուն, և գնաց ՚ի վերայ նո  
րա, և հնաղանդեցաւ Յոյնն և ետ զըեր-  
դերն, և ինքն ել առ նա և կայր բնդ ձեռամք  
նորա: Եւ սա սպան զլատուան Վրթուխեան.  
և լուեալ զքաջութիւն նորա խալիփայն և  
սուլտանն: Խորասանայ, առաքեցին նմա  
թագ և պատիւ և կոչեցին զանուն նորա  
Վելիք խաղի, և անուսնեցին թագաւոր ա-  
մենայն հիւսիսոյ:

Յայսմ ժամանակի դարձեալ թագաւո-  
րեաց Յունաց Խւանէ, և էաւ զլատուամանի  
և երկու բերդ այլ: Եւ լուաւ Վելիք խաղի  
և գնաց և էաւ դարձեալ զլատուամանի:

Յայսմ ժամանակի Եկն Օանգի ամիրայն  
Ոօսլայ ՚ի վերայ Հալտայ, և ետուն յօժա-  
րութեամք ՚ի նա վասն համբաւոյ իրաւա-  
դատութեան նորա:

Եւ ՚ի սոյն ամի առաքեաց խալիփայն և  
խիաթատինն Վելիք խաղէ, չորս ալամսեաւ

և շղթայ մի ոսկի պարանոցին և գաւազան  
ոսկի որ հարկանեն զնոս 'ի նշանակ թագաւոռ-  
քելցն նմա յորդւոց յորդիս . և բերին նմա  
նաղարայտ և փողը . և յորժամ եկին , մեռաւ  
նա , և կատարեցին զբանն ՚ի վերայ որդւոց  
նորա Վահմաւդին , և քարոզեցին զնոս Վելիք:  
Եւ էր նա ատեցող քրիստոնեից , և կայր նա  
օրինօքն . Տաճկաց , գինի ոչ ըմպէր , և վայ-  
րապար ոչ գնացը ՚ի վարս իւր : Եւ նա շի-  
նեաց զիւսարիոյ պարիսապն , և քակեաց բա-  
զում եկեղեցիս ՚ի նմա : Եւ յայսմ ժամանակի  
Զանգի ամիրայն Վօսլայ արար պատերազմ  
ընդ Երթուխիսն և յաղթեաց նոցա :

Եւ յաւուրս յայսոսիկ եկն Պապն Հռո-  
մայ<sup>(1)</sup> յլրուսաղէմ և եկն յՆախոք և կային  
անդ Յոյնք քաղկեդոնացէր որ չարախօսեցին  
զւորիս և ասացին . Պարեբայքս ատեն զժո-  
զովն Քաղկեդոնի , և ունին զաջն Պարսամայ որ  
նղովեաց զժողովն ըորրորդ . և ասեն՝ թէ առնե-  
նշանս և սրանցելիս : Եւ յորժամ ատեմք թէ՝ բա-  
ցէր որ տեսանեմք , ասեն թէ՝ ոչ իշխեմք զի մի  
լիցի հեղեղ և կարկուտ . ո և զայս ասէին և  
ծիծաղէին : Եպա կոչեաց Պապն զհայրապետ  
վանացն Վօր Պարսամայ , և ասաց . Պերէք  
զոջն որ տեսանեմ : ո Եւ յաւուրսն յայնու-  
սիկ մարախ ասղականէր զերկիլր , և ասաց թէ՝

(1) Թուէ ակնարկել ՚ի Լատին պատրիարք Երուսաղէմի  
կամ յայլ ոք ՚ի կարտիլանաց :

« Եկերէք զնա վասն մարախիս , զի նովառ ու զօրմեսցի Ծատուած աշխարհի : » Եւ նոքա ասացին . « Ոչ իշխեմք հանել զնա ՚ի տեղւոջէ իւրմէ : » Յայնժամ սաստեաց նոցա և ասէ երդմամբ . « Յժէ ոչ բերէք զնա , ոչ մեայ ձեզ աստ յիշատակ ՚ի քաղաքիս մերրւմ . այլ հանեմ զձեղ աստի և զամենայն ժողովուրդա ձեր տ իսկ նոքա բռնագատեալք գնացին և բերին , և տարան ՚ի սուրբ Պիտրոս . և ասաց Պապն . « Վրդ բացէք որ տեսանեմք . » և նոքա ասեն . « բայց եթէ դու բացցես հոյրու Եւ նա առեալ եբաց . և յանկարծակի ՚ի քըթթել աջաց ծածկեցաւ երկինքն ամսով , և սկսաւ գալ անձրեւ սաստիկ , և լինէր փայլատակմաւնք և կարկուտք և հրձկութիւնք մինչ տանել կամէր զքաղաքն : Եւ ապա Պապըն և ամենայն եկեղեցականքն անկան ՚ի վերաց երեսաց իւրեանց և լացին լալիւն մեծ . և շարժեցաւ քաղաքն ամենայն , այլք և կանայք առ հասարակ յորժամ լուան , և դիմեցին յեկեղեցին : Եւ ապա յետ բազում վեասուց արգելաւ պատուհան , և հրամայեաց Պապն առնել հսկումն Արորեացն և խնդրել վասն մարախին ՚ի ձեռն բարեխօսութեան սրբոյն : Եւ ասաց Պապն ըմբըռնել զշարախօսքն , և ոչ դտին զնոսա , զի փախուցեալ էին : Եւ ժողովեցան ուղղափառքն Ասորիք և Հայք ընդ նոսա և արարին

հսկումն , և հանին զաջն և պահպանեցին զաշխարհն . և նոյն ժամայն ողորմութեամբն Վատուծոյ գնաց մարտին և լցաւ ՚ի ծովին , և փառաւորեցին զՅստուած և զծառոյ նորա զԱՌօր Պարսամաւ , և տուին նմա եկեղեցւոյ տեղի և շինեցաւ , և կարգեցին ապրանք եկեղեցւոյն , և նզովք եդ Պատպն զի մի որ իշխեսցէ նզավել զատեցովոն Քաղկեդոնի ժողովցն . զի Վատուած հանգուցեալէ ՚ի նոսա , այն որ քննէ զծտծուկս և ինքնէ պաշտեցեալն և պատուեալն . եւ մեք ինչ ոչ գիտեմք , այլ միայն մարտիցուք ընդանօրէնսն և խաղաղութիւն կացուք ընդանդաման Քրիստոսի :

Եւ յետ այնորիկ խնդրեաց զգտեալ գեղարդն , և եղեւ քննութիւն թէ որ է այս Եւ վիայեցաւ ՚ի գիտողաց , թէ այն գեղարդըն որով Քրիստոս խոցեցաւ , թագէսս առաքեալն զայն ՚ի Նայք տարաւ : Իսկ այս գեղարդս ոչ է այն , այլ այն է որ ՚ի Տարարիա Նըրեայքն յաւուրս ուրբաթուն մեծի գողացան քրիստոնեայ մի և տարան յանապատ և խաշեցին բեւեռօք . եւ զամենայն կատականս և զայգանութիւնս զոր արարին Քրիստոսի անօրէն և կատաղի Նըրեայքն , նոյնպէս և արարին այն քրիստոնեին , զիշեղէն պատկն և զքղամիդն և զծեծումն գըւ խոյն և զթուքն և զամենայն օրինակ անար-

գանացն Տեառն . և խոցեցին գեղարդեամբ զկողն և ել արիւն և ջուր , և խաւարեցաւ արեգակն , նոյնպէս և շարժեցաւ երկիր : Եւ իմացան քրիստոնեայքն , և փախեան Հրեայքն և առաքեցին պատգամն զի թողսեն նոցա՝ և նոքա դառնան առ Քրիստոս . զի հաւատամբ ասեն՝ թէ ճշմարիտ Արտուածէր խաչեալն ՚ի Հրեաց Քրիստոս : Եւ ներեւցին նոցա և դարձան ՚ի Տէր քաղմութիւն Հրեաց , խոստովանեալք զմեզս իւրեանց : Եւ այս է գեղարդն որ պահեցաւ և պատուեցաւ ՚ի քրիստոնէից մեծամեծ նշանօք և սքանչելեօք :

Յայնմ ժամանակի յորժամ դարձան եւ կեալքն ՚ի Խորասանց առ Վելիք Խազի , եւ զեւ շարժ ահագին ՚ի Խորասան յաւուր ուրբաթու , և պատառեցաւ երկիր և կլաւ մըսքիթ մի ութ հազար արամեք և կանամբք՝ որ ժողովեալ են յազօթս և ՚ի լսելութիւն քարոզութեան իւրեանց :

Ի թուին Ասորւոց Ռնծե (1455) , և Հայոցն ՇԶԲ (582)<sup>(1)</sup> , մեռաւ Խովաննէ (Հովհաննէս) թագաւորն Յունաց ՚ի Կիլիկիա , և թագաւո-

(1) Յովհաննէս կայոր Պերսկեռոթեն մեռաւ ՚ի թուին Հայոց ՇՆԲ , կամ յամի Տեառն 1145 : որպէս գոյշ շարուցարազն Մատթեոսի Ուռ հայեցւոյ (Գ . 256) : Որպէս ասացաք ՚ի վեր յեր . 412 ՚ի ծանօթութեան : Միկոցէ Ասորի 10 ամառ պակաս գնէ զհայ թռաւականն :

րեաց որդի նորա կրսեր | Վանուիլն որ կայր առ  
նմա, և գնացեալ՝ ի լոստանդինուսպօլիսընկա-  
լաւ զնո, և ոչ աւագ եղբայրն է կաց հակառակ  
նմա: Եւ ՚ի նոյն ամի մեռաւ Երուսաղեմի  
թագաւորն Պաղտինն, և թագաւորեաց որդի  
նորա Պաղտնոյն՝ որ էր տղայ և մայրն իննա-  
մէր զթագաւորութիւնն (1), Եւ ՚ի սոյն ամի  
մեռաւ Դաւութ ամիրայն տէրն խարթքեր-  
դոյ՝ Վրթուիի, և առ զիշխանութիւնն խա-  
րալոնն (Վարա—Վրալան) որդի իւր . և Վա-  
սուդն առ զՎրլսթայն (2):

Ի թուին Վարւոց Ռած. Զ (1456), և Հայոց  
ՀՀԴ (583) (3), առաւ Ուռհա ՚ի Օանգեաց  
Վթաբակէ՝ ՚ի Զ օսլէն (Յասլէն), և զրպալի-  
սութիւնն ոչ գրեցաք, զի գրեալ են այլք  
ընդարձակութակ կակ Օանգի զինի ամի միոյ առ-  
նլոյն զՈւռհա՝ սպանուա ՚ի Խղիճայ (4), և առ-

(1) Թագաւորն Երուսաղեմի կոչեր Ֆուլք ա'Անժու, ո-  
րոյ սպանեալ՝ ՚ի յորս՝ թագաւորեաց որդի նորա Պաղտին  
(Բոտուէն) ընդ իննամակալութեամբ մօր իւրոյ Մելիտանի-  
եայ Մատթէոս Ուռհայեցի, գ. 256: — Վարդան, յեր 164:

(2) Մասուտ էր որդի Վլիճ—Վրալանայ Ա. որ թագա-  
ւորեաց յամէ 1119—1155. և ըստ ասելոյ Գրիգորի երիցու  
(՚ի գիրո Մատթէոսի Ուռհայեցայ, գ. 261) առ յամի Փըրկ-  
չն 1149 դբեառն, զՊէհեսնի, զՈւռարան:

(3) Յօրինակիու հինգ հարիւր յիսուն և էրեք թէպէս  
և երկորեան սխալք են, քանզի Ուռհա քաղաք առաւ ՚ի Զան-  
գի ամիրացէ ՚ի թուին Հայոց ՀՂՂ. գ. րիգոր երեց, գ.  
256: — Վարդան, յեր 164: — Ներսէս Շնորհ. յոզքան:

(4) Ու ոք ՚ի պատմագրաց յիշէ զանուն սպանողին Զան:

զիշխանութիւնն նորա 'Նորադինն' ('Առւր-էտտին') որդի նորա 'ի Վօլ:

Եւ յայսմ ժամանակի երեւեցաւ 'ի Կոստանդինուպոլիս առ պատրիարքն և առ բազում ընկերութիւններու համար կամ առ աշխարհականութեամբ հերձուած մի որ չար էր քան զնիւստորին և զայլոց չարագառացն առաջնոց . զի ասէին թէ Քրիստոս դիւօք և կախարդութեամբ հնազանդեցոց զաշխարհս . և յոլովք անկան 'ի նոսա և եղեն դիւապաշտք: Եւ իմացեալ զայս թագաւորին՝ սպան ըզբազումն, և ոչ բառնայր ազանդն այն, մինչեւ եհաս յաւուրս մեր նոցին չարիքն 'ի նոյն Կրոտանդինուպոլիս:

Իսկ Զօսլինն յօրժամ լուաւ զմահն Օսմանէ, արար ժողով և եկն Ալւոհա, և առ զնա 'ի գիշերի և մոտան 'ի ներս . և լուեալ զայն թաւրբաց՝ ձայն ետուն միմեանց և ժողովեցան 'ի վերայ Ալւոհայոց, և զարհուրեցաւ Թրանդն և անգիտացան անգիտութիւն Ալւոհայոց կորստեան իսպառ . և հանին բըռնութեամբ զբազմութիւն քաղաքին անցուցանել զնոսա յայնկայս գետայն Եփրատայ, և իսպառ ջնջել ետուն զնոսա թաւրբաց, որ ասեն զթիւ սպանելոցն երեսուն հազարաց,

գեայ և ոչ միւս թարգմանութիւնն գնէ զանունն. Գրիգոր երեց շարացարաղն Ատտէռոսի (գ. 257) ասէ 'ի կարձէն եւրմէ սպանեալ եղեւ 'ի գիշերի:

եւ զգերելոցն վեշտասան հաղար։ Եւ եկն այսպիսի կատարած Աւոհայոյ, զոր յայլոց պատմագրաց ուսանիս զբովանդակն(1)։ Բայց թէ զիարդ և յումէ շինեցաւ զառաջինն Աւոհա և անուանեցաւ, սասացուք։

Օկնի ջրհեղեղին՝ Աերը ովլթ թագաւորն շինեաց զնա և անուանեաց Աւոհաւի, ուն՝ գիւղկոչի, և համբ՝ Քաղդէացւոց, որ է գիւղ Քաղդէացւոց, որպէսև Վելքիսեղեկ շինեաց քաղաք ՚ի Պաղեստին և կոչեաց զանուն նորա Ուրիշէ, որ թարգմանի Գեւղ խողողութեան, և մեք Երուսաղեմ ասեմք։ Եւ շինուածն Աերը ովլթի տեւեաց յոլով ժամանակս. և ասեն՝ թէ Աննեքերիմ թագաւորն Աթուրացւոց քակեաց զնու և մնաց աւերակ մինչեւ յաւուրո Աղեքսանդրի մակեդոնացւոց։ և յորժոմ անցանէր ընդ նա Աղեքսանդր, հաճեցաւ ընդ տեղւոյն վայելութիւնն և ասաց ընդ Վելեւկոս. « Ծինեազա քաղաք»։ Որ և զկնի մահուանն Աղեքսանդրու շինեաց զնա Վելեւկոս, և կոչեաց զնա Լուսիա, որ թարգմանի Վակեդոնացւոց լեզուովն սրբէ լսա։ Օի Աղեքսանդր ա-

(1) Ապուլ Փարաճ ՚ի Քրոնիկոնին իւրում ասորական պատմէ ընդարձակ, եւս և զկործանումն վերջին որ եզեւ յամի 1147։ Տես և ՚ի Գրիգոր Երէց շարայարովն Մամթէսի Ռւոհայեցւոյ, (Գ. 258), և ՚ի Գամբեանական ճառն Քարսեղ վարդապետի, որ խոստավանահայր էր Բոտուենի իւս Խանին Քեսեոյ։

ասց, թէ «Աիրեմ զսա . շինեա զդաքաղաք»:  
 Եւ Յցնք ՚ի գիրս ժամանակաց իւրեանց ա-  
 նուանեն զսա՝ Աօրտու Վակեդոնիոս, որ է՝  
 Ասորւոց Վակեդոնիա . և թիւն Ասորւոց ՚ի  
 նմանէ սկսաւ: Եւ զհետ եւթանասուն ա-  
 մի<sup>(1)</sup> Աբգար թագաւոր որդի Արծամայ նո-  
 րոգեաց զնա: Եւ զինի Աբգարու և որդւոց  
 նորա եղեւ ընդ Հոռոմօք (Հռոմացեցւովք)  
 ՚ի կուապաշտութեան նոցա, որ տիրեցին նմա-  
 երեք հարիւր ամ: Եւ նահատակը որ ՚ի նլ-  
 մանէ եղեն՝ Ըմնի, Կորի, Ապիա<sup>(2)</sup>, Կողմա,  
 Դամիանէ, և այլք բազումք ընդ նոսա: Եւ  
 առ Կոստանդիանոսիւ բաղմացաւ ՚ի նմա-  
 վանորայք և քրիստոնեայք, և Յուլիանոս  
 ամպարիշտն չկտրաց հնազանդեցուցանել  
 զնա և ոչ Վաղէս հերետիկոս, և մնաց խա-  
 զսզութեամք մինչեւ ՚ի Վարկիանոս, որ նե-  
 ղեաց զնա վասն ուղղափառութեանն. և ե-  
 ղեւ ընդ ձեռամք Տաճկաց յԱւմար թագա-  
 ւորէն մինչեւ յելանելն Խառըքաց՝ չորս հա-  
 րիւր ամ: Եւ յաւուրս Տաճկաց անկաւ պա-  
 րիսակ նորա՝ շինեալն ՚ի Աւլեւկոսէ<sup>(3)</sup>:

(1) Կամհուանէ Աղէքսանդրի մինչեւ ցամ Տեառն 17.  
 յորմամ շինեաց Աբգար զԵղեսիա, լինին ամք 545, և ոչ  
 եւթանասուն:

(2) Այն է Սամնաս, Գուրիաս և Աբիր սարկաւագ ե-  
 գեսացիք, զօրոց զվիացարանութիւնոն տես ՚ի Վարս որրոց,  
 յեր, 836:

(3) Չե յայտ թէ յորմէ առեալ Մատթէոս Աւոհոցեցի:

Եթուին Վարուոց Ռածթ (1459) և Հայոց ցըն շշա (586) եկն Պարսն Յարոսն զինի մահուան հօրն իւրոյ լ եւոնի ՚ի կոստանդինուպօլսէ յերկիրն Կիլիկիեցւոց , և չոգաւառ տէր Վաճանաս Վեարապօլիտն Վարուոց՝ հետեւակ , և ետ նմա զիւր ձին և երկոտասան այր յաշակերտացն իւրոց , և ած զնա Ամուտայն՝<sup>(1)</sup> որ կայր ընդ ձեռամբ նորա՝ ՚ի գիշերի . և վաղիւն տեսին զնշանակ նորա և ծանեան թէ ողորմութիւնն Վատուծոյ Եհաս ՚ի վերայ քրիստոնէից , և ուրախացան յուրախութիւն մեծ : Եշ անտուստ ընդարձակեցաւ և էառ զբաղում տեղիս , և անկաւահ նորա ՚ի վերայ Յառաքաց և Յունաց , և ել համբաւ զնմանէ ընդ ամենայն աշխարհ<sup>(2)</sup> : Եշ ասեն թէ՝ երկոտասան ձիաւորով երթայր նա ՚ի ժամանակին յայնմիկ յՈՒապան

ասէ ՚ի սկիզբն պատմութեան իւրոյ , եթէ Սիդրան արքաց Հայոց կանգնեաց զհոշակաւոր մայրաքաղաքն Ռւռհան թուի ամենայն հաւանութեամբ՝ եթէ անզուշութեամբ գրեալ և Տիգրան փոխանակ գրելոյ Արգար :

(1) Ամուտա է բերդ յերկիրն Կիլիկիեցւոց՝ մօտ ՚ի Վահկայ , ՚ի Աւշ Անարդաբայ և Մամեսախոյ (Մըսիս) :

(2) Այս թորոս Բ . իշխան Կիլիկիյ , եր որդի Լեռոնի Ա . որ ձերբակալ լեռալ ՚ի կայսերէն Յունաց , ածաւ ՚ի Կոստանդինուպօլիս յամի Տեառն 1157 • թորոս Բ ՚ի գարծին իւրում զօրացաւ յիշխանութեանն ընդարձակեալ վերկիր տէրութեան իւրոյ : Գրիգոր Երեց , Գ . 263—265 : — Ամրդան , յեր . 164 : — Կիրակոս , յեր . 61 : — Սմբատ , յեր . 95 : Վահրամ :

առնուլ կին գդուստը ՞ օսլին (Ճողէն), և  
հանդիպեցաւ նման հեծեալ բազում թուր-  
քաց, որ գերեալ էին զաշխարհն և դարձեալ-  
և Կատուծով զօրացեալն այն եհար զնոսա և  
կոտորեաց երեք հազար անձինս, և դողացին  
՚ի նմանեց զրջակայքն և թշնամիքն ամենայն .  
և առեալ անուն քաջաւթեան դարձաւ, և  
առ զի՞նաւարզա . և ապա եղեւ ամենայն  
երկիրն առ սակաւ սակաւ ՚ի ձեռս նորա :

Ի՞նոյն ժամանակս գնաց ՞ օսլինն ՚ի վան-  
քըն (Վօր Պարսամաւ, և ելին ընդ առաջ նո-  
րա խաչիւք, և տարան զնա յեկեղեցին . և  
նա էառ զտմրոց նորա և կացոյց ՚ի նո զօրք,  
և ինքն եկն ՚ի թլպաշարն : Հւ ՚ի նոյն ամի սն-  
կաւ ՚ի ձեռս թուրքաց ընդ վայր և ընդ ոչ  
ինչ . զի ասեն թէ՝ ելաւ յորս և հեծեալն  
ցրուեցաւ ՚ի նմանե . և ձին եզարկ զնա ընդ  
ծառ և անկաւ և կորոյս զիսելսն . և գտան  
զնա երկու թուրք և տարան զնա ՚ի Նալպ,  
և ծախեցին զնա Նըրէի մի՛ անծանօթ , և յե-  
տոյ գիտացեալ տարան առ Կորագինն<sup>(1)</sup>, և  
եղեալ զնա ՚ի բանտի էառ զամենայն աշ-  
խարհն ՚ի նմանե՝ զի՞զագն զթլպաշարն, զՊի-  
քըն, զի՞տաղան, զի՞արաշ, զՊէ հետնի, զՆար-  
մուր (Նիսն-մանսուր), զի՞տմուսատ, զԼար-  
կառ, զԼաղթոյն և զայլսն, և մնաց միայն Նը-  
ռոսմլպայն ուր կայր կինն նորա գտտերօքն , և

- (1) Գրիգոր Երեց . Գ. 259 .

Նախախնամութեամբն Արտօւծոյ Ետ զնա տէք  
Դրիգորի Հայոց Լամբողիկոսին, և Եղեւ ա-  
թու նոցա յաւիտեան :

Ի նոյն ամի յառաջ քան ղհամբարձումն  
Տեառն միով աւուրբ, Եղեւ անձրեւ ՚ի Պա-  
ղեստինէ և լինէր ՚ի նմա կաթիլը արեան. և  
՚ի Վայիս ամսոյ յառաջ ցող առաւօտուն  
Աշրուսաղէմ լինէր ՚ի գոյն արեան, առ ՚ի  
նշանակելոյ զարիւնն քրիստոնէից որ հեղոց  
էր Աշրուսաղէմ ՚ի յառնուլի զեա : Եւ յա-  
մառնային յեղանակն եկն ձիւն կարմիր, և  
իջաւ յերկիր իբրեւ Երկու մատն :

Ի թօւին Ասորւոց Ռանդ (1464), և ՚ի Հա-  
յոց թուին ՇԱԱ (591), ՚ի զարդանալ թագա-  
ւորին Աշրուսաղէմի Պաղանին, կամեցաւ  
հանեւլ զմայրն իւր ՚ի հոգալոյ զմագաւո-  
րութիւնն . և Եղեն ոմանք ՚ի զօրացն ընդ  
մօրն և մտին ՚ի պր-ըն ՚Իաւթի և ամրացան,  
և կռուէին ընդ պր-ըն . և մայրն խօսեցաւ  
անտի ՚ի գուրս ընդ թագաւորին, և խղճաց  
՚ի սիրտն և երգուաւ մօրն և Ետ զԱշրուսա-  
ղէմ ՚ի հրամանս մօրն . և ինքն առեւալ զզօր-  
սրն գնաց ՚ի վերայ Ասկաղոնի Փղշտացւոց,  
և փղոց մասն ինչ ՚ի պարսպէն . և Եկին ՚ի  
պատառուածն յայն քսան հազար Տաճիկք  
հագած, և տսէին ընդ միմեանս . “Այս քա-  
ղաքս է գլուխ Տաճիկաց, և սովհաւ զօրացաւ  
Վահմետ . պինդ կացցուք ՚ի սմա և մեռ-

ցուք, և բաց ՚ի սմանէ զլօյս մի տեսցուք: ՚  
 Եւ չորս հարիւր Թռանգ դիմեցին ՚ի վերայ  
 քսան հաղարացն և սպանան ՚ի նոցանէ ա-  
 մենեքեան. և տրտմեցաւ յոյժ թագաւորն  
 և զուք իւր, և զողջ գիշերն ջանային Տա-  
 ճիկքն շնորհ զիղած պարսպին և Ամր Ու-  
 նաղդն<sup>(1)</sup> մեծ իշխան թագաւորին, ջան ՚ի  
 վերայ եղեալ ոչ ետ թոյլ շնորհ նոցա: Եւ  
 ՚ի լուսանալն առաւօտուն թագաւորն Երու-  
 սաղէմի առ զխաչն ՚ի ձեռն և մօտ գնացեալ  
 ձգեաց զես ՚ի մէջ քաղաքին և ասաց: “Ե-  
 հա, որ քրիստոնեայ էք ու հաւատ ունիք,  
 խնդրեցէք զեշանն Քրիստոսի. ո և վարեցան  
 քրիստոնեայքն որպէս հրով, և դիմեցին  
 յամենայն կողմանց և մտին ՚ի քաղաքն, և  
 կոտորեցին ՚ի նմա վեշտասան հազար անձի-  
 նըս, և տոին գերի բազում, և այլքն մը-  
 տեալ ՚ի նաւ փախեան յլ՛գիպտոս: Իսկ  
 Օ Ուրնաղտն որ եցոյց մեծ քաջութիւն ընդ-  
 դէմ Տաճկաց, իշխանացուցին ՚ի վերայ Են-  
 տիսքու, և արարին դլուխ զօրաց, և ետուն  
 նմա զկինն Պտուեայ (Ուեմնատ տը Եսագիէ)  
 ՚ի կիութիւն:

Յայսմ ժամանակի մեծ իշխանաց իշխանն  
 Յորոս (Բ) որդի Եւոնի որդւոյ կոստան-  
 դեայ՝ որդւոյ թագաւորազինն Ուորինեայ:

(1) Այն է Ունալտոյ կամ Ուընոյ տը Հադիսոն, որ  
 կայր ՚ի ծառայութեան Ումնատայ իշխանին Անտիոքայ:

ԵԼ յերկիրն կապադոկացւոց, և դարձաւ անուանի յաղթութեամբ :

Իսկ Վասուտ սուլտանն որ էր յորդւոցը՝ Խաքանայ արքային թուրքաց, ետ ըզգուստը իւր Ըղութ ասլանայ՝ Խանիշմանեանց. և արարեալ միաբանութիւն խորհեցան գընալ՝ ի Վիլիկիա . և յորժամ գնացին մերձեցան յերկիրն, և ահա փակեալ ամրացեալ էր եզերօք սահմանացն, և դարձան մեծ ամօթով : Աւ թորոսն մեծ առաւել զօրացեալ էառ զմնացեալ դղեակսն ՚ի ձեւանէ Յունաց ՚ի յերկիրն Վիլիկեցւոց : Աւ լուեալ զայս թագաւորն Յունաց (Վանուէլ) երարկացաւ ՚ի վերայ Պարսն թօրոսի և առաքեաց զինդրոնիկոս զօրագլուխն մեծ ամբոխիւ ՚ի Վիլիկիա . և ել ընդդէմնորա Պարսն թօրոս, և պատերազմեցան ընդ միմեանս առ ընթեր Տարսոնի, և յաղթեցան Յոյնք և անկաւ ՚ի նոցանէ երեք հազար անձինք անուանիք, և մնացեալքն փախեան նաւուք և գնացին : Աւ էառ զքանակն և զջանդոց նոցա մեծն թօրոս, և ուրախ եզեն գոհանալով զՏեառնէ . և վաճառէր ընդ ոսկւոյ զմեծամեծս Յունաց (1) :

(1) Ըստ Գրիգորի Երիցու ՚ի գիրտ Մատթեոսի Ուռհայեցւոց . Գ . 263: Անդրոնիկոս էր իշխան Սրոյ և Մսիսայ կորչեալ՝ ի կայսերէն Յունաց, այր ամբարտաւան և լի նախանձու ընդգետմ Հայոց, այլ ՚ի գալ նորա ՚ի կիլիկիա, թօրոս

ի թուին Կյորւոց Ռակե (1465) և Հայոց ցըն ՇԱԲ (592) որդիքն Օսմանգեայ որ ՚ի Վօսլ Անփաղինն և Խուղբաղինն՝ որ ուխտեալէնին խալիփային, ստեցին ուխտին և ձեռն տուին ամիրային որ նատէր ՚ի Ծակրիթ ապրատամբութեամբ. և բարկացեալ խալիփային եկն ՚ի վերայ Վօսլայ և ոչ կարաց առնուլ զնա, և դարձաւ ՚ի վերայ Ծակրիթայ, և ետ զնա յաւար զօրաց իւրոց, և առին ըզնա և քակեցին ՚ի հիմանց, և յետոյ տուին զբերդն ՚ի Հասամադինն (Շէմա-էտտին) որ էր այլ բարի և սիրող քրիստոնէից, և վաղ վաղակի շինեաց զքաղաքն և զեկեղեցինն, և կայր ՚ի հնազանդութիւն խալիփային։

Հայսմժամանակի Արագինն՝ տէրն Հալ պայ չոդաւ ՚ի վերայ Դամասկոսի և առ ըզնա երդմամբ և կորոյս զհայրենեօք իշխանս նորա, և քակեալ զաղիւսաշէն պարիսազն և շինեաց քարամբք ամրագունիւք։ Աշ ՚ի սոյն ամի մեռաւ Դամուրտաշն՝ տէրն Վերտնայ, որ էր յԱրթուխեաց անտի, այր բարի և սիրող քրիստոնէից և շինող քաղաքմ եկեղեցեաց՝ վասն այսու պատճառին Հիւանդացաւ սա

տիրեալ էր արդէն Մօխայ, և առ խորտակել զեղչիւր առ բարտաւանութեան Անդրոնիկեայ, յարձակեալ ՚ի գուրս ՚ի քաղաքէն Մսիսայ, ետ քաջութեամբ պատերազմ ընդ նմա և խորտակեաց զնոսա խապառ ՚ի վրէժ մահուան հօր իւրայ Հէ և սնի Ա։

Հիւանդութիւն մահու , մինչեւ բժիշկքն յուսահատեցան և թողին . և նա յուսացաւ յաղօթս քրիստոնէիցն և առաքեաց ՚ի վանքն Ամեր Աբայի<sup>(1)</sup> , և բերին զաջ նորա : Եւ յորժամ մտին ՚ի տունն , տեսանէր այր մի հրեղէն , որ գնաց կալաւ զձեռանէ նորա և ասաց . “Ովկ ես տէր .” և նա ասէ . “Քրիստոնեայքն առաքեցին զիս՝ զի մի մեռցիս : ” Եւ յարոց զնա , և նստաւ և փառաւորեաց զիստուած և ողջոցաւ . և եղեւ մեծ միսիթարութիւն քրիստոնէից ընդ իշխանութը նորա , ՚ի Վերտին և ՚ի Ասեբին և ՚ի Վուփարկին և յիշապայն և ՚ի Տարա , և յայլբազում տեղիս : Եւ նոյնպէս պատուիրեաց որդւոց իւրոց յետ մահուան իւրոց զնոյն խնամ ունել ՚ի վերայ քրիստոնէից : Եւ ետ զՎերտինն և զՎուփարկինն ՚ի Աշխաղինն (Աէճմւէտտին) յաւագ որդին , և զԽանի քաղաք ետ ՚ի Շամալադինն (Շէմալւէտտին) ՚ի միւս որդին , և զՏարա ՚ի Հասամադինն (Հէմմւէտտին) ՚ի կրսեր որդին :

Յայսմ ժամանակի թագաւորն Յունաց (Վանուէլ) ըստ ատելութեան բարուց իւրեանց զոր ունէին առ ամենայն քրիստոնեայք , առաքեաց առ Վասուտ սուլտանն և աղաջնաց զնա մեծաւ պատարագօք զի մոցէ :

(1) Ամեր Աբայ . իմա՝ Մար Իբաս : Իսկ հաւը կամ մոտ շանակէ ՚ի լեզու Ասորւոց՝ տէր :

յերկիրն Կիլիկեցւոց և աւերեսցէ զնա . Եւ  
նա ժողովեալ զամենայն զօրան Կապտղոկիաց  
և զՄիջագետաց , գնաց ամենայն սպատրաս-  
տութեամբ և եմուտ յերկիրն Հայոց : Եւ  
նորա նախագետաց եղեալ յառաջագոյն՝ ամրա-  
ցեալ և գաղթեալ էին ՚ի լերինսն և յամուր  
տեղիսն : Եւ սուլտանն գնաց իջաւ ՚ի վերաց  
թղին Համդնոց <sup>(1)</sup> , և եհար զնոսա Տէր Ար-  
տուածն քրիստոնէից՝ ոչ հրեղէն հրեշտակօք  
որպէս զզօրսն Յենեքարիմնոյ , և ոչ ՚ի ձեռն  
կնոջ որպէս զՀողովիեռնէս , այլ տկար կեն-  
դանեօք՝ մժղկի և ճանձոյ , այնպիսի՝ որ ասէին  
բազումբ , թէ այն սաստիկ բարկութիւն է  
քան զՀարուածս խատարտին Փարաւոնի . և  
եղեւ պատուհասն ՚ի մարդ և յանասուն : Եւ  
սկսան փախչել . և իջին զօրքն Հայոց ամրա-  
ցեալքն ՚ի լերինս , և կոսորեցին զըազումն  
՚ի նոցանէ , և առին աւար զմեծութիւն ա-  
նօրինացն , և լցին զտունս իւրեանց գոհա-  
նալով և փառաւորելով զլոտուած : Եւ ել  
վաղվաղակի պարոն թորոս ընդ միջոցս լե-  
րանցն ՚ի խաւատանէսն <sup>(2)</sup> , և եհար զթուրքն  
որ բնակեալ էին անդ , և դարձաւ բազում  
գերեօք և աւարաւ և անուանի փառօք յա-

(1) Թիւն Համանոց էր տեղի ամրութեան ՚ի դաշտին Աս-  
նորդաբաց : որ ՚ի Կիւլիկիա :

(2) Խաւատանէք էր ամրոց ՚ի սահմանս երկրին Աւբաս-  
տիոյ ընդ արեւմտակողմն հարաւոյ :

մենայն մարդկանէ (1) : Խոկ Այասուղ սուլ-  
տանն գնացեալ մազապուրծ յորդւոցն Հա-  
յոց մեծ ամօթով, և հասեալ ՚ի կօնն (Վկոնիա)  
կը կին հարեալ ՚ի Տեառնէ մեռաւ (2) :

Ի թուրին (Կորւոց ՌԱԿՁ (1466), և Հա-  
յոցն ՇՂԳ (593), թագաւորեաց որդին Այ-  
սուղին՝ Խղճա ասլանն (Բ), և էին նորա երկու  
եղբարք, զմինն խեղդել եդ ՚ի ծածուկ, և  
միւսն փախեաւ յեղք ծովսւն, և ամրացաւ  
՚ի բերդան՝ զոր տուեալ էր նմա հայրն իւր  
նախ քան զմահն իւր . և էր անուն նորա  
Շահանշահ, և նա էր փեայ տանն ՚ի ա-  
նիշմանայ, և են սոքա աղդ մի, և վասն այ-  
նորիկ ձեռն ետ նմա Աղուք ասլան հօրեղ-  
քօրորդին իւր, և աւերէր զերկիրն Խղճա աս-  
լանայ : Եւ լուեալ զայս Այրըդինն (Եւուր-  
էտաին) տէրն Հալպայ և ՚ի ամասկոսի, եկն  
և էառ զՓարզման (3) և զՂնթափ : Եւ առա-  
քեաց Աղուք ասլան առ Այրադինն և առ  
Խար ասլան (Խարաւ—ասլան) տէրն Խարթբեր-  
դոյ, զի առցեն զամենայն երկիր Խղճա ասլա-  
նայ, որ կայ ՚ի սահմանս նոցա ՚ի Աիջագետս  
և յայնկոյս Եփրատ գետոյ . որ և ընդ խոր-

(1) Վահրամ, յեր . 208 :

(2) Գրիգոր երէց (Գ . 265) . — Սմբատ, յեր . 97 . —  
Վահրամ :

(3) Փարզման էր քաղաք ՚ի փոքրն Հայու ՚ի սահմանս Եփ-  
րատացւոց :

հեղն՝ ՚ի յառնուշը զերկիրն և բաժանել, կը ու-  
ուեցան ընդ միմեանս և թողին։

Իսկ զերկիրն Ազգիպտոսի Տաճիկը (Վրա-  
բացիք) ունէին ընդ իւրեանց իշխանութեամբ  
՚ի ժամանակաց անտի Աշհմետականացն որ  
տիրեցին նմա, և ոչ կարացին մուտ գտանել  
՚ի նա թուրքաց թագաւորքն Աւ լինէր նոցա-  
խալիփայ յազգէն Վլեայ, որպէս այն որ նը-  
տէր ՚ի հաղոստ յազգէն Աշհմետի։

## Ե

Թէ ո՞յլ եւ կամ ուստի՞ են Աբղյմումնիքն  
որք կան յարեւամուսու։

ԽՍԼԻՓԱՅՔ որ կային Ազգիպտոս, (Եին)  
յազգէն Վլեայ մինչեւ ՚ի ժամանակս Վրա-  
գինին, որ և ապա բարձաւ ՚ի նմանէ։ Ի-  
կարգէ անտի խալիփայիցն ասէին ումեմն  
Վրդլա, և էին նորա երկու որդիք, որոց  
անուանքն Վրդլմինի և Վլուք, որք անկան  
սպոռնկութեամբ ընդ կին հօր իւրեանց։ և  
իմացեալ հօրն՝ կամեցաւ սպանանել զեռսաւ(1)։

(1) Միւս թարգմանութիւնն փոքր մի այլազգ պատմե -  
չորրորդ խալիփայն ասէ։ Ազգիպտոսի որ էր յազգէն Վլեայ,  
ունէր երիս որդիս, և ՚ի մեռանել իւրում աւագն առ զիա-  
լիքայութիւնն և խորհէր սպանանել զերկոսին եղբարս իւր

Եւ նոքա իմացան և փախեան՝ առեալ ՚ի տանէ հօրն երկու գիրք, անուանք նոցա Քեմիա և Աեմիա : Քեմիան ուսուցանէր նիւթս խառնուածոյ, որով կարողութիւն իւցէ առնել սոկի և արծաթ, ակն և մարդարքութիւն : Եւ Աեմիայն ուսուցանէր հրաշագործութիւնս և տլիսմ, որով հիանան մարդիկ : Առեալ նոցա զգրեանն գնացին յարեւմուտս կոյս ՚ի սահմանս Կիրիկոյ, և անցին անդք քան զնա, և գտին աշխարհ մի բարբարուաց այլալեզուաց կորձէից աղանց Ֆռանքաց, որը էին առանց ուսման և գպրութեան և օրինաց, և աղքատք . և յարեցան ՚ի նոսա և շինեցին տունո յամրագոյն տեղւոջ ՚ի քառաժամուս : Եւ արտրեալ զարուեստըն ՚ի ծածուկ և ստանացին գանձս և վաճառէին առաստավէս : Եւ ունեին ընդ իւրեանս ծառայս բաղրումն, ստացան և ՚ի նոցանէ յոլովութիւն ծառայից : Եւ հեղութք յարեցուցանէին յիւրեանս զբնակիչս տեղւոյն առատաձեռն լինելով նոցա . և առին ՚ի նոցանէ կանսցս և ստացան որդիս, և ուսուցանէին գպրութիւնս և ուսումն աստեղագիտութեան և հնարից : Եւ շինեցին բերդըս և քաղաքս, և մեծացան . և ապա սկըս

որոց անուանքն էին Աբդլա և Մամնանի, և իմացեալ ոցա զիսորհուրդ եզրօր իւրեանց՝ փախեան յարեւմուտս, և յանուն իւրեանց կոչեցաւ ալդն Աբդլմումիք :

առն քարոզել նոցա զուսումն և զպաշտօն իւրեանց , և հաւանեցուցանէին աղանդով և տթմօքն զոր առնէին . և ուսուցանէին նոցա զլեզուս և զգիրս իւրեանց : Եւ մեծացան և արարին զօրս և զօրացան , և առին քաղաքս բազումն . մինչեւ առաւել բազմացան , և գնացին առին զԱխիկիլսա կղզի , և տիրեցին բազում աշխարհաց , և արկին 'ի նեղութիւն զՃռոմացեցիս յոյժ : Եւ ասեն թէ՝ սյառ պատճառաւ առին Ալամանքն զկայսերական պատիւն 'ի Ֆրանսիսաց . զի նեղեալ 'ի Տաճկաց (Արաբացւոց) Հռոմ , առաքեցին առնոսա՝ զի եկեսցեն փրկեսցեն զնոսա 'ի Տաճկացն : Եցնակէս և Ֆրանսէսքն առաքեցին ազաշանս , զի թէ տացէ նոցա Տէր յաղթութիւն հալածել զայլազգինն , առցեն զկայսերական պատիւն . և երդուան նոցա : Եւ նոքտ յուսացեալ յԱստուած՝ գնացին 'ի վերայ . . . նացն և կոտորեցին զնոսա և հալածականս արարին զմնացեալն , և առին զկայսերութիւն Ալամանքն . Իսկ Տաճիկքն , զի տիրեալ էին բազում աշխարհաց և բերդից հաստատեցին իւրեանց սուլտան և խալիֆայ , և կան մինչեւ ցայսօր ժամանակի :

Ի թուին Ասորւոց Ռանկ (1466) , և Հայոցն ՇՆԳ (593) մեռաւ խալիֆայն Եգիպտոսի , և իշխանն (փոխարքայն) Եգիպտոսի

կամեցաւ ինքն նստիլ խալիվայ , և նա չեր  
յազգէն Վլեայ , և վասն այսորիկ ոչ կամէին  
աշխարհն զնա , այլ զլքաս ոմն ընտրեցին ,  
որ էր որդի մեռեալ խալիվային . և Եբասն  
յորժամ գիտաց թէ իշխանն ոչ կամի գնել  
զնա խալիվայ , էտո զամենայն գանձս տանն  
խալիվայութեան , և եհան երեք հազար ծա-  
ռայս ազգաւ Հայք , և կտղմեաց զնոսա զի-  
նուք և ել՚ի գիշերի և առ ՚ի Պատոյեանցն ընդ  
իւր առաջնորդ Ճանապարհին զի եկեցէ առ  
Նորադինն ՚ի Դմիշկ : Եւ վաղիւն իմացեալ  
իշխանն Եղիպատօսի , ալնդեցաւ զհետ նորա  
զօրօք , և գարձան զօրքն Հայոց ազատեալ  
ծառայքն՝ և հարին զԵղիպատացինն հարուա-  
ծըս մեծամեծս , և մնացեալքն փախեան :  
Եւ եկեալ նոցա ՚ի Վաղեստինէ , չոգաւ ոմն  
՚ի Պատոյեանցն յԵրտւատղէմ , և ազդ արար  
Փռանդացն , նոյնպէս և յԵղիպատան . և ժո-  
ղովեցան և ելին ընդդէմ նոցա : Եւ տեսեալ  
Եբասայն՝ կոչեաց զօրդիսն Հայոց և ասէ .  
“Եհա որդիք իմ , հարեք զնոսա նման Եղիպ-  
տացւացն , և մեծացուցից զձեզ յոյժ յոյժու  
Եւ կազմեցան նորա . իսկ յորժամ տեսին զնշան  
Խաչին առաջի զօրացն Փռանդաց , յարտա-  
սուս հարան , և ՚ի վայր իջեալ ՚ի ձիոցն որ-  
պէս կարօտեալք՝ փափաքանօք գնացեալ  
ընդառաջ Խաչին երկրպագեցին : Եւ Ֆք-  
ռանդն էտո դիւրաւ զանշափութիւն գան-

ձուն, և ըմբռնեցին զլքասն և ծախեցին ըդնա իշխանին Շգիսլատսի ընդքաղում ոսկեց, և նա գնեալ զնա տարաւ կախեաց զիայտէ. և զզօրսն Հայոց թաղին ազատս գնալ յու և կամպին և այլ ինչ ոչ ետուն նոցա բաց ՚ի հանգերձիցն զոր ունէին, ամարդիք եղեալ առերախտիս նոցա զոր արարին քրիստոսասէրքն առ քրիստոնեայքն գիմեալք, և իւրեանց կամքն լցին զնոսա մեծութեամբ ստացուածոց (1) :

Յայսմ ժամանակի Անաղտն (2), որ կոչեցաւ Շրինձ (իշխան), վիճեր ընդ պարսն թորոսի վասն բերդին որ կոյր ՚ի սիւնօտին (՚ի սահմանս) Արկիլիոյ, զոր առեալ էին ՚ի Ֆրերացին Յօյնք, և պարսն թորոս առեալ

(1) Պատմագիրք Արաբացւոց այլազգ պատմեն զզարտագոյս այսորիկ : Արաս ոչ որդի խալիփայի, այլ եր որդի կը նո՞ւ Ատելայ փոխարքայի, որց հրաման ընկալեալ խաղալ ընդդէմ Ֆռանքաց ուրբ անհանգիստ առնէին զեցիսացիսն մերձ Աւակաղն, խորհեցաւ ՚ի մատ առնուլ ՚ի բռին զիշխանութիւն փոխարքացութեանն . վասն որս սպանեալ զԱտէլ յաջորդեաց զնա : Այլ այսու յինքն ձգեաց զատելութիւն և զրտմաւթիւն բովանդակ երկրին . և երկուցեալ ՚ի վրբէժինդրութենէ, բարձեալ զամենայն գանձս տէրութեանն խոյս ետ յԵղիպտոսէ, թողեալ զիսալիփայն ՚ի ձեռս սիկարեանց . իսկ Արաս ՚ի փախչել իւրում անկառ ՚ի ձեռս Ֆրռանքաց և սպանաւ մահուամբ . և զորդին նորա յանձնեցին Տելայեայ փոխարքայի, որ կախեաց զնա զիայտէ : Եւ ինքն Տելայի օր նա ինքն է Մելք—Մալէհ, իշխանացաւ փոխանակ Ֆէյր—Պիլահայ խալիփայի որ սպանաւ ՚ի ձեռաց սիկարեանց :

(2) Ուշնոյ աը Հադիյեօն իշխան Անտիոքայ :

էր ՚ի Յունաց . և ասէր Խնաղտն թէ՛ ա՛յարձ  
առ առ Փրերսն՝ զի վասն քրիստոնէից ՚ի կը-  
ռուիլ են , զառաջագոյն կալեալ բերդն նո-  
ցա . » և վասն այսորիկ կռուեցան ՚ի Վլլն-  
դրունն(1) , և անկան յերկոցունց կողմանցն յո-  
ւովք , և դարձան ՚ի միմեանց : Բայց յետոյ  
հաւանեցաւ պարոն թորոս և ետ նոցա իւ-  
րով կամօք , և նոքա երդուեցան նոցա յա-  
մենայն կարիս մահու չափ ջանացեալ :

Ի թուին Ասորւոց Առակը (1468) , և Հայոց  
շան (595) , եւ Ատեփանէ եղբայրն պարոն  
թորոսի յերկիրն Վարաշայ , և ՚ի գիշերի եւ-  
մոյծ զզօրսն ՚ի Վարաշ ՚ի տունս քրիստոնէիցն  
կամօք քահանայի միոյ , և ընդ լուսանալն առ  
զբաղսքն և կոտորեաց զիժուրքքն . և Հպար-  
տացեալ . Քրիստոնէայքն յայտնապէս չնային  
ընդ կանայս թուրքացն . և բարկացաւ Տէր  
և ոչ ետ զբերդն ՚ի ձեռս նոցա , այլ այրեցին  
զբաղսքն և առին զշայերն որ անդ՝ և մոխն  
յերկիրն : Բայց ամիրայն Վարաշայ ըմբըռ-  
նեաց զերէցն որ եմոյծ զզօրսն գաղտապէս  
՚ի քաղաքն , և կենդանւոյն քերթեաց զնա  
և այրեաց հրով(2) :

(1) Այն է Աղէքսանդրիա քաղաքն Ասորւոց . ծովեզե-  
րեաց : և այժմ կոչի Խաչեակերուն :

(2) Գրիգոր Երէց (Գ. + 268) զայս գեզս ասէ լեալ ՚ի Պե-  
հւանի : իսկ Վահրամ համաձայն Միհայելը գերմանիկոյ , ա-  
սէ , տիրեաց թորոս :

Ի սոյն ամի, Ո՞նազտն , տէրն Ո՞նտաբոյ , խօրհրդակցութեամբ պարոն թորոսի՝ զօրօք իւրովք գնաց<sup>(1)</sup> 'ի վերայ Կիսպրոս կղզոյ վասն երկու պատճառաց . մի՝ վասն թագաւորին Յունաց քինու , որ յորդորէր զայլազգին 'ի կորուստ Հայոց , և միւսն՝ վասն Յունացն որ 'ի Կիսպրոս կոտորէին զՀայն և զՁուանգն Վասն որց գնացեալ Ո՞նազտն գերեաց զամենայն կղզին և էած զմարդ և զանասուն յեզր ծովուն , և թուեաց զնոսա և կտրեաց գինս ամենեցունց , և եթող զնոսա և էած ընդ ինքեան պատանդս՝ եպիսկոպոսա և աբեղայս բազումն և մեծատունս , մինչեւ բերցեն զկտորեալ գինսն : Խակ Ատեփանէ կալաւ թուրք մի 'ի Հերդուսէն<sup>(2)</sup> և խնդրեաց ըզբերդն , և նա ասաց . « Թէ երդնուս մեզ որ թողուս զմեզ կենդանի , մենք տամբ զՀերդուսն . » և երդուաւ 'ի Խաչն և յ՛ւետարանն զի առաքեացէ զնոսա խազազութեամբ 'ի Հալպ . և ետուն նմա զՀերդուսն , և էհան զնոսա գնալ խազազութեամբ : Եւ ոմանք 'ի տարողացն լուան զի սպառնային թուրքերն

(1) Ամբատ պատմագիր (յեր . 98) ասէ՝ Եթէ Ո՞նազտ 'ի գրդուութենէ պարոն թորոսի յարձակեցաւ 'ի վերայ Կիսպրոսի . և թէ ինքն խակ պարոն թորոս ընկերացաւ նմա յարշտանին : —Գրիգոր Երէց (Գ . 573) :

(2) Բերդուսէ Բերդունք դղեակն 'ի Ավլիկիա մերձ ամբ բացին Կապանայ :

թէ՝ «Դարձեալ զօրանամբ և գամբ աւերեմբ զաշխարհս զայս : » Եւ պատմեցաւ պարոն Ատեփանեաց . և եհարց պարոն Ատեփանէ զեկեղեցականն , և նօրա ասեն . « Յժէ այդ պէս սպառնան , անխիղզ ես դու վասն երդմանն : » Եւ առօքեաց զհետ նոցա և կոտորեաց զնոսա : Եւ լուան զայս տմենայն այլազգիք և գառնացան ընդդէմքրիստոնէից, վասն որոց և մեծամեծ վիեաք լինէին :

Յայսմ ամի մեռաւ աւագ սուլուանն Խորասանայ Վասուդն , և ոչ ունէր որդի՝ բայց մանկիկ մի փօքրիկ վոխանորդ իւր , վասն որյ եղեւ աթոռապահ նմա ամիրայ մի Աշտկուղ անուն , որ առ զիին սուլուանայ իւր ՚ի կնութիւն՝ զմայր տղայոյն . և յետ փօքր աւուրց մեռաւ տղայն , և մնաց սուլուանութիւնն Աշտկուղին , թերեւս լիցի որդի ՚ի նոյն կնոջէ ժառանգ սուլուանութեանն . և զի (Աշտկուղ) աթաքակ եղաւ զառաջինն տղային , թէպէտ սուլուանացաւ , բայց մը նաց անունն նոյնպէս աթաքակ . և վասն այսորիկ յայնմ հետէ թագաւորքն Խորասանայ և Նինուէի և Վիջագետաց աթաքակ կոչին և ազգքն տուն Աթաքակեայ . նոյնպէս որ ՚ի Կասպադովիտ լինէին թագաւորք , զի ընդձեռամբ Աշտկուղին մոխն , Աթաքակեանք կոչին :

Ի թուին Ասորւոց ՌԱԿԹ (1469) և Հայոց

ՀԱՅ (596) | ԿՈՂԲՃ ասլան արար սէր ընդ Խար-  
ասլան տէրն Այեւասոսոյ , և եկին յերկիրն Այ-  
ջագետաց և առ զտեղիսն զոր յառաջագոյն  
կայլեալ էր հայր նորա . և արար սէր ընդ պա-  
րսն թաղոս և ընդ Ատեփաննեէ , և կայր խա-  
զաղութեամբ :

Յայսմ ամի թագաւորն Արուսաղեմի ե-  
կըն յԱնոսաք , և ժողովեալ զօրս դնացին ա-  
ռին զշերիմն (1) և գերեցին մինչեւ ՚ի շարդ  
և դարձան : Աւ յայսմ ժամանակի շմորեցան  
ընդ միմեանս Կողբճ ասլան և Խար ասլան , և  
պարսն Ատեփաննեէ անդադար աւերէր զաշ-  
խարհ երկոցունցն : Աւ եղեւ քսութիւնյո-  
մանց առ պարսն թաղոս՝ թէ եղբայրն քո  
կամի սպանանել զքեզ . և հաւատաց նոցա ,  
և կալաւ զեղբայրն և զնդաննեաց տասն ա-  
միս . և ասլա միջնորդութեամբ բաղմաց  
դարձեալ եհան զետ ՚ի բանտէն , և կային սի-  
րով ընդ միմեանս :

Իսկ Կողբճ ասլան արար սիրելի խոր զՏա-  
նուն ամիրայն Ալեսարիոյ , և եհան զնա ՚ի  
՚ի Խարաւանաց . և նա եղեւ սկիզբն քակ-  
ման տանն Դանշմանանց (2) :

(1) Հարեմ կամ Հարենկ՝ էր ամիս յերկրին Անտիոքաց-  
աց ՚ի հարաւայ և աւուր միս ճանապարհու հեռի յԱնտի-  
ոքաց :

(2) Տանուն էր որդի Մելիք Մոհամմետայ ամիրային Մե-  
լիսինոյ , իսկ ՚ի յաջորդել որդւոյն զհայրն . Կողբճ—արալան

Խթուին Ասորւոց ՌՀՀ (1470) և Հայոցն ըստ (597), Տաճիկքն (Արաբացիք) որ կոչվին Երդլմումնիք, ասպատակեցին ՚ի Ապանիա, և եկին մինչեւ ՚ի Ապանիա. և ելին ընդդէմ նոցա զօրքն Ջրանգաց, և յերկարեաց գործ պատերազմին :

Իսկ թագաւորմն Յունաց Վանիլն գիսղող ժամ գտեալ եկին սպառնալեօք յերկիրն Ավելիկէացւոց ՚ի վերայ պարոն թորոսի. և թորոս խոյս ետ ՚ի նմանէ զօրօք իւրավիք ՚ի կողմըն լերինն : Եւ Վանիլին հնազանդեցան գաշտակողմանիքն . և գնաց մինչեւ Անտաք, և լուաւ գոյժ թէ՝ ոմն ՚ի զօրապետացն կամի թագաւորել ՚ի տեղի նորա : Եւ փութացաւ ՚ի գնալ, և արար հաշտութիւն ընդ պարոն թորոս և ընդ Ատեփանէ, և դարձաւ (1). և առաքեաց առ Խղիճ ասլան և խնդրեաց Ճանապարհ, և ետ նմա Ճանապարհ. այլ սակայն ՚ի գնալն զբաղումն կոճուպեցին ՚ի զօրացն՝ յայտնի և ՚ի ծածուկ (2). և գնաց ՚ի Բ տիրեաց Կեսարից յամի 1169, և ինքն Տանուն փախեաւառ Մանուկէլ կայոր, և այսպէս ոկիզբն եղեւ անկման տանն Տանիշմանեանց, որք տիրեցին մասին միոյ փորուն Ասիոյ ամ 122.

(1) Վարդանյաւելու առել (յեր. 165), եթէ Մանուկէլ կայոր սիրով նուածեալ զթորոս, առ իջնա և զամենայն զօրս Փռանգաց՝ և գնաց ՚ի վերայ Հալսրայ, և անդ լուեալ զհամբաւ Խռովութեան մայբարազաքին՝ դարձաւ յետս Դըրբեգոր երեց (գ. 276) :

(2) Գրիգոր Երէց (գ. 274) :

կոստանդինուապօլիսոչ յաջողեալ՝ ի խորհուրդ  
դը իւր զոր կամէր առնել։ Իսոյց յորժամ  
ետես Վանիլն զպակասութիւն զօրաց իւրոց  
՚ի թուրքէն, առաքեաց այլ զօրս աւերել  
զգաւառն թուրքաց զոր կարասցեն. և եղն  
պատերազմունք ՚ի մէջ Յունաց և թուր  
քաց։ Իսկ Առագինն իմացեալ զղատձառս  
նոցա, զօրաժողովլեալ՝ ի վերայ գաւառացն  
Խլիճ ասլանայ, և առ զՊեհեսնի և զՄաքան.  
և զՄարաշ և զվաներն և զայլս բազումն։

Ի թուին Կոսորւոց ՌՆՀԱ (1471) և Հայոցն  
ՇԱԸ (598), Կղուք ասլան (Աշաղուպտրալան)  
և Առաղինն հաշտեցան ընդ Խլիճ ասլան  
սուլուանին, և դարձուցին զաշխարհն զոր  
առեալ էին ՚ի նմանէ՝ առ ինքն։ Եւ ՚ի նոյն  
ամի զօրքն Հալպայ ըմբռնեցին զՊօլինն  
զաէրն Հերմին՝ զօրդի Զօսլին, որ մեռաւ  
՚ի ծառայութեան ՚ի Հալպապ. և եղեւ մեծ  
ուրախութիւն ՚ի Հալպապ, զի յոյժ նեղէր նա  
զերկիրն Հալպայ վասն քինու հօր իւրոց, զոր  
եղին ՚ի կապանս և անգէն մեռաւ։

Եւ յետ ամի միայ աւերեցին զՊարիշա  
գիւղ յերկիրն Հերմին, ուր բնակեալ էին  
Հայք, և կոտարեցին զնոսա և գերեցին։

Եւ յայսմ ժամանակի ել թագաւորն Եւ-  
րուսազէմի, Պաղտինն առ սահմանօքն ՚Իա-  
մասկոսի, և Պտոյիքն որ էին ընդ Առա-  
գնին և բնակէին յերկիրն Փղտացւոց, ա-

պրատամբեցին ՚ի ՚Առագնէն և Եղեն ընդ Վյուանդին, և առին զնոսա և գնացին ընդ անապատ յերկիրն Եղիպատոսի. և առին աւար և գերի բաղամ յոյժ, և Եղին հարկ ՚ի վերաց նոցա հարիւր վաթսուն հաղար դահեկոն, և գարձան յԵրուաաղէմ մեծաւ փառօք:

Յայսմ ժամանակի թագաւորն Արաց ՚Եռոդի եհար զԵլալուս ամիրայն, և կաշաւ զԵլալուսն և վաճառեաց զնա. և էառ զԵնի քաղաք (1): Եւ դարձեալ ժողովեցաւ բաղմութիւն թառւրքաց ընդդէմ ՚Եռոդեայ, և կոտորեցան ՚ի նմանէ հաղարք հաղարաց և բիւրք բիւրուց:

Իթուին Կոորւոց ՌԱՀԲ (1472), և Հայոցն ԸՆԹ. (599), Եղեւ պատերազմ ընդ Խվիճ ասլոն և ընդ Եղուբ ասլան վասն դատերն Սալտուսին, զոր կամեր կին առնուլ սուլտանն, և տուաւ նա ՚ի կնութիւն տեառն Ենթինց կամօք Եղուբ ասլանայ. և ժողովեցաւ ՚ի վերաց նորա սուլտանն: Եւ ել ընդդէմ նորա Եղուբ ասլան և զօրացաւ ընդդէմ սուլտանին, և յաղթեաց նմա և փախցոյց զնա, և էառ զբանակետղ նորա զգահոյսն սոկեղէն և զամենայն պատրաստութիւն նո-

(1) Վարդան (յեր. 165) դնէ ՚ի ԱԺ թուոյն Հայոց տռաւուլ ՚Եռոդի զԵնի քաղաք ՚ի Փատլուն ամիրայէն. Իսկ Սալտուսի եր գեւսայ Հանի—Աքմենի թուինն Սուգմանայ:

րա . բայց երեւեցաւ մեծահոգի , և դարձոյց անդրէն զօր ինչ առեալէր , և խնդրեաց ՚ի նմանէ սէր և արարին խաղաղութիւն , և սիրով կային ընդ միմեանս :

Դայն ժամանակու աղդ եղեւ թագաւորին Երուսաղէմի եթէ Շիրարտ տէրն Այս յիտոց կազմեալէ նաւս ՚ի ծովուն լցեալ աւազակօք , և յանիսնայ կոտորէ զքրիստոնեաց և զՃաճիկս . և վասն այսր պատճառի բարկացաւ ՚ի վերայ նորա և էառ զԱյիդա և հարածեաց զնա , և եկեալ նորա առ տէրն Անտիոքոց և ետ նմա զՊաղքաս<sup>(1)</sup> . Եւ նա ոչ դադարէր ՚ի չարեաց իւրոց ՚ի ծովու և ՚ի ցամաքի մեծամեծ վնասս գործելով . և յորժամ զայն եւս իմացան , առին ՚ի նմանէ և զՊաղքաս . և նա գնացեալ առ Վորադինն և ուրախ արար զնա յցժ , զի խոստացաւ առ նա դարձուցանել զամենայն ծովեղերացն . և ետ ՚ի ձեռոս նորա զզօրոս իւր , և դրնաց նա և եմուտ յերկիրն Յուանգաց , և սկսու առնել աւերումն և կոտորումն քրիստոնէից : Եւ ժողովեալ զօրացն Յուանգաց և անուամբն Քրիստոսի զիմեցին ՚ի վերայ նորա և ձերբակալ արարին զգլուխ չարեացն , և կոտորեցին զզօրոս թուրքացն , և զանօմն

(1) Պաղքաս որ և Պաղքաս , էր գղեակ մեծ յԱրաւան յերկրին Կիլիկիու :

սատանայի (Ճերաբո) տարան յԱշրուսաղէմ  
և հրով այրեցին :

Յաւուրո յայսոսիկ Վանիլ թագաւորն  
Յունաց սպան զիլին իւր դեղով վասն ամ-  
լութեան նորա, և էառ արտաքոյ օրինացն  
կին երկրորդ զդուստը տեառն Ենտիմքայ :

Ի թուին Կյորւոց Ռուհ (1473) և Հայոց  
թիւն ս (600) մեռաւ Տուղ ասլան ամիրայն  
Վելտենոյ և նատաւ որդի նորա տասնամեայ  
՚ի տեղի հօրն . և լուաւ Վզուբ ասլան և եկն  
՚ի վերայ Վելտենոյ և պաշարեաց զնա և ոչ  
կարաց առնուլ, և եթող ՚ի վերայ նորա զօր  
և չոգաւ . և խարասլան տէրն խարթքեր-  
դոյ առներ բազում ընդունելութիւն փա-  
խըստականացն ՚ի գաւառէն Վելտենոյ : Ենտ  
այնորիկ գարձաւ ՚ի բարկութենէ իւրմէ Վ-  
զուբ ասլան և արար հաշտութիւն ընդ ամիր-  
այացեալ տղային և եթող նմա զաշխարհն  
Վելտենոյ , որ էր որդի եղքօր իւրոյ : Յայսմ  
ժամանակի լուաւ Խղիճ ասլան եթէ Վզուբ  
ասլան միաբանութեամբ բազում ամիրայ-  
ից խորհեալ է ընկենուլ զնա ՚ի թագաւու-  
րութենէ և գնել զեղքայրն նորա , երկեաւ  
և առաքեաց զլորիստափոր գալրապետն իւր  
առ Վանիլ խնդրել ՚ի նմանէ օդնութիւն  
և կամք սիրոյ , զի գնասցէ առ նա ՚ի կոս-  
տանդինուպօլիս (1) : Եւ ուրախ եղեւ Վա-

(1) Գրիգոր Երէց (գ. 282) համառօտակի յիշէ զերթն

նիլն, և երդուաւ նմա . և գնաց սուլտանն հազար հեծելօք առ Անիլն ՚ի կոստանդինուալիս, և ընկալան զնա մեծ պատուով : Եւ եղեւ անդ աւուրս ութուուն, և այնչափ պատուեաց զնա, զի յայնքան աւուրս յումեն օր երկու անգամ առաքէին նմա հացկերցիթ ոսկեղէն և արծաթեղէն ամանօք, և այն ամենայն մնայր սուլտանին և այլ ոչ դառնայր : Եւ ՚ի յետին օրն կերան հաց ՚ի միում սեղանի և զամենայն պատրաստութիւն ետ սուլտանին : Եւ յորժամ կամեր գնալ, ծածկեաց զհասակ նորա ոսկւով կարով նորա յոտն ՚ի մէջ տաճարին, և ետ նմա ըզզօրս իւր և չոգտու և վարձեաց այլ բազում զօրս ՚ի թուրքաց : Եւ ժողովեցան ամիրայքն ամենայն Աշխագետաց զօրօք իւրեանց առ Ազուր ասլան և ելին ընդդէմ նորա ՚ի պատերազմ. և յորժամ եկին առ միմեանս, երկեան երկորին կողմանքն ՚ի բազմութենէ միմեանց, և արարին խաղաղութիւն և ցրուեցան յիւրաքանչիւր տեղիս :

Ի ժամանակին յայնմիկ պարոն Ասեփանէ կոչեցաւ ՚ի պատիւ սիրոյ Ճնդրոնիկոսէ իւխանէն՝ որ էր Հյոյն, և յորժամ դարձաւ երթալ ՚ի տուն իւր, սպանաւ նենդութեամբ

Խլիճ—Արալանայ առ Մանուէլ կայսր ՚ի կոստանդինուալիս և տարաւ, առէ, ընդ իւր զԱմիր Միրան զեղայրն Նուր—էտանի :

ինքն և որ ընդ նմա էին : Ոմանք առեն թէ խաշեցին ՚ի պղինձ<sup>(1)</sup> : Յայնժամ շարժեցաւ բարկութեամբ պարսն թօրոս ՚ի վերայ Յունաց և սպան ՚ի նոցանէ որպէս ասեն՝ աւելի քան զտասն հաղար անձինս : Եւ Ենդրոնիկոս երգնոյք՝ թէ չէ պատճառ սպանման եղբօրն . և աղաջեաց զմագաւորն Երուսաղէմի գալ և առենել խաղաղութիւն , և խոստանայր նըմա բազում ոսկի ՚ի Կոստանդինուպօլէ : Եւ լուաւ նմա թագաւորն (Պէտուին զ.) և եկին և աղաջեաց զպարսն թօրոս և զբոդին Սաւագանեաց , և դադարեցին ՚ի կոտորելոյ զէՅոյն սըն : Եւ յետ այնորիկ էառ պարսն թօրոս զԷնաւարզա և զթիլն :

Յայնմ ժամանակի թագաւորն Վլաց Գէորգի էառ զՎլին և կոտորեաց զՊարսիկոն որ ՚ի նմա , և քակեաց զՄնիրայն զոր շենեալ էին Պարսիկը ոսկերօք և արեամբ քըրիստոնէից<sup>(2)</sup> :

(1) Ամբատ (յեր . 98) . և Վահրամ (յեր . 209) հաստատեն զբանս Միխայելիւ—Կիրակոս (յեր . 90) զանց առնե յիշել զեղանակ վախճանին :

(2) Վարդան առէ (յեր . 166) թէ Գէորգի առեալ ըզդութիւն , զգագաթունս (սոլանելոց) որ կոյին ՚ի մինարէն , զարդարե ալ ոսկէթել հանդերձիւք և եղեալ ՚ի դագաղս տայ Մուզրի արաբաց . բառնալ յուս իւրեանց և տանել ՚ի Տըփիսիս , ՚ի թութիւն հայոց Աթի (1163) : —Գրիգոր երեց . զ. 284 : —Սամուել առէ , յառաջնում աւուր օգոստոսի առ զԴութիւն , և վաթուն հաղարս գերեաց և քանդեաց զտուա աղօթանոցս նոցա :

Յաւուրս յայստոիկ ըմբռնեցաւ Ո՞նաղ-  
տըն տէրն Անտիոքայ ՚ի զօրաց Արքատոնին  
Հարիւր քսան ձիաւորով և հինգ Հարիւր  
հետեւակօք՝ դարան գործեալ նմա . ուր  
բազում եցոյց քաջութիւնս, և թէ ոչ էր խը-  
նայեալ ՚ի հետեւակսն, դիւրաւ էր փախու-  
ցեալ . բայց այրեցաւ սիրտ նորա և զտեզե-  
էառ, և յետ բազում մորտի ետ զինքն ՚ի  
ձեռս թուրքացն, և կալեալ զնա ածին ՚ի  
Հալապ, և եղեւ մեծ արտմութիւն քր-  
քիստոնէից և ուրախութիւն թուրքաց<sup>(1)</sup> .  
վասն որոյ նոյն ժամայն արշաւեցին ՚ի | ա-  
տիկն (Պաւոդիկէ) և առին եօթն Հաղարքը-  
քիստոնէայս և վարեցին ՚ի գերութիւն : Եւ-  
լուեալ զայս թագաւորն Արտսաղէմի, եկն  
և արար սէր ընդ Հալապ, և դարձաւ զնալ  
Արտսաղէմ. և հասեալ յԱքայ վախճա-  
նեցաւ և ետ զթագաւորութիւնն եզրօրիւ-  
րց Ամարեայ (Ամուրեայ)<sup>(2)</sup> ՚ի թուին Առոր-  
ւոց ՌուհԴ (1474) և Հայոցն ու (601) :

(1) Գրիգոր Էրեց (Գ. 281) առէ . Եթէ յասպատակէւ  
Ո՞նաղտի զերկիրն Խարբերդու, ըմբռնի ՚ի Աճմանինայ որ էր  
կառավարիչ Հալպայ, հանդերձ Երևոսւն ձիաւորօք :

(2) Պետուին Գ. թագաւորն Ելուսաղէմի յետ զերու-  
թեան Ո՞նաղտի եկն յԱնտիոք ոչ այնչափ առ ՚ի ազատէւ  
զնա ՚ի գերութենէ, որչափ նախորհէր ՚ի մոփ զբռամբ ու-  
նել զիշխանութիւն Անտիոքայ . ուր և հիւանդացեալ ջեր-  
մամբ առ ՚ի մահ, և հաս ՚ի Պէրութ և անդ վախճանեցաւ :  
Խոկ Ո՞նաղտ մնաց ՚ի գերութեան մինչեւ ցամ Տեառն 1178:

ուարաւ զեղբայր իւր յԵրուսաղեմ և թաղեաց անդ . և սգացին զնա աւուրս բազումը . և թագաւորեաց ամս իննետասն<sup>(1)</sup> : Եւ Առադինն եմուտ յԵրկիրն Երուսաղեմի և արար աւ երումն , և առեալ աւար և գերի՝ գարձաւ : Եւ ել զհետ նորա Եմերիա (Եմաւրի) և փախոց զնոսա և զբազումն կոտորեաց ՚ի նոցանէ և գարձաւ :

Եւ ՚ի սոյն ամի Ազուբ ասլան հնազանցեաց զՃանուն եղբօրորդի իւր , որ ասպատամբեալ էր ՚ի Կեսարիա Հայոց , և չոգաւ ՚ի Կամաւի որ է Կամախ , և սպան զապստամբ ամիրայն որ կայր անդ :

Եւ յայսմ ամի Խարասլան գնաց ՚ի յԱմիթ և ոչ կարաց առնուլ զնա , և գարձաւ ՚ի Հարսնքեփ<sup>(2)</sup> և կոչեաց ՚ի սէր զԵղուբ ասլան . և նա կարծեաց թէ նենգէ զնա , և գնաց բարկութեամբ ՚ի յԵրկիր նորա և առ զԵկածակն (Զմշկածագ<sup>(3)</sup>) և գերեաց յԵրկը նորա հարիւր հազար անձինս և երկու եպիսկոպոս , զտէր Իգնատիոս և զտէր Վիտոնէսիոս , և յետոց զԵրծան կենդանին Խակ զկնի գերութեան Ոնազտինն՝ կին նորա իշխէր Անտաքոյ . և ասլա եկն պարոն

(1) Ամաւրի թագաւորեաց յոմեւ 1162—1173 , ամս մետասան :

(2) Հարսնքեփ (Հիսն—քէյֆ) է աւան յարեւելեան եղերս Տեգրիսի և ՚ի հարաւոյ Ամթայ :

թորոս և եղ բրինձ Անտաքայ զՊեմունդն  
լորդի Ոնաղտին՝ ոչ կամելով մօրն։

Ի ժամանակին յայնմիկ Նորադինն զօրա-  
ժողով լեալ չոգաւ և գերեաց զերկիրն Տը-  
րապօլէաց<sup>(1)</sup>, և պատահեցին նոցա երեք հա-  
րիւր ձիւոր Ֆռանգ, և ոչ գիտացին զմի-  
մեանս, բայց կարծեցին Թուրքն՝ թէ թա-  
գաւորն Շրուասղէմի հասաւ, և թողինզորս  
առեալ էին և փախեան . և Ֆռանգն կոտո-  
րէր զնոսա մինչ ՚ի տեղի ինչ ընդարձակ։ Շւ  
յորժամ տեսին Ֆռանգքն զբազմութիւն  
Քուրդացն և իմացան թէ Նորադինն է,  
զարհուրեցան և ելին ՚ի բլուր մի, և իջան  
յերիվարացն և եղին ծունդ և աղօթէին  
զվերջին աղօթսն՝ ակն ունելով մահու ՚ի նը-  
մին ժամու։ Շւ տեսեալ Թուրքացն զազօ-  
թելն նոցա, անկաւ երկիւղ Տեառն ՚ի վե-  
րայ նոցա, և փախեան յերեսաց նոցա թող-  
լով զծանրութիւնս իւրեանց։ Շւ սրտա-  
պնդեալ քրիստոսասէր զօրացն, զհետ մը-  
տեալ կոտորեցին յօյժ զբազմութիւն . . .  
նացն զօրութեամբն Քրիստոսի, և Նորադինն  
զերծաւ սակաւուք։

Շւ ՚ի սոյն ամի գնաց Աղուբ ասլան առ  
Շէրան շահ եղբայր<sup>(2)</sup> սուլուանին և դարձաւ

(1) Տըրապօլիս . այժմ կոչեն Շամ—Տարտարան, որ է ծո-  
վեզերեայ քաղաք Անտորիս։

(2) Աւազէս յօրինակիս, որ թուի ասել Շահն շոհ, որ

ուրախութեամբ . և հասեալ ՚ի Գանգրա որ  
է ՚ի վերայ Ալիս դետոյ՝ մեռաւ <sup>(1)</sup> : Եւ փու-  
թացուցեալ զօրացն թագաւորեցուցին զիս-  
մայիլն զեղբօրորդին Վլուք ասլանայ, և արա-  
րին միաբանութիւն ընդ Տանուն ամիրայն  
Կեսարիոյ : Իսկ զօրքն որ կային յԱպլաթայն,  
թագաւորեցուցին զի Վահմուդն զըրդին Վահ-  
մուտին (Վահատիի) :

Եւ ՚ի նոյն տարւոջ թագաւորն Երուսա-  
լէմի (Յմաւրի) չողաւ յԱդիպասոս, և եղեն  
Եգիպտացիքն ընդ Երկուս . իեսքն հնազնն-  
ցան Երուսաղէմի թագաւորին, և իեսքն հը-  
պարտացեալ վատահացան ՚ի Յորագինն, և  
առաքեցին առ նա: Եւ Յորագինն առաքեաց  
զՇ Երարքաւ <sup>(2)</sup> զօրագլուխն իւր զօրօք յօգնա-  
կանութիւն նոցա, և դարձան ընդդէմ թա-  
գաւորին Երուսաղէմի և մատնեցան ՚ի կո-  
րուստ ՚ի բարկութենէն Վատուծոյ, և մա-  
շեաց զնոսա ՚ի սուր սուսերի թագաւորն Ե-  
րուսաղէմի: Եւ գնոց իջաւ ՚ի վերայ Պլ-  
պէս քաղաքի <sup>(3)</sup> ամիսս հինգ . և լուաւ եթէ-

Եր եղբայր Խոհճ ասլանայ Բ . որդւոյ Ամառատի, և եղբայր  
կնոջ Ետղուալ—արտանոյ :

(1) Ակես գետ, այն է որ կոչեն ՚ի Տաճկաց իւրը ըբնաւ,  
որ Ելեալ ՚ի փոքրուն Ասիսյ՝ թափի ՚ի սեաւ ծով:

(2) Ըերսաքաւ, այն է Ծիրքու . Եր եղբայր Եռուպոյ՝ հօք  
Սալա—էտունի :

(3) Պլպէս է Պիլըսիտ կամ Պիլուսիտ քաղաքն յեզր միջն-  
կրեոց ծավուն, որ բաժանէ զԱսիս ՚ի Լիբիոյ :

Նորագինն ամենայն բազմութեամբ թուրքաց սպաշարեալ է զերիմն, և եթող ըդ-Պլաֆէս և եկի, և նախ քան զգալն նորա առաւ Հերիմն յանգիտութենէ զօրաց Ֆը-ռանգաց՝ որ ոչ լուան նմա իմաստնական խը-րատին զոր գրեաց առ նոսա՝ զի մի ելցեն ընդդէմ թուրքաց մինչեւ ՚ի գալն նորա. այլ ժողովեցան և գնացին յարուցին ՚ի քաղաքէն զիթուրքն, և ինքեանք նստան ՚ի բացեայ և անհոգացան : Եւ գարձան ՚ի վերայ նոցա թուրքքն, և կոտորեցին և առին զքաղաքն, և տարան գերի զբրինձն Վնտաքու (Քու-մնատ Գ) և զայլս բազումն ՚ի գլուաւորացն<sup>(1)</sup>:

Իթուին Վայրուոց Անկօ (1466) և Հայոցն ոգ (603), զօրացաւ սուլտանն Խվիճ աոլան և առ զինտուկն և զի պլամեայն և զջարանդա ՚ի ձեռն Տանուին, և հալածեաց զորդիսն ՚Իանիշմանոց :

Հայում ամի պարոն թորոս առաքեաց ոո-կի և արծաթ՝ ՚ի Հալպ՝ գնել զոմն յիշխանացն իւրաց որ կայր անդ ՚ի ծառայութիւն . և նո-քա առին զոսկին և չետուն զծառայն : Եւ թորոս առաքեաց սպառնալիս Նորագնին, և ինքն ել յերկիրն Վարաշայ . և ժողովեցան ՚ի ՚ի վերայ նորա բազմութիւն թուրքաց, և ե-հար զնոսա զօրութեամբ Տեառն, և կալաւ ՚ի նոցանէ այր գլուաւոր և նշանաւոր . և

(1) Գրիգոր երեց, Գ. 281:

զարհութեցաւ՝ Առադինն յերեսոց նորա, և  
առաքեաց առ նա զոր խնդրէրն, և խնդրեաց  
խաղաղութիւն։ Եւ բացաւ բերանն Վուան-  
դաց, և խնդրեցին զի՞րինձն, և վաճառեաց  
նոցա ընդհարիւր հազար դահեկանի։ Եւ ե-  
լեալ Շրինձն գնաց ՚ի Կոստանդինուպօլիս  
առ քոյրն իւր, և դարձաւ բազում գանձիւք։  
Եւ երեր անտի Յօյն պատրիարք Վնտիոքու,  
որում անուն էր Վթանաս, և եմոյծ ՚ի յՎն-  
տաք։ Եւ տեսեալ զայս Վուանդ պատրիարքին  
Հերմի անուն, և ել ՚ի քաղաքէն և գնաց  
նատաւ ՚ի Կուստոյրն, և բանադրեաց զքա-  
ղոքն։

Իժուին Վոորւոց ՌՆՀԵ (1477) և Հայոցն  
ՌԴ (604) Վանիլ թագաւորն գնաց ՚ի վերայ  
Շուլզարաց և ըմբռնեցաւ յառնէ միոջէ, որ  
կամեցաւ տանել զնա առ թագաւորն. և նա  
խոստացաւ նմա մեծամեծ խոստումն՝ թէ  
թողու զնա, և գոյ զհետ նորա ՚ի Կոստան-  
դինուպօլիս։ Եռաւ նմա այրն և դարձոյց և  
փախոյց զնա և ած զնա ՚ի Կոստանդինուպօ-  
լիս, և (Վանիլ) արար նմա զոր խոստացաւն։

Իժուին Վոորւոց ՌՆՀԵ (1478) և Հայոցն  
ՌԵ (605), թագաւորն Վրուսաղէմի գնաց դար-  
ձեալ յԵղիպտոս, և յաղթեաց զօրացն ՚Առ-  
բադնին՝ որ կային ՚ի Վար, և այլ դարձաւ  
յԵրուսաղէմ։ Եւ լուաւ եթէ նեղել սկսան  
Տաճիկքն զքրիստոնեայսն, և գնաց երրորդ

անգամ յիշեպտոս. և ելընդդէմնորա Շերսպաւ որ կայր ՚ի Ասր, և դարձեալ յաղթեցաւ և փախեաւ յերեսաց նորա : Եւ թագաւորն Երուսաղէմի էառ զԱսր, և եղեւուրախութիւն մեծ քրիստոնէից . և եղեն հարկատուք Երուսաղէմի ամենայն Եգիպտոս :

Եւ յայտամի մեռաւ ամիրայն Խարթէբերդոց Կարասլան, և առ զիշխանութիւնն որդի նորա Ասրագինն (1) :

Ի թուբին Կոորւոց ՈՆՀԹ (1479) և Հայոց ԱԶ (605), Եղդրոնիկոս յայն՝ սպանովն Ատեփանէի, որ էր հօր Եղբօր որդի Վանի թագաւորին, փախեաւ ՚ի Վիլիկիոյ և գնաց Աքայ, զի անդ էր Եղբօր իւրոյ դուստրն (Թէոդորոս), որ էր լեալ կին հանգուցեալ թագաւորին Երուսաղէմի . և եղեւ հոգաբարձու տան նորա : Եւ անկաւ անօրէնն այն պոռնկութեամբ ընդ Եղբօր դստեր իւրոյ և յղացաւ, և յայտնեցաւ չարն և փախեան և գնացին ՚ի Խառան . և անդ ծնաւ նոցա չար ծնունդն . և գարշեցան ազգն թուրքաց ՚ի քրիստոնէից յորժամ լուան զբանն զայն . և անտի գնաց ՚ի Վերտին, և ոչ ընկալան զնա . և չոգաւ անտի ՚ի Կարնոյ քաղաք, և

(1) Կոորւետտին Մահմատ որդի Ֆաքր-էտտին Վարդարուանաց սուլտան Որդոքիտ, որ աիրէր Ամթայ և Հինգէյֆայ, մեռաւ յամի 1183 :

առնոցը զօր ՚ի Յմուրբաց և երթայր գերեր  
զբրիստոնեայսն և բերեր վաճառէր անօրի-  
նացն :

Ի նոյն ամի մեռաւ մեծ իշխանաց իշխանն  
պարոն Յմորս , կեցեալ երեւելի փառօք և  
մեծաւ յաղթութեամբ . և մօտ ՚ի կատարած  
կենացն զգեցաւ զգեստ կրօնաւորութեան  
և մեծաւ յուսով կատարեցաւ ՚ի Վրիստոս .  
յիշատակ նորա օրհնութեամբ և զիցի ՚ի Վր-  
իստոս յեկեղեցիս ուղղափառաց : Եւ ետ  
զիշխանութիւնն որդւոյ իւրոյ յոյժ տղայոյ .  
և յանձնեաց զնու յիշխանսն : Եւ եղբօր իւ-  
րոյ Վլեհին ոչինչ ետ՝ գիտելով զչարութիւն  
նորա , որ նախ քան զմահ նորա գնացեալէր  
առ Նորադինն և ետ նմա զիւրիս . և արա-  
բեալ յոլով չարիս քրիստոնէից ձեռնառուու-  
թեամբ անօրինացն , գողացաւ և զլ անաւեր (1)  
՚ի Հայոց և գերեր յանինայ զհաւատացեալս  
՚ի Վրիստոս , զորս ոչ կամիմբ ընդ գրով ար-  
կանել զաղէտսն :

Յետ այսորիկ իշխանքն Հայոց և Յմոմաս  
մանկակալ տղայոյն , առին ՚ի նմանէ (՚ի Վլե-  
հէ) երդումն՝ զի մի զրկեսցէ զեղքօրորդին  
իւր , և նոքա տացեն նմա զիկս երկրին և  
գարձցի անդրէն . և նա երդուաւ և գար-  
ձաւ յերկիրն , և ոչ եկաց յերդումն , այլ

(1) Վանաւեր , եթէ շիցէ անուն տեղւոյ . թուի եթէ  
ասիցէ վանաւերեր , այսինքն՝ վահօրեր , վանքեր :

մեծամեծ չարեօք զօրացաւ և տիրեաց ա-  
մենայն երկրին՝<sup>(1)</sup>։

Ի թուրին Ասորւոց ՌՆԶ (1480) և Հայոց  
ԱՅ (607), բարձաւ թագաւորութիւնն Տաճ-  
կաց Աշուղտոսէ, որ սկսեալ էր յիւմարայ  
՚ի թուրին Ասորւոց ԶԽԹ (949), և աստ բար-  
ձաւ . զի անկաւ ՚ի նոսա երկպառակութիւն,  
և եղեն երկու հերձուած : Տաճիկըն որ յիւ-  
ղիպտոս Արագատիք կոչին՝ որք են Շեխիք, որք  
առեն թէ՝ չարն չէ յիւթուածոյ . և մի է Աս-  
տուած, և չարն բազումէ, և սատանայ է  
պատճառ չարին: Եւ որք յիւթուր և ՚ի Վիջա-  
գետս էին, առէին թէ՝ չարն և մեղքին յիւ-  
թուածոյ է . և կոչին նորա Ալլարիք<sup>(2)</sup>. և այ-  
սու պատճառաւ առէին զմիմեանս : Ալլար-  
իքն էին ընդ Ջրաանգաց և Շեխիքն ընդ Նոր-  
ագնին, և յերկուց կողմանցն կային Աշուղ-  
տոս : Եւ առաքեաց Աօրագինն առ երկո-  
սեան կողմանսն պատգամ և խոտացաւ նո-  
ցա ազատութիւն՝ եթէ ամենեքեան զնա

(1) Թուումաս աներն Թարոսի, որ խնամակալ էր մանկան  
Թուուրենի, պահեաց զնա առ ժամանակ մի յերկիւզէն ՄԵՆԻ  
որ կամէր գրաւել զբավանդակ իշխանութիւնն Կիլիկիոյ, որ  
և իշխանացաւ իսկ, այլ ոչ կացեալ ՚ի խաղաղութեան ընդ  
ազգին՝ սորանու յիշխանաց, և ածու փոխանակ նորա յաթո-  
ոքն Թուուրէն Բ. որդին Ստեփանեաց, յամի 1174: — Սմբատ  
յեր, 100—102: Վահրամ, յեր, 210:

(2) Ալլարիքն են Սիւննիքն . ՚ի սոյն աղանդոյ էր և ՚Նու-  
բէտովին և ամենայն Միջագետք:

կամիցին, և ոչ տացեն հարկս Պռանդին։  
Եւ լուան նմա և արգելին զհարկն ՚ի թա-  
գաւորէն Երուսաղէմի, և ամրացուցին ՊՊ-  
պէս և եղին երկոտասան հազար ձիտոր  
և հետեւակ երկու հարիւր հազար։ Եւ լո-  
ւաւ թագաւորն Երուսաղէմի և գնաց և  
առ ՊՊպէս, և կոտորեաց առ հասարակ բաց  
՚ի քրիստոնելից։

Եւ Շաւուրն իշխեցող՝ ի վերայ Ասրայ,  
այրեաց զքաղաքն (1), և առ զքաղմութիւնն  
և գնաց ամրացաւ ՚ի խարհէ քաղորք (2) և առ  
ոտքեաց առ ՚Նորադինն զեղեալ իրսն : Եւ  
թագաւորն Երուսաղեմի գարձաւ բաղում  
աւարտւ : Եւ ՚Նորադինն առոքեաց զՇերա-  
քաւ զօրագլուխն հարիւր հազար հեծելովք  
յ՛շգիպտոս, որ ընդ երթալն սպան զիշխանն  
Տաճկաց (զՇաւեր). և յետ այնորիկ ըմբռո-  
նեաց զլաալիփայն (Շտէտ լէտին իլլահ) և ըս-  
պան զնա, և ջնջեաց զտուն նորա . և այս  
պէս բարձաւ իշխանութիւնն և խալիփայու-  
թիւնն Տաճկաց (3) յ՛շգիպտոսէ և տիրեցին

(1) Ըաւուր կամ Ըաւեր փոխարքայն Եգիպտոսի՝ որ  
դաշնակիցն էր Ֆռանքաց, տեսեալ զգբժութին նոցա այրմամբն  
Պլաքայ, զօրաժողով եղեւ, և առ 'ի վառել զարիբութիւն  
ոգւց զօրացն՝ այրեաց զքաղաքն Փոստատ, և խալիֆայն Ե-  
գիպտոսի առաքեաց առ Կոռրէտորին ինդքել զձեռն օգնա-  
կանութեան նորա, Տես 'ի պատճեննեան իալւիրաց Միշուայ,  
համ, Բ, Գլ. 6:

(2) Խարհեք քաղաք՝ և գահիրեն, իսկ Մըսքը կոչեցեալ:

Յ) Խմա՝ Ալուրաց, որը էին ՚ի Ֆադիմեան ցեղենը

ազգն թուրքաց յայսմհետէ : Եւ յետ երեք  
ամսոյ մեռաւ Շերաբաւ , և առ զիշխանու-  
թիւնն նորա Յուսուփին , որ է Ալահադինն  
եղբօրորդին Շերաբուի . և էին սօբա ազգաւ  
Քուրդ ՚ի Դվինայ քաղաքէ Վեծաց Հայոց ,  
որդիք աղքատաց , և հայր սորա կոչէր Կուրք<sup>(1)</sup>  
Այս Կուրքսորդի Խուլիմանայն Շերաբաւ եղ-  
բայր իւր ելեալ ՚ի Դվինայ վասնաղքատութե-  
նկին ՚ի Վիճագետս և գնացին ՚ի Ծակրիթ և ա-  
ռին զնոսա ՚ի բերդն ՚ի ճորտութիւնն Այս Կու-  
րքս ՚ի գիշերի միում տեսանէր , զի ելանէր  
՚ի մարմնոյ նորա հուր և այրէր զբաղում աշ-  
խարհս . և պատմեաց զերազն Զ հափ միում .  
և (սա) մեկնեաց նմա թէ՝ ծնանի որդի որ տիրէ  
բազում աշխարհաց . և գրեաց զբանն , որ  
թէ ելցէ ՚ի գլուխ երազն , աացէ նմա և  
որդւոց նորայամեն ամի հազար կարմիր այն  
որդին որ թագաւորէ : Եւ ՚ի նոյն ամի ծը-  
նաւ Յուսուփին . և յորժամ զարգացաւ էտո  
զնա Շերաբաւ հօր եղբայրն իւր , և գը-  
նաց առ Նորադինն . Եւ Շերաբաւ էր այր  
յառաջադէմ և իմաստուն , և արար զիա  
Նորադինն զօրապետ և առաքեաց յԱշխար-  
տոս : Եւ Ալահադինն որ էր Յուսուփին , էր  
Ճարտար առաջի Նորադինն , և էր հաճոյ  
յաչ նորա , և զինի մահուան հօրեղբօրն ա-

(1) Աամսւէլ — Վարդան . յեր . 161 : — Կիրակոս .  
յեր . 88 :

ռաքեաց զնա՝ ի տեղի նորա, և Զ Հուտն  
այն եկն առ լուրեն և խնդրեր զոսկին, և առ  
ուշ ցնա լուրեն. «Ճկ երթիցուք առ թագաւ-  
ռորեալն, և նա տացէ քեզ» ։ Եւ չոգան  
երկոքեանն յշգիպտոս. և խնդրեաց Յու-  
տուփին, և եհարց ընդ Զ Հուտն՝ թէ քանի  
ամք են երազոյն։ Եւ նա ուներ զդիր թուաւ-  
կանին, եհան և եցոյց նմա. և նա ետ ան-  
ցեալ ամացն ամենայն ամի հաղար դահե-  
կան կարմիր։ Խայց հայր նորա յետ սակա-  
ւու ոսամք ձիոյ հարեալ ՚ի գլուխն՝ մե-  
ռաւ և թագեցաւ պատուով։ Եւ Յուտուփն  
երթացը և զօրանայր և յառաջանայր օր ըստ  
օրէ։

Ի նմին ամի ետու խղճ առլան զիեսարիա  
և զօշամնդաւ յորդւոցն՝ ՚իսենիշմանայ։ Իսկ  
Յուտուփին հրաման եհան յերկիրն Եշգիպ-  
տոսի՝ զի միշտ գօտեկապ երեւեսցին քրիս-  
տոնեայքն՝ նշանակ ծառայութեան, և մի  
հեծցեն ՚ի ձի և ՚ի ջորի։

Եւ յայսմ ամի միաւոր եկեղեցին ուղղա-  
փառաց առաւ ՚ի նեստորական եպիսկոպոսէն  
(՚ի Շաղուատ). և եղեւ բարկութի Տեառն ՚ի  
վերայ նորա, և նոյն ժամեն գարձաւ (եկեղեցին)  
առ տեարս իւրեանց։ Յաւուրս յայսոսիկ պոց-  
ծառանայր աստուածային կարդօք և շնորհօք  
վարդապետութեամք սուրբն Հակոբորեղեւ  
եպիսկոպոս և կոչեցաւ ՚իսնէսիս։ Սա եր-

որդի Ասլիպին առն արդարոց . Այս արարյունը գիրս խրատուց և կրօնից . և սա մեկնեաց զամենայն հին և նոր կոտակարանս . և լինէր նովաւ նշանք և պանչելիք ՚ի փառո Քրիստոսի Կոտուծոյ մերոյ :

Ի թուին Կոտուոց ՌՆՁՆ (1481) և Հայ. /159թ.  
ոց թւ (608), առաքեաց թագաւորին Յունաց  
Մանիկն առ տէր Աերսէս կաթողիկոս Հայ-  
ոց և առ իս Աիմուայլս պատրիարքս Կոտուոց,  
որ ժողովողս եմ գրոցս , վասն միաբանութե-  
կրօնից և դաւանեութեան՝ նախ ՚ի ձեռն Քր-  
իստափորի և երկիցս անդամ ՚ի ձեռն թօ-  
րիանեաց : Եւ գրեաց առ մեզ տէր Աերսէս ,  
թէ խնդրել են ՚ի մէնջ երկու ընութիւն ա-  
սել Քրիստոսի , և զչորրորդ ժողովին մեծա-  
րել . և զ՞օնունդն ՚ի գեկտեմբերի իւ առ-  
նել , և խմօր դնել ՚ի նշխարին և ջուր խառ-  
նել ՚ի բաժակն . և ՚ի սուրբ Կոտուածն իտ-  
էցար չասել : Եւ մեք գրեցաք առ նա , թէ  
“Այդ կրօնքդ ՚ի մերս մերձ է . բայց ես ոչ կո-  
միմ զՃշմարտութիւն կրօնից հարցն ձերոց  
փոխել . զի թէ մեծ և կամ փոքր<sup>(1)</sup> և կամ դա-  
ւանութիւն փոխեք , երեւի թէ թերի էիք  
մինչեւ ցայժմ և արդ լցայք և դեռ կատա-  
րեալք եղերուք՝ ակն առեալ մարդոյ . այլ  
մեք կատարեալ տեսանեմք զՃեզ առաքելա-

(1) Ի բնագրին գոյր առա որ ուրի բառու , զոր ու ՚կարա-  
ցաք իմանալ :

կան հիմամբ , և թերի ինչ ոչ գոյ ՚ի ձեզ»:  
 Եւ առաքեցաք առ նա զմի յաշակերտաց մե-  
 րոց որ վարժ էր արտաքին գրոց , զի ընդ մեր  
 պատասխանի արասցէ . զի լուաք թէ ար-  
 տաքնովքն խրատեալ է այրն որ եկեալ է ՚ի  
 թագաւորէն : Եւ գնացեալ աշակերտին մե-  
 րոց , մեծ կաթողիկոսն Հայոց հրամայեաց  
 խօսել ընդ թօրիանէի վասն բնութեանց ա-  
 ռաջի իւր . և եհարց մեր աշակերտն ընդ  
 Յոյնն թէ՝ «Դքանիս բաժանի բնութիւնն»:  
 Եւ նա ասէ՝ «յերկուս» . և ասէ՝ «յորս . ո  
 և թօրիանէ ասէ . «յանձնաւորութիւն և  
 յանձնաւորութիւնն»: Եւ նա ասէ . «Վյդ  
 երկու բնութիւնդ որ գուք ասէք , ո՞ր է ,  
 անձնաւորն թէ անանձնաւորն»: Եւ կարկե-  
 ցաւ զբազում ժամա տարակուսեալ , և ապա  
 ասէ . «Օ ի՞նչ կայ մեր և արտաքնոցն կարգի  
 և հարցափորձութեանց . թող զայդոյ Եւ կա-  
 թողիկոսն պարսաւեաց զնա և ասէ . «Վաս  
 ընդէր վազվազես , երկուցեալ ՚ի կապանաց  
 երկոցունց . եթէ ախոցեան եկեալ ես , զիստ  
 խրտչիս նմանապէս յերկոցունցդ՝ յլուսուա-  
 ծաշունչ գրոց և յարտաքնոցն՝ որպէս զերկ-  
 չառաւ Եւ այսպէս խօսելով զբազում աւուրս՝  
 յամօժ լինէր անուանեալ խմաստասէրն թօր-  
 իանէ <sup>(1)</sup> :

(1) Թերիանեայ գերք որ զոյն իմադրոց , զմուլին ընդ-  
 հակառակն պատմէ , զբազթանակել իւր ՚ի բանս և զգոր-

Վրեալէր և առ մեզ Այանին և խնդրեալ՝ի մէնց գաւանութիւն. և մէք գրեցաք և առաքեցաք, և հաւանեալ էին, և գրեցին առ մեզ վերստին գովութիւն և գոհութիւն բանիցն մերոց: Եւ զկնի աղաչանք՝ զի գնասցուք առ նոսա, և ՚ի բերանոյ մեր լուիցեն. և մէք ոչ առաք յանձն զգնալն, այլ գրեցաք՝ եթէ ՚ի Եր գաւանութիւն այդ է, մի բնութեամբ և կամօք և ներգործութեամբ փառաւորել զՔրիստոս ըստ Ըստաքելոց և Այրդարէից և ուղղափառաց հարցն մերոց, և յայդր վերայ հաստատեալ եմք անշարժելի. և որ ոք այդու ընդ մեզ զիսաղաղութիւն կալցի և սիրէ զմեղ, կալցուք և մէք և սիրեացուք. և եթէ վասն սցդորիկ տաեն զմեղ և պատերազմին, մէք ընդ Ըստուծոյ և ընդ հարցն մերոց գնասցուք. և մատուսցուք զպարաննոցս մեր ՚ի վկայական հանդէս նախնեացն մերոց: ՚ Այնպէս և Կաթողիկոսն մեծ ըստ իւրումիմաստութեանն արար պատասխանի. զնորայն լիով մէք ոչ իմացաք զպատասխանին, բայց զայս զիտացաք՝ զի խափանեաց տէր զջան թագաւորին զոր առաջի եղեալ էր մեզ Քրազկեդանիկ լինել. զի անկաւ Այնիլին այլ մեծագոյն հոգք ՚ի ծուրբաց, այլ

առութիւն սրբոյն Ներսեսի: Տես ՚ի զիրս նորին՝ թարգմանեալ ՚ի կղեմէսէ Գալանոսէ: Եւ ձեռագիրս Գրատան սուրբ Յակոբոց: Համար 858. Գ.Հ. Ժ.

և մեռաւ մեծն՝ Ներտէս կաթողիկոսն Հայոց առաքինութեամբ և պարկեցա վարուք զարդարեալն, և եկաց մնաց սահման հարցըն մերոց հաստատուն հիմամբ (1) :

Այլ և 'ի նոյն թուին Յորբոց Ռուան (1481) և Հայոց ԱԾ (608), խնդրեաց թագաւորն Արուսաղէմի օդնութիւն 'ի թագաւորէն Յաւնաց որ էր աներ նորա, և առաքեաց զօրքազում ընդ ծով և գնացին 'ի վերայ Ագիպատոսի : Խայց յորժամ հասին Աշգիպատոս (Յոյնը, ըստ նենգաւոր բարուց իւրեանց նենգեցին թագաւորին Արուսաղէմի, և կամէին ինքեանց առնուլ զԱշգիպատոս : Աւիմացուցին Աշգիպատացէքն թագաւորին զիամըս իւրեանց և զՅունացն, և տուին նմա-

(1) Խնդիրն միտւորութեան որ ընդ մէջ երկուց եկեղեցեաց Հայոց և Յունաց 'ի ժամանակս Մանուելի կայսեր և որբոյն Ներսէոր Շնորհալոց, յայտնի և ընդհանուր ազգիս 'ի գրոց նորին խոկ սրբոց, յորում ոչ ինչ յիշատակի և զԱսորոց մասնել 'ի նոյն խնդիր : Խոկ Առաւման պատմիչ ասէ՝ և թէ ըստ խնդրոց Շնորհալոյն առաքեցաւ 'ի Հռոմելիայ Յով հաննէս Եպիփակոպոս ասորի, որոց տեսեալ զՀեղութիւն և զիակղութիւն բանից սրբոց Կաթողիկոսին Հայոց, համարելով վեա իրը հաւանեալ ընդ բանս Ջեորիանեայ, մեղադրեաց զնա, և ոչ եւս կացեալ անդ՝ դարձաւ 'ի տեղի իւր : Զինի մահուան Շնորհալոյն, յորժամ գումարեցաւ ժողովին աղգային 'ի Հռոմելիայ, առաքեցան և 'ի Միհայէլ պատրիարքէ Առորոցին եկեղեցականք ոմանիք ներկայ գտանել 'ի նմին - Կիրակոս, յեր . 67 . որ և 'ի մէջ բերէ զառաջին թուղթն գրեաւ առ Աւեքս փեսայ Մանուելիւ - Տես և 'ի կարգ թղթոց միաբանութեան, յընդհանրականն, յեր . 180 :

ոսկի և պատանդս, զի տացեն նմա հարկս. զի տակաւին չէր բաւական Յուսուփին կը ռուիլ ընդ թագաւորն Արտօսաղէմիւլը հաւանեալ թագաւորին, և առեալ զոսկին և զպատանդսն դարձան, թողեալ զՅոյնսն անդէն, որ և ոչ իշխեցին յամել անդէն, այլ առեալ զնաւսն դարձան. և կալաւ զնոսա ձմեռն և բազումք կօրեան ՚ի ծովաւն:

Ի նոյն թուին եզեւ շարժ ահագին յամառնային յեղանակին ՚ի յունիսի տթ., ՚ի տօնի սոււրբ առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի, յերրորդ ժամուն՝ ՚ի ժամ պատարագին շարժէր երկիր ՚ի հիմանել, և թուէր թէ ՚ի վերէ ՚ի բարձրանալ և ՚ի վայր է ՚ի խոնարհել. և եռայր երկիրս մինչև ցինն ժամ աւուրն ։ ։ ։ Եաք մեք ՚ի վանք (Վաւր Հանանայ (վ. Կանիս այի), և անկառք ՚ի վերայ երեսաց մերոց, և հրամայեցաք զի յեկեղեցւոյն մի ոք ելցէ մինչ ՚ի դադարէլ բարկութեանն. և զջմարիսն արժան է տաել, դադարման ակն ոչ ունէաք, զի ամենայն ոք կարծէր եթէ հասեալ է վախճան աշխարհիս (1)։ Իսկ ՚ի յինն ժամ աւուրն յիշեաց Ըստուած զաւ-

(1) Յայտն ամի (1170) ոչ միայն զԱնտիոք, այլ և զՏիւրոս, զՃրապոլիս զԵմես և զՇերիա վնասեաց շարժն շարաշար աւերմամբք շինուածոց և հաստահինն բերդից, յորու և բազումք կորուսին զկեանս իւրեանց. և երկիր զն դատաստանին Աստո. ծոյ, ասէ Գուլլելմոս ախւրացի, դադարեցուցներ զպատերազմնես որ ՚ի մէջ քրիստոնէից և Խոլանցու

բարչական խնաման և հաստատեցաւ երկիր, և հոգի կլաք և ուշաբերեցաք . և էր տեսանել զամենայն ակն յարտասուս և ամենայն լեզու բերէր գոհութիւն Աստուծոյ : Ապա եկն եհաս համբաւ ՚ի Հալպայ՝ թէ փլապարիսալն և բերգն և պատառուածք երկրին կլաւ զբաղումն , և սեաւ ջրով լցու քաղաքն , և մեռան ՚ի նմա անհամար բազմութիւնք , և փլան ամենայն ձեռագործ շինուածք , և մնաց մի եկեղեցի : Եւ խնդրեաց արդար դատաստանն Աստուծոյ զվրէժ աքեան քրիստոնէիցն , զի իբրեւ զանասուն վաճառեալ լինէին ՚ի նմա ազգք քրիստոնէից՝ գինք արեանն Աստուծոյ . թողում ասել զգործն Ասդոմայ և զանօրէնութիւն ջրակարու հսկայիցն մինչեւ յուսահատէին բազումք ՚ի դատաստանէն Աստուծոյ տեսանելով ըդարիս նոցա : Նոյնպէս և յԱստաք , զի բազում շինուածք փլան և եկեղեցին Յունաց փլաւ ՚ի վերայ պատարագողացն . փլաւ և սուրբ Պետրոս (եկեղեցին) , և Ծրինձն զգեցաւ քուրծ և ամենայն բնակիչք քաղաքին գնացին անկան առաջի Պատրիարքին իւրեանց՝ զի մոցէ ՚ի քաղաքն : Եւ նա ասէ . “ Ո՞նչ ոչ ելանէ չպատրիարքն Յունաց , ես ոչ մտանեմ ՚ի նա . ” և յորժամ գնացին հանել զնա , տեսին զի ՚ի փլմանէ եկեղեցւոյն խոցեալէր և մերծ էր ՚ի մահ . և հրամայեաց

(պատրիարքն | ատինաց) բառնալ և ընկենուլ յարտաքս, և արարին այնպէս. և մեռաւ արտաքոյ քաղաքին. և ապա եմուտ պատրիարքն Վոռանդաց Հեմի<sup>(1)</sup> ՚ի քաղաքն։ Եւ սկսան շինել զիլածն։ Նոյնպէս և յամենայն երկիր բաղում աւեր և կործանումն եղեւ բերդից, եկեղեցեաց և քաղաքաց և գեղից ՚ի նոր և յանլուր և յօտար շարժմանէն. բայց ողորմութեամբն Քրիստոսի յԱնտոք և յամենայն ծովեզերեայն մնաց եկեղեցիքն ուղղափառաց՝ ոչ վասն բարի գործոցն մերոց, այլ վասն սուրբ հարցն աղօթից և նահատակութեան նոցա։

Ի թուլին Կոորւոց թանգ (1482) և Հայոցըն թթ (609), մեռաւ խուդբաղին աթարակըն Վոոլայ և ամենայն Աթուրացւոց, և լուաւ Յորադինն եղբայր նորա և չոգաւ ՚ի Վճրին և տո զնա առանց պատերազմի, նոյնպէս և զԱնձարն. և ուրախացան Փիսիրքըն<sup>(2)</sup> յոյժ, զի սիրէին զնա որովէս զօրինապահ, զի գինի ոչ ըսնպէր, և ընդ սահման աղօթից նոցա ոչ անցանէր. և ասէին զնա մարդարէ։ Եւ նո ՚ի պատճառս ուրախաւ-

(1) Այն է Եմիրի կամ Ամաւրի պատրիարք, զորոց և վերագոյն յիշատակեաց զատելութիւնն զոր ունէր ընդդէմ պատրիարքին Ցունաց։

(2) Փիսիրքն են Քահիր կոչեցեալ ազգն կրօնաւորաց Տաճկաց։

թեան ազդին թուրքաց և Տաճկաց ատեսըր զբրիստոնեայն, և աւերել տայր զնորաշէն Եկեղեցին որ ՚ի ժամանակս նորա շինեալլինէր, մինչ մեռաւ խալիփայն Վաթիջն (1) և առ զպատիւն Վուդսդին որդի նորա. և սա արգելեաց ՚ի քակելոյ զեկեղեցին այսու պատճառաւ : ՚Բանզի յորժամ եղեւ նոր խալիփայն, գրեաց առ նա Վորադինն՝ թէ « Եցաւ սահման Փեղամբարին Վահմետի, որ գրեաց թէ՝ զհինդ հարիւր ամ ոչ կամի Տէր զջնջումն քրիստոնէից . և արդ կատարեալ է թիւ սահմանին այն, պարս է մեղ այսուհետեւ բառնալ զբրիստոնէութիւնն Եւ ԱՇոտուծոյ ազդմանէն գրեաց ՚ի թղթին թէ՝ Արամացեա ինձ դալ առ քեզ որ խորհինք վասն այսոցիկ ու ՚ակ նա յորժամ աեսաւ զթուղթն և հասկացաւ զբանն, թուեցաւ նմա թէ նենգութեամբ գայ առ նա զի սպանցէ զնա և ինքն առցէ զպատիւ խալիփայութեանն . որովէս եբարձ զհոդիսոսի խալիփայութիւնն հրամանաւ իւրով. վասն այսորիկ գրեաց առ նա խստագոյն պատասխանի, և պարսաւեաց զնա . և գրեաց և առաքեաց յամենայն աշխարհ՝ զի շինեսցին Եկեղեցիք և համարձակ լիցին քրիստոնեայք

(1) Վասթէնձէտ Ըուսուք որդի Մորթաֆեաց որ տերեաց ամ 24, և յաջորդեաց որդի նորա Մոադատի Հասան յամի Փրկչին 1169—1170.

յամենայն ուրբեք : Եւ զայս արար հակառակ՝ Արագածինին . և սպան զիզիրն (1) որ կամակից էր՝ Արագածինին , և եհան ՚ի բանտէ զորդիսն թումայի և ետ նոցա զեկեղեցին իւրեանց զար առեալ էր զըսպարտութեամբ :

Իսկ Արագինին գնաց պաշարեաց զիօսը ուր կային հինգ որդիք եղբօրն նորա, և ետես որ յոլով ժամանակի սկէտք էին առնուլ ըդքաղաքն , խօսեցաւ ընդ նոսա ՚ի խաղաղութիւն , և երդուաւ որ թողու զքաղաքն և զերկիրն եղբօրորդեացն՝ եթէ բացցեն նմա զքաղաքն և մոցէ ՚ի նոտ խաղաղութեամբ : Եւ լուան նմա և ածին զնա ՚ի քաղաքն . և եւ ՚ի կըյն և էառ զամենայն գանձսն որ կային անդ , և եզ զիւր մարդիկն ՚ի կըյն՝ զի յանուն նորա պահեսցեն , և զաշխարհն և զքաղաքն բաժանեաց եղբօրորդեացն , բայց զամենայն ամսուրսն արար ընդ ձեռամբ իւրով և գնաց : Եւ յայնմ հետէ սկսաւ ծանրելը հարկ քրիստոնէից , և ետ հրաման մի՛ երկայնել քրիստոնէից զհերս իւրեանց զի ճանաշաւոք լիցին . նոյնպէս հրամայեաց Զ Հուտ աղդին կարմիր կարկատան կարել ՚ի փակեղն կամ ՚ի յուսն զի ճանաշիցին :

Յայսմ ժամանակի գնաց Եմբի (Կմաւրի) թագաւորն Երուսաղէմի ՚ի կոստանդինու-

(1) Ուշը առանց երկրայութեան նշանակէ Աւշը , որպէս ունի օրինակ մի՛ Աղջիք :

պոլիս, և բաղւմ գանձիւք դարձաւ Աշուազիւմ:

Ի թուին Վարւոց ՌԱԶԴ (1483) և Հայոց ՌԱԶԴ (610), Խղիճ աօլան եկն ՚ի Ալտենի և ոչ կարաց առնուլ զնա . և առեալ գերի անձինս երկոտասան հազար և դարձաւ անդրէն : Իսկ Վորագինն ժողովեալ զամենային ամիրացյան և զիամայիլն ՚Իանիշմանայ և զՇ ահն շահ եղբայր Խղիճ աօլանայ և գնացին ՚ի Կետարիա . և սուլտանն ոչ կամեցաւ ելանել ընդդէմնոցա , և առաքեցին առնա զի տացէ յաշխարհէն բաժին եղբօր իւրոյ : Հւ որդիք Շ ահն շահին կային առնմա հինգ . և նա եւ առ զմի յորդւոց նորո՞ եղեն և խորովեաց և առաքեաց առ հայրն և ասաց . “ Յօէ ոչ երթաս այտի , զջորս որդին դոյնապէս առնեմ : ” Հւ յորժամ տեսին զայն՝ Երկեան , և արարեալ խաղաղութիւն՝ դարձան : Հւ կալաւ ցաւ զՃ որագինն և հիւանդացաւ , և անկաւ շփոթ մէծ , և բաղւմ գործակալք յարեան ՚ի վերայ իրերաց և կոտորեցին զմիմեանս . և եղեւ յոլով վեասս և պակասութիւն քրիստոնէից վասն շփոթոյ իրացն այնոցիկ :

Ի թուին Վարւոց ՌԱԶԴ (1484) և Հայոց ՌԱԶԴ (611) , ՚ի խաչին ամիսն եղեւ պաղ և ձիւն տաստիկ , նոր ՚ի լրոյ և ՚ի տեսանելոյ . զի քսան և եւթն թիղ չափեցին զթանձրութիւնն . որ և ՚ի Հնդիկո , որ բնաւ ձիւն ոչ

գոյ, ասեն թէ չորեքտասասն թիզ չափեցին զձիւնն . և պաղեցան տղբիւրը, և ձկունք ծովու մեռանէին, և ջնջեցան թոշունիք և երեք ՚ի ծմակ տեղիսն, և ընտանի անտանոց եղեւ մեռանիլ ՚ի չգոյէ կերակրոց, և այրեցաւ ամենայն բոյս սերման : Եւ ՚ի գալ ամին եղեւ սով մեծ և կարօտութիւն յոյժ, մինչ իշխանեքն Կապադոկիոց սպանին զիսմայիլն զամիրայն Աեւաստոյ, և առին զամենայն ընտանիս նորա, և կոտորեցին անձինս հինգ հարիւր, և առին զամբարեալ ցորեանն և զամենայն ստացուածս նորա և ապրեցան ՚ի նեղութենէ սովոյն . և ծածկեցաւ գործ ըսպանման նոցա դշորս ամիս վասն ձմերնային յեղանակին . և ՚ի գալ գարնանն լուան ամենայն ազգեքն մերձակայ, և չար թուեաց և տարակուսեցոց լուրն զբազում : Եւ ոմանք ՚ի բնակչաց աշխարհին առաքեցին ՚ի Դամակոս առ Տանուն ամիրայն Կեսարիոյ, զոր հալածեալ էր Խլիճ ասլան բազում ազգականօք, և կոչեցին զնա . և եկն և էառ զիշխանութիւն Աերաստիոյ, և էառ ՚ի բազմաց ըդշվիժ ազգականաց իւրոց վասն անողորմ ըսպանման նոցա : Եւ լուաւ Խլիճ ասլան և եկն ՚ի վերայ Տանունին ՚ի Աերաստիա . և Տանուն յուսացաւ ՚ի Աորադինն՝ կանգնեալ ՚ի հիւանդութենէ իւրմէ որպէս յարուցեալ ՚ի մեռելոց . և անկաւ ահ նորա գարձեալ ՚ի

վերայ աշխարհի , և ժողովեալ բազմութիւն զօրաց գնաց ՚ի Աերաստիա . և զարհուրեալ սուլտանին եթող զբաղաքն և գնաց : Եւ՝ Արագինն դարձաւ և էառ զիարաց և զՊեհնինի և զՔեսուն : Եւ լուեալ զայս Խղիճասլան , գայ բազմութեամբ յոյժ ՚ի վերայ Արագնին . և Արագինն գնաց ընդ առաջ նորա և նստաւ ՚ի վերայ Զահնաց<sup>(1)</sup> : Եւ եկես սուլտանն և նստաւ ՚ի միւս կողմանն մերձառ նմա . և երկեան ՚ի միմեանց և ոչ պատերազմեցան զբաղում աւուրս : Եւ անկառ սով ՚ի բանակն երկոցունց և բազումբ մեռան ՚ի սովոյ . և յետ բազում աւուրց անցելոց եթող սուլտանն զՃանունն կալ ՚ի հընազանդութիւն Արագնին , և արարին սէր և դարձան ՚ի տեղիս իւրեանց :

Արացից փոքր ինչ վասն ազանդոյ միոյ որ երեւեցաւ յաւուրս մեր նախ քան զվախչան կաթողիկոսին Աերսիսի , որ եղեւ այս պէս : Աբեղայք երկու , անուն միումն Յուսիկ և միւսոյն Գէորգ , և երեց մի Արաւուկետ անուն , գնացին ՚ի կողմանց Այծագետաց առ սուրբն Աերսէս , և մեզադրեցան ՚ի նմանէ վասն անկարգութեան համբաւոյ նոցա . և ելին ՚ի նմանէ տրտմութեամբ , և ապրատամբեցին և գնացին յիւռհա , և սկսան բամբասել զտէր Աերսէս և հայհոյել եթէ

(1) Զահնան է Ճիկան գետ առ սահմանոք կիլիկից :

զաղանդն Ախմանի կախարդի ունի, և առնե  
արծաթով ձեռնադրութիւն. և ինքեանք ե-  
զեն Քաղկեդոնիկը, և խաբեցին չորս հարիւր  
տուն յլլւռ հայոց զինի իւրեանց և անուանե-  
ցին զնոսա Ծուսիկեանք: Եւ լուաւ հայրա-  
պետն Աերսէս, և գրեաց առ իշխան քաղա-  
քին զի հալածեսցէ զնոսա. և իշխանն Աւո-  
հայոց եհան զնոսա անտի, և նոքա գնացին  
՚ի Հալպ առ Աորագինն, և առին անտի հա-  
մարձակութիւն և գարձան: Եւ ես կոչեցի  
զնոսա առ իս և մեղագրեցի, և հաստատեցի  
զնոսա յուղղափառութի, և առաքեցի զնոսա  
խմ պատուաւոր արամբը առ աէր Աերսէս, և  
աղաչեցի հաշտել ընդ նոսա: Եւ յորժամ  
գնացին նոքա, վճարեալ եր տէր Աերսէս ՚ի  
կենաց տատի և հասեալ ՚ի Քրիստոս ՚ի թը-  
ւին Ըստուոց ՌՆՁԵ (1485) և Հայոցն ՈԺԲ  
(612), յլ Ըստուածածնին ամսեանն ՚ի յութ,  
յաւուր հինգ շաբաթւոջ: Եւ Ծուսիկն այն  
անօրէն դարձաւ և գնաց յլ նոտաք և մկրո-  
տեցաւ և դարձեալ եղեւ Քաղկեդոնիկ (1):

(1) Առ գլխաւորն այսր ազանդոյ թուին ակնարկել բանք  
թղթոց սրբոյն Աերսեսի, մակադրեալ և առ ժպիրհ օմն ։  
Եւ զի ասէ Միխայէլ Եթէ բամբասէին զառ բըն արծաթով  
առնել զձեռնադրութիւնն ըստ օրինակի Ախմանի կախարդի,  
յայտնեն բանք երրորդ թղթոց սրբոյն յորում ՚ի մէջ բերէ  
զբանս յանդուզն ժպիրհին որ ասէր Եթէ Ակաշառն զոր առ-  
նուս կուրացուցանէ զաջ քո, և վաճառ ես զաթոսն Աս-  
տուծոյ այնոցիկ որ բիւր շարեօք լցեալ են ու Տես ՚ի գիրս

Խակ տէր՝ Ա, երսիսի կայր Երկու Եղբօր որդի Եպիսկոպոսունք, և աւագ Եղբօր որդին չէր մերձ մահու հօրեղբօրն, և կըսերն առեալ զմատանին նորա՝ քարոզեցաւ Լաթո զիկոս։ Եւ յորժամ լուաւ զայն աւագն, եկն ՚ի կըսյն կաթողիկոսութեան, և ոչ թողին ըդնա ՚ի բերդն . և նա գնաց դարձու առ փետայն իւր առ պարոն Ալեհն, և Ալեհն էառ զնա և տարաւ առ Արագինն, և նորին օդնութեամբն եմոյծ զնա ՚ի Հառմելայն. և նրանաւ յաթու հոպրապետութեան հօրեղբօրըն՝ Վրիգոր անունն : Եւ ՚ի յաւուր ձեռնադրութեան իւրոյ կոչեաց զմեր Եպիսկոպոսունն զտէր Վրիգորէս Վեսնոյ Եպիսկոպոս, և զտէր Վասիլիոս Ուաքնոյ Եպիսկոպոս, և պատուեաց զնոսա, և կացոյց առ ընթեր ձեռնադրութե իւրոյ։ Եւ յորժամ ձեռնադրեցաւ առ աքեաց առ մեղ Երկու Եպիսկոպոս ըստ հին սահմանին մերոյ զոր ունիմք ՚իմիջի մերում, որ յորժամ Վարուոց ուղղափառ պատրիարք ձեռնադրի, առ աքէ առ Հայոց Հայրապետն զդաւանութիւնն իւր . նոյնպէս և Հայոց Լաթողիկոս լեալ, առ աքէ առ պատրիարքն Վարուոց զդաւանութիւնն իւր։ Եւ ես ուրախ Եղէ և ինդացի, զի այր գովելի և դիտնական էր . բայց ըստ կանոնաց սակաւ Ընդհանրական թղթոց, յեր • 211, տաղեալ յԵրաւաղէմ. յամի 1871.

մի մեղադրեցի, թէ յորժամ անուանեալ էր Հայրապետ մի, պարտ էր մնալ՝ ի նոյնն ։ Այլ և աղաչեցի զեա՝ թէքարձ զկեզոտ անուն արծաթառութեան յազգէդ երեւելիք և հըս- չակաւոր, և ամենեւին անխոտան և սրար- կեշո՞ք բացց ՚ի միոյդ։ Եւ յանձն էառ և խոստացաւ առնել։ Այլ և աղաչեցի վասն անուանեալ կաթողիկոսին որ յառ աջ քան զնա ազգականին իւրոց, զի պատուով կալ- ցէ զնա ՚ի տեղւոջ ուրեք, զի բազմու- թեան ազգիդ պարտ է երից և չորից հայրա- պետաց։ Եւ զայն եւս խոստացաւ և կատա- րեաց՝ առարելով վնա ՚ի լամբունն՝ յոլով մասն վիճակի հաւատացեալ ՚ի նա, օրում՝ անուն էր Գրիգորէս (1)։

(1) Աշ ոք ՚ի մերոց պատմագրաց՝ յիշատակէ Երկուց կա- թողիկոսաց միանգամայն գրաւել զաթոռն զկնի է Ընորհալոյն- քանզին, առէ Միխայէլ, եթէ Գրիգոր Ապիկատ (որդի Շա- հանայ եղբօր Ընորհալոյն) կոչեցաւ յաթոռն, կամ լաւ ես՝ ինքնընտիր եղեւ, և Գրիգոր Տղայ (որդի Վասիլի միւս եղ- բօր Ընորհալոյն) պաշտպանութեամբ և հրամանաւ նուր- էտատնի ձեռնագրեցաւ կաթողիկոս ՚ի չռումլաւ Խոկ Վար- դան առէ (յիր. 169), Գրիգոր Տղայ առնու զքողն կա- թողիկոսութեան հանութեամբ ազգին, և Գրիգորէս Ա- պիկատն կոչեցեալ չոքաւ ՚ի Լամբրօն և ինամեր զՏարասոնի վիճակին, որ և յամի 1195 նոտաւ յաթոռն զկնի Գրիգորի և Գահավիթի։ Նոյնազէս և Վահրամ գնէ նախ զԳրիգոր Տղայ, յետոց զԳրիգորին Գահավիթմն, ապա զԳրիգոր Զ զԱ- պիկատն, զըր ետ ձեռնագրել Լեւան Բ յետ աիրելց Հր- ռառակլայի։ Ամբատ առէ եթէ Ներսէս Ընորհալի պատուի- րեալ էր զԳրիգոր Տղայն նատուցանել յետ մահուան իւ-

Խնոյն թուականին թագե (1485) և Հայոց  
ըլքն Ոժք (612), Երադինն հրաման ետ զօր  
ժողովել յամենայն աշխարհացյլ, մանացւոց  
(Աշմեն) և յիշգիպտացւոց և յիշթուրացւոց  
և ՚ի Կապադովիացւոց և ՚ի Հայոց և ՚ի Վեջագետաց,  
զի բարձցէ զթագաւորութիւնն  
որ յերուսաղէմ զվարանգացն, և զիսիճ առ  
լանսոյ զսուլսանութիւնն : Եւ ինքն հսկար  
տացեալ էր, զբաղում ժամս կարդայր և  
ազօթէր լրութեամբ . և ոչ տայր ըմկել գիւ  
նի ՚ի բանակին իւր, և ոչ ձայն երգոց և  
խաղաւց և կարաւչաց լեւի լինէր ՚ի զօրս  
նորա . և վասն այսպիսի առարինութեան ա  
կրն ունէր թէ Կոտուած խօսի ընդ նմա . զի  
առէին խաբերայք Շէխէր, թէ ՚Տեսաք ըղ-  
քեզ զի ելանէիր յերկինս ո . և այլք թէ  
՚Տեսաք որ հրեշտակ խօսէր ընդ քեզո . և  
նա հաւատայր նոցա : Եւ մինչ ՚ի յայսպիսի  
միտս հպարտացեալ էր և կայր ՚ի Դամասկոս  
Երադինն, և ժողովէին յամենայն կողմանց  
հեծելոց բազմութեանց առ նա՝ որոց ոչ էր  
թիւ, յանկարծակի հարաւ ՚ի Տեսանէ և  
մեռաւ թագաւորեալ ամս քանինեւութ : Եւ  
առ զթագաւորութիւնն Վելիք Ամեն որդի  
նորա, և ցրուեցան զօրքն յիւրաքանչիւր  
տեղիս : Եւ թագաւորն Երուսաղէմի (Ա-

բոյ : Տես և ՚ի ներբողեանն Կերուեսի Լամբրոնացւոց ՚ի վորս  
Ենորհալւցին :

մաւրի) եկն՝ ի վերայ՝ Դամասկոսի և գերեաց զաշխարհն, և խոստացան Դամասկոսիքն տալ նմա հարկս իբրեւ զառաջինն, և նա ոչ կամէր դառնալ նախ քան զառնուլ քաղաքին. բայց մեղքն քրիստոնէից ոչ ետ թոյլ, զի կալու զնա ցաւ մահու, և առեալ հարկ՝ ի Դամասկոսէ՝ դարձաւ. ՚ի յէքայ և անդ մեռաւ՝ թագաւորեալ ամս երկոտասան, զինի քառասուն աւուր մահուան՝ Արագնին. և եղեւ տրտմութիւն ամենայն քրիստոնէից մահն նորա. Եւ թագաւորեաց որդի նորա Պաղտինն ամաց հնգետասանից, և առաքեաց արար սէր ընդ որդի Արագնին. Եւ յորժամ լուաւ Խոխճ ասլան զմահն Արագնին, եկն՝ ի Աբաստիա և առ զնա և զիսմանա և զիսկեսարն, և ջնջեաց զմնացեալ ազգն՝ Դանիշմանաց, և բարձաւ իշխանութիւն տանն՝ Դանիշմանայ՝ որ սկսաւ ՚ի թուին Ծոորւոց ՌՅԿԶ (1366). և աստվածանէառ՝ տեւեալ ամս հարիւր քսան և երկու. և կացին վեց գլխաւորք զինի միմեանց՝ Այնպէս եւ ՚ի Ոօլայ Աբիագինն (Աբիֆ-Խատին՝ Պաղի) եղբայրն՝ Արագնին, և առ զի ծբին և զի Դաղա և զիսառան. և հնաղանդեցաւ նմա եղբօր որդին իւր ՚ի Հաղպ, և դարձաւ և եբարձ զեղեալ կանանք՝ Արագնին, որ գրեալ էր յամենոյն մըզգ գըմի վերայ՝ մի ըմսպել գինի Ասլիմանի. և նա հրաման ետ տաշել զգիրն, և համարձակ

ետ խմել յամենայն տեղիս յայտնապէս :

Յայսմամի Աալահադինն որ տիրեալ էր Եղիպտոսի, տիրեաց և իշխեաց ներքսագոյն Արաբիոյ և մասին ինչ՝ ՚ի Ռուբեաց աշխարհէն : Եւ ՚ի սայն ամի բերդեր զոր ունեին Հայք յերկիրն Աասնոց, նեղեալ ՚ի Ռուփարկինայ ամիքայէն, տուին ՚ի Շահի Վրմէնն յամիրայն Խղաթայ, զայն որ ունեին ՚ի հին ժամանակաց :

Ի թուին Վորւոց ՌՆԶԶ (1486) և Հայոցն ՈԺԳ (613), սպանաւ իշխանն (1) Ավիլիկեցւոց կամօք իշխանաց իւրոց ՚ի բերդն, և բերդին զի Խոբէն որդին ողարտն Ստեփանէի որ էր ՚ի Տարսոն, և իշխեաց ՚ի վերայ աշխարհին : Եւ շարչարեաց և սպան զսպանողան հօր եղբօր իւրոց, զի ասեն թէ սպանին և արկին շանց . և վասն այսը նախատանաց ոչ կարաց ներելնոցա (2) :

Եւ ՚ի նոյն ամի ել Աալահադինն յաշխարհէն Եղիպտոսի և Եկի ՚ի Դամասկոս ՚ի սպատ-

(1) Կա ինքնէ Մլէհ եղբայրն թարոսի և Ստեփանէայ, որ զկնի միոյ ամի մահուան թարոսի բռնութեամք կալաւ զիշխանութիւնն Ավիլիկիոյ, և վարեալ զսպան իբր հինգ, ոչ կարացեալ տանել իշխանաց զսպանակեաց վարս և զանիքաւութիւնս նորին սպանին ՚ի թուին Հայոց ՈՒԴ, և զօրդին Ստեփանէայ զիկուբէն որ կայր առընթեր Բակուրանայ իշխանին՝ բեռւոյ իւրոց ՚ի Պապեռոն, զնեն յաթոռն : Սմբատ յեր. 102: —Վահրամ, յեր. 211 :

(2) Սմբատ, յեր. 102—105 :

ճառս օգնութեան ԱՌԵԼՔ Ապէհին, և առ ըզ  
Դամասկոս և գնոց ՚ի Հալտ . և զարհուրե-  
ցաւ ԱՌԵԼՔՆ ՚ի նմանէ . և նա առաքեաց առ  
նա և առէ . « Ես քո ծառայ եմ, և եկեալ եմ  
յօդնութիւն տեառնդ իմոյ՝ կալ ընդդէմ  
թշնամեաց քոց : » Եւ ոչ հաւատաց նմա , և  
ոչ երաց զբաղաբն նմա . և նա գարձաւ ՚ի  
Հալտայ և էառ պատերազմու զՀամն և  
զՀամայ , և եհան զՃիռանդ ծառայսն որ ՚ի  
Դամասկոս և վաճառեաց դիւրագին : Եւ ետ  
քերել ոսկի բազում ՚ի Ասրայ , և կուտեաց  
զօրս բազում : Եւ ԱԵՓԻԱԳԻՆՆ լուաւ զժու  
զսլիլն Ապահագնին , և եկն ՚ի վերայ նո-  
րս խրոխտանօք , և կոչէին զնա շուն կատա-  
զեալ որ հաջէ ՚ի տերն իւր . և փութային  
՚ի գայն զի մի փախիցէ ՚ի նոցանէ . և նա ա-  
ռաքէր առ նա և առէր . « Ո՞ի կռուիք , մէկ  
մարդիկ եմք և մէկ հաւատ , և հնազանդ եմ  
ձեր : » Եւ ոչ լուան նմա , այլ չոգան բախե-  
ցան ՚ի վերայ նոցա . և նոքա մարտեան ընդ  
նոսա , և սկսան կոտորել զզօրսն ԱԵՓԻԱԳԻՆԻն ,  
և փախեան յերեսաց նոցա : Եւ յորժամ ե-  
տես Ապահագինն թէ յաղթեցան ԱՌԱՄԲԻՔՆ ,  
արգել զզօրս իւր ՚ի կոտորելց զնոսա , և ա-  
սէ . « Ենայեցէք զի մէկ ազգ եմք : » Եւ անց  
՚ի մէջ նոցա և արգելեաց զզօրս իւր , և զըմ  
բռնեալ ծառայսն հանդոց և տղատեաց . և  
վասն այսորիկ անկաւ ահ և երկիւղ ՚ի վերայ

ամենեցունց : Անհաւանդ զարհուրեցաւ Աւլիք Աալէհն և եհան<sup>(1)</sup> զմբուսնգ ծառայսն և վաճառեաց սակաւու , զկոմսն Տրապօլեաց ութսուն հաղար դահեկանի , զջ օշլին որդի ջ օշլին յիսուն հաղար , զինազտ բը բինձն հարիւր հաղար : Եւ արար սէր ընդ Ընտաք զի օգնեսցեն նմա :

Իսկ Աեփադինն դարձեալ արար ժողով և առ ընդ իւր զտերն Աերտինայ և զարսն Քէրոյն , և եկն ՚ի վերայ Աալահաղնին վաթսուն հաղարաւ : Եւ Աալահաղնն ունէր երկոտասան հաղար , և առաքեաց առ Աեփադինն և ասէ . “ Ո՞ի գար ՚ի վերայ իմ և մի կոռուիր ընդ իս . զի ինձ չէ անարգանք թէ յաղթիմ ՚ի յիմ տեառնէդ . բայց քեզ մեծ կորանք է՝ թէ յաղթիս ՚ի ծառայէ քումմէ . ” և ոչ լուաւ նմա : Իսկ ապա Աալահաղնն գաղտ խօսեցաւ ընդ ամիրայսն խոստանալով նոցա բարի առնել . և յորժամ խմբեցաւ պատերազմն . դարձեալ զօրացաւ Աալահաղնն և պարտեցու Աեփադինն , և փախեան առաջի նոցա . և Աեփադինն նատեալ յուղտ փախեաւ ՚ի Ոօսլ . և Աալահաղնն առ ըզ Անբէձ , և եկին ՚ի հնաղանդութիւն նմա տէրն Անթափայ և թլքաշարայ : Եւ գնաց ՚ի Անցազն<sup>(2)</sup> և կոռուէր ՚ի վերայ նորա . և եւ

(1) Ըստ պատմութեան Արարացի պատմագրաց ու Աելք Աալէհ : այլ Աալահտաին հանեալ զգերիսն վաճառեաց :

(2) Ազաղ քաղաք է մերձ ՚ի հալապ :

լին յանկարծակի Հաշիշիքը<sup>(1)</sup> 'ի վերայ նորա  
և խոցստեցին զնա և ոչ մեռաւ . և ինքն ըս-  
պան զնասա , և առաքեաց զօր 'ի վերայ Հաշի-  
շեացն , և գերեաց զերկիրն նոցա , և զ՛ջազն  
էառ սպատերազմու . և գնաց նստաւ 'ի վերայ  
Հալպայ : Եւ առաքեցին Հալպցիքն առ  
Փռանիգն , և եկն Վանազտն որ վաճառեցաւն  
և կոտորեաց 'ի զօրացն Աալահագնին , և ա-  
րար զնա փախստական . և Աալահադինն դար-  
ձոց զ՛ջազն 'ի Հալպ , և ինքն գնաց Ա-  
դիպտոս :

Ի թուին Եպորւոց ՌՆՁԷ (1487) և Հայոցն  
ՈԺԴ (614) , մեռաւ Կաֆքադինն (Վէճմէտ-  
տին) տէրն Վերտինոյ՝ կեցեալ իշխան ամս  
քաններկու , այր բարի և քաղցր 'ի վերայ  
քրիստոնէից . և առ զիշխանութիւնն խուտ-  
բդին որդի նորա :

Ի սոյն ամի վարագ մի եհար զթագաւու-  
րըն Յունաց 'ի յորս և համբաւեցաւ թէ  
մեռաւ անտի . և Խոլճասլան ասպատակեաց  
յաշխարհն նորա և գերեաց զքազումն : Եւ  
թագաւորն ոզջացաւ 'ի խոցյն և առեալ  
զօր բազում յոյժ , և կային առ նմա յորդւոցն  
Դանիշմանայ փախուցեալ առ նա , արար ԸՆ-

(1) Հաշիշիքն էին իրր ազանդաւորք ոմանք հպատակք  
գլխաւորի միում որ կոչեր ծերունին լերին , որոյ կուրօրէն  
ամենոցն հրամանացն հպատակէին զմահ 'ի բուին ունելով  
միշտ :

նոսա զօրագլուխս , և առաքեաց առ նա յառատղագոյն , և ասէ . “ Դարձո զհայրենիսն Դանիշմանեանց առ տէրս իւրեանց՝ որ կան առ իս . ո և ինքն զհետ գեսպանացն չոգաւ , և կոտորեաց զբազումն ՚ի Յառըքացն : Եւ Յառըքն Ուժին գնացին ծածկապէս ընդ կողմըն հիւսիսայ և գերեցին ՚ի Յունացն հառըիւր հազար կին և տղայթաց ՚ի յարանցն զօրսպանին : Եւ լուեալ զայն թագաւորին Յունաց , խնդրէր զսուլտանն և վարէր զնա առաջի իւր , և ոչ կարէր դիպիլ նմա սուլտանն . և թագաւորն Յունաց ետ յիսուն հազար հեծեալ յոմն յորդւոցն Դանիշմանայ , և առաքեաց զնա ՚ի վերայ Նիոկեսարու , և Յառըքերին սրարին խարէութիւն , և գրեցին թուղթ ՚ի դիմաց քրիստոնէիցն և ձգեցին ՚ի դուրս , և էր գրեալ թէ՝ “ Դանիշմանդայդ զր եղեալ էք ձեզ առաջնորդ , կամի մատնել զձեզ ՚ի ձեռն Յառըքաց : ” Եւ լըւեալ զայս հաւատացին և սկսան փախչիլ . և ելեալ զինի նոցա կոտորեցին զբազումն և սպանին զմիւս զօրագլուխն որ էր քոր որդի թագաւորին : Եւ յորժամ գնացին առ թագաւորին , սրտմտեցաւ յոյժ , և գնաց զայրացմամբ և եմուտ ՚ի մէջ Յառըքացն մերձ ՚ի Աօնն (Ակոնիոն) , իջաւ ՚ի ձորակի միում ՚ի մէջ երկուց լերանց գժուաբագունից , և պատեցան զնոքօք Պռի Յառըքմանք յոլովլութիւն

բազում յոյժ, և պաշարեցին զնոսա աւուրս  
հինգ, և խոցոտէին զնոսա գլօք քարանցն և  
նետիւք՝ ՚ի տուէ և ՚ի գիշերի, և սպանին ՚ի  
նոցանէ հաղարս և բիւրս՝ մարդ և գրաստ,  
և առին զռոճիկս նոցա հարիւր հաղար բեռ-  
նաւոր ձի, և երկեան յոյժ, և տկարացան և  
առաքեցին առ սուլտանն և ետուն երեք քա-  
ղաք զոր ինքեանք շինեալ էին, և խնդրեցին  
սէր, և աղաչեցին զի զերծուոցէ զնոսա ՚ի  
նեղութենէ անտի : Հւ կամեցաւ սուլտանն,  
և առաքեաց երեք ամիրայ հեծելօք՝ հանել  
զնոսա անտի և տանել ՚ի կրատանդինուազօլիս  
խողաղութեամբ : Հւ եկեալ առնոսա տմիւ-  
րայքն ՚ի գիշերի և հալածեցին զմուըբմանսն  
և հանին զնոսա անտի, և յուզի անկեալ գր-  
նացին : Հւ թուըբմանն երթայր աստի և ան-  
տի, և անարդէին զսուլտանն զի արար սէր  
ընդ նոսա՝ որ պաշարեալ էին ՚ի ձեռս նոցա,  
և հետզհետէ բախէին յանկարծակի և սպա-  
նանէին, և յափշտակէին . այլ և ՚ի հեռա-  
տանէ նետաձիգս լինէին և տպանանէին : Հւ  
Յոյնք ասէին ընդ տմիրայսն որ տանէին ըլ-  
նոսա, թէ՞ ՚ի ձէնջ է ծախումն մեր՝ թէ  
յապականչացդ : ՚ Հւ նոքա երդնուին թէ՞  
՚ Ոչ է ՚ի մէնջ, այլ անհաւանք և վայրենա-  
միտք են և ոչ լսեն մեզ : ՚ Հւ մինչ ՚ի կրա-  
տանդինուազօլիս պակասեաց ՚ի նոցանէ քսան  
հաղար այր : Հւ այսպէս պակասեալ ՚ի զօ-

բաց և լի ամօթով գնաց Վանին յերկիր իւր,  
այն որ ջանայր երեւելի պատերազմաւ յաղ-  
թել աշխարհի, և իմանալի խորհրդով ուղ-  
ղափառաց եկեղեցւոյ։ Ենտ այնորիկ առա-  
քեաց գանձս բազումն առ ուղաննն, և գը-  
նեաց զկենդանի մնացեալսն ՚ի զօրաց իւրոց  
որ կային ՚ի գերութեան. և եղեւ այս ՚ի թուին  
Ըստրոց ՌՆՁԸ (1488) և Հայոցն ՌՁՀ (617)<sup>(1)</sup>։

Օայսու ժամանակաւ քրիստոնեայք որ  
կային ՚ի Վելոինի՝ անկան ՚ի մեծ նեղութիւն  
յերկուց պատճառաց, ՚ի սովոյ և ՚ի չարու-  
թենէ, և ՚ի խիստ բարուց տմիրային իւր-  
եանց՝ որ մնացեալ էր յազգէն ՚ի անշմանաց։  
և ազգ արարին նոցա եկեղեցականքն, եթէ  
թշուառութիւնո այս ՚ի մեղաց է. զի կատա-  
րեալ է բանն Տեառն առ մեզ որ ասէ թէ՝  
՚ի առանակեցան ընդ հեթանոսու և ուստի ըդ-  
գործս նոցա, և եղեւ նոցա ՚ի գայթակղու-  
թիւն։ Արդ եկայք գարձցուք ՚ի չարեաց  
մերոց, և ազաշեսցուք զերեսս ողորմածին  
Ծառուծոյ, զի սպառեցաք, պակասեցաք, խ-  
պառ ջնջեցաք։ Եւ լուան ժողովուրդքն և  
ոկասն պահել և ազօթել արտասուօք, և հըս-  
կել և պազատել առ Ծառուած։ Եւ դադա-  
րեաց Տէր ՚ի բարկութենէ իւրմէ, և էարկ

(1) Սմբատ. (յեր. 105). Հիշէ համառօտ զպարտութիւն  
Մանուկի ՚ի Խլիճ—Արտաշասաց, և զբան լոր ընդ նմա կը-  
ռեաց։

'ի սիրտ ամիբային և զզջացաւ ՚ի գործս իւր . և առաքեաց առ սուլտանն և առ ՚ի նմանէ դանձս և ետ ՚ի նա զի՞ւլտինի , և ինքն ել և գնաց ՚ի խարթերդ . և եղեւ մեծ գիւրութիւն քրիստոնէից և առատութիւն հացի , և ամենայն իրաց ընդարձակութիւն :

Ի թուրին Կյորւոց Ռութթ (1489) , ել Ամալհաղինն յի ; զիսպոսուէ երեսուն հազար հագած հեծելով , զատ ՚ի սոսկականացն և ՚ի հետեւակացն , և յիսուն և երկու հազար բեռնակիրս զինաբարձս զինի իւր : Եւ եկն ՚ի Պաղեստինէ , և կալաւ Փուանդ մի և զենեաց և արեւամբ նորա լուացաւ աղօթից՝ և աղօթեաց , և պատրաստեցաւ պատերազմի և աւերման երկրին : Իսկ թագաւորին Երուսալմէ մի Պաղտինն (Դ) ժողովեաց զսակաւ զօրսն իւր , և առաջի նոցա անկաւ ՚ի վերայ երեսաց իւրոց ընդդէմ արեւելից . արարին և զօրքն նոյնալէս . և լացին և կարդացին առ Տէր սրբի մտօք . և երդոււան զօրքն առաջի Կյոտուծոյ և առաջի թագաւորին ոչ դարձուցանել թիկունս ՚ի թշնամեաց , այլ մեռանել յօժարութեամբ ՚ի վերայ սուրբ Եկեղեցւոյ . և գնացին ՚ի վերայ նոցա : Եւ յորժամ տեսին զբազմութիւն . . . նացն և հայեցան ՚ի սակաւութիւն իւրեանց , իջան դարձեալ յերիշարացն , և մախրամած երեսօք արտասուեցին և պաղատեցին առ Տէր , և

կազմեցան պինդ հուաստով, և գիմեցին ՚ի վերայ նոցա իբրեւ զարծուիս յերամն կաքաւաց: Աշուակէր Յիսուս Քրիստոս Վատուածըն քրիստոնէից եհան հողմն մրգկեալ ըզ հետ նոցա ընդդէմ երեսաց Վայլազգեացն, և թափէր զնոսա յերիվարացն, և դարձուցանէր զնոսա ՚ի փախուստ առաջի նոցա: և նոքա կոտորէին զնոսա յանխնայ և ոչ ասպրեցուցանէին ՚ի նոցանէ: Աշու փախեան և ցրուեցան Վայլազգիքն ընդ կողմն հարաւոյ յանապատն, և յառաւօտէ մինչեւ ՚ի մտանել արեգակունն ոչ դարձան ՚ի նոցանէ: Այնպէս և ՚ի վաղիւն, և մինչեւ ՚ի հինգ օրն երթային և գտանէին ՚ի նոցանէ լքեալ ՚ի սովոյ և թաքրուցեալս. և առին զամենայն ծանրութիւն ռոճիաց նոցա և զկահ և զկարասի, և լցան և փարթամացան. և ուրախ արար Տէր զհաւատացեալս իւր, և ՚ի համբաւս յայս երեկ զմէջս . . . նացն: Իսկ Աալահազգինն յոյժ սակաւուք անկառ ՚ի Վար, և զգեցաւ սեաւ, և փակեցաւ ՚ի տան խաւարի աւուրս բազում:

Աշու ՚ի սոյն ամի ամիբայն որ կայր ՚ի Հերիմն, կասկածեաց ՚ի Հալպայ թէ խորհեցան նմա շարիս՝ սպանանել զնա, և խօսեցաւ ընդ բրինձն Վատուքոյ, և պահանջեաց ՚ի նըմանէ երդումն զի մի հանցէ զնա ՚ի բերդէն, և կացցէ նմա ՚ի հնազանդութիւն:

և երդուաւ նմա՝ ի խաչն և յէւետարանն։ Եւ ամիրայն դարձաւ՝ ի շալպայ և ապստամբեաց և եղեւ ընդ Վնտաքու։ Իսայց յետոյ զըդշացաւ բրինձն, և ստեաց երդմանն, և երեր ալաշանօք զի կոբէն Ավլիկիոյ իշխանն, և գնաց ՚ի վերայ շերմին։ և ոչ ետ Տէր ՚ի ձեռոս նորա վասն ստութեան նորա, այլ բազումբ անկան ՚ի զօրացն Փռանգաց և դարձաւ ամօթով, և զշերմին դարձուցին ՚ի շալպատեալ երդուամն ՚ի նոցանէ։

Ի թուին Վասորւոց ՌՆԴ (1490) և շայոցն ոժէ (617), ժողովեցան Փռանգք ՚ի Պաղեստինէ, և գնացին ՚ի վերայ Յորդանանու իջան, և սկսան շինել անդ քաղաք ՚ի տեղին որ կոչի անց Յակոբայ, զի նովաւ առցեն զի ամասկոս։ Եւ լուաւ Աալահագինն, և ժողովեաց դարձեալ զօրս և եկն ՚ի Դամասկոս։ Եւ զի ամիրայն Իալբաքու որ կոչի Արեգական քաղաք, որ է Խլուպօլիս, ապստամբեալ էր, գնաց ՚ի վերայ, և երդմամբ և սիրով և խոստմամբ առ զնա և զօրացաւ։ Եւ գնաց ՚ի վերայ նոր քաղաքին, զոր շինեալ էին Փռանգք։ և զօրքն Փռանգաց մինչեւ ՚ի գալ Աալահագնին լսեցին զհամբաւ գալոյ նորա, և գնացին ընդգէմ նորա և փախուցին զնա մինչեւ ՚ի Դամասկոս։ և եկն զօրն Պռանգաց մինչեւ ՚ի գուռոն Դամասկոսի, և գերեաց զերկիրն։ Եւ Աալահագինն քաջալե-

բեալ ելաւ զհետ նոցա , և կալաւ ՚ի նոցանէ հարիւր Փրեր . և դարձեալ սրտապնդեալ չոգաւ ՚ի վերայ քաղաքին զոր շինէին՝ և կալաւ ՚ի նոցանէ հարիւր Փրեր , և պաշարեաց զքաղաքն և յաղթեաց նոցա , և ընկեց հուր ՚ի քաղաքն և սկսաւ այրիլ . և կային անդ հինգ հարիւր Փրեր Անստրաւն<sup>(1)</sup> իւրեանց : Եւ նոքա յորժամ տեսին թէ պարտեցան և յաղթեցան , ընկեցին զանձինս ՚ի հուրն և ՚ի գետն՝ զի մի անկցին ՚ի ձեռս . . . նացն և զմնացեալսն ՚ի նոցանէ կոտորեաց Ապա հադինն :

Ի թուին Ասորւոց ՌԱՆԱ (1491) և Հայոց ցըն ՈԺԸ (618) , մեռաւ թագաւորն Յունաց Անիլն՝ թագաւորեալ ամս երեսուն և եւթն , և առ զթագաւորութիւնն Ալեքս (Բ) որդի նորա ամաց երկոտասանից . և երկոտասան իշխան կարգաւորէին զթագաւորութիւնն : Եւ մայր նորա եղեւ հաւատաւոր , բայց ընդ ձեռամք ունէր զտունս գանձուցըն . և յետոյ անկալ ՚ի պոռնկութիւն ընդ մի յիշխանացն երկոտասանից , և յայտնեցաւ գործն , և խորհեցան մեռասան իշխանքըն սպանամել զմայրն և զորդին , և դնել թագաւոր զդուստր Անիլին , որ էր յաւա-

(1) ԱՆՑԱՐ Նշանակէ ըստ հին գաղղիերէն լեզուին՝ զվարոր , պետ կամ տէր , որով իմանի գլուխն կամ կառավարն կարգի Տաճարականաց որբ Ֆրերը կոչէին :

զին կնոջէն յօրինաւորէն, և ոչ կարացին։ Եւ ըւան մայրն ե որդին, և ջանացին ըմբռնել զնոսա . և փախուան մետասան իշխանքն յեւ կեղեցին մեծ . և զեւթն օր կալաւ ամբոխ զքաղաքն , և սկսան ծեծել զեկեղեցին փելլիկոնաւն (1) . և յետ եւթն աւուր էառ ըղնոսա յերաշխի Պատրիարքն , և եհան յեւ կեղեցւոյն և տարաւ յարքութեան և յանհոգութեան , զի առեալ էր երդումն ՚ի նոցանէ : Խակ թագաւորն և մայրն ստեցին երդմանն և հանին զաջ նոցա : Եւ բարկացաւ Պատրիարքն թէոգորս (թէոգոս) անուն և անէծ զքաղաքն , և ինքն ելաւ և գնաց ՚ի քաղաքէն . և անմտութեամբ արար անիծելով զքաղաքն և զանմեղան . օր և ութ ամիս պատարագ ոչ մատեաւ ՚ի նմա , և մեռեալ ոչ հազորդեցաւ և թաղեցաւ :

Ի թուին Վարւոց ՌԱՆՔ (1492) և Հայոցըն ՈԺԹ (619) , եղեւ պատերազմ ընդ սուլտանն և ընդ Վորագինն ընդ տէրն Հարսնքէփոյ և Քեսնոյ , զի ատեաց Վորագինն ըղզուստրն սուլտանաց օր էր կին նորա , և յուսոցաւ ՚ի Վալահագինն : Եւ սուլտանն չոգաւքակեաց դՔեսուն . և ելեալ Վալահագինն ընդդէմ սուլտանաց առնուլ զվրէժ Վորագ-

(1) Վ Ելիուան կամ Փիլիպուան . է գործի պատերազմական , որով ձգեին զմեծամեծ քարին ՚ի կործանել զպարիստ քազաքաց :

նին, և Հասան ամիրայն խմասուուն բանիւք արար խաղաղութիւն և ոչ կռուեցան, և գարձան խաղաղութեամբ՝ իտեղիս իւրեանց:

Իսոյն ամի ամիրայն լիւռհայոյ և խառանայ ապստամբեաց ՚ի Վօսլցոյն և հնազանդեցաւ Աալահադնին, և այսու պատճառաւ եղեւ Վիջագետք Աալահադնին. զի ժողովեցան Վօսլցիք և ոչիշխեցին կռուելընդ Աալահադնին, և հնազանդեցան նմա. և գընաց Աալահադինն և էառ զի միթ, և ետ ըգնա Յորագնին զի խոստացեալ էր նմա:

Իթուին Ասորւոց ՌԱՆԴ (1493) և Հայոց ՈՒ (620), մեռաւ Անելիք Աալեհն տէրն Հալպայ, մեռաւ և Աեփադինն տէրն Վօսլայ, և տուաւ Հալպ և Վօսլ աղգին Աեփադնին. և Ազագինն ետ զՀալպ եղբօր իւրում, և էառ ՚ի նմանէ զի նձարեն:

Իթուին Ասորւոց ՌԱՆԴ (1494) և Հայոց ՈՒԾ (621), Անգրոնիկոսն անօրէն սպաննողն պարոն Ատեփանէի, որ շրջեցաւ չարութեամբ ՚ի տեղիս տեղիս, եմուտ այժմ խաբէութեամբ ՚ի կրտուանդինուապօլիս, որպէս թէգնայ ՚ի հնազանդութիւն և ՚ի խնամակալութիւն թագաւորին տղայոյ. և ապա յայտնի արար զար կամսն չարածերն այն, և հալածեաց զՓռանդսն զոր եգիտ ՚ի քաղաքին. և խեղդեաց ՚ի ծովն զմայրն և զտղայն իւր, և սպան հազար այր սիշխանացն Յունաց,

և չորեքտասան հազար գիւղ և վանք աւերեաց ՚ի Հունաց . և առ զկին Ալէբսին իւր ՚ի կնութիւն . հալածեաց զՓռանգսն զոր եղիս ՚ի քաղաքին և ՚ի գաւառին , և ինքն թագաւորեաց : Եւ խորհեցաւ սպանանել զՓսիկոս (1) իշխանն մեծ , որ էր յազդէ թագաւորացն , և առաքեաց կոչեաց զնա . և ոչ կամեցաւ գնալ , զի ազգեցաւ նմա խորհուրդ թագաւորին : Եւ թագաւորն առաքեաց զզօրագլուխն իւր բերել զնա . և նա քամեաց զթուրն և եհար զզօրապետն և սպան զնա : Եւ ինքն երթայր յեկեղեցին , և սուրն արիւնոտ ՚ի ձեռին իւրում և ազողակէր . “Տեսէք և լուարուք ազգք և հասակք ամենայն , զի ջնջել կամի Անդրոնիկոս զթագաւորութիւնս Հունաց : ” Եւ լուան զայս , և ժողովեցան յեկեղեցին իշխանք և զինուորք և ամբոխ քաղաքին , և ամենեքեան խոցեալ էին յԱնդրոնիկեայ և բարկութեամբ կային ընդ նմա . և ասացին ցՓսիկն (ցԻսահակն) . “Ձագաւորեա դու ՚ի վերայ մեր , և անցցէ մրրիկս այս , ” Եւ փութացուցանէին զՓատրիարքն օծել զնա թագաւոր . և քառողեցաւ ընդ քաղաքն : Եւ լուաւ Անդրոնիկոս և եմնուտ ՚ի նաւ և փախեաւ . և հոսեալ նմա դարձուցին . և ՚ի բերելին սպատառ

(1) Այս է խահակ Բ Անգելոս կոչեցեալ , զի որդի էր Անդրոնիկոսի Անդրեասի :

պատառ կոտորելին զնա, և բերեալ ՚ի քաղաքն այրեցին զնա հրով ՚ի թուին Շորուոց թաւէ (1497)։

Իսկ ՚ի թուին Շորուոց թաւ (1493) և Հայոցն ՈՒԳ (623), իշաւ Աալահաղինն և ամենայն ամիրայքն միջագետոց ՚ի վերայ Քարաքը<sup>(1)</sup>, և ժողովեցան Փռ անկը, և գրնացին փախուցին զնոսա և ամրացուցին ըդքաղաքն։

Իսկն ամի թագաւորն Երուսաղէմի Պաղտինն (Դ) անկաւ ՚ի ցաւս գոգութեան, և արար իւր փոխանորդ զքորորդին իւր աղայ, ասէին և նմու Պաղտին։ և յետ սակաւ աւուրց մեռաւ, և թագաւորեաց աղայ Պաղտինն։

Իսկն ամի գնաց Աալահաղինն ՚ի Վուփարկինն և առ զնա . և գարձեալ գնաց ՚ի Վուլ, և ոչ կարաց առնուլ զնա . բայց յօյժ նեղեաց զնոսա, մինչեւ երդուան նմա որ

(1) Քարաք է Քերեկքաղաքն յարեւելից Նըրուսաղէմին յայնելոյս Յորդանանու, յորում կային առաջադոյն հաստուածք ՚ի Հայոց, որպէս ցուցանեն ցարդ Յօյն բնակիչք տեղւոյն զեկեղեցիս իւրեանց որ էր Հայոց, և բազումք իսկ ՚ի Յունաց իստառվանին ցարդ եթէ նախահարք իւրեանց էին Հայ աղշտաւ և առա յարեւալ ՚ի յունական եկեղեցին։ Դայ ՚ի գրատան սուրբ Յակոբաց Յայսմաւոր ձեռադիր յիշատակ արարեալ Լեւոնի Ե արքացի Ակիլիկիոյ եկեղեցւոյն Քերեկոյ, ՚ի թուին Հայոց Չհթ։ Աստ եկեղեւ Ոտոքէն Բ իշխան Ակիլիկոյ յամին 1481 առ զգուստը Ունաղդայ տը Հադիյեն Փըստանդ իշխանին։ Սմբատ յեր 105։

տան նմա հեծել և կացցեն ՚ի հնազանդութիւն:

Եւ ՚ի սոյն ամի մեռան Նորաղինն և խուղբաղինն (1) տէրն Ամմայ և Վերտնայ, որ էին սպականք միմեանց յԱրթուխեաց անտի. զի բազում եկեղեցիս քակեաց՝ Նորագինն ՚ի յԱմիթ, վասն որս և հարաւ բարկութեամբ ՚ի Տեառնէ, և էառ զիշխանութիւնն հարճորդին իւր խուղբաղինն (2), և զՎերտինն էառ Հասամաղինն որդին խուղբաղնին: Եւ ՚ի մեռաննելն Նորաղնին, Ումրդղինն տէրն Շալուայ էառ զխորթքերդ: Եւ յայսմ ժամանակի մեռաւ ամիր Վիրանն տէրն Խղաթայ, որ էր այր բարեմիտ և ողորմած առ աղքատս և կարօտեալս, և բազում դիւրութիւնս առնէր եկեղեցեաց և քրիստոնէից. և յետ մահուան սորտ էառ զտեզինորա Շակտամուր (Պէք-թիմուր) ծառսյն իւր:

Եւ ՚ի սոյն ժամանակս բրինձն Ծնոտաքայ արար սէր ընդ Վալահագնին, և նենդիւ. որսաց զԱրքէն զտէրն Ավլիկիոյ, և ըմբռնեաց զնա և եղ ՚ի բանտի. և եմուտ ՚ի Ավլիկիա

(1) Քոթու—էառափն Էլ—կազի որդի եր Շէչմ—էտոսին Ալեայ որդւոյ Դիմաւրտաշայ՝ Արդոքիտ իշխան Մէրտինոյ և Մուֆարկինոյ:

(2) Խմա՛ զԱմիթն էառ միւս խուղբաղին հարճորդի Կուրետտնի:

և յամեաց ամառն մի բովանդակ , և ոչինչ կարաց առնել նմա , զի պարսն լ եւոն եղբայր նորա իմաստապէս վարէր զիշխանութիւն երկրին : Եւ բրինձն ել ամօթով յերկրէն . բայց յետոյ տուին կամաւ իւրեանց ոսկի և զիթիլն և զնտանա , և հանին 'ի բանտէ զնորէն . որ և յետ այնորիկ առին զտեղիս իւրեանց և արհամարհեցին զբրինձն (1) :

Յայսմ ժամանակի եղեւ պատերազմ 'ի մէջ թուրքաց և Քրդաց , և յերկարեաց շմորն զամն ութ զինի միմեանց . և էր պատճառն այսպիսի : Թուրքմանքոր որ խորանօք (2) և բացօթեայք շրջին , և զձմեռնային յեղանակն գային խորանօք իւրեանց 'ի կողմն հարաւոյ սակս կակզութեան օդոյն , և զամառնային ժամանակն ելանէին 'ի կողմն հիւսիսոյ վասն բարեխառն և անխորշակ օդոյն . և 'ի գնալն և 'ի գառնալն գողանային զնոսա Քրդերն և զօրանային : Եւ յայսմ ամի գը-

(1) Ամբատ առէ (յեր . 104) Եթէ Ռուբէն առ 'ի հաճել զզեղնութիւն իւր եկեալ յԱնտիոք , ձերբակալ լեալ յեշխանէն արկաւ 'ի բանտ . որ և ազգ արարեալ առ Բակուրանքեւի իւր՝ տէրն Պապեռոնի , առ աքեցաւ մայրն Ռուբէնի մնալ 'ի պատանդի փոխանակ որդւոյն՝ մինչեւ հատուսյէ ըզ Փրկանս իւր . և կարեաց առէ , Ռուբէն զին անձին իւրոյ և ետ զԱսրուանդիքարն , զթիլն և զձկերն և հազար գահեկան առէի : Եւ եղեւ այս 'ի թուին հայոց ՈՂԴ (1185) : — Վարդան . յեր . 174 : Միք . Զամշեան . Հատ . Գ . յեր . 141 :

(2) Յօրինակիս խորդահատ :

տին երկու հարիւր Քուրդ դարանեալ յերկիլն Շպղթնայ վասն լիսասու, և սպանին ըզնոսա . և վասն այսորիկ ժողովեցան տասն հազար Քուրդ , և թուրքմանքն իրկինքան զնոսա, և եղեւ կոիւ մեծ յերկիրն Շպղթանայ, և յաղթեցաւ Քուրդն և խապառ կոտորեցան : Եւ յետ այսորիկ ձայն ետուն դարձեալ աղգն Քրդաց , և ժողովեցան ՚ի կողմանցն Ո՞ճբնայ և ՚ի Տուրաւդնայ երեսուն հազար , նոյնպէս և թուրքմանքն առանց թուց . և կոռուեցան մերձ Ո՞ճբնայ . և դարձեալ զօրացաւ թուրքմանն և կոտորեցին դՔուրդն հարուածս մեծամեծս յոցմ , և խապառ սատակեցին զնոսա . և գնացին առին զըանակետղս նոցա: Եւ վասն այսորիկ հատաւագգն Քրդաց ՚ի Ո՞իջագետաց . քանզի սակաւ զերծեալք անկան յերկիրն Ավլիկեցւոց և յամուր տեղիս ուրեմք ուրեմք :

Ի՞սպաց քրիստոնէից ոչ մեղանչէին թուրքմանքն , մինչեւ գտան զոմանս Քրդեր թագուցեալ ՚ի տունս քրիստոնէից , և սյսուպատճառաւաւ սկսան նեղեւ զըրիստոնեայսն ՚ի տեղիս տեղիս : Եւ էառ թուրքմանն զԵրապղթին և զմիլպամէ<sup>(1)</sup> . կոտորէին և վա-

(1) Ապուլֆարամ՝ որ ՚ի Քրոնիկոնի իւրում (յեր. 406) հետեւի տորուական բնագրին Միխայելի . փոխանակ անցայտ բառից Աբասլիլ և Թալլամէ ունի կարտուշ և Թալլամէ . որք էին մենաստանք երկու . զորս առեալ թուրքաց այրեցին և զղկրօնաւորան ՚ի սուր հանին :

Ճառ էին զբրիստոնեայսն , մինչեւ ամենայն ամիրայքն սկսան զգուշանալ երկրի իւրեանց :

Ի թուին Վարդոց ՌԱՆԸ (1498) և Հայոցն ՈՒԵ (625) , ժողովեցաւ Սալահագինն ամենայն հնազանդելովը իւրովք՝ Եգիպտացօք , Եթուրացօք , Վիջագետօք , և խաղաց գնաց ՚ի վերաց Փռանդին մերձ ՚ի Տաբարիս<sup>(1)</sup> : Եւ ելին Փռանդըն և թագաւորն Երուսաղէմի ընդդէմ նոցա , և յիշեցաւ մեղք քրիստոնէից առաջի Տեառն , և քննեցաւ յարդար իրաւանց նորա , և եղեւ հարուած և բարկութիւն ՚ի Տեառնէ ՚ի վերաց Փռանդաց : Եւ զօրացան ՎԱՐԴՊԱՔԻՔՆ և կոտորեցին և արկին ՚ի սուր սուսերի իւրեանց զԲրիստոսասէր զօրքն Փռանդաց . և կալան զմագաւորն Երուսաղէմի և զամենայն Փրերսն , և

(1) Յաւուրց անտի արքային Երուսաղէմի Պաղտնի գողն կոչեցելց . կռւալ էին Ֆռանդք դաշնա ուխտի ընդ Սալահատնի . զոր նրբազտ որ Հագիցիօն իշխանն Քերեկոյ ուերեւաց՝ ասպատակելով զկարաւան ուխտաւորացն Մահմետականց որ երթոցին ՚ի Մէքքա . վասն որոյ և Սալահատնի հրածանս արձակեաց ԵԵգիպտոս , ԽԱՆՈՐԻՍ և ՚ի Միջագետա ժողովեւ ամենայն Խալումաց ընդ գրօշու որբազան պատերազմն : Եւ Սալահատնի արշաւեաց բանակաւ իւրով ՚ի Տիրերիս և առ զայն ուր հասեալ Ալիյ ար Լուսինիան թագաւորն Երուսաղէմի հանդերձ իշխանօք , վտանդեալ ՚ի պատերազմն անկառ ՚ի ձեռս թշնամեաց , գերեցաւ և խաչն սուրբ : Խոկ Ուեմանս կոմս Տրապօլիսի նախ քան զբարտել քրիստոնէից՝ փախուստ եռ ՚ի պատերազմէն . և զինի սակաւու մեռաւ յուսահատութեամբ : Վարդան , յեր . 177:

եղեւ ուրախութիւն մեծ թուքքաց ազդին։ Հայց նախ քան զպատերազմիլն փախեաւ կոմնն Տրապօլեաց, և զնա ասեն պատճառ քրիստոնէից կործանման, զի բանս եգեալէր յառաջագոյն ընդ . . . սն։ Խոկ Այլահադինն էառ զՃաբարիա, և կոտորեաց և աւերեաց զնա . և ապան ձեռօք իւրովք ըլլ Անաղտն զքրինձն Ծնտաքոյ և երեք հարիւր Փրեր, և լուացաւ արեամբ նոցա . և ապա գնաց ՚ի յԱքայ, և իշխանիքն որ կային անդ, փախեան նուռով ՚ի Առւր . և էառ զԱքայ, և էառ գերի բազում յոյժ։ Եւ Կեսարիա և Կաղարէթ և Յոպոէ ըմողին զքաղաքն, և գիւրաւ տիրեաց ՚ի վԵրայ նոցա Այլահադինն։ Եւ ոչ ոք կարէ պատմել զնախատինն քրիստոնէից՝ զթուք եւ զտնհարութիւն . . . նացն։

Խոկ Այլահադինն գնաց ՚ի յԱխսարան և երգուաւ նոցա թողուլ զնոսա կենդանւոյն ուր և կամիցին գնալ։ Եւ ետ նոցա զմթագաւորն Երուսաղէմի, և առ զքաղաքն . և բնակիչքն առին զմթագաւորն և գնացին ՚ի Առւր։ Եւ ապա ելեալ Այլահադինն ՚ի վերայ Երուսաղէմի, և աւուրս ինչ պաշարեաց զնա . և զի ոչ գոյր նոցա ուստեք ակնկալութիւն, խորհեցան տալ զքաղաքն . և կտրեաց Այլահադինն գինս բնակչաց քաղաքին դահեկանս տասն, զի տացեն նմա ըստ գլուխս և եր-

թժիցեն յո և կամիցին (1)։ Եւ արարին այն պէս, և ետուն զբաղաքին։ և որ ոչ կարաց գնել զանձն իւր, մնաց անդէն ՚ի ծառայութեան։ Եւ ոչ ոք էր բաւական ժուժալ արտասուացն զօր հեղութին քրիստոնեայքն յեւանելն յաստուածընկալ քաղաքէն։ և որ մը նացին ՚ի տեղն՝ էին թուով քսան հազար արք և կանայք։ և ՚ի նոցանէ չորս հազար ծերո և պառաւունս աղատեաց Աալահադինն, և եօմն հազար տղայս արու և էդ բաժաննեաց զօրաց իւրոց։ և հինգ հազար երիտասարդս առաքեաց ՚ի Վար գործել ազիւս ՚ի շինութիւն սպարսպաց, և հինգ հազար եթող յիշուսաղէմ շինել զպարիսպ նորու։ Եւ զՏաճարն լուացին արեամբ քրիստոնէից, և դարձեալ լուացին վարդաջուլ։ և եղին սահման ոչ մտանել ՚ի նա քրիստոնէից, և որ մտանէ՝ մեռանի։ Եւ արար ըզտաճարն Յարութեան ընդ հարկաւ, զի որ մտանէ՝ տացէ կարմիր մի։ Եւ դարձաւ գընաց Աալահադինն ՚ի վերոց Արոց (Տիւրոս)։ Եւ եկին յաւուրոն յայնոսիկ կոմս մի Վարդիս անուն (2), այլր հզօր և իմաստուն, և ՚ի ձեռն

(1) Վարդան ասէ՝ յարուաց առ դահեկանս տասն և յիշաց՝ հինգ։ յեր։ 177։

(2) Մարքիզն ոչ է անուն մարդոց՝ այլ պատուց, և կոչէր ինքն Գոնրատոց տը Մոնֆերրա, որոց հայրն ՚ի բանտի կայր ՚ի Դամասկոս։

նորա փրկեցաւ Առւր։ Եւ Ապահաղինն գնաց  
և էառ զլայդա և զՓէրութն և զՇէպէլ  
և զմապնին, և տիրեաց նոցա։

Ի թուին Ըստրւոց ՌՀ (1500) և Հայոցն  
ՌԻ (627), էառ Ապահաղինն զՇ աւպաք և  
զԲարսք որ ՚ի վերայ ծովուն (1). Է գտան ՚ի  
Քարաք քարայր մի մեծ յոյժ՝ լցեալ թերա-  
պարզ արծաթով, որ հալ մի պակաս էր առ  
՚ի սրբել զնաւ ամենեւին, և ոչ կարացին ՚ի  
պէտս առնուլ զնաւ, և ոչ գտաւ արուես-  
տաւոր այնպիսի որ գիտէր զհանգամանս նո-  
րա։ Եւ անտի դարձաւ և եկն և էառ զլա-  
տիկն և զՇէպէլ և զլեհունն և զՓաղըաս  
և զՎարապսակն։

Եւ ՚ի սոյն ամի որդին Խլիճ ասլանայ ժողո-  
վեաց զօր պատերազմել ընդ հօրն . զի Հա-  
սան զօրտպետն սուլուանայ զայրացուցեալ  
էր զոտւլուանն ՚ի վերայ որդւոյն . և յորժամ  
կամէին դիպիլ միմեանց պատերազմաւ, Ա ար-  
համ շահն փեսոյ սուլուանին, տէրն Եզնիկա-  
յին, անցաւ ՚ի մէջ և արար խազազութիւն.  
և բազումք որ ընդ որդւոյն էին, ամաչեցին  
՚ի ծերութենէ սուլուանին, և խափսնեցաւ  
պատերազմն . բայց յետոյ սուլուանն կոտո-  
րեաց ՚ի թուրքէն որ միաբանեալ էին ընդ

(1) Քերեկ է անդք քանզմեռեալ ծով, իսկ Շաւարաք ՚ի  
հարաւոյ նորա . Զայսոսիկ քաղաքու ոչ Սալահտուին՝ այլ Մա-  
լք-Առել եղբայր նորա առ ասէ Խղն-Ալաղիր։

որդւոյն՝ չորս հազար անձինս, և զհասան զօրապետն սպանին թուրքն ։ Եւ ՚ի նոյն ամի տիրեաց Վելտինոյ մի ՚ի յորդւոցն սուլտանայ, որում անուն էր Խոյսր շահ Ազագին (1)։

Ի թուին Կոռուոց թշն (1501) և Հայոցն թւը (628), շարժեցաւ տունն Փուանգաց, և եկին ընդ ծով առանց թագաւորի բաղմութիւն ազգաց յոյժ, և իջան ՚ի վերայ Վաքոյ, և պատերազմեցան ընդ բաղաքին, և ոչ կորէին տունուլ զնա, զի կային անդ հարիւր հազար պատերազմող. և Ապահագինն ոչ իշխէր պատերազմիլ ընդ նոսա։ Եւ շինեցին Փուանդքն տունս բաղումն և եկեղեցիս և չորս հազար ջազացս ։ Յետոյ եկին և թագաւորին Վլամանաց ՚ի վերայ կրստանդինուազոլսի և պատերազմեցաւ ընդ նոսա, և ասպայետոյ սրար ընդ նոսա սէր, և անց յայսկըս. և եկին ընդ անջուր և ընդ դժուար ճանաւ պարհ առաջնորդութեամբ Յունաց, և կուտեցան ՚ի վերայ թուրքմանիք և կրստեցին զբաղումն ։ Եւ սուլտանն արար սէր, և ետնոցա ճանապարհ, և եկին ՚ի Վելեւկիա. և անդ թագաւորին նոցա խեղդեցաւ ՚ի գետն, և բերաւ մարմին նորա յԱնտաք (2) ։ Յետոյ

(1) Խայրշահ—Ազագին. այն է Մուղ—ետամին քայսար—Շահ, եր որդի Խվճառապահաց Բ.։

(2) Փրետերիկոս Ա Պարպարսասա կրչեցեալ, որ ՚ի լոգա-

Եկին երկու թագաւոր այլ<sup>(1)</sup> և գնացին յԱ-  
քայ և առին գերի բազում. և ապա խընդ-  
քեցին ՚ի Ալահաղնէն փոխել զծառայսն որ՚ի  
Դամասկոս զՓռանգոն՝ ընդ ծառայսն զոր նո-  
քա ունէին. և Ալահաղինն ոչ կամեցաւ: Եւ  
ապա հանին Փռանգըն քսան և հինգ հազար  
ծառայս և կոտորեցին, և կուտեցին ՚ի վերայ  
միմեանց, և արարին ՚ի վերայ աղօթա՝ որսկէս  
և արար Ալահաղինն. և եղին զքորորդին  
Ենկլիթեր (Ենգղիոյ)<sup>(2)</sup> թագաւորին կոմս Ե-  
քայս, և արարին խաղաղութիւն ընդ Ալ-  
ահաղինին. զի եհաս համբաւ ինչ յերկրէն  
իւրեանց և դարձան և գնացին: Եւ Ալա-  
հաղինն շինեաց զպարիսպն Երուսաղէմի ամ-  
րագոյն քան զառաջինն:

| թուին Կոորւոց ՌՀԲ (1502) և Հայոց

նայն ՚ի գետն Սելեւիիոյ, այն է Կէտ—սոս. հեղձաւ յամի  
1190: Կէրսէս լամբըօնացի: — Հարայարողն Սամուելի: —  
Վարդան, յեր. 179.

(1) Այս Լուսինիսն ազատեալ ՚ի գերութենէ, հակառակ  
երդմոնն զոր Ետ Սոլահտոտնի, Երթեալ սպաշարե զՊարզումոյ-  
թիդ: Յայնմ միջոցի հասին յԵւրոպիոյ նոր Խաչակրաք Տանի-  
մարգացիք, Անդղիացիք, Ֆլամանտիք, յորս կային արք Իշ-  
խանաւորք և արքեպիսկոպոսն Գանգորերի: Հուսկ աստ  
հասին անդ և գիլիազոս արքայ Գապղիոյ և Ռիշարտ թա-  
գաւոր Անդղիոյ: Վարդան, յեր. 179: Տես զընդարձակ  
պարագայս առման քաղաքին: ՚ի պատմութեան Խաչակրաց  
Միշտիք: Հատ. Բ. Գ. 8:

(2) Հենրի տը Համբանելը, որ ընտրեցաւ աղա թագաւոր  
Երուսաղէմի յամի 1192, և նստեր ՚ի Պաղպամոյիդ (Արքեան)

ՈՒԹ (629), Եղեւ հալածական յորդւոց իւրոց խիմիք ասլան, և ժողովեցին զնա կօնացիքն (Վկոնիացիք) առ իւրեանս . և աւագ որդի նորա ամբարձ զգլուխ իւր Աղջարայն<sup>(1)</sup>, և անհամբեր Եղեալ հսյրն ժողովեաց ըստ կարի զօրս գնալ 'ի վերայ որդւոյն, և 'ի ճանապարհին հիւանդացաւ և մեռաւ, և դարձուցին զնա 'ի կօնն : Եւ էր ընդ նմա որդի մի կրտսեր, զոր Եղին 'ի տեղի հօրն . և խլիճ ասլան մեռաւ 'ի թուին Կաորւոց ՌՀԴ (1504), թագաւորեալ ամս Երեսուն և ութ, և մնաց թագաւորութիւնն Երկոտասան որդւոց իւրոց :

Իսկ 'ի թուին Կաորւոց ՌՀԵ (1505) և Հայոց ՈւԸ (631), մեռաւ և Վալահադինն 'ի Դամասկոս, և եթողքսան և Երեք որդի<sup>(2)</sup>, որ և զաւագ որդին կացոյց 'ի Դամասկոս և զերկրորդն 'ի Խոր, և զերրորդն 'ի Հալպ . և անուանեաց զնոսա թագաւորս և սուլտանս, և զայլսն ընդ ձեռամբ նոցա<sup>(3)</sup> : Եւ կայր Եղբայր նմա Վելիք Հետու (Վալեք Կոէլ) անուանեալ և ետ նմա զիւռհա և զխառան

(1) Աւագ որդի խլիճ ասլանաց եր Քոմեուետաբին Մալք Սալէհ, որ տիրեաց Մելքատինի, Անսարից և կողոնիոց :

(2) Վալահտաբին Եթող եւթն և տան որդին և եթ, և գուստոր մի :

(3) Մալեք Աֆտաւ սուլտանացաւ 'ի Դամասկոս + տիրեւով և Պաղեստինի + Երկրորդն Մալեք—Ազիզ՝ Հեգիպատոս + Երրորդն Մալեք—Դահեր՝ 'ի Հալպ :

և զՄուգիարկին և զՄամուսադ և զԽղճպար,  
և զԲարպաք և զԸաւպաք, և զայս հոգացաւ  
մօտ՝ի կատարած կենաց իւրոց։ Իսկ Մօսլայ  
տէրն<sup>(1)</sup> արար միաբանութիւն ընդ եղբարսն  
իւր ընդ տէրն Շզիրոյ և ընդ տէրն ՈՇրտիւ-  
նայ և ընդ տէրն Իրաղայ և ընդ Մնձարայ,  
և եկն նորօք առնուլ դիսառան։ և Հիւան-  
դացաւ՝ի ճանապարհին և դարձաւ՝ի Ո-  
սլլ, և այլքն ցրուեցան։ Եւ ՈՇրլը Յետլն  
գնաց և էառ զՄծբին և զՄաղա և զՄա-  
պուրն, և այլ ամիրայքն հնաղանդեցան նմա-  
որպէս և եղբօր իւրում Ոալահադնին։ Եւ  
գնաց ՈՇրլը Յետլն ՚ի կողմանս Հայոց ՚ի  
Խլաթ, և ոչ կարաց առնուլ զնա, և դար-  
ձաւ։ Եւ ՚ի նոյն տարւոջ մեռաւ Ծղադինն  
(Ծղղ-էտալին) տէրն Մօսլայ և առ զտեղի  
նորա Նորագին օրդին իւր։

Յայսմ ամի Եւսոն քաջ և անսուանի իշ-  
խանն Հայոց ըմբռնեաց զԲրինձն Ծնտաքոյ  
(Պոէմանտ), և արկ զնա ՚ի չարչարանս՝ փոխա-  
րինել նմա զչարչարանս եղբօր իւրոյ Ուոբի-  
նոյ։ Եւ եկն կոմսն Ծքայոյ Ոիր Հեռի (Հեն-  
քի), մեծաւ աղաչանօք թափեաց զԲրինձն և  
առաքեաց յԾնտաք<sup>(2)</sup>։ Եւ ինքն արիագոյնն  
Եւսոն տիրեաց եւթանասուն և երկու բեր-

(1) Ծղղ-էտալին Մասուտ։ Թռոն Զանգեայ։

(2) Ամբատ։ յեր։ 108։ Միշտ, պատմութիւնն Խառնէլոց։  
Հառ։ Բ։ Գլ։ 9։ յեր։ 178։

դի , եր զոր նախնիքն իւր կալեալ էին և էր զոր ինքն էառ ՚ի Յունաց և ՚ի Թուրքաց : Եւ անկաւ ահ և երկիւղնորա ՚ի վերաց ամենայն ազգաց սահմանակցաց աշխարհին իւրոյ : Եւ ապաւինեցան ՚ի նա որդիքն սուլտանաց . և եկն առ նա ՚ի հնազանդութիւն Մելիքն Աբրամին (Ալպիսթան) որ տիրեր վերագոյն աշխարհացն . և ել մեծն | եւոն և էառ բերդ մի մերձ Կեսարիոյ և ետ նմա :

Խոկ թագաւորն Ասրոյ Մելիք Ազիզն եկն ՚ի Դամասկոս ՚ի վերաց եղբօրն (Ծփտալոյ), և գնաց հօրեղբայրն Մելիք Յետյն առնել խաղաղութիւն ՚ի մէջ նոցա , և արար նենգութիւն մեծ , զի գեղեաց զՄելիք Ազիզն , որ և ընդ հասանելն ՚ի Ասր մեռաւ . և առ զիշտիպտոս ՚ի յինքն և զՄելիք Այլէհն խարեաց թէ՝ « Դնա կացիր խաղաղութեամբ ՚ի հանդարտագոյն վայրան ՚ի Ասմուսատ և ՚ի յիւռհա և ՚ի խառան և յիշաղա , և ես կացից ընդդէմ Փռանգին և այլոց ազգաց : » Եւ հաւանեցաւ նմա և ասէ . « Արից զգանձ հօրիմոյ և գնացից . և դու կալ զԴամասկոս : » Եւ նա ասաց . « Արի գնա , և ես զամենն բառնամ և առ քեզ յղարկեմ : » Եւ ել և գնաց ՚ի յիշաղա և ոչ ընկազան և ոչ յիւռհա և ոչ յայլսն . և գնացեալ ՚ի Ասմուսատ , և զայն ետուն ՚ի ձեռս նորա , զի այնալէս էր պատուիրեալ ծածկաբար : Եւ Մելիք Յետյն

շրջեալ և տեսեալ զոունս գանձուցն Աալուհագնին՝ ագահեցաւ և ոչ ետ . այլ մտեալ ՚ի տուն մի լցեալ մատուտակ , և զայն եւբարձ քասն բեռն և մատնեհարեաց ծածկաբար և առաբեաց առ նու : Եւ յորժամետես (ՈՇԵԼՔ Աալէհ) զիսաբէութիւննե, խոցեցու անմիսիթար և ամաչեաց յոյժ . այլ ոչ եր ձեռնհաս առնել նմա ինչ , և ընկեց զդատաստանն յ՛ստուած որ յամենայնի բաւական է հասուցանել :

Իսկ պարոնն Եւոն որդին Ատեփանէ օր ըստ օրէ երթայր և զօրանայր Աստուծով յաջողեալ և յոմենեցունց փառաւորեալ , և յայնժամ յորժամ տկարացոյց Աստուած շուրջանակի զժշնամիս նորա և ՚ի կըր կործանեաց զամենայն հակառակորդս նորա , տիրեաց նա լիով երկուց Վիլիէից լերամքք և գաշտօք , քաղաքօք և ամրական դվեկօք . և ան քաջութեամք իւրով և զհասարակն Աուրացւոց և մասունս ոչ սակաւս յերկրորդ կապագոկացւոց , յԵրրորդ Հայոց , զոր ու մանկ Աւաջին անուաննեն Հայք . գրաւեաց ընդ իւրով իշխանութեամք և յ՛սորեսուանեաց գաւառաւաց : Եւ ցուցաւ ինքնագլուխ և ճոխ իշխանութեամք , զի ոչ ոք տիրէր ՚ի վերայ նորա . և համբաւ արիութեան նորաթուրացուցանէր զջիլս անօրինաց և պարզէր զերեսս քրիստոնէից և ընդութեամք

և ուրախութեամբ, վասն որոյ փութային պատուել զնա թագիւ, թագաւորն Յունաց վասն պատճառին՝ զի թերեւս հնար լիցի նովաւ յաղթել թուրքացն որ բռնացեալ կալան զիշխանութիւն նորա. իսկ թագաւորն Փռանգաց վասն դաշնաց սիրոյն զորունէին ընդ Հայք ուխտիւք ՚ի հին ժամանակաց. և վասն այսորիկ երկոքին առաքեցին նմա թագ ոսկիսկազմ, և պսակեցին զնա յաղթութեան պսակաւն ըստ վայելման և պատշաճի արժանաւորութեան իւրում (1)։ Եւ այսպէս վերստին նորոգեցաւ թագակալութիւն Արամեան զաւակին, և թագն Հայկազննց և Աննեքերիմանց եղաւ ՚ի գլուխ արժանաժառանգ զարմին । Եւսնի ՚ի ՈԽԵ (645) թուին Հայոց. այր բարի և աղատամիտ և արիսկան և հեղ և մեծահտւատ, որ և բաղմացոյց զարդիւնս աստուածպաշտութեան, ելից վանօրայիւք և անապատաւորօք զաշխարհս իւր, և շինուածօք եկեղեցեաց, ըշմասն ազնիւ և զպարարտութիւն երկրի իւրոյ տալով նոցա և նուիրելով Աստուծոյ արձանագրութեամբ և կտակօք անլուծիւք։ Եր ահագին առ օտարսն և բարեմիտ առ

(1) Ամբառ. յեր. 108—109. — Վահրամ. յեր. 215 — Ամրակոս (յեր. 91) պատմէ հանդերձ պարագայիւք զպայ. մանս որով հաճեցաւ կայսրն Ալամանաց և պասկն Հռովմաց պատուել զլեւոն արբայական թագիւ։

իւրան . ահաւոր առ անիրաւեալսն և ողօրմած առ որբու և այրիս և առ աղքատոս . և հեղ և խոնարհ առ ամենեսեան : Եւ այսպէս զրուատիւթ թագաւորեալ ամս քսան երեք<sup>(1)</sup> հանգեաւ ՚ի Քրիստոս բարի անուամբ և ուղղափառ հաւատող կենցաղաւարեալ . թողլովժառանգ թագաւորութեանն դուստր մի Օ ապէլ անուն , յանձնելով զնա մեծ իշխանին (իր Ատնայ<sup>(2)</sup> սոսկալի երդ մամբ տալ զնա որդւոյ թագաւորին (Անկուաց՝ մկրտելով զնա Հայ դաւանութեամբ , զի դեռ երախայ էր , որոյ նենգել Ատնին<sup>(3)</sup> ըստ բնական ատելութեանն Յօւնաց ընդ ազգիս Հայոց , քանզի Հոռոմ էր ազգաւ , խորհէր ՚ի միտս յինքն առնուլ զիշխանութիւնն . վասն որոյ փութապէս ՚ի խնամոցն Առտուծոյ առնուլ դարժաննն պատուհաս , սպանաւ . ՚ի Հաշիշեացն սակաւ ժամանակս ինչ կալեալ զպայլութիւնն : Եւ յետ նորա տուաւնա որդւոյ բրինձին Անտիոքու Փիլիսպ անուն .

(1) Լեւոն Բ . թագաւորեաց ամս 24 . և ամենայն ամբիշխանութեան նորա եղեւ 34 . աեւեալ յամէ 1185—1219 .

(2) Աիր Ատամ էր պայլ և տէր Պապքասյ , դրմէ տէ Միհրայէլ որպէս և Կիրակոս (յեր . 109) թէ էր ազգաւ Յոյնե սպանեալ ՚ի Հաշիշեացն անց ՚ի տեղի նորա կաստանգիւտ տէր Բարձրերդոյ : Իսկ անուն Աւելիուաց , որով Նշանակի ազգն ունկառացւոց , թուի եթէ սիսաւ իցէ օրինակչաց :

(3) Յօրինակին դնի սիսին , որ յայտնի սիսաւ է փոխանակ դնելու Ատնին ըստ որում եղաք . և է Ատուն պայլն :

որ ասոելու թեամբ գնացը ընդ Հայոց՝ 'ի խը բասս հօր իւրաց խարեալ, և թագաւորեալ ամս երկու՝<sup>(1)</sup> վախճան էառ ՚ի կապանս:

Այլ թերեւս կամք վերին խնամացն տեօրիներ և գարձուցաներ զմարդկօրէն անհաստառութիւնն և զարաբարութիւն ոմանց՝ իրարիս. քանզի զայն գաւաղանն փոքրիկ զոր ետ Վատաւած հայկազանց՝ ՚ի մխիթարութիւն լրգեալ և խոնարհեալ ազգին՝ վախճան բարձրոցեալ թագաւորութիւննոցա, զայն ոչ կամեցաւ տալ՝ ՚ի ձեւան օտար ազգի. վասն որոյ յետ բազում ժխտրմանց և ամբոխից և վիճանց՝ ընտրեցաւ որդին Պարսն Լոստանդեայ ՚ի թագաւորութիւնն, զոր ընտրեալ էր Տէր յորավայնե գեղեցիկ հասակաւ և բարի խորհրդով, մեծահոգի և երկայնամիտ, հեղ և հանդարտ ՚ի տիս մանկութեան. և տուաւնմա յամնւանութիւնն շառաւիղն օրհնութեան ազատուհին Օտպել, անմթերին՝ ՚ի գովութենիկ աստուածապաշտ և երկիւղած ինոչ, ողջախոհ և ցածուն և անզարդասէր և ըսին, լիահաւատ և մեծայօս, Քրիստոնասէր և սրբատէր, ազօթատէր, և ծերունի հանձարով ՚ի տղայութեան հասակի. և լրցաւ բանն Ասպարումնի թէ՝ ՚ի տեառնէ պատշաճի կին տան ո. զի վայելեն նորա ՚ի մի

(1) Վիրակոս զնե ամս շորս, յեր. 109. Խեկ Վարդան զնե համաձայն Միխայելի ամս երկու, յեր. 185.

մարմին կատարիլ 'ի Քրիստոս օրինոք : Վասն որոյ սիրեւաց զնոսա Տէր և Եհան 'ի միջոյ նոցա զմեքենայսն սատանայի , որ զառաջինն հակառակէր ըստ բնական իւրոյ չարութեան նըն . և յաջողեաց նոցա Տէր յամենայնի , և ետ նոցա ուստերո և դատերս <sup>(1)</sup> : Եւ է այժմութիւն Հայոց ՈՂԵ (695) <sup>(2)</sup> :

Այլ որ ինչ 'ի միջոցի աստ եղեն , և զայն ասացուք համառօտ :

Ի Ժամանակս թագաւորութեանն Հայոց | Եւսնի , յորում էր թիւն Հայոց ՈՂԵ (665) և | 'ի տէրութեանն կապագոկացւոց աշխարհին խորով շահ սուլթանին <sup>(3)</sup> և 'ի Ժամանակս ԱՆԴԻՔ Յետլ սուլթանին որ բռնացեալ ունէր զիշգիպտոս և զիշրուսազէմ և զիամառես և զիշագետս Ասորւոց և զիզմթայ իշխանութիւնն , ելին զօրքն Փռանդաց ՔՇքաց հրամանաւ պապուն ՀԱԱմայ , առնուլ 'ի Տաճկոց զատուածտկոխ քաղաքն Արու-

(1) Ավրակսու , յեր . 110 • — Վարդան , յեր . 185—186:

(2) Միւսո թագաւորութիւնն աստանօք աւարտէ զպատմութիւն իւր , օրհնութիւնն մազթելով նորապատէ ամուսնացն թագաւորելոց : Խոկ որ ինչ յետ այսորիկ՝ պատմի հանգերձ կրկնութեամբ 'ի Ժամանակակիցից արանց : Խոկ Հայոց թիւն ՈՂԵ թուի թէ առաջին օրինակողմն իցէ , որում համարի յաւելքալ և որ ինչ զջապելէ և զջեթմայ պատմիք քանզի բանդ պատմութեան Ամիսայելի հասանէ մինչեւ ցառացին ամ թագաւորութեան Լեւսնի թ :

(3) Կայիամ եւստին Քայիսուրու որդի Խիմք-Առլանայ Բա

սաղէմ<sup>(1)</sup>։ զոր լուեալ զհամբաւ ելիցն նոցա ազգքն . . . նաց՝ սրտաբեկեալ լինէին։ իսկ որդի ԱԵլքը Ծետլ սուլոտանին գնացեալ Աշրուսաղէմ քակեաց զսուրբ Ախօն՝ որ կոչի մայր եկեղեցւոյ, և այլ քազում ուխտեր և եկեղեցիք, և զԱրագարեթայ եկեղեցին, և թողին զսուրբ գերեզմանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ զՅարութիւնն և զԴողգոթայն, և զԱէթզահէմի եկեղեցին և զայն ամենայն, և զպարիսապն Աշրուսաղէմի առ հասարակ քակեցին<sup>(2)</sup>։ Եւ հայր նորա ԱԵլք Ծետլն արարեալ ժողով ամենայն զօրաց իւրոց առ ծովուն Տիբերական բանակեալ զուեզի առնոցը։ Եւ լուեալ Հռոմայեցի զօրացն՝ դի-

(1) Յայսմ արշաւանի դտանէր և իշխանն Ամպրոսի Լուսինիան և թագաւորն Աւելպարիոյ Անդրէաս, որոց տեսեալ զանցածող ելու պատերազմին, առաջինն մինչ խորհէր դառնալ յետո՝ մեռաւ անդէն յԱսորիս, և երկրորդն դարձաւ յերկիր թագաւորութեան իւրոց։ Յետ մեկնելոց նոցա հասին՝ ի Պաղեստին այլ զօրք խաչակրաց Հռանտացիք, Պաղպացիք, Խաչալացիք, և մոտին ընդ գրոշու Լէորոլասի դքոին Աւատրիոյ, և անցին անտի նաւուք յարձակել ՚ի վերայ Տիմիաթու, յամի 1217։

(2) Լատ պատմութեան խաչակրաց Մալէք Մոադամ— իսա որդին Մալէք—Ատելսյ յետ տիրելոց Փռանդաց Տիմիաթու, ՚ի գիմել նորա յԵզիսպտոս յօգնութիւն եղլոր իւրոց Մալէք—Քամելսյ, չոգաւ նախ յԵրուսաղէմ և կործանեաց զամուրան նորա և զաշտաբակն ըրբ Աւանէտտին շինեալ էր, բաց յամբոցէն Դաւթի նոյնազէս և զամբոցն որ ՚ի թափօրական վերին և զայլ բերդորայս որ դտանէին ՚ի Պաղեստին։ իսկ զիործանումն եկեղեցեաց ոչ ինչ յիշատակեն։

մեցին գնալ՝ ՚ի վերայ նոցա պատերազմել. և որչափ սօքա մօտենային ՚ի բանակն նոցա, նոքա օթեւանօք մի ընդ կրունկն դարձեալ հեռանային. Հւ յերկարէր այս ՚ի բազում աւուրս, մինչեւ ձանձրացեալ քրիստոնէիցն կամեցան յետս դառնալ երկուցեալք ՚ի խարէութեանց նոցա. և յաղագս անծանօթութեան աշխարհին խորհեցան դառնալ յէքայ, և համակամութեամբ ամենայն զօրագլխացն խորհուրդ առեալ իջին յէգիստոս. և հասեալք ՚ի քաղաքն որ կոչի Տեմիաթ պաշարեցին զնա և ՚ի նեղս արկեալ ընդ յերկար, մինչեւ երրորդ մասն քաղաքին սատակեալ լինէր ՚ի սովոյ և ՚ի տարաժամ մահուսնէ որ անկառ ՚ի նոսա. և ապա առին զքաղաքն և կոտորեցին զմնացեալսն առ հասարակ, և առին յաւարի զմթերս գանձուց նոցա, և լցան առ հասարակ ոսկւով և արծաթով:

Հւ յայսմ ամի մեռաւ Անլիք Յետն. և որդիք նորա Անլիք Քէմն սուլտանն իշտիստոսի և Աշրափն<sup>(1)</sup>, և սուլտանն Դամասկոսի Անուղատամն<sup>(2)</sup>, և այլ եղբարք նոցա

(1) Մալէք—Աշրափ էր եղբայր Մալէք—Քամելայ և սուլտան Արջագետաց. Կիրակոս, յեր. 111.

(2) Անդրանիկն յորդիս Մալէք—Ասելայ, Մալէք—Քէմն (Քամէլ) սուլտանացաւ յԵգիպտոս, երկրորդն Շէրիֆ—Ետափն Մալէք—Մոագամբիաս, զոր պատմիչք մեր Մուղատամ

առ հասարակ արարեալ ժողով բազում և  
անհամար զօրաց : Եւ ՚ի թուին Հայոց  
ուշ (666) մտին յլ;գիպտոս, բայց յերկիւ-  
զի լւալոչ իշխէին պատերազմել ընդ քրիս-  
տոնեայօն . և նոյն իսկ քրիստոնեայքն իբրի-  
առին զՏիմիաթն (1), կամեցան երթալ առ-  
նուլ և զայլքազաքն : Եւ եր ընդ նոսա թա-  
գաւորն Աքայոց Ուժածուանն (2) միւսայն  
Հայոց թագաւորին Եւսնի և Դամփին և  
Ասպիթալն , և այլք բազումք յիւրաքանչիւր  
կողմանց յարելոց ՚ի նոսա . և գնացեալ բազ-  
մութիւն զօրոցն բանակեցան առ ավին Նե-  
ղոս գետոց , ՚ի հարթայատակ դաշտի միում :  
Եւ իմացեալ . . . նացն լուծին զկապս  
ջրաբուխ տեղեացն , և ելեալ ջուրն շրջա-  
պատեաց զզօրսն և Վահմետականքն յարձա-  
կեալք ՚ի վերաց նետաձգութեամբ սկսան

անուանեն , եկաց իշխան Դամասկոսի . և ոյլք յօրդւոց Առ-  
էք—Ատելոյ իշխանացան ՚ի վերաց Բատրայու . Արեգ քա-  
ղաքի (Բատրէք) . Միջազետաց , և այլն :

(1) Տիմիաթ առաւ ՚ի ֆռանգաց յամի 1219 յամսեանն  
այեւմբերի :

(2) Ժան առ Պրիեն , զորմէ իոսի Միխայէլ կոչելով զնա  
Ուժածուան , եր թագաւորն Երուսաղէմի , որ ամուսնացաւ  
ընդ գտներ Ամաւրեայ առ եր ժառանգու հի անկեալ թագա-  
ւորութեանն Երուսաղէմի : Եթող նա զՏիմիաթ ՚ի Մալք—  
Քամէլ դաշնաւորեալ ընդ նմա և առեալ փոխարէն զփայտ  
Խաշին որ կացր առ նոսա ՚ի գերութեան յաւուրց անոի պա-  
տերազմին որ ՚ի Տիբերիա ընդ Սալահատնի , և գարձաւ յետո  
՚ի գտղոմացիդ :

խոցոտել զամենեսեան մինչեւ անյօյս լինելոյ քրիստոնէիցն՝ ի փրկութենէ . տուին զքաղաքն զոր առին , և յանձն առին դառնալ յիւրեանց աշխարհն . և դաշինա եղեալ հաստատութեամբ մնալ ՚ի նոյնն . երդուան և սուլոնայքն նոցա անվեաս պահել զամենեսան : Եւ այսպիսի շփոթո հասեալ զօրացն քրիստոնէից՝ դարձան ՚ի տուն իւրեանց :

Իսկ Ո՞ւմբը Յետին ՚ի վախճանելի իւրում զաւագ որդին դՔէմին կացոց իշխան ՚ի վերայ սյլոցն , և ամենեքեան հնազանդեցան նման , զի էր բարեբարոյ և իմաստուն և առատաձեռն առ ամենեսեան . նոյնպէս և իւր եղբայրն Աշբախին , որք կալան զիշխանութիւն հօրն իւրեանց բազում ժամանակս (1) .

Ի թուին Հայոց ուկէ (667) · Քէքառւզ սուլտաննեն Հոռոմոց , որդի Խոսրով շահ սուլտանին , յաղթող եղեալ քան զհայրն իւր մինի պատճառ շմօրի ընդ թագաւորին Հայոց և եւսն . և բազում զօրս ժողովեալ հասանէ ՚ի Կոկիսն Հայոց , և պաշարէ զամնւր դղեկն որ կոչի Կապան , և բազում աւուրս մարտուցեալ ոչ կարաց առնուլ զնա : Եւ թագաւորին Հայոց և եւսն զիւրոյ աշխարհին զօրքն գումարէր և փութայր ելանել ընդ

(1) Այս Աշբախ որ զկնի մահուան հօրն ախրացաւ Խըլաթոյ , առ ՚ի կնոութիւն զդուստր իւանէի զթամթաւ Վարդան , յեր . 182 . — Աֆրակոս , յեր . 96 .

առաջ նորա, և նորին զօրագլուխն Պարսն Լոս  
տանդին գունդստապլն, որ էր քեռորդի թա-  
գաւորին | Եւսնի, առեալ սակաւ ինչ գունդո-  
վագորացն, յառաջ մատուցեալ ՚ի կիրճս լերան-  
ցըն, և պատահեալ գնդի միում ՚ի զօրացն  
թօւրբաց, և անկեալ ՚ի վերայ՝ զամենե-  
սեան կոտորեաց, և ըմբռնեաց ՚ի նոցանե-  
արս գլխաւորս՝ որք ազդեցին նմա գրուն գա-  
լուստ զօրացն սուլտանին, և աղաչէին դառ-  
նալ և բաւական համարել զյաղթութիւնն  
զոր արար: | Հւ նորա ոչ անսացեալ բանիցն  
նոցա և առաւել եւս յամառեալ և քաջա-  
լերեալ զզօրսն հանդիսպի ծանր զօրու կուռ  
վառելօք զինու, և ՚ի պարտութիւն մատնի  
գունդստապլն և զօրքն որ ընդ իւր, և րմբըռ-  
նեցան ինքն և պարսն Լոստանդին լամբռուն-  
ցին և Լեռոսակն (1) և այլ մեծամեծ իշխանք,  
թող զօրս կոտորեցան ՚ի նմին տեղւոջ իբրեւ  
հազար այր պատերազմող, և ըմբռնեալ զնո-  
սա դարձաւ ՚ի Լեռարիա: | Խոկ թագաւորն  
| Եւսն իբրեւ լուաւ զկոտորումն զօրացն և  
զըմբռնումն իշխանացն, առեալ զզօրս իւր ար-  
շաւէր ՚ի միւս այլ կողմն աշխարհին Հոռո-  
մոց, և բերէր աւար անթիւ և կուտէր իբ-  
րեւ զաւաղ առ ափն ծովու. և յետ սակաւ

(1) Կեռոսակն, թուի ասել Աիու Սահակ, էր իշխան և տէր  
Մաղվաց և Աիկց բերդից, որ առաջիկայ դտաւ և հանդիսի  
թագադրութեան Լեւսնի: Ամբատ, յեր. 112:

աւուրց արարեալ սէր ընդ միմեանս , ետ  
թագաւորն Հայոց | Եւոն զբերդն | լուս ,  
և թափեաց զիշխաննս որ ըմբռնեալ էին , և  
խոստացաւ տալ Հոռոմոց սուլտանին յա-  
մենայն ամի երեք հարիւր այր 'ի ծառայու-  
թիւն և հնաղանդեցաւ նմա . և այս լիներ 'ի  
ծերութենէ և յանկարութենէ մարմնոյն , և  
իշխանքն ոչ էին ընդ նմա ուղիղ<sup>(1)</sup> :

Եւ 'ի սոյն իսկ յայսմ ամի արարեալ ժո-  
ղով սուլտանն Քէքառուզ՝ զօրաց , առեալ և  
'ի թագաւորէն Հայոց օգնականութիւն ,

(1) Ամբատ և Վահրամ փոքր մի տարբեր պատմեն զայ-  
մանէ : Ամբատ (յեր • 117) , առէ Ազգետուին Քայքայուզ  
սուլտանն Իկրիսիոյ որ 'ի Սէլուկեանց , 'ի ծերութեան Լեւո-  
նի կամելով քինախնդիր լինել վասն հանելց նորա յիւրմէ  
զԱրակլիա և զԼարենդաքաքաղաքու էկն և պաշարեաց զԿապան  
և Լեւոն առաքեաց 'ի վերոյ նորա զպարոն կոստանդին  
սովարապեան իւր և զորաքն Ատան բազմութեամբ զօրաց .  
որք անխորհըդաբար 'ի մարտ մտեալ գերի անկանին կոս-  
տանդին սովարապեան և կեռսակն և այլք յիշխանաց և . 'ի  
հեծելազօրաց . և բաղրամք 'ի զօրացն խորտակին : Իսկ Քայ-  
քայուզ առեալ զգերիսն գառնայ յԻկրիսիոն , և պահէ զնո-  
սա 'ի բանտի ամ մի և ամիսս չորս . մինչեւ գթացեալ 'ի նո-  
սու Լեւոն , տայ սուլտանին զԼուրխայ բերդ և զգետն Խ-  
ոսաւրիոյ և զայլ տեղիս և զիշխաննս իւր ազատէ 'ի գերու-  
թենէ : Եւ Վահրամ առէ Եթէ տեսեալ Լեւոնի զպարտու-  
թիւն զօրաց իւրոց : ոչ ինչ ընդ այն ախրեալ , գիմէ մնա-  
ցեալ զօրօքն իւրովք յերկիրն սուլտանին : և առպատակեալ  
բաղում աւարաւ և գերութեամբ գառնայ : Լուեալ սուլ-  
տանին զաւեր աշխարհին իւրոյ , երդումն տայ Լեւոնի 'ի  
խաղաղութեան կալ ընդ նմա : և զիշխաննս Հայոց յետո  
գարձուցանէ : (Յեր • 216) :

գայ յերկիլին Հալսպայ ՚ի Ուապան, և առ ըզնա . և անտի գնացեալ ՚ի Ծլպաշար, առնու և զթլպաշար և զինթափ : Եւ կամեցաւ գնալ ՚ի վերայ Հալսպայ . և երեք ամաւ յառաջ սուլտանն Հալսպայ վախճանեալ էր՝ Անլիք Տահրն, և որդի նորա Անլիք Ազիզն մանուկ գոլով ամաց հնգից՝ ունելով զիշխանութիւնն : Եւ էր նորա աթապակ մի յօյժիմաստուն, առաքեաց առ թագաւորն Հայոց Եւոն, և խնդրեաց ՚ի նմանէ օգնական լինել, թերեւս զերծանկցին հնարիւք նորա ՚ի հասեալ բարկութենէն . և խոստացան նըմա տալ բաղում գանձս սոկւոյ : Եւ թագաւորն Հայոց այնուհետեւ ՚ի հոգս անկեալ իւրով կորովամիտ իմաստութեամբն, առաքեաց զանխլպար առ սուլտանն Հոռոմոց մինչ ՚ի սահմանս Ծլպաշարայ էր, գրեալ առնա այսպիսի օրինակաւ . “ Թագաւոր Հայոց Եւոն, եզրօր մերոյ Քէքառուղ սուլտանիդ՝ ՚ի տէր խնդալ : Յուշ լիցի քեզ իբրեւ սիրելոյ մերում, զի իմացեալ հաստատեցաք եթէ քառասուն ամիրայ ՚ի զօրաց քոց դաշնս եղեալ են տալ զքեզ ՚ի ձեռն Աշրարափուն . և դու այսուհետեւ զօդուտ անձինքո խորհեաց, զի մի անկցիս ՚ի ձեռս ատելեաց քոց . ողջլիք : ” Եւ իբրեւ ընթերցան առաջի նորա զպատճէն նամակին, խակոյն զարհուրեալ ահիւ մեծաւ, հրաման

տայր զօրացն դառնալ անդրէն փութանակի. և ինքն յառաջ անցեալ աճապարէր գնալ. Օսր իմացեալ Աշբափուն և զհետ մտեալ արար փախստական . և ինքն դարձեալ էառ զիւապան . և զիծլպաշար և դարձոց ՚ի Հալպ. և այսպիսի օրինակաւ այնքան մեծ սուլտանն շվոթեալ ՚ի պարտութիւն մատնէր . և հասեալ ՚ի Կեսարիա՝ զամփրայսն զայնոսիկ զբաւասուն խաչել հրամացէր :

Եւ յայսմ ամի եկն գեղին մարտի, և ծածկեաց զերինս և զդաշտս, և եկեր զամենայն ծառ սահմանաց մերոց մինչեւ իսպառ զերիս և զըրոս ամս :

| ԱԿԸ (668) թուականին Հայոց | Եւսն թագաւորեալ ամս քսան և երեք մեռաւ, և յանձն արարեալ զիշխանութիւնն աշխարհին և զդուստր իւր զ Օ ապէլն ՚ի Այր Այտանն, որ էր ազգաւ Հոռոմ, և զինի սուզ ժամանակի սպանաւ ՚ի Հաշիշեացն, որպէս վերագոյնն գրեցաւ. և առնու զհոգաբարձութիւնն աշխարհին պարոն Կոստանդին, որ էր քեռորդին թագաւորին Հայոց | Եւսնի :

Յայսմ ժամանակի ոմանք յիշխանացն Հայոց ապօտամբեալք եղեն ընդ Այօրինայ բրինձին Անտիոքու (1), կամելով զնա թագա-

(1) Առուբէն բրինձ (իշխան) Ենաքուքու՝ էր որդի Պալտայ (Պատուէն) որդւց զիւմնոնդայ (Պոհէւմնոնդ) կոմսին Անտիոքաց : Եւ էր ծնեալ Առուբէն ՚ի հայազգի մօրէ Աղլատա (Ա-

շորեցուցանել, յորոց էր Շօսլին մարաջախտ և կեւսն կապնուն տէրն և կեռասակն, և ոյլք . որք առեալ զբրինձն լիորէն և մտին ՚ի Տարսուս և ամրացան : Խոկ պարոն կոստանդին և տէր Հյովհաննէս կաթուղիկոսն գնացին զօրօք և պաշտեցին զնոստ սուզինչ ժամանակս, և յաղթեցին զասկստամբոն որ և ամենելքեան բանտարգեալք եղեալ վախճանեցան ՚ի կապանս, և հանդարտեցաւ երկիրն<sup>(1)</sup> : Հայոց տէր Հյովհաննէս կաթողիկոսն յառաջքան զառնուլ քաղաքին վախճանեցաւ ՚ի թուին Հայոց ՌԱՅ (669), և ապա միաբանութեամբ ամենայն իշխանացն և եպիսկոպոսացն ընտրեցաւ յամենեցունց տէր կոստանդին (2) որ էր Եպիսկոպոս Վիթօյն<sup>(2)</sup>.

լիս ) անուն, գուստը Ռուբենի է, զոր տուեալ էր Պալտինոյ այսու գաշամբ, զի Պետունդ հայր նորա զինի վախճանին իւրօյ զնա ինքն զՊալտին կարգեոցէ յաջորդ փոխանակ երեց եզրօրն Ֆիլիպինոր ամնւանացաւ յետոյ ընդ Զապելի գոտեր Լեւանի, և իշխանոց Հայոց ամս երկուու : զրէ Վահրամը ըստ մասոց Միհայելիւ եթէ Ռուբեն բազում իշխանս յինքն յանդուցեալ՝ դայ և առնու նախ զՏարսոն, և յառաջն մինչեւ ՚ի Մոխ : և կոստանդին զօրակար գիմեալ զօրօք ՚ի վերայ նորաւ զբռամբ ածէ զՌուբեն ՚ի Տարսոն քաղաքի և զՀամախոհս իւր և արկոնէ վեստ ՚ի բանտ, ուր և մեռանին : (Յեր, 217—218):

(1) Այս դեպ կարեւոր ոչ յիշատակի ՚ի գիրս պատմութեան Միքայել վարդապետի Չամչեան, նոյնպէս և ոչ գործք միաբայրուզ սուելստանին որ նախ քան զմահն Լեւանի :

(2) Կոստանդին կաթողիկոս էր ՚ի Բարձրերգաց, մեհալ ՚ի վանո Մաւրիանաց :

և եղաւ յաթոռ հայրապետութեանն առաջոց ՚ի թուին ոչ (670). և եղեւ ուրախութիւն ամենեցուն յազագս առաքինի և բարեբարոյ և խաղաղասէր մտացն , որով ամենեցուն հռչակաւոր լինէր : Խոկ իշխանացն Հայոց բազում՝ անմիաբանութիւն լինէր վասն դնելոյ թագաւոր , զի ոչ հաւանէին միմեանց , և ապա ՚ի մի կամս եկեալ ընտրեցին զրդին բրինձին Վնտիոքու թագաւորեցուցանել , զոր և արարին խոկ , և ետուն զգուստը թագաւորին Հայոց Եւոնի նմա ՚ի կնութիւն . և թագաւորեցուցին ՚ի վերայ Հայոց ՚ի թուին Հայոց ոչք (672) , և անուանեցին զնա Փիլիպ թագաւոր :

՚ թուին Հայոց ոչք (672) եղեւ երաշտ սաստիկ և յերկարեաց յոյժ , մինչ զի ՚ի ՚Նեկտեմբերի հասարակին նշենիք ծաղկեալ եղեն ՚ի ջերմութենէ օդոյն , և անպատճելի վշտօք տառապէր երկիր զերիս և զսորս ամս : Յայսմ ժամանակի մեռաւ սուրուանն ՚Քէքառուզն , և առնու զսուլտանութիւնն կրուէր եղբայր նորա Վլադինն (1) :

՚ թուին Հայոց ոչք (673) Փիլիպ թագաւորն իտպրով հօր իւրոյ (Պեմունդայ) կամեցաւ ըմբռնել զերկուս մեծամեծ իշխանան , զպարոն Կոստանդին որ էր թագաւ-

(1) Ալու—Ետոտին ՚Քէքառուզ :

ւորահայրն և զպարսն կրտսանդին | ամբը ըստ  
նին տէրն (1) . զոր իմացեալ յառաջեաց պա-  
րոն կրտսանդին (թագաւորահայրն), և ըմ-  
բռնեաց զնա ՚ի ծմիլն Համոնոյ, և տարաւ  
՚ի հարձրբերդ և անդ վախճանեցաւ (2) : Խակ  
հայր նորա բրինձն Վնտիօքու լուեալ տըրտ-  
մեցաւ յոյժ . և զի անկարանայր առնուլը զ-  
վրէժ որդւոյն, առաքէ առ Ալադին սուլ-  
տանն Հոռոմոց, որց եկեալ էառ զՃանձին  
և զլանչին, և զՄազոտ խաչն (3), և արար  
վիաս բաղում ՚ի լեռնակողմանս . և բրինձն  
ժողովեալ զօրս եմուտ յերկիրն, եկին ընդ  
սահմանսն որ կոչի Ճկեր, և եհաս մինչեւ  
՚ի ծմիլն Համոնոյ, և ոչ ինչ օդտեալ դար-  
ձաւ ամօթով յՎնտաք :

| Թուին Հայոց ՌէԵ (675) միաբանու-  
թեամբ ամենայն իշխանացն տուին զՕա-  
պէլ դուստր | Եւսն թագաւորին ՚ի կիու-  
թիւն Հեթմոյ որդւոյ պարոն կրտսանդեայ,  
և թագաւորեցուցին ՚ի վերայ Հայոց, որ էր  
տղայ հասակաւ . և հայր նորա կարգաւորէր  
զթագաւորութիւնն, որ և արար սէր ընդ

(1) Այս կրտսանդին էր որդի պարոն Հեթմոյ՝ որդւոյ  
ՕՇի, որք էին տեաբք անառիկ ամրոցին Լամբրոնի, վասն  
որց և ապրտամբք էին միշտ աղքային իշխանութեան, զորս  
Լեւոն Բ նուաճեաց՝ առեալ ՚ի նոցանէ զամբոցն:

(2) Սմբատ, յեր, 121 :

(3) Ճանձին և Խանչին Մազոտ խաչ էին առանձին ամրոցք,  
որոց իշխէին Պարոնք :

Ալագին սուլտանն և հնազանդեցաւ նմա՝  
տալով նմա յամենայն ամի երեք հարիւր այր  
՚ի ծառայութիւն (1) :

Հայսմ ժամանակի լուաք զհամբաւ եր-  
կուց ազգաց անաստուածից և գաղանաբա-  
րսից, որոց անուանիքն խորազմ և Տաթար,  
ուրբ իրեւ հուր ընդ խոիւ ընթացեալ ա-  
պականեցին զերկիր ուր և հասան, և ոչ ոք  
ընդդիմացաւ նոցա, և սարսեցին ՚ի համբա-  
ւոյ նոցա ամենայն որ ՚ի ներբոյ երկնից :  
Այլ սկիզբն ելից նոցա ՚ի բուն աշխարհէն  
իւրեանց ՚ի վազուց ժամանակոց է, և զբա-  
զում աշխարհս և զազդս և զմթագաւորու-  
թիւնս աւերեալ և քանդեալ հասին յաշ-  
խարհն արեւելից :

Եւ յայսմ ժամանակի թագաւորէր Վրաց  
դուստր Յամարին իւռուզուքան, և էր ա-  
թազակ նորա իւանէ եղբայրն Օքքարիայի,  
որ էին ազգաւ Հայք, և ՚ի հրապուրանաց  
Յամարին Վրացի եղեւ իւանէ, և ՚ի հա-  
կառակս գառնայր կրօնից Հայոց (2): Եւ յայ-  
սմ ժամանակի ՚ի գաւառն Իձնոյ եղեւ նը-  
շան ինչ, զի կրօնաւոր մի սուրբ և ընտրեալ  
վախճանեալ, Հայ ազգաւ (3), որոյ գերեզմա-

(1) Սմբատ ասէ . թէ յանձն առ պարոն Կոստանդին հայր  
նորա տալ ամ յամէ չորեքհարիւր հեծեալ:

(2) Կիրակոս . յեր . 96 :

(3) Վարդան (յեր . 188), ասէ թէ էր երեց Պարկեշտ

նըն երկնաւոր լուսովին վկայեցաւ և փառաւ-  
որեցաւ, որ ամենեքեան տեսին. և Ել համ-  
բաւ նորա լնդ ամենայն երկիրն : Խակ Խւա-  
նէի նախանձ շարժեալ ամենայն Վ ըացեօքն,  
նախատէին և թշնամնէին. և յետոյ զսկերս  
սուրբ կրօնաւորին հրամայէին այրել հրով,  
և ՚ի տեղի պատուական ոսկերացն սատա-  
կեալ շուն թաղել : Եւ եպիսկոպոսն Բջնոյ  
տէր Յովհաննէս քաղում քանիւք յանդիմա-  
նէր զանաստուածն Խւանէ . իսկ նա սպառ-  
նայր կամ դարձուցանել ՚ի վրացութիւն զա-  
մենայն Հայս, և կամ հանել յաշխարհէն :

Եւ մինչ յայսոսիկ էին, եհաս համբաւ  
խորազմին (1), և նոքա փութով ժողովեալ  
զօրս կամէին ելանել ընդդէմ նոցա ՚ի դաշ-  
տամէջն Պառնի քաղաքոյ (2), զոր շինեաց  
մեծ արքայն Հայոց Տրդատ, բերդ և սարա-  
ւոյթ՝ ՚ի մեծամեծ վիմաց թագաւորութեան  
իւրց, որ կայ անխախտելի մինչեւ ցայսօր :

անուն, յորոյ գերեզմանին վերայ կտռուցաւ յետոյ եկեղեցին

(1) Խորազմիա է աշխարհ ՚ի հիւսիսոյ խորասանու, յորոյ  
անուն և բնակիչքն կոչին Խորազմիք . կամ խորազմացիք :  
Զայսու ժամանակաւ տիրեր այսմ երկրի Առհամմէտ խո-  
րազմշահ հայր Զալալաղնի, որ և Շելալէտին, որ կան-  
գնեաց զթագաւորութիւնն խորազմեաց :

(2) Պառնի քաղաք շինեցաւ նախ ՚ի գեղամայ նահապե-  
տէն և անուանեցաւ գեղամի, յետոյ նորոգեալ ՚ի թռուանէ  
նորին գառնիկ անուն՝ կոչեցաւ գառնի : Մովիւս խորե-  
նացի : Ա . 12 : Խակ Տրդատ շինեաց անդ տուն հովանոց  
զարմանաշն վասն քեռ իւրց խորովիգիսացոյ Անդ, Բ. 87 :

իսկ ամբարիչոն իւանէ ամենայն զօրօքն վրաց գնաց և իջաւ ՚ի լեառն Կառնոյ, որ կոչի Աղուղերմն. և ապա խորհեցան միաբան առաքել զմեծ իշխանն քաջ և անուանի զիւանէ զեղքայր Շալուային<sup>(1)</sup> փոքր ինչ զօրօք ընդառաջ Խորազմին. որոյ հասեալ ՚ի գաշտն Կառնոյ որ կայր առաջի իւրեանց հարիւր մզնօք ՚ի զատէ. ապա ընդդէմ ելին անօրէն Խորազմիքն, և սկսան պատերազմել ընդ նմա. և յորժամ խառնեցան ՚ի միմեանս իւանէ եղքայր Շալուային<sup>(2)</sup> և Խորազմիքն, յայնժամ առաքեաց զմի ՚ի զօրաց իւրոց առմեծ զօրհեծելուն դալ փութանակի յօդնութիւն նմա. և նա ՚ի գնամըն ձայնէր սրպէս սովորութիւն է, թէ՝ շաւտով հասիք։ Եւ ձայնն ձիաւորին ոմանց լսելի լինէր թէ՝ փախիք և մի գայք, զի չենք կարող դիմանալ սոցա. և ոմանց լսիւր թէ՝ փութանակի հասիք, կարող ենք յաղթել։ Եւ մինչ ՚ի յայս էին.

(1) Իւանէ և եղքայր իւր Շալէ էին իշխանք առազք Վրաց։

(2) Կիրակոս որ զայս պատերազմ պատմէ. (յեր. 151) առէ զայսր իւանեաց, եթէ ուխտ եգեալ էր ընդ թագաւորին վրաց, զի թէ յաղթեացեն խորազմեայց, զամենացն Հայո որ ընդ իշխանութեամբ իւրեանց կային, դարձուացեն բռնի ՚ի կրօնս Վրաց։ Այլ ընդ հակառակն զօրք նոցա անկեալ ՚ի գերութիւնն բռնաբար թթվատեցան ՚ի խորազմեայց։ Եւ եղեւ այս ըստ Կիրակոսի ՚ի թուին Հայոց ՈՂԴԻ. այն է 1225.

փախեաւ աթաքակն իւանէ անկանիլ յա-  
մուրս երկրի իւրոյ, և բաղմութիւն զօրացն  
փախստեամբ անկանէին ՚ի գիւղաքաղաքն  
՚Դառնի, որ շինեալէ ՚ի վերայ բարձր քա-  
րախրամի, և գետ յորդ անցանի ընդ տակ  
խրամին : Եւ յորժամ ՚ի փախստւսո դարձան  
անկանիլ յամուրս տեղեացն, նոյն ժամէն  
մըրիկ փոշւոյ մթացոց զաչս փախստցելոցն,  
և առ հասարակ լցան ընդ բարձր և ընդ յոյժ  
ահագին խրամն ՚Դառնոյ ՚ի գետն յորձա-  
նուտ : Եւ խորազմիքն յետոյ հասեալ զմնա-  
ցեալն սրոյ մատնէին, և աստցին թէ՛ ալամ(1)  
վրացւոյն հրով այրեցաւ, նշանակեալ թէ՛  
աստուածային է բարկութիւնն : Իսկ զքաջ  
իշխանն Շալէ ըմբռնեցին կենդանւոյն, և  
տարան առ սուլտանն իւրեանց : Եւ այսպիսի  
ահագին վրէժս էաւ Վատուած յամբարտա-  
ւան և ՚ի կենցաղասէր ազգէն Վրաց, վասն  
անարդելոյ նոցա զհաւասոս Հայոց :

Իսկ Պարսիկքն որ ՚ի ՚Դւին քաղաք, լու-  
եալ զպարտութիւն Վրացւոյն, ըմբռնեցին  
զգլիսաւորս քաղաքին և սպանին, և առա-  
սուր եղեալ կոտորեցին զամենայն քրիստո-  
նեայսն որ ՚ի քաղաքին : Եւ զայսոսիկ լու-  
եալ քաջ և անուանի իշխանն Հայոց որդին  
մեծին Վասակայ՝ թոռն Հաղթակայ, Պռօշ

(1) Այս է որոշ Սահման :

անուն, և առեալ զզօրս իւր գնայ ՚ի ՚Վը-  
ւին, և դտեալ պատճառս բանի մոէ ՚ի քաղա-  
քըն սիրոց պատճառաւ, և զուգէ սէր խա-  
բէութեամբ, և կոչէ զամենայն մեծամեծսն  
որ ՚ի նմա. և ՚ի սիրելն զնոսա՝ յանկարծակի  
յիշէ զկոտորումն քրիստոնէիցն թէ զինչ  
պատճառաւ արտրիք. և առաջ հրամայեալ  
զօրացն իւրոց, առ ժամայն սուր ՚ի վերայ  
եղեալ կոտորեցին առ հասարակ, և ինքն  
դարձաւ խաղաղութեամբ ՚ի տուն իւր :

Հայսմ ժամանակի եկին խորազմիքն և  
պաշարեցին զմեծ քաղաքն Վրաց զՏփխիս.  
և Պարսիկքն որ կային ՚ի քաղաքին, ետուն բգ-  
քաղաքն ՚ի ձեռս խորազմեացն. և խորազմիքն  
խոստացան թողուլ զՊարսիկսն խաղաղու-  
թեամբ ստացուածօք իւրեանց: Եւ ապա ա-  
ռեալ զքաղաքն կոտորեցին զամենայն քրիս-  
տոնէայն որ ՚ի նմա, նոյնպէս և զՊհուտսն  
և զամենայն ազգ բաց ՚ի Պարսիցն (1). և ա-  
րարեալ ընդ ձեռամբ իւրեանց զքաղաքն  
գնացին: Եւ ՚ի գալն գառնանային ժամա-  
նակին, եկն թագաւորն Վրաց ՚ի Տփխիս,  
և կոտորեաց զՊարսիկսն որ ՚ի նմա. և մը  
նաց քաղաքն աւեր ՚ի մարդոց և յանասնոց:  
Հայսմ ամի աստղ մի գիսաւոր երեւեցաւ  
յերկինս, և անյայտ եղեւ:

Ի թուին Հայոց Ուհե (677) . Ըլամանաց  
թագաւորն Անբրուրն<sup>(1)</sup> եւ բազում զօրօք  
՚ի կիսպատճեաց սուրբ տեղեացն : Իսկ Փրերք  
Դամբը լունա<sup>(2)</sup> ռաքեցին ՚ի Քէմն, որ էր սուլ  
տան Անրայ, գալ նմա զօրօք, որպէս զի տա-  
ցեն զԱնբրուրն ՚ի ձեռս նորաւ : Իսկ Քէմն  
առեալ զթուխտ Փրերացն եւ յղեաց առ Ան-  
բրուրն, և Եցցց նմա զնենգութիւն աղգին  
իւրայ . և ետ սիրով զԱնբրուսաղէմ յԱնբրու-  
րըն . և հաստատեցին ընդ միմեանս դաշն և  
ուխտ սիրոյ յաւիտեան : Եւ Անբրուրն ա-  
ռեալ զՎերեղմանն<sup>(3)</sup> ետ ՚ի Ջռանգն, և հա-  
նին զՏաճիկըն : Եւ ինքն Անբրուրն գնաց  
յաշխարհն իւր . և յայնմհետէ սպառնացր  
Դանբը լուն քակեւ զտունս նոցա որ յայնկոյս  
ծովուն :

(1) Աւյն է կայորն (Ամբրուր . Empereur) Փրետերիկոս  
Բ . որդին Հենրիկոսի Զ :

(2) Դանբը վիրերք՝ Են Եղբարքն Տաճարականաց կար-  
գի, որք մզէին և պատերազմ ընդդէմ Ալաղեաց . և զօ-  
րաւորք էին յայնժամ բանիւ և մեծութեամբք :

(3) Ոչ միայն Գերեղմանն սուրբ . այլ և բօվանդակ քաղոքն  
Երուսաղէմ տուաւ Փրետերիկոսի ՚ի սուլտանէն հանգերձ  
սպայմանաւ և գաշամբ սիրոյ տասն ամաց և վեց աման : Իսկ  
կայորն պատկեալ անդ առաջի Գերեղմանին թագաւոր Ե-  
րուսաղէմի՝ առանց Եկեղեցական արարողութեան : Քանզի  
Նղովեալ էր ՚ի սրապէն, թողեալ և զՏաճարն սուրբ Յարու-  
թեան և զբաղաբն՝ չոգաւ . ՚ի Պտղոմայիդ : Տես ՚ի Միջուն  
Պատմ . իտակիւայ . Հայ . գ . Գլ . 15 :

Ի թուին Հայոց ռէը (678), ՚Բէմին էառ  
զԴամասկոս ՚ի Վելլը Նասրէն, և ետ եղ  
բօր իւրում Ծըսափուն, և տայ նմա տեղիք  
բնակութեան զՇ աւպաք և զԲարաք և ըդ  
Ումիւղ և այլքազում տեղիս . իսկ զԱնձու-  
գեաս Ծոորւոց զԱւոհա և զԽառան և զԱր-  
բուճ, որ էր եղբօրն իւրց Ծըսափուն, յին-  
քըն առնու ՚Բէմին :

Յիշատակարան հին գրչագրին

Ի թուականին Հայոց ռէը, կատարե-  
ցաւ աշխարհապատում պատմութիւնս Տէր  
Աիխայելի սուրբ պատրիարքին Ծոորւոց,  
զօր ստուդիւ գրեաց ծայրաքաղ առնելով  
յաստուածաստեղծ մարդոյն Ծգամայ . սկիզ-  
բըն առնելով ասաց մի ըստ միոջէ զկարգ և  
զծնունդ և զշինութիւն արարածոց զօր նախ  
քան զջրհեղեղն աշխարհակործան, և զօր  
յետոյ ջրհեղեղին յորդւոցն Նոյի շինել և  
աճել ըստ հրամանի և ուխախին ամենակալին  
Ծոտուծոյ՝ որ ետ ընդ նոսա յետ ջրհեղե-  
ղին : Եւ ՚ի վերայ սյսորիկ զկարգ և զթիւ  
թագաւորացն Հոռոմոց և Պարսից . և զինի  
Պարսից թագաւորութեանն վՃարելոյ՝ սկիզ-

բըն առնէ թագաւորութեանն Արաբկաց  
որ են Տաճիկք . և ի կատարածի սոցա զի՞տուր-  
քաց սուլտանութիւնն և զոխելն բազում  
աշխարհաց և գաւառաց , զոր գեռ այժմն  
ունին բռնացեալք ընդդէմ բազում ազգաց  
և ազանց : Որ են թիւք ամացն յելլցն Կդա-  
մայ մինչեւ ՚ի ժամանակ կատարելոյ գրոցս  
՚ի ձեռն Վիխայելի Ասորւոց պատրիարքի ,  
ամք վեց հաղոր չորս հարիւր և երեսուն .  
և այժմ է թիւս Հայոց ՁԻԲ , որ գրեցաւ  
գիրքս ձեռամք տառապեալ Վրիգորոյ . զոր  
կամաւքն Աստուծոյ գրեսցուք և մեք զպա-  
կասութիւնն սորա ամաց քառասուն և չո-  
րից :

---

Ն Ո Ր Ի Ն

ՏԵՍՈՒՆ ՄԻԼԱՅԵԼԻ ԱԾՈՐԻՈՅ

Ց Ա Ղ Ա Գ Ա

Ք Ա Հ Ա Ն Ա Յ Ո Ւ Ի Թ Ե Ա Ն



Ն Ա Ր Ի Ն

ՏԵ. ՄԻԽԱՅԵԼԻ ՊԱՏՐԻԱՐքԻ  
Ա.ՍՈՐԻՈՑ

Յաղագս քահանայութեան թէ ուստի սկսանի և,  
ուր կատարի, և թէ զինչ է քահանայ-  
ութիւնն :

Ակիջին քահանայութեան լուսուած է,  
անսկզբնաբար և տիրապէս ունելով զնա և  
ոչ յումեքէ առեալ, և ոչ զոք ունելով վե-  
րագոյն, որում քահանայացէ և մասաւու-  
րեացէ . և վասն այնորիկ միայն բաշխելով և  
պարգեւելով է քահանայութիւն, և ոչ է  
ընդ հարկիւ : Իսկ արդ համարձակելի է մեզ  
՚ի ծանօթութենէ գրոց իշխել և ասել զա-  
մենասուրբն Հայր քահանայել զանհասական  
ծնունդն Արդւոյ, և ՚ի բղխումն Հոգւոյն  
անթարգմանաբար և անսկզբնապէս, անժա-  
մանակ, անմիջնորդ, անհատապէս և անախ-  
տաբար, յեռութենէ և ՚ի բնութենէ իւրմէ .  
անձինք և գէմք կատարեալք, և ՚ի նոյն բը-  
նութեան և յաստուածութեան և ՚ի մի զօ-

բութեան և 'ի համագոյութեան և 'ի համակամութեան կացեալ և մնացեալ, անբաժանապէս բաժանեալը և անխառնաքար միաւորեալը։ Այս է առաջին և անարարական և 'ի բնութենէ քահանայութիւն, անվերագոյն և աննուաստական, հաւասարապէս և միափառ, որ ոչ ասի անդ գործ և սպասաւորութիւն 'ի հօրէ քահանայութիւն։

Իսկ երկրորդ քահանայագործութիւնը կը լրանի 'ի յԱրդւոյ և 'ի հոգւոյ առ զօրս հրանիւթս հրեշտակաց։ զի նախ իմանայր զհրեշտակական զօրութիւնն և զերկնայինն սրն, և իմաստըն գործ լինէին բանիւ կատարեալ և հոգւով լցեալ ըստ 'Դաւթայ։ Ահանիւ Տեառն երկինք հաստատեցան, և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնն ոցա։ Աւ թէ զինչ է աստիճանն նոցա, նոյն 'ի 'Դաւթայ ուսանիմք։ Ա Երար, ասէ, զհրեշտակս իւր հոգիս, և զարկաւագունս իւր 'ի հուր կիզելոյ։ Ա Աք են հզօր զօրութեամք, որք սարկաւագեն Աստուծոյ վասուարելով զիս։ և առաքին 'ի սպասաւորութիւն այնոցիկ որ ժառանգելոց են զիբրեկութիւնն, և զետաստագոյնն դայեկաբար մնուցանեն իմանալի կերակրօք Աստուծոյ քահանայացեալը և քահանայագործեալը։ և միշտ ըստ կարգի իմաստից հաղորդեալը 'ի նմանն, յերիս երակս բաժանեալը, առա-

ջին և երկրորդ և երրորդ , ՚ի փառս երեքերեցւեան Ըստուածութեանն . Ըռաջինիքն ՚ի նմանէ հաղորդեալք , և երկրորդն յառաջնոյն , և երրորդն ՚ի միջնոյն . և ՚ի նոցունց առմարդիկի իջեալ , և աստ կատարեալ և ընդարձակեալ , զի այլ բանական ՚ի վայր քան զմեղ ոչ գոյ . և Ըդամ զնոցա բարբառն լըւաւ յԱստուծոյ առ նա բերեալ , և անուանեաց զնոսա հրեշտակս , որք են պատգամաւորք . այլ անուն բնութեան նոցա և թիւ համարոյ նոցա և ընդարձակութիւն խմաստից նոցա և փառք էութեան նոցա սնդիտելի և անհաս մնաց ՚ի մէնջ վարագուբառածածկեալք :

Ըրդ քահանայութիւնն կարգ է բարձր և աստիճան տուրք , որով բարձրանայ առ Ըստուած ըստ կարի և լինի վերագոյն քան զայնոսիկ որոց քահանայէ . և միջնորդութիւն է ընդ վերնադոյնն և ընդ խոնարհականս : Եւ ոչ է կարելի քահանայութիւն ումեք արարածականի անձամբ առնուլ զնա ըստ Ըռաքելոյ , այլ սլարդեւ և շնորհ է աստուածային և երկնաւոր , տալով և ոչ առնլով , բայց ՚ի Արդւոյ և ՚ի Հոգւոյ , որ անսկզբնաբար և բնաւորաբար ընդ ծնունդն անասական և ընդ ելումն անխմացական խմանամք զքահանայութիւն նոցա սեպհականապէս : Իսկ արարածականքս ՚ի սլարդեւացն Ըստուծոյ

կոչին և առնուն . որ և միանայ ընդ արժանաւ  
ւորսն շնօրհն , կարգն և պարզեւն տէրու-  
նական , որպէս հուր յերկաթ և լոյս ընդ օդ ,  
և 'ի ներքուստ 'ի ներքս խօսի զկամն Տետոն  
Վատուծոյ : Եւ քահանայութի ըստ Վատուց  
լեզուին հարստութիւն թարգմանի , որ է փար-  
թամութիւն երկնաւոր և հոգեւոր բարեաց ,  
բանալի և փակ երկնից արքայութեն , ծնօղու-  
թիւն հոգեւոր և անախտ երկանց դաստիարա-  
կութիւն և մնունդ աստուածային կենաց ,  
նմանութիւն երջանիկ և բարեթաստիկ փա-  
ռացն Վատուծոյ : Խոկ ըստ Հոյոց լեզուին՝  
քաւիչ թարգմանի , զի քաւէ զանձն և զորս  
ընդ ձեռամբ ունի : Եւ նախ տուաւ յատակ  
և անախտ և կուսական բնութեան հրեշ-  
տակաց . և անտի 'ի խոնարհ իջուցեալ զնա-  
ետ պատկերի իւրոյ ձեռաստեղծի Վդամայ  
մարմնոյ և արեան վճակելոյ , վասն որոյ և  
ցուցաւ մարդասեր երիս տատիճաննօք բարձ-  
րագունիւք պատուելով զեա քահանայական  
և արքունական և մարդարէական փառաւո-  
րութեամբ . որ թէպէտ և ոչ զգուշացաւ  
'ի պահելն , այլ յանարատութեան էառ ըզ-  
նա . և զկորաւստ նորա անդրէն դարձոց  
Տէր նորա , որ ողորմութեամբ եղեւ որդի  
նորա 'ի լմանն աւուրց . և երկրորդ եղեալ  
Վդամ յուզեալ 'ի խնամոց իւրոց , և զան-  
ձըն պատարագեալ նոր և հրաշափառ ըն-

ծայիւք զպարտոս նորա վճարելով։

Իսկ ՚ի յԱդամայ Ճանապարհորդեաց կարգը այս ընդ ամենայն դարս . որ և զինի Ադամայ Հաբելքահանայական շնորհօք զարդարեալ մատուցանէր յանքանից պատարագ Աստուծոյ հաճոյական , նշանակ արժանաւոր քահանայից . այլ և անձամբ մատեաւ պատարագ յօրինակ Տեառն մերոյ անարժան ձեռօքն Կայենի պեղծ քահանային . բայց ըդ Կային և զզոհել ընծայս նորա ՚ի պաղոյ երկրին ոչ ընկալաւ Աստուծած , անարժան քահանայութեան շնորհի զնա համարեալ։ Եւ երաց Կային լոյն և մոլար և կորստեան ճանապարհ , և առանձնացաւ որդւովք իւրովք յԱստուծոյ և ՚ի զաւակաց Ադամայ։

Իսկ զինի Հաբելի երեւեցաւ շնորհն ոյն յԱնովս , որ յուսով կոչեաց զԱստուծած յօդնութիւն տկարացեալ բնութեանն , և զյուսն պատարագեաց Աստուծոյ։ Եւ յետնորա Ենովք ցուցաւ յաստիճանս յայս , որ քահանայագործեաց Աստուծոյ պահք և խոնարհութիւն և աղօթս . և փոխեալ յարժանաւոր տեղիս , մնայ քահանայ ՚ի Տէր։ Եւ յետնորա ծածկեցաւ յանարժանիցն և ծաղկեցաւ Կոյիւ , որ արդար և կատարեալ կոչեցաւ։ Աս նախ զկուսութիւնն և զարդարութիւնն Աստուծոյ ընծայեաց , և յետ ջրհեղեղին մատոյց դարձեալ յանասնոց սրբոց ՂՀաբե-

լի պատարագն , որ է ստուերականն . և հոտոտիլ ասի Աստուծոյ անուշահոտ վարուք և բարուքն Աղի քան անբանիցն ձենձերօք : Եւ խոյս ետ դարձեալ և ամփափեցաւ յանարժանիցն կռապաշտից՝ քահանայութիւնն , և բացափայլեաց առ Յովլը յորդւոց անտի Յեկտանայ , որ յաւուր աւուր քահանայագործէր ըստ թուոյ որդւոցն . և մատոյց զանձընի փորձութեամբն ՚ի փառս Աստուծոյ . և զինի փորձանացն հրամանաւ . Աստուծոյ մատոյց պատարագ ՚ի հաշտութիւն և ՚ի քաւութիւն բարեկամացն :

Եւ յետ այնորիկ առաւել բացափայլեաց ՚ի Վելքիաեգեկ , զոր և գիրն քարողէ զնա քահանայ Աստուծոյ բարձրելոյ : Եւ սամատուցանէր պատարագ Աստուծոյ զՃշմարտութեանն զտիսին , հաց և գինի . զոր և Աքրահամու ընծայեաց և օրհնեաց զնա Աստուծոյն երկինի և երկրի ՚ի բարձրելոյն . զոր ասեն զսայորդւոցն Քանանու , որոյ ոչ պատմի աղդ և ոչ հայր և մայր , վասն օրինակի Տեառն մերոյ . և զի թէպէտ և ունէր հայր և մայր և աղդ , այլ ոչ գրեցաւ , և ոչ որ գիտէ զստոյգն : Վելքն թագաւոր ասի , և Վեդեկն արդար և կամ քահանայ՝ ՚ի խորհուրդ Տեառն մերոյ :

Վեծացաւ շնորհո այս և առ Աքրահամ որ զորդին քահանայագործէր Աստուծոյ և

զմիածինն , նմանեալ Հօրն Երկնաւոր : Եւ  
Խսահակ պատարագ Աստուծոյ անձամբ ե-  
զեւ 'ի հօրէն , և զկեանս իւր Երկիւղիւ միշտ  
ընծայէր Աստուծոյ զկնի հօրն : Եւ Յակոբ  
օծանէր արձան 'ի խորհուրդ Եկեղեցւոյ , և  
'ի գառնալն Ասորւոց պատարագէր Աստու-  
ծոյ ըստ խոստմանն և ուխտին իւրոյ : Այլ  
և Յովսէփ ընկալաւ զնորհս զայս տեսլեամբ  
խորհրդացն . և զողջախոհութիւնն մատոց  
Տեառն Աստուծոյ իւրոյ 'ի փառոս անուան  
նորա : Եւ յայնմ հետէ ոչ երեւեցաւ շնոր-  
հըս այս 'ի մտանելն նոցա Աշգիպտոս , որ  
է Վար , որ ըստ մեղ թարգմանի մեղք : Եւ  
չէ գրեալ թէ մատուցին անդ պատարագ  
Աստուծոյ , առ 'ի ցուցանելոյ թէ ոչ է ար-  
ժան 'ի մեջ մեղաց պատարագ մատուցանել-  
նաց մերձ 'ի յելս նոցա բազմացաւ շնորհս  
այս , և տուաւ Աստուծոյ տմենայն ազգին  
առհասարակ . և մատուցին գառինս 'ի մեջ  
Աշգիպտոսի , ստուերագրելով զՃշմարիտ գառ-  
նըն Աստուծոյ զերկնաւորն՝ որ 'ի մեջ մե-  
զաւոր ժողովրդոց և 'ի մեջ դժոխոց մատեաւ  
Հօր 'ի հոտ անուշից : Եւ յելսնելոյ անտի  
որդւոցն Խորայէլի եղեւ գառնազենութիւ-  
նըն այն 'ի կրօնս Խորայէլի տռնել միշտ յազ-  
գըս իւրեանց զատուերականն , որպէս նորս  
Խորայէլ զՃշմարտութիւնն զօրհանապազ :

Խակյութսութսունեեւթն ամին Վովսիսի ըն-

կալաւ Ահարոն եղբայր նորա զպատիւ քառանոյութեանն յԱստուծոյ կոչեցեալ . և Առվեհսընկալաւ գիր և լեզու նոր ՚ի Տեառնէ , և ձեռամբ և միջնորդութեամբ նորա տուաւ ամենայն ժողովրդեանն Խրայէլի : Եւ ՚ի նոցանէ առին գպրութիւն Փիւնիկեցիք . և ՚ի Փիւնիկեցւոցն առին Յոյնք ՚ի ձեռն կադմոսի : Խակ Ահարոն կեցեալ ՚ի քահանայութեան ամս երեսունեռութ , և ապա առ զքահանայութիւնն Եղիազար . և Եաբաթ և Աքիութ այրեցան առաջի Տեառն հուր օտար մատուցանելով : Եւ դուստրն Ամինադաբայ տուաւ ՚ի տունն Դեւեայ Եղիազարու . և պաշտելով զքահանայութիւնըն Եղիազարու ամս քառասուն , փոխեաց զնա նախանձաւորն Աստուծոյ Փենեհէս , որ սպան վիազքի և զիմրի . և կեցեալ ՚ի քահանայութեանն երեսունեռութ ամ , և որդի նորա Եղիազար ամս յիսունեվեց , և յետ նորա որդի իւր Փենեհէս ամս ութսուն : Եւ զինի նորա ապա Յեսու նոյնպէս յորդւոցն Ահարոնի , ամս յիսունեհինդ : Եւ յետ նորա Աւագին , ամս վաթսուն . և էր սա ՚ի ժամանակս Բարակոց և ՚Դերովրայ : Եւ յետ սորա Եղարի՝ ամս քառասունեերկու : Եւ զինի սորա Օարեհ՝ ամս յիսունեերկու . և է սա եւթներորդ Ահարոնէ : Եւ յետ սորա Ամարու , զոր Աերովս կոչեն , ա-

մըս յիսուն : Եւ զկնի սորա Ամարիա , ամս  
երեսունեներկու : Եւ յետ նորա Աքիտովիփ  
ամս քսան : Եւ յետ նորա Փենեհէս և Ամա-  
րիա՝ ամս քառասուն և երկու : Օկնի սոցա  
Հեղի և որդիք իւր ամս քսան , խկ այլք քա-  
ռասուն ասեն : Ծետ նոցա Աքիտովիփ և Ա-  
քիտաթար և Հովհաննէս և Փենեհէս և Աքի-  
սաւ և Ռոգի և Ազիէլ և Ազարիա և Ամրայիլ  
և Ամարիա , և զկնի սոցա ապա թէ Սամու-  
էլ , զի յառաջ քան զԱմուէլ շփոթեցան  
այնք ամենայն : Եւ զԱքիտմելք գտաք յետ  
Սամուէլի , զոր եսպան Առուուզ հարիւր յի-  
սունիւք . ասեն թէ ՚ի Ռեթնաւբաց կոսո-  
րեցան : Օկնի նորա Աքիտաթար հնգետա-  
սաներորդ . և զհետ սորա Ակիտոր . և ըզ-  
հետ նորա Ասդովիկ երկոտասան ամ : Եւ  
զԱսդովիկ ասեն թէ չէ ՚ի տանէն Ահարոնի  
Ամրամայ , այլ ՚ի ցեղէն կահապագու , զի ըստ  
սպառնալեացն Աստուծոյ առ Հեղի փոխե-  
ցաւ ՚ի տունն կահապագու :

Այլ և ՚ի Դաւիթ երեւեցաւ երրակի  
շնորհն Ադամայ քահանայութիւնն . զի եկեր  
զհացն քահանայական , և վերացոյց զեփուգն  
որ է ծածկոյթ սեղանոյն , և եհարց նովաւ  
՚ի Տեառնէ . զի վասն կասկածի և երդմաննե  
ոչ ետ քահանայիցն հարցանել , և մանաւանդ  
վասն Աստուծահայր լինելոյն ոչ մեղադրե-  
ցաւ , զի ընդ օրինօք ոչ եմուտ իբրեւ զծա-

ուց : Եւ սա կարգեաց Ապղմսսացս քսան և չորս գտաս . և երգել հրամայէր յերրորդ ժամուն և 'ի վեցերորդ ժամուն և 'ի յին ներօրդ . և այս եղաւ յեկեղեցի սուրբ : Եւ Ապղովիլ պաշտեաց զքահանացութիւնն ամս իննետասն : Օ կնի նորա Աղօրիա և Աղօմ և Վոլսիա և Եղիկա և Արւրիա և Աղարիա և Ապղովիլ . և ոչ գոյ ժամանակ սոցա արկեալ ընդ գրով :

Եւ 'ի ժամանակս Ռոբովամու որդւոյ Առ բատաց Արիմելէր էր քահանացապետ . և զկնի նորա Ապղովիլ ամս քսան : Եւ յետ նորա Ապղուկ և Աղօրիա և Ահիմէէս և Արիմելէր և խոդա և խսադաք և Յետու և Յիւ սուդաք և Եղիշէ և Աղօմ և Յովիսդա հայրըն Օ աքարիա մարդարէի : Եւ ապա Վանասէ և Վոլսիա և Աղարիա և Անանիա և Շմաւոն և Վերարի և Յովադաք և Աղարիա զոր ասեն Օ աքարիա որդի Ռարեքեայ, որ յանդիմանեաց զիղիա թագաւոր, և 'ի տաճարին սպանաւ 'ի ժողովրդենէն : Օ կնի սորա Խաւդաւ, և զհետ սորա Աւրիա և Յովհաննէս և Անդրումաքոս, և Անիա այր պատուական և գովիելի, և Ելեկիա և Շմաւոն զոր ամենայն այր (1) արդաք և երկեղած . և զսա ասեն թէ զՔրիատոս եբարձ 'ի գիրկն : Այս սոքիկ որ կարգեցաք քահանացապետ վասն

(1) Թերեւս ընթեռնի է ոչ առն այր :

յաճախ շփոթմանն Նրէից ոչ գրեցաւ ՚ի  
պատմագրացս ստուգիւ , այլ մեք աշխատ  
եղեալ գտաք զկարգն , զի գիտասջիք թէ  
պարգեւքս այս ոչ շիջաւ յաշխարհէ խաղառ՝  
մինչեւ ՚ի ճշմարիտն Քահանայապետ :

Օ հետ Ըմաւոնի Ամարիա և Ազարիա :  
Այս Ազարիա եկեալ ՚ի գերութենէ հրա-  
մանաւ Ասղմանասարայ ՚ի Ասմարիա, ետնոցա-  
զիմնգ գիրքն Առվախի : Օ հետ սորա Ամո-  
րիա և Աքիտովք և Ասդովիկ և Աղոմ և Ա-  
լեկիա և Ազարիա և Քեղիկ հայրն Երեմիայ  
մարգարէի ՚ի ժամանակս Ավսիայ թագաւորի  
որ եգիտ զերկըրորդ օրէնսն : Օ հետ սորա  
Աւրիա որդի Աամիայ , որ և սպանաւ ՚ի Յո-  
վակիմայ ՚ի թագաւորէ Յուղայ : Եւ զհետ  
սորա Աարրի և Յովսեգեկ , որ գնաց ՚ի գե-  
րութիւն յաւուրս Աեգեկիայ : Եւ եղեւ գե-  
րութիւնն Նրէից չորս անգամ և թագաւո-  
րութիւնն բարձաւ Այրուսաղէմէ . բայց  
քահանայութիւնն ոչ բարձաւ , զի գնացին  
ամսնք ՚ի քահանայիցն զհետ ժողովրդեանն ,  
և ոմանք ՚ի տեղն թողան :

Եւ յերկրորդ ամին Աարուգոդոնոսորայ  
ետես Դանիէլ զտեսիլն , և ՚ի հինգ ամի գե-  
րութեանն Յեքոնիայ ետես Եղեկիէլ զհրա-  
շալի տեսիլն , և յայնժամ սպանին զերեւելի  
իշխանսն Յուղայ , և ընդ նոստ սպանին զիլ  
սեգեկ և զՀ իրիա և զԱռփոնիա . և յետ նո-

ըստ եղին քահանայապետ զՅեսու որդի նուրայիշը յիշուսաղէմ. և զկնի տարան և զնա՛ի հաբելն. և ՚ի գառնաղն չըէից եւ ընդ Օօրաբարելի յիշուսաղէմ. Օկնի Յեսուայ Յովակիմ. յաւուրս սորա շինեցաւ տաճարն յիշուսաղէմ. և զկնի նորա Եղիշէ որդի նորա, և ապա Յովիդա որդի նորա. և յաւուրս սորա կատարեցաւ շինութիւն տաճարին. և յետ նորա Յովհաննէս և Յովիդա, և ապա Յովհանննէս որ ապրեցաւ մինչեւ ՚ի ժամանակս Արտաշէսի թագաւորին Պարսից. զկնի նորա Յովիդա. Եւ կայր քրմապետ մի Արտաշէսի Անդրամաքոս անուն, յոյժ բարեկամ չըէից. Օկնի նորա Վանասէ. սա շինեցաց տաճար մի ՚ի լեռոն Պարիզին. Օհետ սորա Անդրոմաքոս. սա էր յաւուրս Աղէքսանդրի Վակեդոնացւոյ, որ պատուեաց զԱղէքսանդր և սպանաւ ՚ի Վամարացւոյ, և ինքեանք կտորեցան յԱղէքսանդրէ. Օհետ սորա Անիա, և զհետ նորա Ըմաւոն որդի նորա, և զհետ սորա Եղիազարոս եղբայր նորա. սա սա առաքեաց Պտղոմէոս և խնդրեաց զգրեանն, և առաքեցին ոսկի գրով. Օհետ սորա Վանասէ. զկնի նորա Անիա. յետ նորա Յովինսպոս, և զհետ նորա Ըմաւոն. սա է հայր Յեսու Արքաքայ. Ասորիք զայս Ըմաւոն ասեն բարձօղ Պրիստոսի, երկերիւր և վեշտասան ամ կեցեալ յետ կապելոյն. Եւ յետ

սորա եղեն քահանայապետք Վենեղայոս ,  
Յասոն , Վազարոս : Եւ Վենեղայոս եղեւ  
չար կամօք ընդդէմ օրինաց . և չէր սա յազ-  
գէն Վեւեայ . և վասն սմա Ոնիս որդի քա-  
հանայապետին Ոնիս գնաց Աշգիպտոս , և  
շինեաց անդ տաճար նման տաճարին որ յԵ-  
րուսաաղէմ , և քաղաք : Եւ Յակիմոս քահա-  
նայապետ մարտեաւ ընդ Յուդայի և հա-  
րաւ բարկութեամբ ՚ի Տեառնէ և մեռաւ :  
Եւ առ Յուդա զքահանայապետութիւնն .  
և զհետ նորա Վատաթիա , և զկնի նորա  
Յուդա որդի նորա . և սա նորսպեաց զտա-  
ճարին և սպանաւ : Օհետ նորա Յովեաթան  
եղբայր նորա , և սպանաւ ՚ի Տրիփոնայ : Եւ  
զհետ նորա Ըմառն եղբայր նորա և սպա-  
նաւ ՚ի Պողոսմեայ : Եւ զհետ նորա որդի նո-  
րա Յովհաննէս , որ է Հիւրկանոս : Յետ  
նորա Արիստաբուլոս . սա թագ եղ ՚ի վերաց  
քահանայութեանն զկնի չորեքհարիւր եւ-  
թանասունեւեւթն ամի բառնալոյն :

Եւ ՚ի Յուդայէ մինչեւ ՚ի սա զօրապետք  
և քահանայապետք էին , և աստ սկսաւ  
գարձեալ թագաւորութիւնն և քահանայու-  
թիւն Արիստաբուլոս , և կալաւ զթագա-  
ւորութիւնն նորա տարի մի , և սպանաւ ձե-  
ռամբ եղբօր իւրաց Անտիգոննասայ , և առ ըդ-  
տեղի նորա միւս եղբայրն Յովհաննէս , որ  
կոչեցաւ Ազեքսանդրոս . և զկնի սորա կին

նորա Աղեքսանդրա , և շփոթեցաւ կարգն քահանայութեան՝ կնոջ եղեալ քահանայապետ բայց յետոյ զքահանայապետութիւնն ետ Հիւրկանեայ որդւոյ իւրոյ , և եղքօրնուրա Արիստաբուլեայ ետ զթագաւորութիւնըն , որ և յետոյ գնաց ՚ի գերութիւն ՚ի Հըռոմ , և զՀիւրկանոս գերեցին ՚ի Հայս :

Եւ Հերովդէս երթեալ ՚ի Հոռոմ թագաւորեաց Հրէիցն , որ և եկեալ սպան զԱնտիգոնոս միւս եղքայրն Հիւրկանեայ . և յետոյ և զՀիւրկանոս եւս եսպան որ եկն ՚ի գերութենէն Հայոց , և եդ քահանայապետ զԱնանիէլ : Եւ զկնի Օաքարիս , և ապա ըզՇ մաւոն , ամ ամի փափոխելով զնոսա կաշառօք . և ապա զԱննա և զՎացիայիս . և ապա փոխեցաւ հին քահանայութիւնն և ստուերականն ՚ի նորս և ՚ի Ճշմարիտս Պրիստոսիւթանդի ՚ի ծնանելն նորա թագաւորն այլադրէ էր Հերովդէս , զի ըստ Յակովլեաց նահապետին եկն որ իւր է թագաւորութիւնըն . և յորժամբ բաշխեաց զպաշտօն պատարագի նոր քահանայութեանս՝ զմարմին և զաքիւն իւր , սկսաւ նորս և լուեաց հինն . որ թէւ կային այլ քահանայք , ոյլ ոչ ըստ կամցն Աստուծոյ , և ոչ համարեալէ ՚ի կարգս ըստացն . վասն զի յանձնեաց Տէրն զթագաւորութիւնն ՚ի յարքայն հեթանոսաց՝ հաւատացեալն ՚ի նա մերձ ՚ի չարչապանն կամա-

ւոր : Օ ի յայնժամ եկին պատգամաւորքն թագաւորին Հայոց և Ասորւոց , և աղաջելին զՏէրն գնալ և թագաւորել ընդ նոսա , և լինել բաժանակից և կյորդ իշխանութեան աթոռայ նոցա : Խսկ Տէրն երանեաց զնս , և նովաւ յանձնեաց զարբոյութիւնն որ տուաւ Ադամայ ըստ կամացն Աստուծոյ հաւատացել ըցն ՚ի նա և ՚ի հայր նորա . և զաստիձան քահանայութեն որ կարգեալ գայր ՚ի ծնունդո Ադամայ ազգի ազգի նիւթով պատարագաց , ետ զնա յԱռաքեալն ՚ի վերնատանն , փոխեալ զնիւթ պատարագին յանձն իւր սոսկալի և քսամնելի և անձառելի իմանալեաց և զգալեաց , այն որ անսկզբնաբար ՚ի ծոցոց Հօր քահանայացու , և նստի յերկինս երկնից ընդ աջմէ Հօր , քահանայ մշտնչենաւոր : Աւաստ կատարեցաւ խորհուրդն հայրենի և գլխաւորեցաւ , գագաթն էառ քահանայութիւնն , որ ոչ է այնուհետեւ այլ և այլ պատարագ և ոչ քաղմութիւն քահանայից վասն մահու արգելման , և ոչ տաճար ձեռագործ և ապականացու , այլ նոյն և մի պատարագ և պատարագիչ և քահանայ . և տաճար է անձեռագործ վերինն Արուսաղէմ , որոյ գաւիթ է ձեռագործս այս և նիւթաւոր եկեղեցի և օրինակ Ճշմարտին . և հաւատն է հանրական կաթողիկէ , որ ժողովէ զտիեւ վերս՝ ի մի յոց կոչման և ՚ի մի գաւանութիւն և ՚ի մի

հոգեւոր կերակրուր: Եւ այս առաջնորդք եկեց  
զեցւոյ անդամք են միոյ անմահական գլխոյն  
Յիսուսի, անմե կենելի, անմահ և յաւիտենա-  
կան, հաւատովվ և յուսով պաշտենդքահանայ-  
ութիւնն կատարեալ, և կենաց ՚ի կեանս փո-  
փոխեալք կատարելով զընթացսն, ընուն ա-  
շակերտեալքն նովին պատարագաւ և հա-  
ւատովվ և խմանալի տաճարով զտեղիս նոցա.  
և կատարելով Տեառն մերոյ և Առուծոյ  
զքահանայութիւն տանն Ադամաց կենդա-  
նացուցիչ մահուամբն և փրկագործ յարու-  
թեամբն, համբարձեալ յերկինս կատարեաց  
և զերկնաւորացն քահանայութիւնն, որ սար-  
կաւագունք էին մինչեւ ցայժմ, և արդ ետ  
նոցա Տեր զնոր պաշտօն տնօրէնութեան իւ-  
րոյ, և ձեռնադրեալ զնոսա ըստ կարգի ՚ի  
տեղիս և յաստիճանս իւրեանց մեզ անճա-  
ռելի, և ըստ խմանալի բնութեան իւրեանց  
աննիւթապէս. և նոքա քահանայագործեն և  
անմարմնաբար հազորդեալ Յիսուսի ասո-  
ւածաստեղծութեանն և աստաւածաբար  
խորհրդոյն, որպէս ասէ մեծն ՚Իիսոնէսիոս  
ուսեալ յաստուածընկալ առաքելոյն Պաւ-  
ղոսէ, որ ամբարձեալ մինչեւ յերրորդ յեր-  
կինս՝ տեսող եղեւ անճառելեացն և լազ-  
իսկ զինի համբարձման Տեառն մերոյ, հրա-  
մանաւ Հոգւոյն սրբոյ առաջին ձեռնադրե-  
ցաւ Երուսաղէմի եպիսկոպոս Յակովոս

Եղբայր Տեառն . և Եպիսկոպոսն տեսող լոի ,  
որ է աստուածայնոցն . և է Երից կարգաց  
գլուխ , քահանայից , սարկաւագաց և դրա-  
բաց :

Եւ յառաջին ամին վերացման Տեառն ,  
աշակերտեցաւ և մկրտեցաւ նելքինին քու-  
շայեցի Փոթանփոս անուն , 'ի Փիլիպպոսէ  
առաքելոյ . և նա եղեւ սկիզբն մկրտութեան  
հեթանոսաց : Եւ 'ի գլուխ տարւոյն աշա-  
կերտեցաւ Պաւղոս , և յերկրորդ ամին սկիզ-  
բըն արար քարոզութեանն : Եւ Վարիպպաս  
արքայ յառաջին ամին իւրոյ սովան զՀՅակովէ-  
բոս եղբայրն Յովհաննու : Եւ Պետրոս ե-  
լեալ յԱրուսաղեմէ եկն յԱնտիոք աշակեր-  
տելով զՀեթանոսս 'ի Ճանապարհին , զերկուս  
ամս յամելով 'ի գալն . և յԱնտիոք ետ հիմն  
եկեղեցւոյ , և ձեռնադրեաց Եպիսկոպոս ըզ-  
կուդիս : Ասեն թէ զվարշամակ Տեառն  
ունէր , և զայն արկանէր 'ի վերայ գլխոյ ձեռ-  
նադրելոցն . և անուանեաց զաշակերտուալսն  
քրիստոնեացս . և եղ անդ աթոռ , և գնաց  
'ի Հռոմ , և կատարեցաւ 'ի Վերոնէ Պաւ-  
ղոսիւ հանդերձ , յերեքտասանն ամի թագա-  
ւորութեան նորա , 'ի Վայիսի հթ . և Վնդ-  
րոնիկոս ասէ թէ 'ի հթ , ն քանուն<sup>(1)</sup> : Եւ զինի  
Պետրոսի եկաց Եպիսկոպոս 'ի Հռոմ ի ինոս՝

(1) Անիմանալի է բառս , և թերեւս նշանակէ զամիսն  
Տաճկաց Ք. Ետևուն :

առաջին եպիսկոպոս, մետասան ամ։ Եւ յէրուսաղէմ զինի Յակովբայ Շ մաւսն կղէուպեանց՝ ամս քառասուն և երկու։ Եւ յէղէքսանդրիա Վարկոս աւետարանիչ քարոշեաց, շինեաց եկեղեցի։ և յետ նորա եկաց Անանիա<sup>(1)</sup> ամս քսան և երկու։ և զինի նորա Աքիլոս ՚ի չորրորդ ամին Դիմիկղիտիանոսի։ Եւ նախ քան զայլսն յետ համբարձմանն ըստ խոստման Տեառն առաքեցաւ թաղէոս ՚ի Հայս։ նախ ՚ի Կեսարիա Հայոց եկեալ, արեանդ հիմն եկեղեցւոյ, և ձեռնադրեաց եպիսկոպոս դիմիկիլոս։ և ապա եկն ՚ի Աւրհա։ անդ բժշկեաց զիքգար, և շինեաց եկեղեցի, և ձեռնադրեաց անդ զիգէ, և գնաց, և կատարեցաւ ՚ի Անատորիոյ արքայէ Հայոց Ամանապէս և Շարժողոմէս եկեալ և շրջեալ լնդ Հայս՝ կատարեցաւ ՚ի նմին թագաւորէ։ Եւ Յուղա Յակովբեան զհետ նոցա եկեալ ՚ի Հայս, կատարեցաւ յիշխանացն Հայոց ՚ի Արմի քաղաք նոցին Հայոց, և կայ անդէն։ Եւ Արման մի յորդւոցն Յովսէփու կատարեցաւ ՚ի Հայս։

Եւ յէօփա և ՚ի կողմանս Շիւթանացւոց և յերկիրն Շ անագլաւաց գնաց Անդրէաս առաքեալ։ Եւ ասեն զսմանէ՛ թէ յորժամ արկին վիճակս Առաքեալքն յետ առնլոյ զՀու

(1) Ի գաւաղանագրին փոխանակ Անոնիոյ դնէ Ավան.

գին սուրբ ՚ի վերնաառունն , և բաժանեցին զաշխարհս ՚ի մէջ իւրեանց , և անկաւ վեճակն Անդրէի հրամանաւ Հոգւոյն սրբոյ երկիրն Շանագլխաց . և դժուարեցաւ Անդրէաս և փախեաւ , և հանդիպեցաւ Փրկչին որ իջեալ կայր վրանօք որպէս վաճառական , և խօսեցաւ ընդ նմա , և ասաց զինքն յերկրէ անտի , և թէ կամիցի գնալ տանի զնա դիւրաւ , և հեշտիւ լսեն նմա : Եւ դարձաւ անդրէն ՚ի վերնատունն , և խնդրեաց աղօթս զի գնասցէ ՚ի վիճակն իւր զհետ վաճառականին . և յուղարկեցին զնա խնդութեամբ : Եւ գնաց Տէրն նովաւ հանդերձ ՚ի Յոպուէ . և դիպեցաւ նաւ սրատրաստական , և մտին ՚ի նա և գնացին անդ . և վերացաւ ՚ի նմա նէ Տէրն յերկինս , և իմացաւ Անդրէաս և փառաւորեաց զիստուած : Եւ գնացեալ դարձոց սքանչելեօք զաշխարհն , և դարձաւ քարոզեաց ՚ի Վիւսիա և ՚ի Ռիւթանիա , և յլսիա քարոզեաց և շինեաց եկեղեցիս ՚ի մէջերկեայս , և սերմանեաց անդ զբան հաւատոյն : Եւ անց ՚ի յլլադա և կատարեցաւ ՚ի Ապարտա Ելլադացւոց յլդիատայ խաչիւ . և նմա է համարեալ ասիական աթոռն , զի նա քարոզեաց զառաջինն մինչեւ եկն անդ զինի երկոտասան ամաց Յովհաննէս յետ փոխման Տիրամօրն :

Արդ ուր քարոզեցին Առաքեալքն երկո-

տասանք և շինեցին եկեղեցիս, աթոռք են.  
 և 'ի կատարածի աշխարհիս նստելոց են յեր-  
 կոտասան աթոռս . և այս 'ի Վրիստոսէ տը-  
 ւաւ : Իայց յետոյ մարդիկ անուանեցին չորս  
 աթոռ գլխաւոր զլ՛ւետարանչացն : Ուատ-  
 թէոս, ասեն, ունի զլ՛նտիոք . և 'Դ ուկաս որ-  
 դի կոստանդեայ Ասորւոյ և մօր Յունի, սա  
 ունի զՃռոմ, որ էր անտիոքացի և արուես-  
 տիւ բժիշկ : Իսկ զլ՛ղէքսանդրիս ունի Ուար-  
 կոս . և զլ՛փեսոս Յովհաննէս, որ յետոյ Անդ-  
 րէի եկն յիշեսոս . և զլ՛րուսաղէմին Յա-  
 կովըս եղքայր Տեառն, Եւ մեք աղիւսակօք  
 կարգեսցուք զհնդից Աթոռակալացս ըստ  
 կարգի լուսաւորապէս, զի դիւրաւ կացցեն  
 'ի վերայ ուսումնասէրքն . և վասն աշխա-  
 տութեանս մերոյ ակնկալցուք հատուցման  
 աղօթից՝ որոց օգտին աստուստ 'ի փառս Առ-  
 տուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս .  
 ամէն :

ԱԹՈՌԱԿԱՆՆՔ ԱՆՏԻՌԱՅՑ

	անդ		անդ		
Ա.	Պետրոս Հէճ.		ԼԲ.	Ուզիսոս.	2
Բ.	Լուղիսոս.	3	ԼԳ.	Պուլիսանոս.	1
Գ.	Իգնատիէ.	12	ԺԴ.	Փլաբիանոս.	7
Դ.	Իրոն.	15	ԼԵ.	Եւագր.	1
Ե.	Կուռանելիսոս.	10	ԼԶ.	Պորփիրիսոս.	7
Զ.	Ուրիսոն.	11	ԼԷ.	Աղէքսանդրոս.	10
Է.	Թէոփիլէ.	17	ԼԸ.	Յովհաննէս.	58
Ը.	Մաքսիմաս.	18	ԼԹ.	Թէոդիսոս.	52
Թ.	Սէրապիէ.	10	Խ.	Ռոմանոս արքանին.	
Ժ.	Ասկղիպ.	12	ԽԸ.	Մաքուիմոս արքանին.	
ԺԱ.	Փիլիպոս.	10	ԽԲ.	Ակակիսոս էրիաքնէ.	
ԺԲ.	Սաբինոս.	12	ԽԳ.	Մուրտորիս հէրէտ.	
ԺԴ.	Բաբելոս.	50	ԽԴ.	Մուրբ Պետրէ հայու-	
ԺԴՒ.	Բաւիսոս.	20	ծէսն.		
ԺԵ.	Դեմետրիս.	8	ԽԵ.	Մանիկոն.	
ԺԶ.	Պաւլոս ռամոստացի	Հէցիսամծոց.	ԽԶ.	Մերտուրիս էրիաքնէ.	
ՃԵ.	Դրմանոս.	15	ԽԵ.	Յուլիանոս.	55
ՃԸ.	Տիմոթէոս.	5	ԽԸ.	Ստեփանոս.	57
ՃԹ.	Կիւրզիսոս.	8	ԽԹ.	Ստեփանէ հէրէտ.	
ՃՒ.	Տուրիանոս.	1	Ճ.	Բելետիս հէրէտ.	
ՃԸ.	Բաղալիսոս.	8	ՃԱ.	Փլաբիէ որ ընթառան.	
ՃԲ.	Փիլիկիսոս.	2	ՃԲ.	Սուրբակէ ոսուղուտառ.	
ՃԳ.	Եւստաթէ.	10	ՃԳ.	Պաւղէ հէրէտին ովոծ.	
ՃԴ.	Յուլիս.	1	ՃԴ.	Ուբովիս էրիաքնէ	
ՃԵ.	Ռայլոս արքանին ովոծ.		՚ ուշի Սեւերուտ.		
ՃԶ.	Ուրբոս արքանին.		ՃԵ.	Եփրեմ հէրէտ.	
ՃԸ.	Փլիբոս հէրէտ.		ՃԶ.	Դրմանոս հէրէտ.	
ՃԸ.	Ստեփանոս հէրէտին.		ՃԵ.	Սարգիս.	7
ՃԹ.	Լեռնոտիս հէրէտ.		ՃԸ.	Պաւղէ սէտան.	
ՃԼ.	Եւղոբոս արքանին եր.		ՃԹ.	Պետրէ Հարդատէպն.	
ՃԸ.	Մելիսոս ուշուտառ.		Կ.	Յուլիանէ.	40

	ամբ		ամբ
ԿԱ.	Ամանասիոս .	41	Զովհաննէս .
ԿԲ.	Յովհաննէս .	42	Յովհան .
ԿԳ.	Դիոդորոս .	45	Դիօնեսիոս .
ԿԴ.	Սեւերիանոս .	44	Աքրահամ .
ԿԵ.	Յուլիէ .	45	Յովհաննէս .
ԿԶ.	Եղիս .		Ամանաս .
ԿԷ.	Ամանտա .		Յովհաննէս .
ԿԸ.	Յովհան .		Դիօնեսիոս .
ԿԹ.	Իսահակ .		Յովհաննէս .
Հ.	Ամանաս .		Հ . Ամանաս .
ՀԱ.	Գեորգ .		ՀԱ. Յովհաննէս .
ՀԲ.	Յովհէփ .		ՀԲ. Վասիլիոս .
ՀԳ.	Կիրակոս .		ՀԳ. Աքրոն .
ՀԴ.	Դիօնեսիոս .		ՀԴ. Դիօնեսիոս .
ՀԵ.	Յովհաննէս .		ՀԵ. Ամանտա .
ՀԶ.	Իգնատիոս .		ՀԶ. Յովհան .
ՀՏ.	Դիոդոս .		ՀՏ. Յովհան .
ՀԲ.	Դիօնեսիոս .		ՀԲ. Ամանաս .
ՀԹ.	Յովհան .		ՀԹ. Միհայլու եռ .
Զ.	Վասիլիոս .		

### ԱԹՈՐԱԿԱԼՔ ՀՌՈՎՄԱՅ

	ամբ		ամբ
Ա.	Պետրոս ԱՅՆ .	25	ԺԱ. Անիկոսիոս .
Բ.	Լինոս .	12	ԺԲ. Սովուեր .
Գ.	Անիտոս .	11	ԺԳ. Եղուռիոս .
Դ.	Կղէմէս .	9	ԺԴ. Կեղեստիոս .
Ե.	Ուրտոս .	8	ԺԵ. Ակութորոս .
Զ.	Աշէքսանդրիոս .	12	ԺԶ. Բեկոտոր .
Լ.	Քսեստոս .	30	ԺԼ. Ուրբանոս .
Ը.	Տաղէստիորոս .	11	ԺԸ. Բունդիանոս .
Թ.	Սիղուերիանոս .	4	ԺԹ. Անտիտոս . ամբ 8
Ժ.	Փիոս .	15	ԺԺ. Բաւիանոս . 15

		ան		ան
ԻԱ.	Կուռնելիսոս .	2	Խ.	Անասնիտոս .
ԻԲ.	Լուկիոս .	4	ԽԱ.	Զոսիմոս .
ԻԳ.	Ստեփանոս .	1	ԽԲ.	Կեղեստինոս .
ԻԴ.	Քոնստոս .	11	ԽԳ.	Լեւոն էրիաբեյն .
ԻԵ.	Դիտնեսիոս .	8	ԽԴ.	Գայզոս .
ԻԶ.	Գիմեսիոս .	8	ԽԵ.	Իլարիոս .
ԻԷ.	Ռուսելիոս .	1	ԽԶ.	Սիրիլիոս .
ԻԸ.	Գայիսոս :	2	ԽԵ.	Անաստաս .
ԻԹ.	Մարտագլոս :	1	ԽԸ.	Սիմաքե . առդի յա-
Լ.	Եւսեբի .	1		—աշ էրիաբեյնի էն :
ԼԱ.	Մելիտիտնոս .	21	ԽԹ.	Շարոնտաս .
ԼԲ.	Սեղբեստրոս .	25	Ճ.	Ուսիմոտես .
ԼԳ.	Մարկոս .	2	ՃԱ.	Յովհան .
ԼԴ.	Սիլիոս .	15	ՃԲ.	Փելիքո .
ԼԵ.	Լիբերիոս .	4	ՃԳ.	Բիրիլոս .
ԼԶ.	Փիլիպիոս .	1	ՃԴ.	Ագարոս .
ԼԷ.	Դամասոս .	18	ՃԵ.	Մեղբեստրոս .
ԼԸ.	Սիրիկիոս .	5	ՃԶ.	Պլակիոս .
ԼԹ.	Անաստաս .	5	ՃԷ.	Մարտինոս .

ԱԹՈՒԱԿԱԼԻ ԱՆՔՍԱՆԴՐՈՒ

		ան		ան
Ա.	Մարկոս	22	ԺԲ.	Դևմետրիոս .
Բ.	Ալիոս .	22	ԺԳ.	Իդիմոս .
Գ.	Միլոս .	15	ԺԴ.	Դիտնեսիոս .
Դ.	Գարտոնիոս .	11	ԺԵ.	Մաքսիմոս .
Ե.	Փրուղիոս .	12	ԺԶ.	Շառութան .
Զ.	Յուսոս .	11	ԺԷ.	Պետրոս. վայել առ 10
Է.	Ամանիոս .	15	ԺԸ.	Արիլաս .
Ը.	Մարկիանոս .	10	ԺԹ.	Աշեքսանդր . առդի
Թ.	Կալերիոս .	14		ծառչ Նիկոյ .
Ժ.	Ագրիպաս .	12	Ի.	Աթանաս .
ԺԱ.	Յուլիոս .	14	ԽԱ.	Պետրոս

	ամբ		ամբ
ԻԲ.	Ղուկիսս արդանս .	ԽԱ.	Ջուկիսս .
	Պէշծ .	ԽԲ.	Ապողինարսս
ԻԳ.	Տիմոֆէտ . Ելքայրն	ԽԳ.	Թէւագորէ .
	Պէտքասի .	ԽԴ.	Պետրէ .
ԻԴ.	Թէռոփիլսս .	ԽԵ.	Յովչանէ .
ԻԵ.	Կիւրեղ Ած . աստ	ԽԶ.	Դամիանէ .
	Ե Ճռըն Եհեսոսի .	ԽԷ.	Անաստաս .
ԻԶ.	Դիսուկօրսս .	ԽԸ.	Անդրսնիկոս .
ԻԵ.	Պրոտէր հէրէս .	ԽԹ.	Բենիամին .
ԻԸ.	Տիմոֆէտս հէրէս .	Ճ.	Կաւրա ժալլիւթոնի .
ԻԹ.	Տիմոֆէտս ռուզան .	ՃԱ.	Ագաթօն .
Լ.	Յովչաննէս հէրէս .	ՃԲ.	Յովչան .
ԼԱ.	Պէտրոս .	ՃԳ.	Շմաւոն .
ԼԲ.	Աթանասիոս .	ՃԴ.	Սահակ .
ԼԳ.	Յովչաննէս .	ՃԵ.	Աղէքսանդրոս .
ԼԴ.	Յովչան .	ՃԶ.	Կողմա .
ԼԵ.	Դէսուկօրս .	ՃԷ.	Յովչան .
ԼԶ.	Տիմոֆէտս .	ՃԸ.	Մարկոս .
ԼԵ.	Դիսուկօրս .	ՃԹ.	Յակով .
ԼԸ.	Պէտրոս .	Կ.	Շմաւոն .
ԼԹ.	Գայիշանէ հէրէս .	ԿԱ.	Յովչէփ .
Խ.	Պաւղոս .		
	40		

## ԱԹՈՌԱԿԱԼՔ ԵՓԵՍՈՍԻ

	ամբ		ամբ
Ա.	Անդրէսս .	Ը.	Անտաթէ .
Բ.	Եսատիոս .	Թ.	Ալոմուրոս .
Գ.	Տիմոֆէտս .	Ժ.	Փիլիպպոս .
Դ.	Պոլիկարպոս .	ԺԱ.	Պոլիկարպոս .
Ե.	Պուլիք .	ԺԲ.	Ռւզես .
Զ.	Ստարէ .	ԺԳ.	Լաւրանտիոս .
Է.	Դիսուկինիոս .	ԺԴ.	Աղուբանս .
	8	ԺԵ.	Պլոտոնիկոս .
	8	ԺԸ.	18

	ամէ		ամէ
Ժ.Զ. • Մարկոս .	15	Է. • Դաոմետրիէ .	11
Ժ.Ե. • Կիւրեղ .	10	Է.Ա. • Պլոտինաս . ասպ գոյշ- շառ (ալլուսն ԵՀՀ-ասով)	
Ժ.Ը. • Կուռնելիոս .	8		
Ժ.Թ. • Դիդոս .	7	Դ. • Կոստանդնուպոլիսէս .	

ԱԹՈՒԱԿԱԼՔ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ

	ամէ		ամէ
Պլոտինաս .	5	Խ.Ա. • Ակակիոս .	2
Խ.Բ. • Ազէքսանդրոս .	23	Խ.Բ. • Պլավիտոս .	4
Խ.Գ. • Պաւլոս .	1	Խ.Գ. • Ռևիմիոս հովեա .	
Խ.Դ. • Մակեդոն .		Խ.Դ. • Մակեդոն հոյեցյիլ .	
Խ.Ե. • Եւսուբիս .	1	Հովայն :	
Խ.Զ. • Եւգոբոս հովեա .		Խ.Ե. • Տիմոթէոս .	5
Խ.Է. • Եւագրիոս հովեա .		Խ.Զ. • Յովհաննէս երիա .	
Խ.Ը. • Դիմովիլէ հովեա .		Բնուի :	
Խ.Թ. • Գրիգոր Կամէտա-		Խ.Է. • Եպիփան .	25
լոյն :	10	Խ.Ը. • Անթիմոս .	1
Լ. • Նիկոլիոս .	8	Խ.Թ. • Յահան Դամոնէ յա-	
Լ.Ա. • Յովհան առէքեբան .	7	ռաջ երիաբնակիչ են :	
Լ.Բ. • Երեսոկիոս .	1	Ճ. • Յովհաննէս .	1
Լ.Գ. • Ատամիկոս .	10	Ճ.Ա. • Կիւրիակէ .	1
Լ.Դ. • Սիսիանոս .	2	Ճ.Բ. • Սարգիս .	1
Լ.Ե. • Նեստոր լորակառ .		Ճ.Գ. • Մինաս .	5
Լ.Զ. • Մաքրիմիանոս .	2	Ճ.Դ. • Գևրմանիոս .	17
Լ.Է. • Պրոկլոս .	12	Ճ.Ե. • Նուգոտոս .	7
Լ.Ը. • Փլարիոս հովեա .		Ճ.Զ. • Բուրոս .	1
Լ.Թ. • Անատոլ հովեա .		Ճ.Է. • Պաւլոս .	1
Խ. • Իգնատիոս հովեա .			

## ԱԹՈՒՍԿԱԼՔ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

	ամէ		ամէ	
Ա.	Յակովոս .		Լ.Դ.	Նարկեսոս Աւբադին .
Բ.	Հմատոն .	42	Լ.Դ.	Աղէքսանդրոս .
Գ.	Յոստոս .		Լ.Ե.	Մարգենոս .
Դ.	Զաքէ .		Լ.Ե.	Հիմենոս .
Ե.	Տուբիս .		Լ.Ը.	Էղբերդա , (Զաք-
Զ.	Բենիամին .			զաս) .
Է.	Յովհան .		Լ.Թ.	Հերմոն .
Ը.	Մատթէոս .		Խ.	Դասպատոս , (՝) .
Թ.	Փիլիսոփոս .		Խ.Ա.	Հերմոն , ասդ և Տշդ-
Ժ.	Սէնեկէս .			նութիւն սըբոյն Գ.Ռի-
Ժ.Ա.	Յուստիս .			գորի Լառաստրուին :
Ժ.Բ.	Յուստիս .		Խ.Բ.	Մակար .
Ժ.Գ.	Եփրեմ .		Խ.Գ.	Մաքսիմոս , պարտ աւ-
Ժ.Դ.	Յովհան .			ան Հանին աւօքէնս :
Ժ.Ե.	Յովհան .		Խ.Դ.	Կիւրեղ , չի ամ , և
Ժ.Զ.	Յովհան .			աժամբեցաս .
Ժ.Զ.	Յարկեսոս , (՝) .		Խ.Ե.	Ակակի , որ Ալիքրէն
Ժ.Է.	Մարկոս .			աժամբեցաց :
Ժ.Բ.	Կասիանոս .		Խ.Զ.	Սէւերիանոս : ասդ
Ժ.Թ.	Պոպղիոս .			էլես Քոյսուն Ալ-
Ւ.	Մարտինոս .			նասի , որ ՅՇ է ոդ-
Ւ.Ա.	Յուլիանոս .			իսուս :
Ւ.Բ.	Գայիոս .		Խ.Հ.	Դամասոս .
Ւ.Գ.	Սիմաքոս .		Խ.Ը.	Կիւրեղ , աս արար ըն-
Ւ.Դ.	Գայիոս .			կրտսեն ընծայութեան :
Ւ.Ե.	Յուլիանոս .		Խ.Թ.	Յովհաննես .
Ւ.Զ.	Կիսիանոս .		Ծ.	Պրուլիոս .
Ւ.Է.	Վաղէս .		Ծ.Ա.	Պրովալիոս .
Ւ.Ը.	Դքիսիանոս .		Ծ.Բ.	Յորնաղ .
Ւ.Թ.	Նարկեսոս .		Ծ.Գ.	Յ. Թ. Ա. գուգոս , սա է ԵՇԻ
Լ.	Դիոս .			աղջակատուն իոխանակ :
Լ.Ա.	Գերմանիոն .			Յոբնաղի :
Լ.Բ.	Դքիսիանոս , (Գոր-		Ծ.Դ.	Անաստարիոս ուղ-
	գիանոս) .			ղաժառ :

ամբ

ամբ

- ՃԵ . ՍԵՐՈԽԻՈՍ ՀԵՐԵ-  
ՎԻՆԱՅ .
- ՃԶ . ՍԵՐՈԽԻՈՍ ՀԵՐԵՎԱ-
- ՃԵ . ՎԵԼԲԱՆ .
- ՃՀ . ՅՈՎՀԱՆՆԵՍ .

ՃԹ . ՊԵՄԲՈՍ .

- Կ . ՄԱՂԱՐ . ԱԱ ԱՎԱ-
- ՀԵԼԵՎ ՀԱՅ ԱՎԱ-
- ԴԱՎԱՅԻՆ .

ԿԱ . ԵԼԱՄԱԾԵՍ .

Վինչեւ ցայժմ գրեցաք զաթոռակտլըս  
հինգ աթոռոցս , զի կային 'ի նոցանէ ոմանք  
որք ողջ ունեին զուղղափառութիւն , և դեռ  
սակաւ էր չարն : Խոկ վասն զի Վարտինոս  
հռոմայեցի յաւել 'ի վերսն Քաղկեդոնի , և  
հաստատեաց զհաւատսն Յովհաննիսի գրա-  
մատի և զԱքսիմոսի , և բազմապատկեալըդ-  
չարն 'ի վերայ երկու բնութեանն՝ առաց եր-  
կու կամն և երկու ներգործութիւննան , և  
վասն բուռն իշխանութեանն Հոռոմոց տա-  
րածեցաւ անօրէնութիւնն յասացեալ ա-  
թոռքս , և չմնաց յոյս բժշկութեան և միա-  
բանութեան սիրոյ առ միմեանս . այսուհե-  
տեւ զինչ հարկ է մեզ գրել զօտարացեալսն ,  
զի ոչ կոչել արժան է մեզ զնոսա հայրապետս ,  
և ոչ թուել զնոսա 'ի շար առաջին սրբոցն ,  
և ոչ զապականեալ նիւթսն դնել 'ի վերայ  
սուրբ հիմանն :

Այլ եթող մեզ շնորհ գթութեանն Քը-  
րիստոսի զաւակ կենդանութեան և սերմն  
ազնուական աճման սրբութեան զկոյսն սուրբ՝  
զեկեղեցին Հայաստանեայց , զմնեալն յա-  
նախտ արմատոյն և զպատկերեալն 'ի նմին

իսկ ՚ի Փրկչէն մերմէ անդրանիկ հաւատով  
 ՚ի ձեռն Ըրգարու , որ ունէր զայս և զԱ-  
 սորիս թագաղարդեալ ճօխութեամբ , և նրա-  
 տէր ՚ի Վիջագետս յիւռհա քաղաք , թագա-  
 ւորեցուցեալ ՚ի կողմն արեւելից զԱնաւ-  
 տրուկ քեռորդի իւր , որ և խնդրեաց ՚ի ձե-  
 ռըն հաւատոց և զերկնաւոր արքայութիւնն-  
 Քանզի լուաւ նա զլուր սքանչելեաց Տեառն  
 մերց Յիսուսի Քրիստոսի զոր կատարէր յեր-  
 կիրն Հրեաստանի , և առաքեաց թղթով  
 զԱնանէ հաւատարիմ իւր՝ արամքը առ Տէր  
 աղաչել զնա գալ առ նա և թագաւորել ընդ  
 նմա ՚ի յիւռհա անհոգութեամբ , և ապրիլ  
 ՚ի սպանող և յապստամբ ազգէն Հրեից : Եւ  
 զայս մարդարէացաւ կանխսագոյն Արեմիա և  
 ասէ . « Յաւուրսն յայնոսիկ եկին արք տասն  
 յիշուսազէմ խնդրել զՏէր կարօտութեամբ  
 ՚ի սէր Ծերմանթեանն : » Եւ զայն յիշէ Յովլ-  
 հաննէս աստուածաբան և ասէ . « Վատեան  
 առ Փիլիպպոս և ասէն . կամիմք զՅիսուս տե-  
 սաննել . և Փիլիպպոս ասէ ցԱնդրէաս , և Անդ-  
 րէաս և Փիլիպպոս ասէն ցՅիսուս : Եւ Յի-  
 սուս պատասխանի ետ և ասէ . Եհաս ժամզի  
 փառաւորեսցի Արդի մարդոց : » Այսինքն թէ՝  
 արքայն հեթանոսաց երաց գուռն հաւատոց  
 ամենայն աշխարհի փառաւորել զիս : Եւ  
 դարձեալ զիսան նշանակեալ թէ եկեալ հա-  
 սեալէ ժամանակ չարչարանաց իմոց զոր աստ

կատարելոց եմ. և չէ ժամ գնալոյ աստիւ : Եւ Հրամայեաց Յօռւմայի առաքելոցն գրել պատասխանի Աբգարու . և երանեաց զնա և խոստացաւ յետ յարութեան իւրոյ առաքել առ նա զմի յաշակերտաց իւրոց բժըշկել զնա ՚ի ցաւոցն զօք ունէր . և տալ նմա և աշխարհին իւրոյ կեանս յաւխտենականս և անտրտումն . զոր և արար իսկ , առաքեաց զմագեսո , որ եկն ՚ի Վեսարիա Հայոց զառաջինն , և արկ անդ հիմն եկեղեցւոյ . և ձեռ նադրեաց անդ եպիսկոպոս Յօհափիիլէ անուն , և գնաց ՚ի Ալոհա , և միլտեաց զթագաւորն և զամենայն քաղաքն , և զբազումն ՚ի դաւառացն շուրջանակի . և հաստատեաց եկեղեցիս , ձեռնադրեաց իւր փոխանորդ զԱղգէ , և առեալ թուղթ առ Աանատրուկ և ՚ի գաւառուն Հայաստանեաց ընդ կողմամբ քըն արեւելից գնաց , և կատարեցաւ վկայութեամբ ՚ի Աանատրկոյ , թողեալ իւր փոխանորդ անդ զոմսնս Օաքարիա և Վշենտոս անուն : Քանզի յետ սակաւ ժամանակի մեռաւ Աբգար , և անհոգացաւ Աանատրուկ , և սպան զԱռաքեալն :

Եւ յետ այնորիկ Իարբթողմէոս գնացեալ ՚ի նոյն վիճակ Հայաստանեաց , և ՚ի նոյն թագաւորէ կատարեցաւ . և յայնժամ բարձաւ համարձակութիւն հաւատացելոցն . սակայն ոչ սպակասեաց հաւատն հիմնարկեալ առա-

քելսկան , մինչեւ 'ի դալն Հռիփոխմեանցն և 'ի հաւատալն Տրդատայ արքայի 'ի հմբին ցեղէ Արդարու երանեցելոյն 'ի Տեառնէ , 'ի ձեռն մեծահանդէս նահատակին Դրիգորի , սքանչելի և նորանշան և տիեզերալուր վկայի . որ և առեալ զաստիճան Առաքելոցն սրբոց թագէի և Իարթողոմէի , ելից զպակասութիւն նոցա , լուսաւորելով ծայրէ 'ի ծայր զամենայն Հայաստանեայս և զտունն Արաց և զաշխարհն Աղուանից , և զամենայն գաւառոն շուրջանակի Հայոց ելից գիտութեամբ ճշմարտութեանն . և փոխեցին ըստ կարգի որդիք նորա զհաւատս ճշմարիտս և զվարս նորա զամբիծս , և զեահատակութիւն նորա հանապազորդ ժրաջան ճգնութեամբ և անաշառ յանդիմանութեամբ , զանցաւորս պատուիրացն Աստուծոյ , խօսելով և խորհելով յօրէնո Տեառն 'ի տուե և 'ի գիշերի :

Եւ թէպէտ և սրբութեամբ արեանտառուք նորա , սլարկեշտութեան զաւակքն ժամանակաւ զտեղի առին , այլ սերմն հաւատոյ նորա ուղղափառութեան , և ըստ հոգւոյ ծնունդքն նորա արմատացեալ եկաց և մնաց յաւիտեան , նախանձտւոր գործոց բարտւթեան , և անցաղթելիք 'ի պէսպէս պատահմանց և 'ի գիպուածոց մնացեալք . կացեալք 'ի փոփոխական ժամանակս անփոփոխութը , զորս ոչ պատրեաց փառքն Յունաց

զիւրաթառամն զօր խոստանային նոցա . և  
ոչ գոռողական խրոխտալն նոցա որ ՚ի ժամա-  
նակի բարձրութեան խւրեանց սպառնային -  
այլ յոււսովին Աստուծոյ և յազօթս մեծի | ու-  
սաւորչին տեւեցին և մնացին յառաքելադիր  
հիմանն : Եւ թէպէտ սակաւք ՚ի նոցանե-  
տկարացան ըստ տեսլեան սրբոյն Գրիգորի ,  
այլ արմատն նոցա անփտելի և առողջ կտցեալ՝  
տարածեցաւ վերստին կենդանութիւնն ան-  
մահական հաւատոյն . և եղեն մեզ ՚ի միսի-  
թարութիւն և ՚ի սփոփանս և ՚ի վկայութիւ-  
ն : Եւ թէպէտ և աթոռն Աղեքըսանդրու յԱ-  
գիպտոս և ամենայն Եթեպիտիա և Հնդկաս-  
տան , ազգքն ընդարձակ և բազմաթիւ և  
թագաւորութիւնք և ճոխութիւնք և փար-  
թամաւթեամբ քան զամենեսեան զանազա-  
նեալք , այլ վասն զի նոքա և հեռաւորք և  
բացականք են , անկարանան զգլուխս մեր  
բարձրացուցանել , և զպարծանս մեր աճե-  
ցուցանել ՚ի Քրիստոս : Իսկ սոքա բազում  
եղեն մեզ նպաստամատոցք և ձեռնտուք ,  
և զրեթէ նոքօք կարացաք տեւել այն ամե-  
նայն անցյից որք եկին ՚ի վերաց մեր , և եղեն  
մեզ սիւն և հաստատութիւն . և ուխտ խա-  
զազութեան և դաշն սիրոյ է ՚ի միջի մերում  
մինչեւ յաւիտեան . վասն որոյ և մեր սկսեալ  
զիսորհուրդ քահանայութեանն յԱստուծոյ  
Հօրէ , կատարեսցուք ՚ի նոցա քահանայու-

թիւնն, որ ըստ կամացն Աստուծոյ կայ և մը-  
նայ յաւիտեան :

Եւ քանզի երեք Առաքեալք մոխն ՚ի  
Հայք, թաղէոս և Շարթողոմէոս և Յուդա  
Յակովբայն . և թէպէտ զառաջինն թաղէոս  
եկն և ապա Շարթողոմէոս և Յուդա, այլ  
զի ոմանք ասեն թէ թաղէոս ՚ի յեւթանաօ-  
նիցն է, վասն այնորիկ դիցուք գլուխ քահա-  
նացութեան նոցա զՇարթողոմէոս և ապա  
զթաղէոս և ապա զՅուդա և զայլ առաջ-  
նորդսն ըստ կարգի, և շնորհօքն Աստուծոյ  
հասուացուք մինչեւ առ մեզ, և ՚ի նոսա վր-  
ձարեսցուք զասպարէղ աշխատութեանս մե-  
րոյ, և հանգիցուք ՚ի նաւահանգիստ յուսոյ  
խոստմանն Աստուծոյ, որ է սկիզբն և աւարտ  
ամենայն բարեաց, որ է օրհնեալ յաւիտեանս  
յաւիտենից :

Ա. ՇԱՐԹՈՒՈՄԵՈՍ առաքեալ, մի յերկո-  
տասանիցն :

Բ. ԹԱԴԻՈՍ, զոր Աւետարանն պատմէ՝  
թէ զառաջինն կոչէր ՚Ներեոս, և ՚ի Տեառնէ-  
անուանեցաւ թաղէոս :

Գ. ՅՈՒԴԱ Յակովբայն, որ և սա յերկո-  
տասանիցն վկայի և կայ յԱրմի քաղաք Հայոց :

Դ. ԱՄՈԽ որդի Յովհեփու եղբայր Տեա-  
ռըն մերոյ, և սա քարոզեաց ՚ի Հայս . և ան-  
գէն կատարեցաւ, և կայ յԱրմի քաղաք  
Հայոց :

ե. ԵՐԿՐԵ և ԽԱԴ. Երկոքին սոքա յեւ-  
թանասնիցն են, և գնացին ՚ի կողմանս Ա-  
զգուանից հրամանաւ թագեի, և անդ կա-  
տարեցան :

Զ. ԹԻՇՈՓՏԼՈՍ, առաջին ձեռնադրութիւն  
թագեսսի ՚ի կեսարիա Հայոց ՚ի կապադով-  
կիա :

Է. ԱՐԴԻ, կերպասագործ արքային Ար-  
գարու, զոր կացոյց ՚ի Արքագետս յիւռհա-  
քաղաք :

Ը. ՕԱՔԱՐԻԱ, զոր ձեռնադրեաց յարե-  
ւելս փոխան ինքեւան, և ասաց՝ զսա ետու  
ձեզ վարդապետ, զոր ելից հոգին Տեառն :

Թ. ԹԻՄՈՒՆ, մի յեւժանասնիցն, որ գր-  
նաց հրամանաւ թագեի ՚ի մեծն Հայք, և ՚ի  
կողմանս հրւսիաց. և լուեալ զմահն Արգա-  
րու, դարձաւ և եմուտ ՚ի փոքր Արւնիք, և  
կրօնաւորեալ անդէն ծածկաբար՝ վախճանե-  
ցաւ, և ուեղին շինեցաւ վանք և յանուննո-  
րա կոչեցաւ :

Ժ. ԱՈՒՐԲՆ ԳՐԻԳՈՐ, ԸՆԿԱՆՈՐԻԾՆ բովան-  
դակ Հայաստանեաց, զամա 30 :

Ճ. ԱՈՒՐԲՆ ԱԽՏԱԿԵՍ, կրտսեր որդին սըր-  
բոյն Գրիգորի որ ՚ի ժողովին մեծ էր, ամս 7 :

Ճ. ՏԵՐ ՍՈՒՐԲՆ Վ ՐԹԱՆԵՍ, Երեց որդին  
մեծին Գրիգորի, ամս 17 :

Ճ. ՏԵՐ ՍՈՒՐԲՆ ՅԱՒՍԻԿ, որդին Վ ՐԹԱ-  
ՆԱՅ, ամս 6 : Եւ Գրիգորիս Եղբայր նորա Ա-

զուանից կաթողիկոս Եկաց՝ 6 ամ։

ԺԴ. Տեր Փառշերսէն, ՚ի գաւառէն Տարօնոյ, յԱշտիշառոյ, ամս 3։

ԺԵ. Տեր Սուրբն Ներսէս, որդի Աթանագինեայ՝ որդւոյ Յուսկանն, ամս 34։

ԺԶ. Տեր Յուսուկ, զոր կացուցին զինի մահուան սրբոյն Ներսէսի, ամս 4։

ԺԷ. Տեր Օսեկն, զինի Յուսկանն կալեալ զաթոռն ամս 4։

ԺԸ. Տեր Շահակ, եղբայր Օաւենի ՚ի Մանծկերտոյ, ամս 6։

ԺԹ. Տեր Վսպուրակէս, եղբայր Շահակոյ և Օաւենի, ամս 7։

Ի. Տեր Սուրբն Ասճակ Պահլաւ, որդի սրբոյն Ներսէսի, թոռն Յուսկանն, ամս 50։ Եւ աստ կատարեցաւ ցեղն սուրբ Գրիգորի։

ԻԱ. Տեր Վուրժակ, հակառակաթոռ սըրբոյն Ասհակայ, ամ մի։

ԻԲ. Տեր Բարդուսու, ազգաւ Վսորի, ամս 3։

ԻԳ. Տեր Աւտուել, նոյնպէս Վսորի ազգաւ, ամս 3։

ԻԴ. Տեր Սուրբն Յուսէֆ, յաշակերտացն սրբոյն Ասհակայ, ամս 3։ Աս վկայեաց Քրիստոսի, ՚ի Յաղկերտէ Պարսից թագաւորէ ընդուրբ Ղեւոնդեայ։

ԻԵ. Տեր Գիւտ, վանանդացի, ՚ի գեղջէ Օթմու, ամս 10։ Աս եղ զաթոռն ՚ի Դըմին քաղաքի։

Իշ. Տեր Յովհան Մանդակունի հողելիքը, ամս 6։

Իշ. Տեր Բաբկէն, վանանդացի, ամս 6։  
Յաւուրս սորա ամենայն Յօնիք և Վ իրք նը-  
զովեցին զժողովն Քաղիեղոնի, ամս 43, յա-  
ւուրս Օննոնի և Վնաստասայ թագաւորաց։

Իշ. Տեր Աւտուել, ՚ի գեղջէ Արձկէց, ամս 10։

Իթ. Տեր Մուշէ, ՚ի գաւառէ Կոտէից,  
՚ի գեղջէ Այլաբերից, ամս 8։

Լ. Տեր Անձակ, ՚ի Հարքաց, ՚ի գեղջէ  
Աւզկաց, ամս 5։

Լ. Տեր Քրիստափոր, ՚ի Բագրեւանդաց,  
՚ի գեղջէ Տիրառձոյ, ամս 6։

Լ. Տեր Դեմոնդ, ՚ի գաւառէ Առու-  
բերանաց, ՚ի գեղջէ Առեատոյ փոքու, ամս 3։

Լ. Տեր Ներսէս, ՚ի Բագրեւանդաց,  
՚ի գեղջէ Աշտարակաց, ամս 9։

Լ. Տեր Յովհաննէս, ՚ի Գաբեղէնից,  
՚ի գեղջէ Անեղոց, ամս 17։

Լ. Տեր Մագսէս, Արագածոտանէ, ՚ի  
գեղջէ Եղիլարդաց, ամս 30։ Ի տասն ամի  
սորա եղաւ թուականա Հայոց։

Լ. Տեր Աբրահամ, Արշտունեաց, ՚ի  
գեղջէ Աղբաթօնից, ամս 23։ Յաւուրս սո-  
րա Վ իրք ՚ի բաց կացին ՚ի միաբանութենէ  
Հայոց, և եղեն ընդ Յօնիք Կիւրիոնիւ։

Լ. Տեր Յովհաննէս, ՚ի Գոկովտաց, ՚ի

գեղջէ Բագարանէ, ամս 26: Այս եղ ամոռ  
՚ի կոտայսն, յաւուրս Ա'օրկայ թագաւորի:

ԱՅ. Տեր կոտայսան, ՚ի գեղջէ Աղջից, ա-  
մլս 26. շինող:

ԱՅ. Տեր Քրիստոֆոր, Աղջատ տանէ,  
Աքրահամեան անուանեալ տոհմէ, ամս 4:

Ի. Եջբ. ՚ի Եգայ, որ տգիտութեամբ  
և կաշառօք հաւանեցաւ Հերակղի և քաղ-  
կեդոնիկ եղեւ, բայց մեծ մասն Հայոց և  
վանորայքն անշարժ մնացեն:

ԻԱ. Տեր Ներսես, շինող մեծ եկեղե-  
ցւոյն ՚ի Վաղարշապատ, և սրբոյն Սարգսի  
՚ի Դուին, և ՚ի Վիրապին:

ԻԲ. Տեր Առաքեան, ՚ի գեղջէ Ակոռւոյ,  
ամս 6:

ԻԳ. Տեր Խորաթել, ՚ի Վանանդոյ, ՀՕթ-  
մուռ գեղջէ, ամս 10: Այս էհան զԱերսէս ՚ի  
Պարտաւայ կամօք Աղուանից:

ԻԴ. Տեր Ասէակ, հայրենեօք ՚ի Զորո-  
փորոյ, ՚ի գեղջէ Արքուայ, ամս 25: Այս կա-  
տարեցաւ ՚ի խառան:

ԻԵ. Տեր Եղիշ, ՚ի գաւառէ Աղէովտոյ,  
՚ի գեղջէ Արքիչոյ, ամս 13:

ԻԶ. Տեր Յուհաննես իմաստասէրն և  
ոքանչելագործն, Ալեձնոյ, ամս 11: Այս ջըն-  
չեաց զպղարումն Եղիշ յամենայն Հայոց:

ԻԷ. Տեր Դաւիթ, ՚ի գաւառէ կոտա-  
յից, ամս 13:

ԽԸ. Տեր ՏԵՒԱՏ, ՚ի Վանանդայ, ՚ի գեղը չէ Օթմառու, ամս 23:

ԽԹ. Տեր Արք, յեպիսկոպոսութենէն մնեալ ՚ի կաթողիկոսարանն, ամս 8:

Ճ. Տեր ԵՍԱՅԻ, ՚ի Նդայ, ՚ի գեղը Եղապառըցոյ, ՚ի Նոյն Հայրապետանոցին սրնեալ ՚ի տղայութենէ, ամս 13:

ՃԱ. Տեր ԱՏԵՓԱՆՈՍ, ՚ի Դւնայ, այր սուրբ և գիտնական, ամս 2:

ՃԲ. Տեր ՅՈՎԱՔ, Աթոտանէ կիւրապաղատին, ամիսս 6 միայն:

ՃԳ. Տեր ԱՌԱՄՊՈՎՆ, ՚ի Դեղաբրունեաց Գառնոյ<sup>(1)</sup>, ամ մի:

ՃԴ. Տեր ԳԵՂԻՐԴ, Արագածոտանէ, ՚ի բիւրակեան գեղը, ամս 4:

ՃԵ. Տեր ՅՈՎԱՆԻՔ, Արագածոտանէ, ՚ի մայրաքաղաքէ Եկեղեցւոյն սրբոյն Գրիգորի, ամս 11:

ՃԶ. Տեր ԴԵԿԻԹ, ՚ի Մազազայ, ՚ի գեղը կաղկազայ, ամս 27:

ՃԷ. Տեր ՅՈՎԱՆՆԵՍ, ՚ի Կոտէից, ՚ի գեղը Ավացից, ամս 22:

ՃԸ. Տեր ՕԱԳԱՐԻԱ, ՚ի Կոտէից, ՚ի գեղը Չագ կոչեցելոյ, ամս 22: Ամա ալամ ետ Յիսէ, խաչքառնալ ՚ի վերայ նորա:

ՃԹ. Տեր ԳԵՂԻՐԴ<sup>(2)</sup>, ՚ի Գառնոյ, ամս 21:

(1) Յօրինակիս ՚ի գիւղ որէն գտնուայ:

(2) Յօրինակիս սխալմամբ գնի Տեր Գրիգոր:

Յաւուրս սորա թագաւորեաց Աշոտ բագրատունի : Այս ըմբռնեաց ՚ի գերութիւն, և եհան զսա թագաւորն Աղուանից Համամ :

Կ . Տեր Մաւրոց, խոտաճարակն, ամիսուն :  
ԿԱ . Տեր Յովանանէս, ամս 6 (1). ՅԽԶ թւականին Հայոց :

ԿԲ . Տեր Երամէկ . ամս 7 :

ԿԳ . Տեր Թիոդորոս . ամս 7 :

ԿԴ . Տեր Վասնա . ամս 23 : Այր բարի և կատարեալ և լիեալ ամենայն առաքինութեամբ :

ԿԵ . Տեր Անդրեանոս . ամ մի :

ԿԶ . Տեր Արգիս . ամ մի : Այս կամաւեթող զհոգս հայրապետութեան, պարապելով աղօթից :

ԿԷ . Տեր Պետրոս : Օսա հանին և եղին ՚ի բանտի , և եղաւ Դիոսկորոս հոսքն Աստահնին , և յետ միոյ ամի կաթողիկոսն Աշղուանից դարձոյց յաթուն իւր :

ԿԸ . Տեր Խաչիկ . ամս 2 : Այս քեռորդի էր Պետրոսի , և երկուքն մեռան ՚ի Յունաց աշխարհն :

ԿԹ . Տեր Վահրամ, որդի Գրիգորի Մագիստրոսի : Այս գնաց ՚ի կոստանդինուպոլիս ՚ի թարգմանութիւն , և անտի ՚ի Այր , և դարձաւ , 40 ամ կեցեալ յետ ձեռնադրութեանն :

(1) Միւս թարգմանութիւնն ուղղագոյն և օգնել ամս 28:

Հ. Տեր Գրեգոր, ամս 3, զինի Վահրամաց :

ՀԱ. Տեր Բարսեղ, ազգական տէր Վահրամաց, տեղապահ և կաթողիկոս կամաւ Տեառն Վահրամաց յետ գնալց նորա ՚ի թարգմանութիւն, ամս 12 :

ՀԲ. Տեր Գրեգոր, ազգական տէր Վահրամաց և տէր Բարսեղի, ամս 54 :

ՀԳ. Տեր Անդրեաս, շնորհաւորեալն վարդապետութեամբ, եղբայրն Տեառն Գրիգորի, ամս 7 : Աս արարյուղով երդո շարականաց :

ՀԴ. Տեր Գրեգոր, եղբօրորդի նոցա, ամս 20 : Աս շինեաց զեկեղեցին գեղեցկապաճոյն յանունն արբայն Գրիգորի :

ՀԵ. Տեր Գրեգորիս Տշայն, որ գիւղուածով վախճանեցաւ :

ՀԶ. Տեր Գրեգորիս Ապիրատն կոչեցեալ, ամս 7 : Աս ուներ բան վարդապետութեան :

ՀԷ. Տեր Յովաննես, ոյր մեծամիտ և յաղթասէր, ամս 18 :

ՀԸ. Տեր Կոստանդին, յերրորդ մասնէ ձայոց, ՚ի գաւառէ և ՚ի դղեկէ Ապրձքերդոյ, որ հայի ընդ հարաւ ՚ի դաշտն Ափեկիոց և ՚ի ծովին իւր Աղքիանոս կոչեցեալ : Արդի առն արդարոյ և օրինապահի՝ Վահրամանուն կոչեցելց . յորովայնէ ընտրեալ ՚ի շնորհս և յաստիճան առաքելական . որ

և օրինօք և վայելչական կենցաղավարութեամբ ճանապարհորդեալ՝ ի պատիւն բարձրագոյն, այսինքն վանից առաջնորդութեամբ և եպիսկոպոսութեամբ նախակրթեալ յառաջագոյն, արժանաւոր վարուք յաչս Առտուծոյ և մարդկան. վասն օրոյ և շնորհն կոչեաց զարժանաւորն իւր յոլով թախանձանօք բռնադատեալ յեկեղեցականաց և յաշխարհականաց, յիշխանաց և յիշխեցելոց, ժառանգեաց զաթոռ սուրբ Առւսաւորչին Գրիգորի, և միաբանեալ ընդ շնորհին յերկարեցաւ՝ ի գործն յոր կոչեցաւ: Եւ է այժմ քսան և հինգ ամ հայրապետութեան տորա, յանառիկ ամրոցիս Հռոմիլայն անուանելոյ. խաղաղութիւն կալեալ առհեռաւորս և մերձաւորս, վկայութիւն բարի և գովութիւն բազում յարտաքնոյն առեալ, և աղօթս առ Աստուած և փափագբաղձանաց յընտանեացն ազգացն Հայաստանեայց, յորոց վերայ հայրենի աղետիւք խնամարկէ, փարելով զամենեքումքը աղեխարշեալ յալքատս, յորբս և յայրիս առատաձեռնութեամբ: Եւ առ գերեալս անխնայ ծախիւք գարձուցանելով. ի վերայ զերծելոյն թեարկելով նման հաւու ի վերայ ձագուց՝ զանցուցանելով զմարմնական ծնօղաց գթովք, զարդարելով և պՃնելով զնոսայամենայնի: Որ և արար զանձն հաղորդ ա-

մենայն երկեղածաց Աստուծոյ հաւատով  
և պէսպէս ծախիւք ՚ի վանօրայս և յանա-  
պատս , պիտոյիւք և զարդիւք եկեղեցւոյ :  
Յորոց վերայ յաւել և զայս մատեան , և ետ  
փոխել յասորւոց ՚ի հայս , զոր վճարեսցէ  
Աստուծած բազմապատիկ փոխարինիւ աստ  
և ՚ի հանդերձեալն :

Որ թէպէտ և գրեալ ունիմք զժամանակս  
Աղամայ հետէ , այլ այնք ՚ի բաղում գրեանս  
տարածեալ կան և յոլով աւուրց կարօտանամք  
ընթեռնլոյ . իսկ այս ՚ի բաղում պատմա-  
գրաց հաւաքեալ և համառօտեալ , ախոր-  
մելի և պիտանի է ու առումնասիրաց : Օ ի ոչ  
որպէս այլք ՚ի պատմագրաց մեկուսի գնայ  
ընդ ազգ մի կամ ընդ թագաւորութիւն մի ,  
և կամ առկաւ ինչ տանելով զբանն բովան-  
դակէ թուով սուղ ժամանակաց . այլ սա  
բուռն հարկանելով զԱստուծաշունչ գրոց՝  
բերէ պիդապէս , քաղելով դամենայն աշ-  
խարհաց և զժագաւորութեանց զրոյց ՚ի մի  
շար . և յամենայն ժամանակաց վերայ քայ-  
լելով զարժանաւորսն յիշատակի հաւաքե-  
լով հատուցանէ մինչեւ առ մեզ : Եւ բա-  
զում բանս անծանօթս գտաք ՚ի սմա , և յո-  
լով տարակոյս մեր լուծաք . վասն որոյ զյո-  
լովիւք զանց արարաք զոր առ մեզ գիւտ էր ,  
և ոչ գրեցաք՝ զի մի աւելորդս թուիցիմք  
աշխատել . և էր որ կրկնեցաք զայլոց գրոց

ասացեալն կարծառօտիւք՝ վասն զտեղին ընլոյ և զոհն պահելոյ : Եւ ընդ անծանօթ բանիցն որ աստ` մի՛ զարմասցուք և սուտ կարծեսցուք . զի ազգն Ասորւոց մօտաւոր և ընտանի է միշտ լեալ Հրեից աշխարհաւ և աղքաւ և լեզուաւ , քան զամենայն աղքս և յարուեստից իմաստնոց (<sup>օ</sup>) , և վարժք ՚ի յուսումն . զի և ինքեանք Քաղդեացիք են , և որպէս աստ գտանես՝ առաջին լեզու և դիր՝ Նաեւ որ զայս քաղածոյս աշխատեալ է Տէր Վիխայէլ , ՚ի Յունաց և Աշդիպտացւոց և Աշբրայեցւոց և ՚ի Հոռոմայեցւոց և յէսորւոց պատմագրաց է ժողովեալ , վասն որոյ առաւել սիրելի և հաւատարիմ է . որոյ յիշատակն օրհնութեամբ յեկեղեցիս , և վարձըն բաղմապատիկ առաջի Աստուծոյ :

Երդ՝ ՚ի յամի անժամանակն Աստուծոյ ընդ ժամանակաւ լինելոյն ԱՄԻԾ (1248) թըւահամարութեանս , և ՚ի ՊՂԵ թուաբերութեանս Հայոց , փոխեցաւ գիրքս այս յասորւոց ՚ի հայս հրամանաւ Տեառն Կոտանդեայ , ՚ի քսան և հինդ ամի հայրապետութեան իւրօյ , և ՚ի քսան և հինդ ամի թագաւորութեան Հայոց Հեթմայ . որոց Տէր Աստուած փառաւորեսցէ զհոգիս նոցա , և առը հայրապետացն և թագաւորացն պակալից և թագակից արասցէ յիւր արքայութիւնն . որում փառք և զօրութիւն

և երկրպագութիւն ամենասուրբ Երրորդութեան, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

---

Յիշատակարան Երկրորդ :

ԲԱՇՄԱԴԻՄԻ է շնորհք մարդասիրին և բարերարին Աստուծոյ առ ազգս մարդկան, զի յորդորէ հանապաղ զընութիւն մարդոյ ՚ի գործս բարիս և ՚ի շինութիւն հաւատոյ, այսինքն ՚ի սէր և ՚ի պարծանս ամենասուրբ անուան իւրոյ . վասն զի որպէս ինքն Արարիչն և ամենազօրն Աստուծած բնութեամբ բարի է, նոյն և սիրող է բարեսիրաց և բարեգործաց ազգի մարդկան, ըստ այնմ որ ասէ . «Բարի առնէ տէր բարեաց . » և դարձեալ թէ՝ «Բարի է Աստուծած և բարեաց արժանաւորացն տուող : » Եւ արդ զի՞նչ է սլտուղն բարւոյն, եթէ ոչ խաչն և եկեղեցին և գիրքն, որով յորդորին աստուծածասէր և բանաւոր մարդիկ գործել և սիրել զբարիս վասն յիշատակի և փոխարինի հանգերձելոցն բարեաց : Վասն զի ոմանք շինեն եկեղեցիս՝ հրեշտակաց բնակարան և մարդկան քաւարան : Ամանք կաղմեն խաչս յոսկւոյ որբոյ, և զարդարեն պատուական և պայծառ ակամքք վասն յիշատակի և սիրոյ խա-

չելոյն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ  
արար խաղաղութիւն յերկինս և յերկրի ա-  
րեամբ խաչին իւրոյ։ Ոմանք զուգեն գիրք,  
այսինքն գրելով զյիշատակս մարտիւրոսաց  
յաղադս բարեխօսութեան առաջի ահեղ  
ատենին Քրիստոսի։ Ոմանք արձանագրեն  
զյաղթութիւն և զպատերազմունս թագա-  
ւորաց աշխարհակալաց, յուշ առնելով ազ-  
գի մարդկան առ ժամանակ մի լինել զթա-  
գաւորութիւն մահկանացու թագաւորացս,  
իսկ անմահ թագաւորին Քրիստոսի Աստու-  
ծոյ մերոյ թագաւորութիւնն անանց և յա-  
ւիտենական։

Արդ՝ ես նուաստս յամենայնի Ատեփան-  
նոս հայր Ականց անսպատիս, ետու գրել  
զպատմութիւն Տեառն Ակիսյելի պատրի-  
արքի Ասորւոց, զոր է գրել ծայրապաղ Ա-  
դամայ մինչեւ 'ի ծնունդն Քրիստոսի Աս-  
տուծոյ մերոյ, և 'ի ծննդենէն Քրիստոսի մին-  
չեւ 'ի Հայոց թուականին ՈՀԸ. և զպատմու-  
թիւն Տաթարին, այսինքն ազգին Նետողաց  
ԽԴ ամաց գործելոց մինչեւ առ մեզ վասն ի-  
մանալց զանցաւորութիւն սուտ և պատրող  
կենցաղոց ընթերցողացդ և լսողացդ. զի ոչ  
թագաւորութիւն, ոչ իշխանութիւն, ոչ  
այլ ինչ արարածական մնալց է յայսմ աշ-  
խարհիս, այլ ամենն է ունայնութիւն ու-  
նայնութեանց, որպէս ասաց իմաստունն

Ասղովմնն , անցանելով և տեսանելով զամենայն կենցաղս սուտ և ոչինչ , խաբող և անցաւոր :

Արդ՝ ես եղեելի գրիչ Գրիգոր , աղաւեմ զպատահեալսդ ՚ի սմա , յորժամ ընթեռնոյք զարարածապատում պատմութիւնրս , ասացէք՝ Տէր Աստուած ողորմեսցի հօր Ատեփաննոսի առաջնորդի սուրբ ուխտին Ակներոց և ամենայն ննջեցելոց իւրոց : Ողորմեսցի Քրիստոս Աստուած փակակալ Վարդանայ և ծնողաց իւրոց : Տէր Աստուած ողորմեսցի ամենայն գործաւորաց և սպասաւորաց սրբոյ Աւխտիս , առաջնոցն և միջնոց , այլ և վերջնոցն որ գալոց են զկնի մեր : Ողորմեսցի Քրիստոս Աստուած Կոստանդ և Ախոն քահանայիցն և համաշունչ եղբարցն որ ըզթուղոս կոկեցին : Եւ ՚ի վերայ այսր ամենայնի յիշեցէք յողորմութիւնն Աստուծոյ զտառապեալ գրիչս , զի բազում աշխատանօք և տկար մարմնով գրեցի : . . . Յիշեցէք ՚ի Քրիստոս և զպատուական քահանայն զՅով հաննես , որ զվերջին տետրս գրեաց , զի մեք էաք յոյժ տկար և անխել : Յիշեցէք և զտէր թագէոս ղհայր Աւագ անապատին , որ զօրինակս շնորհեաց : Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս յաւիտենից . ամեն :



## ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆԸ

---

- Արաս Եղբայր Եղիածի 542.  
Արաս Եղբօրորդի Ազգուստահլի 575.  
Արաս որդի Խալիֆայի Եղիստոսի 454.  
Արքանեանք 544.  
Արգար 4 • 85 • 88 • 105 • 421.  
Արշիմելեք քուշացի 54.  
Արդըս Խալիֆայ 451.  
Արդըս որդի Զոպէիրայ 525.  
Արդըս (Ապուլ Արքաս) 545 • 546 • 550.  
Արշէն (Ապուլ Առաջիկ) 545.  
Արշլելեք որդի Մրուանայ 526 • 529 • 530.  
Արշլենի 451.  
Արշլմաւմիք 451 • 440.  
Արշոն 58.  
Արէ (Ս) վ. 225.  
Արէլ 4.  
Արէլք • 220.  
Արիա 43.  
Արիա քահանայազետ. 91.  
Արիամտար 41.  
Արիմելեք 22 • 26 • 37.  
Արիսս 55.  
Արիստ 45.  
Արլաբաս որդի Խոհաբայ 584.

Համառ.օտագիրք • բ. • բերդ • գլ. • գիւղ. գտ., գետ.  
գւ. • գաւառ. • եօլ. • եպիսկոպոս • լ. լեառն. • թգ. • թագա.  
ւոր. • կթ. • կաթողիկոս. • մդ. • մարդարե. • ոլտ. • ոլատուրագ. • ո.  
սուրբ. • վդ. • վարդապետ. • ք. • քաղաք.

(\*) Աստղանիշք ցուցանեն զծանօթութիւնսն .

- Արշաբաս որդի Մուքետատեր Գիլլահայ 578 .  
 Արշաբաս (Ապուլ Արբաս) որդի Մուտաֆիքերայ 577 .  
 Արշաբաս (Ապուլ Սէվուար) 594 .  
 Արշանասը (Ապուլ Մանսուր) 577 .  
 Արքահամ 21—26 . 50 . 76 .  
 Արքահամերեց 233 .  
 Արքահամու (Ա.) վանք 225 .  
 Արքաթոն պատ 240 . 241 \* 320 .  
 Ազ ամեսսոր 51 \*  
 Արքարմիչ ամիրա 408 .  
 Արքիական 46 .  
 Արքամ 2 . 4 . 11 . 15 . 40 . 248 .  
 Արքանիա 41 .  
 Արքիանսոս կայոր 116 . 117 .  
 Արքիանսոս ծով (Կիլիկիոյ) 565 . 597 .  
 Արքիանսուազօլիս 151 \* 578 .  
 Արզոր (Տիգրիս) գտ . 344 .  
 Արզատին (Աղջ էտաթին) 488 . 501 .  
 Արզազ . ք 425 . 478 .  
 Արմաբէկւանք 438 .  
 Արմանաս եպ . Անաւարդց 150 .  
 Արմանաս մետր . Ասորեսց 422 .  
 Արմանաս որդի Կումայի 529 .  
 Արմանաս պտ . Անտիոքայ 287 . 289 . 291 . 299 . 315 . 558 .  
 Արմանաս յոյն պտ . Անտիոքայ 452 .  
 Արմանասիս եպ . 249 . 250 .  
 Արմենացիք . 55 . 60 .  
 Արենք . 51 . 52 . 67 . 157 . 557 .  
 Արիս (Թէովինաս) եպ . 150 . 155 .  
 Արուբաս 50 .  
 Արուբ  
 Արուբիս } ք . 21 . 25 . 59 . 297 . 345 . 455 .  
 Արուբացիք 11 . 23 . 54 . 62 . 515 . 589 . 474 . 494 .  
 Արտաս ք . 294 . 525 . 525 .  
 Արքահամ 65 \*  
 Արտմանք 435 . 498 . 504 \* 524 .  
 Արտնք 11 .

- Ալտիփի (Աղաբիսո) պտ. • Անտիոքայ 582.  
 Ալբասալամ (Ալբ—Արուան) 598 • 400 •  
 Ալեքս կայսր Ա. • 401 •  
 Ալեքս " Բ. • 486 • 489 •  
 Ալեքս վեհաց Հերովդի 97 •  
 Ալեքսանդր 576 •  
 Ալի 525 • 577 • 451 • 454 •  
 Ալինե (Հեղինե) կին Յուլիանոսի 158 •  
 Ալիս գտ. • 450 •  
 Ալիւսան 404 •  
 Ալիխանէ ք. • 54 •  
 Ալմիռն 7 •  
 Ալութըաբուլոս (Ելեւթերուպօլիս) 159 •  
 Ալփատէ 584 •  
 Ակադմն ք. • 54 •  
 Ակակ եպ. • Ամֆայ 164 •  
 Ակակ " Մելիտինու 165 •  
 Ակակ պտ. • Կ. Պօլովի 211 •  
 Ակակ զօրապետ • 267 • 268 •  
 Ակդոն 217 •  
 Ակիւզաս 117 •  
 Ակոփս 55 •  
 Ակրաքանիս 47 •  
 Ահարոն եպ. • Աշմուշայ 221 •  
 Ահարոն (Հարուն ամիրայ) Ծ. 553 • 554 • 557—559 •  
 Ահարոն որդի Ապուսահլի 574 •  
 Ահերման Լ. Ծ. •  
 Ահմատ 375 •  
 Ազապարսո 28 •  
 Ազէքսանդր եպ. • Աւել քաղաքի 220 •  
 Ազէքսանդր " Երուսաղէմի 120 •  
 Ազէքսանդր " Մնդէնայ 166 •  
 Ազէքսանդր Մամեայ 121 •  
 Ազէքսանդր մեծ 50 • 69 • 71 • 77 • 85 • 144 • 588 • 420 •  
 Ազէքսանդր պտ. • Ազէքսանդրիս 151 • 152 •  
 Ազէքսանդրա 85 •

- Աղեքսանդրոս սրբի Յովեաթանու** 84 .  
**Աղեքսանդրոս ո Հերովդի** 98 .  
**Աղիւսիան** 404 \*.  
**Աղորոս** 7 .  
**Աղուբ ասլան** 426 . 430 . 441 . 442 . 444 . 448 . 449 .  
**Աղուբ սրբի Արգլայ** 451 .  
**Աղուշերուց** 521 .  
**Աղուանք** 558 .  
**Աղուսին սրբի Դանիշմանայ** 407 .  
**Աղուրայք** 500 .  
**Աղտադաս** 28 \*.  
**Ամազունք** 17 .  
**Ամակարոս** 7 .  
**Ամաղեկացի** 59 .  
**Ամաղեկ** 55 . 67 .  
**Ամանսոն** 7 .  
**Ամասիա** 48 . 50 . 554 .  
(**Ամարի** { **թգ . Երուսաղեմի** 447 . 450 . 452 . 462 . 467 .  
)**Եմրի** { **474 . 510 \***  
**Ամբակում** 65 . 159 .  
**Ամբիկոս (Անթիմոս)** 250 .  
**Ամբրոսիոս եպ . Միլանու** 156 .  
**Ամերես** 59 .  
**Ամենավիթիս** 29 \*.  
**Ամիթք** 158 \* 216 . 225 . 256 . 411 . 448 . 488 . 491 .  
**Ամինադաբ** 59 .  
**Ամիր Խազի** 409 . 410 . 412 .  
**Ամիր Միրան** 491 .  
**Ամկալոս** 45 .  
**Ամդիկոս եպ . 160 . 205 .**  
**Ամման** 27 .  
**Ամմինացիք** 55 .  
**Ամափիթիս** 29 .  
**Ամաղիս** 52 \*.  
**Ամն թգ . Յուդայ** 60 . 345 .  
**Ամն ուռհայեցի** 249 .

- Ամուլսոս 52 .  
 Ամուկասոս (Ամենեմէս) 57 .  
 Ամուտոս բ . 422 .  
 Ամուտոս (Ամենտոս) 69 .  
 Ամուրիա ք . 555 . 542 . 572 . 592 .  
 Ամրամ 28 .  
 Ամրի 44 .  
 Ամիթալէս 150 .  
 Անանէ գեսղան Արգարու 106 .  
 Անանէ քահանայապետ . 91 .  
 Անանիա եալ . Մերտինոյ 558 .  
 Անանիա վր . 225 .  
 Անանեանց (Ս) վ . 225 . 258 .  
 Անաստաս աբեղայ 201 .  
 Անաստաս երեց հերձուածող 164 .  
 Անաստաս զօր . 261 .  
 Անաստաս կայսր Ա . 2 . 213 . 214 . 218 .  
 Անաստաս \* Բ . 554 .  
 Անաստասիտ (եկեղեցի) 154 .  
 Անաստասուղօլիս . տես Տարա .  
 Անարքոն ք . 8 .  
 Անաւարդա ք . 228 . 425 . 446 .  
 Անգէաս մգ . 67 .  
 Անգղիացիք 499 .  
 Անդիրիւրոս եալ . Անաւարդայ 219 .  
 Անդրէ \* Սամաստիոյ 166 .  
 Անդրէաս թդ . Ունկարիոյ 508 .  
 Անդրոնիկոս զօր . 426 . 445 . 455 . 488 .  
 Անդրոնիկոս պատմիչ 21 . 90 .  
 Անէս և Ամրէս 29 . 555 .  
 Անժառապ ք . 430 . 478 . 514 .  
 Անժիմոս կայսր 208 .  
 Անժիմոս պտ . կ . Պօլսի 256 . 241 . 248 .  
 Անժիսպատրոս 74 .  
 Անժիսպատրոս հայր Հերովդի 86 .  
 Անժիսպատրոս որդի Հերովդի 98 .

- Անիք. 442.  
 Անիսու 58.  
 Անիսոս աղեքսանդրացի 195.  
 Անկիւրիսք. 284. 558. 572.  
 Անկլիթեր 499.  
 Անկոս Մարկոս 61.  
 Անոկտիոս պամփիլացի 179.  
 Անտիգոնոս Թգ. Մակեդոնիոյ 75.  
 Անտիռք. ք. 42. 50. 75. 80. 85. 123. 136. 141. 145.  
     150. 153. 155. 206. 219. 227. 241. 257. 284. 300.  
     379. 585. 598. 405. 410. 425. 448. 463. 498.  
 Անտիոք Պիոսիդեայ 534.  
 Անտիոքոս Ա. 50. 75.  
 Անտիոքոս Ազրիակոս 85.  
 Անտիոքոս Դաստիարակ Թէոդոսի փոքու 162.  
 Անտիոքոս Եպիփանէս 80. 81.  
 Անտիոքոս Կիւզիքոս 84.  
 Անտիոքոս մէծ 78—81.  
 Անտիոքոս որդի Աղեքսանդրայ 85. 88.  
 Անտիոքոս որդի Յովհաթանու 84.  
 Անտիոքոս Սովորեր 75.  
 Անտոնինոս 87. 91.  
 Անտոնինոս (Աւենտինոս) 48.  
 Անտոնինոս Կարակալլա 120.  
 Անտոնինոս Մարկոս 119.  
 Անտոնինէ եղ. Հալպայ 220.  
 Անտրոմաքոս (Ոնիա) 72.  
 Աշխիմիս եղ. Պարոից 285.  
 Աշմուշաք. ք. 571.  
 Աշուշաք 517.  
 Ապամիսք. ք. 73. 269. 407.  
 Ապլոթաք. ք. 599. 410. 418. 450. 451. 502.  
 Ապոլոնմէս 55.  
 Ապողինար պտ. Աղեքսանդրիոյ 251.  
 Ապողոն 32. 36.  
 Ապողոն Կուռք. 86. 142.

- Ապողոնիս** 114.  
**Ապողոս միայնակեաց** 155.  
**Ապուլֆարաչ** 14 \*.  
**Ապուշափր** 350—355. 358.  
**Ապուպարը** 503.  
**Ապուսահակ** { 367—370. 372. 374. 392.  
**Առան** 23. 24.  
**Առաջաւորաց ոպահք** 394.  
**Առաքեալք ԺԲ.** 100.  
**Առան** 44.  
**Ասրամայ վ.** 225.  
**Ասիա.** 284. 325.  
**Ասկաղոնք.** 347. 424. 454. 495.  
**Ասկղեակ Եսդ.** Ուռհայոց 226. 227.  
**Ասկղեագիգէս** 30.  
**Ասկողայոն** 172.  
**Ասորգան** 57.  
**Ասորիք** 11. 59. 74. 86. 122. 260. 318. 358. 348.  
 355. 383. 397. 414. 421.  
**Ասուր** 21.  
**Ասուրիա** 21.  
**Ասպահան** 18. 79 \*.  
**Աստարա** 44.  
**Աստղ (Բարբարա)** 116.  
**Աստղիկ** 154.  
**Աստան պայլ** 505. 513 \* 515.  
**Աստանաք** 492.  
**Աստել** 455.  
**Ասէտ լէտին իլլահ** \* 456.  
**Ասմիկէ** 55.  
**Աստիկէ** 55.  
**Արար օրդի Խլիճ՝ առլանայ** 409.  
**Արաբիա** 50. 228 \* 255 \* 294. 476.  
**Արաբիկք** { 86. 91. 374. 391. 400.  
**Արաբացիք** { 86. 91. 374. 391. 400.

- Արակըլիս 210. 358. 515 \*  
 Արաշ գւ. 590.  
 Արամ հիւթացի 21.  
 Արամնահապետ 27.  
 Արամաղդ 81.  
 Արապթիւլ վ. 495.  
 Արարատ 564.  
 Արգեղայոս 98.  
 Արգեռս 59.  
 Արգիսցիք 34.  
 Արեգ ք. 15.  
 Արեգակն և Լուսին որդիք Կղէոպատրայ 92.  
 Արեդ 5—6.  
 Արեմուղոս Սիղուաս 47 \*  
 Արետ 86.  
 Արզուն ք. 255.  
 Արզում 550.  
 Արէս 144.  
 Արթուր 400. 402.  
 Արթուրիք 400. 410. 414. 427. 491.  
 Արիս ք. 31.  
 Արիանոս կամ {  
 Իրիանոս եալ. } 166. 168.  
 Արիս 130. 151. 154. 155. 397.  
 Արիսբորէս 71.  
 Արիսպագոս 52.  
 Արիստաքուլս որդի Աղէքսանդրայ 85. 91.  
 Արիստաքուլս ն Հերովդի 98.  
 Արիստաքուլս ն Յովհաննու 84.  
 Արիստակէս 132.  
 Արիստոս 69.  
 Արիստոտէլ 71.  
 Արիփոն 48.  
 Արիտքես կայսր 149. 159—162.  
 Արշակ 76.  
 Արտեքանանցի 20.

- Արտես Ռ.քայ 71 \*  
 Արտաշէս Ռւշեղ 69 .  
 Արտաշէս Երկայնաբազուկ 67 .  
 Արտաշէս Ուբոս 70 . 71 .  
 Արտաշիր Թգ . Հայոց 77 \*  
 Արտաշիր Թգ . Պարսից Ա . 122 .  
 " " " Բ . 152 . 160 .  
 " " " Գ . 302 .  
 Արտաւազ Կայսր Հայկազուն 342 . 544 .  
 Արտաւանոս 68 .  
 Արտիմոս (Արմատիս) 211 .  
 Արտուր Ք . 340 .  
 Արփաքսադ 12 . 21 .  
 Արփաքսադ Մար 66 .  
 Արփառուս (Եարփառուս) Ք . 280 . 281 .  
 Արքայոս (Արքէոս) 70 .  
 Արքեղայոս 57 .  
 Արքեղայոս Թգ . Մակեդոնացւոց 69 .  
 Արքիաթոս 54 . 55 .  
 Աւովդ 54 . 55 .  
 Աւրեղիանոս 122 .  
 Աւովիլոս 188 .  
 Ավրիկանոս 2 . 54 . 59 . 114 .  
 Ավրիկէ 69 . 101 . 158 . 285 . 512 . 530 . 452 .  
 Ավրիկէցիք 56 .  
 Ավրոգիտէ 42 . 154 .  
 Արտ (Արքէաս) Ք . 447 . 453 . 475 . 495 . 499 . 501 . 507 .  
 510 .  
 Արտաք 45 .  
 Արտզ 55 .  
 Արտիա գւ . 56 . 151 .  
 Արտօնոս 52 .  
 Արիս 56 . 42 .  
 Արիլսս Էպ . Թեսազոնիկոյ 154 .  
 Արիւրոնի աշտարակ 128 .  
 Արոիս 401 .

## Աքսում 229.

- Բաբան . տես Մահաղի .  
 Բաբելացիք 14 \* 22 .  
 Բաբելոն 15 . 16 . 54 . 65 . 65 . 81 . 358 . 368 .  
 Բաբել 142 . 325 .  
 Բագրատունիք 88 . 411 .  
 Բաղրա եպ . Ազամիոյ 220 .  
 Բաղավրան 27 .  
 Բալաբսէ ք . 55 .  
 Բալոս (Առզսսիանոս) 122 .  
 Բալու ք . 75 . 491 .  
 Բակուրան 492 \*.  
 Բակումուր 491 .  
 Բահաղ 46 .  
 Բահել ք . 76 .  
 Բաղաամ 55 . 95 . 291 .  
 Բաղակ 55 .  
 Բաղտասար 65 .  
 Բաղտա 99 .  
 Բասանիքսս 46 .  
 Բասիլիսկոս 207 . 210 .  
 Բասման 52 .  
 Բասրա ք . 504 . 545 . 568 . 510 \*.  
 Բարակ 55 . 56 .  
 Բարակլիս 48 .  
 Բարբալիսոն ք . 242 .  
 Բարդէծան 65 .  
 Բարդուղիմէսս առաքելոյ նշխարք 558 .  
 Բարձրբերդ 518 .  
 Բարշապուհ երեց 538 . 540 .  
 Բարսեղ (Ո) 14 \* 158 . 188 .  
 Բարսեղ վշ . Խոստովանահայք Պաղտնի 420 \*.  
 Բարսումա 514—517 .  
 Բարբովիքա } 116 \*.  
 Բարբովեքա } 116 \*

- Բարիլսու (Ալբիղեսս) պատ 251. 252. 257.  
 Բաքսու 242.  
 Բարոր 505.  
 Բեղրինէ գլ. 218.  
 Բեթէլ 190.  
 Բելսարիսս 255.  
 Բելտւդա 4.  
 Բելտւրսս 110.  
 Բեղէռվիթ ք. 42.  
 Բենան ք. 42.  
 Բերդուսս բ. 457.  
 Բերենիկէ 99.  
 Բերիա . տես Հալապ .  
 Բերուդոսս (Աբրիդոսս) ք. 122.  
 Բերսարէ 40.  
 Բերտենաքս 120.  
 Բերուգէլ 225.  
 Բերուր ք. 42.  
 Բեթշաէմ 55. 88. 96. 508.  
 Բեթմէքա 55.  
 Բելսյ կուռք . տես Ալբու .  
 Բելդան (Բաղդան) 58.  
 Բիդէգ (Բիկենդ) 151.  
 Բիդոս . Երիցունք 151.  
 Բիտալիսս (Բիտիլիսս) 111.  
 Բիւզանդիա 60. 128. 145.  
 Բիւզոս 60.  
 Բիւթանիա 54. 55. 146. 525. 546. 407.  
 Բիւրիտոն (Պէրութ) 202. 405. 497.  
 Բինիսս Սեկունդոս 115.  
 Բւրուր (Ազու էլ Հալուար) 518.  
 Բլրավանք 222.  
 Բոմբիսս 89.  
 Բուրաքք . տես Ազուազքք .  
 Բուլշարք 283. 551. 554. 556. 564. 577. 584. 552.  
 Բուստինսս եղ . Աբսենիոյ 221.

- Բուրիա ք. 52.  
 Բուրոս կայոր 122.  
 Բջնի դւ. 519.  
 Բրաբմիա (Պերգամոն) ք. 554.  
 Բրիսոս (Պերսէսս) 57. 272.
- Գաբասա ք. 95.  
 Գաբաւոն ք. 40.  
 Գաբրիել հրեշտակապետ. 88.  
 Գաբրիել յոյն 400.  
 Գաբրիել սարկաւագ. 538. 540.  
 Գագիկ թգ. գ. 597.  
 Գաղան 217.  
 Գագիրոն ք. 10.  
 Գագրի ք. 518.  
 Գաղարէ ք. 42.  
 Գաղարոս (Գաղթա) ք. 111.  
 Գալիա (Գաղղիա) 124. 159.  
 Գալիէ (Գալթա) 149. 154.  
 Գալիլիա 95. 292.  
 Գալլոս 157. 140.  
 Գաղատիա 146. 284. 523. 554.  
 Գաղատիոս (Կղօդիոս) 122.  
 Գաղերոս կայոր 122.  
 Գաղոս կայոր 122.  
 Գամաղա ք. 92.  
 Գայիոս Յուլիոս 86. 89. 90. 104. 108. 271.  
 Գայիոսի վանդ 397.  
 Գանգրաս ք. 212\*. 220. 450.  
 Գառնի գլ. 520. 522.  
 Գարիզին լ. 81.  
 Գաւդի 55.  
 Գեղենն 56.  
 Գեհոն գտ. 11.  
 Գեղադ 55.  
 Գերգեսացիք 11.

- Գերեզման (Ա) քրիստոսի 402 · 508 · 524 ·  
 Գերերա 26 ·  
 Գերմանացիք 119 · 124 ·  
 Գերմանիկէ · տես Մարտաշ ·  
 Գերմանիկոս կայսր 99 ·  
 Գերմանոս կայսր 280 ·  
 Գեորգ արեղայ զբովարտիչ 470 ·  
 Գեորգ կիպրացի 349 ·  
 Գեորգի 569 · 571 ·  
 Գեորգի թագ · Վրաց գ · 442 · 446 ·  
 Գողովիա 46 ·  
 Գողովիէլ 51 · 54 ·  
 Գողան գ · 551 ·  
 Գոթացիք 122 · 148 · 149 · 151 ·  
 Գողգոթա 177 · 195 · 308 ·  
 Գողիադ 40 ·  
 Գոնեատոյ տը Մանֆերրա 496 ·  
 Գոփ 587 · 589 ·  
 Գրատիանոս կայսր 147 · 149 · 152 ·  
 Գրաւմիա ք · 318 ·  
 Գրիգոր Առառածածարան 158 · 155 · 188 ·  
 Գրիգոր Եպ · Տարութայ 150 ·  
 Գրիգոր ո Քեսնոյ 472 ·  
 Գրիգոր (Ա) Ըստաւորիչ 128 ·  
 Գրիգոր նիւսացի 15 · 94 · 158 · 155 · 154 · 188 ·  
 Գրիգոր կթ · գ · Պահլաւ 424 ·  
 Գրիգոր ո Դ · Տզայ 472 ·  
 Գրիգոր ո Ե · Պահավէժ 475 ·  
 Գրիգոր պտ · Անտիոքայ 277 ·  
 Գրիգոր պատրիկ 285 · 512 ·  
 Գրիգոր Սքանչելագործ 188 ·
- Դարրաստան** 550 ·  
**Դադան** 30 ·  
**Դակք** 119 ·  
**Դազմաստոս** կեսար 137 · 140 ·

- Դամասկոս 21 · 42 · 292 · 305 · 323 · 345 · 396 · 427 ·  
 475 · 477 · 485 · 499 · 500 · 507 ·  
 Դամուրինոս կայոր 122 ·  
 Դամուրտաշ 427 ·  
 Դամիլ 510 · 524 ·  
 Դան 58 ·  
 Դանիէլ մդ · 62 · 65 · 79 · 88 · 109 · 358 ·  
 Դանիէլ եղանակ 168 ·  
 Դանիէլ " " միւս 299 ·  
 Դանիէլ (Ո) վ. 225 ·  
 Դանիշման 598 · 406 · 407 · 439 · 451 · 458 · 475 · 480 ·  
 482 ·  
 Դարբանդ ք. 541 \*  
 Դարեհ 65 · 67 · 88 ·  
 Դարեհ նուշոս 68 ·  
 Դարեհ որդի Արտաշրի 71 ·  
 Դարպատկ ք. 497 ·  
 Դաւիթ մդ · 39—41 · 85 ·  
 Դաւիթ Անհողին 594 ·  
 Դաւիթ (Սահառունի) 511 ·  
 Դաւութ 372 ·  
 Դաւութ արթուրեան 418 ·  
 Դավիթի մերձ Անտիոք 142 \* 228 ·  
 Դգուշ 401 \* 404 \*  
 Դեբովա 35 · 36 ·  
 Դեմետր 74 ·  
 Դեմետրիոս Փիլիպոս 77 ·  
 Դեռևկորս 166—175 · 179 · 186 · 386 ·  
 Դիմափոս 58 ·  
 Դիմիտրոս ք. 242 ·  
 Դինա 27 ·  
 Դինոս 7 ·  
 Դիոգնիտոս 47 \*  
 Դիոդորոս 80 ·  
 Դիոկէս 58 \* ·  
 Դիոկէտիանոս 124 · 125 · 128 ·

- Դիմոնէսիոս թղ . Եղիպտասի 68 .  
 Դիմոնէսիոս պատմիլ . 3 . 566 . 570 .  
 Դիմոնէսիոս " այլ 3 . 458 .  
 Դիմոզօղետացիք 58 \*  
 Դիոս 39 .  
 Դիմոսօրուլումտէ 58 .  
 Դիմոքլոյոս 59 .  
 Դկլամթ գտ . 11 .  
 Դոմինոս եղ . Անտիոքայ 168 . 175 .  
 Դոմետիանոս կայսր 115 . 114 .  
 Դոմինաս սպո . Անտիոքայ 251 .  
 Դոռիոս (Դոմինո) 98 .  
 Դորդոնաք . 208 .  
 Դուգիոս (Դեկոս) 121 .  
 Դուբն ք . 446 . 457 . 522 .  
 Դրուսիդա 99 .

**ԵԲԼԻ** 12—14 .

**ԵԲՐԱՅԵՑիք** 11 . 15 . 14 .

**ԵԳԻԱՊՏԱԿԱՋիՔ** 11 . 28 . 474 . 494 .

**ԵԳԻԱՊՏԱՆ** 15 . 24 . 27 . 50 . 64 . 70 . 90 . 115 . 124 . 151 .  
 244 . 508 . 525 . 540 . 568 . 407 . 451 . 442 . 450 . 452 .  
 455 . 458 . 462 . 466 . 496 . 500 . 507 . 509 .

**ԵԴՂՈՄ** 54 .

**ԵԴԵԽԱԿԱՋիՔ** 14 \* 405 .

**ԵԴԵԽԻԱ** 420 . տես Ռւռհա .

**ԵԴՄԱ** 26 .

**ԵԴՈՒՆՈՅԵՑիՔ** 48 . 86 .

**ԵՂԱՐԵԼ** 45 . 46 .

**ԵՂԵՂԻԱ** 54 . 58 .

**ԵՂԵՂԻԷԼ** մդ . 589 . 592 .

**ԵՂԵՂԻԷԼ** " ի մասունք 558 .

**ԵՂԵՂԱՅ** 394 . 497 .

**ԵՂԱՐ** կթ 500 . 501 . 539 .

**ԵՂԵՍԱ** 57 . 67 . 291 .

**ԵՂԵՂԱՅ** 394 . 497 .

- Եթբասաղ.** 45 \*  
**Եթովպիա** 70 . 568 .  
**Ելա** 44 .  
**Ելասոլան** 409 .  
**Ելեւթերոս կրօնաւոր** 191 .  
**Ելագա** 71 . 151 .  
**Ելոն** 38 .  
**Ելոկուզ** 458 .  
**Ելփարոս** 7 .  
**Եկտան** 15 . 16 . 17 . 50 .  
**Եղիազար Աւարան** 81 . 82 .  
**Եղիշէ տղայակեր** 319 .  
**Եղիսէ մդ** . 46 . 190 .  
**Եղնատայ վանք** 222 .  
**Եմանացիք** 474 .  
**Եմաւուս ք** . 161 .  
**Եմես ք** . 465 .  
**Եմովք** 27 .  
**Ենանոս** 2 . 4 . 9 . 10 . 26 . 94 .  
**Ենովլս** 5 .  
**Ենովլք** 4 . 8 .  
**Ենոք իշխան** 55 .  
**Եպիկուրոս** 71 .  
**Եպիփան (Ո)** 42 . 515 .  
**Եպիփան պերկացի** 205 .  
**Եսայի եպ . Մարէճայ** 299 .  
**Եսայի "** Աւգոսի 242 .  
**Եսայի կրօնաւոր** 181 .  
**Եսայի մդ** . 52 . 58 .  
**Եսաւ** 20 . 26 . 27 .  
**Եսթեր** 67 . 69 .  
**Եսթրոն** 48 .  
**Եսկզոս (Սէռոպան)** 78 .  
**Եսնուքոս** . 47 .  
**Եսուր** 53 .  
**Երակլեակ** 503 . 510 .

- Երակլէս** 52.  
**Երեմիա** մգ. 61. 64. 66.  
**Երեքթեւս** 54\*  
**Երիքով** 45.  
**Երեքքարեան** կռւոք 225.  
**Երուսաղէմ** 25. 41. 56. 59. 65. 68. 73. 78. 86. 95.  
 112. 116. 154. 145. 159. 174. 292. 508. 574. 579.  
 589. 402. 405. 409. 420. 424. 454. 448. 495. 499.  
 507. 580. 524.  
**Եւա** 4.  
**Եւդոքսիա** 296.  
**Եւդոքսիոս** եպ. Կ. Պօլսոց 147.  
**Եւխայիտա** ք. 550.  
**Եւսիսթեւս** 55.  
**Եւսեբի** երեց 156. 159.  
**Եւսեբիա** 157.  
**Եւսեբիոս** եպ. Անտիոքայ 132.  
**Եւսեբիոս** " Բիւրիտոնի 168.  
**Եւսեբիոս** " Կիլիկիոյ 168.  
**Եւսեբիոս** " Տորիզայ 168\*  
**Եւսեբիոս** Նիկոմիդացի 150. 155.  
**Եւսեբիոս** պատմիչ 2. 9. 52. 95. 94. 150.  
**Եւստաթէ** եպ. Փիւրնի 220.  
**Եւստաթէոս** եպ. Անտիոքայ 152.  
**Եւտիքէս** կիոպրացի 168.  
**Եւտիքէս** հերետիկոս 166. 168. 212\*  
**Եւտիքէս** պտ. Կ. Պօլսոց. 251.  
**Եւփիմէ** լ. 46.  
**Եւփիմէ** կյու 215.  
**Եւփրասիոս** 226.\*  
**Եփեմիա**, տես Ազամիա.  
**Եփեսոս** 164. 166. 195. 414. 555.  
**Եփիմրոս** (Աբովիազրոս) 528. 551. 552\*  
**Եփրատ** գտ. 11. 62. 65. 91. 95. 226. 294. 558. 568.  
 419.  
**Եփրէմ** (Ո) 15. 14\*

- Ե**փրեմ իշխան Անտիոքայ 226 \* 228 .  
**Ե**փրոս 64 .  
**Ե**քսանտոսն 250 .  
**Ե**օթանասուներկու աշակերտք Քրիստոսի 105 .  
**Ե**օթանասուն և երկու թարգմանիչք Ս . Գրոց 75 .  
  
**Զ**ամբրի 44 .  
**Զ**անդի ամիրայ 415 . 414 . 418 .  
**Զ**ապէլ 505—506 . 507 \* 515 . 518 .  
**Զ**արէհ 20 .  
**Զ**արմանդուխտ 503 .  
**Զ**աքարիա թգ . Խորայելի 51 .  
**Զ**աքարիա իշխան 569 .  
**Զ**աքարիա հայր Յովհաննու 91 .  
**Զ**աքարիա մգ . 67 .  
**Զ**աքարիա որդի Յովիեղեայ 48 .  
**Զ**աքարիա պատմիչ 2 . 244 \*  
**Զ**աքարիա պտ . Երուսաղէմի 286 \* 292 .  
**Զ**արէ (Ս) վ . 223 .  
**Զ**ենոն իսաւրացի 189 . 207—215 .  
**Զ**ենոն կրօնաւոր փղտացի 179 . 181 . 197 .  
**Զ**երծել 45 .  
**Զ**եւո 58 . 81 . 100 .  
**Զ**էյթուն 280 \*  
**Զ**մբութ 22 .  
**Զ**նջիլ կոմա 402 .  
**Զ**ոյի 384 \* 387 .  
**Զ**ոյի մայր կուսանաց 204 .  
**Զ**ոյիս եպ . Անտիոքայ 159 .  
**Զ**ոսիմոս կրօնաւոր 190 .  
**Զ**ոսիմոս պատմիչ 2 .  
**Զ**ուպատրաք . 557 . 566 . 571 .  
**Զ**ըսուանդուխտ 503 .  
  
**Է**ռուբ հայր Սալահտտնի 457 .  
  
**Թ**աթար 519 .

- Թագէսս առաքեալ 101 · 106 · 416 ·  
 Թակղաթփաղսար 49 · 52 ·  
 Թամամ 574 ·  
 Թամասին երեց 201 ·  
 Թամար 519 ·  
 Թամբա 511 ·  
 Թատնի 44 ·  
 Թասպիսս 51 ·  
 Թարա 20 · 24 ·  
 Թափայիմ (Թերէ) ք · 56 · 192 ·  
 Թափօր կամ թափօրական լ · 545 · 508 ·  
 Թերայեցիք 55 ·  
 Թեսաղնիկէ 154 · 156 · 277 · 322 ·  
 Թեսէւս 57 ·  
 Թեսպիեւս 51 ·  
 Թետալիս 77 · 269 ·  
 Թետմուր ք · 42 ·  
 Թերմօթիս · 29 · 30 ·  
 Թէասոս ք · 54 ·  
 Թէոգնիս եռ · 155 ·  
 Թէոդոլոս եռ · 168 ·  
 Թէոդոզոլոս 300 ·  
 Թէոդոս Ա · Ահ · 151—155 · 159 · 225 ·  
 Թէոդոս Բ · Գոր 162 · 165 · 166 · 169—171 ·  
 Թէոդոս Գ · 334 ·  
 Թէոդոս եռ · Լառոցիկոյ 150 ·  
 Թէոդոս Դիկի Մորկայ 281 ·  
 Թէոդոս պատմիչ 129 ·  
 Թէոդոս պատմայ 357 · 487 ·  
 Թէոդոսիոս պատմայ Եղաղացի 174 · 188 · 199 ·  
 Թէոդոր Անդր 256 ·  
 Թէոդոր Ին Յեսփիլոսի 574 · 575 ·  
 Թէոդորա Ա Կառամոդիսոսի 125 ·  
 Թէոդորա Ա Պաղմնի Գ · 455 ·  
 Թէոդորեան եռ · Կիւրիայ , պատմիչ 2 · 166 · 168 · 172 ·  
 251 · 252 ·

- Թակողորեւ կոմս 520 .  
 Թակողորիս 254 . 255 . 248 . 265 .  
 Թակողորիկե եղբայր Հերակլի 298 . 504 .  
 Թակողորիտէ կրօնաւոր 224 .  
 Թակողորոս աթենացի 114 .  
 Թակողորոս եղ . Մելտինց 585 .  
 Թակողորոս կապագովկացի 249 .  
 Թակողորոս կիւրապազատ 403 .  
 Թակողորոս (Թակողոս) պատ . Յօյն . 240 . 248 . 250 .  
 Թակողորոս ռշունի 505 \* 511 \* 527 \*  
 Թակողորոս մասմաւեստացի 198 . 251 . 252 .  
 Թակովնաս եղ . Մարմարիկց 153 .  
 Թակոփանա մայր Լեւոն կայսեր 576 .  
 Թակոփանէ կին Ամերիկորայ 582 .  
 Թակոփիլէ պատ . քաղկեդոնիկ Ասորւոց 546 .  
 Թակոփիլոս կայսր 564 . 567 . 571 . 575 .  
 Թափք . 446 . 492 .  
 Թափ համանց 429 . 518 .  
 Թալմաւք . 411 .  
 Թալատաց վանք 222 .  
 Թալմազ (Թալմազ) ք . 298 . 510 .  
 Թալտաշար ք . 425 . 478 . 514 .  
 Թալտամէ վ . 493 .  
 Թալիթ 412 . 427 . 457 .  
 Թանեստ Կոնկորդերոս 48 .  
 Թառվազ 57 .  
 Թառգոմ 17 . 587 .  
 Թառոս Ա . 411 . 422 .  
 Թառոս Բ . 425 . 426 . 429 . 435 . 440 . 446 . 449 . 451 .  
     454 .  
 Թառմաւ եղ . Գերմանիկց 220 .  
 Թառմաւ " Դամասկոսի 220 .  
 Թառմաւ " Մնիքձայ 299 .  
 Թառմաւ " Նարգաբայ 220 .  
 Թառմաւ " Տարոյց 221 .  
 Թառմաւ տարացի սիւնակեաց 224 .

- Թումաս աներ թորոսի 454 .  
 Թումաս Հռոմայեցի 562 .  
 Թումասիոս եպ . Եվետոփ 221 .  
 Թուբը 66 . 554 . 540 . 587 . 590 . 595 . 596 . 599 . 400 .  
     404 . 407 . 415 . 419 . 456 . 441—447 . 449 . 451 . 480 .  
     492 . 497 . 512 .  
 Թուբմանք 480 . 481 . 492 . 493 . 498 .  
 Թողենիք . 497 .  
 Թրակիա 159 . 151 . 208 . 209 . 277 . 283 . 295 . 553 .  
     577 . 578 . 590 . 409 .  
 Թրայի վանք 225 .  
 Թօսոս (Թէստորա) քենի Մոնոմախ կայսեր 587 . 595 .  
 Թօրիանէ (Թէորիանէ) 459 . 460 . 462 .

- Իբաս եպ . Ուռհայց 168 . 177 . 252 \* 257 .  
 Իգնատիոս եպ . Անտիոքայ 115 .  
 Իգնատիոս պատմիչ ասորի 5 . 126 .  
 Իգոս (Հցգեւս) 56 .  
 Իզիս ամիրապետ 557 .  
 Իզիս Բ . 542 . 545 .  
 Իզիս որդի Մատեայ 525 .  
 Իլամ 95 .  
 Իլամացիք 79 .  
 Իլին ք . 56 . 57 .  
 Իլիս Ագրիանոս (Երուսաղէմ) 117 .  
 Իլիրինէ եպ . Կէոկեսարու 221 .  
 Իլմարտիգակ 65 .  
 Իլոս 56 .  
 Իլուպոլիս 485 .  
 Ինարէլ 55 .  
 Ինալքոս 45 \*  
 Իսւդ մդ . 45 .  
 Իսրահիմ ամիրապետ 545 .  
 Իսրահիմ (Պէն էլ Մէհմիք) 561 . 565 .  
 Իսահակ 25 .  
 Իսահակ Անգեղոս 489 .

- Խակոքորսս 45 .  
 Խամայել 24 . 294 .  
 Խամայել և զբօրորդի Աշուր Ապահայ 450 . 468 . 469 .  
 Խամայելացիք 294 .  
 Խատիկոս + տես Աժդահակ .  
 Խարայել 28 . 55 . 44 .  
 Խարայելացիք 15 . 26 .  
 Խտալացիք 508 \*  
 Խտալիս 55 . 158 .  
 Խտիկէ գւ . 50 .  
 Խրենեսս կոճա 256 \*  
 Խրինէ 354 . 357 .  
 Խւանէ (Յովհաննէս) թ . կայոր 415 . 417 .  
 Խւանէ Աթաբէկ 519 . 522 .  
 Խւանէ և զբայր Շալտւեկի 521 .  
 Խւիլսս կամ Եւիլսս եղ . (Պրայիլսս պա . Երուսաղէմի 117 .

- Լաղինստացիք 254 .  
 Լակեդեմոն 54 \*  
 Լակեդեմոնացիք 55 .  
 Լամբարիդոս 55 .  
 Լամբրոն թ . 473 . 518 \*  
 Լամիս կաստրա թ . 211 .  
 Լատիկ (Լաւողիկէ) 75 . 155 . 245 . 447 . 497 .  
 Լատինացիք 11 . 58 . 54 .  
 Լարենդա թ . 515 \*  
 Լեւոն . որ և Ղեւոնդիսս կայոր 328 . 551 .  
 Լեւոն Ա . Թրակացի 207—209 .  
 Լեւոն թ . Զենոնեան 209 . 210 .  
 Լեւոն գ . Խառերացի 554 . 558 . 541 .  
 Լեւոն դ . 548 . 552 .  
 Լեւոն Ե . Արծրունի 562 .  
 Լեւոն Զ . 575 .  
 Լեւոն Ռուբենեան Ա . 411 .  
 Լեւոն թգ . 492 . 501—504 . 507 . 510—518 .

- Լեւոն Ե. « 409 \*  
 Լեւոն Ա. Եղ. Հառմայ 167—175 • 189 • 198 • 212 • 215.  
     247 • 299 .  
 Լեւոն Եղբայր կոստանդին Պուդոնաստի 525 .  
 Լեւոն տէր կապանու 516 .  
 Լեւոնդիս առկազննացի 197 • 204 .  
 Լեոբոլտ դուքս Աւոսրից 508 \*  
 Լիա 27 .  
 Լիբանան 14 \* 15 • 225 • 524 • 526 .  
 Լիրիա 116 • 254 • 295 .  
 Լիրիանս իմաստաւէր 141 • 145 .  
 Լիլրաս 172 .  
 Լիկիա գւ . 195 .  
 Լիկիանէ 127 .  
 Լիկինիս 177 .  
 Լիոն ք . 152 .  
 Լիւդացիք 52 .  
 Լիւրիկէ գւ . 159 \* 156 \*  
 Լուգիանոս 94 .  
 Լուլա (Լուլլա) բ . 566 • 515 .  
 Լուկա (Լուկանիա) ք . 55 .  
 Լումբաս 115 .  
 Լունկվարտը (Լոնգոբարդացիք) 277 .  
 Լուսիա 115 .  
 Լուսիս (Ղուկիս Աւրոս) 119 .  
 Լուսիստանիա 89 .  
 Լուսինիան թգ . Ալիգրոսի 508 \*  
  
 Խաբուր ք . 407 • 408 .  
 Խայորշտէ Աղադին 498 .  
 Խանի ք . 428 .  
 Խառան ք . 12 • 24 • 120 • 145 • 284 • 543 • 561 • 566 •  
     575 • 455 • 475 • 500 • 501 • 525 .  
 Խարաօլան 418 • 430 • 439 • 444 • 448 455 .  
 Խարթքերդ 418 • 450 • 491 .  
 Խարհէ (Գահիքէ) ք . 456 .

- Խաւառանեք ք. • 411 • 429.  
 Խաւռազն 411.  
 Խաքան թգք. Խաղաց 296 • 551 • 341 • 548 • 591 • 595.  
 Խիսթատին 408 • 412 • 415.  
 Խիւչախը 592.  
 Խլաթ ք. • 501 • 507.  
 Խլիճասլան Ա. • 405 • 407—409.  
 Խլիճասլան Բ. • 450 • 459—442 • 458 • 468—470 • 474 •  
 479 • 497 • 500.  
 Խլոպար բ. • 501.  
 Խոսրով Ա. • թգ. • Պարսից 255 • 259 • 264 • 269 • 272 •  
 287.  
 Խոսրով Բ. • 281—287 • 292.  
 Խոսրով Դարուրան 503.  
 Խոսրով շահ որդի Խլիճասլանայ Բ. • 507.  
 Խորաղմ 519.  
 Խորաղմիք 520—525.  
 Խորասան ք. • 545 • 559 • 565 • 595 • 400 • 405 • 417 • 438.  
 Խոռոսոյր ք. • 452.  
 Խուդրադին որդի Զանդեայ 427 • 465.  
 Խուդրադին » Կեչմշտանայ 479 • 491.  
 Խրախաւսանոս կղղի 188.  
 Խրխոսափոր գպրապետ Աղուբասլանայ 444.  
 Խօռջօրս 82.

— Ծամնդաւ ք. • 458.

- Կադիլըն ք. • 318 • 551.  
 Կադմոս 54 • 55.  
 Կալանիկէ ասորի 524.  
 Կալանիկոս ք. • 95 • 242 • 260 • 558 • 550 • 558 • 560.  
 Կալատ (Գաղատ) 19.  
 Կալատուկ 69.  
 Կալարան (Ալեքրան) 405.  
 Կալափատ 586.  
 Կահաճ 26 • 28.

- Կաղաւրիոն 69 .  
 Կաղթա ք . 425 .  
 Կամախ ք . 550 . 410 . 448 .  
 Կամբիւսէս 589 . 592 .  
 Կամբիւսոս 66 .  
 Կամբիւրոս 18 .  
 Կայեն 4 .  
 Կայիափա 291 .  
 Կայնան 5 . 12 .  
 Կայնան կուռք 21 . 62 .  
 Կայնոն Էպ . Տարսոնի 250 .  
 Կայշը վդ . 225 .  
 Կանաքարիս 52 .  
 Կանաքոս 70 .  
 Կանծ 55 .  
 Կանչի ք . 518 .  
 Կապագումիս 51 . 122 . 255 . 284 . 366 . 578 . 598 . 407 .  
     515 . 420 . 458 .  
 Կապան ք . 511 . 515 \*  
 Կապալիսն ք . 147 .  
 Կասիանէ 415 .  
 Կասմ 559 .  
 Կասպից գուռն 296 .  
 Կասպից ծով 71 . 77 .  
 Կաստամանի ք . 415 .  
 Կատուկ ք . 451 .  
 Կարապետ երեց զբարտիչ 470 .  
 Կարթա գլ . 217 .  
 Կարիս ք . 221 .  
 Կարին ք . 216 . 550 . 579 . 455 .  
 Կարինոս կայոր 125 .  
 Կարկառ . ք . 425 .  
 Կարմիր ծով 228 \* 294 .  
 Կարոս կայոր 125 .  
 Կարոպանդոս 45 .  
 Կարքեդոն ք . 57 . 69 .

- Կաւրա եոլ. Եգիպտոսի 508.  
 Կաւրա պատմիչ 5.  
 Կելեստիանոս 165.  
 Կեկոսպո 50. 56.  
 Կեզաացիք 69 \*.  
 Կէնդուրա 25. 50. 76. 294.  
 Կէռաակ 512. 515 \* 516.  
 Կէօարիա Կապադովիկայ 292. 598. 411. 414. 458. 502.  
     515.  
 Կէսարիա Պաղեստինի 95. 199. 212. 511. 495.  
 Կէրանժէ բենեդիկտեան 129 \*.  
 Կէրսպողա 405 \*.  
 Կէրտոն 118.  
 Կիզիեռն ք. 55. 209. 211 \*.  
 Կիլիկեցիք 49. 411.  
 Կիլիկիա 57. 50. 122. 146. 191. 295. 512. 555. 558.  
     565. 578. 599. 417. 491. 505.  
 Կլիքոս 50.  
 Կ/շ աը Լուսինիան 494 \* 499 \*.  
 Կիսրոս 75. 115. 197. 515. 519. 526. 527. 457. 524.  
 Կիրակոս զօրավար 578.  
 Կիրակոս կիպրացի 190.  
 Կիրիոս վանահայր 222.  
 Կիւրել Աղեքսանդրացի 165. 170—175.  
 Կիւրել Երուսաղեմացի 153.  
 Կիւրենական աշխարհ 95. 116.  
 Կիւրինէ ք. 57.  
 Կիւրինոս 94.  
 Կիւրոս 65. 66.  
 Կլիմիա 4.  
 Կլոդոնիսս եոլ. Ստալիոյ 204.  
 Կղեսպատրէ 85. 86. 90. 91.  
 Կղեսպատրէ կին Հերովդի 98.  
 Կղոդիա 57. 100. 104. 110.  
 Կնշիք ք. 220. 509. 550.  
 Կողմա եոլ. Աղմամիոյ 299.

- Կողման վր . 225 .  
 Կոլոնիան ք . 55 .  
 Կոկիսան ք . 511 .  
 Կողմառւ ւ . 561 .  
 Կոմանա . ք . 161 . 520 . 475 .  
 Կոմանից 390 .  
 Կոմանոս (կոսահակ կոմենոս) կայոր 396 .  
 Կոմիդոս կայոր 119 .  
 Կոմինոս 52 \*  
 Կոնդոֆրի 405 . 504 . 406 .  
 Կոոյտ գլ . 304 .  
 Կոստան (կոստաս) 155 . 157 .  
 Կոստանդիա . ք . 315 .  
 Կոստանդ (կոստաս) հայր Սբեծին կոստանդիանոսի 125 . 126 .  
 Կոստանդիանոս Սբեծն 60 . 125 . 126—129 . 151 . 155—158 .  
     140 . 246 . 259 . 272 .  
 Կոստանդինուպոլիս 60 . 129 . 155 . 156 . 158 . 145 . 171 .  
     205 . 207 . 211 . 215—215 . 253 . 245 . 246 . 264 . 272 .  
     295 . 521 . 534 . 546 . 583 . 585 . 597 . 401 . 405 . 419 .  
     498 .  
 Կոստանդին Ա . որդի կոստանդիանոսի 155 . 157 .  
 Կոստանդին Բ . Հերակլոս 310 .  
 Կոստանդին Գ . Պուգոնասոս 324—326 .  
 Կոստանդին Դ . Կոոյրոսիմոս 341 . 344 . 346 . 352 .  
 Կոստանդին Ե . որդի Սոյինեայ 554 . 555 .  
 Կոստանդին Է . Պերսիկումէն 577 . 578 .  
 Կոստանդին Ը . 579 .  
 Կոստանդին Թ . 584 .  
 Կոստանդին Ժ . 595 . 595 .  
 Կոստանդին ԺԱ . Տուկիծ 596 . 598 .  
 Կոստանդին Ա . Ուուրինեան 411 .  
 Կոստանդին Կթ . Ա . 516 .  
 Կոստանդին Եօդ . Լաւոդիկեայ 220 .  
 Կոստանդին Մայլ 506 . 512 . 515 \* 515—517 .  
 Կոստանդին Մէր Լամբրոնի 518 .  
 Կոստանդոս (Կիաքսարէս) 61 .

- Կոստաս Գ. • որդի կոստանդիանսի 162 .  
 Կոստաս (կոստանդ) • 155 . 157 . 158 .  
 Կոստաս (կոստանդ) թռուն Հերակլեայ 510 . 520 . 521 .  
 Կովկաս Հ. 77 .  
 Կորնելյան ք. • 52 . 228 .  
 Կու (կով) կղզի 519 .  
 Կուտ (կաւատ) թռ. • 215 . 216 . 325 254 . 287 \*.  
 Կուտափի 409 .  
 Կուրիշացիք 561 .  
 Կուրիս ք. • 101 . 528 . 454 .  
 Կուրտաքսս 58 .  
 Կուֆրիտէ 86 .  
 Կուքրսս 52 .  
 Կրիտիս կղզի 58 . 519 .  
 Կրոնոս 55 .  
 Կրոնոս մակեդոնացի 272 .  
 Կօն (Իկոնիոն) ք. • 430 . 480 . 500 .  
 Կօնոցիք 500 .  
 Կօնոս 52 .
- Հաբաշիք 11 . 54 . 229 .  
 Հագար 24 . 294 .  
 Հագարացիք 294 . 512 . 522 .  
 Հադ ք. • 554 .  
 Հադադ ք. • 42 .  
 Հադախ ք. • 80 .  
 Հադարաւորաց Հ. 558 .  
 Հալապ 75 . 241 . 284 . 553 . 580 . 596 . 413 . 441 . 447 .  
     464 . 475 . 477 . 479 . 488 . 500 . 514 .  
 Հաղբակ ք. • 101 .  
 Համա ք. • 101 . 477 .  
 Համան 67 .  
 Համզա 215 \*.  
 Համբարձման Հ. 197 . 203 .  
 Հայկ 16 . \*.  
 Հայք 49 . 57 . 77 . 86 . 88 . 92 . 116 . 125 . 174 . 191 .

- 217 . 255 . 260 . 264 . 272 . 282 . 283 \* 316 . 332 . 348 .  
 353 . 383 . 392 . 397 . 399 . 404 . 429 . 434 . 457 . 474 .  
 504 .
- Հանձիթք** . 371 . 385 .
- Հաշելեք** 479 . 505 . 515 .
- Հաստմադին** (Ըեմուտաբն) 427 . 491 .
- Հասան ամիրայ** 488 .
- Հասան զօրապետ** 497 . 498 .
- Հարսն մառւը** (Հիսն մանառւը) ք . 423 .
- Հարսնքէփ** ք . 448 . 478 .
- Հեթացիք** 11 .
- Հեթում թղ . Ա .** 518 .
- Հեղի** 59 .
- Հեղիանուսովիս** 128 \*
- Հեղինէ կին Տիրերեայ** 276 .
- Հեղինէ մայր Մհծին կոստանդիանոսի** 125 . 153 .
- Հեմն** ք . 42 . 245 . 303 . 343 . 407 . 477 .
- Հեռի** (Հենրիկոս) 501 .
- Հետուր** ք . 42 .
- Հեր** ք . 557 .
- Հերակլ Կայոր** 285 . 292—305 . 308—311 . 378 . 395 .
- Հերակլ պատրիկ** 289 .
- Հերեթ** 247 . 250 . 255 \*
- Հերեթա** ք . 251 .
- Հերիմ** ք . 459 . 441 . 451 . 484 .
- Հերմի պտ . Ֆռանկոյ** 452 . 465 .
- Հերմուսովիս** 29 .
- Հերոնիմոս** 21 .
- Հերովդէս մեծ** 86 . 90 . 97 . 100 .
- "     Ագրիփոսս 99 . 100 . 108 .
- "     Անթիոքատրոս 98 . 108 .
- "     միւս 98 .
- "     թռուն Հերովդի 99 .
- "     Չորրորդապետ 98 .
- "     Քրիստուկ 86 .
- Հերովդիադա** 98 . 108 .

- Հեքոիպոս (Հեղեղովոպոս) 2 .  
 Հեշմամիրապետ 558 . 541 . 542 .  
 Հիւսէն զօրապետ 560 .  
 Հիւրկանոս որդի Աղեքսանդրայ 85 . 86 . 87 .  
 Հնդաք թգ . 229 .  
 Հնդիկ 10 . 17 . 75 . 101 . 155 . 228 . 568 . 590 . 468 .  
 Հնդկացիք 11 .  
 Հոլանտացիք 508 \*  
 Հողովեռենէս 66 . 389 . 429 .  
 Հոնք 214 .  
 Հոնաց գուռն 72 . 225 .  
 Հոսդոս թգ . 212 .  
 Հորթոմ 561 .  
 Հռասոն 55 .  
 Հռաքուս 50 .  
 Հռոմ 55 . 69 . 79 . 90 . 121 . 156 . 152 . 245 . 272 . 280 .  
 523 . 401 .  
 Հռոմայեցիք 58 . 55 . 69 . 79 . 86 . 90 . 92 . 212 . 255 .  
 268 . 272 . 280 . 284 . 528 . 567 . 453 .  
 Հռոմիլաք . 425 . 472 .  
 Հռոմիք կամ Հռոմոմիք . տես Հռոմայեցիք .  
 Հռոմիքար (Հռոմիլաք) 221 .  
 Հռոռով 58 .  
 Հրեայք 66 . 71 . 82 . 87 . 97 . 105 . 110 . 115 . 159 . 145 .  
 215 . 229 . 255 \* 294 . 298 . 309 . 557 . 389 . 416 .  
 Հրէաստան 78 . 87 . 94 .  
 Լաբինոս (Աղբինոս) 110 .  
 Լամեք 9 .  
 Լարատօղ 295 . 296 . 302 .  
 Լեբիադաք . 100 \*  
 Լեւի 26 . 27 . 28 .  
 Լովտ 24 .  
 Լռւկաս 12 .  
 Լռւկիոս Եսդ . Աղեքսանդրից 150 .  
 Ծամալաղին (Ծէմալէտափին) 248 .

- Ճանձիք . 518 .  
 Ճենմերա (Գ.անգլրա) ք . 541 .  
 Ճղիք ք . 564 . 501 .  
 Ճենտերիս դշ . 241 .  
 Ճեպէլն 497 .  
 Ճերաբու 445 .  
 Ճկեր ք . 492 \* 518 .  
 Ճկրմիշ . աւես Աքարմիշ 408 .  
 Ճռռճանիք 524 .  
 Ճռճոմք . 555 .  
 Ճռճանիք իշխան 572 .  
 Ճռլին 405 .  
 Ճռլին մարտզախառ 516 .  
  
 Մագնենախոս 158 .  
 Մագովք 66 . 587 . 589 .  
 Մագան 294 .  
 Մագացիք 21 . 58 . 76 . 101 .  
 Մագիս (Մարաստան) 10 .  
 Մագիսնացիք 56 . 296 . 545 .  
 Մագիդիս (Մեթօդիսոս) 4 .  
 Մաղոտ խաչ ք . 518 .  
 Մաթօւսաղա եպ . Սիւնեաց 501 \*  
 Մալոքարոս 74 .  
 Մալեք Աղեղ 500 \* 502 . 514 .  
 Մալեք Աշբադ 509 . 511 . 514 . 525 .  
 Մալեք Աֆսաղ 500 \* 502 .  
 Մալեք Դահեր 500 \* 514 .  
 Մալեք Յետը (Մալեք Ատել) 500 . 501 . 502 . 507—511 .  
 Մալեք Մոսկար խառ 508 \*  
 Մալեք Նասր 525 .  
 Մալեք Շահ 402 .  
 Մալեք Սալեհ 455 \*  
 Մալեք Սալեհ որդի Նուրեժտանի 474 . 477 . 478 . 488 .  
 Մալեք Սալեհ \* Սալահտանի 502 . 505 .

- Մալեք Քամել** 508 \* 509—511 · 524 .  
**Մալուք** · 54 .  
**Մալուք** · 42 .  
**Մալքա** 22 .  
**Մակաբայեցիք** 78 · 85 .  
**Մակալի գլ.** 157 .  
**Մականասի վանիք** 222 .  
**Մակոր (Մակրիս)** կայսր 120 .  
**Մակուռը** · 42 .  
**Մակեդոն Հոգեմարտ** 155 .  
**Մակեդոնացիք** 72 · 76 · 272 · 389 .  
**Մակեդոնիա** 151 .  
**Մակսատա** 66 .  
**Մահաղի (Բարան)** 564 · 565 .  
**Մահաղի որդի Զափրի** 553 .  
**Մահմետ Ա · օրէնսդիր** [121 · 254 \* 295 · 505 · 577 · 400 · 451 · 566 .  
**Մահմետ զօրապետ** 529 · 532 .  
**Մահմետ (Ազու Մոհամմետ Ալի)** 577 .  
**Մահմետ (Մոհամմետ որդի Հարունի)** 559—561 .  
**Մահմաւտ որդի Մալեք Խաղեայ** 414 .  
**Մահմաւդ որդի Մահաղի** 450 .  
**Մաղաղիէլ** 4 · 6 .  
**Մաղաղէթ** 27 .  
**Մաղքսո** 87 .  
**Մամա (Ո)** 157 .  
**Մամեսարիս** · 530 · 532 .  
**Մամլուդ** · 44 · 525 .  
**Մամունտ (Մամոնտ)** 559—564 · 566 .  
**Մամիկոն** 8 .  
**Մանաղիէրտ** 539 .  
**Մանայեմ** 51 · 52 .  
**Մանասէ** 58 .  
**Մանէ** 166 .  
**Մանիակ** 577 \*  
**Մանկեցիք** 234 · 248 .

- Մանիկ** պատրիկ Մամիկոնեան 566. 567.  
**Մանուիլ** զօրագլուխ հայ 508.  
**Մանուիլ** կայոր Ա. 418. 426. 428. 440. 444. 452. 459.  
 461. 482. 486.  
**Մանկուձակ** (Մանուշէ) 410.  
**Մանուինս** (Մանիսոն) 11.  
**Մասագեցիք** 66.  
**Մասեփա** ք. 45.  
**Մասուտ** որդի Խլիճառավանայ Ա. 409. 415. 418.  
**Մասուտ** որդի Խլիճառավանայ Բ. 426. 428. 450. 459.  
**Մատաթէ** 80.  
**Մարագան** գւ. 507.  
**Մարազա** 595.  
**Մարաշ** 75. 519. 599. 456. 441. 451. 470.  
**Մարգիս** 496.  
**Մարդայիտք** 526.  
**Մարդոցէք** \* . անս Մարդայիտք.  
**Մարի** (Մարտո) Եղ. Ամիմայ 220.  
**Մարի** (Մարիամնէ) 95. 98.  
**Մարիա** 29.  
**Մարիա** (Ամբի) 282.  
**Մարիամ** սուրբ Կոյս 95. 96. 97. 164. 176. 192. 197.  
 215. 254. 266.  
**Մարիամ Թագուհի** հայկազն 555.  
**Մարինէ** 241.  
**Մարիս** 70.  
**Մարիս քաղկեդոնացի** 150. 155.  
**Մարիբոս** 21.  
**Մարիսն Եղ.** • Հռոմելայի 221.  
**Մարկիաննէ** զօրասպատ 566—268.  
**Մարկիանս** կայոր 171. 174. 177. 179—181. 188. 207.  
 290. 421.  
**Մարկիանուսպոլիս** 147.  
**Մարկիսն աղանդապետ** 118.  
**Մարկոս** Անիկոս 61.  
**Մարկոս** Աւրեղիս 119.

- Մարկոս կեսար** 210.  
**Մարկոս հերետիկոս** 118.  
**Մարկոս պտ.** Երուսաղեմի 154.  
**Մարութ ք.** 519.  
**Մարութա եղ.** Կիրկերաց 162. 514.  
**Մարուն վդ.** 225.  
**Մարունա ք.** 54.  
**Մարտինէ 503.** 510.  
**Մարտինոս հիւզար** 114.  
**Մարտինոս 59.**  
**Մարտիրոս եղ.** Կինուելի 516.  
**Մարք 49.**  
**Մաւի 511.** 513. 519. 521.  
**Մաքսիմիանոս բռնակալ** 152.  
**Մաքսիմի անոս կայսր** 124. 125.  
**Մաքսիմինդա** 128.  
**Մաքսիմինդէս** 124. 127.  
**Մաքսիմոս** 127.  
**Մաքսիմոս վաներէց** 520. 553. 541.  
**Մաքքա ք.** 494.  
**Մեգակղէս** 45.  
**Մեգուլիէ (Միլան) ք.** 156. 160.  
**Մելքիոր եկ** 25. 25. 420.  
**Մելքոնիոս եղ.** Անտոքայ 153. 154.  
**Մելիտոս** " եղիսպատացի 150.  
**Մելտենի ք.** 275. 548. 550. 571. 578. 580. 595. 596.  
 599. 406. 410. 444. 468. 482.  
**Մեղագրիոս** 74.  
**Մեղքոս կին Հերովդի մեծի** 98.  
**Մեղքուժ 42.**  
**Մեմիս եղ.** 165.  
**Մեմիս ք.** 29. 51.  
**Մենթոս (Մենեսթէ)** 57.  
**Մենանդրոս** 16.  
**Մերտին ք.** 284. 428. 455. 478. 491. 501.  
**Մժեժ կայսր** 524.

- Միգոս** 36 ·  
**Միթրոս** 57 ·  
**Միւսայել պատմիչ** 25 \* 459 ·  
**Միկէնք** 55 ·  
**Միուրինսոս (Մայորիանսոս)** 208 ·  
**Միջագետք** 91 · 120 · 125 · 191 · 214 · 274 · 284 · 286 ·  
 309 · 359 · 378 · 396 · 450 · 458 · 445 · 474 · 495 · 507 ·  
 525 ·  
**Միւկէացիք** 55 ·  
**Միւսիա գւ** · 151 · 245 ·  
**Միփոսայ վանք** 225 ·  
**Միքայել կայոր Բ** · 562 ·  
**Միքայել** " Գ · 574 ·  
**Միքայել** " Դ · 586 · 587 ·  
**Միքայել** " Զ · 595 ·  
**Միքայել** " Է · 598 · 400 · 401 ·  
**Միքիա մղ** · 159 ·  
**Մլէհ** · 454 · 472 · 476 ·  
**Մլէհք** բ · 516 ·  
**Մօրին** 15 · 156 · 146 · 255 · 266 · 514 · 408 · 463 · 475 ·  
 492 · 501 ·  
**Մլըտողք (աղանդ)** 105 ·  
**Մնբէհք** բ · 62 · 255 · 299 · 346 · 358 · 478 ·  
**Մնդուր (Մունդիր)** Գ · 251 · 255 \* 267 · 269 ·  
**Մնդուր** Դ · 276 · 277 · 279 ·  
**Մշկածակն (Ծ) ք** · 448 ·  
**Մոգք** 551 ·  
**Մոգէ (Ս) վ** · 225 ·  
**Մոհամետ Խորազմշահ** 520 \*  
**Մովլար** 27 ·  
**Մովդիիմ** 81 ·  
**Մովսէս արարացի** 150 ·  
**Մովսէս կթ** · Բ · 249 \* 265 ·  
**Մովսէս մղ** · 12 · 20 · 28—31 · 33 · 57 · 105 · 355 · 387 ·  
**Մովսէս միայնակեաց** 255 ·  
**Մուդատին (Մոսդատի)** 466 ·

- Մուխթար** 525 .  
**Մուհղի** 575 .  
**Մուղատամ (Մալեք Մոադամ իսա)** 508 \* 509 .  
**Մուղի** 572 . 446 \*  
**Մուշեղ Մամիկոնեան** 282 \* 285 \*  
**Մուսի որդի Մահագեաց** 554 .  
**Մուրաբէ** 67 .  
**Մուփարկին** 558 . 428 . 490 . 501 .  
**Մովմնչն** 466 .  
**Մոխք . 426 \* 516 \***  
**Մովիմ կամ Մասլամա** 530 . 552—536 . 540 .  
**Մովման** 591 .  
**Մոր . տես Եղիպատու .**  
**Մրուան ամիրապետ** 526 .  
**Մրուան** " միւս 543 . 547 .  
**Մուլա (Մուսուլ)** ք . 21 . 408 . 419 . 427 . 467 . 477 . 488 .  
 490 . 501 .  
**Մոր կամ Մար Աքա (Մոր—Իբաս) վ . 428 .**  
**Մոր Զօրաւ (Զոհար)** 257 . 240 .  
**Մոր Հանանա (Ս . Անանիա) վ . 463 .**  
**Մոր Պարսամ** 164 . 167 . 168 . 414 . 423 .  
**Մորիկ Կոյոր** 278—284 . 292 .  
  
**Յարեմ** 10 . 387 .  
**Յարին** 55 .  
**Յաղտաճառ (Յաղկերտ)** Ա . 162 .  
**Յաղտաճառ գ . 504 . 506 .**  
**Յակոբ առաքեալ** 99 . 100 .  
**Յակոբ Կուրդնկար (Ճանծալսո)** 246 . 250 . 251 . 260 .  
**Յակոբ Նահապետ** 14 . 26 .  
**Յակոբ ուռհայեցի** 5 . 4 . 15 . 14 \* 40 . 95 . 156 . 527 .  
**Յակոբ ոսեահնեցի** 597 \*  
**Յակոբ (Ս) Մծբնաց** 152 .  
**Յակոբ ոթձեցի** 215 . 224 .  
**Յակոբայ (Ս) վանք ՚ի Քեսուն** 527 .  
**Յակոբիկ Ասորիք** 558 .

- Յայել 55 .  
 Յայիր 57 .  
 Յասոն 80 .  
 Յարութեան (Ս) տաճար 195 • 574 • 496 • 508 .  
 Յերուսաղիբ 11 .  
 Յեսու Կուտեայ 29 • 55 • 45 .  
 Յեսու պատմիչ 2 .  
 Յեսուեանք 105 .  
 Յերազօլիս 62 .  
 Յերոբովամ 50 .  
 Յեփթայի 57 .  
 Յեքոնիա • տես Յովաքիմ .  
 Յեռ 46 .  
 Յոր պոտ • Անտիոքայ 567 .  
 Յորնաղ 165 • 166 • 168 • 172—174 • 185 • 185 • 195 • 199 .  
 Յոթոր 50 .  
 Յոյնք 19 • 92 • 116 • 215 • 218 • 271—274 • 595 • 512 .  
     524 • 548 • 552 • 575 • 577 • 598 • 407 • 411 • 414 • 426 .  
     455 • 457 • 468 • 480 • 498 • 512 .  
 Յողակ 405 • 495 .  
 Յովար 41 .  
 Յովաթամ 55 .  
 Յովակիմ 61 • 62 • 64 .  
 Յովաս թգ • Խորայէլի 48 • 50 .  
 Յովաս " Յուդայ 47 .  
 Յովաքաղ թգ • Խորայէլի 47 .  
 Յովաքաղ որդի Ավեայ 61 • 62 .  
 Յովաքիմ 65 • 65 .  
 Յովիդա 46 .  
 Յովիդա որդի Եղիուէի 68 .  
 Յովհաննէս անտիոքացի 2 • 39 .  
 Յովհաննէս ասիացի 2 • 67 • 126 • 219 • 228 • 244 • 249 •  
     592 .  
 Յովհաննէս արիթացի հերձուածող 249 .  
 Յովհաննէս աւետարանիչ 100 • 109 • 159 .  
 Յովհաննէս Գրող Հարանց վարուց 262 • 265 .

- Յովշաննես դամասկացի 349 \*  
 Յովշաննես եպ. Ահուրանի 220 .  
 Յովշաննես " Անտիոքայ 165 .  
 Յովշաննես " Ասորի 462 \*  
 Յովշաննես " Բջնոյ 520 .  
 Յովշաննես " Թլացի 221 .  
 Յովշաննես " Թռուրերայ 220 .  
 Յովշաննես " Խառանու 220 .  
 Յովշաննես " Կիլիկիոյ 166 .  
 Յովշաննես " Կիւրիոյ 299 .  
 Յովշաննես " Ցերապօլսի 220 .  
 Յովշաննես " Պարամնարիսոս 229 .  
 Յովշաննես զօրապետ 509 .  
 Յովշաննես կթ . Դ . Խմատասեր 249 \* 501 . 558 . 559 .  
 Յովշաննես կթ . Է . 516 .  
 Յովշաննես հերձուածող 248 .  
 Յովշաննես Հիւրիկանոս 83 .  
 Յովշաննես մայրավանեցի (մայրագոմեցի) 501 .  
 Յովշաննես Մանաղկերտոյի 501 .  
 Յովշաննես Մեդացի 14 \*  
 Յովշաննես մետրապօլիտ Մամեստիոյ 219 .  
 Յովշաննես Մկրտիչ 98 . 190 . 245 . 255 .  
 Յովշաննես Նկարիչ 106 .  
 Յովշաննես Ոսկերերան 141 \* 161 .  
 Յովշաննես որդի Մժեժայ 525 .  
 Յովշաննես " Ովսեայ 61 .  
 Յովշաննես կայսր Զմշկիկ 581—585 .  
 Յովշաննես պատմիչ Քեսունցի 5 .  
 Յովշաննես պտ . Անտիոքայ 580 . 585 .  
 Յովշաննես " Կ . Պօլսի 261 . 271 .  
 Յովշաննես պատրիկ 259 . 260 .  
 Յովշաննես սիւնակեաց 224 .  
 Յովշաննես վանական 216 .  
 Յովշաննես վանապետ Գտրբայի 222 .  
 Յովշաննես (Ս) Վ . 222 . 288 .  
 Յովշաննես Տէրոյենց 129 \*

- Յովշաննեռ քահանայ աղէքսանդրացի, 178.  
 Յովիսադար 80.  
 Յովիսաթան 40.  
 Յովիսաթան Մակարէ 81 · 82 · 88.  
 Յովլսափատ 44.  
 Յովսեպոս զօրապետ Հրէից 78.  
 Յովսեպոս պատմիչ 2 · 10 · 16 · 102 · 105 · 107 · 110.  
 Յովսէփ Դաղիր 20.  
 Յովսէփ Եղբայր Հերովդէսի մեծի 87.  
 Յովսէփ Խահապետ 27 · 28.  
 Յովսէփ Նելլինի 178.  
 Յովլրամ 46.  
 Յորդանան 99 · 485.  
 Յուբիանոս կայսր 146.  
 Յուդա Գալլէացի 92 · 94.  
 Յուդա Կիւրեղ 154.  
 Յուդա Մակարէ 81 · 82.  
 Յուդրուդա (Յովդապատ) ք. · 110.  
 Յուդիթ 66.  
 Յուլիադա ք. · 100 ·  
 Յուլիանէ Եպ. Սրց 150.  
 Յուլիանիտք 249 · 254 · 259.  
 Յուլիանոս անօրէն 137—140 · 142—146 · 421 ·  
 Յուլիանոս Եպ. Հռոմայեցի 167 ·  
 Յուլիանոս " աղեկառնացի 221 · 248 · 252 · 257 ·  
 Յուլիանոս որդի Սաբարայ 255 ·  
 Յուլիոս Եպ. Սեբաստիոյ 152 ·  
 Յուլիոս ո Հանգոնի 219 ·  
 Յուլիոս Նելլոս 202 ·  
 Յուլիոս Սեւերոս 116 ·  
 Յուլիոսոս կիոլրացի 190 ·  
 Յուսիկ արեղայ զրպարտիչ 470 · 471 ·  
 Յուսիկեանը 471 ·  
 Յուստիանոս (Յուստինոս) կայսր Ա · 218 · 225 · 229 · 251  
     —254 ·  
 Յուստիանոս (Յուստինոս) Բ · 258—260 · 268 · 271 · 274 ·

- Յուստիանոս Նիկոպօլսէցի 117 .  
 Յուստինիանոս Կայոր Ա . 2 . 255 . 247 . 249 . 250—258 .  
 Յուստինիանոս " Բ . 525—528 . 551 . 552 .  
 Յուստինէ 148 .

- Յաքադեանը 14 \* .  
 Յարուղոգոնոսոր 49 . 62—66 . 291 . 585 .  
 Յարուղարդան 65 .  
 Յարուղալսար 49 . 61 . 65 .  
 Յազարէթ ք . 97 . 101 . 495 . 508 .  
 Յաթան 40 .  
 Յախջեւան ք . 329 .  
 Յաջմադին (Աւճմ—էտոին) 428 . 479 .  
 Յառը 562 .  
 Յասր (Կազար) 571 .  
 Յաւադ Հռամայ ք . 40 .  
 Յաքոնոս 49 .  
 Յաքով 17 . 19 . 24 . 25 .  
 Յաքուբուլս 49 .  
 Յարակտիոս 61 .  
 Յերևալթ 13 . 15 . 16 . 18 . 50 . 420 .  
 Յեկտասափիս 70 .  
 Յեղոս գո . 29 . 347 . 371 .  
 Յենեայ (Կանեայ) կուռք 79 .  
 Յեսոնոր 164—170 . 178 . 192 . 195 . 197 . 252 . 514 . 419 .  
 Յեսոնորականք 214 . 285 . 289 .  
 Յերշապուհ արծրունի 514 \* .  
 Յերոն Կայոր 100 . 110 .  
 Յերուաս 114 .  
 Յերսէհ թդ . Բարելսնի 107 .  
 Յերսէհ " Պարսից 124 .  
 Յերսէս կթ . Ա . ՄԵՃՆ 153 .  
 Յերսէս " Գ . Շ/Խող 286 .  
 Յերսէս " Դ . Շարհապի 459 . 462 . 470—472 .  
 Յերսէս հայկազն 282 \* .  
 Յեփելքերէս 44 .

- Աւելիոս ծով 74 .  
 Աւքաւով 62 .  
 Աւքեփոստ 60 \*.  
 Աւքոն 60 .  
 Աւքտառիոս պտ . կ . Պօլոհ 154 .  
 Ափրանք . 251 . 252 . 255 .  
 Ափիա 100 . 117 . 131 . 154 . 147 . 153 . 555 . 541 . 546 .  
 Ափիփոր կայոր Ա . 557 . 559 .  
 Ափիփոր Բ . 580 . 582 .  
 Ափիփոր Գ . 400 .  
 Ափողայոս Եպ . Տարսոնի 220 .  
 Ափոմիդիա 100 . 156 . 215 . 246 . 552 .  
 Ափոպօլիս 120 . 215 . 255 .  
 Ափոփորոս Եպ . Աւբաստիոյ 220 .  
 Ափուէ 25 . 49 . 61 . 316 . 558 . 568 . 458 .  
 Ափոկեսորիա 558 . 475 . 480 .  
 ԱՌ 9 . 15 .  
 Ապեմի 68 .  
 Առնաս Եպ . Աւելիւկիոյ 220 .  
 Արագին (Առևլուկտին) որդի Աղջւատոնի 501 .  
 Արագին որդի Զանգեայ 419 . 425 . 427 . 430 . 441 . 445 .  
     447—452 . 454—457 . 465—470 . 474 .  
 Արագին որդի Խարասլանայ 455 . 487 . 491 .  
 Առւմիրինոս կայոր 125 .  
 Առփիլիս 158 .  
 Ասերինք . 428 .

- Շալուէ իշխան Վլաց 522 .  
 Շահանշահ որդի Խղիձասլանայ 409 .  
 Շահանշահ որդի Մասուտայ 430 .  
 Շահի Արմեն ամիրայ Խլաթայ 478 .  
 Նահրոբի 505 .  
 Շահրազարշ (Շահրլարազ) 284 . 292 . 295 . 296 . 502 .  
 Շամիրամ 24 .  
 Շամմարք 253 .  
 Շամսունի 80 .

- Համբաւ գլ. 568.  
 Համբին գւ. 81.  
 Հապուհ ստրատիկոս 155.  
 Հապուր (Հապուհ) 121. 127. 136. 144. 393.  
 Հաւուր (Հաւեր) փոխարքայ Եղիպտոսի 456.  
 Հաւպաք ք. 497. 501.  
 Հեթիք 455.  
 Հերաքաւ (Հիրքու) հօրեղբայր Սալահտոնի 450. 455. 457.  
 Հերանշահ (Հահինշահ) եղբայր Խլիճառլանայ 449. 468.  
 Հիզէ ք. 558.  
 Հիզայ առաքելց վանք 222.  
 Հիրի (կոււառ) թդ. Պարսից 297. 302.  
 Հիրին 282.  
 Հմաւօն 27.  
 Հմաւօն կղեռպատեանց 115.  
 Հմաւօն Մակարէ 81. 82.  
 Հնձէ դտ. 554.  
 Հողթան ք. 493.  
 Հոշ. տես Սպահան.

- Ողիս (Աղարիս) թդ. Յուդայ 40. 51.  
 Ողիր 467.  
 Ոթոն կայսր 111.  
 Ողիմազիսս լ. 89.  
 Ողիմազիստա մայր Աղեքսանդրի 71.  
 Ոմապօլիս 82.  
 Ոմար ամիրապետ Ա. 503. 505. 508—511.  
 Ոմար " 554. 556. 557.  
 Ոմնիքանոս եպ. Ռոբերին 220.  
 Ոնիս քահանայապետ 75.  
 Ոնիս " որդի Սիմեոնի 77. 82.  
 Ոնիսպօլիս 82.  
 Ոնորիս 149. 154. 162.  
 Ոսորդոն 51.  
 Ոսորքոն 48.

- Ուսպիթալ 510 .  
 Ովու 54 .  
 Ուժիա 61 . 62 .  
 Ովուստես 69 .  
 Ումիզդ թշ . Պարսից Ա . 124 .  
 Ումիզդ ն Բ . 280 .  
 Ումիզդ ն ս Գ . 505 .  
 Ուբիանոս ք . 101 .  
 Ուբրանտիոս 45 .  
 Ուգանոս (Եւգինեսոս) 159 .  
 Ուգեն եպ . Սելէւկից 250 .  
 Ուզի կուռք 255 .  
 Ութրիոս եպ . Տարօնյ 166 .  
 Ուլիանոս (Վաղերիանոս) 122 .  
 Ուխտականք (աղանդաւորք) 105 .  
 Ուչք . 480 .  
 Ումբետրիոս 69 .  
 Ուռհա 13 . 25 . 50 . 85 . 116 . 120 . 145 . 217 . 222 . 226 .  
     242 . 256 . 298 . 529 . 541 . 555 . 560 . 566 . 599 . 404 .  
     418—420 . 470 . 500 . 525 .  
 Ուռհարօն գերմանչահ (Վռամը Արման) 160 .  
 Ուռհարօն կամ Արհարան (Վռամ Բ) 165 .  
 Ուռուզուբան 519 .  
 Ուսիոս եպ . Կուռտաբից 151 .  
 Ուստաթոն 51 .  
 Ուտրուպիոս (Եւտրուպիոս) եպ . 255 .  
 Ուրատոն ամիրայ 407 .  
 Ուրբոգոստոս (Արբոգաստոս) 159 .  
 Ուրիա 41 .  
 Ուրկանացիք (Վրկանք) 74 .  
 Ուրկանիա 71 . 85 .  
 Ուփիր 17 .  
 Ուփոմիոս եպ . Կարից 221 .  
 Ուփրինտոս եպ . 222 .  
 Ուքողիա 46 .

- Պաւալիկ** 408 .
- Պալակիսս ուռհայեցի** 176— 178 .
- Պալամպս** 54 . 55 .
- Պալմաք ք .** 225 . 324 . 345 . 385 . 310 \*
- Պաղակ** 410 .
- Պաղեստին** 77 . 159 . 167 . 294 . 374 . 392 . 420 . 424 .  
454 . 485 . 508 \*
- Պաղտառ** 223 . 316 . 351 . 360 . 363 . 368 . 370 . 400 .  
431 . 458 .
- Պաղովին Ա .** 405 . 406 . 409 . 410 .
- Պաղտին Գ .** 418 . 424 . 441 . 446 .
- Պաղտին Դ .** 475 . 485 . 491 . 494 \*
- Պաղբառ բ .** 405 . 445 . 497 .
- Պամիկիլիս գւ .** 198 .
- Պամիկիլսս սարկառագ** 177 .
- Պանաւոս** 56 .
- Պանոնիա գւ .** 147 .
- Պանուժիսս եպ .** 185 .
- Պանտիստացիք** 254 .
- Պապաք** 371 .
- Պապիսս** 87 \*
- Պապսս ք .** 34 .
- Պատաւլինէ գլ .** 195 .
- Պատրս ք .** 246 .
- Պատրանիա (Պետրոն)** 108 .
- Պատրէ եպ .** Ռուսայ 220 .
- Պատրուբոլսս** 114 .
- Պարթեւք** 19 . 76 . 99 . 119 . 343 .
- Պարիշա գլ .** 441 .
- Պարկիարուին** 405 \*
- Պարսամր , տես Մօր Պարսամ .**
- Պարսիկք , տես Պարսք .**
- Պարսից ծով** 294 . 368 .
- Պարսից վանք** 224 .
- Պարսք** 11 . 32 . 76 . 119 . 144 . 162 . 214 . 216 . 241 .

- 264—274 · 278 · 292—298 · 505\* · 588 · 446 · 522 · 523 ·  
**Պաւիէ** (Բարուէ) կթ · Պարսից 514 ·  
**Պաւլմոս** 155 ·  
**Պաւուլայ վանք** 141 ·  
**Պաւոանիոս** 69 \* ·  
**Պաւտանգոս ք** · 555 ·  
**Պելիա կամ Պելիսա ք** · 242 ·  
**Պեկտուրա** 10 ·  
**Պեհենի** 418 \* 425 · 441 · 470 ·  
**Պեղոփա** 54 ·  
**Պեմունդ** 403 · 407 ·  
**Պեմունդ որդի Ոհաղսի** 449 · 451 · 501 · 515 ·  
**Պենադա** ք · 145 ·  
**Պենտապօլիս** 245 \* ·  
**Պետրուքաստիս** 51 \* ·  
**Պետրոս առաքեալ** 100 · 109 · 585 ·  
**Պետրոս Եզրայր Մօրկայ** 285 ·  
**Պետրոս զօրապետ** 189 ·  
**Պետրոս պտ.** Աղէքսանդրից 150 · 196 · 199 ·  
**Պետրոս** " Անտիոքայ 211 · 214 ·  
**Պետրոս (Ս) Եկեղեցի** 598 ·  
**Պետրոս վիրիացի Եպ.** Գաղոց 172 · 174 · 176—178 · 180 ·  
 201 ·  
**Պետրոս փիւնիկեցի** 195 ·  
**Պերգիկաս** 58 \* ·  
**Պերիաք** վ · 580 ·  
**Պերութ թ** · 207 · 215 ·  
**Պերոփիկոս** 69 \* ·  
**Պիզմիշ** 409 ·  
**Պիլսոս (Բիբողոն)** ք · 245 ·  
**Պիկատուր եպ.** Փիլատելիայ 227 ·  
**Պիկրոբոս** 52 \* ·  
**Պիղատոս** 99 · 102 · 107 ·  
**Պիուր միայնակեաց** 196 ·  
**Պիր ք** · 425 · 480 ·  
**Պւլէս ք** · 450 · 456 ·

- Պողքեր 169—172. 177.  
 Պոմպէս 85. 87. 99.  
 Պոնտոս 55. 125. 397.  
 Պուլիբիանոս (Փորիանոս) 125.  
 Պունիմաս (Պողոմէս) 71.  
 Պունիտոս Երեց 195.  
 Պուշերիք 528.  
 Պուսինոս 69.  
 Պռօշ 522.  
 Պռօտեր պտ. Աղեքսանդրից 192. 212.  
 Պտղոմէս թգ. Ա. 75.  
 Պտղոմէս Աղեքսանդր 85.  
 Պտղոմէս Դիոնէսիոս 85.  
 Պտղոմէս Եպիփան 78. 80.  
 Պտղոմէս Եւերգետէս 77.  
 Պտղոմէս Կռօնոս 74.  
 Պտղոմէս Սովոեր 84. 85.  
 Պտղոմէս Փիլադելֆոս. 74. 96.  
 Պտղոմէս Փիլոպատոր 78.  
 Պտղոմէս (Պռօկոս) 522.  
 Պտոյեանք (Պետեր) 454. 441.  
 Պտուի (Ուժմնետ առ Բուադիէ) 425.  
 Պրոբոս կայոր 125.  
 Պրոկլ Կողոնից 220.  
 Պրոկոպոս Եոլ. 252.  
 Պրսպատիկէ 183.  
 Պրուտոս 74.  
 Պօղէ Եոլ. Ուռհայոց 224.  
 Պօղիկարաս 118.  
 Պօղոս անապատական 182. 184.  
 Պօղոս առայեալ 41. 104. 110. 200.  
 Պօղոս Եթովզացի 181.  
 Պօղոս Հրեայ պտ. Անտոքայ 218.  
 Պօղոս Եոլ. Ուռհայոց 220.  
 Պօղոս ո փոքր Աղեքսանդրից 220.

- Ջալալսոդին (Ճելալէտտին)** 520 •  
**Ջահան գտ.** 470 •  
**Ջափար** 577 •  
**Ջափր տես.** Ապու ջափր •  
**Ջափր իշխան Դամասկոսի** 574 •  
**Ջերու Խաքան** 296 •  
**Ջողէն Ա.** 418 • 419 • 423 •  
**Ջողէն Բ.** 441 • 478 •

- Ուաբովդ** ք. 25 •  
**Ուագաւ** 15 • 15 • 16 •  
**Ուագուէլ** 50 •  
**Ուահիդ** ք. 554 •  
**Ուաղա** ք. 225 • 260 • 475 • 501 • 502 •  
**Ուամասիս** 51 •  
**Ուապան** ք. 406 • 418 • 422 • 441 • 514 •  
**Ուասան** ք. 25 •  
**Ուառլա** ք. 152 • 220 • 225 • 282 • 284 • 428 •  
**Ուափտիք** 455 •  
**Ուերեկա** 25 •  
**Ուեմնետ կոմի Տրապօլոսյ** 494 • 495 •  
**Ուէ ք.** 550 •  
**Ուէտձուան** 510 •  
**Ուընալտ (ալ Շագիյեօն)** 425 • 455—457 • 447 • 448 • 478 •  
     479 • 494 • 495 •  
**Ուիկիմեր** 208 •  
**Ունոյ—Կորուրա գտ.** 10 •  
**Ուիշարտ թգ.** • Անդղիս 499 •  
**Գորսովամ** 42 •  
**Ուոգոս կղզի** 55 • 295 • 519 •  
**Ուոմանոս** Ա. 578 • 579 •  
**Ուոմանոս** Բ. 579 • 580 •  
**Ուոմանոս** Գ. 584 • 586 •  
**Ուոմանոս** Դ. 597 •  
**Ուոմանոս վանահայր** 187 • 195 • 206 • 222 •  
**Ուոմելսո** 47 • 55 •

- Առաջիկան՝ 284 .  
 Առջել 405 . 410 .  
 Առամսագը 589 .  
 Առատամ 506 .  
 Առւբեն Ա . 411 .  
 Առւբեն Բ . 455 \* 476 . 485 . 490 . 492 . 501 .  
 Առւբեն Գ . 491 .  
 Առւբեն Նահապետ 27 .  
 Առւբեն որդի Շարոսի 454 . 455 \*  
 Առւբեն որդի Պաղտնոյ 515 .  
 Առւբինեանք 406 . 411 .  
 Առւզի Բահամի (Առնվեհ) 297 .  
 Առւզք 156 .  
 Առւծափ Ք . 242 \* 288 . 345 .
- Ապա** 17 . 95 . 228 \* 368 .  
**Ապակոն** 57 .  
**Ապել** 117 .  
**Ապիլ** 56 .  
**Ապդ** . 506 .  
**Ապովք** Փարիսեցի 92 . 105 .  
**Ապակոտին** (Յուսուփ) 457 . 465 . 476—478 . 485—485 .  
 488 . 490 . 494—501 .  
**Ապուկեցիք** 105 .  
**Ապարիք** (Սիւնիւք) 455 .  
**Ապինոս** Ք . 55 .  
**Ապտուխ** 442 .  
**Ապտու գլ** . 196 .  
**Ապկարդա** Ք . 297 .  
**Ապհակ** մեծն 165 .  
**Ապհակ** իշխան հայկացն 565 .  
**Ապհակ** (Ո) վանք 222 .  
**Ապհերօն** 21 .  
**Ապզա** 12 .  
**Ապամէ** Ք . 210 .  
**Ապամինա** Ք . 115 .

- Սաղմանասար** 49. 54. 57. •  
**Սամատըռոս** 19.  
**Սամար** 44.  
**Սամարացիք** 57. 72. 120. 212.  
**Սամարիա** ւ. 44.  
**Սամարիաք** ք. 44. 54. 72. 84. 95. 255. •  
**Սամարիսս** 6. 19.  
**Սամեգար** 55.  
**Սամեամդ** 45.  
**Սամնեաս** 421.  
**Սամսասատ** ք. 91. 287. 555. 560. 579. 423. 301.  
**Սամուէլ** 59—41.  
**Սամուէլ ռատացիք** 249.  
**Սամուէլիք** վանք 229.  
**Սամփառն** 58. 59.  
**Սայիդաք** ք. 55. 45. 445. 497. •  
**Սանատրուէ** 101.  
**Սասնոյ** ւ. 595. •  
**Սատազոս** 412.  
**Սարակինոսաք** ք. 294.  
**Սասանեանք** 121. 589.  
**Սասունք** 476. •  
**Սարա** 22. 294.  
**Սարգսի (Ո) վանք** 222.  
**Սարգիս ազանդաւոր** 253. 254. \*  
**Սարգիս եղ.** Կիւրից 220.  
**Սարգիս** ո. Արիոսյ 299.  
**Սարգիս պտ.** Անտիօքայ 245. 249.  
**Սարգանաբալոս** 48.  
**Սարգիսք** ք. 554.  
**Սարմատացիք** 119.  
**Սարմատիս** 148.  
**Սարուանդիքար** ք. 492. \*  
**Սաւուղ** 59.  
**Երաստիս (Սամարիա)** 95.  
**Երաստիս** 272. 469. 470. 475. •

- Սեղեկիա** 61 . 65 .  
**Սելեւկիա** 50 . 75 . 158 . 222 . 228 . 498 .  
**Սելեւկոս** 80 .  
**Սելեւկոս** 50 . 75 . 74 . 85 . 420 . 421 .  
**Սելեւկոս և մեռացի** 168 .  
**Սելեւկոս Կալանիկոս** 77 .  
**Սելեւկոս Կրօնոս** 78 .  
**Սելոս** 51 .  
**Սելով** 45 . 59 . 185 . 225 .  
**Սեղբետոսրոս** 126 . 129 \* 154 .  
**Սեմացիք** 11 . 95 .  
**Սենաար** 15 .  
**Սեմիա (գիլք)** 452 .  
**Սինեքերիմեանիք** . 411 . 504 .  
**Սինեքերիմ** 49 . 50 . 57 . 420 .  
**Սինեքերիմ փոքր** 60 .  
**Սեսոնքուսիս** 57 \*  
**Սերուք** 15 . 17 . 18 . 19 .  
**Սեւաստ** 598 . 410 .  
**Սեւերոս** 127 .  
**Սեւերոս գերաքրիստոս** 557 .  
**Սեւերոս եալ . Կնշըց** 299 .  
**Սեւերէ (Սեւերա)** 148 .  
**Սեւերիանոս Անտիոքացի** 214 . 215 . 219 . 240 . 245 . 249 .  
 254 . 586 .  
**Սեփադին որդի Զանգեայ** 427 . 475 . 477 . 488 .  
**Սեփավրա** 50 .  
**Սեթ** 4 .  
**Սէիր** 27 .  
**Սէմ** 9 . 12 . 558 .  
**Սիդոն ք . 45 .**  
**Սիկիինոս (Սոգդոնիոս \*)** 68 .  
**Սիլիլիա գւ . 54 . 55 . 555 . 557 . 453 .**  
**Սիկիոստան (Սագաստան)** 507 .  
**Սիմեոնի (Ս) վանիք** 222 . 245 .  
**Սիմոն բրուտ** 215 .

- Սիմոն իշխան Բռուլղարոց** 378 .  
**Սիմեոն ծերունի** 96 .  
**Սիմոն կախարդ** 471 .  
**Սիմոն կիւրենացի** 182 .  
**Սիմոն մագ** 109 .  
**Սիմոն սիւնակեաց** 164 .  
**Սիմոն**        "        **այլ** 304 .  
**Սինա լ.** 51 .  
**Սիռակուսաք** . 525 .  
**Սիսք** . 72 .  
**Սիսարա** 35 .  
**Սիստիս թգ . Պարթևեաց** 84 .  
**Սիրմիք** . 158 . 277 . 325 .  
**Սիւնիք** 338 .  
**Սիւնկեղոս** 32 \*.  
**Սիւքեմ** 27 .  
**Սիօն** 508 .  
**Սիօն լ.** 40 .  
**Սիմոն** 352 .  
**Սիւա երեց պատմիչ** 3 .  
**Սկիսպիոն** 69 .  
**Սկիւթացիք** 136 .  
**Սկիւթիա** 151 .  
**Սկլոր զօրապետ** 505 .  
**Սկլաւք** 277 . 278 . 327 . 329 .  
**Սկնդրուն (Դոկէնտէրուն)** 436 .  
**Սկոորան** 78 \*.  
**Սմբատ Բագրատունի** 286 \*.  
**Սնձարք** . 407 . 465 . 488 . 501 .  
**Սոկրատ պատմիչ** 2 . 126 .  
**Սողոմէքոյր Հերովդի** 81 . 97 .  
**Սողոմն** 41 . 42 . 54 . 925 . 545 .  
**Սոսթենէս** 74 .  
**Սոստրատոս** 74 .  
**Սովորաս** 87 \*.  
**Սորիս** 50 .

- Սոմիա** թագուհի 265. 276.  
**Սոմիա** (Ս) եկեղեցի 129 \* 299.  
**Սոմինիա** 61.  
**Սոմիրոնիստա** 308.  
**Սուգման** 400.  
**Սուլէյմանն ամիրապետ** 354. 356.  
**Սուլէյմանն մատնիչ Ռւռհայոց** 387.  
**Սուլէյմանն որդի Գուդլըզ** 398. 404.  
**Սուսրամնա** 36.  
**Սուրք.** 35. 37. 64. 495. 496.  
**Սուրբնոս (Սւեներոս)** 120.  
**Սուրոս** 50.  
**Սովանիա** 108. 440.  
**Ստասիա** 81.  
**Ստեփանել Եղբայր Մըհիկ և Ռորոսի** 436—440. 443.  
**Ստեփանիթոս** 59.  
**Ստեփաննոս Ռւռհայեցի հերձուածող** 248.  
**Ստեփաննոս սարկաւոտդ Երուսաղէմի** 202.  
**Ստեփաննոս (Ս)** 28.  
**Ստեփաննոս վանահայր** 186. 187.  
**Ստեփինաթրիս** 59.  
**Սրուճք.** 17. 102. 242. 362. 325.
- Վահան կամսարական** 305 \*  
**Վահե** 77.  
**Վահրամ պարսիկ** 282.  
**Վաղարշ թդ.** Բ. 213.  
**Վաղարշակ թդ.** Ա. 77.  
**Վաղենտիաննոս կայոր Ա.** 147—148.  
**Վաղենտիաննոս** " Բ. 149. 152.  
**Վաղենտիաննոս** " Հռոմայ փոքրն 152. 159.  
**Վաղենտիաննոս** " միւսն 165. 166. 169. 20.  
**Վաղենտիաննոս հերետիկոս**. 117. 118 \*  
**Վաղերիս** 128.  
**Վաղէս** 147—152. 421.  
**Վաղինել զօրապետ** 312.

- Վաղքէշ (Վաղարշ)** 119.  
**Վարբակես** 49.  
**Վանառեր** 454.  
**Վաշտակ** 578.  
**Վասիդ ամիրայ** 343.  
**Վասիլ կայոր Ա.** • հայկացն 575 • 411.  
**Վասիլ** " Բ. 579 • 384.  
**Վասիլ (Գող)** 406.  
**Վասիլ Եզ.** • Հեմայ 299.  
**Վասիլիսս Եզ.** • Ուապանայ 472.  
**Վասիլիսս** " Սելեսկիոյ 168 • 173 • 185 • 186.  
**Վասպուրական** 558 • 411.  
**Վարդ** 217.  
**Վարդան զօրավոր** 265.  
**Վարհամ շահ փետոյ Խլիճասլանայ և տէր Եղնկայի** 407.  
**Վարհարան (Վահրամ)** 125.  
**Վեռպիանոս** 56 • 82 • 110 • 112.  
**Վիճնա Ք.** 98.  
**Վիղալսյ վանք** 225.  
**Վիլսո** 21 • 25 • 49 • 65.  
**Վիրք** 135 • 325 • 588 • 592 • 519.  
**Վիթ Ա.** 552 • 554.  
**Վիթ Բ.** • որդի Եղիաի Բ. 542.  
**Վոլիրէս** 64.

- Տակեդողիս** 50.  
**Տակմաս (Տուլլոս)** 60.  
**Տահը 561—565.**  
**Տաշիք (Արտաշիք)** 149 • 251 • 267 • 279 • 506—508 •  
 319 • 324 • 328 • 556 • 540 • 556 • 565 • 569 • 377 • 424 •  
 440 • 455 • 524.  
**Տայաւ** 400.  
**Տանա 57.**  
**Տանաւիս գտ.** 122 • 156.  
**Տանիմարբացիք** 499.  
**Տանուն ամիրայ** 459 • 448 • 460 • 469.

- Sարս** (**Դարս**) **ք.** • 213. • 266. • 269. • 270. • 282. • 310. • 338.  
 428.
- Sարսանդա** **ք.** • 335.
- Sարկինոս** **Ուբրիկոս** 62. • 90.
- Sարսօն** { 57. • 50. • 123. • 146. • 245. • 426. • 516.
- Sարտիանոս** (**Sակիտոս**) 123.
- Sաւնա** **կամ** { (**Sիւնա**) **ք.** • 335. • 367.
- Sայսն**
- Sեռվա** 70.
- Sիբեր** **կայսր** 98. • 99.
- Sիբերական** **ծով** 508.
- Sիբերիա** **ք.** • 100. • 108. • 416. • 494.
- Sիբերիա** **գտ.** • 128.
- Sիբերիոս** **կայսր** **Բ.** • 271. • 272. • 274—280.
- Sիբերիոս** " **Գ.** • 332. • 333.
- Sիգրիս** **գտ.** • 10. • 66. • 88. • 144. • 351. • 368.
- Sիմիաթ** **ք.** • 508. • 509.
- Sիմոն** 228.
- Sիմոնէս** **պտ.** • **Կ.** • **Պոլսոց** 214.
- Sիմոնէս** " **Աշեքսանդրիոց** 153. • 181. • 182. • 188. • 189.  
 192. • 200. • 211.
- Sիոբոն** 144. • 509.
- Sիոսոս** 56. • 82. • 110. • 112.
- Sիտոս** **Անտոնինոս** 117.
- Sիւրիմմաս** 53\*
- Sիւրսս** 465.
- Sորսս** **L.** 191.
- Sուլօմիթիս** 50.
- Sուղասուան** (**Sուղիլարսլան**) 408. • 410. • 444.
- Sուղիլլաք** 595. • 598.
- Sունիսս** 53.
- Sուտէս** (**Sեւտէսս**) 58.
- Sուսուլսս** 57.
- Sուրաւդին** **ք.** • 493.
- Sուրթեսս** (**Դրուսս**) 99.

**Տրայանոս կայսր** 100. 114—116. 393.

**Տրայանոս զօրավար** 149 \*

**Տրապիզոն** 410.

**Տրապոլիս** 185. 245. 321. 449. 463 \*

**Տրափոր ք.** 55.

**Տրդատ** 520.

**Տրիփոն** 83.

**Տրոմոպիկոս** 172.

**Տրուլս ք.** 245.

**Տրուբոս (Տարակոս)** 58.

**Տիեխո** 523.

**Թիկոն ք.** 246.

**Թոբովամ** 42. 45.

**Թուինոս** 114.

**Թուգինոս** 156. 157.

**Փակեէ** 52. 53.

**Փաղէկ** 15. 15. 16.

**Փանիա** 95.

**Փաղրիկանոս** 20 \*

**Փասայէլ եղբայր Հերովդի** 87.

**Փասայէլ որդի** \* 99.

**Փասեղիս ք.** 55 \*

**Փարակղոս** 48 \*

**Փարան կղղի** 76.

**Փարաւոն** 22. 52. 291.

**Փարզման ք.** 450.

**Փարիսեցիք** 105.

**Փարքերիս (Կեդերքերէս)** 44.

**Փաւոտա** 128 \*

**Փէլքս** 99. 108. 110.

**Փէլքսիանոս Եպ. Մնթէչայ** 214. 215. 220.

**Փեստոս** 110.

**Փիլադի** 556.

**Փիլարտոս** 599. 402.

- Փիլիմոն երաժիշտ 37 .  
 Փիլիպ կամ Ֆիլիպ թգ . Կիլիկիոյ 503 . 516 . 517 .  
 Փիլիպեցիք 49 .  
 Փիլիպիոս 552 . 554 .  
 Փիլիպպոս թգ . Գաղղիոյ 499 \*.  
 Փիլիպպոս " Մակեդոնացւոց 61 .  
 Փիլիպպոս կայոր 121 .  
 Փիլիպպոս հայր Աղքաքսանդրի 71 .  
 Փիլիպպոս որդի Հերովդի 98 .  
 Փիլիսէ (Հելլիսիոս) 555 . 557 .  
 Փիլըն 104 . 107 . 108 .  
 Փիլոտոնոս 54 .  
 Փիր—շապուհ թգ . Մոգուց 95 .  
 Փիւնիկ իմաստառէր 32 . 55 .  
 Փլարիանոս Ա . 155 \* 166 . 168 . 169 .  
 Փլարիանոս եպ . Հուռմոյ 215 .  
 Փիմիք 465 .  
 Փոկաս 285—285 . 292 .  
 Փոտիմոս միայնակեաց 192 .  
 Փոււա 52 .  
 Փոււլ 49 .  
 Փսամութէս 63 \* 70 \*.  
 Փսանթօս 63 .  
 Փօիդիա ք . 101 .  
 Փոիկոս 489 .  
 Փոինակէս 46 .  
 Փսոմիուիկոս 60 .  
 Փսումթօս 70 .  
 Փրաւորտէս 61 \*.  
 Փրետերիկոս Ա . կայոր Ալամանաց 498 \*.  
 Փրետերիկոս Բ . 524 \*.  
 Փրիկոս 51 .  
 Փրիտիկոս 58 .  
 Փրօրա եղբայր Հերովդի 87 .  
 • Փաբաղաք . 101 .

- Քաբեր 33.  
 Քաղանէ ք. 25.  
 Քաղգէացիք 11. 15. 19. 21. 24. 30.  
 Քաղկեդոն 283. 284.  
 Քաղկեդոնի ժողով 176. 185. 199—205. 210. 218. 239  
     —242. 247. 257. 280. 299. 416.  
 Քաղկեդոնիոք 255. 265 267. 274. 285. 289. 300. 346.  
     548. 581.  
 Քամ 10. 15. 18.  
 Քամիրացիք 228. 250. 253.  
 Քամովս 42.  
 Քանահացիք 19. 26.  
 Քանթարա 29.  
 Քարաք. ք. 490. 497. 501. 528.  
 Քերբոն 28.  
 Քերբոն ք. 27. 40.  
 Քեմիա (դիլք) 432.  
 Քեռուն ք. 222. 353. 360. 366. 379. 399. 400. 470  
     487.  
 Քերառող 511. 513. 517.  
 Քուբար ք. 306.  
 Քուշացիք 250. տես և Հաբաշիք.  
 Քանթիս 50.  
 Քարսոս 21.  
 Քսերքուէս 67.  
 Քսիսարի 396.  
 Քսիսովթրոս 8.  
 Քէմէ. տես Մալէք Քամէլ.  
 Քդիստավոր կթ. գ. 515.

- Օդոստիա 280.  
 Օդոստոս կայոր 57. 89. 90. 94. 98.  
 Օթման 511. 525.  
 Օտիսարտոս (Ոդիսարտէս) 8.  
 Օրէնտ (Որոնտ) գո. 73\*

Գաղիմեան 456 \*

Գուանգք  $\left\{ \begin{array}{l} 11 \cdot 19 \cdot 26 \cdot 271 \cdot 321 \cdot 402 - 406 \cdot 419 \cdot 423 \\ 432 \cdot 434 \cdot 443 \cdot 449 \cdot 452 \cdot 474 \cdot 485 \cdot 488 \cdot \\ 490 \cdot 491 \cdot 498 \end{array} \right.$

Գրոնոէդք (Գաղլվացիք) 455 · 508 \*

Գրերք  $\left\{ \begin{array}{l} 410 \cdot 435 \cdot 486 \cdot 494 \cdot 524 \end{array} \right.$

Գլամանոք 499 \*

Էջ	ՏՌՂ	ՄԻՋԱ	ՈՒՂԻՔ
15	8	Ուաւագայ	Ուագաւայ
14	22	Յովհաննես	Յակոբ
30	18	Յովթարայ	Յովթորայ
97	6	ամին	աւուր
112	26	ԴՆԻ հարիւր տասն դՆԻ ՄՃ. բիւր փո- րիւր՝ մոխանակ խանակ ՄՃ. ի. հարիւր տասնի,	
228	28	Ասիացւոց	Ասիացւոց
514	19	Քրիստափորի Ա. + Քրիստափորի Գ.	
569	25	Դրեալ	Դրեալ
584	19	(Ը)	(Ը.)
595	26	Ռւզբիլ	Տռւզբիլ
414	29	Կարտիլանաց	Կարտինալաց
435	14	Սիկիլոյ	Ավելիկիոյ
505	23	Ատամ	Ատան
524	5	Դամբլունա (Ը) ռապեցին	Դամբլուն (2) ռապ- եցին



16 MAY 2013

ՀՅ Ազգային գրադարան



NL0552260

52491

